



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



ԺԱՄԱԳԻՐՔ

ԵՒ

ԱՂՕԹԱԳԻՐՔ

ՏՊԱՐԱՆ Գ. ՊԱՂՏԱՏԻՆԱՆ

Կ. Պոլսի Սուրբ Լուսինի ճարտարագիտական թիւ 14

Արտոնութեան Միջոցառում

ԱՂՕԹԱԳԻՐԲ

Հ Ս Տ

ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ



Գաւառեալ եւ բացարեալ

Ի Տէր Յովհաննէս Բազումցի Մարտի



Գ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍՐԲԱԳՐԵԱԼ ԵՒ ՅԱՒԵԼԵԱԼ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՂՏԱՏԻՆԱՆ

1895

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

**Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա.**

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ Ա. ՆՐՈՒԱՂԼՄԻ

**Տ. ԶԱՐՈՒԹԻԻՆ**

Ս. ԱՐԲԵՊԻԴԻՊՊՈՍԻ

Ի ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍՈՑ

**Տ. ՄԱՏՔԷՈՍ**

Ս. ԱՐԲԵՊԻՈԿՈՊՊՈՍԻ



УНІТ





Ի ՅԻՇԱՏԱԿ

ԼՈՒՍԱԾԱՂԻԿ ԵՐԿՈՒՅ ՈՐԴՈՅՆ

ԶԱՄԷԼԱՅ ԵՒ ԳԷՈՐԳԱՅ

ՈՐՔ

Ի ՏԻՍ ՄԱՆԿՈՒԹԷՆ

ՊԱՐՄԱՆԵՆՑ ԿԱՏԱՐԵԱԸ ԶԵՐԶԱՆ

ՍԼՍԱՆՆ ՅԵՐԿԻՆՍ

ԱՌ ՄԱՅՐ ԻՐԵԱՆՑ ԱԶՆԻԻ

Մ Ա Ք Ր Ո Ւ Հ Ի



ՎԵՐԱԿԱՆԳՆԷ

ԶԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ ՕՆԶՆԵՐԳՈՒԹԵԱՆՑ

ԶԱՐԶԱՆԿԱՆՍ ՄԵՐ ՆԱԽՆԵԱՑ

ՀԱՅՐՆ

ՅԱԻԷՏ ԳՔԱՍԻՐՏ

ՈՐԴԵԱԷՐ ԵՒ ԱՌԱՏ Ի ԳՈՐՈՎ

ՅԷՍԱԵՍՆՑ ԱԶՆԻԻ

ՏՈՂՄԷՆ, ՀԱՅՐԵՆԱՍԷՐՆ

Մ Կ Ր Տ Ի Զ

## Ա. Զ. Գ.

**Ի** 1829-ի զիտեն ընթերցողը, արդեն ԱՂԹՅԱԳԻՐԻՍ **Ա.** Տպագրութեան մէջ 1883 ին, Հոգելոյս Տ. Ներսէս Ս. Պատրիարքի մի պատուական թուղթն կայր՝ ուղղեալ առ Աշխատասիրողն:

**Բ.** Տպագրութեան մէջ 1891 ին, այդ Առաքելաշունչ Թղթին չգտնուիլը՝ շատերուն դժգոհութեան տեղի տալն իմացուած լինելով, այս անգամ տպագրել ջանացինք, ի կրումն բաղձանաց ընթերցասիրաց. և ի նորոգումն յիշատակաց Հոգեւոր ծնողիս:

**Սոյն Գ.** Տպագրութիւնս բաղդ ունեցաւ պարունակել իւր մէջ, նա և ներկայ Ամեն. Տ. Մատթէոս Ս. Պատրիարք Հօր մի հոգեբուխ գրութիւնն, որով կը յանձնարարէ բարեպաշտ ժողովրդեան ստանալ զայս ԱՂԹՅԱԳԻՐԻՍ, և ըստ այնմ աղօթել առ Աստուած: Արարիչն տիեզերաց:



ԻՍԿ բուն գործին մէջ այս անգամ յաւելեալ պիտի տեսնուի նոր բացատրութիւններէ զատ, նաեւ մեր Ս. Եկեղեցւոյ Ընթերցման կարգը ի նշխար Եկեղեցականաց, ըստ հրահանգի Տօնացուցի Մայր Աթոռոյն Ս. Էջմիածնի. գնելով ընթերցուածոց սկիզբը այս նշանները՝ (Ա-է.) այսինքն Աւագերիցու Դաս, և (ԱԿ.) այսինքն Աշակերտի Դաս, որպէս զի Քահանայք և Դպիրք դասէ ի դաս կարգացած ժամանակ՝ չչփոթին Թէ ոմ նախ պիտի սկսի, կամ ո՞ր դասին կը վերաբերի կարգալու սկսիլն:

Ա--էբէջ-- Դաս այն է՝ որ նոյն օր ըստ աւուր Չայնին կարգ կը վարէ. իսկ Աշակերտի Դաս է հետեւող. որ միւս օր կը լինի Աւագերիցու դաս, այսպէս շարունակ ամեն օր միմեանց յաշորդելով:

ԻՆՁ որ նախորդ Տպագրութեանց մէջ ըսուած է ի մասին Աշխարհաբառ Թարգմանութեան Աղօթից և Քարգից եւայլ. այս անգամ եւս զնոյն կը կրկնեմք,

Թէ ս'ըջափ կորսուած է նոցա մէջ մեր հին և սրբազան լեզուին (Դրաբառին) սրբանչելի ներդաշնակութիւնն ու քաղցրութիւնն, որպէս բացայայտ պիտի տեսնեն և բանիմաց ընթերցողք. Վասն որոյ կը յորդորեմք զԱղօթասէրս՝ որ վարժուին միշտ նոյն ոսկեղինիկ լեզուաւ աղօթել; և չի հասկցածնին միայն՝ աշխարհաբառին նայելով բաղդատեն և խմանան, զոր դիւմամբ պարզ կերպով շարադրեցինք, որպէս զի զբարառի վարժութիւն չունեցողներն բնագրին միտքն ու զօրութիւնը կարենան լաւ ըմբռնել:

Այս կերպով ցանկալի է մեզ յուսալ, որ Եկեղեցւոյ բոլոր ընթերցուածոց հետ՝ ընտանի կը լինի ամենու՛ն նաեւ մեր Հայ կանոնաւորեալ բուն լեզուն, և ընդ որ սիրելի ու պաշտելի՝ մեր ազատ և բարեպաշտ Ազգային սեպհական Եկեղեցին, որք մեր Նախնեաց նուիրական աւանդքն են առ մեզ, և այդ իսկ է աշխատասիրողիս եւս միայնակ փատարքն և իղձ: —

Ք Ո Ւ Ղ Ք

ԱՌՍՔԵԼԱՇՆՈՐՀ Տ՝ ՆԵՐՍԻՍԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ ՊԱՏՐԻԱՐԿԵՒ Կ. ՊՈԼՍՈՑ

Ա Ռ

ՀՈԳԵՆԻՆ ՈՐԿԻ ԻՒՐ ՎԱՍՏԱԿՈՂ ԳՈՐԾՈՑՍ

Ի ՀԱՒԱՆՈՒԹԻՒՆ

ՈՐ ԵՒ ՆԵՐԱՆՈՒԹԻՒՆ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԵԱՆ

ԱՂՕԲԻՅ

Սրեցեալ Տէր Գովհառնէս

Աւագ Բառանայ Մկրեան.

ՉԱՌԱՋԻ արարեալդ զյեղեալն յաշխարհիկ բարբառ մեր զկարգաւորութիւն Հասարակաց Աղօթից Հայաստանեայցս Առարկական Եկեղեցոյ՝ այսինքն ըզժամագիրս մեր՝ տեսի զոհո՞ւնեամբ ։

Իովնմ զչանս քո սրով ճիզն զործես

Հնուէ զբահանայականդ բո պարտիս՝ եւ արժարժին ՚ի բեզ շնորհք Հոգւոյն Սրբոյ՝ որ ՚ի ձեռնադրուծենէ անտի:

Քահանայի պարտք են մանաւանդ ուսուցանել ժողովրդեան աղօթել միշտ առ Աստուած, առանձինն եւ հրապարակաւ միարանուծեամբ եկեղեցւոյ՝ ըստ Տէրունական հրամանին Թէ՛ Վատենայն ժամ յաղօթս կացէր յ. եւ ըստ Առաքելական պատուէրին Թէ՛ «Աղօթից ստէպ կացէր» . եւ Թէ՛ աղօթք են Թեւք զօրաւորք յոյժ՝ որովք բարձրանայ սլանայ հոգի մարդոյ ՚ի վերնագաւառս անմահութեան փարիլ զԱթոռով շնորհացն. եւ յընդերկրաբարչ կրից զատուցեալ՝ վեմամայ հոգին եւ սեւեռի յԱստուած ՚ի սէրն՝ ՚ի յոյսն՝ ՚ի նշմարիտ զօրութիւնն եւ յանվրէպ կատարելութիւնն. Թէ յարածամ աղօթիւք վերլն՝ ձեռիսն ՚ի մեզ ամենայն սերմունք հոգեւորականք՝ առարինականք. եւ աղօթիւք միանամք ընդ Աստուծոյ եւ ընդ լուսերամ զունդս հրեշտա-

կաց՝ եւ ընդ սուրբս ամենայն: Խառնին տկար ձայնք մեր եւ հեծեծանք ՚ի խորոց սրտից՝ ընդ փառաբանական Ալէլուս Անբովբէից Քէրովբէից. եւ Սուրբն սրբոց՝ փառաւորեալն ՚ի յաւերժական զուարթնոց՝ ոչ խտտան համարի զհողազանդուած մարդոյ մրմունչ՝ որ որչափ եռայցէ ջեր մուծեամբ, այնչափ հասելի լիցի նմա:

Այսպէ՛ս ուսոյց Տէրն մեր. այսպէ՛ս Առաքեալք հիմունք եկեղեցւոյ. այսպէ՛ս Հարբն մերերանաշնորհ Հայրապետք Հաստանեայցս եկեղեցւոյ. եւ բունգի սոցս արբեալ էր զծորանս Հոգւոյն Սրբոյ՝ ներշնչեալք նովա՝ ներհուն Թարգմանիչք եւ մեկնիչք եւ վարդապետք Աստուածային պատգամաց, աւանդեցին մեզ աղօթս հրաշակերտս ՚ի լեզու հրասբանչ պարտ եղեալ մեզ նովին լեզուաւ փառաբանել զԱստուած:

Արդ՝ որ միանգամ ուշիւ ՚ի բննին առնուցու բաղդատելով զամենայն աղօթս կարգեալս յամենայն եկեղեցիս

Քրիստոնէից 'ի հին եւ 'ի նոր դարս, հիացմամբ պարտաւորի խոստովանիլ, թէ շարադրութիւն աղօթից Հայոց Եկեղեցւոյն վսեմագոյն է եւ պարզութեամբ եւ ներշնչութեամբ, և անցանէ զանցանէ զամենեւորմբք, զի և յայլոց լեզուաց զընտիր ընտիր իմաստս առ բերին առ մեզ զեղեցիկ համառօտելով 'ի մեր լեզու: Քնն ինձ այսու պախարակել զայլոցն, այլ եթէ միանգամ ամփոփիցէ Հայ Քրիստոնեաց որ զուշ զուրուշ մտացն 'ի յինքն՝ արձակէ զայս վճիռ 'ի հոգւոյն խորոց, թէ աղօթք եւ զոհարանական երգք շարադրեալք 'ի մերոց նախնեաց՝ են աղօթք և զոհարանութիւնք- երկնային դասակարգութեանց՝ ընդ որս անտարակոյս 'ի սերտ յարարութեան էին մարմնատեսիլ Սերովբէքն Հարքն մեր՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Սահակ, Մեսրոպ, Մովսէս՝ եւ ամենայն Թարգմանիչք և իմաստասէրն Յովհան և աշակերտք նոցա՝ և Սուրբ Ներսէս Շնորհալի և հետեւողք նորին:

Արդ՝ Հայոց բահանայից սրբազան պարտաւորութիւն է ուսուցանել զժողովուրդն աղօթել յայն լեզու. եւ ահա յազատս այսորիկ զովեմ զջանս բո, զի բոյր պարզաբանութիւն և Թարգմանութիւն զայն նպատակ ունի միայն: Պէտք են յեղյեղել յականչս ժողովրդեան յաճախակի՝ թէ յայն լեզու հիարարնչ աղօթեցին Հարքն մեր. և մինչև ցմբ ժամանակս՝ զմեծ մասն աղօթիցն բազումք գիտէին, և են բազումք ցայսօր՝ որք ուսեալ են 'ի բերան, զի չէին եւ չեն իսկ իսպառ անհասկանալիք մինչև իսկ ոչ հայախօս Հայոց:

Վստահութեամբ կարեմք հաստատել, թէ աղօթք եւ փառաբանութիւնք Հայոց Եկեղեցւոյն՝ զբեալ են 'ի լեզու Հոգւոյն Սրբոյ. 'ի լեզու Հրեշտակաց եւ 'ի լեզու մարդկային սուրբ սրտի. առ այս ապացոյցք են աղօթք ժամագրոցն՝ աղօթք Խորհրդատեսարին Սրբոյ Պատարագի, հաւաքածոյք Սաղմոսացն Դաւթի, Թագաւոր յախտեան անուանեալ աղեր-

սական փառարանութիւնք, Շարականք Ապաշխարութեան՝ Յարութեան և այլք, զորս չեն պէտք յիշել աստանօր մի ըստ միողէ:

Ո՛չ ապարէն ՚ի լուր մտադիւրութեամբ սրտառուչ աղօժիցն եւ երզոցն փոփի հողին մեր՝ ՚ի փորձութիւնս Սոբօք զոգցես ընդ բազում դարս յետս նահանջեալք հասանեմք հոգևով տեսանել զայն բարբառաստիկ ժամանակ՝ յորում Աստուածն մարդացեալ զմերս առեալ զմարմին, զմիտըս և զհոգի՝ զհոգս և զվիշտս, զհանրդ բազում անգամ մենացեալ զգագածամբք սուրբ լերանց զգիշերս ողջոյն՝ և յաճախ ՚ի տաճար փառաց Հօրն սիրայնոյ՝ զաւուրս ՚ի բուն ընդ եղբարս իւր աղօթէր: Եւ ուսոյց մեզ բազում մտտամբք և բազում օրինակօր, թէ ընդ հանապազօրեայ աշխատութեան առ ՚ի հայժայթել զսարէ նրս մարմնոյ հացիս՝ զսարէնս մտաց լուսով՝ պարտիմք սնուցանել և զօրացուցանել զհողիս մեր աղօթիւք: և նախապատիւ իսկ կարգեաց զաղօթս՝ զի նախ

բան զամենայն պէտս ունիմք հրահանգաց Հոգւոյն Սրբոյ՝ որով մարժասցուք վարել զկեսանս մեր. և զի համարձակեցոյց զմեզ կոչել զԱստուած Հայր մեր՝ որով իբրև որդիք երկնաւորի Հօրն պարտիմք զիմել հանապազ առ նա՝ և ինդրել ՚ի նմանէ զՀնորճս և զողորմութիւն, վասն ամենայն պաշտամանց մերոց և զործոց:

Ո՛չ ապարէն ինքն Քահանայապետն յախտենից, Զօրացլուխն հուստոց մերոց և Առաջնորդ փրկութեան հոգւոց՝ յառաջ բան զկատարումն մեծի զործոյն փրկագործութեան, անկեալ ՚ի վերայ երեսաց իւրոց, յլուռն յլուռն բիրան իբր զկայլակս արեան, անկարօտն և ամենաբաւականն՝ մտաուցանէր աղօթս առ Հայր՝ նախ բան զմատուցումն ամենազօր և ամենարուբէջ տիեզերակեցոյց Պատարագի անձինն ՚ի Գողգոթա՝ առ ՚ի զօրանալ յայն մեծ զործ մարմնովն եւ հոգւով. այնու ուսոյց մեզ Տէրն թէ՛ աղօթք են նախընծայ և առաջին պատարագ՝ զոր ՚ի հաճոյս իւր ընկալնու Քարձրեայն:

Այո՛, Հայոց բահմանայից նուիրական պարտաւորութիւն է ուսուցանել, թէ զիմրդ պարկեշտ չեմնոանդութեամբ եւ պատկառանք զնալ և պարտ իցէ կալ 'ի Տան Աստուծոյ յեկեղեցւոջ՝ որ է սիւն և հաստատութիւն ճշարտութեան: Զիմրդ պարտիմք սիրել զմեր Ազգային եկեղեցի զվեհագոյն վարժապետն եղբայրսիրութեան և ամենազան առարիւնութեանց՝ զորորան՝ երկնային և երկրաւոր կենաց մերոց, զանխզելի հանգոյց մեր հոգեւոր միութեան ընդ ներկայից՝ ընդ անցելոց և ընդ որոց որ գալոց են:

Անդ տեսանեմք զՔրիստոս անբարբառ խաչիւն և զՀոգին Սուրբ հեզութեան յանճուռնչ հեծութիւնս բարեխօս վասն մեր ընդ Մօրն Կուսի, զԱռաքեալս, զՆահապետս, զՄարգարէս, զՄարտիրոսս, զմեր նախորդ և զերկրորդ Լուսաւորիչս՝ զհովուապետս մեր զհարս զերջանկայիշատակս՝ զՍահակ, զՄեսրոպ, զՄեծն Ներսէս, զՄովսէս, զՄան-

զակունին. զԹարգմանիչս զամենայն, զՂեւոնդեանս՝ և զխօսնակս աղօթից Հայոց զՆարեկացին, զՇնորհալին, զորս յիշատակեմք և խօսակից և հազորդակից լինիմք ընդ նոսս: Այլ և զհրեշտակս, զհրեշտակապետս, զամոռս երկնաւորս, և վառարանակից լինիմք ընդ նոսս սրբասացութեամբ և երգօք հոգեւորօք:

Անդ 'ի յաղբերէ մշտաբուղիս շնորհաց Հոգւոյն ընդունիմք հոգի սիրոյ, հոգի իմաստութեան, հոգի աստուածպաշտութեան և երկիրդի. հոգի խոնարհութեան և հեզութեան: Անդ բաշխի 'ի մեզ մարմնովն անապական կեանքն Քրիստոս, և նորոգի յերակունս մեր ապականեալ արիւն մեր ցօղով Արեամն անապական լինել մեզ ժողովուրդ Աստուծոյ. և անդ յաւելուն հաւատք մեր և յոյս վասն աստի և անտի կենաց:

Անդ՝ մանաւանդ յանեղ խորհուրդ Սրբոյ Պատարագին՝ յորժամ առաջի Տեառն կենդանեաց և մեռելոց մեռանի

մահ՝ և մեռեալք վերկենցաղեալ գան մեզ ՚ի տեսիլ, անդ Անդրանկաց՝ Յաղժահան եւ Զինուորեալ Եկեղեցիք ձեռն ՚ի ձեռն տուեալ միանան ՚ի Միմիայն Գլուխն Աստուածային ՚ի Քրիստոս, առ ՚ի օրհնել զովել զմիայն Սուրբն Սրբոց: Անդ զօրանան ծունկր կթուցեալք և սիրտք ընդարմացեալք. Անդ՝ առաջի նորա առնեմք հանդէս սրտից մերոց. մատչի մարդ ՚ի խորութիւն սրտի իւրոյ և բարձր լինի Աստուած. Անդ՝ համոզմբ ԵՍԷ սիրտք մեր ոչ ստգտանիցեն զմեզ՝ համարձակութիւն ունիմք առ Աստուած, Անդ ընտ Տէր զբողձանս ջերմաշերտ աղօթկերաց, որք սրտիւ բեկելով եւ ահիւ եւ զողութեամբ ակն ունին շնորհաց նորա. Անդ սփոփին հոգիք սգազգեացք յուսով անժախճան երանութեան:

Եւ ահա անդանօր՝ յորժամ բազկատարած քահանայութեան և ջերմեանդն ուխտի մանկանց և միահամուռ ժողովրդեան Աստուծոյ ընդ անուշից խնկոց բարդ

՚ի բարդ ծխոց բարձրանան մրմունջք բոցավառ աղօթից առ սեղանաւն սրբով վանն կենդանեաց եւ ննջեցելոց, անդ՝ նիրեցեալ Տէր Յովհաննէս, մաղթեմ զըտչիք՝ զու և որք սատարք Էղեն բեզ վանն երկոյց սոգազրութեան Աղնիւ և բարեպաշտ Էստեանք իւրաքանչիւրդ կրկնակի վիրաց սրտից Զերոց սպեղանիս՝ եւ զան պատումն բերկրութիւն հոգեպարտք միսիճարութեան՝ առ ՚ի նմանէն՝ որ ամենարուական է և ամենողորմ՝ վերստին տեսանել զՍրդիս Զեր վաղամեռիկս՝ իբրեւ արծուիս նորափետուր զարդարեալ լուսափայլ յարութեամբ անմահ Յարուցելոյն ՚ի մեռելոց. Որում փառք պատիւ եւ երկրպագութիւն, ալժմ և միշտ և յաւիտեանս. Ամէն:

ՆԵՐՍԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ  
ՎԱՐՃԱՊԵՏԵԱՆ

1882 փետրուար 25

՚ի Խասպիւղ

ԹՈՒՂԹ ՅՈՐԴՈՐԱԿԱՆ

ԲԱՐՁՐԱՇՆՈՐՀ Տ՝ ՄԱՏԹԷՈՍ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ ՊԱՏՐԻԱՐԿԻ Կ. ՊՈԼՍՈՑ

ՈՂՁՈ՞ՅՆ ՁԵՁ Ի ԲՐԻՍՏՈՍ ՅԻՍՈՒՍ

ԲԱՐԵՊԱՇՏ ԵՒ ԱՂԹԹԱՍԻՐ

ԺՈՂՈՎՈՒՐԿ ԶԱՅՈՑ

ԱՂԹԹԻԸ կը բարձրացնէ զմեզ առ  
Արարիչն և Յօրինիչն տիեզերաց. Որ միայն  
կարող է ընուլ զպէտս մեր և զկարիս:

Աղօթքն իրաւունք կուտայ մեզ խօսե-  
լու Յաւիտենականին՝ մեր երկնաւոր Հօր  
և Բարերարին հետ:

Աղօթքը կուտայ մեզ սրտի և հոգւոյ  
անսահման զոհունակութիւն՝ երբ մեք  
այնու կ'օրհնեմք և կը փառաբանեմք մեր  
Ստեղծողը, մեր Փրկիչը, մեր Շնորհատուն



Մարդասէր Աստուածը, և երբ կը գոհանամք զնմանէ այն բարեաց համար՝ զոր կ'ուտայ, և այն օրհնութեանց համար՝ զոր կը ցօղէ մեր վրայ :

Աղօթքը կը մխիթարէ զմեզ մեր վշտաց ու ցաւոց մէջ, կ'սփոփէ զմեզ մեր տըրտմութեան մէջ, կ'ոգեւորէ զմեզ մեր հոգեկան տկարութեան մէջ, երբ այնու ամենագօրին Աստուծոյ Աթոռոյն առաջ կը բարձրանամք :

Աղօթքը կը սրբէ մեղաւոր և ապականեալ հոգին ու սիրտը՝ մաքրելով հեղմամբ շնորհաց Ս. Հոգւոյն իբրեւ զոսկի ի հալոցի. երբ մեղաւորը կը դիմէ առ զՍածն Հայր, առ Փրկիչն Յիսուս Քրիստոս եւ առ սրբարար Հոգին՝ Եռանձնեայ Մի Աստուածութիւնն :

Աղօթքը կը միացնէ զմեզ Աստուծոյ հետ և կը կապէ, և կը միացնէ հոգեւորապէս բոլոր քրիստոնեայ հաւատացեալ մարդիկը միմեանց հետ. ի հաղորդակցութեան կը պահէ զինուորեալ և յաղթական եկեղեցիները. երբ հաւատացեալք և զի-

նուորեալ և յաղթական եկեղեցիք միմեանց համար կ'աղօթեն առ Աստուածն համայնից :

Աստուած սահմանեց Աղօթքը, նա ուսոյց աղօթել իբրեւ պայման իւր շնորհն ու ողորմութիւնն ստանալու. սակայն ոչ անոր համար որ նա չզիտեր մեր պէտքերըն և կարօտ է մեր խնդրուածոց, այլ անոր համար որ մեք ինքնին զգանք մեր պէտքերը, ճանաչենք Աստուծոյ զօրութիւնն և ամենագիտութիւնը հանդէպ մեր տկարութեան, Նորա անկարօտ լիութիւնն՝ և անբաւականութիւնը մեր կարօտութեան առջև, ճանաչենք մեր ի նմանէ կախում ունենալը, և ճանաչենք Նորա շնորհաց և ողորմութեան կարեւորութիւնը. ուրեմն Աղօթքը կամ աղօթել առ կենդանին Աստուած՝ մեր աստուածաշնորհ մէկ իրաւունքն, մանաւանդ աստուածադիր մէկ պարտաւորութիւնն է, ուստի մեր առ Աստուած Հարցն մերոց աղօթելու իրաւունքն և պարտաւորութիւնը, բարեպաշտ Ժողովուրդ Հայոց :

կատարենք հաւատով, յուսով եւ սիրով, կատարենք ջերմ եռանդեամբ, խոնարհ հոգւով, հեզ սրտով և ամենայն ուշադրութեամբ: Այս է մեր Փրկչին Տեառն Յիսուսի Քրիստոսի պատուէրը, կարգացէք Ս. Աւետարանը:

Եւ արդ՝ Աստուածասէ՛ր ժողովուրդ Հայոց, արք ե կանայք, ծերք և տղայք, երիտասարդք և կուսանք, ձեզ կը յանձնարարեմ այս Աղօթագիրքը, որ մեր Առաքելական Ս. Եկեղեցւոյ ժամագիրքն է, մեր ուղղափառ Ս. Եկեղեցւոյ որոշեալ ժամանակներու վրայ բաժանեալ աղօթից Մատեանն է, զոր պարզաբանած է Արժանապատիւ Տէր Յովհաննէս Աւագ Քահանայ Մկրեան:

Բարեպաշտ և աղօթասէր ժողովուրդ Հայոց, մեր երանաշնորհ Ս. Հարց եւ Վարդապետաց հոգելից հոգւոց ծնունդ այս Աղօթից Մատեան հանապազ ի ձեռին աղօթենք միշտ, և նախ Սաղմոսենք Դաւիթ մարգարէի հետ.

«Մինչեւ յերբ, Տէր, մոռանաս զիս իս-

պառ, մինչև յերբ դարձուցանես զերեսս թոյինէն: Ես յողորմութիւնս թո, Տէր, յուսացայ, ցնծացաւ սիրտ իմ ի փրկութեան թում, Օրհնեցից զՏէր զԲարերարդ իմ:» (Սաղմ. ԺԲ.)

Աղօթենք Դանիէլի Ս. Երից Մանկանց հետ. «Օրհնեալ ես Տէր Աստուած՝ երգով և իւր սրտառուչ մասերով՝ զոր կը կարդամք ամեն օր Առաւօտեան ժամուն:

Աղօթենք մեր Ս. Հարց և Վարդապետաց հետ. — «Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ:»

Աղօթենք. — «Յաղագս ճանապարհորդաց և նաւորդաց խաղաղութեամբ հասանիլ ի նաւահանգիստն բարութեան:»

Աղօթենք. — «Զարթիր, ընդէր ննջես. Տէ՛ր, մի մերժեր զմեզ իսպառ:

Արի, Տէր, օգնեան մեզ, տացուք անուանդ թում զփառս:»

Աղօթենք. — «Ընդ մեզ Տէր Աստուած, զիտասջիբ հեծանոսք եւ պարտեցարուք, զի Աստուած ընդ մեզ է:»

«Եւ շուարնէք զայս ի ծագաց մինչեւ ի ծագն երկրի, զի Աստուած ընդ մեզ է:»  
(Եւայն ըստ կարգի:)

Աղօթենք. — «Ողորմեան զեկեղեցի շինողաց, երախտաւորաց, պտղատուից, սպասաւորաց, եւ այնոցիկ որք ամն զտուրս ողորմութեան Դարատանց եւ ջանան միշտ հաստատուն պահել:»

«Տէր Աստուած մեր, պահեն զառաջնորդս եւ զեղբայրութիւնս մեր՝ ամբողջ եւ անխռով ի կամս ողորմութեան քոյ:»

Աղօթենք Ս. քահանայից հետ. — «Յաւել ի մեզ, Տէր ամենակալ, զհաւատ, զյոյս, զսէր եւ զամենայն գործս առաքինութեան:»

Աղօթենք. — «Դու զմեզ վառաւորեան աստուածային զօրութեամբ քով. եւ մի Թողուր գյուսացեալս ի Բեզ:»

Աղօթենք. — «Լուր մեզ, Աստուած Փրկիչ մեր, խոնարհեցի ունկն քո ի խնդրուածս մեր, զի մի ունայն լիցին վաստակք ծառայից քոց. այլ համարեն զաշխատութիւն մեր ի գործ արդարու-

թեան եւ ի պտուղ աստուածապաշտութեան:»

Աղօթենք հանապազ. հաւատացեալ ժողովուրդ Հայոց, եւ խնդրենք երկնաւոր զԹած Հօրմէն մեր հոգւոյ փրկութիւնս եւ մեր մարմնոյ պիտոյք, նա՛ Աստուած Հայր մեր կը կատարէ մեր խնդիր, երբ յանուն իւր խաչաչարչար Միածին Որդւոյն Տէր Յիսուս Քրիստոսի խնդրենք հաւատով. զի նոյն ինքն Միածին Որդին ըսաւ. «Զոր ինչ խնդրիցէք ի Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ Ձեզ:» (Յ-ԷՏ. Ա-ԵԴ. ԺԵ. 16).

«Խնդրեցէք եւ տացի ձեզ, հայցեցէք եւ գտչիք, բախեցէք եւ բացցի ձեզ:»

«Զի ամենայն որ խնդրէ՝ առնու, եւ որ հայցէ՝ գտանէ, եւ որ բախէ՝ բացցի նմա:» (Մ-ԴԲ. Է. 7 և 8).

Ուրեմն յուսով խնդացէք, նեղութեան համբերեցէք, աղօթից ստէպ կացէք:» (Հ-ԷԷ. ԺԲ. 12).

Աստուած զԹած, Աստուած ողորմած, Աստուած մարդասէր, Թողցէ զյանցանս մեր, եւ ամենաւատ բարեարուութեամբն

արժանի արասցէ զմեզ վայելել զամենայն  
պարգևս բարիս, որք ի վերուստ են իջ-  
եալ առ ի Հօրէն լուսոյ՝ աստ և ի հան-  
դերձելունն, և Նմա փառք յաւիտեանս.  
Ամէն.

ՊԱՏՐԻԱՐԲ Կ. ՊՈԼՍՈՅ  
ՄԱՏԹԷՈՍ ԱՐԲԵՊԵՍԿՈՊՈՍ  
ԻԶՄԻՐԼԵԱՆ

1895 փետրուար 4

Ի Պատրիարքարանի Հայոց  
Կ. Պոլսոյ



## Յ Ա Ռ Ա Ղ Ս Ի Ա Ն

### Ա Ռ Ա Ղ Օ Ր Ա Ս Է Ր Ս

**Մ** Ա Ր Դ Ի Կ, արարածք Աստուծոյ  
Արարչին՝ որ ի ձեռին ունի մարդոց  
կեանքն ու բոլոր տիեզերքին կառա-  
վարութիւնը, մարդիկ՝ թէ այր եւ թէ  
կին, երիտասարդք եւ ծերք, օրհորդք  
եւ մանկուներ, պարտաւոր են ամեն  
օր եւ ամեն բանի մէջ, Աստուծոյ դի-  
մել եւ խնդրել, որ իւր շնորհած կեան-  
քը զօրացունէ, իւր շնչով ստեղծած  
հոգին անարատ պահէ, եւ մարմինը  
որ հոգւոյն պատեանն է, խնամէ իւր  
ամենառատ պարգեւներով, եւ պահ-  
պանէ ամեն փորձութիւններէ:

Մարդիկ, ըստ որում հոգեղէն, եւ  
միշտ սխալական, իրենց զործած մե-  
ղաց քաւութիւն զսնելու, եւ իրենց  
անմահ հոգին մեղքի ապականութե-

նէն մարելու, եւ Քրիստոսի Յիսուսի արդեանց շնորհիւ փրկուելու, եւ արտի եւ մտաց նորոգութիւն եւ ուղղութիւն ստանալու համար, պէտք եւ պարտաւորութիւն ունին հանապազ Ասուծոյ գթութիւնը հայցել եւ պաղատել Վերջապէս մարդիկ պարտաւոր են իրենց երկնաւոր Հօր՝ Աստուածային Նստախնամութեան դիմել յամախ, ոչ միայն իրենց հոգւոյն եւ մարմնոյն ամեն աւուր պէտքը խնդրելու, այլեւ զանոնք ընդունած եւ վայելած լինելուն համար՝ զոհութեամբ երկրպագութիւն մատուցանելու:

Այս մտք Ասուծոյ դիմելն է ԱՂՈՒԹԵԼ, եւ աղօթքը Թէ Առանձնական եւ Թէ Հրապարակական կերպով կր կատարուի:

Առանձնական աղօթքը՝ մարդու առանձին պարտաւորութիւնն է կատարել, ուր որ լինի եւ ուր որ գտնուի: Թէ յաջողութեան եւ Թէ ծախորդութեան մէջ, Թէ ուրախութեան եւ Թէ

տրամութեան ժամանակ. վասն զի Քրիստոսական պատուէր է՝ Յամենայն ժամ եւ անդադար աղօթս առնել. մանաւանդ անխափան առաւօտ եւ երեկոյ, եւ զանձն յանձնել Ասուծոյ խնամոց:

Հրապարակական աղօթքն՝ յոյժ կարելոր եւ մեծ պարտաւորութիւն է Քրիստոնէին համար, վասն զի այնու կը յայտնէ իւր Աստուածասիրութիւնն ու եղբայրսիրութիւնը. եւ ամեն հաւատացեալը հետ միասին՝ իւր Արարչին պաշտօն եւ երկրպագութիւն մատուցանելով, կը ցուցնէ Թէ՛ իւր հաւատակից եւ կրօնակից եղբարց հետ անդամակից եղած է Յիսուսի Քրիստոսի մարմնոյն. եւ ինչպիսի ազգութեամբ մէկ արիւն են, նոյնպէս եւ հաւատքով մէկ հոգի եղած են. Ուստի Քրիստոնէին պարտքն է Հրապարակական աղօթքէ յետ չի մնալ. եւ Ասուծոյ նուիրեալ Տան մէջ—եկեղեցւոյ մէջ ներկայ գտնուիլ աղօթից եւ պաշտա-

մանց Սուրբ Խորհրդոց, մանաւանդ  
Կիրակի եւ Տօն օրերն՝ յորս մշտապէս  
կը կատարուի Խորհուրդ հաշտարար  
եւ փրկարար Պատարագի մեզ համար  
խաչեալ մեր Տէր Յիսուսի:

Մեր Հայաստանեայց Առաքելական  
Եկեղեցւոյ ժողովուրդն, իրեւ առա-  
ւել աղօթասէր քրիստոնեայ ժողո-  
վուրդ, դարուց ի դարս նշանաւոր ե-  
ղած է իւր կանգնած հոյակապ Աղօ-  
թասեղիներով, ամեն տեղ ուր որ  
գաղթել են, քանզի եկեղեցւոյ մէջ  
միայն կը գտնէին մխիթարութիւն  
հոգւոյ:

Սակայն ցաւալի է ըսել, որ վեր-  
ջին ժամանակներս Հայ ժողովրդեան  
այս ջերմեռանդ բարեպաշտութիւնն  
ի տեղիս տեղիս թուլացած է: Մինչ-  
դեռ յառաջագոյն Հայոց սուրբ եկե-  
ղեցեաց մէջ ամեն օր բազմութիւն  
հաւատացելոց կը տեսնուէր, այժմ,  
գոնէ կիրակի օրերն՝ բազումք կը ծու-  
լանան Հրապարակական Աստուած-

պաշտութեան մասնակցիլ, մասնաւո-  
րապէս նորք՝ որ ժողովրդեան բարի  
օրինակ լինելու կոչումն ունեցած  
են իրենց ազդեցութեամբն ու զըլ-  
խաւորութեամբ:

Հայոց եկեղեցին, Հայ ազգայնու-  
թեան կեդրոնն եղած է մինչեւ ցարդ,  
եւ մեր մեր ազգութեան անկոռուս  
մնալն՝ մեր եկեղեցւոյ կը պատիմք-  
ուսի Հայ քրիստոնեայն պատրաստ է  
գոնէ կիրակի օրերն միանալ իւր ազ-  
գի անդամոց — իւր եղբարց հետ նոյն  
կեդրոնին մէջ, եւ ընդ նոսին միա-  
բանութեամբ զԱստուած փառաբա-  
նել զՀայրն ազգաց եւ ազանց:

Կիրակի օր՝ երբ Քրիստոնեայն եկե-  
ղեցի կը մտնէ, եւ ականջ կը դնէ Աս-  
տուածային օրհներգութեանց, միտքը  
պիտի բերէ՝ որ իւր նախահարք եւս  
միեւնոյն սքանչելութեան Շարական-  
ներն ու Աղօթքները լսելով՝ մխիթար-  
ուած ու զօրացած են հոգւով եւ այն-  
պէս իրենց սերունդն եւս ոգեւորած

են հաւատարիմ մնալ Քրիստոսի:

Իսկ երբ ունկնդիր կը լինի Ասուծոյ խօսքին, այսինքն, Մարգարէական, Առաքելական եւ Աւետարանական Ս. Գրոց, պէ՛տ է այնպէս ըմբռնէ եւ հաւատայ, որ Ասուած կը խօսի իրեն հետ, եւ հայրաբար կը խրատէ զինքը: Քրիստոնեայն շա՛տ ուշադրութեամբ պատճառու է ականջ դնել Սուրբ Գրոց երկնաւոր պատգամներուն, եւ անոր համեմատ իւր վարքը, բարքը եւ ընթացքը ուղղել, հաւատքն ու գործքը միմեանց յարմարցունել, եւ կանոնաւոր կեանք ունենալ թէ՛ իւր անձին հետ, թէ՛ իւր ընտանեաց հետ, եւ թէ՛ ամեն մարդոց հետ, վերջապէս աշխարհի հետ:

Այսպիսի քրիստոնէական կենցաղի վարժութիւն եւ յարմարութիւն ունենալու համար, Ս. Գրոց ընթերցումն շատ օգտակար եւ հրահանգիչ կը լինի, եթէ ամէն կիրակի եկեղեցւոյ մէջ կարդացուած Ս. Գիրքն՝ նոյն օր

ընտանեաց հայրեր պատմեն, եւ վերջոսին կարդալով սպաւորեն իրենց՝ եւ ընտանեաց արեւու մէջ, Ասուծոյ երկիւղը, պատուիրանքը, սէրը եւ գթութիւնը:

Ուստի ամեն Հայ-Քրիստոնեայ իւր տան մէջ պէ՛տ է ունենալ Ասուածաշունչ Ս. Գիրքն, ինչպէս նաեւ Շարականն ու ժամագիրքն, իրեւ գանձարան գիտութեան, եւ յիշատակարան ու գրաւական սիրոյ իւր Հարց եւ Նախահարց:

ԱՐԴ՝ Հրապարակական Ասուածպաշտութեան օգտակարութիւնն համառօտիւ ցուցնելէ զկնի, կը մնայ գիտնալ թէ՛ եկեղեցւոյ մէջ Հրապարակական Աղօթքի ներկայ գտնուող Քրիստոնեայն ինչպէս պէ՛տ է Աղօթել:

Մեր Ազգի բարեպաշտներէն ոմանք սովորութիւն ըրած են տանիլ յեկեղեցի Սաղմոս կամ Նարեկ եւ կամ մի այլ Աղօթագիրք, եւ շարունակ կարդալ ժա-

մերզուժեան եւ Ս. Պատարագի ասեն. Այս սովորութիւն շուտ օտար է Հայաստանեայց եկեղեցւոյ կարգադրութենէն, նորամուտ մի սովորութիւն ուրիշ ազգերէ օրինակուած, որում եկեղեցւոյ պաշտօնեայք ուշադրութիւն չընելով, այն աստիճանին հասած է՝ որ մինչեւ իսկ մեր Ս. եկեղեցիէն հետեալ եւ նորա դէմ պարսաւանօք խօսող անծանց շինած տեսակ տեսակ աղօթագրքերն ձեռքերնին առած, եկեղեցի կուգան եւ կը կարդան. Այս սխալ դրութեան օգնած են բարեմտարար՝ նաեւ յետին դարու մեր ազգային հեղինակներէն եւ Տպագրիչներէն ոմանք՝ որք նմանողութեամբ օտարաց՝ Ս. Պատարագի ասեն կարդացուելու համար եւս՝ զանազան նորահնար աղօթքներ յարմարցուցած են, արտաքոյ կանոնաց Հայ-Քրիստոնէական եկեղեցւոյ.

Հրապարակական Աղօթքն սահմանուած է. ոչ եթէ քահանայից եւ

դպրաց համար միայն, այլ բոլոր բովանդակ ժողովրդեան համար. Ամեն Աղօթք՝ որ քահանայն կը կարդայ եկեղեցւոյ մէջ, եւ ամեն երգ՝ որ զբարբար կ'երգեն, ի դիմաց եւ վասն համարէն ժողովրդեան է. ուստի պէտք է ժողովուրդը ձայնակից լինի այն ընթերցուածոց, կամ մտադրութեամբ մասնակցի, եւ ոչ թէ զատ աղօթագրքով ուրիշ կերպ բան կարդայ.

Այս ըսածնիս նոյն իսկ մեր ժամագրքէն եւս յայտնի է, որ ամեն ժամու կանոնեալ աղօթից սկիզբը այսպէս գրուած է. *Կ-ր-դ-ս-ր-ք-է-ն շ-ու-ս-ր-ս-կ-ու-մ-ն-ն-ն* Հայաստանեայց եկեղեցւոյ ուրեմն Աղօթքն՝ Հասարակաց (եկեղեցականաց եւ ժողովրդոց, արանց եւ կանանց) համար սահմանուած լինելով, ամեն անոնք որ եկեղեցի կը մտնեն, սրտաւար են եկեղեցւոյ ընթերցուածոց համարման աղօթելու իսկ նորա որ Սաղմոս կամ ուրիշ Աղօթագիրք մ'առած մերենարար կը



կարգան ( ինչպէս տեսնուած են, )  
չեն կրնար ուշադրութիւն ընել եւ  
մանակցիլ Հասարակաց աղօթից եւ  
Ս. Պատարագի խորհրդոյն, այլ մտքեր-  
նին շփոթելով՝ ոչ իրենց կարգացածը  
կրնան հասկնալ, եւ ոչ եկեղեցւոյ  
ընթերցմունքէն օգուտ քաղել :

Ուրեմն Հայաստանեայց Ս. Եկե-  
ղեցւոյ անդամ եւ զաւակ եղող քրիս-  
տոնեայն, Եկեղեցւոյ մէջ կատարուած  
ժամերգութեանց համեմատ աղօթե-  
լու համար, պարտաւոր է կամ ու-  
շադրութեամբ միտ զնել ընթերցու-  
ածոց, եւ կամ իւր ձեռքն ունենալով  
մեր ՃԱՄԱԿԻՐԷՔ՝ քանալ այն տեղն՝ որ  
քահանայն կամ զպիտր կը կարգան,  
եւ անոնց հետ մտքով կամ միմտքելով  
աղօթակից լինել. որով բոլոր հաւա-  
սացեալք՝ իրեւ ի միտջէ՛ քերանոյ  
զԱսուած փառաքանելով, հոգեպէս  
միացած լինելնին կը յայտնեն. եւ  
ահա այս է միակ նշան Հրապարա-  
կական Ասուած պաշտութեան :

Արդ՝ մեր սոյն Աղօթագիրքն նորա-  
հնար քան մի պէտք չէ նկատել, այլ մի  
եւ նոյն ՃԱՄԱԿԻՐԷՔ Հայաստանեայց  
Եկեղեցւոյ, որ կը պարունակէ ամբողջ  
ժամակարգութիւնը իւրաքանչիւր ա-  
ւուրց եւ Ձայնից համեմատ. զոր այս-  
պիսի կարգաւ շարադատել եմք :

Նախ՝ ԿԻՐԱԿ օրերու ժամերգու-  
թիւնն. հանդերձ Ս. Պատարագի խոր-  
հրդով. ապա ԼՈՒՐ օրերու կարգն ա-  
ռանձին, (որ ժամատեղն չի շփոթէ  
կիրակէ աւուրց հետ.) եւ ապա ԱՐԵ-  
ԽԱԿԱԼԻ, եւ ՃԱՇՈՒ, եւ ԵՐԵՎՈՅԵԱՆ ժա-  
մերգութիւններն. որոց մէջ զտեսնուած  
ամեն քարոզներն ու Աղօթքներն  
պարզաբանուած են. մանաւանդ Ս.  
Պատարագի խորհրդոյն մէջ՝ կարելի  
բացատրութիւններ եւս աւելցուած  
են, որպէս զի աղօթատէրք լիովին  
հասկընան եւ ճիշդ տեղեկութիւն  
ունենան իրենց Ազգային Եկեղեցւոյ  
կարգաց վրայ, եւ ըստ այնմ զիտու-  
թեամբ եւ զգացմամբ աղօթեն :

Լուս առ լուս կարգ ըսելով, պէտք է իմանալ, թէ երկու շարժիչն սկըսեալ մինչև շարած, իւրաքանչիւր օրերու վրայ՝ յասուկ յասուկ Ազոթը ներ գատա որուած են: (1)

Եկեղեցւոյ ժամասացութիւնն, իւր քնդհանուր միօրինակութեան մէջ, կիրակիի, Սրբոց Տօնի, եւ Պահոց օրե-

(1) Մեր Երանեալ Ս. Հարք յատկացուցած չեն Երկու շարժի, Երեք շարժի, Չորեք շարժի, Հինգ շարժի, Ուրբաթ եւ Շաբաթ օրերու համար այս եւ այն Ազոթը եւ Շաբաթանը, եւ կամ Շաբեկի այս ինչ եւ այն ինչ զլուխները:

Երբէք, այսպիսի գատակարգութիւն չկայ մեր Ս. Եկեղեցւոյ ժամասացութեան մէջ, եւ ոչ իսկ Ս. Պատարագի ժամանակ կարդացուելու համար իբր յարմարցուած ազոթքներ աւանդած են. ինչպէս ըսինք կանխաւ:

Ուստի ոչ ոք իրաւունք ունի այդ օրի-

րու վրայ կարգադրուած է, յորմէ մեր կիրակի աւուր յատկացեալն որոշելով, Սրբոց տօնի եւ Պահոց օրերու վերաբերեալքն ի միասին թողուցինք, յար եւ նման ժամագրքին Ս. Եկեղեցւոյ որպէս զի Ազոթաւերք կարենան զիւրութեամբ հետեւիլ ժամերգութեանց նոյն օրերուն մէջ, եւ համաձայն Ս. Եկեղեցւոյ ազոթեն աւուր եւ երեկոյ:

Մեր Ս. Եկեղեցւոյ մէջ՝ իրաց աւեալ մի քանի Սրբագան Երգեր՝ որպիսի են, կիրակի օրերու համար նորոգելով, եւ հետեւեալ օրերու

նակ բմահանոյ յաւելումներն որոպէս չեն ելնել, եւ ժամագրքութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ անուանելով հրապարակ հանել, ինչպէս տեսնուեցաւ այս վերջին օրերս մի Ազոթագիրք այդպիսի սնվաւեր որոպէս չեն բեմք, հակառակ ընկալեալ ժամակարգութեան Ս. Եկեղեցւոյ Հայաստանեայց:

համար Աբրահամին երգերն, որպէս նաեւ պահոց օրերու յասուկ թագաւոր յաբիբինն, եւ մի քանի այլ Աբրահամին երգեր համառօս, բոլոր ընծերցմունք եւ երգեցմունք, Սաղմոսի Ութ Կանոնաց համեմատ՝ Ութ Չայնի բաժնուած են այսպէս. ԱԶ. (Աբրահամ 2-րդ). ԱԿ. (Աբրահամ 1-րդ) ԲԶ. (Երեմիայ 2-րդ). ԲԿ. (Երեմիայ 1-րդ, կամ Աբրահամ 1-րդ). ԳԶ. (Երեմիայ 2-րդ). ԳԿ. (Երեմիայ 1-րդ, կամ Վարդան 2-րդ). ԴԶ. (Երեմիայ 2-րդ). ԴԿ. (Երեմիայ 1-րդ, կամ Վերջ 2-րդ). Որք ամեն օր ցոյց կը տրուին Օրացոյցներու մէջ:

Այս Չայնից համեմատ կ'երգուին Սաղմոսք եւ Շարականք, եւ Սաղմոսաց կցորդ Չորս Քարոզք եւ Չորս Աղօթք՝ ամեն օր ի Դիշերային ժամերգութեան: Նոյնպէս եւ Կիրակի առուրց յասուկ Տաճարի-Իւզաբերից, Բժշկութեան, կամ Առաւօտեան, եւ Հանգստեան Աւետարանք:

Անն այսպիսի գեղեցիկ կարգաւորութեամբ մեր Ս. Հայրերէն մեզ յիշատակ թողուած սոյն ԱՂՕ. ԹԱԿԵՐԿ-ԺԱՄԱԿԵՐԵՑ, զոր պատճառսմ են զիտարապէս մեր սուրբ Թարգմանիչք՝ յախճանական երախտագիտութեան արժանի Բարեւար Ազգիս Պարծեւն ՍԱՀԱԿ եւ Մաշտոցն ՄԵՍՐՈՑ, եւ ապա երանելի Հայրապետքն մեր ԳԻՍ. եւ ՅԱՀԱԿ Մանգակունի, եւ Ծնորհային ՆԵՐՍԷՍ, այսպիսի հոգեշունչ Աղօթագիրք մի կըսեմ, որ թէ եկեղեցոյ մէջ՝ եւ թէ Առանձնական աղօթքի ժամանակ կրնայ զորժածել ջերմեւանդ հաւատացեալն, իւրարանչիւր Հայ-Քրիստոնէի վայելուչ է եւ պարտք ստանալ եւ իւր քով ունենալ. որով երբէք կարօտութիւն չ'մնար նորաճար եւ օտար աղօթագրքերն առնուլ եւ զորժածել եկեղեցոյ եւ տան մէջ. վասն զի եկեղեցոյ մէջ ժամերգութեան ասեն՝ նոյն իսկ Սաղմոս կամ Շարեկ

կարգալ կարելի չէ :

ՍԱՂԱՄԱՆ իրել մի սրանչելի մասն Ասուածաշունչ Ս. Դրոց, եւ ՆԱՐԵԿՆ իրել Ասուածախօս եւ արարուիս Ազօթագիրք մեր եկեղեցւոյ Հոգեշնորհ մի փարգապետի — Ս. ԳԵՐԿՈՐ Նարեկացւոյ քնիք գործ, այնքան սիրելի եղած են Հայ ժողովրդեան, որ մինչեւ ցայժմ շատեր իրենց սան մէջ ամեն առաւօս մի կանոն Սաղմոս եւ մի քանի գրուի Նարեկ կարգալու բարի սովորութիւնը կը պահեն, որոց հետեւի կը բաղձամ ամեն Հայ քրիստոնէից համար :

Բայց եկեղեցւոյ մէջ, յորում երեկոյել առաւօս քնտանօք Սաղմոսներ կը կարդացուին երգելով կամ փոխասացութեամբ, այս Սաղմոսներուն պէտք է ծայնակցի ժողովուրդը. եւ մինչեւ անգամ կարգալ չգիտցողներն եւս ուշագրութեամբ ակամջ դնելով ամեն ազօթից եւ երգոց. պարսին ջանալ ի բերան սովրելու զս-

նանք, մասնաւորապէս ՏԵՐ-ՆԻՅԱՆ Ազօթ ( Հայր մերն, ) ՓՈՒՏ ԲԵՆԻՅԱՆ եւ ՍՐԵՔ ԱՐԿԱՆՆԷՆԷՆԷՆԷՆ երգերն, ՀԱՄԱՐԻ ՀԱՆՔՆԻՅՆ ( Հաւատամքն ), եւ ՈՂԵՔԻՅՆ ԱՐԿԱՆՆԷՆԷՆԷՆԷՆԷՆ Սաղմոսն, եւ ՀԱՄԱՐԻ ԻՄԱՆՈՒՄԻ 24 տուն Ազօթ քն. եւ այլն. եւ այսպէս միահամուռ եւ միարեւան ջերմուանդութեամբ կատարեն Հրապարակական Ասուածաշունչութիւնն, համաձայն քահանայից եւ դպրաց օրհներգութեանց :

Եւ որ ժամանակ Ասուածաշունչ Ս. Դիրք կարդացուի, ժողովուրդը պարտաւոր է երկիւղածութեամբ մտիկ քնել, եւ խնդրել Ասուծմէ. որ այն երկնային պատուէրներն իրեն արտին վրայ դրոշմուին : ՈՐՀԱՓԻ կը մեղանչեն այն քրիստոնեայք, որ Ս. Պատարագի մէջ Մարգարէական եւ Առարկական Թղթոց ընթերցումն սկսածին պէս՝ եկեղեցիէն դուրս ելնել սովորութիւնն բրած են իրենց, իրել Թէ անպէտ մի քանի ունկնդրութիւն չը-

նելու համար. այն ինչ՝ այն Ասուածային խօսքերն են, որ իրենց անմահ հոգիներուն փրկութեան ճանապարհը կը ցուցնեն, եւ թէ՛ Եկեղեցին իսկ՝ նոյն Ս. Գրոց վրայ հիմնարկուած է եւ կազմուած:

Եկեղեցւոյ պաշտօնէից պարտաւորութիւնն է զգուշացնել զժողովուրդըն այս մեղքէն. եւ ամեն Կիրակի բոլոր եկեղեցեաց մէջ նոյն աւուր Ս. Գրոց ընթերցուածոց համառօտ եւ պարզ բացատրութիւնը ճաշտով, խրատել զանոնք՝ որ արժուն մասն միշտ, եւ ճանաչեն իրեւ քրիստոնեայ մարդ առ Ասուած, եւ առ ընկերն ունեցած պարտաւորութիւնքն, եւ ՀԱՒԱՏՈՎ, ՅՈՒՍՈՎ, եւ ՍԵՐՈՎ, ապրին այս աշխարհի մէջ. որովհետեւ այս երեք Ասուածանուէր առարկնութեամբ կրնայ զարգանալ եւ բարգաւաճիլ Ազգ մի, եւ յախտենական կենաց արժանի լինել:

Եկեղեցի զնացող Քրիստոնեայք պարտին յիշել, թէ Ասուծոյ Տունը կ'երթան, եւ նորա ամենաեստ աչքին առջեւ կանգնած են, ուստի պէտք է որ ամեն պարկեշտութիւն, երկիւղածութիւն եւ համեստութիւն ունենան:

Եկեղեցւոյ մէջ իրարու հետ խօսիլ եւ խնդալ, շնտանկայել եւ շնտանկայախ բան է, եւ մեծ մեղք է:

Այր մարդիկ, ըստ Առաքելական պատուէրին զլուխնին բաց, եւ կին մարդիկ՝ պարկեշտ կերպով զլուխնին ծածկած պէտք է մտնեն յեկեղեցի: (Ա. Կ. Բ. Բ. ԺԱ. 4—7:)

Կանայք մանաւանդ, եկեղեցի զընացած ատեն, պէտք է այնպէս համեստ կերպով հագուին, որ բնաւ հասարակաց գայթակղութեան պատճառ չ'լինին, եւ Ասուծոյ տունը զբոսվայրերու չի նմանցունեն:

Այր մարդիկ եւս, կիրակի օրերն՝ ի պատիւ Քրիստոսի, ըստ չափու կա-

բողութեան, պարզ եւ մարուհ հագուստով երթալու են յեկեղեցի, եւ զգուշանալ՝ որ եւ է կերպով իրենց ընկերներուն զգուանք պատճառելէ:

Թէ այր եւ թէ կին մարդիկ, առանց բանաւոր պատճառի, պէտք չէ որ եկեղեցւոյ ժամերգութիւնը չաւարտած դուրս ելնեն, զի Կիրակին մարմաւոր գործի օր չլինելով, քրիստոնեայն պարտի Հասարակաց աղօթից ներկայ գտնուիլ, եւ Ս. Պատարագի Խորհրդոյն շնորհքն վայելիլ, եւ հոգեւոր գործով եւ մտածութեամբ անցունել նոյն օրը:

Վերջապէս ամեն Քրիստոնեայ անձանց նու իրական պատճառութիւնն է ջանալ՝ սա հիստեւեայ Առաքելական խրատներն սրտի մտք կատարել, իւրեանց ընթացից ամենօրեայ կանոն ընտրելով զայն:

Եղբայրսիրութեան մէջ՝ իրարու

« վրայ զժամ եղիք. պատուելու մէջ՝ « իրարմէ յառաջ անցէք, հոգիով եւ « ապէք, Տեսան ծառայեցէք, Յու- « սով խնդացէք, նեղութեան համբե- « րեցէք, սէպ աղօթքի կացէք, « Եւ պէտք արոց (քրիստոնեայ եղբարց « պէտքերուն) հաղորդ (մասնակից) ե- « ղիք, եւ հիւրասիրութիւն ունեցէք, « Ձօնկ հալածողներն օրհնեցէք, ու « մի անիծէք. Խնդացողներուն հետ « խնդացէք, եւ լացողներուն հետ լա- « ցէք, Իրարու վրայ միեւնոյն խոր- « հուրդն ունեցէք. ամբարտաւան մի « ըլլաք, այլ խոնարհներուն հետ խո- « ւարհեցէք. չարութեան փոխարէն « չար մի հատուցանէք, ամէն մարդոց « առջեւ բարի բաներ խորհեցէք: « Որչափ կարելի է, ամեն մարդոց հետ « խաղաղութիւն ունեցէք, Վրէժխնդ- « րութիւն մի ընէք, սիրելիք, այլ բար- « կութեան տեղի տուէք. վասն զի զըր- « ուած է. Իմ է վրէժխնդութիւն եւ

«Ես պիտի հասուցանեմ, կ'ըսէ Տէրը: «Եթէ թշնամիդ անօթի է հաց սուր ասնոր, եւ թէ որ ծարաւի է ջուր ասուր. այսպէս ընելով, անոր զխուճ վերայ կրակի կայծեր կը դիզես: Չարէն մի յազթուիր, այլ բարիք ընելով յազթէ չարին: (Հ—Է ԺԲ. 10—21.)

Ասանոր վերջացնելով եւ ես իմ Յառաջարանն, կը բարեմազթեմ առ Միակ Գլուխն Եկեղեցւոյ եւ ճշմարիտ Քահանայապետն Յիսուս Քրիստոս, որ այս իմ աշխատութիւնս արդիւնաւոր լինի ամեն ազօթասիրաց համար, շնորհիւ Ամենագոր Ս. Հոգւոյն Ասուծոյ. եւ ամենայն որդիք եւ զաւակունք Հայաստանեայց Քրիստոսահիմն Եկեղեցւոյ՝ ամին եւ բարգաւաճին բարեպաշտութեան, առաքինութեան եւ Ասուածպաշտութեան մէջ, իւրեանց ամենագովելի Նախահաց նման, որք անարատու-

թեամբ եւ անայլայլելի Ուղղափառութեամբ պահեցին զՀաւատք մեր եւ զԿրօն. զոր պահպանեսցէ Տէր միշտ անյազթելի ի դրանց դժոխաց ց'յաւրիսեանս ժամանակաց. Ամէն:

Տրուպ պատգոմեայս

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՍՅ

ՅՈՎՀԱՆՆԵՒՍ ՔԱՀԱՆԱՅ

Կ. ՄԿՐԵԱՆ

Ի 16/28 Յունուարի 1895

Ի Հայկեան Թուականի 4386

Եւ ըստ Տոմարիս մերում ՌՅԻԳ.

Արաց ամսոյ Թ.

Ի. Կ. Պոլիս—Բերա.

ՉԱՅՆՔ ՍԱՂՄՈՒՆՑ

Չ-ՆԻԿ	Կ-ՆԻԿ
Գ.Կ.	1
Ս.Չ.	2
Ա.Կ.	3
Բ.Չ.	4
Բ.Կ.	5
Գ.Չ.	6
Գ.Կ.	7
Դ.Չ.	8

բանեալ է այր.  
 երկինք պատկեն.  
 Մի նախանձիր.  
 Ողորեն.  
 Իբրև զի.  
 Տեր ապաւեն.  
 Խոսովան.  
 Ի նեղութեան.

ՉԱՅՆՔ ԱԻՆՏԻՄԱՆՑ

Չ-ՆԻԿ	—
Գ.Կ.	} ՄԱՏՔԷՈՍ
Բ.Կ.	
Բ.Չ.	} ՄԱՂՈՍ
Դ.Չ.	
Ա.Կ.	} ՂՈՒԿԱՍ
Գ.Կ.	
Ս.Չ.	} ՅՈՎՀԱՆՆԷՍ
Գ.Չ.	

ՀՐԱԺԱՐՈՒՄԸ

Ձերեւս է յԱրեմոսոս և յեւս է կոր  
 աշեւէլ աւել, երէցս էրկեւէլ.

Հրածարիմք 'ի սատանայէ՛  
 ևւ յամենայն խարէութիւնէ նորա,  
 'ի պատրանաց նորա, 'ի խորհրդոց  
 նորա, 'ի գնացից նորա, 'ի չար կամաց  
 նորա, 'ի չար հրեշտակաց նորա, 'ի չար  
 պաշտօնէից նորա, 'ի չար կամարարաց  
 ևւ յամենայն չար զօրութիւնէ նորա՝  
 հրածարելով հրածարիմք :



Եւ սալս դաւանալով յԱրեւել ,  
 Բացաբլուտի և յեւանաճաճ կերպի-  
 սակ շալս :

**ԳԱՆՍՆՈՒԹԻՒՆՆԵ**

**Ուղղափառ Հաւատոյ**

Խոստովանիմք եւ հաւա-  
 տամք ամենակատար սրաիւ  
 զՀայրն Աստուած՝ անեղ , ան-  
 ծին , եւ անսկիզբն . այլեւ Ծնող  
 Որդւոյ եւ Բզիսող Հօգւոյն Սրբոյ :

Հաւատամք զԲանն Աստ-  
 ուած , անեղ՝ ծնեալ՝ եւ սկսեալ  
 'ի Հօրէ նախ քան զյաւիտեանս .  
 ոչ յետոյ եւ ոչ կրտսեր . այլ  
 սրբան Հայրն Հայր՝ ընդ նմին  
 եւ Որդին Որդի :

Հաւատամք զՍուրբ Հոգին  
 Աստուած՝ անեղ . անժամանակ .  
 ոչ ծնեալ՝ այլ Բզիսեալ 'ի Հօրէ .  
 էակից Հօր եւ փառակից  
 Որդւոյ :

Հաւատամք զԵրրորդութիւ-  
 նն սուրբ , Մի Բնութիւն , Մի  
 Աստուածութիւն . ոչ երեք աս-  
 տուածք , այլ՝ Մի Աստուած , մի  
 կամք , մի թագաւորութիւն ,  
 մի իշխանութիւն . արարիչ երե-  
 ւելեաց եւ աներեւութից :

Հաւատամք յեկեղեցի սուրբ՝  
 զԹողութիւն մեղաց , հաղոր-  
 դութեամբ սրբոց :

Հաւատամք զմինն յերից ան-  
 ձանց զԲանն Աստուած՝ ծըն-  
 եալ 'ի Հօրէ նախ քան զյա-  
 ւիտեանս . 'ի ժամանակի իջեալ  
 յԱստուածածին Կոյսն Մարիամ .  
 առեալ յարեւէ նորա՝ միա-  
 ւորեաց ընդ իւրում աստուա-  
 ծութեանն . իննամսեայ ժուժ-  
 կալեալ յարգանդի անարատ  
 Կուսին . եւ եղև Աստուածն  
 կատարեալ՝ Մարդ կատարեալ ,  
 հօգւով եւ մտօք եւ մարմնով .

մի անձն, մի դէմ, միաւորեալ Մի Բնութիւն: Աստուածն Մարդացեալ առանց փոփոխման եւ առանց այլալուծեան. անսերմն Յղութիւն եւ անապական Մնունդ. որպէս ոչ է սկիզբն Աստուածութեան նորա՝ եւ ոչ վախճան Մարդկութեան նորա: (Զի Յիսուս Քրիստոս երէկ եւ այսօր՝ նոյն եւ յաւիտեան):

Հաւատամք զՏէրն մեր Յիսուս Քրիստոս շրջեալ 'ի վերայ երկրի. յետ երեսուն ամաց եկեալ 'ի Մկրտութիւն. Հայր 'ի վերուստ վկայեալ Դատ է Որդի իմ սիրելի. եւ Հոգին Սուրբ ազաւնակերպ իջեալ 'ի վերայ նորա: Փորձեալ 'ի սատանայէ եւ յաղթեալ նմա: Քարոզեալ մարդկան զփրկութիւն: Աշխատեալ մարմնով, վաստակ-

եալ՝ քաղցեալ՝ եւ ծարաւեալ: Յետոյ եկեալ կամաւ 'ի չարչարանս. իաջեալ եւ մեռեալ մարմնովն, եւ կենդանի Աստուածութեամբն: Մարմինն եղեալ 'ի դերեզմանի՝ միաւորեալ Աստուածութեամբն, եւ Հոգւովն իջեալ 'ի դժոխս՝ անբաժանելի Աստուածութեամբն: Քարոզեալ հոգւոցն՝ աւերեալ զդժոխս՝ եւ ազատեալ զհոգիսն: Յետ երկոց ամսոց յարուցեալ 'ի մեռելոց եւ երևեալ աշակերտացն:

Հաւատամք զՏէրն մեր Յիսուս Քրիստոս՝ նովին մարմնովն Համբարձեալ յերկինս եւ նրստեալ ընդ աջմէ Հօր: Այլեւ գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր՝ 'ի դատել զկենդանիս եւ զմեռեալս: Որ եւ յարութիւն ամենայն մարդկան:

Հաւատամք եւ զհատուցումն  
գործոց . արգարոցն կեանք յա-  
ւիտենական , եւ մեղաւորացն  
տանջանք յաւիտենական :

Ջ Գ Զ Ո Ւ Մ Ն

Մեղայ Ամենատուրք երրոր-  
դութեանն՝ Հօր եւ Որդոյ եւ  
Հոգւոյն Սրբոյ : Մեղուցեալ եմ  
Աստուծոյ :

Խոստովանիմ առաջի Աստու-  
ծոյ , եւ սրբուհւոյ Աստուա-  
ծանին , եւ առաջի քս Հայր  
սուրբ՝ զամենայն մեղս զոր  
գործեալ եմ :

Քանզի մեղայ խորհրդով ,  
բանիւ եւ գործով , կամայ եւ  
ակամայ , պիտութեամբ եւ ան-  
պիտութեամբ , Մեղայ Աստուծոյ :

Մեղայ հոգւովս եւ գորու-  
թեամբ սորա . մտօքս եւ շարժ-

մամբ սորա . մարմնովս եւ զգա-  
լութեամբ սորա : Մեղայ՝ զօ-  
րութեամբ հոգւոյս , խորաման-  
կութեամբ , անզգամութեամբ ,  
յանզգնութեամբ , եւ երկչտու-  
թեամբ <sup>1</sup> , շտայութեամբ <sup>2</sup> եւ  
ժրտութեամբ <sup>3</sup> , զեղխութեամբ <sup>4</sup>  
եւ անիրաւութեամբ , չտրահա-  
ւանութեամբ , յուսահատու-  
թեամբ եւ թերամտութեամբ ,  
Մեղայ Աստուծոյ :

Մեղայ չար խորհրդով մը-  
տացս , նենգութեամբ , ատե-  
լութեամբ , խեթիւ <sup>5</sup> , մախանօք <sup>6</sup> ,  
յաշաղանօք <sup>7</sup> , թուլութեամբ , պո-  
ւրնկական խորհրդով՝ արուական ,  
իզական , անասնական , գրատա-  
կան , զազանական , ՚ի զիշերի եւ ի

<sup>1</sup> Է-ի-ս-ր-ութեամբ . — <sup>2</sup> Տ-ի-լ-լ-լ . — <sup>3</sup> Է-լ-  
ժ-ի-լ-լ-լ . — <sup>4</sup> Ե-ն-ա-ր-ութե-ն-ս-լ .  
<sup>5</sup> Յ-ս-ն-ա-ն-օ-ք . — <sup>6</sup> Լ-ո-ր-ն-ա-խ-ն-օ-ք .  
<sup>7</sup> Լ-ո-ր-ն-ա-յ-ի-շ-եր-ի .

աս ընջևան , երազական գիճու-  
թեամբ<sup>1</sup>, եւ անըջական գարշ աղ-  
տեղութեամբ . Մեղա՛յ Աստուծոյ :

**Մ**եղայ ցանկութեամբ մարմ-  
նոյս . հեշտութեամբ<sup>2</sup>, սղեր-  
դութեամբ<sup>3</sup>, յորանջմամբ քնոյ ,  
չարժութեամբ մարմնոյս , եւ  
գազրազործութեամբ <sup>ի</sup> պէս-  
պէս արաս . հեշտայրութեամբ  
լսելեացս . արատութեամբ ա-  
չոցս , ցանկութեամբ որախս ,  
իզութեամբ սնգացս , պաղչոտու-  
թեամբ<sup>4</sup> բերանոյս , անժուժկալու-  
թեամբ<sup>5</sup>, շուայտութեամբ<sup>6</sup> եւ ար-  
բեղութեամբ . Մեղայ Աստուծոյ :

**Մ**եղայ չարարանութեամբ լե-  
զուիս . ստախօտութեամբ , սուտ  
երգմամբ , երցմնաղանցութեամբ ,

<sup>1</sup> Մեղալիս — թե՛նւ՛լ . — <sup>2</sup> զբօռնւմ . —  
<sup>3</sup> սնգալիս — թե՛նւ՛լ . — <sup>4</sup> լիւրն — լի յէջ . —  
<sup>5</sup> սնգալիս — թե՛նւ՛լ . — <sup>6</sup> շտօպանց ի-  
ր — իս — մւ՛լ .

հակառակութեամբ , վիճարանու-  
թեամբ , բանսարկութեամբ , քսու-  
ղատարկարանութեամբ , եւ ծա-  
ղու զրախօտութեամբ<sup>1</sup>, հեր-  
ձախօտութեամբ<sup>2</sup> եւ անիճարա-  
նութեամբ արանջելով , զըժ-  
դոհելով , բանբասելով եւ հայ-  
նոյելով . Մեղա՛յ Աստուծոյ :

**Մ**եղա՛յ զողութեամբ ձե-  
ռացս . ազահելով , զրկելով ,  
հարկանելով , սպանանելով , եւ  
ընդ գարշս<sup>3</sup> ամելով . Մեղա՛յ  
Աստուծոյ :

**Մ**եղա՛յ . ամենայն յօղու-  
ծովք չինուածոյս , եւ ամենայն  
սնդամօք մարմնոյս . հնգեակ  
զգայարանօքս , եւ վեցեկի չարժ-  
մամբս . վերամբարձ սոնահա-  
րութեամբ եւ վայրաքարշ մեղ-

<sup>1</sup> պարուղ իսոսի բու՛լ . — <sup>2</sup> հերձանաձալի իսո-  
տեր ընել . — <sup>3</sup> քարելի բանբու՛լ յեոտեր  
դնել .

կուսեամբ. յաջ եւ յանեակ խոտորելով. զառաջնոցն մեղանչելով, եւ վերջնոցն չար նշանակ գողով, Մեղս'յ Աստուծոյ.

**Այլ** եւ մեղս'յ եօթնիցս յանցանօք՝ մահացու մեղօք. Հրպարտութեամբ՝ եւ մասամբք նորին. Նախանձու եւ մասամբք նորին. Բարկութեամբ՝ եւ մասամբք նորին. Ծուլութեամբ եւ մասամբք նորին. Ազահութեամբ եւ մասամբք նորին. Որկրամուլութեամբ եւ մասամբք նորին. Բզջախոտութեամբ<sup>1</sup> եւ մասամբք նորին. Մեղս'յ Աստուծոյ :

**Այլ** եւ մեղս'յ ամենայն պատուիրանացն Աստուծոյ յանձնառելեացն եւ հրաժարելեացն. զի ո՛չ զյանձնառականան կատարեցի, եւ ո՛չ ի հրաժարել-

<sup>1</sup> Լար ցանխ-թի-նով եւ պղծ-թի-նով.

եացն հեռացայ : Զօրէնս առի՝ եւ յօրինացն հեղգացայ՝. 'ի կարգս քրիստոնէութեան հրաւիրեցայ՝ եւ գործովս անարժան գտայ. զիսելով զչարն՝ կամաւ կորացայ<sup>2</sup>, եւ ի բարեաց գործոյ ես ինձէն հեռացայ. վայ ինձ, վայ ինձ, վայ ինձ : Զո՞րն ասեմ, կամ զո՞րն խոտուովանիմ. զի անթիւ են յանցանք իմ. անասելի<sup>3</sup> են անօրէնութիւնք իմ. աններելի են ցաւք իմ, եւ անբժշկելի են վէրք իմ, Մեղս'յ Աստուծոյ.

Հայր սուրբ, զքեզ ունիմ միջնորդ հաշտութեան եւ բարեխօս առ միածին Որդին Աստուծոյ. զի իշխանութեամբդ՝ որ առեալ է քեզ. արձակեացես զիս ի կապից մեղաց իմոց, ազաչեմ զքեզ :

<sup>1</sup> Բաւարացայ. — <sup>2</sup> Զ-եցայ. — <sup>3</sup> Զպարտութեամբ.

**Ա.Գ.Վ.** Այս Մեղայական ասացուածք, Զղշուծի օրինակ կամ ձեւ մի են, միտք բերել տալու կամ յիշեցնելու համար խոստովանելու դիմող բրիտաններն իւր մեղքերն առաջի Քահանային :

Քանզի միմիայն այս ձեւը կամ օրինակը կարգալով կամ զրուցելով՝ կատարեալ խոստովանութիւն եղած չ'լինիր, այլ լոկ ձեւակերպութիւն. վասն որոյ խոստովանորդին պարտաւոր է ասով՝ իւր խղճին վրայ ծանրացած մեղքերն յիշել, եւ իւր բերանով յատկապէս խոստովանիլ, եւ իւր զղշումն յայտնել, ինչ որ կրնայ զորժած լինիլ, կամայ, ակամայ, զիտնալով կամ չգիտնալով. ընդ դէմ Տասն պատուիրանացն Աստուծոյ, ընդդէմ ճշմարտութեան Աւետարանին Քրիստոսի. եւ ընդդէմ Եկեղեցական կանոնաց. որպէս զի ըստ այնմ ընդունի խրատ ապաշխարութեան ի Քահանայէն, և Արձակումն յանուն Տեառն Յիսուսի, որ միայն է՛ Բաւիչ մեղաւորաց, և Յոյս ապաշխարողաց :

## Ա.ԲԶԱԿՈՒՄՆ

(Զոր Քահանայն ասյ)

Ողորմեացի քեզ Մարդասէրն Աստուած, եւ թողութիւն չնորհեացէ ամենայն յանցանաց քոց, խոստովանեցելոցն եւ մոռացելոցն : Եւ ես կարգաւս Քահանայական իշխանութեան, եւ հրամանաւն Աստուածային՝ թէ « Զոր արձակեցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս. » նովին բանիւն արձակեմ զքեզ յամենայն մասնակցութենէ մեղաց քոց. ի խորհրդոց, ի բանից եւ ի գործոց, յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ :

Եւ դարձեալ տամ զքեզ ի խորհուրդս Սուրբ Եկեղեցւոյ. զի զոր ինչ զործիցես բարիս. եղիցի քեզ ի բարեգործութիւն եւ ի փառս հանդերձեալ կենացն : Ամէն :

## ՏԱՍՆԱԲԱՆԵՍԵ ՕՐԷՆԲ

## ԿԱՄ ՊԱՏՈՒԻՐԱՆԲ

**Ա.** Ես եմ Տէր Աստուած քո ,  
մի՛ եղիցին քեզ այլ աստ-  
ուածք բաց յինէն :

1. (Ես եմ բու Տէր Աստուածդ , ինձմէ  
զատ ուրիշ աստուածներ չ'ունենաս :)

**Բ.** Մի՛ արասցես քեզ կուռս  
ըստ ամենայն նմանութեան .  
մի՛ երկիրպագազանիցես նո-  
ցա , եւ մի՛ պաշտեսցես :

2. (Դուն քեզի կուռք չի շինես , և ո՛չ  
մէկ բանի նմանութիւնով , և անոնց եր-  
կրրպագութիւն չընես , ու չի պաշտես :)

**Գ.** Մի՛ անուցուս զանուն  
Աստուծոյ քո ի վերայ սը-  
նոտեաց :

3. (Բու Աստուծոյդ անունը՝ անտոի  
բաներու վրայ չի դնես , կամ նորա ա-  
նունը պարսպ տեղ բերանդ չառնուս :)

**Դ.** Յիշեալիր զօրն շարաթու ,  
սրբեղ զնա :

4. (Կիրակի օրը սուրբ պիտի պահես :)

**Ե.** Պատուեա՛ զհայր քո եւ  
զմայր :

5. (Պատուէ քու հայրդ ու մայրդ :)

**Զ.** Մի՛ սպանաներ :

6. (Մարդասպանութիւն մի ընէր :)

**Է.** Մի՛ շնար :

7. (Շնութիւն , պղծութիւն մի ընէր :)

**Ը.** Մի՛ գողանար :

8. (Գողութիւն մի ընէր :)

**Թ.** Մի՛ սուտ վկայեր :

9. (Սուտ վկայութիւն մի տար , սուտ  
մի խօսիր :)

**Ժ.** Մի՛ ցանկար տան ընկերի  
քոյ եւ մի՛ ամենայնի զինչ  
ընկերին քո իցէ :

10. (Մի ցանկար քու ընկերիդ տանը ,  
եւ անոր ունեցած ամեն բաներուն :)

**ԵՕԹՆ ՄՍՀԱՅՈՒ ՄԵՂՔ  
ԿԱՄ ՄՈՒՈՒԹԻՒՆՔ**

Ա. Հղարատութիւն<sup>1</sup>.

Բ. Նախանձ<sup>2</sup>.

Գ. Բարկութիւն<sup>3</sup>.

Դ. Ծուլութիւն<sup>4</sup>.

Ե. Ագահութիւն<sup>5</sup>.

Զ. Որկրամոլութիւն<sup>6</sup>.

Է. Բղջախոտութիւն<sup>7</sup>.

1. Հղարդ տե՛ծ-տե՛ր ըլլալ:
2. Զար նախանձ, շար տերդ ըլլալ:
3. Պարտադ տեղ բարկանալ:
4. Ծոյլ, բանգող ըլլալ:
5. Ագահ, կծծէ ըլլալ:
6. Զախաղանց կերտ-խոտ տե՛ր ետե՛լ:
7. Զար ցանկոտ-խե՛տ, պղծոտ-խե՛տ  
ընել:

**ԵՕԹՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՔ**

Ա. Խոնարհութիւն<sup>1</sup>.

Բ. Եղբայրութիւն<sup>2</sup>.

Գ. Հեղութիւն<sup>3</sup>.

Դ. Աշխատասիրութիւն<sup>4</sup>.

Ե. Ողորմասիրութիւն<sup>5</sup>.

Զ. Ժուժկալութիւն<sup>6</sup>.

Է. Ողջախոտութիւն<sup>7</sup>.

1. Խոնարհ ըլլալ:
2. Եղբայր, ընկերը, տերեւ-յարգել:
3. Հանդարտ, հասեղ ըլլալ:
4. Աշխատող, բանող ըլլալ:
5. Ողորմել, ողորմութե՛տ տալ:
6. Համբերել, անձը շարել, պո-  
նեցողութե՛տ ընել:
7. Պարկելը՝ ծախար շարտ սանե՛տալ:



## Քրիստոնէական Առաքինութիւնք

Ա. Խոնեմութիւն<sup>1</sup> .

Բ. Արիութիւն<sup>2</sup> .

Գ. Արդարութիւն<sup>3</sup> .

Դ. Բարեխառնութիւն<sup>4</sup> .

1. Խեղցե՛ խոնեմ ըլլալ, հորձելով  
 փորձել:
  2. Արիութիւն ունենալ կրճախի,  
 հասարակ փորձոց մեջ:
  3. Իրաւանք ճանաչելու կարարել,  
 անէրաս Բան շնեւ:
  4. Չափասար ըլլալ աւել Բանի մեջ,  
 պարկէշարութիւն ունենալ:
- Որոց աւելուան գլխին է  
**Ս է Ր**



Bouasse-Lebel.

Paris.

ԿՈՐԳՈՒՈՐՈՒԹԻՒՆ  
 ՀԱՍՏԱՐԱԿԱՅ ԱՂՈԹԻՅ  
 ՉԱՅԱՍԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ  
 ՈՐ ԿՈՏԱՐԻ Ի ՄԷՋ ԳԻՇԵՐԻ  
 Ի ԴԷՄՍ ՀՈՐ ԱՍՏՈՒԾՈՑ

Կ Ա Ր Գ

ԿՆԻՐԱԿԵ ԱՐԻՈՒՅ ԵՒ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ՏՕՆԵՑ

Օրհնեալ Տէր մեր Յիսուս

Քրիստոս. ամէն:

**Հ**ԱՅՐ մեր որ յերկինս ես.  
 սուրբ եղիցի անուն քո :  
 Եկեացէ արքայութիւն քո .  
 եղիցին կամք քո որպէս յերկինս  
 եւ յերկրի: Զհոց մեր հանապա-  
 զորդ՝ սուր մեզ այսօր : Եւ թող

մեզ զպարտիս մեր, որպէս եւ  
մեք թողումք մերոց պարտա-  
պանաց: Եւ մի ասնիր զմեզ 'ի  
փորձութիւն. այլ փրկեա՛ զմեզ  
'ի չարէ: Զի քո՛ է արքայութիւն  
եւ զօրութիւն եւ փառք յաւի-  
տեանս. Ամէն:

**Տէ՛ր**, եթէ զչրթունս իմ բա-  
նաս, բերան իմ երգեսցէ զօրհ-  
նութիւնս քո՛:

**Տէր**, եթէ զչրթունս իմ բա-  
նաս, բերան իմ երգեսցէ զօրհ-  
նութիւնս քո՛:

**Օրհնեալ** համազոյ եւ միաս-  
նական անրաժանելի սուրբ Եր-  
րորդութիւնն՝ Հայր եւ Որդի եւ  
Հոգի Սուրբ. այժմ եւ միշտ եւ  
յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Մաղնս Գ.

(Ա.Ն.) **Տէ՛ր**, զի՞ բազում եղևն  
նեղիչք իմ, եւ բազումք յարեան՝  
'ի վերայ իմ:

Բազումք ատէին զանճնէ իմ-  
մէ, թէ չիք փրկութիւն սորա  
առ Աստուած իւր:

Այլ դու, **Տէր**, օգնական իմ  
ես, փառք իմ եւ բարձրացու-  
ցիչ զլիսոյ իմոյ:

Զայնիւ իմով ես առ **Տէր** կար-  
գացի, եւ լուաւ ինձ 'ի լեռնէ  
սրբոյ իւրմէ:

Ես ննջեցի եւ 'ի քուն եղէ,  
զարթեաց եւ **Տէր** ընդունելի իմ է:

Ո՛չ երկեսայց՝ ես 'ի բիւրաւոր  
զօրաց նոցա. ոչք շուրջանակի  
պատեալ պաշարեալ պահէին զիս:

Արի՛, **Տէր**, եւ փրկեա՛ զիս  
Աստուած իմ. զի դու հարեր

զամենեան, ոչք էին ընդ իս  
թշնամութեամբ 'ի տարագար-  
առց<sup>1</sup>, եւ զատամուս<sup>2</sup> մեղա-  
ւորաց փշրեցես:

Տեանդ է փրկութիւն, 'ի վե-  
րայ ժողովրդեան քոյ, օրհնու-  
թիւն քո:

(Ս.Վ. 2Է.) Տէր Աստուած փրկու-  
թեան իմոյ, 'ի տուէ կարգացի  
եւ զիշերի առաջի քո:

Մացին աղօթք իմ առաջի քո,  
Տէր, խոնարհեցի ունկն քո 'ի  
ինդրուածս իմ:

Զի լցաւ չարչարանօք անձն  
իմ, եւ կիանք իմ 'ի զժոխս մեր-  
ձեցան. եւ համարեցայ ես ընդ  
այնոսիկ՝ որք իջանն 'ի զուր<sup>3</sup>:

Եղէ ես որպէս մարդ առանց  
օգնականի, եւ 'ի մեռեալս ազատ:

<sup>1</sup>Զուր Գեղ. <sup>2</sup>Այլուս. Ե. <sup>3</sup>Սուր. Ե.

Որպէս զփրաւորս, որք նըն-  
չեն 'ի գերեզմանս:

Զորս զու ոչ յիշեցեր, նօքա  
'ի ձեռանէ քումմէ մերժեցան:

Եզին զիս 'ի գրի ներքնուսն,  
'ի խաւարի եւ 'ի ստուերս<sup>1</sup> մահու:

Յիս հաստատեցաւ սրամտու-  
թիւն քո, զամենայն դրօսանս  
քո ամեր 'ի վերայ իմ:

Հեռի արարեր յինէն զծա-  
նօթս իմ, եւ եզին զիս նշաւակ<sup>2</sup>  
ի բեանց:

Մասնեցայ եւ ոչ կյանէի, աչք  
իմ սկարացան յաղքատութենէ:

Ազաղակեցի առ Տէր զօրհա-  
նապաղ, եւ համբարձի առ քեզ  
զձեռս իմ:

Մթթէ մեռելոց աննիցես զըս-  
քանչելիս քո, կամ բժիշկք յա-  
րուցեալ՝ խոստովան առնիցեն  
առ քեզ:

<sup>1</sup>Սուր. Ե. Ե. Ե. <sup>2</sup>Սուր. Ե. Ե. Ե.

Միթէ պատմեցցէ՞ ոք երբէք  
'ի գերեզմանի զողորմութիւնս  
քո, կամ զճշմարտութիւնս քո  
'ի կորստեան:

Միթէ ճանաչիցին 'ի խաւարի  
սքանչելիք քո, կամ արդարու-  
թիւն քո յերկիր մոռացեալ:

Ես առ քեզ, Տէր, ազադա-  
կեցի, առաւօտու աղօթք իմ ժա-  
մանեացն առ քեզ:

Ընդէր, Տէր, մերժես զանձն  
իմ, կամ զարձուցանես զերեսս  
քո յինէն:

Տնանկ եւ ժոստակաւոր եմ  
ես 'ի մանկութենէ իմմէ. 'ի  
բարձրութենէ խոնարհեցայ եւ  
աիշեցայ:

Յիս հաստատեցաւ բարկու-  
թիւն քո, արհաւիրք՞ քո խռ-  
վեցուցին զիս:

Շրջեցան զինեւ որպէս ջուր,

10...էէ է...

զօր ամենայն պաշարեցին զիս  
'ի միասին:

Հեռի արարեր յինէն զբարե-  
կամս իմ եւ զճանօթս իմ, վասն  
թշուառութեան իմոյ:

(Սւլ. ձԲ.) Օրհնես անձն իմ զՏէր,  
եւ ամենայն ոսկերք իմ զանուն  
սուրբ նորա:

Օրհնես անձն իմ զՏէր, եւ  
մի մոռանար զամենայն սուրս  
նորա:

Ո քաւէ զմեզս քո, բժշկէ  
զամենայն հիւանդութիւնս քո:

Ո փրկէ յապականութենէ  
զկեանս քո, պսակէ զքեզ ողոր-  
մութեամբ եւ զթութեամբ:

Ո լնու 'ի բարութենէ զցան-  
կութիւն քո՝ նորոգեցի որպէս  
արծուոյ մանկութիւն քո:

Առնէ ողորմութիւնս Տէր, եւ  
իրաւունս ամենայն զրկելոց:

Եցոյց Տէր զճանապարհս իւր

Մովսէսի, եւ որդւոցն իսրայէլի զկամս իւր :

Գթած, ողորմած է Տէր, երկայնամիտ եւ բազումօղորմ :

Ո՛չ իսպառ բարկանայ մեզ Տէր, եւ ո՛չ յաւիտեան սրտէ սրտ :

Ո՛չ ըստ մեղաց մերոց արար մեզ Տէր, եւ ո՛չ ըստ անօրէնութեան մերում հատոյց մեզ :

Այլ որպէս բարձր են երկինք յերկրէ, այնպէս զօրացոյց Տէր զողորմութիւն իւր ՚ի վերայ երկիւզածաց իւրոց :

Որչափ հեռի են արեւելք յարեւմտից, այնչափ հեռի արար ՚ի մէնջ զանօրէնութիւնս մեր :

Որպէս զթայ հայր ՚ի վերայ որդւոց իւրոց, այնպէս զթասցի Տէր յերկիւզածս իւր :

Զի նա գիտաց զստեղծուածս մեր, եւ յիշեաց թէ հող եմք :

Մարդոյ՝ որպէս խոտոյ են

աւուրք իւր, որպէս ծաղիկ վայրի՝ այնպէս ծաղկի :

Շնչէ՛ ՚ի նմա հողմ՞, եւ ո՛չ է, եւ ո՛չ եւս երեւի տեղի նորա :

Բայց ողորմութիւն Տեառն՝ մնաց յաւիտեանս յաւիտենից ՚ի վերայ երկիւզածաց իւրոց . եւ արդարութիւն նորա յորդւոց մինչեւ յորդիս :

Ոյք պահեն զտխտս նորա, յիշեն զպատուիրանս նորա եւ առնեն զնա :

Տէր յերկինս պատրաստեաց զաթոռ իւր, արքայութիւն նորս ամենեցուն տիրէ :

Օրհնեցէք զՏէր ամենայն հրեշտակք նորա, հզօրք զօրութեամբ, ոյք առնէք զբան նորա ՚ի լսել ձայնի պատգամաց նորա :

Օրհնեցէք զՏէր ամենայն զօրութիւնք նորա, պաշտօնեացք

եւ արարողք կամաց նորա :  
 Օրհնեցէք զՏէր ամենայն  
 գործք նորա, զի ընդ ամենայն  
 տեղիս է տէրութիւն նորա .  
 օրհնեա՛ն անձն իմ զՏէր :

(Ս. շ. ձեթ.) **Տէր**, լուր աղօթից  
 իմոց, ունկն՝ զիր խնդրուածաց  
 իմոց ճշմարտութեամբ քով :

Լուր ինձ արգարութեամբ  
 քով, եւ մի՛ մտաներ ՚ի գատաս-  
 տան ընդ ծառայի քում, զի ոչ  
 արգարանայ առաջի քո ամենայն  
 կենդանի :

Հալածեաց թշնամին զանձն  
 իմ, խոնարհ արար յերկիր զկեանս  
 իմ, եւ նստոյց զիս ՚ի խաւարի  
 որպէս մեռեալ յաւիտենից :

Չանձրացաւ յիս հօգի իմ, եւ  
 սիրտ իմ խռովեցաւ յիս :

Յիշեցի զաւուրսն զառաջինս,  
 խորհեցայ յամենայն գործս քո .

<sup>1</sup>Ահ-ը.

յարարածս ձեռաց քոց խորհեցայ,  
 եւ համարձի առ քեզ զձեռս իմ :

Անձն իմ որպէս երկիր ծա-  
 րաւի է առ քեզ, վազվազակի  
 լուր ինձ, **Տէր**, զի նուազեցաւ՝  
 յինէն հօգի իմ :

Մի՛ դարձուցաներ զերեսս քո  
 յինէն, նմանիցիմ այնոցիկ ոչք  
 իջաննն ի գուր :

Լսելի՛ արա ինձ առաւօտաւ  
 զողորմութիւնս քո, զի ես ՚ի  
 քեզ **Տէր** յուսացայ :

Յոյց ինձ ճանապարհ յոր եւ  
 զնացիցի, զի առ քեզ **Տէր** համ-  
 բարձի՞ զանձն իմ :

Փրկեա՛ն զիս ՚ի թշնամեաց ի-  
 մոց, **Տէր**, զի զքեզ ապաւէն<sup>3</sup>  
 ինձ արարի :

Ուսո՞՛ ինձ առնել զկամս քո,  
 զի զո՛ւ ես Աստուած իմ :

<sup>1</sup>Տի-ը-ը- ի-մ + -ը-ը-ը-ը- . <sup>2</sup>Վ-ը-ը-ը-ը- .

<sup>3</sup>Օ-ը-ը-ը-ը- . <sup>4</sup>Ս-ը-ը-ը-ը- .

Հոգի քո բարի առաջնորդեսցէ  
ինձ 'ի յերկիր սւղիղ :

Վասն անուան քո , Տէր , կե-  
ցուսցես զիս , արգարութեամբ  
քով հանցես 'ի նեղութենէ զանձն  
իմ :

Ողորմութեամբ քով ստտա-  
կեան գթչնամիս իմ , եւ կորո՞<sup>3</sup>  
զամենայն նեղիչս անձին իմոյ ,  
զի ես ծառայ քո եմ :

Փանք Հօր եւ Որդւոյ եւ  
Հոգւոյն Սրբոյ : Այժմ եւ միշտ  
եւ յաւիտեանս յաւիտեանից Ամէն :

Կարեցր--



## ԵՐԳ.

Տեսան ՆՆՐԱՍԻ (Շնորհալի)

Կանոնիկոսի Հայոց

Ասացեալ ի պաշտաման իւրոյ :

(Ա.-գ.) Յիշեսցուք 'ի գիշերի զա-  
նուն քո Տէր :

Բղխեսցեն սիրտք մեր զբան  
բարի , եւ լեզուք մեր պատմե-  
ցեն զգործս երկնաւոր թագա-  
ւորիդ :

Ի մէջ գիշերի յարուցեալ խոս-  
տովանեսցուք զքեզ Տէր :

Զազօթս մեր տացուք քեզ ,  
Տէր , 'ի գաւթիս քո 'ի մէջ նոր  
երուսաղեմի :

Ի գիշերի համբարձցուք զձեռս  
մեր սրբութեամբ առ քեզ , Տէր :

Ի ձայն գոհութեան ամենայն  
հոգիք օրհնեցէք զՏէր :

Փ.Է. Զարթիք փառք իմ , զար-



Թիք, եւ ես զարթեացց առա-  
ւօտուց. Ալէլուիա:

Չարթիք ընդ զուարթունս.  
մանկունք վերինն Սիօնի. Ալէ.

Չարթիք որդիք լուսոյ. 'ի  
յօրհնութիւն Հօրն լուսոյ. Ալէ.

Չարթիք փրկեալք արեամբ,  
եւ առէք զփառս փրկողին. Ալէ.

Չարթիք նոր ժողովորդք,  
նոր երգս առեալ նորագողին. Ալէ.

Չարթիք հարսունք հոգևով.  
սպասեալք գալոյ սուրբ փեսային.

Ալէլուիա:

Չարթիք վառեալք լուսով  
ըստ իմաստուն սուրբ կուսա-  
նացն. Ալէլուիա.

Չարթիք պատրաստեցէք իւր  
լապտերաց ջերմարտասուս. Ալէ.

Չարթիք եւ մի' ննջէք, նման  
յիմար կուսից նիրհէք. Ալէլուիա.

Չարթիք երկիրպագցուք, եւ  
արտասուօք զայս սասացուք. Ալ.

Փ.ի. Չարթիք ընդէր ննջես,  
Տէր, մի' մերժեր զմեզ իսպառ:

Արի, Տէր, օգնեա՛ մեզ. տա-  
ցուք անուանդ քում զփառս:

Այժմ եւ յաւէտ. Հօր եւ Որդ-  
ւոյ, եւ Սուրբ Հօգևոյն. Ամէն:

Փ. Չարթուցեալքս 'ի զբաղմանէ  
գիշերային հանգստենէ:

Շնորհեացէ՛ մեզ մարդասէր  
Տէր, միսի՛ծարութիւն եւ 'ի սիո-  
փանս եկեղեցւոյ:

Ահի՛ւ եւ զողութեամբ կաց-  
ցուք 'ի յաղօթս:

Եկեալ խոստովանեսցուք ըզ-  
յանցանս:

Եւ գացուք 'ի Քրիստոսէ զբա-  
ւութիւն եւ զմեծ զողորմու-  
թիւն:

Ամէն. Ալէլուիա. Ալէլ. Ալէլ.

Կըրք. Անբաժանելի եւ համա-  
գոյ երրորդութեանդ. համաձայ-

նեալք ընդ զօրս երկնից . փառս մատուցանեալք :

Փնօք քեզ . Որ յանարուեստ յաթոս բարձրացեալ հանդչիս . Սո՛ւրբ Աստուած, հզօր եւ սքանչելագործ :

Փնօք քեզ . Որ յանէից զս-  
յացուցեր զամենայն արարածս .  
Սո՛ւրբ Աստուած, անձառ Հօր  
անեղ Որդի :

Փնօք քեզ . Որ տեսչու-  
թեամբ խնամես զամենայն արարածս .  
Սո՛ւրբ Աստուած, Բըզ-  
խումն անսպառ աղբեր :

Տէր . Ժողովրդապետք եկեղեցւոյ ի քէն հայցեն ասելով . Հովիւ բարի, ողորմեա՛ բանաւոր հօտի :

Ամէն . Ալէլուիա Ալէլուիա . Ալէ .  
Ամէն . Ալէլուիա Ալէլուիա . Ալէ .



### Ք Ա Ր Ո Ջ <sup>1</sup>

Տ. Յովհան Մանգակունի

Մեր Ս. Հայրապետէն ասացեալ .

(Աշխ.) **Չարթուցեալքս ամենե-  
րեան ՚ի հանդստենէ քնոյ , զոր  
չնորհեաց մեզ մարդասէրն Առա-  
ուած ՚ի մխիթարութիւն եւ ՚ի  
սփոփանս տկարութեան մերում .  
եւ եկեալքս միտքան հոգե-  
ւոր երգով ի փառաբանութիւն եւ  
՚ի պատիւ ամենաանուրբ Անուան**

1. Ամէն ՔԱՐՈՋ անամբ ընթերցանութ,  
չլրս Սարգիսիս եւ իւրորոյ Բահանայ Ս  
ղբիսն ասալ, ըստիւ եւ պարստական երգ-  
ներն, ինչ ի նշան պարտի քրիստոսեայն ու  
ղբիսն պարտանտ ասարացանել եւ սրբայն  
վրտ եւ աստիւնութիւն անելու :

Արդեւ ՔԱՐՈՋ բառն ինչին ի յոյճնե  
այն նշանութիւնն . աստիւ ի իստի ին  
այն Բարտ Ժողովրդեան ասանալ ի իւր  
բացայնիս ի հնամե :

Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի. Ահիւ եւ զողութեամբ կացցուք յաղօթս առաջի նորա : Եւ գոհացարուք զնմանէ 'ի զիշերային ժամուս յայսմիկ, զամն իրաւանց եւ արդարութեան նորա : Որ ընտրեաց զմեզ ողորմութեամբն իւրով. եւ չնորհեաց մեզ բերել զնմանութիւն երկնային հրեշտակացն 'ի փառարանիչս Տեառն Աստուծոյ ամենեցուն եւ մեզ լինել : Եւ մեք այսուհետեւ սրբելով զանձինս մեր 'ի խղճէ եւ 'ի չար գործոց, Համբարձցուք ըզձեռս մեր 'ի սրբութիւն առանց բարկութեան եւ երկմտութեան : Հաւատով ինդրեսցուք 'ի նմանէ զքաւութիւն եւ զթողութիւն յանցանաց մերոց : Խոստովան լինելով զգաղանիս սրտից մերոց ծածկազիտին Աստուծոյ :

Որպէս զի ընդունելով զպա-

զատանս մեր աղօթիւք եւ բարեխօսութեամբ ամենայն սրբոց : Ենորհեացէ՛ մեզ մարգասէրն Աստուած՝ կեսզ առաքինութեամբ եւ անարատ վարուք ըստ կամաց նորա յայսմ աշխարհիս : Եւ արժանաւոր լինելով յաւիտենական եւ երկնային խորանացն : Զոր խոստացաւ սրբելեաց 'իւրոց՝ ճշմարիտն Աստուած Յիսուս Քրիստոս Տէր մեր. կեցո՛ եւ ողորմեա՛ : Դպրք և Ժողովուրդք Կեցո՛ Տէր :

Զմնացում գիշերիս խաղաղութեամբ անցուցանել՝ հաւատով 'ի Տեառնէ խնդրեսցուք :

Դպրք և Ժող. Ենորհեա՛ Տէր :

Զհրեշտակ խաղաղութեան պահապան անձանց մերոց, 'ի Տեառնէ խնդրեսցուք :

Դպրք և Ժող. Ենորհեա՛ Տէր :

Զքաւութիւն եւ զթողութիւն

յանցանաց մերոց . Ի Տեառնէ  
խնդրեսցուք :

Դպ. և Ժող. Շնորհեա՛ Տէր :

Զորբոյ Սաչին մեծ եւ կարող  
զօրութիւնն յօգնութիւն սնձանց  
մերոց . Ի Տեառնէ խնդրեսցուք :

Դպ. և Ժող. Շնորհեա՛ Տէր :

Եւ եւս միաբան վասն ճրջ-  
ժարիտ եւ սուրբ նաւատոյս մե-  
րոյ զՏէր աղաչեսցուք :

Դպ. և Ժող. Տէր ողորմեա՛ :

Զանձինս մեր եւ զմիմիանս  
Տեառն Աստուծոյ ամենակալին  
յանձն պատացուք :

Դպ. և Ժող. Քեզ Տեառնդ յանձն  
եղիցուք :

Ողորմեաց մեզ, Տէր Աստուած  
մեր, ըստ մեծի ողորմութեան  
քում, ասացուք ամենեքեան  
միաբանութեամբ :

Տէր ողորմեա . Տէր սղ . Տէր ող .

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՔԱՐՈՉԻՆ

Մեր ամենքս որ արժնցանք ի հան-  
զըստուծենէ ընոյ, զոր շնորհեց մեզ մար-  
դաւէրն Աստուած՝ մեր տկար բնութիւնը  
մխիթարելու եւ սփոփելու համար, Մեր՝  
որ եկած եմք միաբանութիւնով եւ հոգե-  
ւոր երգով փառարանել ու պատուել մեր  
Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի ամենա-  
սուրբ Անունն . ահով ու զոգով աղօթքի  
կենամք Անոր առջեւ : Եւ գոհամար այս  
զիշերային ժամուս մէջ՝ Նորա իրաւանցն  
ու արդարութեանն համար . որ ընտրեց  
զմեզ իւր ողորմութիւնով, եւ շնորհեց որ  
Էրկնային հրեշտակներուն նմանութիւնն  
ունենամք, մեք եւս փառարանող լինելով  
մեր ամենուս Տէրն եղող Աստուծոյ :

Ուրեմն այտուհետեւ սրբելով մեր անձերը  
խղճի խայճերէ, և չար զործերէ, ձեռքեր-  
նիս վեր վերցունեմք սրբութիւնով, առանց  
բարկութեան ու թերեհաւատութեան :

Հաւատքով խնդրեմք Անորմէ Թողու-  
թիւն ու բաւութիւն մեր յանցանաց :

Խոստովանիմք մեր սրտերուն զաղտնիքը Աստուծոյ առջեւ, որ ամեն ծածուկները զիտէ. որպէս զի ընդունելով մեր աղաչանքն ամեն Սրբոց բարեխօսութիւնովն ու աղօթքով, շնորհէ մեզ մարդասէրն Աստուած առաքինութիւնով ու անարատ վարքով ապրիլ այս աշխարհիս մէջ իւր կամքին համեմատ, և արժանի լինիլ յատենական սու երկնային խորաններուն (արքայութեան), զոր խոստացաւ իւր սիրելիներուն Յիսուս Քրիստոս ճշմարիտ Աստուածը : — Ով Տէր մեր, կեցն՝ (ապրեցն) և ողորմէ :

(Մ. և Յ. և Գ. և Բ.) Կեցն Տէր :

Կիշերիս մնացած ժամանակը խաղաղութիւնով անցունելու համար հաւատքով Տիրոջմէ խնդրեմք :

(Մ. և Յ.) Շնորհէ Տէր :

Խաղաղութեան հրեշտակը՝ մեր անձերուն պահապան խնդրեմք Տիրոջմէ, Շնորհէ Տէր :

Մեր մեղքերուն բաւութիւն ու թողութիւն խնդրեմք Տիրոջմէ : — Շնորհէ Տէր :  
Սուրբ խաչին մեծ և կարող զօրու-

Թիւնը՝ մեր անձերուն օգնական խնդրեմք Տիրոջմէ : — Շնորհէ Տէր :

Եւ ամենքս մէկ բերան, մեր ճշմարիտ ու սուրբ հաւատքին համար աղաչեմք Տիրոջը : — Տէր ողորմէ :

Մեր անձերն ու մէկզմէկ, ամենակալ Տէր Աստուծոյ յանձնեմք :

— Քեզ կը յանձնուիմք ով Տէր :

Ողորմէ մեզ, Տէր Աստուած մեր, քո՛ մեծ ողորմութեանդ համեմատ, ամենքս միաբանութիւնով ըսեմք.

— Տէր ողորմես, Տէր ողորմես  
Տէր ողորմես



## ՆԵՐՎ ԱՂՕԹԱԿԱՆ

Տեառն ՆԵՐՍԻՍԻ Հայոց Կաթողիկոսի, ի զէմս արոյ ԵրուզուԹեան. նաեւ իւրաքանչիւրոյ զիսի ԵրուզուԹեան առանձնակի.

(Ա. Գրք. Երբ որ լինան արդարեւ Գրք. Երբ որ լինան Երբ որ լինան)

(Ա. Գրք.) Առաւօտ լուսոյ<sup>1</sup>,  
Արեգակն արդար<sup>2</sup>,  
Առ իս լոյս ծագեան<sup>3</sup>

Բղիսուսն ՚ի Հօրէ<sup>3</sup>,  
Բղիսեան ՚ի հօղւոյս,  
Բան քեզ ՚ի հաճոյս<sup>4</sup>. —

Գանձդ ողորմութեան,  
Գանձիդ ծածկելոյ<sup>5</sup>  
Գլխոդ զիս արան.

<sup>1</sup> Յիսուս. — <sup>2</sup> Բրտար. — <sup>3</sup> Հօրէ  
Արեգ. — <sup>4</sup> Բղիս հաճելի եօստ. — <sup>5</sup> Երբ որ լինան  
Գանձ՝ Արտար. Երբ որ լինան.

Դուռն ողորմութեան,  
Դաւանողիս բան,  
Դասեցո՛վերնոցն. —

Երբեակ՝ միութիւն,  
Եղելոց՝ խնամող,  
Եւ ինձ ողորմեան.

Զարթիր Տէր, յօգնել,  
Զարթո՛ զթմբալս,  
Զաւարթնոց՝ նմանիլ. —

Էդ Հայր անբոկիբն,  
Էակից Որդի  
Է միշտ Սուրբ Հօգի.

Ընկալ զիս զրթամ,  
Ընկալ ողորմամ,  
Ընկալ մարգասէր. —

Թագաւոր փառաց,  
Թողութեանց տառոյ,  
Թո՛ղ ինձ ըլ յանցանս.

<sup>1</sup> Ս. Երբ որ լինան. — <sup>2</sup> Երբ որ լինան՝ արտար. — <sup>3</sup> Հիսուս երբ որ լինան.

Ժողովից բարեաց,  
Ժողովեա եւ զիս,  
Ժողովս անդրանկաց՝ —

Ի քէն Տէր հայցեմ,  
Ի մարդասիրէզ,  
Ինձ բըժըչկութիւնս :

Լեր կեանք մեռելոյս,  
Լոյս խաւարելոյս,  
Լուծանող՝ ցաւոյս : —

Խորհրդոց զբառզ,  
Խաւարիս շնորհեա,  
Խորհուրդ լուսաւոր :

Ծրնունդ Հօր ծոցոյ՝,  
Ծածկելոյս ըստուերաւ,  
Ծագեա լոյս փառաց : —

Կենարար Փրկիչ,  
Կեցո՛ ըզմեռեալս,  
Կանգնեա զզրորեալս,

<sup>1</sup> Աւելիքիւնքսն՝ արդարեւ ժողովի ԲԷԸ.

<sup>2</sup> Բեւեւ Բեւեւ. — <sup>3</sup> Բեւեւեւ.

Հաստեա՛ հաւատով,  
Հաստատեա յուսով,  
Հիմնեցո՛ սիրով : —

Չայիւս աղաչեմ,  
Չեօքս պաղատիմ,  
Չիր՝ բարեաց շնորհեա :

Ղամբարամբ՝ լուսոյ  
Ղեկավար՝ ճարտար,  
Ղօղեալս՝ ամրացո՛ : —

Ճառագայթ փառաց,  
Ճանապարհ ինձ ցոյց,  
Ճեպել՝ ՚ի յերկինս :

Միածինըզ Հօր,  
Մոյժ՝ զիս յառագաստ,  
Մաքուր հարսանեացդ : —

<sup>1</sup> Աւելիքսն. — <sup>2</sup> Հիմնեցեւ. — <sup>3</sup> Պարբեւ.

<sup>4</sup> — Կանգնեւ. — <sup>5</sup> (Տեւեւեւեւ). <sup>6</sup> Պարբեւ.

<sup>7</sup> Արարեւելեւ. Բեւեւ. — <sup>8</sup> Մայրս :

Յորժամ գաս փառօք,  
Յահագին<sup>1</sup> առւերն,  
Յիշեան զիս Քրիստոս:

Նորոգող հնութեանց,  
Նորոգեան եւ զիս,  
Նորոգ զարգարեան:—

Շնորհատու բարեաց,  
Շնորհեան զքաւութիւն,  
Շնորհեան զթողութիւն:

Ուրախացո՛՛ Տէր,  
Ոգւոյս փրկութեամբ,  
Ոյր<sup>2</sup> վատն եմ ՚ի սուգ:—

Չար<sup>3</sup> մշակողին,  
Չար սերմանց նորին  
Չորացո՛՛ զպսուղն:

Պարգեւիչ բարեաց,  
Պարգեւեան իմոց  
Պարտեացս թողութիւն:—

<sup>1</sup> Վախեալս (բարոսարանի) օրը. — <sup>2</sup> Ուր  
համբ. — <sup>3</sup> Սարսուղին.

Չուր շնորհեան աչացս,  
Չերբ հեղուլ արաօսր<sup>1</sup>,  
Չընջել ըզ յանցանս:

Ռեախնըզ քաղցու<sup>2</sup>,  
Ռամ<sup>3</sup> հողոյս արբո՛ւ,  
Ռահ<sup>4</sup> ցոյց ինձ լուսոյ:—

Սէր անուն Յիսուս,  
Սիրով քով ճըմլեան,  
Սիրոս իմ քարեղէն:

Վասն զրթութեան,  
Վասն ողորմութեան,  
Վերսաին կեցո՛ւ:—

Տենչալոյց<sup>5</sup> տեսեամբ,  
Տուր ինձ յագենալ<sup>6</sup>  
Տէր Յիսուս Քրիստոս:

<sup>1</sup> Արցունք. — <sup>2</sup> Անուլիսնւլիք. — <sup>3</sup> Ռեախ. —

<sup>4</sup> Ճահբայ. — <sup>5</sup> Փոփոփելիլ րեւոյզք. —

<sup>6</sup> Կլարանալ.



Բարունդ<sup>1</sup> երկնաւոր,  
Բոտեա<sup>2</sup> զաշակերտս  
Բամից<sup>3</sup> երկնայնոց:—

Յօղ արեանք ը Տէր,  
Յօղեա՛ ՚ի հոգիս,  
Յընծայողէ անձն իմ:

Իբլծեալս<sup>4</sup> մեղօք,  
Իբլծեալ<sup>5</sup> աղաչեմ,  
Իբլսել<sup>6</sup> ինձ բարիս:—

Փրկի՛չ բոլորից,  
Փռթա՛ զիս փրկելի,  
Փորձօթեանց մեղաց:

Քաւի՛չ յանցանոց,  
Քաւեա՛ զօրհնարանս,  
Քեզ երգել ըզխառս:—

Աստուածածնին բարեխօսու-  
թեամբ

Յիշեա՛ Տէր, եւ ողորմեա՛:

<sup>1</sup> Բարունդ. — <sup>2</sup> Բոտեա. — <sup>3</sup> Բամից. (սի-բի-)

<sup>4</sup> Իբլսել. — <sup>5</sup> Իբլծեալ. — <sup>6</sup> Իբլսել.

Իսկ Սրբոց Տօնի եւ Պահոց օրեր՝ եթէ  
Ս. Պատարագ մատուցանի, հետեւեալն  
կ'երգեն:

Տեսան՝ ՆԵՄՐԱՍԻ շայնց կամողի-  
կոսի՝ Ողբերգութիւն անձին զղջացե-  
լոյ, եւ բողոք իւրարանչիւրոյ զիմի  
խոսովանարար:

Այսինքն՝ ամեն ժամ իւր անչին համար կ'ընայ  
ըսել կամ բողոքել խոսովանարար:

(Ա. գ.) Աշխարհ ամենայն,  
Առ իս հայեցեալ,  
Ախտակից<sup>1</sup> լերուք:

Բանամ զչրթունս,  
Բարբառիմ լեզուաւս,  
Բողոքեմ զանձնէս,  
Տէր ողորմեա՛. Տէր ողորմեա՛.  
Տէր ողորմեա՛:

<sup>1</sup> Բողոքից.

Գող եղէ մեզաց,  
Գտող կորստեան,  
Գուր ինձ փորեցի:

Դաւեցի՛ զանձն իմ,  
Դաւաճանեցի<sup>2</sup>,  
Դարան<sup>3</sup> գործեցի.

Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ողոր.

Երբևն էի լոյս,  
Եւ այժմ եմ խաւար,  
Եւ ստուերս մահու:

Զիւրդ պատմեցից,  
Զթիւ մեզաց խոց,  
Զի բազում են յոյժ.

Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ողոր.

Էրկինք եւ երկիր,  
Եկայք ողբացէք,  
Եզկելի զանձն իմ:

<sup>1</sup> Խ-բեցի. — <sup>2</sup> Նեհո-թե-ն լրի. —

<sup>3</sup> Որ-գոյն լրեցի.

Ընտրեցի զչարս,  
Ընկալայ կամու,  
Ըզ հոյլս՝ մեզաց:

Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ողոր.

Թաթաւիմ<sup>2</sup> տղմով,  
Թաւալիմ՝ ի մեզս,  
Թօթափիլ չկարեմ:

Ժանտ<sup>3</sup> ախախ լցեալ,  
Ժահահոտ<sup>4</sup> եղէ.

Ժամանակս բազումս.

Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ողոր.

Ի բաց մեկնեցայ,  
Ի սուրբ խորհրդոց,  
Ի բարեաց գործոց:

Լաւ վարկաւ<sup>5</sup> անձն իմ,  
Լուսոյն հեռանալ,  
Լինել բնդ խաւար:

Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ողոր.

<sup>1</sup> Բազում-թե-ն. — <sup>2</sup> Յեթալ Թ-Թի-տ-Է. —

<sup>3</sup> Գե-լ-տ-Է. — <sup>4</sup> Զգ-ե-լ-հո-ր. — <sup>5</sup> Սե-ղ-ե-ր.

Խորհուրդք չարին ,  
 Խաբեն զհոգիս ,  
 Խորասոյզ առնեն :

Ծածկեն անդնօք ,  
 Ծիծաղին զլորմամբս ,  
 Ծանակ<sup>1</sup> զիս առնեն :

Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ողոր.

Կամաւ կորացայ<sup>2</sup> .  
 Կարկամեալ անձամբ ,  
 Կանդնիլ ոչ կարեմ :

Հուր<sup>3</sup> մեղաց կիզող ,  
 Հրդենեաց որ յիս ,  
 Հոգեւոր բարիս .

Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ողոր.

Չաղկեցայ մեղօք ,  
 Չաղկեցին<sup>4</sup> տեսողք ,  
 Չանձրացաւ հոգիս :

<sup>1</sup> Ծաղր. — <sup>2</sup> Ծուեցայ. — <sup>3</sup> Կրակ. —

<sup>4</sup> Ծաղրեցին.

Ղեղի<sup>1</sup> դառնութեան ,  
 Ղօղեալ<sup>2</sup> 'ի սիրա իմ ,  
 Ղամպար<sup>3</sup> իմ շիջաւ ,  
 Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ողոր.

Ճաշակմամբ մեղաց ,  
 Ճաշեցի ըզմահ ,  
 Ճոխս<sup>4</sup> աղքատացայ :

Մեռեալ եմ հողուլս ,  
 Մոլորեալ մտօքս ,  
 Միայն կամ մարմնուլս ,  
 Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ողոր.

Յորոգայթ մահու ,  
 Յորսողին անկայ ,  
 Յաղթեցայ յախաից :

Նեաից թշնամւոյն ,  
 Նշաւակ<sup>5</sup> եղէ ,  
 Նոր միշտ խոցողիմ :

Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ողոր.

<sup>1</sup> Լեղի. — <sup>2</sup> Պահաւոր. — <sup>3</sup> Ըրտն մարտ-  
 ցաւ. — <sup>4</sup> Հարստ. — <sup>5</sup> Չարնուելս — Գլու.

Շուրջ պատեալ զինեւ ,  
Շունք բազումք եղեն ,  
Շաղախին<sup>1</sup> արեամբս :

Որս եղէ չարին ,  
Ուռկանաւ մեղաց .  
Որսացաւ զանձն իմ .

Տէր ողոր . Տէր ողոր . Տէր ողոր .

Չարաչար վըշտօք ,  
Չարչարի անձն իմ ,  
Չունիմ զազարումս :

Պարտապան գըտայ  
Պարտուց յանցանաց ,  
Պարտեալս ի մեղաց ,

Տէր ողոր . Տէր ողոր . Տէր ողոր .

Չանամ զրդջանալ ,  
Չեռանիմ<sup>2</sup> զարձեալ ,  
Չեռնում<sup>3</sup> հրով մեղաց :

1. ԿԸ Բ-ԲԻԻ-ԲԷ. — 2 ԿԸ Բ-ԲԻԻ-ԲԷ. —

3 ԿԸ Գ-ԳԷ-ԳԸ.

Ռարբի<sup>1</sup> կոչեցայ ,  
Ռակայ<sup>2</sup> անուանիմ ,  
Ռամկական վարուքս .

Տէր ողոր . Տէր ողոր . Տէր ողոր .

Սիրով ցանկութեան ,  
Սաստիկ բարկութեան ,  
Սիրա իմ խոցեալ է :

Վիրօք յանցանաց  
Վչտանայ հոգիս .  
Վարանեալ շըրջիմ .

Տէր ողոր . Տէր ողոր . Տէր ողոր .

Տիրեցին ինձ չարք ,  
Տարազիր<sup>3</sup> հանին  
Տիրական զըրկացն :

Րարունւոյն<sup>4</sup> բարւոյ ,  
Րախճական<sup>5</sup> ձայնին ,  
Րոտինս<sup>6</sup> ոչ լուայ :

Տէր ողոր . Տէր ողոր . Տէր ողոր .

1 Վ-ԲԲ-ԳԲԲ. — 2 ԽԷԻԲ. — 3 ԳԻ-ԲԻ  
Վ-ԷԲԲԲԲԷ. — 4 Բ-ԲԲԲ Գ-ԲԲ-ԳԲԲԲԷ. —

5 Ո-ԲԲԲԲԲԲ. — 6 Ս-ԲԲԲԲԲԲ.

Յանկութիւն չարեաց ,  
Յանկալի դիմօք ,  
Յաւեցոյց զաչս իմ :

Իւրաքանչիւրոց  
Իրամամբ խռոն ակտոց ,  
Իրեծեալ՝ է հոգիս :

Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ողոր.

Փութացիր անձն իմ ,  
Փախչիլ՝ ի չարեաց ,  
Փափաքիլ բարեաց :

Քեզ միշտ մերձ ծանիր  
Քուն մահու եկեալ ,  
Քրննող դատաւոր :

Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ողոր.

Աստուածածնին յարեխօսու-  
թեամբ :

Յիշեա՛ Տէր եւ ողորմեա՛ն

<sup>1</sup> Առն Դեմի Գրոց Երեւել Ժարտ Ե-  
ժալա՛ն Ե հսգիս :

## ԱՂՕԹՔ

## Տ. Յովհան Մանգակունի

Մեր Ս. Հայրապետէն ասացեալ :

(Ա.-Գ.) **Ձքէն** դոհանամք Տէր  
Աստուած մեր , որ շնորհեցեր  
մեզ հանգիստ քնոյ խաղաղու-  
թեամբ : Եւ զարթուցեալ ժա-  
մանեցուցեր զմեզ կանխել յեր-  
կրրպաղութիւն անաւոր եւ փա-  
ռաւորեալ Անուանդ քում սրբոյ  
Տճւր մեզ , Տէր , աղաչեմք զքեզ ,  
զմնացուած գիշերիս խաղաղու-  
թեամբ անցուցանել , եւ զա-  
մենայն ժամանակս կենաց պան-  
դխտութեան մերոյ , երկիւղիւզ  
քո ամբացս եւ պահեա՛ : Որպէս  
զի զգուշութեամբ եւ անարատ  
վարութեամբ կրօնաւորեալք յայտ  
աշխարհիս , ժամանեցուք յան-  
քոյթ եւ ի խաղաղ նաւանգիստ  
յաւիտենական ի կեանսդ , Շնոր-

հօքեւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի . ընդ որում քեզ Հօր եւ Հոգւոյ Սրբոյ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ . այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Կը զոհանամք բենէ՛ ո՛վ Տէր Աստուած մեր , որ խաղաղութիւնով հանգիստ բուն շնորհեցիր մեզ , և արժնցունելով հատուցիր զմեզ կանուխ գալ , եւ երկիրպագել բու ահաւոր եւ փառաւորեալ սուրբ Անունիդ , Տօ՛ր մեզ Տէր , կ'աղաչեմք զբեզ այս զիշերուան մնացած ժամերը խաղաղութիւնով անցունել . և մեր պանդխտութեան այս կեանքին բոլոր ժամանակին մէջ բու երկիւղովդ ամբացու եւ պահէ զմեզ :

Որպէս զի զգուշութիւնով եւ անարատ վարքով՝ մեր կրօնքին համեմատ ապրելով

այս աշխարհիս մէջ , ժամանեմք ( հասնիմք ) բու յաւիտեական կեանքիդ ապահով և խաղաղ նաւահանգիստը . Շնորհիւ և մարդասիրութիւնով մեր Տէր և Փրկիչ Յիսուս Քրիստոսին , ընդ որում Քեզ Հօրդ և Սուրբ Հոգիիդ կը վայլէ փառք , իշխանութիւն եւ պատիւ , հիմա և միշտ եւ յաւիտեանս յաւիտենից , Ամէն :

Խաղաղութիւն ամենեցուն  
Աստուծոյ Երկրպագեցուի

Նայեա՛ց , Տէ՛ր բարերար ողորմութեամբ քով յերկրպագուս եւ 'ի փառարանիչս Անուանդ քում սրբոյ , Տէ՛ր զօրութեանց , խաղաղացո՛ զանձինս մեր յամենայն սատանայական խռովութեանց եւ յաշխարհական դրօսանաց : Զհրեշտակ խաղաղութեան քո առաքեա՛ առ մեզ , որ եկեալ պահեսցէ զմեզ անխուփս ի սուէ եւ ի գիշերի՝ յարթնութեան եւ 'ի հանգստեան մե-

բուժ: Որպէս զի բարեպաշտու-  
թեամբ եւ արժանաւորապէս  
քեզ Տեառնդ ծառայելով ի կեանս  
յայտասիկ, ժամանեացուք յաւի-  
տենական երկնից արքայութեան  
քոյ, զոր պատրաստեցեր ի սկզբ-  
բանէ աշխարհի սրբոց քոց: Եւ  
ընդ նոսին գոհանալով փառա-  
ւորեացուք զՀայր եւ զՈրդի եւ  
զՍուրբ Հոգիդ, այժմ եւ միշտ  
եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

**Օրհնեալ Տէր մեր Յիսուս  
Քրիստոս. Ամէն. Ալէլ. Ալէլ:**

**ՅԱՐԳՄԱՆՈՒՅԻՒՆ**

Նայէ, սկ բարերար Տէր, բու ողոր-  
մութիւնովդ՝ բու սուրբ Անուհիդ երկըր-  
պագոյներու ու փառաբանողներու  
ժրայ: Տէր զօրութեանց, խաղաղեցու մեր  
անձերը՝ ամէն ստատեայական խռովու-  
թիւններէ, եւ աշխարհային զբօսանքէ:

Քու խաղաղութեան հրեշտակդ զրկէ  
մեզ, որ զայ եւ անխռով պահէ զմեզ զի-  
շեր եւ ցերեկ, մեր արժուն եւ ի բուն եւ  
զած ժամանակ: Որպէս զի բարեպաշ-  
տութիւնով եւ արժանաւոր կերպով Քու  
Տէրութեանդ ծառայելով այս կեանքիս  
մէջ, հասնիմք քու երկնային յաւիտենա-  
կան արքայութեանդ, որ աշխարհի սկիզ-  
բէն քու սուրբերոզ համար պատրաս-  
տած ես: Եւ մեր անոնց հետ գոհանալով  
փառաւորեմք Հայրը, Որդին եւ սուրբ Հո-  
գին. հիմայ եւ միշտ եւ յաւիտեանս. Ամէն:

**ՄԱՆ. Հին ժամանակ՝ սկսեալ  
մեր Ս. Գրիգոր Լուսաւորիչէն մինչեւ Ս.  
Թարգմանչաց օրն, այս միջոցին ՈւՍ կա-  
նոն (ձԾ. 150) Սաղմոսներն ամբողջ կը  
կարդային, մինչեւ վեցերորդ Գուրդայն  
Թիւ. եւ եօթներորդն եզանակաւ:**

Քանզի Սաղմոսները ոչ միայն ՈւՍ կա-  
նոնի կամ Չայնի բաժնուած էին, այլ եւ  
Խարարնչիւր կանոններն եւս եօթնական

գուրդայի, և այն Եօթներորդ Սաղմունն է որ ԿԱՆՈՆԱԳԼՈՒԽ, կը կոչուի Քայց յետոյ ի ժամանակս ԳԻՒՏ և ՄԱՆԳԱԿՈՒՆԻ Հայրապետաց, որոչեցին կարգալ՝ երկու կանոն Գիշերային ժամոն, երկու կանոն Առաօտեան, երեք կանոն ձաշու, և մի կանոն Երեկոյեան ժամոն:

Իսկ այժմ, առուր Զայնի Սաղմոսին Կանոնազրուխն միայն կը կարգացուի եղանակաւ, ժամարար Քահանային պարտաւորութիւն մնալով Ութ կանոն Սաղմունն առանձին կարգալ ամբողջութեամբ:

Գիտնալու արժանի է և այս, որ մեր Ս. Թարգմանիչք, Սաղմոսաց ամեն մէկ կանոնի վրայ աւելցուցին ուրիշ Մարգարէից զրբէ մի մի Օրհնութիւնք և երկու եւս աւելի Տասն օրհնութիւնք (ինչպէս կը տեսնուի մեր ազգի ձեռագիր կամ արպեալ Սաղմոսաց մէջ.) որոց համեմատ յօրինեցին, և հետզհետէ յաւելան սքանչելի Շարականք ՕՐՀՆՈՒՄԻՆՆԵՐ, Իսկ Ութ կանոն Սաղմոսի վերջ մնացած երեք Սաղմուններն՝

ձեռն. ՕՐՀՆԵՅԵՒ ՂՏԵՐ յԵՐԷՒՆԵՅ. ձեռն. ՕՐՀՆԵՅԵՒ ՂՏԵՐ յՕՐՀՆՈՒՄԻՆՆԵՐ. և ձՄ. ՕՐՀՆԵՅԵՒ ՂՄԻՄՈՒՄ, կը թուի թէ եղանակաւ կ'երգէին, ինչպէս կ'ակնարկեն այդ Սաղմոսաց համեմատ յետոյ յօրինուած Շարականք, որք ՏԵՐ յԵՐԷՒՆԵՅ կ'անուանին:

Այսպէս են նաեւ, Դանիէլի օրհնութիւնն Երբց մանկանց, ՕՐՀՆԵՒԷՒ ՏԵՐ ԱՄՈՒՄ ԳՐԵՅԻ ԲԵՐԵՅ, որոյ վրայ շինուած են ՀԵՐԵՅ ի Շարականք. որպէս և Մարիամու Աստուածածնի Օրհնութեան վրայ ՄԵԶԻՅՈՒՄԵՅ ի Շարականք, ինչպէս նաեւ, ՈՂՐԹԵՒ ԻՆՅ Ապաշխարութեան Ծ. Սաղմոսի վրայ ՈՂՐԹԵՒ յի Շարականք, և ՕՐՀՆԵՅԵՒ ՄԱԿԵԱՆ ԺԺԹ. Սաղմոսի վրայ ՄԱԿԵԱՆԻ Շարականք: Որք միահաղոյն կը բարոզեն Հայաստանեայցս Եկեղեցւոյ՝ դարուց ի դարս շարունակած և պահպանած ճըշմարիտ Քրիստոնէական ողին, Աստուածային բանաստեղծութեամբք նուազեալ:



## ԿԱՆՈՆԱԳՂՈՒՆԵՔ

Կարգաւ ըստ Ուր Զայնից

(Ա.Չ.) ՍԱՂՄԱՍ 1.7.

(Ա. 7.) Դատեա՛ Տէր զայնոսիկ՝  
ոչք զատեն զիս. Ալէլուիա.

Մարտիր ընդ այնոսիկ, որք մար-  
տընչին ընդ իս. Ալէլուիա.

Ա՛ռ զղէն եւ զասպար քո եւ  
արի՛ յօղնել ինձ. հան՛ զսուր քո  
ընդ դէմ հալածչաց իմոց, ար-  
գել զնոսա. եւ ասա՛ զու ցանձն  
իմ, թէ՛ փրկութիւն քո ես եմ. Ալ:

Ամաչեացեն եւ յամօթ լիցին՝  
ոչք խնդրէին զանձն իմ. դարձ-  
ցին յետս եւ ամաչեացեն՝ ոչք  
խորհէին ինձ չար: Ալէլուիա.

Եղիցին նոքա որպէս փոշի  
առաջի հողմոյ՝ եւ հրեշտակ  
Տեառն նեղեացէ զնոսա: Ալէլ:

Եղիցին ճամապարհք նոցա ՚ի  
խաւար եւ ՚ի գայթակղութիւն.

եւ հրեշտակ Աստուծոյ հալա-  
ծեացէ զնոսա: Ալէլուիա.

Ի նանիր թագուցին ինձ ո-  
րոգայթ յապականութեան իւր-  
եանց, եւ ՚ի նանիր նախատեցին  
զանձն իմ: Ալէլուիա.

ՍԱՂՄԱՍ 1.8. 6.

Փ.Ի. Տէր, յերկինս է ողորմու-  
թիւն քո, ճշմարտութիւն քո  
մինչեւ յամպս. Ալէլուիա. Ալէլ:

Արդարութիւն քո որպէս լե-  
րինք, Աստուած. իրաւունք քո  
որպէս խորք բազումք. զմարդիկ  
եւ զանասուն կեցուցանես զու  
Տէր: Ալէլուիա. Ալէլուիա.

Որպէս զի բազում արարեր  
զողորմութիւն քո, Աստուած.  
այլ որդիք մարդկան ՚ի հովանի  
թեւոց քոց յուսացին: Ալէ. Ալ:

Արբեացին նոքա ՚ի արար-  
տութենէ ամն քո, եւ զուղիսս

ժափկութեան քս տացեա ըմպել  
նոցա : Ալէլ. Ալէլ :

Ի քէն է, Տէր, ազրիւր կե-  
նաց, եւ լուսով երեսաց քոց  
տեսանեմք զոյսա : Ալէ. Ալէ :

Ծաղկա զսզորմութիւնս քո  
ոյք ճանաչեն զքեզ. զարդարու-  
թիւնս քո, ոյք ուղիզ են սրտիւք :

Մի՛ եկեոցեն ի վերայ մեր ոտք  
ամբարտաւանից, եւ ձեռք մեղա-  
ւորաց մի՛ դողացուցեն զմեզ :

Անդ անկցին ամենեքեան՝  
ոյք գործեն զանօրէնութիւն,  
մերժեոցին եւ այլ մի՛ կարաս-  
ցեն հաստաափիլ : Ալէլու. Ալէլ :

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգ-  
ւոյն Սրբոյ, Այժմ՝ եւ միշտ եւ  
յաւիտեանս յաւիտենից Ամէն .

Ալէլուիա . Ալէլուիա .

(ԱԼԵ.) ՍԱՂՄՈՍ ՄԵ.

(Ա.Չ.Ք.) Սասց անզգամն ՚ի սրտի  
իւրում թէ ոչ զոյ Աստուած .  
Ալէլուիա . Ապականեցան եւ  
պղծեցան յանօրէնութեան իւր-  
եանց, եւ ոչ ոք է որ առնէ  
զքաղցրութիւն . Ալէլուիա :

Աստուած յերկնից նայեցաւ  
յառննայն որդիս մարդկան, տե-  
սանել թէ իցէ՞ ոք խնայուն  
որ խնդրիցէ զԱստուած : Ալէլ :

Ամենեքեան խոտորեցան ՚ի  
միասին, եւ անպիտանացան : Ալ :

Ոչ ոք է որ առնէ զբարի, եւ  
չէ՞ ոք մինչեւ ՚ի մի : Ալէլ :

Որպէս ոչ ծանիցեն տմե-  
նեքեան, ոյք գործեն զանօրէ-  
նութիւն : Ալէլուիա .

Ոյք ուսէին զժողովուրդ իմ  
սրպէս կերակուր հացի, եւ առ  
Աստուած ոչ կարգային : Ալէլ :

ՍՍՂՄՈՍ ԾԴ. 17

Փոփ. Չի ո՛չ գոյր նոցա փոխանակ, եւ ո՛չ երկեան յԱստուծոյ.

Ալէլուիա. Ալէլուիա:

Չգեաց զձեռն իւր 'ի հատուցանել նոցա, եւ նոքա պղծեցին զօրէնս նորա: Ալէլ. Ալէլ:

Բաժանեցան 'ի սրամտութենէ երեսաց նորա, եւ եհաս 'ի սիրտքս նոցա: Ալէլուիա. Ալէլ:

Կակուղ էին բանք նոցա քան զձէթ, եւ ինքեանք որպէս սլաք:

Ընկեա՛ 'ի Տէր զհոգս քո, եւ նա կերակրէ զքեզ, եւ ո՛չ տայ յաւիտեան սասանութիւն արդարոյ:

Դու, Աստուած, իջուցես զնոսա՛ 'ի դուք ապականութեան, արք արիւնահեղք եւ նինգաւորք մի՛ հասարակեացեն զաւուրս իւրեանց. այլ ես 'ի քեզ, Տէր: յուսացայ: Ալէլուիա. Ալէլ:

Փառք Հօր եւ. Ալէլուիա. Ալ:

(ԲԶ.) ՍՍՂՄՈՍ 2.

(Ա. ք.) Ի քեզ, Տէր, յուսացայ, մի՛ ամաչեցից յաւիտեան. Ալէլուիա. Յարգարութեան քում փրկեա՛ եւ ապրեցո՛ զիս. Ալէ:

Սոնարհեցո՛ առ իս զուռնին քո, եւ կեցո՛ զիս: Ալէլուիա:

Լեր իմ, Աստուած, ապաւէն եւ տեղի ամուր կեցուցանել զիս. զի հաստատութիւն իմ եւ ապաւէն իմ դու ես: Ալէլուիա:

Աստուած իմ, փրկեա՛ զիս 'ի ձեռաց մեղաւորի, 'ի ձեռաց անօրինի եւ անիրաւի: Ալէլուիա:

Դու ես համբարութիւն իմ, Տէր. Տէ՛ր, յոյս իմ 'ի մանկութենէ իմմէ: Ալէլուիա:

Ի քեզ հաստատեցայ ես յարգանդէ, յորովայնէ մօր իմոյ դու ես ապաւէն իմ. եւ առ 'ի քէն է օգնութիւն իմ յամենայն ժամ. Ալէլուիա:

ՍՅՂՄՈՍ ՀՅ. 11.

Փ.ի. Երկիրպագցեն նմա ամենայն թագաւորք երկրի, եւ ամենայն ազգք ծառայեսցեն նմա. Ալէլուիա. Ալէլուիա:

Ձի փրկեսաց զազքատն ի ձեռաց հզօրի, զազքատն եւ զանանկըն, որոյ ոչ է իւր օգնական:

Անխայեսցէ<sup>1</sup> նա յաղքատն եւ ՚ի տնանկն, եւ զանձինս տնանկաց կեցուցէ, ՚ի վաչխից<sup>2</sup> Հարաց փրկեսացէ զանձինս նոցա:

Պատուական է անունն նորա առաջի նոցա, կեցցէ եւ տացի նմա յոսկւոյն արաբացւոց:

Յաղօթս կացցեն առնա յամենայն ժամ, եւ զօրհանապաղ օրհնեսցեն զնա: Ալէլուիա

Եղիցի հաստատութիւնն բնդամենայն երկիր, եւ ՚ի վերայ գլխոց լեբանց: Ալէլուիա. Ալէլուիա:

<sup>1</sup> Պէտէ Էնայե. — <sup>2</sup> Անիւրու — Գոլու.

Բարձրացի քան զլիրանան պատեղ նորա, եւ ծագկեսցի ՚ի քաղաքի Տեառն որպէս խառ երկրի: Ալէլուիա. Ալէլուիա:

Եղիցի՛ անունն Տեառն օրհնեալ յաւիտեան, զի յառաջ քան զարեւ<sup>1</sup> է անունն նորա: Ալ. Ալ. ՚ի նա օրհնեսցին ամենայն ազգք երկրի, եւ ամենայն ազինք երանիցեն նմա: Ալէլուիա. Ալ. Ալ.

Օրհնեալ Տէր Աստուած Իսրայելի՛ որ առնէ սքանչելիս միայն. եւ օրհնեալ է անուն սուրբ փառաց նորա յաւիտեան: Լցցի՛ փառօք նորա ամենայն երկիր. եղիցի՛ եղիցի՛:

Ալէլուիա. Ալէլուիա:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ա.Մ.Թ. եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, Ա.Մ.Ն. Ալէլուիա. Ալէլուիա:

<sup>1</sup> Ս. Է. Է. — Գոլու — Է. Է. — Է. Է.

(ԲՆ.) ՍԱՂՄՈՍ ԶԵ.

(Ա. 7.) Չողորմութիւնս քո, Տէր,  
յաւիտեան օրհնեցից, Ալէլուիա.  
Յազգէ յազգ պատմեցից զճմարտութիւնս քո բերանով իմով.  
Ալէլուիա:

Ասացեր՝ թէ աշխարհս ողորմութեամբ շինեցի. յերկինս պատրաստ եղիցի ճշմարտութիւն քո: Ալէլուիա:

Եղի ուխտ ընարելոց իմոց, երգուայ Դաւթի ծառայի իմոց: Յաւիտեան հաստատեցից զգաւակ քո, եւ շինեցից յազգէ յազգ զաթոռ քո: Ալէլուիա:

Խոստովանս եղիցին երկինք սքանչելեաց քոց, Տէր. եւ ճրճմարտութիւն քո յեկեղեցիս սրբոց: Ալէլուիա:

Ո՞վ է յամպս՝ որ հաւասարի քեզ, կամ ո՞վ նմանիցէ Տեառն յորդիս Աստուծոյ: Ալէլուիա:

Համար 38

Փ. Ի. Դարձուցեր զօգնութիւն 'ի սրոյ նորա. եւ ոչ ընկալար զնա 'ի պատերազմի. Ալէլուիա. Ալէլուիա:

Անարգեցեր զսրբութիւն նորա, եւ զաթոռ նորա յերկիր կործանեցեր: Ալէլուիա. Ալէլ:

Նուազ արարեր զաւուրս ժամանակաց նորա. եւ հեղեր ըզնովաւ զամօթ: Ալէլուիա. Ալէլ:

Մինչեւ յերբ դարձուցանես զերեսս քո իսպառ, բորբոքեցի որպէս հուր բարկութիւն քո:

Իսկ արդ, յիշեա՛ եւ տես՝ թէ ո՞վ է իմ հանգիստ, միթէ՛ 'ի զո՞ւր ինչ ստեղծեր զամենայն որդիս մարդկան: Ալէլ. Ալէլ:

Ո՞վ է մարդ՝ որ կեցցէ եւ ոչ տեսցէ զմահ, կամ փրկեցէ զանձն իւր 'ի ձեռաց զժոխոց:

Ո՞ւր են ողորմութիւնք քո,

Տէր, առաջինք, զոր երզուար  
Գաւթի ճշմարտութեամբ քով :  
Յիշեա՛ զնախատինս ծառայի  
քո, զոր ընկալայ 'ի ծոց իմ  
յազգաց բազմաց : Ալէլ. Ալէլ :

Զոր նախատեցին թշնամիք  
քո, Տէր, նախատեցին փոխա-  
նակ օժկոյ քոյ : Ալէլ. Ալէլ :

Օրհնեալ Տէր Աստուած յա-  
ւիտեանս յաւիտենից . եղիցի՛,  
եղիցի՛. Ալէլուիա. Ալէլուիա :

Փառք Հօր եւ. Այժմ եւ միշտ եւ.

(Գ.Ձ.) ՍԱԳՄՈՍ ՆԵ.

(Ա. 7.) Խոստովան եղերուք  
Տեառն՝ զի քաղցր է, Ալէլուիա.  
Զի յաւիտեան է սղորմութիւն  
նորա . Ալէլուիա :

Ո՞ խօսեսցի զգորութիւնս  
Տեառն, լսելի արասցէ զամե-  
նայն օրհնութիւնս նորա : Ալէլ :

Երանի՛ ոյք պահն զիրա-  
ւունս, եւ աննն զարդարու-  
թիւն յամենայն ժամ. Ալէլ :

Յիշեա՛ զմեզ, Տէր, ընդ հա-  
ճոյս ժողովրդեան քոյ, եւ այց  
արա մեզ 'ի փրկութեան քում :

Տեսցուք մեք զքաղցրութիւն  
ընտրելոց քոց, ուրախ եղիցուք  
մեք յուրախութիւն ազգի քոյ,  
եւ գովեսցուք մեք 'ի ժառան-  
գութեան քում : Ալէլուիա :

Մեղաք մեք ընդ հարսն մեր,  
անօրինեցաք եւ յանցեաք . Ալէ :

Համար 37

Փոխ. Մասնեաց զնոսա 'ի ձեռս  
հեթանոսաց, արեցին նոցա  
առելիք իւրեանց, եւ թշնամիք  
իւրեանց նեղեցին զնոսա . եւ  
խոնարհ եղին 'ի ներքոյ ձեռաց  
նոցա . Ալէլուիա. Ալէլուիա :

Բազում անգամ փակեաց ըղ-

նոսա, եւ նոքա դառնացուցին  
զնա 'ի խորհուրդս իւրեանց, եւ  
կորացան՝ յանօրէնութեան իւր-  
եանց: Ալէլուիա. Ալէլուիա:

Հայեցաւ Տէր ի նեղութիւնս  
նոցա ի լսել ձայնի աղօթիցնոցա:

Յիշեաց զուխտ իւր, եւ զբղ-  
ջացաւ ըստ բազում ողորմու-  
թեան իւրում. եւ ետ զնոսա  
'ի գթութիւնս առաջի ամենայն  
գերչաց՝ նոցա: Ալէլ. Ալէլ:

Փրկեան գմեղ, Տէր Աստուած  
մեր, եւ ժողովեան գմեղ 'ի հե-  
թանոսաց: Ալէլուիա. Ալէլուիա:

Խոստովան եղիցուք անուան  
քում սրբոյ, եւ պարծեսցուք  
յօրհնութիւնս քո: Ալէլ. Ալէլ:

Օրհնեալ Տէր Աստուած Իսրա-  
էլի, յաւիտեանս յաւիտենից:  
Եւ ասացէ ամենայն ժողո-

<sup>1</sup> Խոստովանելու. — <sup>2</sup> Փրկել բռնազերու.

վուրդն. եղիցի՛ եղիցի՛:

Ալէլուիա. Ալէլուիա:

**Փ**առք Հօր եւ. Այժմ եւ միշտ եւ.

(Գ.Կ.) ՍՍԱՄՈՍ ՃԾԸ.

(Ա.Փ.) Արարի իրաւունս եւ ար-  
դարութիւն, Ալէլուիա. Մի՛  
մասներ զիս 'ի ձեռս նեղչաց՝  
իմոց. Ալէլուիա:

Ընկալ գծառայս քո 'ի բարի,  
զի մի ամբարտաւանք զգուես-  
ցեն զիս: Ալէլուիա:

Ապստեցին աչք իմ փրկու-  
թեան քում, Տէր, եւ բանից  
արդարութեան քո: Ալէլուիա:

Արա՛ ընդ ծառայի քում, Տէր,  
ըստ ողորմութեան քում. զար-  
դարութիւնս քո ուսո՛ ինձ:

Ծառայ քո եմ ես, իմաստուն  
արա՛ զիս, եւ ծանեայց՝ զվկա-  
նի զստեանսս. — <sup>2</sup> Ճանչիմ.

յու թիւնս քո : Ալէլուիա :

Ժամ է պաշտել զՏէր, խափանեցին զօրէնս քո : Ալէլուիա :

Համար 169

Փ.Ի. Մերձեցին խնդրուածք իմ առաջի քո, Տէր, ըստ բանի քում իմաստուն արած զիս :

Ալէլուիա. Ալէլուիա :

Մացեն աղօթք իմ առաջի քո, Տէր, եւ բանի քով փրկեալ զիս :

Բզխեցէն շրթունք իմ զօրհնութիւնս քո, յորժամ աւտուցես ինձ զարգարութիւնս քո :

Սուրբի լեզու իմ զբանս քո, զի ամենայն պատուիրանք քո արդարութեամբ են : Ալէլ. Ալէլ.

Եզիցի ձեռն քո 'ի կեցուցանել զիս, զի զպատուիրանս քո ընարեցի : Ալէլուիա. Ալէլուիա :

Յանկացայ փրկութեան քում Տէր, եւ օրէնք քո խօսք իմ էին :

Կեցցէ՛ անձն իմ, օրհնեցէ՛ զքեզ, եւ իրաւունք քո օրհնեցեն ինձ : Ալէլուիա. Ալէլ. :

Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ, խնդրեա՛ զճառայս քո, զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ : Ալէլուիա. Ալէլ. :

Փառք Հօր եւ. Այժմ եւ միշտ եւ.

(Գ.Ձ.) ՍՍ.Ղ.ՄՍՍ ձեռ.

(Ա.Գ.) Օրհնեա՛, անձն իմ, զՏէր. օրհնեցից զՏէր 'ի կեանս իմ, Ալէլուիա. Սաղմոս ասացից Աստուծոյ իմոյ մինչեւ եմ ես : Ալ.

Մի՛ յուսայք յիշխանս՝ յոր զիս մարդկան, զի ոչ գոյ փրկուցի ինձ 'ի նոսա : Ալէլուիա :

Ելցէ հոգի 'ի նոցանէ՛ եւ զարձցին անդրէն 'ի հող. եւ յայնմ աւուր կորիցեն ամենայն խորհուրդք նոցա : Ալէլուիա :



Երանի՛ ազգի՛ որոյ Տէր Աստուած Յակովբայ օգնական է նմա, եւ յոյս նորա 'ի Տէր Աստուած է : Ալէլուիա :

Ո՛ւրար զերկինս եւ զերկիր, զծով եւ զամենայն որ է 'ի նոսա :

Ո՛ւրա՛նէ զճշմարտութիւն յաւիտեան, եւ առնէ իրաւունս զրկելոց : Ալէլուիա :

ՍՍՂՄՈՍ ձեռն :

Փ.Ի. Քովեան Երուսաղէմ զՏէր, Ալէլուիա :

Եւ օրհնեան զաստուած քո Սիրովն : Ալէլուիա :

Զի զօրացոյց զնիգս՛, զբանց քոց, եւ օրհնեաց զօրդիս քո 'ի քեզ : Ալէլուիա :

Ո եղ զսահմանս քո 'ի խաղաղութիւն, պարարտութեամբ ցորենոյ լցոյց զքեզ : Ալէլուիա :

<sup>1</sup>Փ-խն+ որան, (սխ-բխ-).

Առաքէ զբան իւր յերկիր, զազգազ ընթանան պատգամք նորա Ալէլուիա :

'Ինէ զձիւն որպէս զասր՛, եւ զմէզ՛ որպէս փոշի ցանեաց : Ալ.

Արկանէ զսան որպէս պատառս, առաջի ցրտոյ նորա ո՛կարէ կեալ : Ալէլուիա :

Առաքէ զբան իւր եւ հալէ զնոսա, շնչեացն հողք եւ զբնասցն ջուրք : Ալէլուիա :

Պատմէ զբան իւր Յակովբայ, զարդարութիւն եւ զիրաւունս Իսրայէլի : Ալէլուիա :

Ո՛չ այսպէս արար ամենայն ազգաց Տէր, եւ զգատաստանս իւր ո՛չ յայսնեաց նոցա : Ալէլ.

Փառք Հօր եւ Այծմ եւ միշտ եւ. Ալէլուիա. Ալէլուիա :

<sup>1</sup>Գ-բր. — <sup>2</sup>Մ-ւ-ւ.

(Դ.Կ.) ՍՍԱՄՈՍ ԺԷ.

(Ա. 7.) Սիրեցից զքեզ, Տէր, զօրութիւն իմ, Ալէլուիա. Տէր հաստատիչ իմ, ապաւէն իմ եւ փրկիչ իմ. Ալէլուիա:

Աստուած օգնական իմ, եւ ես յուսամ ՚ի նա. ապաւէն իմ եղջիւր փրկութեան իմոյ ընդունելի իմ է. Ալէլուիա:

Օրհնելով կարգացից առ Տէր, եւ ՚ի թշնամեաց իմոց ապրեցայց:

Շուրջ եզեն զինեւ երկունք<sup>1</sup> մահու. եւ ուզիք<sup>2</sup> անօրէնսութեան խաւովեցուցին զիս. Ալէ:

Վիշաք դժոխոց պաշարեցին զիս, եւ ժամանեցին ինձ որոգայթք մահու. Ալէլուիա.

Ի նեղութեան իմում ես առ Տէր կարգացի, եւ առ Աստուած իմ ազազակեցի. Ալէլուիա.

<sup>1</sup>Աստուած օգնական. — <sup>2</sup>Պարտաւոր.

Համար 40

Փ.Կ. Չգեցուցեր ինձ զօրութիւն ՚ի պաներազմի, եւ զյարուցեալսն<sup>1</sup> ՚ի վերայ իմ ներքոյ իմ արարեր. Ալէլուիա. Ալէլ.

Չթշնամիս իմ հալածականս արարեր, եւ զատելիս իմ սատակեցեր. Ալէլուիա. Ալէլուիա:

Ազազակեցին, եւ ո՛չ ոք էր որ փրկէր զնոսա, կարգացին առ Տէր, եւ ո՛չ լուաւ նոցա:

Մանրեցից զնոսա որպէս փոշի առաջի հողմոյ, եւ որպէս կաւ գեւեհաց<sup>2</sup> կոխեցից զնոսա:

Փրկեացէ զիս Տէր ՚ի հակաակութենէ ժողովրդոց. եւ կացուսցէ զիս գլուխ նեթանոսաց:

Ժողովուրդ՝ զոր ոչ գիտէի, ծառայեաց ինձ. եւ ի լուր աւկանջաց լուաւ ինձ: Ալէլ. Ալէլ.

Որդիք օտարաց ստեցին ինձ,

<sup>1</sup>Իմ վերայ. — <sup>2</sup>Փոշուր.

որդիք օտարաց մաշեցան եւ կազացան 'ի շաւղաց իւրեանց :  
Կենդանի է Տէր, եւ օրհնեալ է Աստուած, եւ բարձր եղիցի Աստուած փրկութեան իմոյ :

Աստուած է որ խնդրէ զվրէժ իմ, եւ հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինեւ : Ալէլ. Ալէլ.

Փրկիչ իմ 'ի Թշնամեաց իմոյ բարկացողաց, յայնցանէ որք յարուցեալ են 'ի վերայ իմ՝ բարձր արարեր զիս, եւ յառնէ անիրաւէ փրկեցեր զիս : Ալ. Ալ.

Վասն այսորիկ խոստովան եղէց քեզ 'ի հեթանոսս, եւ ահաւան քում սաղմոս ասացից :

Մեծ արարեր զփրկութիւն Թագաւորի նորա : առնել ողորմութիւն ընդ օծելոյ նորա ընդ Դաւթի, եւ ընդ զաւակի նորա յազգէ մինչեւ յազգ. Ալէլ. Ալէլ.

Փառք Հօր եւ. Այժմ եւ Ալէլ. Ալ.

## ԿԱՆՈՆԱԳԻՆՈՒՆ

Բուն Բարեկենդանին, եւ Նոր Գիւրակին :

(Ա. 1-2-3 եւ 4-5-6-7-8-9-10)

ՍՍ.Ղ.ՄՈՍ ձեռն.

(Ա. 4.) Օրհնեա՛, անձն իմ զՏէր, օրհնեցից զՏէր 'ի կեանս իմ, սաղմոս ասացից Աստուծոյ իմոյ մինչեւ եմ ես :

Մի՛ յուսայք յիշխանս՝ յորդիս մարդկան, զի ո՛չ գոյ փրկութիւն 'ի նոսա :

Ելցէ հօգի 'ի նոցանէ՛ եւ գործցին անդրէն 'ի հող, եւ յայնմ աւուր կորիցեն ամենայն խորհուրդք նոցա :

Երանի՛ ազգի որոյ Տէր Աստուած Յակորայ օգնական է նմա. եւ յոյս նորա ի Տէր Աստուած է :

Ո արար զերկինս եւ զերկիր, զծով եւ զամենայն որ է 'ի նոսա :

Ու պահէ զճշմարտութիւն յաւիտեան, եւ առնէ իրաւունս զրկելոց:

Տայ հաց քաղցիւոց<sup>1</sup>, եւ արձակէ զկապկարս Տէր:

Տէր բանայ զաչս կուրաց, եւ կանգնէ զգլորեալս Տէր:

Տէր սիրէ զարդարս, Տէր պահէ զպանդուխտս. զորքս եւ զայրիս ընդունի Տէր, եւ զճանապարհս ամբարշտաց կորուսանէ, թագաւորեցէ Տէր յաւիտեան Ասատւած քո, Սիրմիւ, յազգէ մինչեւ յազգ:

Փռի. Օրհնեցից զքեզ՝ զոնութեամբ 'ի կեանս իմ. սաղմոս ասացից քեզ Քրիստոս թագաւոր, յաղթական նոր երգով օրհնութեան:

(Երեցս կրկնեաւ և շքեպինն Բարձր աստ իւր եղանակով):

<sup>1</sup>Անօթիւնբուն.

ՍԱՂՄՈՍ ՀԽԶ.

Օրհնեցէ՛ք զՏէր, զի բարի է սաղմոս: Ասատւոյ մերում քաղցր հզիցի օրհնութիւն:

Շինէ զԵրուսաղէմ Տէր, եւ զցրուեալսն Իսրայելի ժողովէ: Բժշկէ զբեկեալ<sup>1</sup> սիրտս, եւ պատէ զամենայն վերս նոցա:

Ո թուէ զբազմութիւն աստեղաց, եւ զամենեւեան զնսս յանուանէ կոչէ:

Մեծ է Տէր, եւ մեծ է զօրութիւն նորա, իմաստութեան նորա ո՛չ գոյ բաւ<sup>2</sup>:

Ընդունի զհեզս Տէր, եւ խոնարհ առնէ զամբարտաւանս մինչեւ յերկիր:

Օրհնեցէ՛ք զՏէր խոստովանութեամբ, սաղմոս ասացէ՛ք նմա օրհնութեամբ:

Ո զզեցոյց զերկինս ամպովք,

<sup>1</sup>Կարգած. — <sup>2</sup>Մայր ճ-ի լ-նի.

պատրաստ արար զանձրեւ իւր  
յերկիր :

Բուսոյց զխտա 'ի լերինս, զգա-  
լարի՝ 'ի ծառայութիւն մարդկանս :

Ո տայ անանոց կերակուր,  
ձագուց ազնաւուց՝ որ կարդան  
առ նա :

Ոչ թէ ընդ զօրութիւնս ձիոյ  
կամեցաւ Տէր, եւ ոչ ընդ ի-  
րանս՝ աւն հսկայի հաճեցաւ :

Այլ հաճեցաւ Տէր ընդ երկիւ-  
ղածս իւր, եւ ընդ այնոսիկ՝ ոչք  
յուսան յողորմութիւն նորա :

Փոխ. Քաղցրացի՛ն քեզ Բրիս-  
տոս՝ գոհութիւնք երկիւղածաց  
անուան քո. զոր յուսացուցեր  
ողորմութեամբ քով, ի խորհուր-  
դքս կենսաբեր գալստեանդ քո :

Երէցս կրկնեա, և զյետինն Բարձր ասու :

«Կանանկդին. — Ձերան՝ (Իեզրեի)»

ՍԱՂՄՈՍ ձԵՂ :

Պոլեա՛ երուսաղէմ զՏէր :  
եւ օրհնեա զԱստուած քո Սիոնս :

Չի զօրացոյց զնիզս զբանց  
քոց, եւ օրհնեաց զորդիս քո  
'ի քեզ :

Ո եզ զսահմանս քո 'ի խա-  
ղաղութիւն, պարարտութեամբ  
ցորենոյ լցոյց զքեզ :

Առաքէ զբան իւր յերկիր,  
վազվազ ընթանան պատգամք  
նորա :

Դնէ զձիւն որպէս զասր, եւ  
զմէզ որպէս փոշի ցանեաց :

Արկանէ զսառն որպէս պա-  
տառս, առաջի ցրտոյ նորա ո՛  
կարէ կեալ :

Առաքէ զբան իւր եւ հալէ  
գնոսս, շնչեսցեն հողմք եւ  
գնասցեն ջուրք :

Պատմէ զբան իւր Յակովբայ,

զարգարութիւնս եւ զիրաւունս  
Իօրայէլի :

Ոչ այսպէս արար ամենայն  
ազգաց Տէր, եւ զդատաստանս  
իւր ո՛չ յայննեաց նոցա,

Փոփ. Չքեզ Քրիստոս, զովէ Ե-  
կեզեցի փրկեալ քո սուրբ ցրն-  
ծալով տեսանէ զքեզ զփրկողդ  
եկեալ հայրական իշխանու-  
թեամբ. 'ի սրահել զսուրբս քո  
Երէնս կրկնեա, եւ զԵրէնս Բարձր աստ:

Կ Ս Ն Ո Ն Ս Պ Լ Ո Ի Խ

Մեծի Ուրբաթուն

ՍՍՂԱՊՍ ՏՅԸ 161

(Ս. Գ.) Իշխանք հալածեցին զիս  
'ի նանիր. Ալէլուիա. եւ 'ի բանից  
քոց երկեաւ սիրտ իմ. Ալէլուի.

Յնծայցայ են 'ի բանս քո, որ-  
պէս այն որ գտանէ աւար՝ բն-  
զում: Ալէլուիա.

14 զարգար.

Չմեղս ասեցի եւ անարգեցի.  
եւ զօրէնս քո սիրեցի: Ալէլ.

Եօթն անգամ յատուր օրհնե-  
ցից քեզ, վասն իրաւանց եւ  
արդարութեան քո: Ալէլուիա.

Խաղաղութիւն բազում է այ-  
նոցիկ՝ ոչք սիրեն զօրէնս քո, եւ  
ո՛չ գոյ 'ի նոսա գայթակղութիւնս

Սպասեցի փրկութեան քում,  
Տէր, եւ զպատուիրանս քո սի-  
րեցի: Ալէլուիա.

Պահեաց անձն իմ զվկայու-  
թիւնս քո, եւ սիրեաց զնոսա  
յոյժ: Ալէլուիա:

Պահեցից զպատուիրանս եւ  
զվկայութիւնս քո, զի ամենայն  
ճանապարհք իմ առաջի քո են:

Փոփ. Մերձեցցին խնդրուածք  
իմ առաջի քո, Տէր, ըստ բանի  
քում իմաստուն արա՛ զիս.

Ալէլուիա. Ալէլուիա:

Մտցեն ազօթք իմ առաջիքն,  
Տէր, եւ բանիւ քով փրկեա՛ զիս :  
Բզխեսցեն շրթունք իմ զօրհ-  
նութիւնս քո, յորժամ ուսուս-  
ցիս ինձ զարդարութիւնս քո :

Պօսեսցի լեզու իմ զբանս քո,  
զի ամենայն պատուիրանք քո  
արդարութեամբ են :

Եզիցի՛ ձեռն քո ՚ի կեցուցա-  
նել զիս, զի զպատուիրանս քո  
ընտրեցի :

Յանկացայ փրկութեան քում,  
Տէր, եւ օրէնք քո խօսք իմ էին :  
Կհցցէ՛ անձն իմ, օրհնեցէ  
ըզքեզ, եւ իրաւունք քո օգ-  
նեսցեն ինձ :

Մոլորեցայ ես որպէս զոչխար  
կորուսեալ, ինդրեա՛ զձառայս  
քո, զի զպատուիրանս քո ես  
ոչ մտացայ :

Ալէլուիա . Ալէլուիա :

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգ-  
ւոյն Սրբոյ . Այժմ՝ եւ միշտ եւ  
յաւիտեանս յաւիտենից . Ամէն :  
Ալէլուիա . Ալէլուիա :



(Կիրակի եւ Տէրունական Տօնի եւ  
Սրբոց Տօնի օրեր՝ որ Ս. Պատարագ կը  
մատուցուի, Կանոնազուխէն յետոյ Հռ-  
փոյտն Շարական, եւ Տօնքէ կամ Հռ-  
փոյտն Աւետարան կը կարդան ըստ Չայ-  
նին. իսկ Խաչի Տօնի օրեր, փոխանակ  
Հանգստեան Շարականի՝ Այժմ անձ-  
նայն թոյնքն կ'երգեն, եւ Խօսքըն-  
Աւետարան կը կարդան ըստ Չայնին :  
Որոց սկսին Աւագերիցու դասուն է.)

## Ե Ր Գ

Տեառն ՆԵՐՍԻՆՍԻ Հայոց Կաթողիկոսի ստացեալ յազազս մեծի Ուրբաթու գիշերին Աւետարանացն:

Իշխանք ժողովեցան ՚ի միասին, վասն Տեառն եւ վասն օծելոյ նորա:

Երբ անգամ կրկնեցեն, բայց զյետինն բարձր. ՚ի վեց տեղիսն եւ:

ԳԿ. (Ա-Գ.)

Այսօր անճառ լուսոյն ծագումն

ի փրկութեան մեր կառարումն,

Խոնարհի ՚ի վերնատունն՝

ի տուեբական տնից լըբումն.

Նոսի քան զԼեւոնիս խորհրոյ՝

Սփածառ զեշակ արկողն լուսոյ,

Եւ ջուր տուալ ծառայարար,

Զոտրո լուանայր զաշակերտացն:

Իսանին Հօր-փառաց լուսոյ՝

Պետրոս մերձիլ յոսս ոչ ներէր

Այնմ ձեռաց՝ որոյ են գործք

Երկնից երկինք և երկրաւորք.

Որով կուրաց աչքք բացան

Խուչք և համերք արձակեցան.

Որ վերածեաց զինքն ՚ի ծովէն

Սառեաց ալեացն և լռեցին:

Գըլխոյն ը՛տրեալ հոտին փոքու  
Սաստեր զխորհուրդն ոչ գիտելոյ.

Որով դառնայր և հնազանդէր

Զոսս և զզուխ ժաբրել մաղթէր

Գըլխոյդ տէ, չէ ինչ պիտոյ

Լուացումն ջրոյ՝ զի լուացեալ է:

Ոտիցդ պէտք են մաքրութեան

Յօղիլ ՚ի զլուխ սրբութեամբ:

Դասուց խրոց աշակերտաց

Զոր նախ բանիւ վարդապետեաց.

Այսօր գործով զճայրագոյնն

Եցոյց յինքեան զխոնարհութիւն.

Սպասաւորեալ հողեղինաց

Այն որ անտեսն է հրեղինաց.

Տարեալ պաշտօն իւր ծառայիցն

Այն որ պաշտին ՚ի սրովրէից:



Եթէ Տէրս, ասէ, էից  
 Եւ վարդապետս բոլորից,  
 Զաշակերտացդ և զժառայից  
 Զոտրս լուացի 'ի հնոյ աղտից.  
 Միմեանց և դուք համարեալեամք  
 Յուցէք ըզնոյն խոնարհութիւն,  
 Բարձրացելոյն 'ի կործանումն  
 Եւ անկերց ընուծեանդ կանգնումն:

Զոր մարբեցեր յաւազանին  
 Մարուք ձեռք զոտրս նոցին  
 Եւ ունուցեր խոնարհութեամք  
 Յաղծող լինել չար հպարտին,  
 Եւ զիմ լուս զախղճն մեղաց  
 Աղաչանք սրբոյ զընդին.  
 Եւ ըզգնացս ուղղեան զտօն  
 Խոնարհութեամք ելիւք յերկինս:

Օրմի. — Ա.—Ե.—Բ.—Յ.—Վ.—Գ.— 16. Ամէն  
 ամէն. Վերջ. և աշակերտքն իւր. ՅԸ. 1:

(Այս և յետագայ Ա.—Ե.—Բ.—Յ.—Վ.—Գ.—  
 Ուրբախի գեղերէն և Կարդացունն.)

Երևոյ Ս.—Վ.—Ն. Երանի որ խորհի.  
 ԽԱ. Որպէս փափարի. ԽԲ. Դատ արա.  
 Բան անօրէնութեան եղին 'ի վերայ իմ.  
 Տէր, Տէր, մի Թողուր զիս:

Էլից զօրէնսն Մովսիսի  
 Զոր խօսեցան 'ի Սինայի.  
 Էկեր զգառն օրինակին  
 Եւ զբաղարչն ընդ եղեգին.  
 Ըզհինն 'ի նորրս փոխելով  
 Զքստուերն 'ի լոյս հշմարտելով.  
 Փոխան զառինն ինքն զրով  
 Դառն Աստուծոյ նուիրելով:

Ընդ բաղարչին հաց անխմոր  
 Ետ ըզՄարմինն իւր զերկնաւոր.  
 Ըզկուսածինն անսերմաւոր  
 Զանապականն և զնոգեւոր.  
 Ընդ ոչխարին արեան ուխտին  
 Ետ մեզ զԱրիւնն իւր ուխտ կրկին.  
 Եւ եղեգան դառնագունին  
 Փոխան ըզվարս աստուածային:

Թագաւորն արարածոց  
 Չչացնն կենաց ետ բողցելոց,  
 Եւ զճաժակըն ուրախարար  
 Որք յԱդամայ տըրումեցելոց.  
 Այս նոր ուխտ է իմոյ Արեան  
 Փոխան հընոյ ուխտին արեանց  
 Չոր յիշատակ իմ առնիցէք  
 Մինչեւ եկից ես միւսամ գամ:

Փողովեալքս 'ի բէն հայցեմք  
 Ընդ ժողովեալ Մետասանին.  
 Որ զկենարարըդ քո Մարմին  
 Բաշխեալ ետուր ընդ Բաժակին.  
 Շնորհեան և մեզ Տէր ընդ 'Նոսին  
 Հաղորդ լինել բուժ սեղանին.  
 Կենաց Հացիդ յոր փախարխմք  
 Եւ Ըմպելոյդ ուժ ծարաւխմք:

Ի յընտրելոց աշակերտացն  
 Յուզաս մեկնեալ 'ի սուրբ զառանցն.  
 Չբարձող մեղաց զՔառն Աստուծոյ  
 Մատնէր 'ի մահ ընդ արժամոյ.  
 Ի յԸնթրիսըն հոգեւոր

Մերձի ժպիրնն և նենգաւորն:  
 Ուտելով ընդ Վարդապետըն  
 Յաճախէ զխարէութիւնն:

Լոյսըն խօսէր աղերասլի  
 Խաւարելոյն վասն դարձի.  
 Մի ոմն 'ի ձէնջ, առէ, եղբարք  
 Չիս մատնելոց է առ 'ի մահ.  
 Պետրոս լուեալ զայն զարհուրէր  
 Եւ ակնարկէր առ Յովհաննէս,  
 Հարցանել Թէ ո՞վ իցէ  
 Դաւաճանող Վարդապետին:

Օրթի.— Ա-Է-Դ-Ե-Ն Դ-Ե-Է, ԻԲ. 1. Մերձեցաւ  
 տան բաղ. ՎԵՂ. խօսելին 'ի նաւ 65 հմր.

ԵՐԵՐԴ Ս-ՂԻՆՆ ՎՐ. Փրկեա զիս 'ի Աստուած  
 մերժեցեր. Լուր Աստուած աղօթից.  
 Փրկեա զիս 'ի թշնամեաց իմոց Աստուած  
 իմ. և 'ի հաւածչաց իմոց ապրեցն զիս:

Խնամով սիրոյն յիւր սիրելեացն  
 Ըզտըրտումիւնըն փարատեաց.

Թացեալ պատառ տայ Յուդայի  
Նըշաւակեալ զգողըն մատնիչ.

Զոր առեալ և մերկացաւ  
ՅԱտուռածային Հոգւոյն շնորհաց,  
Մատնեցաւ նախաշարին  
Ընդ մատնութեան վարդապետին:

Ծայրագոյն լուսոյն զըրկեալ  
Խաւարաւէրն արտարս ելեալ.

Տէրըն յայտնէր լոյս եղելոցն  
Ըզգայթակղիւն ՚ի զիշերին.

Պետրոս խօսէր խրախուսելի  
Եւ կշտամբիւր հաւախօսի.

Զիւրն յաշխարհէ զփոխիւն ասէր  
Եւ զգալուստ Հոգւոյն պատմէր:

Կեղրոնեան յայնկոյս ձորոյ՝  
Ի վերնատունն ել խորհրդոյ.

Էմուտ պարտէզ ընդ պարտիզի  
Էմոյժ զԱղամ յԱղին դրախտին.

Մուծցես և զմեզ Տէր ընդ նմին  
Ուստի համեր նախ զառաջինն,

Զի ժառանգել զհայրենին  
Արժանասցուք մեք վերստին:

Հոգայր ըզկիրցն տըրամարար  
Երիւթն եղեալ առանձնարար.  
Փըրկել զաշխարհս հոգիս յօժար  
Բայց է բնութիւն մարմնոյս տըրկար.  
Ո՛չ ոմն ուժեղ և զօրաւոր  
Եւ ոմն անզօր վըտանգաւոր,  
Այլ մի և նոյն զոլ միաւոր  
Կըրէր ըզկիրսըն կամաւոր:

Զայնիւ մաղթէր աղօթական  
Վասն իմ առ Հայր իւր էական.  
Ծունըր դընէր խոնարհական  
Որում կըրկնի ծունըր ամենայն.  
Եթէ փըրկիլ մարդկան հնար է  
Առանց մահու իմ որ գրեալ է.  
Բաժակ մահուս յինէն անցցէ  
Ո՛չ իմ կամաւ, այլ քոյդ եսցէ:

Ղօղեալ յերկիւղ քրտանց հոսման  
Որոննաճեւ կայլակ վիժման.  
Ի զօրանալ Հրեշտակ մերձեալ  
Զօրինական գիրըն լըցեալ.  
Զի կատարեալ էառ զբնութիւն

Աստուածըն Բան ըզմարդկութեան,  
Պարտ էր զերկիւղ և զտըրտումԹիւն  
Յիւրումըն կրել տնօրէնութեան:

ՕրԹի. — Ա. Է. Դ. Մ. Գ. Ի. Է. Ժ. Բ. 27. Եւ ասէ  
ցնոսա Յիսուս. Իւրէն սկսաւ լալ. 72 հմբ.



Չ. Ը. Գ. Դ. Մ. Ե. Զ. Աստուած մտին հե.  
Որ հովուեաղ. Յնծացէք առ Աստուած:

Նորա 'ի ձեռանէ բումմէ մերժեցան.  
մէք ժողովուրդք և խաշն արօտի բո:

Ճառագայթ փառաց էին  
Որ ըստ բնութեանս մարդկային  
Տագնապեցար 'ի գիշերին  
Աղօթեցեր առ Հայր յերկին.  
Ծագեան 'ի մեզ զլոյսդ երկնային  
Եւ փարատեն զերկիւղ չարին.  
Մասունք հոգւոց մեր և մարմին  
Յերկիւղ բո սուրբ բեւեռեացին:

Մերձեալ Յուդաս որ մասնեւրց  
Հանդերձ զասուն Փարիսեցւոց.  
Անկան նրման ստորանկելոցն  
Որք յաւիտեան չեն կանգնելոց.  
Յուդաս նեղաւ հ: մբուրելով  
Առ իմ մահու նըշան տալով.  
Փոխան սիրոյ զեւ մասնելով  
Չար ընդ բարւոյ վընարելով:

Յայնժամ առ զում սիրոյն Պետրոս  
Ըզժառային անուն Մաղքոս  
Ենատ սուսերք զականչն աշոյ  
Որ ոչ լուաւ Տեառն իւրոյ.  
Իսկ Տէրըն մեր արագապէս  
Յունկըն մերձեալ բըժշկապէս,  
Առողջացոյց Աստուածապէս  
Չոր ոչ տեսին կուրացն հանդէս:

Նոր հոտին փորու ցըրուեալ  
Քանզի զՀովիւըն բաշ հարեալ.  
Պետրոս միայն ըզհետ երթեալ  
Ի յաղչկանէ վիմին շարմեալ.  
Նըշանակեալ հան խօսէր

Առ ՚ի Պետրոս Տէրն աննարկէր.  
Զբանըն յիշէր դառն արտասուէր  
Ի զըլորմանէն դարձեալ կանգնէր:

Շնորհեալ վիմին եկեղեցւոյ  
Զոր պանեցեր ի հոսելոյ,  
Եւ կանգնեցեր ի զլորելոյ  
Վասըն սրտին արտասուէլոյ.  
Կանգնեան և զիս Տէր ընդ նմին  
Ի զլորմանէ սայթարողին.  
Տալով աչացս յորդ արտասուս  
Եւ ջուր նման ծովու զըլխոյս:

Ո՛վ կամաւ զանկապելին  
Կապեալ ըզձեռս արձակողին,  
Ի յապարանալն տանէին  
Կայիափայ և աննային.  
Ծառայն զերեսն այն ապտակէր  
Յորմէ Սրովբէն Թեւարօղէր  
Թուք արձակեալ պիղծ բերանովն  
Յայն որ կուրին լոյս ծագեաց Թրովն,  
Օրթի — Աւետարան Մատթ. Իջ. 31 Յայն-  
ժամ ասէ ցնոսս. 47. 48 և փոխեան, 56. հմբ.

ՀԻՒԿԵՐԵՐ Ս՝Ղ՝՝՝ ձԸ. Աստուած օրհնու-  
Թեան. Ասաց Տէր՝ ցՏէր իմ. Խոստովան  
եղեց բեզ.

Խօսեցան զինէն լեզուաւ նենգաւորաւ.  
Ե բանիւ ատելութեան զիս պաշարեցին:

Զար կապանաց մարդկան լուծիչ  
Որ կապեցար ընդ կապելոյն.  
Զիս արձակեան յինքնակապէս  
Մեղաց կապից զըժոխայնոյն.  
Որ ընդ մեղօք պարտաւորին  
Կացեր անմեղդ ՚ի յատենի.  
Յորժամ փառօք գաս հայրենի  
Մի դատեսցես զիս ընդ նոսին:

Պատկառանօք հինն Աղամայ  
Որ ձաղեցար փառն նորա.  
Զընչեան զամօծ մեղաց լըրբին  
Որով զերեսս իմ ծածկեցին.  
Որ ներեցեր չար ծառային  
Ածել ձեռօք բեզ ապտակին.  
Հար ուժգնակի զղէմըս չարին  
Որպէս և զիս եհար ուժգին:

Զահրն լուսոյ յառաւօտին  
 Ի յուրբանու հընոյ զառկին,  
 Կայր առաջի զատուորին  
 Ծառայն նըստէր ՚ի յառնին.  
 Ի հարցանել Պիղատոսի  
 Տէրն ոչ առնէր պատասխանի.  
 Զի կանխասաց Գիրքն լըցցի  
 Եղէ ևս մարդ որ ոչ խօսի:

Ուսմկական դասք զինուորացն  
 Արկին հանդերձ նախատանաց.  
 Այնմ որոյ զգեստն է լոյս փառաց  
 Իրբեւ զօծոց զինքեամբ արկած  
 Ի ծունր իջեալ կատակէին,  
 Զզլուին եղեգամբ հարկանէին,  
 Պըսակ ՚ի փշոց բոլորէին  
 Ըզփուշ մեղացըն բարձողին:

Սոսկային Քերովբէից  
 Բառնայր ինքեամբ զփայտ խաչին.  
 Մինչ ՚ի տեղի Գողգոթային  
 Յորում եղեալ մարդն առաջին.  
 Ետուն ըմպել զինի զմուսեալ

Եւ կերակուր լեղեաւ խառնեալ.  
 Որով զպըտողոյն դառըն ճաշակ  
 Փոխեաց մեզ բաղցր և ախորժակ:

Վէրնականքըն զարհուրեալ  
 Տեսին ըզՏէրըն մերկացեալ.  
 Եւ զհանդերձըն բաժանեալ  
 Պատմուճանին վիճակ արկեալ.  
 Ըզձեռուն և զոտըն ծակեցին  
 Ըստ յայտնապէս Դաւթեան ձայնին.  
 Ընդ փայտ խաչին բեւեռեցին  
 Զմատունն որ զրեաց ՚ի տախտակին:

Օրթի - Ա-Ե-Դ-Բ-Ն-Մ-Ի-Բ-Ի-Զ-57. Իսկ նոցա  
 կալեալ Քեբէ Ելաց զառնապէս. 75. հմր.

Վէշեր-բո Ս-Ղ-Ն՝ ձծէ. Խոստովան եղե-  
 բուք Տեսուն, զի բա. Բնէ- յոյն Դ-Ն-Ն  
 -Բ-Ն-Ի. Բացէր ինձ զգրուես արդա. Խ-Բ-Բ.

Խոստովան եղբուք Տեսուն զի բարի է,  
 զի յախտեան է ողորմութիւն նորա:

Տարածեալ ձեռք ընդ ձեռաց  
 Ոտք ընդ ոտից ընծանալեաց.  
 Փայտ ընդ փայտի դառնն պըտողոյ  
 Կեանք ընդ մահու փոխարկելով.  
 Ի մէջ երկուց անօրինաց  
 Կայր մերկացեալ Տուողն օրինաց  
 Զոր ոչ տեսին ազգըն կուրաց  
 Բայց 'ի միոյն յաւազակաց:

Բոպէից արեգակունն  
 Ըզտին արար զիշերանման.  
 Զբտուերըն բող արկ մերկուծեան  
 Զի մի տեսցէ ակն անարժան.  
 Ի միջօրեայն նըսեմացաւ  
 Յորժամ Ադամ մեղօք մեռաւ.  
 Ի յիններորդն 'ի լոյս դարձաւ  
 Յորժամ մահուամբ մահըն լուծաւ:

Յօդէր արտօսըր ցաւագին  
 Մայր Տեառն որ կայր մերձ առ Խաչին.  
 Յորժամ լսէր ըզժարաւին  
 Բարբառելոյ իւր Միածնին.  
 Ետուն բացախ խառնեալ լեզի

Այնմ որ բրդխեսաց գետ յԱղէնի.  
 Եւ 'ի վիմէն վըտակ բարի  
 Արբոյց տոհմին դառնացողի:

Ի իւծեալ յերրորդ ժամու օձին  
 Զմիտըս նախնւոյ մօրն Եւային,  
 Ի վեցն անկեալ մարդն առաջին  
 Հաւանական բանիւ նորին,  
 Ի սոյն ժամու Տէրն 'ի Խաչին  
 Զի բաւեսցէ զմեղըս նոցին.  
 Եւ յորժամ ել Ադամըն հին  
 Եղ զաւազակն 'ի մէջ դրախտին:

Փարեկի բարբառ ընդ իմ  
 Էլի էլի առ Հայր գոչէր,  
 Զհողին կտտաւ Հօր աւանդէր  
 Զհողիս մարդկան նոյն ընծայէր.  
 Երկիր հիմամբք սասանեցաւ  
 Եւ վարագոյրն ընդ մէջ հերձաւ.  
 Վէմք 'ի յինբեանց պատառեցան  
 Եւ զերեզմանք մահու բացան:

Քարոզի 'ի սքանչելեացս  
 Ատուած մարմնով վասն իմ խաչեալ

Մերով բնութեամբքս մեռանի  
Աստուած անմահ խոստովանի.  
Կըրկնավըտակ կողին աղբերբբ  
Եկեղեցի իւր հաստատի.

Զրովըն մարբի զԱրիւնն ըմպէ  
ԶՈրդի ընդ Հօր փառաւորէ:

Օրթի. - Ա-Է-Գ-Բ-Յ-ԺԸ. ԺԸ. 2. Գիտէր և  
Յուդա. ԳԷԸ. հաւ խօսեցաւ. 27. հմր.

## Ե Ր Գ

Տեառն ՆԵՐՍԻԱՍԻ Հայոց Կաթուղի-  
կոսի ասացեալ յաղագս մեծի Ուրբա-  
թու ցեղեկին Աւետարանացն:

## ԱԿ. ԳԼ.

Նորոգող տիեզերաց

Որ զգեցուցեր մեզ լոյս փառաց.  
Արկար ըզքեւ ի զինուորաց,  
Քղամիդ կարմիր նախատանաց.  
Մերկեն յինէն ըզբուրժ մեղաց,  
Ըզարբտմագինն արեամբ ներկած.

Եւ ըզգեցն զուրախային,  
Ըզպատմուեանն իմ զառաջին:

Երկնաւոր Թագաւորիդ

Ի ծոնըր իջեալ խաղ առնէին.  
Ծածկեալ ըզգլուխդ կըուփէին  
Եւ եղեգամբ հարկանէին.

Եւ զիմ անկեալ մինչ ՚ի զետին  
Ի հնազանդիլ կամաց չարին.  
Մի Թողուցուս խաղալ սովին.  
Այլ կանգնեցես զիս վերստին:

Բամեալ բոլորըդ բո մարմին

Յեա վըճըրոյ զատուորին.  
Սաստիկ էառ զհարուած զամին  
Վաքն զանից նախաստեղծին.  
Զիս որ յոտից մինչեւ զըզլուխ,  
Յաւօք նեղիմ անհնարին.  
Առողջացն զարձեալ կըրկին,  
Որպէս շնորհօք յաւազանին:

Սըրբափայլ պըճնեալ զարդուն

Զոր զգեցուցեր Անարօնին.  
Փոխան պըսակ ՚ի փշոց եղին,



Մշակք այգւոյն իւրացէլին.  
 Ըզ փուշ մեղաց հանցես յինէն,  
 Ձոր յիս եհար իմ Յշնամին.  
 Եւ ողջացո՞ զխայծուած վիրին  
 Ձի սպիք մեղացըն ջընջեսցին:

Օրթի. — Ա-Ե-Գ-Ե-Ն Մ-Գ-Ե. Ի՛՛. 1. Իբրև  
 այգ եղև. Կ-Ը: Եւ մայր որդւոցն Ձե-  
 բեթեայ 56 հմր:

## ԲԶ. ԴԶ.

Ետուն ըմպել բեզ ըզլեղին  
 Եւ զբացախն ի ծարաւին.  
 Արբեր կամաւ զի բաղցրասցին  
 ձաշակք պըտողոյն դառնագո՞ւնին.  
 Ըզդառնունքին թիւնաւորին  
 Ձոր 'ի մասունն հոգւոյս արկին.  
 Հերբեան ի բաց հանդերձ սովին  
 Եւ քաղցրասցի սէր քո 'ի սմին:

Ստեղնեալ ծառոյ մահաբերին  
 Այնմ որ բուսաւ 'ի մէջ դրոխտին.  
 Փոխան բարձեր ըզփաշտ խաչին

Ի Գողգոթա հաներ տեղին.  
 Ձիմ առ 'ի մեղս անկեալ զոգի  
 Եւ ծանրագոյն բարձոյ բեռին.  
 Բարձ 'ի յուսոյդ ըստ ոչխարին  
 Հանն 'ի յերկինս յուխտեալ տեղին:

Ի յուրբամու ծամ երբորդին  
 Բեւեռեցար Տէր 'ի խաչին.  
 Լուծեր զկապանս նախատտեղծին  
 Եւ կապեցեր ըզմըշնամին.  
 Ձիս ամրացո՞ ընդ հովանեաւ  
 Կենդանարար քո նշանին.  
 Եւ 'ի ծագելն յարեւելից  
 Լուսաւորեան լուսով նորին:

Էբանեալ Աւագակին  
 Բացեր ըզգու՞նն Աղին դրախտին.  
 Ըստ հաւատոյ սըբախ նորին  
 Կատարեցեր ըզհինդրելին.  
 Տուր և ինձ Տէ՛ր ընդ նմին  
 Լսել ըզնոյն պատասխանին.  
 Այսօր ընդ իս իցես յԱղին,  
 Ի հայրենիս քո առաջին:

Օրթի — Ա-Է-Գ-Բ-Ն Մ-Բ-Գ-Բ-Է՝ ԺԵ. 1. Եւ  
վաղվաղակի : ԳԵՂՆ Եկեալ էին յերուսա-  
ղէմ 41. հմբ.

Ս. Ա. Գ. Ա.

Բարբառելով զչի էլին  
Հիմունք երկրի տատանէին .  
Եւ վարագոյր հին օրինին  
Վերուտ 'ի վայր պատառէին .  
Արդ ընդ վիմացն որ շարժէին  
Շարժեան զանշարժ սիրտս 'ի բարին .  
Ընդ պատառել վարագուրին  
Զիս պ ստառեան ըզգիր պարտին :

Արեգական լոյս բող արկեալ  
Խաւարանայր միջօրէին .  
Եւ գերեզմանըք բանային  
Մարտինք սրբոցն յառնէին .  
Ընդ խաւարիլ լուսաւորացն  
Մարբեան յինէն զգործ խաւարին .  
Ընդ մեռելոցն որք յառնէին  
Կանգնեան զմեղօք մեռեալ հոգիս :

Նոր սիրոյ պատուիրանին  
Գործով լըցող եղեր բանին .  
Աղօթելով առ Հայր յերկին  
Թողուլ զմեղս որ 'ի խաչին .  
Ինձ որ հոգւովս հաւատացեալ  
Երկրպագեմ քեզ Միածին .  
Թող ըզլուծումըն հրամանին  
Մի յիշեսցին մեղքն առաջին :

Սարսեցին սանդարամետք  
Ի յաւանդել առ Հայր զհոգիդ .  
Որ 'ի դըժոխս իշեր ներքին  
Ի բանտ մահու և խաւարին .  
Կապեալ զիշխանըն մահածին  
Հաներ զհոգիսն որ ի բանտին .  
Եւ զիս հանցես, Տէր, ընդ նոսին  
Բանտէ մեղաց աղչամըղչին :

Օրթի — Ա-Է-Գ-Բ-Ն Ղ-Է-Գ-Բ-Ն՝ ԻԲ. 66. Եւ  
Իբրեւ այգ եղեւ. ԳԵՂՆ Տեսանէին զայն .  
ԻԳ. 49 :

## Ա. Գ. Գ. Գ.

Աղբերացն անազական  
 Որ յետ մահուն անմահարար.  
 Բըլխեալ 'ի բէն վըտակ կրկին  
 Ի նորոգումն կողմնին.  
 Բնց զբերան իմ յարբուցումն  
 Քո Արեան կենարարին.  
 Լուս դարձեալ յաւազանին  
 Թէ ոչ շնորհօք՝ այլ արուսուօք:

Յանմահիդ մեռանելոյ  
 Զմեռեալ հոգիս կենդանացն.  
 Թաղամք 'ի նոր զերեզմանի  
 ԶԹաղեալս 'ի մեղս վերածեան.  
 Ի գրի ներքնումս իջանելով  
 Ի գրոյն մեղաց վերաբերեան.  
 Ի ստուեր մահու քո բնակելով  
 Լուսաւորեան և զիս հոգւով:

Սիրտ իմ առ բեզ աղաղակէ  
 Բանդ որ ընդ Հօր 'ի սկզբանէ.  
 Որ կամաւոր վասըն մարդկան  
 Կրեցեր մարմնով զայս անենայն.

Ինձ լսելի արն ըզճայն  
 Յարբայուժեանըզ քո կոչման.  
 Ընդ յողովոցն անդ անկրանկացն  
 Օրհնել ըզբեզ միշտ յախտանս.  
 Օրթի. — Ա-Ե-Բ-Գ-Դ-Ե-Վ-Զ-Է-Ը-Ս-Թ. 17.  
 Եւ նորս առեալ. Գ-Ե-Վ յոր խոցեցին. 37:

(Զկնի Ա-Գ-Ե-Բ-Վ-Յ-Է-Ո-Ր Խաչեղու  
 րեան Աւետարանի յասուկ այս Գ.  
 Սաղմոս կ'երգեն):

Ալէլուիա. Ալէլուիա.

ԿՅ-ԵՂ. Նշանեցաւ առ մեզ լոյս ե-  
 իեսաց քոց, եւ ետուր ուրախութիւն  
 արհից միւրոց:

Փ-Ե. Ի կարգալ իմու մ լուար ինձ Աս-  
 տուած, ըստ արդարութեան, 'ի նեղու-  
 թեանէ ինձ անկորու արարեք, ողորմեալ  
 ինձ եւ լուր աղօթից իմոց:

Որդիք մարդկան՝ մինչեւ յերբ էք  
 խոսասիրքս, ընդէր սիրէք զնախու-  
 թիւն, եւ խնդրէք զասութիւն:

Ծաներուք, զի սքանչելիս արար Տէր  
սրբոյ իւրում, եւ Տէր յուրիցէ ինձ՝ ՚ի  
կարգալ իմում առ նա :

Բարկանայք՝ եւ մի մեղանչէք. զոր  
ինչ ասէք ՚ի սիրսս ձեր՝ յանկողինս  
ձեր զղջացարուք :

Մասուցէք պատարագս արդարու-  
թեան, եւ յուսացարուք ՚ի Տէր :

Բազումք ասէին թէ՛ ո՛ր ցուցցէ մեզ  
զբարութիւն Տեառն. նշանեցաւ առ  
մեզ յոյս երեսաց բոց, եւ նսուր ու-  
րախումբիւն սրսից մերոց :

Ի պտղոյ ցորենոյ զինուոյ եւ ձիթոյ  
իւրեանց լցուցեր զնոսա :

Խաղաղութեամբ յոյս եւ ՚ի սոյն  
ննջեսցուք եւ զարթիցուք. զի զու  
Տէր միայն առանձին յուսով քո բնա-  
կեցուցեր զմեզ :



(Ապա Խուլ-Լեւն Աւետարան կը կար-  
դացուի, ըստ աւուր Զայնին, եւ զկնի՝  
Նարգիզ երգն ըստ Զայնին :

Իսկ երբ Հանգստեան Շարական կար-  
դացուի (Տես ծանօթ. եր. 149) Տառ-  
կամ Հանգստեան Աւետարանէն առաջ՝  
հետեւեալ Սաղմունքն կ'երգեն ըստ  
Զայնին :

### Ս Ա Ղ Մ Ո Ս Գ

Ըստ ուր ձայնից նախ քան զԱւե-  
տարանն :

Ի Տերունիառուրս երկ (ԱԶ) Կ ասա՛ զայս.

### Ս Ա Ղ Մ Ո Ս Գ Դ.

Տէր ո՞վ կացցէ ՚ի խորանի քում,  
կամ ո՞վ բնակեսցէ ՚ի լեառն սուրբ քո :

Որ զնայ անբիծ, զործէ զարդարու-  
թիւն, խօսի զճշմարտութիւն ՚ի սրսի  
իւրում :

Որ ոչնենգաւորեաց լեզուաւ իւրով,  
եւ չար քնկերի իւրում ոչ արար :

Նախասինս ՚ի մերձաւորաց նա ոչ

առնու, արհամարհեալ է ցուաջի նու-  
րա շարագործն:

Չերկիրազս Տեառն փառաւոր  
առնէ, որ երգում ընդ ընկերի իւրում  
եւ ոչ սէ:

Չարձաթ իւր 'ի վարձու ոչ չայ,  
եւ կաշառս 'ի վերայ իրաւանց ոչ  
առնու. որ զայս արասցէ՛ նա մի սու-  
սանեցի յաւիտեան:

(Ա.Գ.) ՍԱՂՄՈՍ Զ.

Տէր, մի արժանութեամբ քով յան  
զիման ր զիս, եւ մի բարկութեամբ  
քով խաւսեր զիս:

Ոգորմաւ՝ ինձ Տէր, զի հիւանդ եմ  
եւ. բժշկեա՛ զանձն իմ, զի խռովե-  
ցան սկիւրք իմ:

Անձն իմ յոյժ խռովեցաւ, եւ դու  
Տէր, մինչեւ յերբ:

Դա՛րձ Տէր եւ փրկեա՛ զանձն իմ.  
կեցո՛ զիս Տէր բարձրաբարձեանքս ըմ,  
Չի ոչ ոք է որ 'ի մահու յիշէ գրեզ,

կամ 'ի դժոխս խոսուման առնիցի  
առ քեզ:

Վաստակեցայ եւ 'ի հեծուծեան  
խնամ, լուացի զամենայն զիշեր ըզ-  
մահի՛սս իմ. եւ արժասուօք իմովք  
զանկողինս իմ թացի:

Խռովեցաւ 'ի արժանութեանէ ակն  
իմ. եւ մաշեցայ եւ 'ի վերայ ամե-  
նայն թշնամեաց իմոց:

Ի բաց կացէք յինէն ամենեքեան,  
ոյք գործէք զանօրէնութիւն:

Լուաւ Տէր ձայնի լալոյ իմոյ, լուաւ  
Տէր աղօթից իմոց. եւ Տէր զիւրն-  
դրուածս իմ ընկալաւ:

Ամաշեցեան եւ խռովեցին յոյժ  
ամենայն թշնամիրք իմ. զարձցին յե-  
ջըս եւ ամաշեցեան յոյժ վողվաղա-  
կի եւ խռովեցին:

(Ա.Կ.) ՍԱՂՄՈՍ ԽԹ.

Բարձր առնեմ զքեզ Տէր, զի ըն-

կալար զիս. եւ ոչ ուրախ արարե  
ր զՅշնամին իմ յիս:

Տէր Ասուած իմ կարգացի առ քեզ,  
եւ բժշկեցեր զիս. Տէր հաներ ի դժո-  
խոց զանձն իմ, եւ փրկեցեր զիս  
յայնցանէ՝ ոյր իջանեն ՚ի գուր:

Սաղմոս ասացէր Տեառն սուրբը  
նորա, եւ խոստովան եղերուք յիշա-  
սակի սրբութեան նորա:

Մոհմութիւն է ՚ի բարկութեան  
նորա, եւ կեանք են ՚ի կամաց նորա:

Ընդ երեկոյս հանգիցեն լալիք, ա-  
ռաւօսու եղիցի ուրախութիւն:

Ես ասացի ՚ի բարեկենդանութեան  
իմում, թէ ոչ սատանեցայց յաւիտեան:

Տէր, ՚ի կամս քո ետուր գեղոյ իմոյ  
գօրութիւն, դարձուցեր զերեսս քո  
յինէն՝ եւ ես եղէ խռովեալ:

Առ քեզ Տէր կարգացի, եւ առ Աս-  
տուած իմ աղափակեցի. զինչ օգուտ է  
քեզ յարենէ իմմէ, թէ իջանեմ ես  
յապականութիւն:

Մինձ է հող խոստովան առնիցի առ  
քեզ, կամ պատմեցէ զճմարտու-  
թիւնս քո:

Լուաւ ինձ Տէր, եւ ողորմեցաւ, եւ  
Տէր եղեւ ինձ օգնական:

Դարձոյց զուղ իմ յուրախութիւն,  
է զերժ յինէն զբուրձ, եւ ինձ զգե-  
ցոյց զուրախութիւն:

Որպէս սաղմոս ասացեն քեզ փառք  
իմ, եւ այլ մի եւս զղջացայց. Տէր  
Ասուած իմ, յաւիտեան, խոստովան  
եղէց քեզ:

(ԲԶ.) ՍԱՂՄՈՍ ԾԳ.

Ասուած, յանուան բուսկեցն զիս,  
եւ ՚ի զօրութեան բուսիրաւ արա ինձ:  
Ասուած, լնւր աղօթից իմոց, ունկն  
դիր բանից բերանոյ իմոյ:

Օտարք յարեան ՚ի վերայ իմ, եւ  
հզօրք ինդրեցին զանձն իմ, եւ ոչ  
համարեցան զքեզ Ասուած առաջի  
իւրեանց:

Ահա՛ Ասուած օգնական իմ, եւ  
Տէր ընդունող հոգւոյ իմոյ:

Ի դարձուցանել զյարն 'ի թշնամիս  
իմ, ճշմարտութեամբ՝ բոլ սասակեա՛  
զնոսա:

Եւ կամօք խնովք պատարագս մա-  
տուցից քեզ. եւ խոստովան եղէց ան-  
ուան բու՛մ Տէր, զի բարի է:

Յամենայն նեղութենէ՛ իմմէ՛ փր-  
կեցեր զիս. եւ 'ի թշնամիս՝ իմ՝ ե-  
տես ակն իմ:

(ԹԼ.) ՍԱՂՄՈՍ ԿԶ.

Ասուած ողորմեա՛ մեզ եւ օրհնեա՛  
զմեզ, երեւեցն զերեսս քո՝ 'ի մեզ, եւ  
ողորմեա՛ մեզ:

Ճանաչել յերկրի զճանապարհս քո,  
յազիմս ամենայն զփրկութիւնս քո:

Խոստովան եղիցին առ քեզ ժողո-  
վուրդք Ասուած, խոստովան եղիցին  
առ քեզ ժողովուրդք ամենայն:

Ուրախ եղիցին եւ ցնձացին

ազնւք, զի զնձ դասես զժողովուրդս  
ուզդուժեամբ, եւ ազգաց երկրի դու  
առաջնորդես:

Խոստովան եղիցին առ քեզ ժողո-  
վուրդք Ասուած, զո՛հասցին զրէն  
ժողովուրդք ամենայն:

Երկիր ետ զպսուղ իւր, եւ օրհնեաց  
զմեզ Ասուած. Ասուած մեր:

Ասուած մեր օրհնեացէ՛ զմեզ, եւ  
'ի նմանէ՛ երկիցին ամենայն ծաղր  
երկրի:

(ԳԶ.) ՍԱՂՄՈՍ ԶԴ.

Համեցար Տէր ընդ երկիր քո, եւ  
դարձուցեր զգերութիւն Յակոբայ:

Թողնր զանիրաւութիւն ժողովրդ-  
եան քոյ. եւ ժաճկեցեր զամենայն  
մեզս նոցա:

Լռեցուցեր զամենայն՝ արժան-  
ութիւնս քո, եւ դարձար՝ 'ի բարկութենէ՛  
արժանութեան քո:

Դա՛րժառ մեզ Ասուած փրկիչ մեր,

եւ դարձն զսրճսուծիւնս քո ի մէնջ:

Մի յաւիտեան բարկանար մեզ Տէր,  
եւ մի ձգե՛ր զբարկուծիւն քո յազգէ  
մինչեւ յազգ:

Ասուած՝ դու դարձեալ կեցուցես  
զմեզ, եւ ժողովուրդ քո ուրախ եղի-  
ցի՝ ՚ի քեզ:

Յնոյ մեր Տէր զոգորմուծիւնս քո,  
եւ զփրկուծիւնս քո սուր մեզ:

Հուար զինչ խօսի Տէր Ասուած  
մեր, խօսեցցի զխաղաղութիւն ժողո-  
վրդեան իւրոյ առ սուրբս իւր, եւ առ  
այնոսիկ ոյք դարձեալ են առ նա  
արհիւր:

Սակայն մերձ է առ երկիւղածս իւր  
փրկուծիւն նորա, բնակիլ փառաց  
նորա յերկրի մերում:

Ոգորմուծիւն եւ ճշմարտութիւն  
պատահեցցին. արդարութիւն եւ խա-  
ղաղութիւն համբուրեցցին:

Ճշմարտութիւն յերկրէ բուօաւ, ար-  
դարութիւն յերկնից երեւեցաւ:

Տէր՝ սացէ՛ զբաղցրութիւն եւ եր-  
կիր մեր սացէ՛ զպսուղիւր. արդարու-  
ծիւն առաջի նորա զնասցէ, զիցէ՛ ՚ի  
ճանապարհի զզնացս իւր:

(Գ.Կ.) ՍԱՂՄՈՍ ՃԱ.

Տէր, լուր ազօծից իմոց՝ աղաղակ  
իմ առ քեզ եկեացէ, եւ մի դարձու-  
ցաներ զերեսս քո յինէն:

Յաւուր նեղութեան իմոյ խոնար-  
հեցն առ իս զունկն քո. յորում ա-  
ւուր կտրամ առ քեզ վաղվաղակի  
լուր ինձ:

Սպառեցան որպէս ծուխ աւուրք  
իմ, եւ ոսկերք իմ որպէս խռիւ չո-  
րացան:

Հարայ ես որպէս խոս եւ ցամաքե-  
ցաւ սիրս իմ՝ մուռացայ ուսեղ զհաց իմ  
՚ի ծայնէ հեծուծեան իմոյ:

Կցեցաւ ոսկր իմ՝ ՚ի մարմին իմ. նը-  
մանեցայ ես հաւալասան անապատի,  
եղէ ես որպէս բու յաւերակի. զըք-



նեցայ եւ եղէ ես որպէս ճնճուկ  
միայն 'ի քանիս:

Նախասեցին զիս թշնամիք իմ գոր-  
հանապագ, եւ գովիչք իմ ինեւ երգ-  
նուին:

Զմխիթ որպէս զհաց կեբի, եւ զըմ-  
պելին իմ արտառօք խառնեցի:

Յերեսաց բարկութեան սրտառու-  
թեան քո, զի զու բարձրացուցեր եւ  
խոնարհեցուցեր զիս:

Աւուրք իմ որպէս հովանի անցին,  
եւ ես որպէս խոս ցամաքեցայ:

Դու Տէր յաւիտեան կաս, եւ յիշա-  
սակ քո յազգէ մինչեւ յազգ:

Դու յարուցեալ գթասցիս 'ի վերայ  
Սիօնի. ժամանակ գթալոյ նորա հա-  
սեալ է ժամ:

(ԴԶ.) սաղ. րոս 22-ը.

Մերձեցին խնդրուածք իմ առա-  
ջի քո Տէր, ըստ բանի քում իմաստուն  
արա՛ զիս:

Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր.  
եւ բանիւ քո փրկեա՛ զիս:

Բղխեսցեն շրթունք իմ գորհու-  
թիւնս քո. յորժամ ուսուցես ինձ  
գարդարութիւնս քո:

Իօսեսցի լեզու իմ զբանս քո. զի  
ամենայն պատուիրանք քո աղարու-  
թեամբ են:

Եղիցի ձեռն քո 'ի կեցուցանել զիս,  
զի զպատուիրանս քո ընտրեցի:

Յանկացայ փրկութեան քում Տէր,  
եւ օրէնք քո խօսք իմ էին:

Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զրեզ,  
եւ իրաւունք քո օգնեսցեն ինձ:

Մոլորեցայ ես որպէս զոչխար կո-  
րուսեալ. խնդրեա զձառայս քո, զի  
զպատուիրանս քո ես ոչ մոռացայ:

Ի Տէրուհի աւուրս երկ Չայնն ԳՎ. իցկ  
աւս զայս սաղմուս:

ՍԱՂՄՈՍ ՃԵՐ.

Ի խորոց կարգացի առ քեզ Տէր՝  
Տէր, լուր ծայնի իմում:

Եղիցին ականջք քո 'ի լսել զձայն  
աղօթից իմոց:

Թէ զանօրէնութիւնս իմ քննես  
Տէր Տէր, իսկ ո՞ կարէ կալ առաջի քո.  
զի 'ի քէն է քաւութիւն:

Վասն անուան քո համբերի Տէր.  
համբեր անձն իմ բանի քում, յուսա-  
ցաւ անձն իմ 'ի Տէր:

Ի պահէ առաւօսու մինչեւ յերե-  
կոյ, 'ի պահէ առաւօսու յուսացաւ  
Խորայէլ 'ի Տէր:

Ի Տեառնէ է ողորմութիւն բազում,  
եւ 'ի նմանէ է փրկութիւն, եւ նս  
փրկեաց զԽորայէլ յամենայն նեղու-  
թեանց նորա:

(ԳՎ.) ՍԱՂՄՈՍ ՃԵՐ.

Տէր, լուր աղօթից իմոց. ունկն զիր  
խնդրուածաց իմոց ճշմարտութեամբ  
քով:

Լուր ինձ արդարութեամբ քով, եւ  
մի մտաներ 'ի դատաստան ընդ ծառայի  
քում. զի ոչ արդարանայ առաջի քո  
ամենայն կենդանի:

Հարածեաց Թշնամին զանձն իմ.  
խոնարհ արար յերկիր զկեանս իմ. եւ  
նսոյց զիս 'ի խաւարի օրպէս մեռ-  
եալ յաւիտենից:

Չանհրացաւ յիս հոգի իմ. եւ սիրս  
իմ խռովեցաւ յիս:

Յիշեցի զաւուրսն զառաջինս. խոր-  
հեցայ յամենայն գործս քո. յարա-  
րածս ձեռաց քոց խորհեցայ, եւ համ-  
բարձի առ քեզ զձեռս իմ:

Անձն իմ օրպէս երկիր ծարաւի է  
առ քեզ. վաղվաղակի լուր ինձ Տէր,  
զի նուաղեցաւ յինէն հոգի իմ:

Մի դարձու զաներ զերեսս քո յինէն,

նմանիցիմ այնոցիկ, ոյք իջանեն ՚ի գուբ:

Լսելի առա՛ ինձ առաւօտու՛ զոգորմութիւնս քո. զի ես ՚ի քեզ Տէր յուսացայ:

Յոյց ինձ Գանապարհ՛ յոր եւ գնացից. զի առ քեզ Տէր, հաճարձի գանձքն իմ:

Փրկեա՛ զիս ՚ի թշնամեաց խնոց Տէր, զի զքեզ ապաւէն ինձ առաբի:

Ուսո՛ ինձ առնել զկամս քո, զի զուեա Աստուած իմ:

Հոգի քո բարի՛ առաջնորդեցել ինձ ՚ի յերկիր ուղից:

Վասն անուան քո Տէր՛ կեցուցես զիս, արգարութեամբ քով հանցես ՚ի նեղութենէ՛ գանձս իմ:

Ոգորմութեամբ քով սասակեա՛ ըզթշնամիս իմ. եւ կոր՛ գամենայն նեղիչս անձին իմոյ. զի ես ծառայ քեզմ:

(Տ-Տ-ՐԷ կամ Հ-Ն-Ք-ՐԷ-Ն Աւետարանէն յետոյ, կ'երգեն զհետեւեալն քառօրեայ ի առուրն)

## Ե Բ Գ

Տեառն **ՆԵՐՍԻՍԻ**՝ ասացեալ վասն առ ի Քրիստոս ննջեցելոց:

(ԲՆ.) **ՄՍՏՈՒՐՈՍ** (ԲՆ.)

(Ա-Ք.) Աստուած անեղ անժամանակ Հայր անլսկիզքն և անբանակ. Որդոյ սրտածառ ծննդեամբ անձառ, Հոգոյն բղխամբ անբնաբար. Աղաչեմք զքեզ զըմած, Երկայնամիս և ողորմած, Ողորմեա՛ քո ըստեզժուածոցս, Ի քեզ յուսով ննջեցելոյս:

Բանդ որ ՚ի ծոց Հօր Միածին, Եւ կերպարան սկզբնատրպին.

Որով երկինքը գոյացան,

Աշխարհ լրբիւ հաստատեցան.

Հայցեմք ի բէն Տէր և Փրկիչ,

Ամենողորմ և կեցուցիչ. Ողորմ.

Գերագոյն շնորհաց բաշխող,  
 Երկնաւորաց և երկրայնոց,  
 Կեանք և կենաց տուող Հոգի,  
 Հօր և Որդւոյ արարչակից,  
 Խընդրեմք 'ի քէն աղբիւր բարեաց,  
 Արբուցանող ծարաւեաց, Ողորմ.

Դաւանիմք ընդ Սրովբէից,  
 Ձկենդանարարըդ համայնից,  
 Երեքսըրբեան Մի Տէրութիւն՝  
 ՁՀայր և զՈրդի և սուրբ զՀոգի.  
 Յոր հանգուցեալս մըկըրտեալ  
 Եւ հաւատով խոստովանեալ. Ողորմ.

Երբակի թիւ կատարեալ,  
 Յերիս անձինքս բաժանեալ.  
 Երբորդուծեամք միաւորեալ,  
 Միով բնութեամբ հաւասարեալ.  
 Յորմէ կապեալք և արձակիմք,  
 Եւ վերըստին անլոյծ կապիմք. Ողորմ.

ՁԷակիցըդ Հօր զՈրդի,  
 Փառաւորեմք անլըռելի,  
 Որ իշեր յարգանդ Կուսին,

ՁԱղամային առեր մարմին.  
 Աղաչանօք Աստուածածնին  
 Անապական բուժ ծընողին. Ողորմ.

Էրեւեցար մարմնով յերկրի,  
 Որ 'ի Հօրէ անմեկնելի.  
 Ը՛նդ հողեղէնքս բնակեցար,  
 Ի հրեղինաց երկրպագեալդ.  
 Պաղատանօք երկնաւորաց  
 Փառարանիչ բոց հրեշտակաց. Ողորմ.

Ըստ օրինացըն Մովսէսի,  
 Ընծայեցար 'ի տաճարին.  
 Ձի ըզբնութիւնքս մարդկային,  
 Ընծայեցես Հօր 'ի յերկին.  
 Խնդըրուածովք սուրբ մերունւոյն,  
 Քեւ 'ի կապից արձակելոյն. Ողորմ.

Թագաւորըդ հրեղինաց,  
 Որ ընդ մարդկան հողեղինաց.  
 Շըրջեցար անօրինաբար,  
 Կրեցեր ըզկիրքս մարդկաբար.  
 Որ վատըն մեր զայս ամենայն,  
 Ի յանձն առեր խոնարհութեամբ. Ողորմ.

(ԲԶ.) ՄԱՐԿՈՍԻ (ԳԶ.)

Ժողովեալքս 'ի հրաժարումնն  
Ծառայի քո յաշխարհէ:

Հայցեմք 'ի քէն արաստուելով,  
Եւ պաղատիմք զոյս ասելով,  
Ճանապարհ ընդ քեզ ելից,  
Մնչեցելոյս ընր ուղեկից,  
Ի յօժեւանս Հօր քոյ լուսոյ,  
Ըզնեչեցեալքս մեր հանգն

Ի փրկութեան մերոյ սկզբանս,  
Մըկրբանցար 'ի Յորդանանս,  
Զոր շնորհեցեր նոր աւագանս,  
Ի մաքրութիւն մեզաց մարդկանս.  
Հայցմամբ կրկին Կարապետին,  
Մեծին 'ի ծնունդըս Մըկրտչին. Ի յօժ:

Լուսաւոր ծայնիւ յերկնից,  
Զքեզ դաւանեաց Հայր Էակից,  
Աղանակերպ Հոգին իշեալ,  
Առ համագոյց իւր հանգուցեալ.  
Ըզ մըկրտեալս նովին Հոգւով,  
Յորդէզբութիւն Հօր հաւատով. Ի յօժ:

Խաւար մեղաց հուածեցաւ,  
Լոյս զիտութեան քեւ ծագեցաւ.  
Խայժուած օձին բըժըչեցաւ.  
Հիւանդութիւն մեր ողջացաւ.  
Կենդանարարող մեռելոց,  
Եւ լուսաւոր խաւարելոց. Ի յօժ:

Ծագումն անուն առ 'ի Հօրէ  
Որ ընտրեցեր 'ի յաշխարհէ.  
Լուսաւորիչ տիեզերաց,  
Ըզ դասս ընտրեալ աշակերտացն.  
Աղաչանօր Առաքելոցն.  
Փող յարութեան մեր եղելոց. Ի յօժ:

Կեանք 'ի կենաց լոյս 'ի լուսոյ.  
Որ տեղծեր զմեզ 'ի հողոյ.  
Նորոգեցեր դարձեալ կրկին,  
Ծնընդեամբ սըրբոյ աւագանին.  
Զոր կեցուցեր շնորհիւ քոյին,  
Ի մահուանէն այն առաջին. Ի յօժ:

Հոգւով լըցեր զմարդն առաջին,  
Զոր կորուսեալ խարմամբ չարին.  
Ըզնոյն հոգի բանիւ քոյին.

Հեղեր յոգիս մեր վերստին,  
Նովին Հոգւով սուրբ և բարի,  
Առաջնորդեան հոգւոյ սորին. Ի յօԹ.

Չայնեցեր առ Ղազարոս,  
Որով ետուր մեռելոց յոյս.  
Կենդանութեամբ չորեքօրեայն,  
Կենդանացան որբ յԱղամայն.  
Կենաց ձայնիւ վերջին փողոյ.  
Կոչեան ըզսա յայսրմ հողոյ. Ի յօԹ.

Ղօղեալ սարսեաց պահակ մահու,  
Ի կենարար ձայնին լըրոյ.  
Արագապէս զոյգ ընդ բանին,  
Ետ զմեռեալն ըստ հրամանին.  
Իշխանք օդոյս այս սարսեացեն,  
Զհոգի սորա մի արգելցեն. Ի յօԹ.

(Ա.Կ.) ԳՌԻԿԱՍՈՒ (Գ.Կ.)

Ճանապարհ մոլորելոց,  
Եւ ճառագայթ խաւարելոց.  
Հրաւիրեցեր զորդիս լուսոյ,  
Ի յերկնային հարսանիս քո.

Ընդ զուարճալից անդ ժողովոց,  
Արժանացն ըզսա դասուց.  
Լի լապտերօք մոյժ յառագաստ,  
Ընդ իմաստուն սուրբ կուսանացն:

Մերով բնութեամբ զոր ըզգեցար  
Ի փայտ խաչին բեւեռեցար.  
Լուծանելով զմեզ 'ի մեղաց.  
Ի նախահօրքն կապանաց.  
Լնժ և ըզսա 'ի յանցանաց,  
Վասն քո սուրբ չարչարանաց. Լի լապ.

Յետ կամաւոր մահու խաչի,  
Եզար Ի նոր գերեզմանի.  
Երեքօրեայ Թաղմամբ յերկրի.  
Նոր ըստեղծեր զմեզ կենդանի.  
Զիջեալս ընդ բեզ 'ի հող մահու,  
Վերակոչեան ձայնիւ փողոյ. Լի լապ.

Նըստեալ կանանցն Իւղարբից,  
Եւ ողբային արտասուալից.  
Իբր ըզմեռեալ անյուսալից,  
Ըզկենդանիդ յաւիտենից,  
Վասն նոցին սուրբ արտասուուց.  
Մարբեան ըզսա 'ի յանցանաց. Լի լապ.

Շարժեալ հիմանցքն դժոխոց,  
 Ի տեսանել ըզրեզ ներքնոց,  
 Հաներ զհոգիսն որ ՚ի բանտին,  
 Կապեալ զիշխանքն մահածին,  
 Ընդ հանգուցեալ հոգիս սրբոց,  
 Հանգն զհոգիս ննչեցելոյս. Լի լապ:

Ուրախութեամբ զօրք երկնային  
 Յերկնից յերկիր իջանէին,  
 Յորժամ յարեար ՚ի մահելոց  
 Լոյս ծագեցար արարածոց,  
 Սուրբ յարութեամբ քո կենտարս,  
 Յարն ըզսա ՚ի կեանս անմահ. Լի լապ:

Չընանդուրժեալ պահապանացն  
 Ի յերկիրդէ երկնաւորացն,  
 Որք աւետիս տային կանանց,  
 Թէ մահ լուծաւ մահկանացուաց,  
 Սն որ մահու քո սընկակից,  
 Լիցի կենացդ հաղորդակից. Լի լապ:

Պարտկեալ անմարմնականքն,  
 Առ կենտառու սուրբ զերզմանն.  
 Տանս աւետիս սզցի մարդկան,

Վասն կենացն յաւէժական,  
 Դասաւորեան պարուց նոցին,  
 Ըզնընչեցեալս յօրքն վերջին. Լի լապ:

Չահաւորեալ Երջան Խաչին,  
 Յարեւ լից փայլեալ ծագին,  
 Հաւատացեալքն ՚ի բեզ բերկրին.  
 Եւ ուրացողքն կոծեցին.  
 Ձերկըրպագուս սրբոյ Խաչին,  
 Պայժառացն լուսով նորին. Լի լապ:

(Ա. Զ.) ՅՈՎ. ՀԱՆՆՈՒ (Գ. Զ.)

Ուսն զորժեալ երկնաւորաց,  
 Դան առաջի քո նախընծաց,  
 Չընտրեալլս քո ժողովելով,  
 Բեզ ընդ առաջ բերեն ամպով,  
 Ընդ աղանձեաց օղապարից,  
 Խառն են ըզսա սուրբ երամից,  
 Դասաւորեան ըզսա վերնոցն,  
 Երգել ըզփառս ընդ զըւարժանցն:

Սարսափին տարերք երկրի,  
 Յորժամ փառօր զաս Հայրենի.  
 Արեգական լոյս խաւարի,  
 Լուսինն աստեղբքն նըւաղին.  
 Ըզաս յաւուրն աներեկի,  
 Լուսաւորեն լուսով բոյին. Դասաս

Վերնական զօրացն պետ,  
 Փողէ բարբառ աւետարեր.  
 Արիք մեռեալք որք Աղամայ,  
 Քանզի ահն եկըն Փետայ.  
 Ընդ հարմացեալ մարուր հողոց,  
 Կարգեն ըզաս 'ի թիւ սրբոց. Դասաս

Տիրական յաճոռ նըստիս,  
 Յարարածոց երկրպագիս.  
 Արդարութեամբ զաշխարհ դատես,  
 Վարձս ըստ գործոց հասուցանես.  
 Յայնժամ շնորհեն ողորմութիւն,  
 Նընչեցելոյս մեր թողութիւն. Դասաս.

Բամեալ մարդկան ազգ ժողովին,  
 Որք յԱղամայ ծընեալք լինին.  
 Եւ հրեղինաց դասք երկնային,

Համանգամայն վայրաբերին.  
 Ի յայնժ ահեղ հրապարակին,  
 Յիշեա ըզաս յօրն ահագին. Դասաս

Յուցանին զաղանիք մարդկան  
 Իւրաքանչիւր որ գործեցան.  
 Բարեաց գործողքն պըսակին,  
 Չարեայն 'ի հուրն անշէջ մատնին.  
 Յայնժամ յիշեն զտրա բարին  
 Դործըք մեղացն չնչեցին. Դասաս

Ի իւսին պըսակք զանագանեալք  
 Եւ պատմութեանք լուսափայլեալք.  
 Սուրբ վկայիցն 'ի զըլուխ եղեալ,  
 Եւ արդարոցն զարդարեալ.  
 Հաղորդս արա հայցմամբ նոցին  
 Ըզաս լուսոյ փառաց նոցին. Դասաս

Փառաց 'ի փառքս բարձրանան  
 Աշակողմեանքն վերանան.  
 Յորժամ լսեն զերանական  
 Չայն օրհնութեան 'ի բէն կօչման.  
 Նընչեցելոյս մեր լըսեցօ  
 ՁԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԲԱՐԲԱՆՔԸ ԲՈՒ, ԴԱՍԱՍ.



Քանանայք և ժողովուրդք  
 Հայցեմք ՚ի բէն Տէր բարեգում  
 Ընդ նրնչեցեալսն հաւատով,  
 Ընկալ ըզմեզ նովին յուսով.  
 Յերուսաղէմ բաղար վերին  
 Յորում արդարքն ժողովին.  
 Փառս վերերգել միշտ ընդ նոսին  
 Երբորդումեանդ երբեակ անձին.

## ԵՐԳ-Բ. ՉՈՐՐՈՐԿ ՉՈՅՆ

Արարիչ և մարդասէր  
 Անձեակալ և բարեգում.  
 Որ գովեսց ՚ի սրովբէից  
 Տէր դատաւոր սրդարումեան.  
 Ընդ սրբբոց Առաքելոց  
 Տէր պըսակեան զմեր նրնչեցեալսն.  
 Ողորմած Տէր ողորմեան  
 Հոգւոցըն մեր նրնչեցելոց.

Յորժամ գրեալքըն կատարին  
 Որ զայնմ աւար մեզ պատմեցին.  
 Մարգարէից բանքըն յարգին  
 Առաքելոցըն վրձարին. Ողոր.

Ի վերինն Երուսաղէմ  
 Ի բնակարանքս հրեշտակաց.  
 Ուր Ենովք և Եղիաս  
 Կան ձերացեալ աղանակերպ.  
 Ի Դրախաին Եղեմական  
 Պայծառացեալ արժանապէս. Ողոր.

Թագաւոր փառաց Քրիստոս  
 Որ ժամանեալ զաս ՚ի յերկնից,  
 Ի վերայ Թեւոց հողմոց  
 Քո հայրնի կերպարանօք.  
 Եւ առնես հրափորձումեամբ  
 Չըըննումիւն որդւոց մարդկան. Ողոր.

Ի զնել բեմին բազմի փեսայն  
 Եւ առագաստըն զարդարի.  
 Գարբէէլեան փողըն գոչէ  
 Սուրբք ամենայն անդ հաւաքին.  
 Արդարոց դասըն բերկրին  
 Իսկ մեղասաւորքն Թախանձին. Ողոր.

Յորժամ հընչիւն փողոյն լինի  
 Եւ Ղեւտական գիրըն յայտնի.  
 Ճառագայթ սրբոյ խաչին

Յարեւելից փայլեալ ծագի,  
 Հրեշտակաց զանոց ծաւալին  
 Հրեշտակապետք պարունակին. Ողոր.

**Ա**հնդ խորհուրդ բանանային  
 Բազկատարած կայ 'ի բեմին.  
 Առաջի սուրբ սեղանոյն  
 Հուր շիջանի խաւար մերժի.  
 Տըրտմեալ հոգիքն ուրախանան  
 Զի թողւեալն մեզաց լինի. Ողոր:

**Մ**ովսէս աստուածաբան  
 Եւ Ահարոն ը Ղեւտացին.  
 Մարգարէքն Իսրայէլի  
 Եւ քահանայք հին օրիւնն.  
 Յառաջագոյն մեզ ծանուցին  
 Եւ ըզգալուստ սուրբ Միածնիդ,  
 Ի փըրկութիւն մեզ յայտնեցին,  
 Յանապատի կերակրէին. Ողոր:

**Տ**ըրտմահաղորդ չարչարանօք |  
 Ի յանձն սուր ըզմահ խաչին.  
 Եւ փայտին բարձող Լզեր  
 Վասն Աղոմայ նախաստեղծին. Ողոր:

**Չ**արհուրեցան զօրք երկնային  
 Յորժամ տեսին զՏէրդ 'ի խաչին.  
 Արեգական լոյս բողարկեալ  
 Եւ լոյս լուսինն նըւաղեցաւ.  
 Յահնդ փառաց Աստուածորդոյդ  
 Խաւար եղև ընդ տիեզերս. Ողոր:

**Ո**ւրախացան ազգքը մարդկան  
 Յորժամ լուսն զքո յարութիւնդ.  
 Նորափետուր զարդարեցան  
 Ի յարութեան սուրբ Միածնիդ. Ողոր:

**Ա**ղաչանօք սըրբոյ խաչին  
 Եւ անբարբառ բարեխօսին.  
 Եւ Սրբոյ Աստուածածնին  
 Եւ Յովնանու Կարապետին.  
 Եւ սրբոյն Ստեփաննոսին  
 Եւ առաջին մարտիրոսին.  
 Եւ սրբոյ Լուսաւորչին  
 Հայաստանեայց Հայրապետին.  
 Եւ սրբոց Առաքելոց  
 Եւ համօրէն Մարտիրոսաց. Ողոր:

✠ Ես առաջի ի վերանալ յինէն  
աւուրց իմոց, յա՛վ երթայցեմ ես  
այսօր՝ յառաջին օ՞՞ժեւանին զոր ոչ  
զիսէի. Օգնեա՛ եւ ինձ Գրեթեակ աւսօր,  
յառաջին ճանապարհին. եւ ՚ի միւ-  
սանգամ զաւսեանքդ քո օգնեա՛ ինձ:

Եկն եհաս օր վախճանի իմոյ, լա-  
լումն ողբումն եւ աշխարումն. սիւրս  
իմ խռովեցաւ յիս. եւ ոսկերք իմ ցա-  
մաքեցան. Օգնեա՛ եւ ինձ:

Ի մահիծս իմ զարթուցին զիս: սր-  
հանջողք հսգւոյ իմոյ. քանէին զիս  
ճանապարհ հեռաւոր զոր ոչ զիսէի. Օ.

Նայեցայ՝ եւ ոչ որ էր օր օգնէր ինձ.  
ապա ինեցայ յԱսուած փրկութեան  
իմոյ. ցնձասցէ հոգի իմ յարքայու-  
թեան քում. Օգնեա՛ եւ ինձ:

Գրեցայ ես ՚ի զիր կենդանութեան.  
եւ մեկնեցայ երթալ առ արարիչն  
երկնի եւ երկրի. Օգնեա եւ ինձ:

Յանքսուեր եւ յանեղ լուսոյն հե-  
ռացայ, խորմամբ խաւարային ճա-

շակեցի զմահութիւն պատգմ. հոգա-  
նայ պատկեր բարեբար Սեղծոյիդ Օ.  
Յանջասման հոգոյս ի մարմնոյս,  
՚ի բակսիլ գեղեցիկ շինուածոյս. զար-  
հուրիմ ՚ի սպանալեաց Թագաւորին.  
Թէ պահանջէ յինէն զտաղանդ պատ-  
ուիրանին. Օգնեա՛ եւ ինձ:

Կուսածին մարդոցեալ Ասուած  
իմ Յիսուս. յայնմ աւուր անեղ ասե-  
նին, զգինս արեան քո մի դասապար-  
սեր. Օգնեա՛ եւ ինձ:

Սոսկայի է օր վախճանին, եւ անեղ  
է օր դասասանին. յայնմ աւուր անեղ  
ասենին, զգինս արեան քո մի անեսս  
աւներ. զի պատկեր եմ բարեբար ըս-  
տեղծողիդ. Օգնեա՛ եւ ինձ:

Չահաւոր դասասան դասաւորիդ  
սեսի եւ զարհուրեցայ, զի անպատ-  
աս եգիս զիս ՚ի հրամանաց քոց  
Թագաւոր յախտենից. Օգնեա՛:

Ասուածածին անարատ Մայր  
Տեառն եւ Կոյս սուրբ. բարեխօսեա՛

առ Որդիդ քո Միածին. զի փրկեսցէ  
զմեզ. 'ի սպառնալիսաց զհեճնոյն. եւ  
պարգեւեսցէ մեզ զերկնից գաւրայ-  
ութիւնն. եւ հանգուցէ զնոզիս մեր  
ննչեցելոցն. Օգնեա եւ ինձ.

## Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

Հողոցն հանդուցելոց Քրիս-  
տոս Աստուած՝ արա հանդիսս  
եւ ողորմութիւն. եւ մեզ մե-  
զաւորացս շնորհեա՛ զթողու-  
թիւն յանցանաց.

## Ք Ս Ր Ո Ջ

Եւ եւս խաղաղութեան ըզ-  
Տէր աղաչեսցուք. Վասն հան-  
գուցեալ հողոցն աղաչեսցուք  
զփրկիչն մեր Քրիստոս, զի ըզ-  
նոսա ընդ արգարսն զասեսցէ.  
եւ զմեզ կեցուցէ շնորհիւ ո-  
ղորմութեան իւրոյ. Ամենակալ

Տէր Աստուած մեր. կեցո՛ւ եւ  
ողորմեա՛.  
Տէր ողորմեա. Տէր ողոր. Տէր ող.

## Ս Ղ Օ Թ Ք

Քրիստոս Որդի Աստուծոյ  
անտխակալ եւ բարեպութ, զթա՛  
քս արարչական սիրով 'ի հո-  
գիս հանդուցեալ ծառայից քոց  
Յիշեա՛ յուրս մեծի զալստեանս  
արքայութեան քոյ.

Արա՛ արժանի ողորմութեան,  
քաւութեան եւ թողութեան  
մեզաց. Դատարեալ պայծա-  
ռացո՛ ընդ սուրբս քո յաջա-  
կողման դատուն. Զի դու ես  
Տէր եւ արարիչ ամենեցուն.  
դատար կենդանեաց եւ մե-  
ռելոց: Եւ քեզ վայելէ փառք  
իշխանութիւն եւ պատիւ. այժմ  
եւ միշտ եւ յաւիտեանս Ամէն.  
Օրհնեալ Տէր մեր. Հայր մեր:

(Եւ ապա կ'երգեն ՕՐՀՆՈՒԹԵԱՆՆ  
Շարականն խնկարկերով, ըստ պատշաճի  
առուրն կամ 'ի Չայնէն, որ սկսի Աշա-  
կերտի դասէն:)

ՄԱՂԹԱՆՔ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՏՕՆԻՑ

Փ առ ք հրաշափառ Ծ'ննդեան  
(կա՛ճ Յարութեան կա՛ճ Տէրու-  
թեան) քո Տէր. զօրհնեալ եւ  
զփառաւորեալ զհրաշափի եւ  
զյաղթող զԾ'նունդ քո սուրբ  
օրհնեմք եւ փառաւորեմք:

Մարդասէր Տէր, վասն սրբ-  
բունոյ անարաափ Մօր քոյ եւ  
կուսի՛ եւ վասն Ոսչի քո պա-  
տուականի, ընկալ զաղաչանս  
մեր, եւ կեցո՛ղ զմեզ:

(Ապա հետեւեալ Քարոզներէն և Ա-  
ղօթքներէն մին կը կարդան ըստ Չայնին  
զորո յօրինած է Ս. ՍԱՀԱԿ Պարթև Երա-  
նելի Հայրապետն մեր:)

(Գ.Լ.) Ք Ա Ր Ո Ջ (Բ.Լ.)

Երանելու և Իբբելու կանոնացն Սաղմոսի  
Եւ եւս խաղաղութեան զՏէր  
աղաչեսցուք:

(Ա.Կ.) Վասն 'ի վերուստխաղա-  
ղութեան եւ փրկութեան ան-  
ձանց մերոց, զՏէր աղաչեսցուք:  
Իգ. և Ժող. Տէր ողորմեա՛ն:

Վերէն եկած (երկնաւոր) խաղաղու-  
թեան, և մեր աններուն փրկութեանը  
համար՝ Տէրոջը աղաչեմք:

Վասն լսելի լինելոյ Տեառն  
Աստուծոյ ձայնի աղաչանաց  
մերոց, զՏէր աղաչեսցուք:

Մեր աղաչանքին ձայնը Աստուծոյ առ-  
ջեւ լսելի լինելու համար՝ Տէրոջը աղաչեմք

Վասն քաւիչ եւ ներող լինելոյ  
Աստուծոյ 'ի վերայ մեզաց մի-  
րոց, զՏէր աղաչեսցուք:

Մեր մեղքերուն Աստուած քաւիչ և նե-  
րող լինելու համար՝ Տէրոջը աղաչեմք:

Վասն թողոյ մեզ զամենայն  
յանցանա մեր, զկամայ եւ զա-  
կամայ, զՏէր աղաչեսցուք:

Մեր կամաւոր եւ ակամայ ամեն յան-  
ցանաց Թողութիւն շնորհելու համար՝  
Տէրոջը աղաչեմք:

Վասն զի մի՛ բնդ խոտանան  
զտանկիցիւք յաւուրն պատաա-  
խանատու թեան, զՏէր աղա.

Որպէս զի պատասխան տալու (դա-  
տաստանին) օրը՝ անպիտաններուն կարգը  
չի գտնուիմք, Տէրոջը աղաչեմք:

Վասն հոգւոցն հանգուցելոց՝  
որք ճշմարիտ եւ ուղիղ հաւա-  
տով ի Քրիստոս ննջեցին, զՏէր  
աղաչեսցուք: Յիշեալ Տէր եւ ող.

Հանգուցեալ հոգիներուն համար՝ որք  
ճշմարիտ եւ ուղիղ հաւատաբով ի Քրիստոս  
ննջեցին. Տէրոջը աղաչեմք:

Եւ եւս միարան վասն ճշմա-  
րիտ եւ սուրբ հաւատոյս մերոյ,  
զՏէր աղաչեսցուք Տէր ողոր.

եւ ամենքս մէկ բերան մեր ճշմարիտ  
ու սուրբ հաւատքին համար Տէրոջը ա-  
ղաչեմք:

Զանձինս մեր եւ զմիմեանս  
Տեանն Աստուծոյ ամենակալին  
յանձն արասցուք:

Դո. Ե Ժող. Բեզ Տեանդ յանձն  
եղիցուք:

Մեր անձերն ու մէկգմէկ, ամենակալ  
Տէր Աստուծոյ յմ ձեռք:

— Բեզ կը յանձնուիմք, ո՞վ Տէր:

Ողորմեաց մեզ, Տէր Աստուած  
մեր՝ ըստ մեծի ողորմութեան  
քում. աստացուք ամենեքեան  
միարանութեամբ:

Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ողոր.

Ողորմէ մեզ, Տէր Աստուած մեր, քու  
մեծ ողորմութեանդ համեմատ. ամենքս  
միարանութեամբ ըսեմք: Տէր ողորմեա:

(ԲԵ.) ԱՂՕԹՔ (ԲԵ.)

(Ա. Գ.) Տէր տուրնչեան, եւ գո-  
յացուցիչ զիշերոյ, որ արարեր

զտիւ 'ի զքօսանս բարեգործութեան 'ի փրկութիւն անձանց մերոց, եւ զգիշեր 'ի հանգիստ քնոյ տկարացեալ բնութեան մերոյ: Իսկ այժմ՝ զարթուցեալ բացիւր զբերանս մեր յօրհնաբանութիւն ահաւոր եւ փառաւորեալ Անուանդ քում սրբոյ: Ընկալ եւ այժմ զազաչանս մեր, եւ յաջողեան մեզ ուղիղ հաւատով եւ առաքինասէր վարուք 'ի նոյն պաշտօն քո կանխել միշտ. եւ նովին կանոնիւս անդադար փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

ԹԱՐԳՅԱՆՈՒԹԻՒՆ ԱՂՅՔԻՆ

Ո՛վ Տէր եւ գոյացուցիչ ցերեկին ու զիշերին, որ ցերեկն ստեղծեցիր բարեգործութիւնով զուարճան ալու համար, որպէս

զի մեր անձերը փրկուին. և զիշերն եւս բնանալու համար, որ մեր տկարացած բնութիւնը հանգիստ առնու: Իսկ հիմայ արժնցունելով զմեզ՝ մեր բերանները բացիր. օրհնաբանելու համար քու ահաւոր և փառաւորեալ սուրբ Անունդ:

Ընդունէ ուրեմն մեր աղաչանքը, և յաջողէ մեզ ուղիղ հաւատով և առաքինասէր վարքով միշտ զբեզ պաշտելու փութալ, և մի և նոյն կանոնով անդադար փառաւորել Հայրը, Որդին և Սուրբ Հոգին այժմ եւ միշտ և յաւիտեանս: Ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն  
Աստուծոյ երկրպագեսցուք:

**Չ**քեզ, որ յամենայնի զթած եւ մարգասէր Տէրդ ես, ազաչեմք հանապազ, զի զօրացուցես զմեզ օր ըստ օրէ կալ 'ի կարգի կրօնաւորութեան մերում: Թեթեւացո՛ւ, Տէր, ըզբաղցր լուծ քո՝ զոր եզեր

ի վերայ մեր, զի կարասցուք  
կալ ՚ի պատուիրանի քում, եւ  
զհաճոյն առնել առաջի քո  
յամենայն ժամ ՚ի տուէ եւ ՚ի  
գիշերի: Հրեշտակային երգակ-  
ցութեամբ զքեզ օրհնել, զքեզ  
գովել, եւ քեզ գոհութիւն եւ  
փառս մատուցանել ամենազօր  
Տէրութեանդ. այժմ եւ միշտ  
եւ յաւիտեանս յաւիտենից:

## ՔԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Զքեզ՝ Ո՛վ Աստուած, որ ամեն բանի  
մէջ մեր զՅած ու մարդասէր Տէրն ես,  
կաղաչեմք հանապազ՝ որ զօրացունես  
զմեզ օր առօր հաստատուն մնալ մեր  
կրօնական կարգին մէջ: Թեթեցու ո՞վ  
Տէր, բու քաղցր լուծո՞ղ՝ որ մեր վրայ դիբի:  
որպէս զի կարենամք բու պատուէրներդ  
պահել, և քեզ հասնելի եղածն ընել բու  
առջեւդ՝ ցերեկ և գիշեր:

Եւ հրեշտակաց հետ երգակից ըլլալով,

զքեզ օրհնել, զքեզ գովել, և ամենազօր  
Տէրութեանդ գոհութիւն և փառք մատու-  
ցանել. այժմ և միշտ և յաւիտեանս. Ամէն:

## Մ Ա Ն Ք Ա Ն Ք

Սաղմոսիւք եւ օրհնութեամբ  
եւ երգօք հոգեւորօք անդա-  
զար փառաւորեմք զՀայր եւ  
զՍուրբ եւ զՍուրբ Հոգիդ,  
այժմ եւ միշտ և յաւիտեանս.  
Օրհնեալ Տէր մեր. Հայր մեր:

## (Ս.Ձ) Ք Ա Ր Ո Ձ (Գ.Ձ)

Եւ: և պարտեւ և Տէր պարտեւ կանոնացն:

(Ս.Ղ.) Սաղմոն ՚ի գիշերի եւ ՚ի  
տուրնջեան եւ յամենայն ժամու-  
խօսիլ մեզ դրան Տեառն, զՏէր  
աղաչեսցուք:

Դ. և Ժ. Տէր ողորմեա՛:

Գիշեր-ցերեկ և ամէն ժամանակ Աս-



տուժոյ խօսքը խօսելու համար՝ Տէրօջը աղաչեմք :

**Վ**ասն չանկանելոյ մեզ 'ի փորձութիւն, որում ոչ կարեմք հանդուրժել, զՏէր աղաչ.

Փորձութեան մէջ չկնալու համար, որում չեմք կրնար զիմանալ, Տէրօջը աղաչեմք :

**Վ**ասն անբիծ եւ անդատապարտ կալ մեզ առաջի ահեղ տօնին Քրիստոսի, զՏէր աղա.

Քրիստոսի ահեղ տօնանին առջեւ անբիծ եւ առանց դատապարտութեան երեւնալու համար՝ Տէրօջը աղաչեմք :

**Վ**ասն առաջնորդելոյ մեզ 'ի նաւահանգիստն կենաց անվաճանից, զՏէր աղաչեսցուք :

Վերջ չունեցող կենաց նաւահանգիստին (արքայութեան) մեզ առաջնորդելու համար՝ Տէրօջը աղաչեմք :

**Վ**ասն արժանի լինելոյ մեզ

Վերին կոչմանն եւ երկնից արքայութեանն, զՏէր աղաչ.

Վերէն կանչող ճայնին եւ երկնից արքայութեան արժանի լինելու համար՝ Տէրօջը աղաչեմք — Տէր ողորմես :

**Վ**ասն հոգւոցն հանգուցելոց. եւ եւս միարան վասն ճշմա. **Չ**անձինս մեր եւ գմբիւնանս. **Ո**ղորմեաց մեզ **Տէր Աստ. Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ող.**

(Ա.Զ) ԱՂՕԹՔ (Գ.Զ)

(Ա.Գ. Ի գիշերի եւ ի տուրնջեան եւ յամենայն ժամու գքեզ աղաչեմք, եւ 'ի քէն խնդրեմք մարդասէր Տէր, Լուր մեզ. Աստուած Փրկիչ մեր, խոնարհեացի՛ ունկն քո ի խնդրուածս մեր, զի մի՛ ունայն լիցին վաստակըք ծառայից քոց. այլ համարեա՛ զաշխատութիւնս մեր 'ի

գործ արդարութեան եւ 'ի պր-  
տուղ Աստուած պաշտութեան :  
Ընկալ Տէր, զաղօթս եւ զեր-  
կըրպագութիւնս մեր, եւ հա-  
տն մեզ զողորմութիւն քս ա-  
ռատապէս . Ծածկեան զմեզ ընդ  
հովանեաւ ամենազօր աջոյ քոյ .  
Զօրացո՞ զմեզ Տէր, զօրութեամբ  
Սուրբ Հոգւոյդ . Պահեան զմեզ  
օրպէս բիբ ահան . Եւ արան առ  
մեզ նշան բարի 'ի գոզեստ եւ  
'ի փառարանութիւն Անուանդ  
քում սրբոյ : Զի 'ի քս փառս  
կատարի ամենայն արարածոց  
մշտնջենաւոր փառարանութիւն  
'ի բարձունս, Հօր եւ Որդւոյ  
եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ  
միշտ եւ յաւիտեանս յաւի-  
տենից . Ամէն :

ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Գիշեր-ցերեկ եւ ամէն ժամանակ զրեզ  
կ'աղայեմք, եւ քենէ կը խնդրեմք ո՞վ մար-

դատէր Տէր : Լսէ մեզ, ո՞վ Աստուած Փր-  
կիչ մեր, Թող խնարհի բու ահանջդ մեր  
խնդրուածոց վրայ՝ օրպէս զի քու ծառայ-  
ներուդ յոգնութիւնները պարապ չ'ենեն,  
այլ մեր աշխատութիւնները արգարու-  
թեան գործ, եւ Աստուած պաշտութեան  
պտուղ համարուին :

Ընդունէ Տէր, մեր աղօթքն ու երկըր-  
պագութիւնը, եւ փոխարէն պարգեւէ մեզ  
քու ողորմութիւնդ առատապէս : Ծած-  
կէ զմեզ քու ամենազօր աջիդ (աջ ձեռ-  
քիդ) շուքին տակը : Զօրացո՞ զմեզ  
Տէր, սուրբ Հոգիիդ զօրութիւնով : Պահէ  
զմեզ աչքի բիբի պէս, եւ մեզ բարի նշան  
(հրաշքըդ) ցոյց տուր . որ գոյեմք ու փա-  
ռաբանեմք քու սուրբ Անունդ : Վասն զի  
քու փառքիդ համար կը կատարուի ամեն  
արարածներուն մշտնջենաւոր փառաբա-  
նութիւնն ղէպի երկինք : Հօր, եւ Որդւոյ  
եւ Սուրբ Հոգւոյն . հիմա ու միշտ եւ յա-  
ւիտեանս . Ամէն :

Խողաղուծիւն ամենեցուն  
Աստուծոյ երկրպագեսցուր :

**Հ**ովիւ քաջ, հովիւ բարի  
եւ յաւիտենական, նայեաց եւ  
այց արա՛ ընտելոց հօտի քո,  
զոր ժողովեցեր առ քեզ զթու-  
թեամբ քով : **Զ**ի քո առաջի  
կամք, **Տէր**, եւ առ 'ի քէն ո-  
ղորմութեանցդ եւ զթութեանցդ  
ակն ունիմք : **Զ**ամենեսեան  
օրհնեա՛ : զամենեսեան իմաստ-  
նացո՛ : զամենեսեան լուսաւոր-  
եա՛, եւ ամենեցուն պարզեւեա՛  
զերկնից արքայութիւնդ : Վասն  
զի դու ես **Տէր** կենաց եւ Աս-  
տուած ողորմութեանց. եւ քեզ  
վայելէ փառք իշխանութիւն եւ  
պատիւ, այժմ եւ միշտ եւ յա-  
ւիտեանս յաւիտենից Ամէն :

**ՅԱՐԳԱՆՈՒԹԻՒՆ**

Ո՛վ քաջ Հովիւ, ո՛վ բարի եւ յաւիտե-  
նական հովիւ, նայէ եւ այցելութիւն ըրէ

բու բանաւոր (մարդկային) հօտիդ, որ  
բովդ ժողովեցիր բու զԹուծիւնովդ :

Վասն զի բու առջեւդ կեցեր եմք **Տէր**,  
եւ քեզնէ ողորմութիւն ու զԹուծիւն կը  
յուսամք ու կ'սպասեմք : Օրհնէ՛ ամենքը,  
իմաստուն ըրէ եւ լուսաւորէ՛ ամենքը, եւ  
ամենուն պարգեւէ երկինքի արքայու-  
ծիւնդ : Վասնզի դու ես կենաց **Տէրը** եւ  
ողորմութեանց Աստուածը, եւ քեզ կը վայլէ  
փառք իշխանութիւն ու պատիւ, հիմա  
եւ միշտ եւ յաւիտեանս : Ամէն :

**ՄԱՂԹԱՆ Ք**

**Ի** գիշերի եւ 'ի տուընջեան  
եւ յամենայն ժամու անդադար  
փառաւորեմք զՀայր եւ զՍրբի  
եւ զՍուրբ Հոգիդ, այժմ եւ  
միշտ եւ յաւիտեանս յաւի . Ամէն :  
**Օրհնեալ Տէր մեր. Հայր մեր :**

(Ա.Կ) ՔԱՐՈՉ (Գ.Կ)

Մէ Նախնայի և Խառնական կանոնացն :

(Ա.Զ.) Վասն ուղղելոյ զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան՝ զՏէր աղաչեսցուք :  
Դ.պ. և Ժ.պ. Տէր ողորմես՛ .

Մեր ընթացքը դէպի խաղաղութեան ճանապարհը շտկելու համար . Տէրոջը աղաչեմք : — Տէր ողորմես :

Վասն ցրելոյ իմէնձ զամենայն խորհուրդս չարին՝ զՏէր աղաչեսցուք :

Մեր վրայէ չարին ամեն խորհուրդները ցրուելու համար, Տէրոջը աղաչեմք .

Վասն պարգեւելոյ մեզ առողջ խորհուրդս եւ առաքինի վարս՝ զՏէր աղաչեսցուք :

Մեզ ողջամիտ խորհուրդներ և առաքինի վարք պարգեւելու համար Տէրոջը ա.

Վասն պահելոյ զմեզ ընդ հո-

վաննստ ամենագոր աջոյն իւրոյ՝ զՏէր աղաչեսցուք :

Զմեզ իւր ամենագոր աջոյն (ձեռքին) շուքին տակը պահելու համար Տէրոջը ա.

Վասն խորտակելոյ զհակառակորդն վաղվազակի ընդ տախիւք մերովք՝ զՏէր աղաչես

Մեր հակառակորդը (ստատանն) շուտով ոտքերնուս տակը խորտակելու համար՝ Տէրոջը աղաչեմք :

Վասն հողւոցն : Եւ եւս միար : Զանձինս մեր : Ողորմեաց մեզ : Տէր ողորմես, Տէր ողորմես, Տէր ողորմես :

(Ա.Կ) ԱՂՕԹՔ (Գ.Կ)

(Ա.Գ.) Տէր երկնի եւ երկրի, արարիչ ամենայն արարածոց՝ երեւելեաց եւ աներեւութից : Առ քեզ կարգամք յամենայն ժամ, զի ընդ ամենայն տեղիս է Տէրութիւն քո, եւ արքայութիւն քո ամենեկուն տիրէ :

Շնորհեա՛ մեզ երկիւզիւ 'ի պաշտօն քո կանխել հանապազ. սիրել զքեզ 'ի բոլոր սրտէ եւ 'ի բովանդակ մտաց, եւ յամենայն զօրութենէ մերմէ պահել զպատուիրանս քո: Համբառնալ առ քեզ զձեռս մեր 'ի սրբութիւն՝ առանց բարկութեան եւ երկմտութեան, եւ գտանել 'ի քէն զշնորհս եւ զողորմութիւն, եւ զառաքինասէր զործոցն յաջողութիւն: Վասն զի զո՛ւ ես Տէր կենաց եւ Աստուած ողորմութեանց. եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ո՛վ երկինքի ու երկրիս Տէրն, եւ Ստեղծող ամեն արարածներուն, երեւցածներուն ու չերեւցածներուն:

Ամեն ժամանակ զքեզ կը կանչեմք ու կ'աղաչեմք, վասն զի քու Տէրութիւնդ ամեն տեղ է, եւ քու Թագաւորութիւնդ ամենուն վրայ կը տիրէ:

Շնորհէ՛ մեզ, որ հանապազ փութամք երկիւղածութիւնով պաշտել զքեզ, եւ բոլոր սրտով եւ բովանդակ մտքով զքեզ սիրել, եւ մեր ամեն կարողութիւնով քու պատուիրանքդ պահել:

(Շնորհէ՛ մեզ) մեր ձեռքերը մաքրութիւնով դէպ 'ի քեզ վերցունել, առանց բարկութեան եւ առանց երկմտ (Սերեհաւատ) լինելու. եւ քենէ ընդունիլ շնորհք եւ ողորմութիւն, եւ առաքինասէր գործերու յաջողութիւն վասն զի զո՛ւ ես մեր կեանքին Տէրը եւ ողորմութեան Աստուածը. եւ քեզ կը վայլէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, հիմայ եւ միշտ եւ յաւիտեանս. Ամէն:

Խողազու թիւն ամենեցուն  
Ասուծոյ երկիւղապետքի:

Քու՛մ ամենալոր եւ յաղթող

Տէրութեանդ կրկնի ամենայն ծունր յերկրպագութիւն, եւ փառաւորի յամենեցունց թագաւորութիւն քո: Նայեա՛ յերկրպագութիւնս մեր, եւ ուսո՛ մեզ առնել զարդարութիւն ճշմարտութեան: Վասն զի դու ես Աստուած խաղաղութեան, որ բարձեր զթշնամութիւն 'ի միջոյ, եւ արարեր զխաղաղութիւն յերկինս եւ յերկրի. հեռաւորաց եւ մերձաւորաց աւետարանեցեր զնոր պարգեւս քոյին բարեացդ: Որում եւ ըզմեզ մեծի շնորհացդ արժանաւորս արասցեա՛ զասելով ընդ ճշմարիտ երկրպագուս քո. Աստուած մեր եւ Տէր մեր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոս: Որ ես օրհնեալ ընդ Հօր եւ ընդ Սուրբ Հօգևոյց. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւի: Ամէն:

## ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Քու ամենագոր եւ յաղթող Տէրութեանդ առջեւ՝ ամեն ծունկ կը խոնարհի երկըրպագելու համար. եւ քու Թագաւորութիւնդ ամենէն կը փառաւորուի: Նայէ՛ մեր երկրպագութիւններուն, եւ սորվեցուր մեզ ճշմարիտ արդարութիւնը գործել: Վասն զի դուն ես խաղաղութեան Աստուածը որ Թշնամութիւնը մէշտեղէն վերցուցիր, եւ խաղաղութիւն ըրիր երկնքի ու երկրի մէջ. եւ հեռաւորներուն ու մօտ եղողներուն քու նոր պարգեւած բարիքներուդ աւետիսը տուիր:

Արժանի ըրէ՛ եւ զմեզ այդ մեծ շնորհքիդ. եւ քեզ ճշմարտութիւնով երկրպագողներուն կարգը դասէ՛ զմեզ, ով մեր Աստուածը, մեր Տէրը եւ Փրկիչը Յիսուս Քրիստոս, որ օրհնեալ ես Հօրը եւ Ս. Հոգիին հետ, հիմա եւ միշտ եւ յաւիտեանս. Ամէն:

## Մ Ա Ն Ք Ա Ն Ք

**Յ**երգս օրհնութեան եւ 'ի ձայն սաղմոսաց անգաղար

փառաւորեմք զՀայր եւ զՈրդի  
եւ զԱռբբ Հոգիոյ, այժմ եւ  
միշտ եւ յաւիտեանս յաւի :  
Օրհնեալ Տէր մեր : Հայր մեր :

## (ԲՉ) ՔԱՐՈՁ (ԳՉ)

Ուրիշ եւ ի նիւրիս կանոնացն :

(Ա. 24.) Վասն գտանելոյ մեզ ըզ-  
հնորնս եւ զողորմութիւն ՚ի բա-  
րերար Տեառնէ մերմէ, զՏէր  
աղաչեսցուք :

Դ. Եւ Ժ. Տէ՛ր ողորմեա՛ :

Մեր բարերար Աստուծմէ շնորհք եւ  
ողորմութիւն գտնելու համար՝ Տէրոջը  
աղաչեմք :

Վասն փրկելոյ զմեզ ՚ի զբբ-  
պարտութենէ մարդկան եւ յո-  
րոգայթից պատանայի, զՏէր  
աղաչեսցուք :

Մարդոց զրգարութիւնէն եւ սատա-  
նայի որոգաթներէն մեզ փրկելու հա-  
մար՝ Տէրոջը աղաչեմք :

Վասն ամենայն անձանց քր-  
րիստոնէից եւ ամեն հաւատա-  
ցելոց. զՏէր աղաչեսցուք :

Ամեն Բրիստոնեայ անձանց եւ ամեն  
հաւատացելոց տուներուն համար՝ Տէրո-  
ջը աղաչեմք :

Վասն որք ՚ի լերինս յայրս  
եւ ՚ի փապարս բնակեալ են  
սուրբ հարքն մեր զՏէր աղա.

Լեռներուն, այրերուն եւ անապատ  
ներուն մէջ բնակող մեր սուրբ հայրերուն  
համար՝ Տէրոջը աղաչեմք :

Վասն որք սաղմոսիւք եւ օրհ-  
նութեամբ կատարեն զամենայն  
ժամանակս կենաց իւրեանց,  
զՏէր աղաչեսցուք :

Իրենց բոլոր ժամանակը սաղմոսերգու  
Թիւնով եւ օրհնութիւնով անցունողներուն  
համար Տէրոջը աղաչեմք :

Վասն հողւոցնս եւ եւս : Զան-  
ձինս : Ողորմեաց :

Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛,

(ԲԶ.) Ա Ղ Օ Թ Ք (ԳԶ.)

(Ա. 4.) Գոհանամբ զքէն, Տէր Աստուած մեր, որ զարթուցիր զմեզ 'ի հանգստենէ քնոյ շնորհիւ ողորմութեան քո:

Զարթո՛ զմիտս մեր արդարութեամբ առ քեզ, Տէր Աստուած մեր, զի տեսցեն աչք մեր զփրկութիւն քո: Եկեսցէ եւ բնակեսցէ՛ առ մեզ Աստուածութիւն քո, եւ ողորմութիւն քո հովանի եւ պահապան լիցի 'ի վերայ պաշտօնէից քոց: Եւ զմեզ զծառայս քո արժանի արա՛ 'ի տուէ եւ 'ի զիշերի եւ յամենայն ժամու միշտ խորհի 'ի սէր պատուիրանաց քոց: Եւ գոհանալով փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ, Այժմ եւ միշտ եւ յաւիտ. Ամէն:

ամենայն զ 32, ամենայն զ 32, ամենայն զ 32

ՔԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Կը գոհանամբ քենէ ո՛վ Տէր Աստուած մեր, որ քու ողորմութեանդ շնորհիւ՝ արժնցուցիր զմեզ քունի հանգստութենէն Արթընցո՛ւ մեր մտքերն եւս արդարութիւնով զէպի քեզ, ո՛վ Տէր Աստուած մեր, որ մեր աչքերը քու ըրած փրկութիւնդ տեսնեն: Թող գայ ու մեր մէջ բնակի քու Աստուածութիւնդ, եւ քու ողորմութիւնդ հովանի եւ պահապան թող ըլլայ քու պաշտօնեաներուդ վրայ:

Եւ զմեզ քու ծառաներդ, արժանի ըրէ զիշեր ու ցերեկ եւ ամեն ժամանակ, միշտ խորհիլ քու պատուիրանքներդ սիրելու եւ պահելու վրայ. եւ գոհութիւն տալով փառաւորել Հայրը եւ Որդին եւ Սուրբ Հոգին հիմա եւ միշտ եւ յաւիտեանս:

Խաղաղութիւն ամենեցուն  
Աստուծոյ երկրպագեսցուք:

Կենդանարար զօրութիւն եւ ազբիւր սնմանութեան, դո՛ւ ես, Քրիստոս Աստուած Փրկիչ



մեր, որ չնորհեցիր մեզ 'ի մէջ  
զիշերի յառնել եւ խոստովան  
լինիլ առ քեզ վասն իրաւանց  
եւ արդարութեան քո եւ այժմ  
աղաչեմք զքեզ, Տէր Աստուած  
մեր, արան զմեզ արթունս եւ  
պատրաստս 'ի ժամ առաւօտու  
ընդ սուրբս քո եւ ընդ նոսին  
գոհանալով փառաւորել զքեզ  
ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ:  
Այժմ եւ միշտ եւ յաւիտ. Ամէն:

### ՅԱՐԳՍԱՆՈՒԹԻՒՆ

Կենդանութիւն տուող զօրութիւնք եւ  
անմահութեան տղբերք դուն ես, ով Քր-  
րիստոս Աստուած փրկիչ մեր, որ շընոր-  
հեցիր մեզ զիշերուան մէջ ելնել եւ խոս-  
տովանիլ (գոհանալ) քու իրաւունքով եւ  
արդարութիւնով ըրած գործերուդ համար:

Եւ հիմայ կ'աղաչեմք զքեզ ով Տէր  
Աստուած մեր, արթուն եւ պատրաստ  
ըրէ զմեզ քու սուրբերուդ ճես գոհութիւն  
տալով փառաւորել զքեզ Հօրք եւ Սուրբ  
Հոգիին հետ: հիմա եւ միշտ եւ յաւիտ:

### ՄԱՂՔԱՆՔ

Գոհութեամբ եւ ճշմարիտ  
խոստովանութեամբ անդադար  
փառաւորելք զՀայր եւ զՍրբի  
եւ զՍուրբ Հոգիդ. այժմ եւ  
միշտ եւ յաւիտեանս յաւիտ. Ամէն:

Օրհնեալ Տէր մեր. Հայր մեր:

### ԱՆԷԼՈՒԹ

ԳԻՇԵՐԱՅԻՆԻՔ, ՏԵՂՈՒՆԱԿԱՆ ՏՕՆԻԿ  
ԿԱՐԳԱՆ, ՐԱՏ ՈՒՔ ՁԱՅՆԻԿ:

(Որդ սին Աստուծոյ հասն):  
Նախ քան զսկսանելն երէցս աստ'  
Ալէլուիա. Ե զինքն Փառքն նոյն-  
դէս կրկնեա՛ս երեք Ալէլուիա:

ՃՐԱԳԱԼՈՒԳԻ ԾՆՆՈՒԹԵԱՆ ՏՏԱՈՆ

Ալէլուիա. Ալէլուիա, Ալէլուիա.

Առաքեաց զբան իւր, եւ բժշկեաց  
գնտս. եւ իրկեաց գնտս յապակս.

նուծենէ իւրեանց: Խոսովան եղի-  
ցին Տեառն՝ ողորմութեանց նորա, եւ  
ըսքանչելեաց նորա որդիք մարդկան:

Ալէլուիա. Ալէլուիա. Ալէլուիա.  
**Փ. Ի.** Իջցէ որպէս զանձրեւ ՚ի վերայ  
գեղման, որպէս ցօղ. զի ցօղէ յերկիր:

Ծագեացի յաւուրս նորա արդարու-  
թիւն. բազում խողաղութիւն մինչեւ  
կասարեացի լուսին:

Փառք եւ երկրպագութիւն Հօր եւ  
Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ  
միշտ եւ յաւիտեանս յաւիտե. Ամէն:

Ալէլուիա. Ալէլուիա. Ալէլուիա:

### Ծննդեան Տեառն Յիսուսի

Ալէլուիա. Ալէլուիա. Ալէլուիա:

**Ա. Զ.** Տէ՛ր հովուեացէ զիս. եւ ինձ  
ինչ ոչ պակասեացի: Ի վայրի դալար-  
ւոջ անդ բնակեցոյց զիս. եւ առ  
ջուրս հանգստեան սընոյց զիս:

**Փ. Ի.** Ալէ. Իջցէ որպէս զանձրեւ.

Ծագեացի յաւուրս նորա.

Փառք եւ երկրպա. Ալէ. Ալէ. Ալէ:

Զլնէ աշնայն Տէրունական Տնէ որ  
Ա. Զ. Ինչ՝ զԴասքն առա՛.

Դասք հրեշտակաց օրհնեն ըզբեզ  
Բրիստոս, Ալէլուիա. Մարդկան ազգ  
սաղմոսեն բեզ. Ալէլուիա:

**Ա. Ե.** Լնր դուսր եւ Տես. խնարհե-  
ցն զունկն քո. մոռա՛ զժողովուրդ քո  
եւ զսուն հօր քոյ, զի ցանկացաւ Թա-  
գաւոր գեղոյ քոյ, Սա ինքն է Տէր քո՛  
երկիրպագցես սմա. եւ դուսր Ծու-  
րայ երկիրպագցէ սմա. եւ պատարա-  
գօք գերեսս սորա պաշտեցնն մեծա-  
մեծք ՚ի ժողովրդոց:

**Փ. Ի.** Ալէ. Ես կարդացէ առ իս,  
Հայր իմ ես դու. Աստուած ընդունող  
փրկութեան իմոյ, Ես անդրանիկ ա-  
րարից զիս. եւ բարձր քան զամենայն  
Թագաւորս երկրի:

Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլ. Ալէլ.

**ԳԶ.** Ալէ. (Էբէշ) Էջցէ որպէս զանձր  
եւ. Ծագեացի յառուս նորա.

**Փ.Ի.** Ալէ. Եցոյց Տէր զփրկութիւն  
իւր. առաջի ազգաց յայննեաց զար-  
դարութիւն իւր: Յիշեաց ողորմու-  
թեամբ իւրով զՅակոբ. ճշմարտու-  
թեամբ իւրով զսուսն Իսրայէլի. եւ  
սեպին ամենայն ծագբ երկրի զփր-  
կութիւն Ասուծոյ մերոյ:  
Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա .

**ԳԷ.** Նա կարգացէ. Ես անդրանիկ. եւն  
**Փ.Ի.** Ալէ. Ընդ քեզ է սկիզբն առու  
զօրութեան. 'ի վայելչութիւն սրբոց  
քոց յարգանդէ յառաջ քան զարուս-  
եակ ծընայ զքեզ: Երդուաւ Տէր եւ  
ոչ եւս զղջացի. Թէ դու ես քահա-  
նայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսե-  
ղեկի. եւ Տէր ընդ աշմէ քու մէ:  
Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա.

**ԳԶ.** Եցոյց Տէր զփրկութիւն. եւն.  
**Փ.Ի.** Ալէ. Յիշեա՛ Տէր զԴաւիթ, եւ  
զամենայն հեղութիւն նորա. որպէս  
երդուաւ Տեառն, եւ ուխտս եղ Աս-  
սուծոյ Յակոբայ:  
Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա.

**ԳԷ.** Ընդ քեզ է սկիզբն. Երդուաւ Տէր:  
**Փ.Ի.** Ալէ. Տէր ասաց ցիս Որդի իմ ես  
դու. եւ ես այսօր ծընայ զքեզ:  
Խնդրեա՛ յինէն, եւ ասց քեզ զհեթա-  
նոսս 'ի ժառանգութիւն, եւ իշխա-  
նութիւն քեզ ընդ ամենայն ծագս  
երկրի. Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէ.

**ԳԶ.** Յիշեա՛ Տէր զԴաւիթ. որպէս երդ.  
**Փ.Ի.** Ալէ. Տէր հովուեսցէ զիս. եւն.  
Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա.

**ԳԷ.** Տէր ասաց ցիս որդի իմ. եւն.  
**Փ.Ի.** Ալէ. Լուր դու օսր եւ սեռ, եւն.  
Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա.

**Ի Տօնի Քառասնորեայ Պալքսեան Տեառն մեռոյ 'ի Տաճարն :**

Օրհնեալ եկեալ յանուն Տեառն օրհնեալ որ զարց ես : Տէր Ասուած մեր երեւեցաւ մեզ . արարէք զօնքս ուրախութեան կանխաւ մինչեւ յանկիւնքս սեզանոյ :

**Փռի . Ալէ .** Տէր 'ի տաճար սուրբ իւրում, Տէր յերկինս յաթոռ իւրում : Աչք նորա 'ի սնանկս հային . արեւաւնունք նորա քննեն զոգոս մարդկան : Փառք եւ երկր . Այժմ եւ . Ալէլուիա :

### Ա Ա Է Լ Ո Ւ Ք

#### Յարութեան Քրիստոսի

**ԱԶ .** Ողորմութեամբ Տեառն լի եղել երկիր . եւ բանիւ Տեառն երկինք հաստեցան : եւ հոգևով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա :

**Փռի . Ալէ .** Յարեաւ Ասուած եւ ցր-

ուեցան ամենայն թշնամիր նորա : Փախեան ասելիր նորայրեւաց նորա : Փառք եւ երկր . Այժմ եւ . Ալէլուիա :

**Աւ .** Ծափս հարէք ամենայն հեծանոսք . աղաղակեցէք առ Ասուած 'ի ծայն ցնծութեան : Տէր բարձրեալ եւ ահարկու . Յազաւոր մեծ 'ի վերայ ամենայն երկրի :

**Փռի . Ալէ .** Հանեցար Տէր քնդ երկիրք . եւ դարձուցեր զգերութիւն Յակոբայ : Թողեր զանիրաւութիւն ժողովրդեան քոյ, եւ ծածկեցեր զամենայն մեղքս նոցա :

Փառք եւ երկր . Այժմ եւ . Ալէլուիա :

**ԲԶ .** Յարեաւ Ասուած . եւ այլն :

**Փռի . Ալէ .** Տէր Յազաւորեաց, զգալելութիւն զգեցաւ . Չգեցաւ Տէր զօրութիւն քնդ մէջ իւր էած :

Փառք եւ երկր . Այժմ եւ . Ալէլուիա :

**ԲԼ.** Համեցար Տէր. Թողեր զանի. եւն.

**Փ.Ի.** Ալէ. Օրհնեցէք մանկուներ զՏէր. եւ օրհնեցէք զանու նրն Տեառն.

Եղիցի՛ անուն Տեառն օրհնեալ. յայսմ հետէ մինչեւ յաւիտեան.

Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա.

**Գ.Զ.** Տէր Թազաւորեաց. Զգեցաւ. եւն

**Փ.Ի.** Ալէ. Գովեա՛ Երուսաղէմ. զՏէր. եւ օրհնեա՛ զԱսուած քո Սիօն.

Զի զօրացոյց զնիզա դրանց բոց. եւ օրհնեաց զսրղիս քո՝ ՚ի քեզ:

Փառք եւ երկր. այժմ եւ. Ալէլուիա.

**Գ.Լ.** Օրհնեցէք մանկուներ. Եղիցի եւն

**Փ.Ի.** Ալէ. Կենդանի է Տէր. եւ օրհնեալ է Ասուած եւ բարձր եղիցի Ասուած փրկութեան իմոյ. Ասուած է որ խնդրէ զփէժ իմ. եւ հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինեւ.

Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա.

Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա.

**Գ.Զ.** Գովեա Երուսաղէմ զՏէր. Զի զօր.

**Փ.Ի.** Ալէ. Ողորմութեամբ Տեառն լի եղեւ երկիր. եւ բանիւ Տեառն երկիրն հաստատեցան. եւ Հոգւով քերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա.

Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա.

**Գ.Լ.** Կենդանի է Տէր եւ օրհնեալ. եւն.

**Փ.Ի.** Ալէ. Եւափս հարէք ամենայն եւն. Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա.

**Ի Տօնի Համբարձմանն Գրիսոսի**

**Ա.Զ.** Համբարձէք իշխանք զգրուես ձեր ՚ի վեր. համբարձցին գրուեր յաւիտեանից եւ մտցէ Թազաւոր փառաց.

Ո՞վ է սա Թազաւոր փառաց, Տէր հօր զօրութեամբ իւրով, Տէր կարող ՚ի պատերազմի:

**Փ.Ի.** Ալէ. Կառք Ասուծոյ բիւրա-

պատկեր. հազար ուղղիչք. եւ Տէր 'ի նոսա 'ի Սինէ սրբութեան իւրոյ. ել 'ի բարձունս եւ գերեաց զգերութիւն. էառ աւար, բաշխեաց պարգևս, եւ ետ որդւոց մարդկան. քառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա.

**Ա. Ե.** Համբարձաւ Ասուած օրհնութեամբ. եւ Տէր մեր ձայնիւ փողոյ.

Սաղմոս ասացէք Ասուծոյ շմերոյ. սաղմոս ասացէք թագաւորին մերում. սաղմոս ասացէք.

**Փ. Ի.** Ալէ. Որ հովուեսդ իսրայէլի՝ նայեաց, որ առաջնորդես որպէս խաշին Յովսեփու. Որ նքսիսդ 'ի քովբէս՝ յայտնեաց առաջի եփրեմի, Բենիամինի եւ Մանասիի.

քառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա.

**Բ. Զ.** Կառք Ասուծոյ բերապատկեր.

**Փ. Ի.** Ալէ. Որ դնէ յամպս զգնացս

իւր. եւ շնչի նա 'ի վերայ թեւոց հողմոց. Խոսովանա թիւն եւ մեծ վայելչութիւն զգեցար. արկեր զոյս որպէս զօթոց. ձգեցեք գերկինս որպէս խորան. եւ արկեր 'ի վերայ ջուրց զվերնայարկս նորա.

քառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա.

**Բ. Է.** Որ հովուեսդ իսրայէլի՝ եւ այն.

**Փ. Ի.** Մեծ եղեւ մինչեւ յերկինս ողորմութիւն քո. եւ մինչեւ յամպս ճշմարտութիւն քո. Բարձրեսալ ես դու յերկինս Ասուած. եւ ամենայն երկրի են փառք քո. զգծեաճան մեք քառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա.

**Բ. Ը.** Որ դնէ յամպս զգնացս իւր. եւն.

**Փ. Ի.** Ալէ. Տէր, խոնարհեցն զերկինս եւ էջ. մերձեալ 'ի յերինս եւ ճրխեսցին. Փայլեալ՝ զփայլաստկունս քո եւ

խոսովեա՛ զնոսա՛. առաքեա՛ զնեքս  
բո, եւ ցրուեա՛ ըզնոսա:  
Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա:

**Գ.Լ.** Մեծ եղեւ մինչեւ յերկինս եւն.  
**Փ.Ի.** Ալէ. Խոնարհեցոյց զերկինս եւ  
էջ. եւ մէզ 'ի ներքոյ ոսից նորա.  
ել 'ի Բրովբէս եւ Սըռեաւ. սլացաւ  
նա 'ի թեւս հողմոց.  
Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա:

**Գ.Զ.** Յերեսաց նորա ելցեն հար-  
ուածք. եւ զհետ շաւղաց նորա երթի-  
ցեն մեծամեծք 'ի թաչնոց. Լերինք  
հալեացին եւ անսառք վասնեցին.  
ճանապարհք որք 'ի սկզբանէն էին  
կուրացին. եւ 'ի նմանէ զողացի  
ամենայն երկիր:  
**Փ.Ի.** Ալէ. Համբարձէք իշխանք. եւն  
Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա:

**Գ.Լ.** Խոնարհեցոյց զերկինս. եւ այլն.  
**Փ.Ի.** Ալէ. Համբարձաւ Ասուած. եւն  
Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա:

## Ա.Լ.Ե.Լ. ՈՒՔ

### Հոգւոյն Սրբոյ Դալսեան

**Ա.Զ.** Յանկալի է նա քան զոսկի եւ  
քան զախանս պասուականս քաղուս-  
քաղցր է նա քան զմեղու խորխոխ.  
Բանգի ծառայ քո պահեցէ զայս,  
'ի պահել նմա զհասուցու մըն բազում  
**Փ.Ի.** Ալէ. Թեւք ազաւնոյ արծա-  
ծապաս, եւ թիկնամէջ նորա 'ի գոյն  
ոսկւոյ. Ի զուճարել երկնաւորին ըզ-  
ժագաւորս 'ի վերայ նորա, ծիւնա-  
ցին 'ի Սաղմօն.  
Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա:

**Ա.Է.** Զսիրս սուրբ հաստեա՛ յիս  
Ասուած. եւ զհոգի ուղիղ նորոգեա՛

՚ի փոռի խնում: Մի ընկենուր զիս Տէր  
յերեսաց քոց. եւ զՀոգի քո սուրբ մի  
հաներ յինէն:

**Փ. Է. Ալէ.** Դքի զԴաւիթ ծառայ իմ.  
եւ իւզով սրբով իմով օծի զնա.  
Ձեռն իմ ընկալցի զսա. եւ բազուկ  
իմ զօրացուցէ զնա:

**Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա:**

**Ք. Բ.** Թեւ քաղաւնոյ արծաթապատ.

**Փ. Է. Ալէ.** Առաքես զոգի քո եւ  
ստանաս զնոսա, եւ նորոգես զերեսս  
երկրի. Եղիցին փառք Տեառն յաւի-  
տեան, եւ Տէր ուրախ եղիցի յարա-  
ւածքս իւր:

**Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա:**

**Ք. Ե.** Դքի զԴաւիթ ծառայ իմ. եւն.

**Փ. Է. Ալէ.** Յայտնութիւն բանից քոց  
լուսաւոր է, եւ խնայողն առնէ ըզ-  
հայս: Ձբերան իմ բացի եւ առի

զոգի. ՚ի պատուիրանքս քո փափաք-  
եաց անծն իմ:

**Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա:**

**Ք. Զ.** Առաքես զոգի քո եւ ստանաս. եւն

**Փ. Է. Ալէ.** Հոգի քո սուրբ եւ բարի  
առաջնորդեսցէ ինձ ՚ի յերկիր ուղիւ.  
Ղանն անուան քոյ Տէր, կեցուցես  
զիս. արդարութեամբ քով հանցես ՚ի  
նեղութենէ զանծն իմ:

**Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա:**

**Ք. Է.** Ձբերան իմ բացի եւ առի ըզ-  
հոգի. ՚ի պատուիրանս քո փափաքեաց  
անծն իմ. նայեա՛ց առ իս եւ ողոր-  
մեա՛ց ինձ ըստ իմաւունս սիրողաց  
անուան քոյ:

**Փ. Է. Ալէ.** Ի սասէ բուսմէ Տէր եւ  
՚ի շնչել հոգւոյ բարկութեան քո:  
Առաքեաց ՚ի բարձանց եւ ընկալաւ  
զիս. ընկալաւ զիս ՚ի ջուրց բազմաց.  
Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա



**ԳՁ.** Որպէս իւր զի իջանէ 'ի գլուխ եւ 'ի մօրուսն Ահարոնի. եւ 'ի մօրուացն իջանէ 'ի գրապանս զգեսու նորա. Որպէս ցօղ զի ցօղէ 'ի Հերմոնէ 'ի վերայ լերին Սիօնի:

**Փ.Ի.** Ալէ. Ի վայրի դալարուոջ անդ բնակեցոյց զիս. եւ առ ջուրս հանգրսեան սնոյց զիս. Դարձոյց զանձն իմ առ իս. եւ առաջնորդեաց ինձ 'ի Տանապարհն արդարութեան վասն անուան իւրոյ:

Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա:

**Գ.Լ.** Ի սաստէ բուսիէ Տէր. եւ այլն.

**Փ.Ի.** Ալէ. Սիրս սուրբ հաստատեա. եւ ն Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա:

### Ի Տօնի Սուրբ Խաչի

**ԱՁ.** Յուպ քո եւ զաւազան, նորա մշխիթարեցեն զիս. Պատրաստ արարեւ առաջի իմ զսեղան. ակն յանդիման նեղչաց իմոց:

**Փ.Ի.** Ալէ. Ետուր երկիւղածաց քոց նշան. զի ասրեացին յերեսաց աղեղանս. Որպէս փրկեցան սիրելիք քո, կեցն աջով քո եւ լուր մեզ:

Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա:

**Ա.Լ.** Նեքք քո սրեալ են հզօր. եւ ժողովուրդք 'ի ներքոյ քո անկցին. 'ի սիրքս Կշնամեաց Թագաւորի. ԱՅոռ քո Ասուած յաւիտեանս յաւիտենից. զաւազան ուղղութեան, զաւազան արքայութեան քոյ:

**Փ.Ի.** Ալէ. Տուր զօրութիւն ծառայի քոյ. կեցո զորի աղախնոյ քոյ. եւ արա առ իս նշան բարութեան. Տեսցեն ասելիք իմ եւ ամաչեցեն. զի դու Տէր օգնեցեր ինձ. եւ մխիթարեցեր զիս:

Փառք եւ երկր. այժմ եւ. Ալէլուիա:

**ԲՁ.** Ետուր երկիւղածաց քոց. եւ այլն.

**Փ.Ի.** Ալէ. Դու պատրաստեցեր զուղղութիւն եւ զիրաւունս, եւ զար-

դորուծիւն Յակովբայ զու արարեւ.  
Բարձր արարէք զՏէր Աստուած մեր.  
Երկիրպագէք պատուանդանի ոսից  
նորա զի սուրբ է:

Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա

**ԲԱ.** Տուր զօրուծիւն ծառայի քո. եւն  
**Փ.Ի.** Ալէ. Ասաց Տէր ցՏէր իմ. նիս  
ընդ աջմէ իմմէ, մինչեւ եղից զԹշնա-  
միս քո պատուանդան ոսից քոց:  
Գաւազան զօրուծեան առարեցէ  
քեզ Տէր 'ի Սիօնէ. եւ սիրեցես զու  
'ի մէջ Թշնամեաց քոց:

Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա

**ԳՁ.** Գու պատրաստեցիր. եւ այլն.

**Փ.Ի.** Ալէ. Յայննեցեն երկիրն զվա-  
յելուծիւն փառաց նորա. եւ օրհ-  
նուծեամբ նորա լցան սիեզերք. ձա-  
ռագայթք որպէս 'ի լուսոյ հասան 'ի  
նմանէ. եւ եղջիւրք 'ի ձեռին նորա  
զսան. եւ անդ հաստացեալ զօրու-

ծիւն փառաց նորա  
Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա:

**Գ.Ա.** Ասաց Տէր ցՏէր իմ նիս. եւ այլն.  
**Փ.Ի.** Ալէ. Նշանեցաւ առ մեզ լոյս  
երեսաց քոց. եւ ետուր ուրախուծիւն  
սրսից մերոց. Ի պսղոյ ցորենոյ զիմ-  
ւոյ եւ ծիծոյ իւրեանց լցուցեր զնոսաւ.  
Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա:

**ԳՁ.** Յայննեցեն երկիրն. եւ այլն.  
**Փ.Ի.** Ալէ. Յուպրո եւ գաւա. եւ այլն.  
Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա:

**Գ.Բ.** Նշանեցաւ առ մեզ լոյս. եւ այլն.  
**Փ.Ի.** Նեսք քո օրեալ են. եւ այլն.  
Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա:

### ԱԼԷԼՈՒՔ ԵԿԵՂԵՅԻՈՅ

**ԱՁ.** Լըսել ինձ զձայն օրհնուծեան  
քոյ. եւ պատմել զամենայն սրանչե-  
լիս քո Տէր, սրեցի, զվայելելուծիւն

սան քո. եւ զտեղի յարկի փառաց քոյ.  
**Փ.Ի.** Երանի զոր ընտրեցեր եւ ընկա-  
 լար. եւ ընակեացին 'ի գաւիթս քո.  
 Լցցուք մեր 'ի բարութենէ՛ սան քոյ.  
 սուրբ է՛ սաճար քո սրանչելի արդա-  
 րութեամբ.

**Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա.**

**Ա.Ա.** Մեծ է՛ Տէր եւ օրհնեալ է՛ յոյժ.  
 'ի քաղաք Ասուճոյ մերոյ 'ի լեառն  
 սուրբ նորա. Հասարմաս ցնծու-  
 թեամբ ցնծացէ՛ ամենայն երկիր.  
 լերինք Սիօնի՛ կողմանք հիւսիսոյ՝ 'ի  
 քաղաք Թագաւորին մեծի.

**Փ.Ի.** Ալէ. Հիմունք նորա 'ի լեառն  
 սուրբ նորա. սիրէ՛ Տէր զգրունս Սիօնի  
 առաւել քան զամենայն յարկան Յակո-  
 բայ. Փառաւորեալն խօսեցաւ վասն  
 քոյ. ահաւաղիկ քաղաքդ Ասուճոյ.  
 Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա.

**ԲԶ.** Երանի զոր ընտրեցեր եւ այլն.

**Փ.Ի.** Ալէ. Դու Տէր յաւիտեան կաս.

եւ յիշատակ քոյ յազգէ՛ մինչեւ յազգ. Դու  
 յարուցեալ զՅասցիս 'ի վերայ Սիօնի.  
 Ժամանակ զՅալոյ նորա հաստալէ՛ ժամ.  
 Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա.

**ԲԼ.** Հիմունք նորա 'ի լեառն. եւ այլն.  
**Փ.Ի.** Ալէ. Այսօր է՛ զոր արար Տէր.  
 եկայք ցնծացուք եւ ուրախ եղիցուք  
 'ի սմա. Ի Տեառնէ՛ եղեւ այս, եւ է՛  
 սրանչելի առաջի աչաց մերոց.  
 Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա.

**ԳԶ.** Դու Տէր յաւիտեան կաս, եւ այլն  
**Փ.Ի.** Ալէ. Խոստովան եղէց քեզ Տէր  
 քոյւրով արհւ իմով. առաջի հրեշ-  
 տակաց սաղմոս ասացից քեզ. Զի լը-  
 ւար զքանս քերանոյ իմոյ. երկիր պա-  
 զից 'ի սաճար սուրբ քո. եւ խոստո-  
 վան եղէց անուան քում վասն ողոր-  
 մութեան եւ ճշմարտութեան քոյ.  
 Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա.

**ԳԸ.** Այսօր է՛ զոր արար Տէր. եւ այլն.

**Փռի.** Ալէ. Տէր ով կացցէ 'ի խորանի բուս. կամ ով բնակեցցի 'ի լեառն սուրբ քո, որ զնայ անբիծ, զործէ զարդարութիւն. եւ խօսի զճշմարտութիւն 'ի արտի իւրում:  
**Փառք եւ երկր.** Այժմ եւ. Ալէլուիա:

**ԴԶ.** Ուրախ եղէ ես ոյր ասէինցիս, 'ի տուն Տեառն երթիցուք մեր:

Հասեալ կային ոսք մեր առ դրունս քո երուսաղէմ:

**Փռի.** Ալէ. Լսել ինձ զճայն. եւ այլն. **Փառք եւ երկր.** Այժմ եւ. Ալէլուիա:

**ԴԷ.** Տէր ով կացցէ 'ի խորանի. եւն.

**Փռի.** Ալէ. Մեծ է Տէր եւ օրհ. եւն. **Փառք եւ երկր.** Այժմ եւ. Ալէլուիա:

### Ի Տօնի Հրեցաւկապեաց:

Ուրաւ զհրեշտակս իւր յոգիս, եւ զպաշտօնեայս իւր 'ի հուր կիզելոյ. Հաստեաց զերկիր 'ի վերայ հաս-

տասութեան իւրոյ. զի մի սասանեցցի յաւիտեան:

**Փռի.** Ալէ. Օրհնեցէք զՏէր յերկինս. օրհնեցէք զնա 'ի բարձանց. Օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նորա, օրհնեցէք զնա ամենայն զօրութիւնք նորա. **Փառք եւ երկր.** Այժմ եւ. Ալէլուիա:

Դասք հրեշտակաց օրհնեն զքեզ քրիստոս, Ալէլուիա. Մարդկան ազգ սաղմսեն քեզ. Ալէլուիա:

### Դարձեալ

**Թ.** Երկինք եւ երկիր զօհանան զքէն Տէր. արարածք ամենայն քեզ երկիրպագանեն. եւ հրեշտակք 'ի բարձունս ազազակեն եւ ասեն. ողորմեա՛ զնս տեղծեր, մի կորուսաներ:

**Սուրբ.** Երկինք երկնից, ջուրք որ 'ի վերոյ քան զերկինս, օրհնեցէք զանունըն Տեառն. Զի նա ասաց, եւ եղեն. հրամայեաց եւ հաստեացան. եւ հրեշտակք 'ի բարձունս. եւ այլն:

**Փ.Ի.** Երկինք եւ երկիր հանազազ  
զրեզ զովեն, թագաւոր փառաց. սե-  
րովբէք եւ քերովբէք 'ի խոնարհ ու-  
նելով զդէմս իւրեանց. եւ միաձայն  
բարբառովն աղաղակեն եւ ասեն .  
Սճւրք. Սճւրք. Սճւրք. Տէր զօրութեանց

### Ղագարու յարութեանն :

**Ա.Զ.** Բարձր առնեմ զրեզ Տէր, զի ըն-  
կալար զիս. եւ ոչ ուրախ արարեր  
զթշնամիս իմ յիս. Տէր Աստուած իմ  
կարգացի առ քեզ եւ բժշկեցեր զիս.  
Տէր հաներ իղժոխաց զանձն իմ. փրկե-  
ցեր զիս յայնցանէ, որք իջանէն ի զուր :

**Փ.Ի.** Ալէ. Եհան զիս 'ի զրոյ ճառա-  
պանաց, 'ի կաւոյ եւ 'ի սղմոյ .

Հաստեաց 'ի վերայ վիժի զոսս  
իմ. եւ ուղղեաց զզնացս իմ .

Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա .

### Ծաղկազարդի Ողորոմեան :

**Ա.Կ.** Տէր Աստուած մեր երեւցաւ  
մեզ. արարէք զօնս ուրախութեան  
կանխաւ, մինչեւ յանկիւնս սեղանոյ .

Աստուած իմ ես դու, եւ խոստովան  
եղէց քեզ. Աստուած իմ ես դու՝ եւ  
բարձր արարից զքեզ :

**Փ.Ի.** Ալէ. Լերինք ցնծասցեն առա-  
ջի Տեառն, զի գայ եւ հասեալ է Տէր  
'ի դասել զերկիր. Դասէ զաշխարհս  
արդարութեամբ. եւ զժողովուրդս  
իւր ուղղութեամբ :

Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա .

### Անուրց Աւագ Եարարուն :

#### Աւագ Երկու Եարբի :

**Բ.Զ.** Չի նա ասաց, եւ եղեն. հրա-  
մայեաց եւ հաստեացան :  
Կարգեաց զնոսս յաւիտեանս յաւիտե-

նից սահման եզ եւ ոչ անցանեն .  
**Փռի . Ալէ .** Ի սկզբանէ Տէր զհիմունս  
 երկրի հաստեցեցր . եւ զործք ծե-  
 աաց քոց երկինք են . Նորա կորնչին,  
 եւ դու կաս եւ մնաս յաւիտեան .  
 Փառք եւ երկր . Այժմ եւ . Ալէլուիա .

### Աւագ Երեւոյթի :

**Ա.Կ .** Կացցէ դշխոյ ընդ աշիւէ քու՛մ-  
 մէ . Ի հանդերձս ոսկեհունուս զարգա-  
 րեալ եւ սրճմոց հար շնոր դու սր եւ  
 սէս . Խոնարհեցն զունկն քո . մտա՛  
 զժողովուրդ քո եւ զսուն հօր քոյ . զի  
 ցանկացաւ թագաւոր զեղոյ քոյ .  
**Փռի . Ալէ .** Տարցին թագաւորի կու-  
 սանք զհետ նորա . եւ զընկերս նորա  
 տարցին . նմա . Ածցին ցնծութեամբ  
 եւ ուրախութեամբ . եւ տարցին ՚ի  
 տաճար թագաւորի . եւ փոխանակ  
 հարց քոց եղիցին սրդիք քո .  
 Փառք եւ երկր . Այժմ եւ . Ալէլուիա

### Աւագ Չորեքշաբթի :

**Գ.Զ .** Որ ուսէր զհաց իմ . յանխեաց  
 առնել ինձ զխաբէութիւն . Այլ դու  
 Տէր ողորմեա՛ ինձ , եւ կանգնեա՛ զիս .  
 եւ ես հասուցից նոցա .  
**Փռի . Ալէ .** Խորհեցան եւ խօսեցան  
 զչարութիւն . եւ զապիրատութիւն ՚ի  
 բարձունս խորհեցան . եղին յերկինս  
 զբերանս իւրեանց . եւ զլեզուս իւր-  
 եանց ամէնին զերկրաւ .  
 Փառք եւ երկր . Այժմ եւ . Ալէլուիա .

### Աւագ Հինգշաբթի :

**Գ.Է .** Լուացից սրբութեամբ զձեռս իմ .  
 եւ շուրջ եղէց զսեղանով քո Տէր .  
 Տէր սիրեցի զվայելչութիւն սան քոյ .  
 եւ զսեղի յարկի փառաց քոց .  
**Փռի . Ալէ .** Պատրաստ արարեւ առաջի  
 իմ սեղան . ահն յանդիման նեղչաց  
 իմոց . Օծեւ իւղով զգլաւս իմ . բաժակ  
 քո որպէս անապակ արբեցոյց զիս .  
 Փառք եւ երկր . Այժմ եւ . Ալէլուիա .

## Աւագ Ուրբար :

**ԳԶ.** Զարթեալ աղեղն քո ի նեւս  
կապարծից քոց. արեցուցեր զգեսս-  
ցուեցեր զերկիր, եւ զողացուցեր 'ի  
սասկուծենէ անծրելի որք անցա-  
նեն ընդ սա: Անդունդք աղաղակեցին  
մեծապէս. յոյս փայլման արեգա-  
կանն արզելաւ, եւ ծագումն լուս-  
նին դադարեցաւ:

**ՓԻ.** Ալէ. Մասնեցայ եւ ոչ ելանէի.  
այք իմ սկարացան յաղբասուծենէ:  
Աղաղակեցի առ Տէր զօրհանապագ.  
եւ համբարծի առ քեզ զծեռս իմ:  
Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա:

## Աւագ Շաբար :

**ԳԷ.** Եղին զիս 'ի գրի ներքնումն.  
'ի խաւարի եւ 'ի սուերս մահու:  
Յիս հաստատեցաւ սրմտուծիւն քո. զա-  
մենայն զքօսանս քո ածեր 'ի վերայ իմ:  
**ՓԻ.** Ալէ. Եղէ ես որպէս մարդ ա-  
ւանցօզնականի. եւ 'իմեռեալս ազաս:

Որպէս զփրաւորս որք ննջեն 'ի գե-  
րեգմանի:

Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա:

## Յայլ քրինակէ է այ :

Ինքն 'ի գերեզմանի գնաց եւ 'ի  
ճապանի ճրնեցաւ. Քաղցրացան նմա  
խիճք հեղեղասի. եւ զհեռ նորա ա-  
մենայն մարդ գնացէ:

Պայծառակերպութեան Բրիտան-  
ոսի որ ասի Վարդավառ :

## ԿԻՐԱԿԷ :

Քո են երկինք, եւ քո է երկիր.  
զաշխարհ լիւ իւրով զն հաստատե-  
ցեր. Զհիւսիս եւ զհարաւ զու արա-  
րեր. Թափուր եւ Լեւոմոն յանուն քո  
ցնծացեն:

**ՓԻ.** Ալէ. Բարձուծիւն քերանց նո-  
րա են. նորա է ծով եւ նա արար ըզ-  
նա. եւ զցամարձեռք նորա սեղծին.  
Եկա՛յք երկիրպագցնր նմա. անկցուր

եւ լացցնւր առաջի Տեառն Արարչին  
մերոյ,  
Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա.

### ՅՐԿՈՒՇԱԹԻ

Բարձրութիւնք լեանց նորա են.  
նորա է ծով, եւ նա արար զնա. եւ  
զցամար ձեռք նորա բսեղծին.

Մոզէս եւ Ահարոն երիցունք նո-  
րա. Սամուէլ ընդ այնոսիկ որք կար-  
դան զանուն նորա.

Փռի. Ալէ. Լեւիներ զնծ ասցեն առ ա-  
ջի Տեառն, զի զայ. եւ հասեալ է Տէր  
ի դասել զերկիր. Դասէ զաշխարհս  
արգարութեամբ եւ զժողովուրդս իւր  
ուզողութեամբ.  
Փառք եւ երկր. Այժմ եւ. Ալէլուիա.

### ՅՐԿՈՒՇԱԹԻ

Ի ձեռս նորա են ամենայն սիե-  
զերք երկրի. եւ բարձրութիւնք լե-  
ւանց նորա են. նորա է ծով եւ նա  
արար զնա. եւ զցամար ձեռք նորա  
բսեղծին.

Փռի. Ալէ. Լեւիներ որպէս մոմ հա-  
լեսցին յերեսաց Տեառն. յերեսաց  
Տեառն ամենայն երկիր. Պատմեցեն  
երկինք զարգարութիւն նորա. եւ  
սեպցեն ամենայն ժողովուրդք զփա-  
ռքս նորա.

Փառք եւ երկրպագութիւն Հօր եւ  
Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Այժմ եւ  
միշտ եւ յաւիտեանս յաւիտենից Ամէն.  
Ալէլուիա. Ալէլուիա. Ալէլուիա.

(Սոյն Ալէլուիայի Սուտնայ  
+ աղցրանուստ Երգէն յետոյ կ'սկսէ  
ԱՌԱՒՕՏԵԱՆ Ժամբբանէնը, շրբ  
Ս. Թարգմանէլք ժեր ՍԱՀԱԿ Ե-  
ՄԵՍՐՈՊ կարգաւորած են.)







ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱՅ ԱՂՕՐԻՑ

ԱՌՄՈՏՈՒ ՔԱՄՈՒՆ

ՈՐ ԿԱՏԱՐԻ Ի ԳԷՍՍ

ՈՐԴՒՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ

ՈՐ ԵՐԵՒԵՏԱԻ ԻՌԱԵՐԵՐԵՆ



ՕՐՀՆԵԱԿ ՏԷՐ ՄԵՐ ՅԻՍԱՆ

ՔՐԻՍՏՈՍ ԱՄԷՆ:

Հայր մեր որ յերկինս:

Քահ. ԼՅԱՔ առաւօտու ողորմութեամբ քով ջնծացաք եւ ուրախ եղաք զամենայն աւուրս կենաց մերոց:

Սբկ. Ուրախ եղաք փոխանակ աւուրցն՝ յորս խոնարհ արարեր զմեզ, եւ ամացն՝ յորս տեսաք զչարչարանս: Հայեա՛ Տէր՝ ի ծա-

նայս քո եւ 'ի գործս ձեռաց  
քոց, եւ առաջնորդեա՛ որդւոց  
նոցա. եղիցի՛ լոյս Տեառն Աս-  
տուծոյ 'ի վերայ մեր: Զգործս  
ձեռաց մերոց ուղիղ արա՛ 'ի  
մեզ Տէր. եւ զգործս ձեռաց  
մերոց յաջողեա՛ մեզ:  
Քահ. Փառք Հօր եւ Որդւոյ եւ  
Հոգւոյն Սրբոյ Այժմ եւ միշտ եւ.  
Սբէ. եւ եւս խաղաղութեան  
զՏէր աղաչեսցուք:  
Քահ. Օրհնութիւնս եւ փառք Հօր  
եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ  
Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս.

## Փ Ո Ւ Ս

Օրհնութիւն Երեց մանկանցն  
(ԳԱՆԵՒԷԼ ԳԼ. Գ. Համար 26-88.)

Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն  
մերոց, օրհնեալ փառաւորեալ անուն  
քո յաւիտեանս:

Յիրաւունս անցուցեր զայս ամե-  
նայն ընդ մեզ. արդար ես դու Տէր,

եւ ամենայն զործք քո ճշմարիտ են:  
Ճանապարհք քո ուղիղ են. եւ ամե-  
նայն դասասանք քո արդար են:

Դասասան արդարութեան ամեր  
'ի վերայ մեր, ըստ ամենայնի՝ զոր  
ինչ ամեր 'ի վերայ մեր, եւ բաղարփ  
սրբոյ հարցն մերոց երուսաղէմի:

Արդարութեամբ եւ յիրաւի ամեր  
զայս ամենայն 'ի վերայ մեր, վասն  
մեզաց մերոց:

Անօրինեցար եւ յանցեար ապստամբ  
լինել 'ի քէն. մեզար յամենայնի եւ  
պատուիրանաց քոց մեր ոչ անսացար:

Ո՛չ պահեցար եւ ոչ արարար՝ որ-  
պէս պատուիրեցեր դու մեզ, զի զբարիս  
զսցուք մեր 'ի քէն:

Արդ զամենայն զոր արարեր՝ եւ զոր  
ինչ ամեր 'ի վերայ մեր, արդար դաս-  
ասանաւ արարեր:

Մասնեցեր զմեզ 'ի ձեռս թշու-  
մեաց մերոց, անօրինաց՝ խսաց եւ  
ապստամբողաց:

ի ձեռս Թագաւորի անօրինի եւ  
չարի քան զամենայն երկիր, մասնե-  
ցեր զմեզ:

Եւ արդ ոչ քոյ մեզ ժամ բանալ ըզ-  
բերանս մեր, զի ամօթ եւ նախասինք  
եղար ծառայից քոց եւ պաշտօնէից:

Այլ մի մասներ զմեզ իսպառ վասն  
անուան քոյ, մի ցեր զուխս քո, եւ  
մի ՚ի բացեայ առներ զողորմութիւնս  
քո ՚ի մէնջ:

Վասն Աբրահամու սիրելոյ քո,  
Իսահակայ ծառայի քո, եւ Իսրայէլի  
սրբոյ քոյ:

Խոսացար նոցա՝ եւ ասացեր. Բազ-  
մացուցից զգաւակ ձեր որպէս զաս-  
տեղս երկնից բազմութեամբ, եւ որ-  
պէս զաւազ առ եզր ծովու:

Եւ արդ, Տէր, նուաղեցար մեր քան  
զամենայն ազգս, եւ եմք տառապ-  
եալք յամենայն երկրի այսօր վասն  
մեղաց մերոց:

Ո՛չ գոյ ՚ի ժամանակի յայսմիկ իշ-  
խան, մարգարէ եւ առաջնորդ, ոչ  
ողջակէզք պատարագաց, ոչ խունկք  
օրինաց, եւ ոչ տեղի պատարագս մա-

տուցանել առաջի քո, եւ զողորմու-  
թիւն զտանել ՚ի քէն:

Այլ անձամբք խոնարհեալ եւ հոգ-  
ւով տառապանաց, ընդունելի լիցուք  
մեր՝ որպէս զողջակէզս խոյոց եւ  
զուարակաց, եւ որպէս բիւրաւորս  
գառանց պարտաց:

Այնպէս ընդունելի լիցին պատար-  
ագք մեր այսօր առաջի քո, զի կա-  
տարեալ զցուք զկնի քո. եւ չիք ա-  
մօթ յուսացելոցս ՚ի քեզ:

Եւ արդ՝ գամք զհետ քո ամենայն  
սրտիւք մերովք. երկնչիմք մեր ՚ի  
քէն, եւ խնդրեմք զերեսս քո. Տէր,  
մի յամօթ առներ զմեզ:

Այլ արա՛ առ մեզ ըստ հեզութեան  
բում եւ ըստ բազում ողորմութեան  
բում, փրկեա՛ զմեզ վասն սքանչելի-  
եաց քոց. եւ փառաւորեսցի անուն  
քո յաւիտեան:

Յամօթ լիցին ամենեքեան ոյք չար-  
չարեն զժառայոյս քո. ամաչեցեալ լի-

ցին բռնութիւնք նոցա, եւ ամենայն  
գորութիւնք նոցա խորհակեցցի:

Եւ ծանօցեն զի դու ես Տէր Աս-  
ուած միայն, որ փառաւորեալդ ես  
'ի վերայ ամենայն տիեզերաց: (45)

(52) Օրհնեա՛լ ես դու՝ Տէր Ասուած  
հարցն մերոց, զովեալ եւ առաւել  
բարձրացեալ յաւիտեան:

Եւ օրհնեա՛լ է անուն սուրբ փա-  
ռաց քոց, զովեալ եւ առաւել բարձ-

Օրհնեալ ես 'ի սաստի փառաց  
սրբութեան քո, զովեալ եւ առաւել-

Օրհնեա՛լ ես 'ի վերայ ածուոյ ար-  
քայութեան քո, զովեալ եւ առաւել-

Օրհնեա՛լ ես որ նստի 'ի Քրովբէս  
եւ հայիս յանդունդս. զովեալ եւ ա.

Օրհնեա՛լ ես 'ի վերայ հաստառ-  
ութեան երկնից, զովեալ եւ առաւել.

Օրհնեցէք ամենայն զործք Տեառն,  
զՏէր օրհնեցէք եւ բարձր արարէք  
զնա յաւիտեան:

Օրհնեցէք երկինք զՏէր, օրհնե.

Օրհնեցէք հեշտակք Տեառն, եւ  
ջուրք որ 'ի վերոյ երկնից զՏէր օրհ.

Օրհնեցէք գորութիւնք Տեառն,  
արեգակն եւ լուսին, զՏէր օրհ:

Օրհնեցէք ասեղք երկնից, անձ-  
րեք եւ ցօղք, զՏէր օրհնեցէք.

Օրհնեցէք ամենայն հոգիք, հուր  
եւ ջեր, զՏէր օրհնե.

Օրհնեցէք ցուրտ եւ թօթ, ցօղ եւ  
ծիւնաքեր, զՏէր օրհնե.

Օրհնեցէք սառն եւ պարզ, եղեամն  
եւ ծիւն, զՏէր օրհնե.

Օրհնեցէք իւր եւ զիշերք, լոյս եւ  
խաւար, զՏէր օրհնե.

Օրհնեցէք ամպք եւ փայլասա-  
կունք եւ երկիր, զՏէր օրհնե.

Օրհնեցէք լերինք եւ բլուրք, եւ  
ամենայն բոյսք երկրի. զՏէր օրհնե.

Օրհնեցէք աղբիւրք, ծովք եւ գետք  
զՏէր օրհնեցէք.

Օրհնեցէք կէսք եւ ամենայն կայ-  
սառք որ 'ի ջուրս, եւ Պաշունք երկ-  
նից, զՏէր օրհնե:

Օրհնեցէք զազանք եւ անասունք,  
եւ ողիք մաղկան, զՏէր օրհնե.

Օրհնեցէ իւրայէլ զՏէր, օրհնեցէ  
եւ բարձր արացէ զնա յաւիտեան.

Օրհնեցէք բաճանայք, զՏէր օրհնե.

Օրհնեցէք ծառայք Տեառն, զՏէր  
օրհնեցէք եւ բարձր.

Օրհնեցէք անձինք եւ շունչք ար-  
զարոց, զՏէր օրհնե.

Օրհնեցէք սուրբք եւ խոնարհք  
արսիւք, զՏէր օրհնե.

Օրհնեցէք Անանիա՝ Ազարիա եւ  
Միսայէլ, զՏէր օրհնեցէք եւ բարձր  
արարէք զնա յաւիտեան.

Փառք Հօր եւ Այժմ եւ միշտ եւ.



ՄԱՂԹԱՆԲ

Օրհնեցէք ամենայն արա-  
բածք, զԱրարիչն արարածոց,  
զՏէրն տերանց, զԹագաւորն  
Թագաւորաց, զԱստուածն աս-

տուծոց: Օրհնեցէք՝ զողիցէք՝  
բարեբանեցէք. զի քաղցր է, զի  
յաւիտեան է ողորմութիւնն որաւ

(Սոյն ապէն կ'երգեն Աշկ. Դա-  
մէն Հարցի Շարականը ըստ դաս-  
շահի առարն, և աղբնաւորը կրնայ  
առանձին կարգաւ Օրհնեալ եւ Տէր  
Փոխը, և ամբողջացանել:)

ՔԱՐՈՋ ԶԿՆԻ ՀԱՐՑԻՆ

(Աշկ.) Եկեալք, ամենեւեցեան 'ի  
Սուրբ, կաթողիկէ եւ Ասաքե-  
լական եկեղեցի, ազաչեսցուք  
զՄիածին Որդին Աստուծոյ,  
զՏէրն մեր եւ զՓրկիչն Յիսուս  
Քրիստոս Որ էջ փառօք Հօր  
'ի մէջ Տնոցին, եւ փրկեաց զԵ-  
րիս մանկունսն 'ի Քաղզէաց-  
ւոց անաթի: Լուսաւոր եւ սուրբ  
պահեցէ զմիսս մեր, զի մի  
երբէք խարիցուք մեք 'ի մե-  
ղաց եւ 'ի ցանկութիւնէ աշ-

խարհի: Այլ արժանի եղիցուք  
պահել զպատուիրանս նորա.  
առնուլ զպսակն լուսոյ եւ կե-  
նաց 'ի յանձինս մեր, զոր խոս-  
տացաւ սիրելեաց իւրոց ճըշ-  
մարիան Աստուած Յիսուս Քրիս-  
տոս Տէր մեր. կեցո՛ւ եւ ողորմեա՛ւ:  
Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէրո՛.

## ՅԱՐԳԱՆՈՒԹԻՒՆ

Մեր ամենքս որ եկած ենք այս Կամո-  
ղիկէ եւ Առաքելական Սուրբ Եկեղեցին,  
աղաչեմք Աստուծոյ Միածին Որդւոյն՝  
մեր Տէր և Փրկիչ Յիսուս Քրիստոսի: Որ  
իւր Հօր փառքով հնոցին (կրակի բոցին)  
մէջ իջաւ և Երեք Մանկուները փրկեց  
Քաղղէացիներէն. Որպէս զի լուսաւոր և  
մաքուր պահէ մեր միտքը, որ երբէք չխա-  
բուիմք մեղքէ և աշխարհի ցանկութենէ:

Այլ արժանի ըլլամք պահել անոր պա-  
տուիրանքը, և մեր անձերուն վրայ առ-  
նուլ լուսոյ և կենաց պսակը, որ խոստա-  
ցաւ իւր սիրելիներուն ճշմարիտ Աստ-

ուած Յիսուս Քրիստոս մեր Տէրը: Կեցո՛ւ և  
ողորմեա, Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ողոր:

## Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

ԿԻՐԱԿԷԻՅԳ, ԵՒ ԱՅՐՈՅ ՏԵՐԱՆԱ-  
ԿԱՆ ՏՕՆԻՅ

Հոր, յաղթող, սքանչելա-  
գործ, սուրբ եւ մեծի Յարու-  
թեանն Քրիստոսի Աստուծոյ մե-  
րոյ վայելէ փառք իշխանութիւն  
եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ  
յաւիտեանս յաւիտենից. Ամէն  
Ապո Դպիէր՝ Կարգու շայս—ՓՈՒՆ<sup>(1)</sup>

ՆԵՂ ՄԱՐԻԱՄԱՍ ԱՍՏՈՒԱԾԱԾՈՒՄԻ

(ՂՈՒԿ. Ա. 43 - 55.)

(Ա.-Գ.) Մեծացուսցէ անձն իմ զՏէր,  
եւ ցնծասցէ հոգի իմ Աստուծով  
փրկչաւ իմով:

(<sup>1</sup>) Մէշայս—ցէի Փոխն և Շարականն  
միայն Կիրակի օր ըսել սահմանած էր  
Ս. ՍԱՀԱՅ Պարթեւ Հայրապետն մեր, բայց  
յետոյ ամեն օր կարդալ սովորութիւն ե-  
ղեւ մինչեւ ցայժմ:

Այց արար 'ի վերայ խնարհութեան  
աղասնոյ իւրոյ. այսուհետեւ երա-  
նեսցեն ինձ ամենայն ազգք:

Արար ընդ իս մեծամեծս հօրն, եւ  
սուրբ է անուն նորա:

Ողորմութիւն արար ազգաց յազգս  
երկիւղածաց իւրոց. արար զօրութիւն  
բազկաւ իւրով:

Յրուեաց զամբարսաւանս 'ի մտաց  
արտից. եւ քակեաց զհօրս յաթոռոց:  
Զխնարհս բարձրացոյց, զկարօսս  
եկից բարութեամբ, եւ զմեծասունս  
արձակեաց ունայնս:

Պաշտպանեաց իւրայէջի ծառայի  
իւրոյ, յիշելով զողորմութիւն իւր:

Որպէս խօսեցաւ առ հարս մեր,  
ընդ Աբրահամու, եւ զաւակի նորա  
յաւիտեան:

(ԿԵՐԴ ՓՈՒՍ)

Յրհնութիւն Զգարիայի Հօրն  
Յովհաննու Մկրտչին

(ՂՈՒԿ Ա. ԵՏ - ԶԳ.)

Օրհնեա՛լ Տէր Աստուած իւրայէջի  
որ յայց ել, եւ արար փրկութիւն ժո-  
ղովրդեան իւրոյ:

Յարոյց մեզ եղջիւր փրկութեան 'ի

սանէ Դաւթի ծառայի իւրոյ, որպէս  
խօսեցաւ քերանովք սրբոն՝ որ յա-  
ւիտենից մարգարէքն էին:

Փրկութիւն 'ի թշնամեաց մերոց, եւ  
'ի ձեռաց ամենայն ասելեաց մերոց:  
Առնել ողորմութիւն առ հարսն  
մեր, եւ յիշել զհասկարանս սրբու-  
թեան իւրոյ:

Երդումն զոր երդուաւ Աբրահամու  
հօր մերոյ, Տալ մեզ առանց երկիւղի  
զփրկութիւն 'ի թշնամեաց մերոց:

Պաշտել զնա սրբութեամբ եւ ար-  
դարութեամբ առաջի նորա, զամե-  
նայն աւուրս կենաց մերոց:

Եւ դու, Մանուկ, մարգարէ Բարձրե-  
լոյն կոչեսցիր զնասցես առաջի Տեառն  
պատրասել զճանապարհս նորա:

Տալ զգիտութիւն փրկութեան ժո-  
ղովրդեան իւրոյ, 'ի թողութիւն մե-  
ղաց մերոց:

Ղամն զԺոյ ողորմութեանց Տեառն  
Աստուծոյ մերոյ, որով երեւեցաւ մեզ  
արեգակն 'ի բարձանց՝ լուսաւոր առ-  
նել զխաւար մեր:

Ծագել լոյս 'ի վերայ այսոցիկ՝ որ  
նստէաք 'ի խաւարի եւ 'ի սոււերս  
մահու. ուղղել զոսս մեր 'ի ճանա-  
պարհս խաղաղութեան:

## ԿԿՐԴ ՓՈՆ

ԱՊՈՐՖ ՍԻՒՆՈՎԻ ԾԵՐԱՆՈՒՆԵՐ

(ՂՈՒՎ. Բ. 29 - 32.)

Արդ, արձակեա՛ զժառայս քո,  
Տէր, ըստ բանի բու՛մ՝ ՚ի խաղաղու-  
թիւն. Ձի տեսնն աչք իմ գիրկուծիւն  
քո, զոր պատաստեցեր առաջի ա-  
մենայն ժողովրդոց:

Լոյս յայննեցար հեծանոտաց, եւ  
փառք ժողովրդեան բու՛մ իւրայէլի:  
Փառք Հօր եւ Այժմ եւ միշտ եւ.

(Սոյն արեւն Մեծացուցէի Շա-  
բաթանէն ի՛ երբէն, Աստուծոյ ար-  
ժամանակ աղբիւստերը իբնայ ամբողջա-  
ցանէլ ի՛րեւ շաբաթն իւրապէս:)

ՔԱՐՈՉ ԶԿՆԻ ՄԵՄԱՅՈՒՍՅԷՆ

(Որ ինչոյն իբրակէ օրերո՛ւ յարուի է, եւ  
եղանակաւ իւրապէս ցուի, Քացի Մեծ  
Պահոց կերակն երբէն, որ ինչ ի ըստն է:)

Սբի. Եւ եւս խաղաղութեան  
զՏէր աղաչեցուք:

Դու. և Ժող. Տէր ողորմեա՛.

Սբի. Վասն սուրբ տեղւոյս շի-  
նութեան, եւ բարեկարգու-  
թեան, զՏէր աղաչեցուք:

Դու. և Ժող. Տէր ողորմեա՛.

Սբի. Վասն ժողովրդեանս՝ որք  
մտանեն ընդ դրունս սրբոյ Ե-  
կեղեցւոյ. զՏէր աղաչեցուք:

Դու. և Ժող. Տէր ողորմեա՛.

Սբի. Վասն ընդունելոյ զպաղա-  
տանս սոցա ըստ մեծի ողոր-  
մութեան իւրում. զՏէր աղա.

Դու. և Ժող. Տէր ողորմեա՛.

եւ եւս միաբան վասն ճշմա-  
րիտ եւ սուրբ հաւատոյս մերոյ,  
զՏէր աղաչեցուք:

Դու. և Ժող. Տէր ողորմեա՛.

Սբի. Չանձինս մեր եւ զմի-  
մեանս Տեառն Աստուծոյ ամե-  
նակալին յանձն արացուք:

Դու. Բեղ Տեառնդ յանձն եղիցուք:

Սբի. Ողորմեա՛ց մեզ, Տէր Աս-



տուած մեր, ըստ մեծի ողոր-  
մութեան քուս. ասասցուք ա-  
մենեքեան միաբանութեամբ :  
Տէր ողորմեա. Տէր ող. Տէր ո.

## Ա Ղ Օ Յ Ք

**Դ**ու ես թագաւոր յաւի-  
տեանս յաւիտենից Գրիստոս  
Աստուած մեր : Եւ քեզ ընդ  
Հօր եւ Հոգւոյդ սրբոյ՝ վայելէ  
փառք, իշխանութիւն եւ պա-  
տիւ. Այժմ եւ միշտ եւ յաւի .

ԵՐԳ ԻԻՂԱԲԵՐԻՑ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ

(Ա. 4.) **Ե**ղիցի՛ անուն Տեառն  
օրհնեալ. 'ի յայսմ հեռէ, մինչեւ  
'ի յաւիտեան :

Օրհնեցէ՛ք մանկունք զՏէր,  
եւ օրհնեցէ՛ք զանուն Տեառն :

Եղիցի՛ անուն Տեառն օրհ-  
նեալ յայսմ հեռէ մինչեւ 'ի  
յաւիտեան :

Յարեւելից մինչ 'ի մուսն  
արեւու օրհնեալ է անուն Տեառն.  
'ի յայսմ հեռէ մինչեւ 'ի յաւիտ.

Փա՛ռք եւ երկրպագութիւն  
Հօր եւ Որդւոյ եւ Սրբոյ Հոգ-  
ւոյն. Եւ այժմ եւ միշտ եւ յա-  
ւիտեանս յաւիտենից . Ամէն.  
'ի յայսմ հեռէ մինչեւ 'ի յաւիտեն.

## Ե Ր Գ

(Ա. 2.) **Ա**րի՛, Տէր, օգնեա՛մեզ, եւ  
փրկեա՛ զմեզ, վասն անուան քոյ :

(Ա. 4.) **Ա**րի՛ եւ մի՛ մերժեր  
զմեզ իսպառ, վասն անուան քո :

(Ա. 2.) **Թ**ագաւորեացէ՛ Տէր յա-  
ւիտեան. Աստուած քո Սիօն  
յազգէ յազգ :

**Օ**րհնեա՛ անձն իմ զՏէր,  
օրհնեցից զՏէր 'ի կենդանու-  
թեան իմոյ :

(Այս Երգերէն յետոյ Իւզարե-  
րից Աւետարանն իւր կարգոյ ժամա-  
բար Քահանայն ըստ Զայնին :)

Սարկաւանքն . Օրթի<sup>1</sup> .

Քահանայն . Սաղաղութիւնն ա-  
մենեցուն :

Դոյ . Եւ ընդ հոգւոյդ քում .

Սրկ . Երկիւղածութեամբ լուա-  
րութ<sup>2</sup> :

Քահ . Սրբոյ Աւետարանիս Յիսուսի  
Քրիստոսի որ ըստ ՄԱՏԹԷՈՍԻ  
(ըստ Զայնին)

Դոյ . Փա՛ւք քեզ Տէր Ա.Ճ. մեր .

Սրկ . Պո՛սխումէ<sup>3</sup> :

Դոյ . Ասէ Աստուած<sup>4</sup> :

<sup>1</sup> Որ Յոնարէն բառ է, եւ իւրեւնիւ  
Ուղիւղւոյնցէ՛ + որ Աւետարանին ուղարնէ՛ + :

<sup>2</sup> Աստուածաւոր հոգորով լեցե՛ + :

<sup>3</sup> Բառ Յոնն . նշանակէ Մոլի ընէ՛ + :

<sup>4</sup> Աստուած է ըսող :

(Ու .) ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ (Պ.Ե.)

(Ե. 1-20)

ԵՒ յերեկոյի չարաթուն՝ յո-  
րում լուսանայր միաշարաթին ,  
եկն Մարիամ Մագդաղենացի ,  
եւ միւս Մարիամն՝ տեսանել  
զգերեզմանու . Եւ անա՛ շարժու-  
մըն մեծ եղեւ . զի հրեշտակ  
Տեառն իջեալ յերկնից՝ մատու-  
ցեալ ՚ի բաց թաւալեցոյց զվէ-  
մըն ՚ի դրանց անտի , եւ նըս-  
տէր ՚ի վերայ նորա : Եւ էր  
տեսիլ նորա իբրեւ զփայլակն ,  
եւ հանդերձ նորա սպիտակ  
իբրեւ զձիւն : Եւ յահէ անտի  
նորա խոռոյեցան պահապանքն ,  
եւ եղնն իբրեւ զմեռեալս :  
Պատասխանի ետ հրեշտակն՝ եւ  
ասէ ցկանայսն . Մի՛ երկնչիք  
դուք , գիտեմ զի զՅիսուս  
զխաչելեալն խնդրէք . չէ աստ ,  
քանզի Յարեաւ , որպէս ա-

ասցն . եկա՛յք տեսէ՛ք զտեղին ուր կայր : Եւ վազվազակի երթա՛յք ասացէ՛ք աշակերտացն նորա՝ թէ Յարեա՛ւ . եւ ահա՛ յառաջանայ քան զձեզ ՚ի Գալիլեա , անդ տեսանիցէք զնա . ահա ասացի ձեզ :

Եւ ելեալ վազվազակի ՚ի գերեզմանէ անտի ահիւ եւ խընդութեամբ բազմաւ՝ ընթանալին պատմել աշակերտացն : Եւ ահա պատահեաց նոցա Յիսուս , եւ ասէ . Ո՛ղջ էք : Եւ նոքա մատուցեալ կալան զոսս նորա , եւ երկիրպազին նմա : Յայնժամ ասէ ցնոսս Յիսուս . Մի՛ երկնչիք , երթա՛յք ասացէք եզբարցն խմոց՝ զի երթիցեն ՚ի Գալիլեա , եւ անդ տեսցեն զիս : Իբրեւ նոքա գնացին , ահա ոմանք ՚ի զօրականացն եկին ՚ի քաղաքն , եւ պատմեցին

քահանայապետիցն զամենայն որ ինչ եղեւն :

Եւ նոքա ժողովեալ հանդերձ ծերովքն խորհուրդ առեալ՝ արժաթ յոյժ ետուն զօրականացն , եւ ասեն . Աստաջիք՝ եթէ աշակերտքն նորա եկեալ զիշերի գողացան զնա՝ մինչ մեք ՚ի քուն էաք : Եւ եթէ լուր լիցի այդ առ զատաւորն , մեք հաճեսցուք զնա՝ եւ զձեզ անհօգս արասցուք : Եւ նոցա առեալ զարժաթն , արարին որպէս ուսանն . եւ ել համբաւս այս ՚ի Հրէից մինչեւ ցայսօր :

ԻՍԿ մետասան աշակերտքն գնացին ՚ի Գալիլեա ՚ի լեառնն՝ ուր ժամադիր եղեւ նոցա Յիսուս : Իբրեւ տեսին զնա , երկիրպազին նմա . եւ ոմանք յերկուացան : Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա՝ եւ

ասէ . Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկրի . որպէս առաքեաց զիս Հայր եւ ես առաքեմ զձեզ : Գնացէ՛ք այսուհետեւ՝ աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս . մրկըրտեցէ՛ք զնոսս յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ : Ուսուցէ՛ք նոցա պահել զամենայն՝ որ ինչ պատուիրեցի ձեզ . եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն առուրս , մինչեւ 'ի կատարած աշխարհի :

## ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Եւ շարած երեկոյ՝ որ միաշարածին (կիրակէին) կը լուսանար . եկաւ Մարիամ Մագդաղենացի եւ միւս Մարիամը տեսնել գերեզմանը . Եւ անս մեծ շարժ եղաւ . քանզի Տէրոջը հրեշտակն երկինքէն իջնելով , գնաց (գերեզմանին) դռնէն 'ի բաց ծաւալեցուց բարը , եւ անոր վրայ նստաւ : Եւ անոր տեսքը փայլակի պէս

էր , եւ անոր հանդերձները ձիւնի պէս ճերմակ . Եւ անոր ահէն պահապանները խռովեցան , եւ մեռածի պէս եղան :

Պատասխան տուաւ հրեշտակը եւ ըսաւ այն կիներուն . Մի վախնաք . զիտեմ որ Յիսուսը կը փնտտէք որ խաչուեցաւ , հոս չէ , քանզի Յարութիւն առաւ , ինչպէս որ ըսած էր . եկէք տեսէք այն տեղը՝ ուր դրուած էր : Եւ շուտով գացէք ըսէք , անոր աշակերտներուն , Քէ (մեռելներէն) Յարութիւն առաւ . Եւ անս ձեռնէ յառաջ կերթայ Գալիլեա , հոն պիտի տեսնէք զնս , անս ըսի ձեզ : Եւ անոնք շուտով գերեզմանէն ելան վախով եւ մեծ ուրախութիւնով , եւ կը վազէին պատմել աշակերտներուն : Եւ անս Յիսուս պատահեցաւ անոնց եւ ըսաւ . Ողջոյն ձեզ , եւ անոնք մօտենալով՝ բռնեցին անոր ոտքերը , եւ երկրպագութիւն ըրին անոր : Այն ատեն Յիսուս ըսաւ անոնց . Մի վախնաք . գացէք իմ եղբայրներուս ըսէք՝ որ Գալիլեա երթան եւ այն տեղ պիտի տեսնեն զիս :

Երբ անոնք կ'երթային՝ ահա (պահապան) զինուորներէն ոմանք քաղաքը եկան, և պատմեցին քահանայապետներուն, ամեն բան ինչ որ եղաւ. Եւ անոնք ձերբերուն հետ մէկտեղ ժողովուելով և խորհուրդ ընելով, շատ ստակ տուին զինուորներուն. Եւ ըսին. Ըսէք՝ Թէ Անոր աշակերտները զիշերով եկան գողցան զնա (զերեզմանէն,) երբ մեր կը քնանայինք: Եւ եթէ այս բանը դատաւորին ականջը հասնի, մեր կը հասնեցունեմք զնա, և զձեզ անհող (ապահով) կ'ընեմք. Եւ անոնք ստակը առին, և ըրին ինչպէս սորվեցան. և այս համբաւը (ձայնը) Հրէից մէջ տարածուեցաւ մինչեւ ցայս օր:

Իսկ տամեւմէկ աշակերտները զացին ի Գալիլեա այն լեռը՝ ուր ժամադիր եղած էր անոնց Յիսուս, երբոր տեսան զնա երկրպագութիւն ըրին անոր, բայց ոմանք տարակուսեցան: Եւ Յիսուս մօտենալով՝ խօսեցաւ անոնց և ըսաւ. Ամեն իշխանութիւն տրուեցաւ ինձ երկին-

քի և երկրի մէջ. ինչպէս Հայրը զիս շրկեց, նոյնպէս և ես զձեզ կը շրկեմ:

Դացէք այսուհետեւ, աշակերտեցէ՛ք բոլոր հեթանոսները (ազգերը), մկրտեցէ՛ք զանոնք յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Թորվեցուցէ՛ք անոնց՝ պահել ամեն ինչ որ պատուիրեցի ձեզ՝ և ահա ես ձեր հետեմ ամեն օր՝ մինչև աշխարհիս վերջը:

(ԲԶ.) ԱԻՏՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ (ԴԶ.)

(ՃԵ. 42-ՃԶ. 8)

ԵՒ իբրեւ երեկոյ եղեւ՝ քանզի ուրբաթ էր՝ որ ՚ի շաբաթն մտանէր, եկեալ Յովսէփ որ յԱրիմաթեայն էր՝ այր պարկեշտ նախարար, որ եւ ինքն իսկ ակնուռնէր արքայութեանն Աստուծոյ. համարձակեցաւ՝ եմուտ առ Պիղատոս, և ինդրեաց զմարմինն Յիսուսի. Եւ Պիղատոս զարմացաւ թէ այնչափ վաղ մեռաւ. և կոչեցեալ առ ինքն զհարիւրապետն, և հարց զնա և ասէ՝ թէ արդարեւ այնչափ

վաճող մեռաւ : Եւ իբրեւ ստուգեաց 'ի հարիւրապետէ անտի , շնորհեաց զմարմինն Յովսէփայ : Եւ Յովսէփ գնեաց կտաւ , եւ իջուցեալ զնա պատեաց կտաւոյն , եւ եզ 'ի գերեզմանի , որ էր փորեալ 'ի վիմէ , եւ թաւալեցոյց զվէմ մի 'ի զուռն գերեզմանին : Իսկ Մարիամ Մագդաղենացի եւ Մարիամ Յակովբայ եւ Յովսեայ , տեսին զտեղին ուր եղաւ :

Եի իբրեւ անց չարաթն , Մարիամ Մագդաղենացի եւ Մարիամ Յակովբայ եւ Սողովմէ , չոգան պատրաստեցին խուռնկս զի եկեսցեն օծցին զնա :

Եւ ընդ առաւօտս միաչարաթուն գան 'ի գերեզմանն ընդ արեւագայն , եւ ասէին ցմիմեանս . Ո՞վ թաւալեցուցէ մեզ զվէմն 'ի դրանց գերեզմանին :

Եւ հայեցեալ տեսին՝ զի թաւալեցուցեալ էր վէմն 'ի գերեզմանէն . քանզի էր մեծ յոյժ : Եւ մտեալ 'ի ներքս 'ի գերեզմանն՝ տեսին երիտասարդ մի զի նստէր ընդ աջմէ կողմանէ՝ զգեցեալ պատմուճան սպիտակ , եւ զարհուրեցան : Եւ նա ասէ ցնոսա . Մի՛ երկնչիք , զՅիսուս խնդրէք զնազովրեցի ըզխաչելեալն , Յարեա՛ւ՝ չէ աստ . ահաւաղիկ տեղին՝ ուր եղին զնա : Այլ երթայք ասացէք ցաշակերտս նորա՝ եւ ցՊետրոս , եթէ ահա յառաջագոյն երթայ քան զձեզ 'ի Գալիլեա , անդ տեսանիցէք զնա՝ որպէս ասացն ձեզ : Եւ իբրեւ լուան ելին եւ փախեան 'ի գերեզմանէն , քանզի զահի հարեալ էին . եւ ոչ ումեք ինչ ասացին , զի երկնչէին :

## ՔԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Եւ երբոր երեկոյ եղաւ, քանզի ուրբաթ էր որ շաբաթ կը մտնէր. Յովսէփ Արեւմամացի որ պարկեշտ նախարար մի էր, որ և ինք Աստուծոյ Թագաւորութեանը կ'սպասէր, Եկաւ ու համարձակութիւնով մտաւ Պիղատոսի բով, և խնդրեց Յիսուսի մարմինը:

Եւ Պիղատոս զարմացաւ, որ այնչափ շուտ մեռած է, և հարիւրապետը իւր բով կանչելով, հարցուց անոր և ըսաւ Թէ՛ իրաւ այնչափ շուտ մեռաւ. և երբ ստոյգն իմացաւ հարիւրապետէն, (Յիսուսի) մարմինը Յովսէփին շնորհեց: Եւ Յովսէփ կտաւ գնեց, և (խաչէն) վար իջեցունելով զնա, պատեց կտաւով, և դրաւ գերեզմանին մէջ, որ քարէ փորուած էր, և գերեզմանին դուռը քար մը զլորեց: Իսկ Մարիամ Մագդաղենացին, և Յակոբին և Յովսէփին (մայրը) Մարիամ, տեսան, այն տեղն ուր դրուեցաւ:

Եւ երբ շաբաթն անցաւ, Մարիամ Մագ-

դաղենացի և Յակոբին (մայրը) Մարիամ, և Սողոմէ, գնացին խոճնկեր պատրաստեցին, որ գան օծեն զնա: Եւ միաշաբաթի (կիրակի) առաւօտուն կանուխ՝ արեւը ծագելու առնն, եկան գերեզմանը, և իրարու կ'ըսէին. Ո՞վ պիտի թաւալեցունէ մեզ այս քարը գերեզմանին դռնէն: Եւ նայեցան տեսան, որ քարը գերեզմանէն թաւալեցուցած էր քանզի շատ մեծ էր: Եւ ներս գերեզմանը մտնելով, տեսան երիտասարդ մը որ աչ կողմը նստած էր ճերմակ պատմունան հագած, և զարհուրեցան: Եւ նա ըսաւ անոնց, Մի վախնաք, Յիսուս նազովրեցին կը փնտռէք, որ խաչուեցաւ, նա Յարութիւն առաւ, հոս չէ. ահա այն տեղն, ուր դրին զնա. Բայց գացէք, ըսէք անոր Աշակերտներուն և Պետրոսին, Թէ ահա ձեզմէ առաջ Իսաիլեա կ'երթայ. հոն պիտի տեսնէք զնա, ինչպէս որ ըսաւ ձեզ:

Եւ երբ լսեցին, ելան ու փախան գերեզմանէն, սաստիկ սարսափած, և մարդու բան չըսին, քանզի կը վախնային:

(Ա.Լ.) ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ (Գ.Լ.)  
(ԻԳ. 50 - ԻԳ-12)

ԵՒ աճա այր մի անուն Յովսէփ, որ էր նախարար՝ այր բարեգործ եւ արդար. սա չէր միաբանեալ ընդ խորհուրդս եւ ընդ գործս նոցա. յԱրևմաթեայ քաղաքէ Հրէից, որ եւ ինքն իսկ ակն ունէր արքայութեան Սատուծոյ: Սա մատուցեալ առ Պիղատոս՝ ինդրեաց զմարմինն Յիսուսի. եւ իջուցեալ զնա՝ պատեաց պատառակալաւ, եւ եղ ՚ի կռածոյ գերեզմանին, ուր չէր բնաւ զոք եղեալ: Եւ օրն էր ուրբաթ, եւ շաբաթ լուսանայր: Եւ երթային զհետ նորա կանայք՝ որ եկեալ էին ընդ նմա ՚ի Գալիլէս. տեսին զգերեզմանն, եւ որպէս եղաւ մարմին նորա: Իարձան եւ պատրաստեցին խունկս եւ

իւղս. եւ ՚ի շաբաթուն հանդարտեցին վասն պատուիրանին.

ԲԱՅՑ ՚ի միաշաբաթուն վաղ քաջ ընդ առաւօտն եկին ՚ի գերեզմանն, բերին զխունկսն զոր պատրաստեցեն. եւ այլ կանայք ընդ նոսա: Եւ գտին զվէմն թաւալեցուցեալ ՚ի գերեզմանէ անտի: Եւ մտեալ ՚ի ներքս՝ ոչ գտին զմարմինն Տեառն Յիսուսի: Եւ եղև ընդ հիանալն նոցա վասն այնորիկ, եւ աճա արք երկու հասին առ նոսա ՚ի հանդերձս լուսաւորս: Եւ իբրև զածի հարան, եւ խոնարհեցուցին զերեսս իւրեանց յերկիր, ասեն ցնոսա. Զի խրոքրէք զկենդանին ընդ մեռեալս. Զէ ասա, այլ Յարեաւ. յիշեցէք՝ որպէս խօսեցաւ ընդ ձեզ մինչ էրն ՚ի Գալիլիա, եւ ասէր թէ Պարտ է Որդոյ մար-



դոյ մասնիլ 'ի ձեռս մարդոց  
մեղաւորաց, եւ 'ի խաչ ելա-  
նել՝ եւ յերրորդ աւուր յառ-  
նել: Եւ յիշեցին զբանսն նորա:  
Եւ զարձան պատմեցին զայս  
ամենայն մետասանիցն, եւ այ-  
լոցն ամենեցուն: Եւ էին Մա-  
րիամ Մագդաղենացի եւ Յով-  
հաննա եւ Մարիամ Յակովբայ,  
եւ այլք ընդ նոսա՝ որ պատ-  
մեցին զայս առաքելոցն: Եւ  
երեւեցան առաջի նոցա շաղ-  
փաղփութիւն բանք նոցա եւ  
չհաւատային նոցա: Բայց Պետ-  
րոս յարուցեալ ընթացաւ 'ի  
գերեզմանն, եւ հայեցեալ տե-  
սանէ զկտաւան լոկ՝ զի կային.  
եւ զնաց՝ ընդ միտս զարմաց-  
եալ, թէ զինչ կղեւ:

## ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Եւ անս Յովսէփ անուեով մարդ մը՝ որ  
նախարար էր, ու բարեգործ և արդար  
մարդ, Սա չէր միտքանաժ անոնց (չրէից)  
խորհուրդին ու գործին. չրէից Արիմա-  
թիա քաղաքէն, որ և ինքն իսկ Աստուծոյ  
Թագաւորութեանը կը սպասէր: Սա Պի-  
ղատոսին երթալով, խնդրեց Յիսուսի մար-  
մինը: Եւ (խաչէն) իջեցունելով զնա՝  
պատեց կտաւով, և քարէ փորուած գե-  
րեզմանի մը մէջ դրաւ, ուր բնաւ մարդ  
դրուած չէր:

Եւ այն օրը ուրբաժ էր, և շաբաժ կը  
լուանար: Եւ անոր ետեւէն կ'երթային  
այն կիները, որ անոր հետ Գալիլեայէն  
եկած էին, տեսան գերեզմանը՝ և Թէ  
ինչպէս դրուեցաւ անոր մարմինը: Եւ  
դառնալով խունկեր և իւղեր պատրաս-  
տեցին, և շաբաժ օրը հանգիստ առին,  
պատուիրանին համեմատ:

Բայց միաշարաձի (կիրակի) օրը առա-  
ւօտուն շատ կանուխ գերեզման եկան, և

բերին խոնկերը՝ զոր պատրաստած էին, և ուրիշ կանայք եւս անոնց հետո՝ Եւ զըտամ՝ քարը զերեզմանէն մէկդի թաւալած, և ներս մտնելով, Տէր Յիսուսի մարմինը չգտան։ Եւ եղաւ որ երբ անոնք այս բանին համար ապշած կեցեր էին, ահա երկու մարդիկ լուսաւոր հանդերձներով հասան անոնց բով։ Եւ երբ վախով լեցուած իրենց երեսները խոնարհեցուցին ի գետին՝ ըսին անոնց. *Ինչո՞ւ ողջը մեռելներուն հետ կը վնտռէք։ Հոս չէ՛նա, այլ Յարեաւ։*

Միտքերնիդ բերէք ինչպէս խօսեցաւ ձեզ, երբ զեռ Դավիթիս էր, ըսելով թէ՛ Պարտ է որ՝ Որդին մարդոց մեղաւոր մարդոց ձեռքը մատնուի, և խաչը ելնէ և երբորդ օրը Յարուածին առնու։ Եւ Յիշեցին անոր խօսքը։ Եւ դարձան պատմեցին այս ամենը մետասանից (տասնեւմէկ աշակերտներուն) և բոլոր ուրիշներուն։ Եւ էին Մարիամ՝ Մագդաղենացի և Յովհաննա և Մարիամ Յակոբին (մայրը,) և անոնց հետ ուրիշներ, որ այս ամեն բաները

Ուստի անոնք պատմեցին։ Եւ անոնց առջեւ շաղիաղփուծին (փուճ խօսքեր) երեցաւ անոնց զրուցածը, և չէին հաւատար անոնց։

Բայց Պետրոս ելաւ վազեց դէպ ի գերեզման, և նայելով տեսաւ որ միայն կտաները կային, և զնաց իւր մտքովը զարմանալով եղածին վրայ։

(Ս.Ձ.) (Դ.Ձ.)

ԱՆԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ԺԹ. 38-Ի. 18:

**ՅԵՏ** այսօրիկ աղաչեաց՝ զՊիղատոս Յովսէփ, որ յԱրեմաթեայ էր՝ աշակերտ Յիսուսի՝ ի ծածուկ՝ վասն աշին չբէից, զի բարձրէ զմարմինն Յիսուսի. և հրամայեաց Պիղատոս. եկն և եբարձ զնա։ Եկն և Նիկողեմոս՝ որ եկեալն էր առ Յիսուս ՚ի զիշերի զառաջինն. և երբ զմուսս խառն ընդ հայուէս՝ իբրև լտիրս հարիւր։

Ասին զմարմինն Յիսուսի, և

պատեցին կտաւովք՝ խնկովք  
հանդերձ, որպէս օրէն էր Հրէից  
պատել: Եւ էր ՚ի տեղւոջն յո-  
րում խաչեցաւ՝ պարտէզ. եւ ի  
պարտիզի անդ գերեզմանն նոր,  
յորում ոչ ոք երբէք էր եղեալ:  
Անդ վասն ուրբաթուն Հրէից՝ զի  
մօտ էր գերեզմանն՝ եղին զՅի-  
սուս:

Եւ ի միաշարաթւոջն Մարիամ  
Մագթաղենացի գայ առաւօ-  
տուն ընդ արշալոյսն ՚ի գե-  
րեզմանն անդր, եւ տեսանէ  
զվէմն բարձեալ ՚ի դրաց գե-  
րեզմանին: Ապա ընթանայ՝ եւ  
գայ առ Սիմոն Պետրոս եւ առ  
միւս աշակերան՝ զոր սիրէրն  
Յիսուս, եւ ասէ ցնոսա. Բար-  
ձին զՏէր ՚ի գերեզմանէ ան-  
տի, եւ ոչ գտեմ՝ ո՛ւր եղին  
զնա: Եւ Պետրոս եւ միւս ա-  
շակերանն՝ եւ զային ՚ի գերեզ-

մանն: Ընթանային երկօրեան  
՚ի միասին. եւ միւս աշակեր-  
տըն յառաջեաց ընթացաւ վա-  
ղագոյն քան զՊետրոս՝ եւ եկն  
նախ ՚ի գերեզմանն: Եւ խոնար-  
հեալ տեսանէ՝ զի կային անդ  
կտաւքն, բայց ՚ի ներքս ոչ ե-  
մուտ: Եկն եւ Սիմոն Պետրոս՝  
որ զայրն զկնի նորա. եւ ե-  
մուտ ի գերեզմանն, եւ տեսա-  
նէ զկտաւսն՝ զի կային անդ.  
Եւ վարչամակն որ էր ՚ի զլուխ  
նորա՝ ոչ ընդ այլ կտաւսն կայր,  
այլ ուրոյն ծալեալ ի մի կողմն:  
Յայնժամ եմուտ եւ միւս աշա-  
կերանն, որ եկեալն էր յառա-  
ջագոյն ՚ի գերեզմանն, ետես  
եւ հաւատաց. Զի չեւ եւս գի-  
տէին զգիրս՝ թէ պարտ է նմա  
՚ի մեռելոց յառնել: Չոգան  
դարձեալ առ միմեանս աշա-  
կերաքն: Բայց Մարիամ կայր

արտաքոյ գերեզմանին՝ եւ լայր . եւ մինչդեռ լայր՝ խոնարհեցաւ ի գերեզմանն . Եւ տեսանէ երկուս հրեշտակս 'ի սպիտակս , զի նստէին մի 'ի մարից եւ մի յանուորից՝ ուր կայր մարմին Յիսուսի : Եւ նոքա ասեն ցնա . Կին դու , զի՞ լաս . ասէ ցնոսա . Ձի բարձին զՏէրն իմ 'ի գերեզմանէ աստի , եւ ոչ զիտեմ՝ ո՛ւր եղին զնա : Զայս իբրեւ ասաց , զարձաւ 'ի թիկունս կոյս , եւ տեսանէ զՅիսուս զի կայր . եւ ոչ զիտէր թէ Յիսուս իցէ : Ասէ ցնա Յիսուս . Կին դու՛ զի՞ լաս , զո՞ խնդրես . նմա այսպէս թուեցաւ՝ թէ պարտիզպանն իցէ , ասէ ցնա . Տէր՝ եթէ դու բարձեր զնա , ասա ինձ ո՛ւր եղիր զնա , զի ես առից զնա : Ասէ ցնա Յիսուս . Մարիամ .

եւ նա զարձաւ , եւ ասէ ցնա Երրայեցերէն . Բարուհի , ( որ թարգմանի՝ Վարդապետ ) : Ասէ ցնա Յիսուս . Մի՛ մերձեանար յիս , զի չեւ եւս երեսլ եմ առ Հայր իմ . այլ երթ դու առ եղբարսն իմ , եւ ասա ցնոսա : Ելանեմ ես առ Հայրն իմ՝ եւ առ Հայր ձեր , եւ Աստուածն իմ՝ եւ Աստուած ձեր : Գայ Մարիամ Մարգարեհնացի՝ եւ պատմէ աշակերտացն , եթէ ետես նա զՏէր , եւ զայս ինչ ասաց ցնա :

#### ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Յետ այսորիկ՝ Յովսէփ Արիմաժացի որ Յիսուսի աշակերտ եղած էր բայց ծածուկ՝ Հրէաներէն վախնալուն համար , աղաչեց Պիղատոսին , որ Յիսուսի մարմինը վերցունէ . և Պիղատոս հրաման տուաւ , ուստի եկաւ և վերցուց :

Եկաւ նաեւ Նիկողիմոս , որ առաջուց զիչերով Յիսուսի եկած էր , և բերաւ հա-

րիւր լիարի չափ զմուռսի և հալուէի (ա նուշահոտ խունկերու՝ և իւղերու և հոտով փայտերու) խառնուրդ: Եւ առին Յիսուսի մարմինը պատեցին խունկերով կտաւներու մէջ, ինչպէս որ Հրէից սովորութիւն էր պատել: Եւ այժտեղ ուր խաչուեցաւ՝ պարտէզ մը կար, և պարտէզին մէջ նոր գերեզման, ուր բնաւ մարդ զրուած չէր: Հրէից ուրբաթին համար, հոն դրին զՅիսուս, քանզի գերեզմանը մօտ էր:

Եւ միաշարաթի (կիրակի) օրը Մարիամ Մագդաղենացին առաւօտուն արշալուսի ատեն (դեռ չ'լուսցած) գերեզման կուգայ և կը տեսնէ որ քարը գերեզմանին զընէն վերցուած է: Յետոյ կը վազէ կուգայ Սիմոն Պետրոսին և միւս աշակերտին (Յովհաննէսին) զոր կը սիրէր Յիսուս, և կ'ըսէ անոնց. Տէրը գերեզմանէն վերցուցին, և չեմ գիտեր ուր դրին զնա: Ելաւ Պետրոս և միւս աշակերտը և դէպի գերեզման կուգային: Երկուքն ի միասին կը

վազէին: Բայց միւս աշակերտը Պետրոսէն աւելի շուտ վազելով, եկաւ նախ ի գերեզման: Եւ ծոռելով նայեցաւ և տեսաւ որ կտաւները հոն կը կենային, բայց ներս չ'մտաւ: Հասաւ և Սիմոն Պետրոս, որ անոր ետեւէն կուգար, և գերեզման մտաւ, և տեսաւ կտաւները որ հոն կը կենային. Եւ վարշամակը որ անոր զուխն էր, միւս կտաւներուն հետ չէր, այլ զատ ծալլած մէկ կողմ զրուած էր:

Այն ատեն ներս մտաւ միւս աշակերտն որ առաջուց գերեզման եկած էր. տեսաւ և հաւատաց: Քանզի դեռ զրուածը չէին գիտեր Թէ՛ Պարտ էր որ նա մեռելներէն յարութիւն առնու. Յետոյ աշակերտները զացին դարձեալ առ միմեանս:

Բայց Մարիամ գերեզմանին դուրսը կեցած կուլար. և երբ կուլար, ծոռեցաւ դէպ ի գերեզման նայելու, և տեսաւ երկու հրեշտակ ներմակ հանդերձներով, որ նստած էին՝ մին գլխուն կողմը և միւսը ոտքերուն, ուր կայր Յիսուսի մարմինը:

Եւ անոնք ըսին անոր. Կին դու, ինչո՞ւ կուլաս: Ըսաւ անոնց. Վասն զի իմ Տէրս վերցուցին գերեզմանէն, և չեմ գիտեր ո՞ւր դրին զնա: Երբ զայս ըսաւ, ետին դարձաւ. և տեսաւ զՅիսուս որ կեցած էր, և չէր գիտեր Թէ Յիսուան էր:

Յիսուս ըսաւ անոր, Կին դու, ինչո՞ւ կուլաս, զո՞վ կը խնդրես: Անոր այնպէս թուեցաւ, Թէ պարտիզպանն էր, ըսաւ անոր. Տէր, Թէ որ դուն վերցուցիր զնա, ըսէ ինձ՝ ո՞ւր դրիր զայն, որ ես առնու՞մ զնա: Յիսուս ըսաւ անոր, Մտրիամ. և նա դարձաւ ու ըսաւ անոր Եբրայեցերէն՝ Բարունի. (որ կը նշանակէ Վարդապետ) Յիսուս ըսաւ անոր, ինձ մի մօտենար, բանձի դեռ Հօրս բով ելած չեմ, այլ դուն զնա եղբայրներուս, և ըսէ անոնց. Ես կեղնեմ իմ Հօրս բով և ձեր Հօրը բով, և իմ Աստուծոյս բով, և ձեր Աստուծոյն բով: Մտրիամ Մագդաղենացի եկաւ՝ և պատմեց աշակերտներուն, Թէ տեսաւ Տէրը, և Թէ այս բաներն ըսաւ անոր:

ԵՐԳ՝ ԶԿՆԻ ԻՒՂՍԲԵՐԻՑ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ

Փանօք Յարութեան քո Տէր, ո՞չ դողարեցայց Գրիստոս, օրհնել զքեզ զամենայն աւուրս կենդանութեան իմոյ:

Փանօք Յարութեան քո Տէր, ո՞չ դողարեցայց Յիսուս, զովել զքեզ զամենայն աւուրս կենդանութեան իմոյ:

Ես ոչ դողարեցայց Փրկիչ, փառաւորել զքեզ զամենայն աւուրս կենդանութեան իմոյ:

Ի զիշերի. Աս օրհն. Լուսապայծաւ, ԵՐԳ ԱՂՈՒՀՍՅԻ (Ֆէդուհոյ) ԿԻՒԱԿԷԻՑ

Զամենայն աւուրս կենաց իմոց, ես ոչ դողարեցայց օրհնել զքեզ Գրիստոս Փրկիչդ աշխարհի,

Երէցս կրկնեաւ, և շեղինն Բարձր աստուծոյս:

Ի զիշերի համբարձք զձեռս ձեր՝ ի սրբութիւն, եւ օրհնեցէք զՏէր:

Աս օրհնեցէք ամենայն ծառայք  
Տեառն զՏէր ի սրբութիւն. եւ օրհնե-  
ցէք զՏէր:

### Գալսեան Ողորմեան

Գոար լուսեղէն զուարթնոցն ըս-  
պատէին մեծի Գալսեանն Տեառն.  
Եւ երգէին երգ նոր. օրհնեալ է  
քո սուրբ Գալուսդ:

### Զատկի

Լուսապայծառ Հրեշտակն նսե-  
լով ՚ի կենսառու գերեզմանին. եւ ա-  
ւետէր կանանցն Յարեաւ Ասուած:

### Համբարձման

Համբարձէք իշխանք զբրունս ձեր  
ի վեր. եւ գայ մտանէ փառօր ՚ի  
փառս:

### Գալսեան Հոգւոյն Սրբոյ

Իջեալ Հոգին յառաքեալսն. եւ  
հրագինեաց զընտեալսն անկէզ ՚ի

սուրբ վերնասունն եւ հանգեաւ նո-  
բօր յազգս մարդիան զանազան լեզ-  
ուաց բաժանմամբ:

### Վարդավառի

Յնձայ Թաքօր Հերմօնիւ. եւ Ա.  
ուարեալքն ՚ի Հայրական ծայնէն  
Թմբեալք. եւ կենդանեաց եւ մեռե-  
լոց Տէր ծանուցին զբեզ Մովսէս եւ  
Հեղիաս:

### Խաչի

Այսօր եկեալ կամաւ Տէրն ՚ի խաչ.  
եւ տարածեաց զազառկս իւր ՚ի նմա:

### ԾՆՆԴԵԱՆ

Հոյք հոգեղէնք ընդ հովիւսն  
բարձրէին ՚ի յանբանից մտուր զճանն  
բազմեալ. եւ մոզքն աստեղքն զու-  
շակեալ՝ մասուցին զընծայսն խոր-  
հրդոյ:

### Տեառնընդառաջի

Քառասնօրեայ տոյս եւ Տէրն օ-  
րինաղիր տնօրինաբար եկն ՚ի տաճարն:

եւ Սիմէան զգուէր զրկօրն. եւ յօրինաց կապից լուծուան հայցեր 'ի կեանս Աւեսարանի:

ՔՍՐՈՋ

ԶԿՆԻ ԻԻՂԱԲԵՐԻՅ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ԵՒ ԵՐԳՈՅՆ

(Ա. 24.) Զուարճացեալքս մեծաւ ուրախութեամբ աւետեօք Յարութեան Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի: Որ եղև պառզ եւ անդրանիկ ամենայն ննջեցելոց. խորտակեաց զգրունս դժոխաց. եւ ելոյժ գրանութիւն մահու. եւ ետ յոյս հաստատութեան վերստին նորոգման կենդանութեան ամենայն մարդկան:

Խնդրեացուք հաւատով 'ի Փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիս-

տոսէ՝ զի զմեզ արժանի արասցէ յարութեան իւրոյ. կերպարանակից առնել զմարմին խոնարհութեան մերոյ՝ ըստ նմանութեան մարմնոյ փառաց իւրոյ: Վասն զի զայս խոստացաւ, զմեծ եւ զանճառելի շնորհս պարգևել սիրելեաց իւրոց ճշմարիտն Աստուած Յիսուս Քրիստոս Տէր մեր կեցո՛ւ եւ ողոր:

ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Մեր՝ որ մեծ ուրախութիւնով զուարճացանք մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի Յարութիւն առած ըլլալուն աւետիսովք, որ ամեն ննջեցեալներուն (առաջին) պտուղն եւ անդրանիկն եղաւ, որ խորտակեց դժոխքին զոները, եւ մահուան բռնութիւնը քակեց, եւ հաստատուն յոյս տուաւ կրկին կենդանութեան եւ նորոգութեան ամեն մարդոց:

Խնդրեմք հաւատով մեր Փրկիչ Յիսուս



Քրիստոսէն՝ որ արժանի ընէ զմեզ իւր նման յարուծիւն առնուլ, և մեր (մարդկային) խոնարհութեան մարմինը՝ կերպարանակից ընէ իւր փառաւոր մարմինն նմանութեանը:

Վասն զի այսպէս խոստացաւ. մեծ և անճառելի շնորհք պարգեւել իւր սիրելիներուն, ճշմարիտ Աստուած Յիսուս Քրիստոս մեր Տէրը, կեցն և ողորմեաւ:

## Ա Ղ Օ Յ Ք

**Ա**մենակեցոյց, ճշմարիտ, սուրբ, մեծի Յարութեանն Քրիստոսի Առաւօժոյ մերոյ, վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Եւ ասի Փօս. ՍԱՂՄՈՍ Ծ.

(Ա. Գ.) Ողորմեա՛ ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քու՛մ, ըստ բազում գթութեան քու՛մ քաւեա՛ զանօրէնութիւնս իմ:

Առաւել լուա՛ զիս յանօրէնութենէ իմմէ, և ի մեղաց իմոց սուրբ արա զիս: Զանօրէնութիւնս իմ ես ինձէն զիսեմ, և և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ:

Քեզ միայն մեղայ, Տէր, և չար առաջի քո արարի:

Ուրպէս արդար եղիցիս ի բանս քո, և յաղթող ՚ի դասել գաս:

Անօրէնութեամբ յղացաւ, և ՚ի մեղս ծնաւ զիս մայր իմ:

Դու, Տէր, զճշմարտութիւն սիրեցիր, զանյայս և զձածկեալս իմաստութեամբ քով յայննեցեր ինձ:

Յօդեա՛ յիս մշակաւ և սուրբ եղէց, լուա՛ և բան զծիւն ոպիսակ եղէց:

Լսելի արա՛ ինձ Տէր, զցնծութիւն և զուրախութիւն, և ցնծացեն ոսկերք իմ սառապետար:

Դարձն գերեսս քո ՚ի մեղաց իմոց, և զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա՛ յինէն:

Սիրս սուրբ հաստատեա՛ յիս, Աստուած, եւ հոգի ուղիղ նարոգեա՛ ՚ի փորի իմուամ:

Մի՛ ընկենուր զիս, Տէր, յերեսաց քոց, եւ զՀոգի քո սուրբ մի հաներ յինէն:

Տուր ինձ ցնծութիւն փրկութեան քո, եւ հոգևով պետութեան քո հաստատեա՛ զիս:

Ասուցից անորինաց զճանապարհս քո, եւ ամբարիշտք առ քեզ դարձցին: Փրկեա զիս յարեմէ, Աստուած Աստուած փրկութեան իմոյ. ցնծացէ լեզու իմ յարդարութեան քում:

Տէր, եթէ զշրթունս իմ բանտս, քիւրան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո:

Թէ՛ կամեցեալ էիր պատարագս մասուցանէաք, բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար:

Պատարագ Աստուծոյ՝ հոգի խոնարհ. զսիրս սուրբ եւ զհոգի խոնարհ՝ Աստուած ոչ արհամարհէ:

Բարի արա՛. Տէր, կամօք քովք Սիրովնի, եւ շինեսցին պարիսպքն Երուսաղէմի:

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան, յորժամ ուխտից պատարագս հանցեն ՚ի սեղան քո զուարակս:

Փառք Հօր եւ. Այժմ եւ միշտ.

(Եւ ապա Ուրբէթի Շարականը կ'երգեն, (Ա.-Գ.) դասէն, որ ատեն աղօթատէրը պարտի ամբողջ կարգալ Փոխը.)

### ՔԱՐՈՉ՝ ԶԿՆԻ ՈՂՈՐՄԵԱՅԻՆ

(Ա.-Գ.) Երկրպագեմք քեզ Տէր Աստուած մեր՝ անցեալքս ընդ երկարութիւն զիշերիս, եւ կանխեալքս ի տեղուջ խոտտովանութեան, մատուցանեմք զառաւտու աղօթս մեր: Զքեզ Տէր օրհնեմք եւ փառաւորեմք:

եւ զքէն Տէր զօհանամբ . որ արժանի արարեր զգիշերս խաղաղութեամբ անցուցանել եւ հասանիլ 'ի ժամ առաւօտուս :

Արժանաւորեան զմեզ, Տէր, անճառ խոստմանց քոց, զոր խոստացար սիրելիաց քոց ճշմարիտդ Աստուած՝ Յիսուս Քրիստոս Տէր մեր . կեցո՛ եւ ողորմեան : Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում . ասացո՛ւք ամենեքեան միաբանութեամբ :

Տէր ողոր. Տէր ողոր. Տէր. ողոր.

### ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Երկրպագութիւն կ'ընեմք քեզ Տէր Աստուած մեր, մեր՝ որ այս գիշերիս երկարութենէն անցանք, և կանուխ այս խոստովանութեան տեղս զպլով՝ մեր առաւօտեան աղօթքը կը մատուցանեմք :

Կ'օրհնեմք ու կը փառաւորեմք զքեզ ,

եւ կը զօհանամբ քենէ ո՛վ Տէր. որ արժանի ըրիր այս գիշերս խաղաղութիւնով անցունել և առաւօտու ժամուս հասնիլ :

Արժամի ըրէ զմեզ Տէր, քու անպատմելի խոստումներուդ, որ խոստացար քու սիրելիներուդ, ո՛վ ճշմարիտ Աստուած Յիսուս Քրիստոս Տէր մեր, ապրեցու և ողորմէ :

Ողորմէ մեզ Տէր Աստուած մեր, քու մեծ ողորմութեանդ համեմատ. ըսեմք ամենքս միաբանութիւնով :

Տէր ողորմեան. Տէր ողորմեան. Տէր ողորմեան.

### ՄԱՂԹԱՆՔ

Ողորմած՝ գթած՝ ճշմարիտ՝ սուրբ եւ մեծի Յարութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ . այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Եւ ասի ՓՈՒՍ ՍՍԱՄՈՍ ՃԵՆ.

(Աշկ.) Ալէլուիա Ալէլուիա.

Օրհնեցէք զՏէր յերկնից. օրհնեցէք զնա 'ի բարձանց.

Օրհնեցէք զնա ամենայն հրեշտակր նորա. օրհնեցէք զնա ամենայն զօրութիւնք նորա:

Օրհնեցէք զնա արեգակն եւ լուսին. օրհնեցէք զնա ամենայն աստեղք եւ լոյսք:

Օրհնեցէք զնա երկինք երկնից. եւ ջուրք որ 'ի վերոյ քան զերկինս, օրհնեցէք զանուն Տեառն:

Չի նա ասաց եւ եղեն, հրամայեաց եւ հաստատեցան:

Կացոյց զնոսա յաւիտեանս յաւիտենից. սահման եղ, եւ ոչ անցանեն:

Օրհնեցէք զՏէր յերկրէ՝ վիշապք եւ ամենայն խորք:

Հուր եւ կարկուռ, ձիւն եւ սառն, հողմ եւ մրրիկ, որք, առնէք զբան նորա:

Լերինք եւ ամենայն բարձունք, ծառք պաշարերք եւ ամենայն մայրք: Դագանք եւ ամենայն անասունք, սողունք եւ ամենայն թռչունք թեւաւորք:

Թագաւորք երկրի եւ զօրք իւրեանց, իշխանք եւ ամենայն դասաւորք երկրի: Երիտասարդք եւ կուսանք, ծերք եւ զոյսք՝ օրհնեցէք զանուն Տեառն:

Բարձրացաւ անուն նորա միայն, խոստովանութիւն նմա յերկինս եւ յերկրի:

Բարձր առնէ Տէր զեղջիւր ժողովրդեան իւրոյ. օրհնութիւն նմա յամենայն սրբոց նորա. յորդոցն Խրայէլի ժողովոյն՝ որ մեծ է առ Տէր:

ՍԱՂՄՈՍ ճեթ.

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն 'ի նոր, օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց:

Ուրախասցի Իւրայէլ յԱրարիչ իւր.  
որդիք Սիուփի ցնծասցեն 'ի Թագա-  
ւորն իւրեանց:

Օրհնեսցեն՝ զանուն նորա օրհնու-  
թեամբ, սաղմոսիւք եւ օրհնութեամբ  
սաղմոս երգեսցեն նմա:

Հաճի Տէր ընդ ժողովուրդիւր սուրբ  
եւ բարձր առնէ զհեզս 'ի փրկութեան:

Պարծեսցին սուրբն փառօք, եւ  
ցնծասցեն 'ի հանգիստ իւրեանց, եւ  
բարձր արասցեն զկսուած բերանօք  
իւրեանց:

Սուր երկասյրի ետ 'ի ձեռս նոցա,  
առնուլ զհասուցումն 'ի հեթանոսաց  
'ի յանդիմանութիւն ամենայն ժողո-  
վրոց:

Ի կապել զԹագաւորս նոցա կա-  
պանօք, զգորավարս նոցա ձեռնա-  
կապօք երկաթեօք:

Առնել նոցա դասաստանս ըստ գրոց,  
եւ փաւր այս են ամենայն սրբոց  
նորա:

## ՍԱՂՄՈՍ ԶՄ.

Օրհնեցէք զկսուած 'ի սրբութեան  
նորա, օրհնեցէք զնա 'ի հասուսու-  
թեան 'ի զօրութեան նորա:

Օրհնեցէք զնա 'ի զօրութեան նորա,  
օրհնեցէք զնա 'ի բազում մեծութեան  
նորա:

Օրհնեցէք զնա 'ի ձայն օրհնութեան  
օրհնեցէք զնա սաղմոսիւք եւ օրհ-  
նութեամբ:

Օրհնեցէք զնա ցնծութեամբ, զո-  
վեցէք զնա ուրախութեամբ:

Օրհնեցէք զնա 'ի բանս քաղցր, զո-  
վեցէք զնա 'ի բարբառ լսելի:

Օրհնեցէք զնա 'ի ձայն զօրութեան.  
ամենայն հոգիք օրհնեցէք զՏէր:

Փառք Հօր եւ Այժմ եւ միշտ.

(Սոյն ատեն Տէր յԵՐԷՆԵՅԻ Շարականն  
կերգեն (Ա-Գ.) զասէն և աղօթաւէրը կրնայ  
ամբողջացունել Փոխը առանձին կարդա-  
լով: Եւ Շարականէն անմիջապէս ետքը  
կ'երգեն)

## ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՌԱԽՕՏՈՒ

Ասացեալ յսոմարմաց (հրեշտակներէն), այլ եւ ի Կոստանդնուպոլսի Ս. Ժողովոյն ՃԾ (150) Հայրապետացն, զոր պէտք է բոլոր ժողովրդովք եւ ձայնիւ երգել միաբերան:

(Աշկ.) ՓԱՌԻՒՅ՝ ՚ի բարձունս Աստուծոյ. եւ յերկիր խաղաղութիւն ՚ի մարդիկ հաճութիւն:

Եւ օրհնութիւն քեզ ՚ի բարձունս, օրհնեալ ես Տէր Աստուած մեր. օրհնեմք զքեզ եւ զովեմք զքեզ:

Խոստովանիմք Տէր զքեզ եւ երկիրպագանեմք քեզ. փառաւորեմք զքեզ. գոհանամք Տէր զքէն, վասն մեծի փառաց քոց:

Տէր թագաւոր Սուրբդ երկնային, Աստուած եւ Հայր ամենակալ:

Տէր եւ Որդի Հօր Միածին Յի-

սուս Քրիստոս եւ Սուրբ Որդի:

Տէր Աստուած Գառն Աստուծոյ եւ Որդի Հօր. որ առերզմերա<sup>(1)</sup> ՚ի Կուսէն:

Ողորմեցար, բարձեր<sup>(2)</sup> զմեզս աշխարհի. եւ արդ ընկալ զազաչանս մեր:

Սուրբդ որ նստիս ընդ աջմէ Հօր՝ ողորմեաց մեզ:

Զի դու միայն սուրբ, դու միայն բարձրեալ ես, դու միայն Տէր մեր Յիսուս Քրիստոս:

Տէր եւ Հօգիդ Սուրբ՝ որ ՚ի փառս Աստուած ընդ Հօր. Ամէն:

Եի յամենայն ժամ օրհնեմք զքեզ. Տէր եւ զովեմք զԱնուն սուրբ քո՝ յաւիտեանս եւ յաւիտեանս յաւիտենից:

Արժանի արա՛, Տէր, զօրս զայս խաղաղութեամբ, եւ անանց մեզաց պահեա՛ զմեզ:

<sup>1</sup>Մեր բնութեւն. <sup>2</sup>Վերջացիր:

Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց . զովեալ եւ փառաւորեալ է Անուն սուրբ քո յաւիտեանս . Ամէն :

Օրհնեալ Տէր , ուսո՛ ինձ զարգարութիւնս քո . (Երեմ. ԿԷԿԵՄ՝) :

Տէր , ապաւէն եղեր մեր յագգէ յագգ : Ես աղաչեմ Տէր ողորմեալ ինձ եւ բժշկեալ զանձն իմ . ես մեղայ քեզ : Յոյց մեզ Տէր զողորմութիւնս քո , եւ զփրկութիւնս քո աճա՛ր մեզ : Տէր , ողորմութիւն քո յաւիտեան . զղործս ձեռաց քոց մի՛ անտես առներ :

Տէր իմ , զքեզ ապաւէն ինձ արարի . ուսո՛ ինձ առնել զկամս քո՝ զի զո՛ւ ես Աստուած իմ :

Ի քէն է , Տէր , աղբիւր կենդանութեան . եւ լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս :

Մագեա՛ զողորմութիւնս քո՝ որք ճանաչին զքեզ , Տէր :

## Մ Ա Ղ Յ Ա Ն Ք

Փանք , պատիւ եւ երկրպագութիւն՝ ի բարձունս՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ . այժմ եւ միշտ եւ յաւիտեանս . Ամէն :

☞ (Սոյն Փ. 4 է Բ. 23-24-ը երգն որ Տեառն մերոյ Ծննդեան զիշերն՝ ի Հրեշտակաց սկզբնաւորեալ է, (Տես Ղուկ. Բ. 14.) Ապա Առաքելական ականդումեամբ հաստատուեցաւ ի Ս. Հայրապետաց Կ. Պոլսոյ Ա. Տիեզերական ժողովոյն (յամին 381) մինչեւ ի Տէր եւ Հոգիւր սուրբն :

Իսկ կցորդ Ե- յաճեալն շատ Գրեգորի երգն, յետոյ է ասացեալ ՚ի Ս. Հարց Տիեզերական ժողովոյն Եփեսոսի (յամին 431) իբր ձեռնարկ՝ այսինքն վաւերացումառաջնոյն մէջ գրուած դաւանութեան՝ յԱմենասուրբ Երրորդութիւնն, ըստ վկայութեան ԽԻՍՐՈՎ Եպիսկոպոսի Անձեւացեաց, հօրն Ս Գ. Նաբեկացւոյ, ի մեկնութեան ժամագրքի :

## ԱՌԱՒՕՏՈՒ ԵՐԳՔ

## Յարուսեան կարգաւ

(Ա. Գ.) Ձկնի Փառք 'ի բարձունսի:

(Ա. Զ. Ա. Կ.) Չարուծիւն զՓրկչին  
օրհնեսցուք. զՓրկչին մերոյ օրհնես-  
ցուք զՅարուծիւն:

Յարեաւ Ասուած. եւ ցուեցան  
ամենայն թշնամիր նորա:

(Բ. Զ. Բ. Կ.) Չարուծիւն զՓրկչին  
օրհնեսցուք. զՓրկչին մերոյ. օրհ.

Չարուցեալն զՔրիստոս օրհնես-  
ցուք. եւ զՅարուծիւն նորա փառա-  
ւորեսցուք:

(Գ. Զ. Գ. Կ.) Չարուծիւն զՓրկչին  
օրհնեսցուք, զՓրկչին մերոյ. օրհ.

Որ եկն 'ի բարձունս, եւ զերեաց  
զգերուծիւն. էառ աւար, բաշխեաց  
պարգևս եւ ետ օրդոց մարդկան:

(Գ. Զ. Գ. Կ.) Չարուծիւն զՓրկչին  
օրհնեսցուք. զՓրկչին մերոյ. օրհ.

Որ համբերեաց Խաչի, եւ եղաւ 'ի  
նորափոր լիմի. եւ ասուածային  
Յարուծեամբն զմահացեալսն զերա-  
բերեաց 'ի կեանս:

## Սրգ Համբարձմանն Քրիստոսի

Չարուծիւն զՓրկչին օրհնես-  
ցուք. զՓրկչին մերոյ օրհնեսցուք  
զՅարուծիւն:

Համբարձաւ Ասուած օրհնու-  
ծեամբ. եւ Տէր մեր ծայնիւ փողոյ:

## Գալսեան Հոգւոյն Սրբոյ

Չգալուս Հոգւոյն օրհնեսցուք.  
զՀոգւոյն Սրբոյ օրհնեսցուք զԳալուս:  
Յեկեղեցիս բարեբանեցէք զԱս-  
ուած, եւ զՏէր յաղբերացն Իսայէլի:

## Ծաղկազարդի

(Կ. Բ.) Այսօր մեանէ թաղաւ որն մեր  
Քրիստոս 'ի յերուսաղէմ նոր բաղար  
Դաւթի: Ընդ առաջ եկին ձերքն ս-



սույր ծիծենեօք. եւ զԱՍՏՈՒԱԾՈՐԳԻՆ  
փառաւորէին:

(ԲԵ.) Ի սկզբանէ Տէր զերկիր հաստա-  
սեցեր. եւ զործք ձեռաց քոց եր-  
կինք են: Նոքա կորնչին եւ դու կաս  
եւ մնա յաւիտեան:

(ԴԵ.) Տարցին Թագաւորի կուսանք  
զհետ նորա. եւ զընկերս նորա տարցին  
նմա. Ածցին ցնծուծեամբ եւ ուրա-  
խութեամբ. եւ տարցին 'ի սաճար  
Թագաւորի:

(ԴԵ.) Խորհեցան եւ խօսեցան զչա-  
րուծիւն. եւ զապիրատուծիւն 'ի բար-  
ձունս խորհեցան: Եղին յերկինս զբե-  
րանս իւրեանց. եւ զեզուս իւրեանց  
աժէին զերկրաւ:

(ԵԵ.) Որտացան զանձն արդարոյ. եւ  
զարիւն անբիծ պատաւոր առնէին:  
Եղեւ Տէր ապաւէն իմ. Աստուած  
օգնական յուսոյ իմոյ:

(ՈՒՐ.) Մասնեցայ եւ ոչ երանէի.  
աչք իմ սկարացան յաղբատուծենէ:

Աղագակեցի առ Տէր զօրհանապաղ  
եւ համբարձի առ քեզ զձեռս իմ:

(ՍԴԵ.) Փոխանակսիրոյ իմոյ մասնէին  
զիս. այլ ես յայօթս կայի:

Փ. Ի. Աստուած օրհնութեան իմոյ մի  
լուր. զի բերան մեղաւորի, բերան  
նենգաւորի բացաւ 'ի վերայ իմ:

(ԵԱԲ.) Եղին զիս 'ի զբի ներքնումն.  
'ի խաւարի եւ 'ի սուտերս մահու:

Յիս հաստացաւ արժանութիւն քո.  
զամենայն զքօսանս քո ամեր 'ի  
վերայ իմ:

(ՍԴԵ.) Եղին զիս 'ի զբի ներքնումն.  
'ի խաւարի եւ 'ի սուտերս մահու:

Փ. Ի. Տէր Աստուած փրկութեան  
իմոյ 'ի սուտէ կարգացի եւ զիշերի  
առաջի քոյ:

## Մահուան

(ՍԴԵ.) Դարձ անձն իմ 'ի հանգիս  
քո. զի Տէր կոչեաց զբեզ:

Փ. Ի. Սիրեցի զի լուիցէ Տէր զձայն

աղօթից ինոց զի խոնարհեցոյց զունկն  
իւր առ իս. եւ ես յառուս իմ կար-  
գացի առ նա :

### Եկեղեցոյ

Տան քում վայելէ սրբութիւն  
Տէր, ընդ երկայն առուս :

Տէր Թագաւորեաց վայելչութիւն  
զգեցաւ. զգեցաւ Տէր զօրութիւն ընդ  
մէջ իւր էա՞ծ :

### Տաղանակի եւ Վերափոխման

Արի Տէր 'ի հանգիստ քո. զու եւ  
պանակ կտակի սրբութեան քո :  
Յիշեա՛ Տէր զԲաբելոն եւ զամենայն  
հեղու թիւն նորա :

### Վարդափառի

Քո են երկինքեւ քոէ երկիր, զաշ-  
խարհս լիս իւրով զու հաստեցեր :  
Զհիւսիս եւ զհարաւ զու աւարեր.  
Թափօր եւ Զերմօն յանուն քո զըն-  
ծացեն :

### Փննդեան եւ Աւետեաց

Իջցէ որպէս զանձրեւ 'ի վերա  
զեղման. որպէս ցօղ զի ցօղէ յերկիր :  
Ասուած զիրաւունս քո արքայի  
սուր. եւ զարգարութիւնս քո որդւոյ  
Թագաւորի :

### Խաչի

Ետուր երկիւղածաց քոց նշան. զի  
ապրեացին յերեսոց աղեղան :

Որպէս փրկեցան սիրելիք քո. կե-  
ցն աջով քով եւ լուր մեզ :

### Յայտնութեան եւ Տեսանքնդ- առաջի

Արեգակն արգարութեան ախօր  
յայտեցար ազգի մարդիան. մարդ  
եղեալ սրբեցեր զջուսս վերածնեալ  
զմեզ միհրսութեամբն Սրբայ Հոգւոյն :

Ի վայելչութիւն փառաց սրբու-  
թեան քոյ, ի յարգանդէ յառաջ քան  
զարուսեակ ծնայ զքեզ. մարդ եղ-  
եալ սրբէ :

(Ապա այս ՔԱՐՈՋԸ կ'ըսուի (ԱՅ՛) զա սէն որ միայն Կիրակամուտքի, Կիրակիի և Յինանց օրերուն յատուկ է):

**Աստացուք ամեննքեան միաբանութեամբ. Տէր ողորմեա՛ :**

Ամենքս միաբանութիւնով ըսեմք. Տէր ողորմեա՛ :

**Իւրեք՛ և Ժող. Տէր ողորմեա՛ :**

Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի եւ հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ զՏէր աղաչեսցուք : — Տէր ողորմեա՛ :

Ամենայն աշխարհի խաղաղութեան և սուրբ եկեղեցւոյ հաստատութեանը համար՝ Տէրոջը աղաչեմք :

Վասն ամենայն սուրբ եւ ուղղափառ եպիսկոպոսաց, զՏէր աղաչեսցուք : — Տէր ողորմեա՛ :

Ամեն սուրբ և ուղղափառ եպիսկոպոսներուն համար Տէրոջը աղաչեմք :

Վասն Հայրապետին մերոյ

անառն (այս անառն) կենաց՝ եւ փրկութեան հողւոյ նորին, զՏէր աղաչեսցուք : — Տէր ողորմեա՛ :

Մեր (այս անառն) Հայրապետին կենացը, և անոր հոգիին փրկութեանը համար՝ Տէրոջը աղաչեմք :

Վասն վարդապետաց՝ քահանայից՝ սարկաւազաց՝ դպրաց, եւ ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ, զՏէր աղ. — Տէր ողորմեա՛ :

Վարդապետներուն, քահանաներուն, սարկաւազներուն, դպիրներուն, և եկեղեցւոյ բոլոր ուխտեալ որդիներուն համար՝ Տէրոջը աղաչեմք :

Վասն բարեպաշտ թագաւորաց եւ աստուածասէր իշխանաց՝ զօրավարաց եւ զօրաց նոցին, զՏէր աղաչեսցուք : — Տէր ողորմեա՛ :

Բարեպաշտ Յազաւորներուն և Աստուածասէր իշխաններուն, զօրապետներուն և անոնց զօրբերուն համար՝ Տէրոջը աղաչեմք :

Վասն զի Տէրն ամենակալ հնազանդեցուօցէ առաջի նոցա զամենայն պատերազմունս թշնամեաց, զՏէր աղա. — Տէր ողբր:

Որպէս զի ամենակալ Տէրը՝ անոնց առջեւ հնազանդեցունէ թշնամիներուն ամեն պատերազմները, Տէրոջը աղաչեմք:

Յաղագս հարց եւ եղբարցն մերոց՝ որք ի գերութեան են եւ ՚ի չար ծառայութեան, զՏէր աղաչեսցուք: — Տէր ողորմեա:

Մեր հայրերուն և եղբայրներուն համար, որ գերութեան ու չարտար ծառայութեան մէջ են, Տէրոջը աղաչեմք:

Յաղագս ճանապարհորդաց եւ նաւորդաց՝ խաղաղութեամբ հասանիլ ի նաւահանդիստն բարութեան. զՏէր աղա: — Տէր ողոր:

Ճանապարհորդներուն և նաւով գացողներուն համար՝ որ խաղաղութիւնով բարի նաւահանդիստը (հռէէէէ րէրէրէէ) հասնին, Տէրոջը աղաչեմք:

Յաղագս հիւանդաց եւ ամենայն վշտացելոց՝ փութապէս առողջութեան, զՏէր ա: — Տէր ո:

Հիւանդներուն և ամեն վիշտ (շտ) կրողներուն համար՝ որ շուտով առողջութիւն գանեն, Տէրոջը աղաչեմք:

Յաղագս բարեխառնութեան օգոց՝ անձրեւաց քաղցրութեան եւ պաղոց տոատութեան, զՏէր աղաչեսցուք: — Տէր ողորմեա:

Օգերուն բարեխառն ըլլալուն, և քաղցր անձրեւներու, և պտուղներու առատութեանը համար, Տէրոջը աղաչեմք:

Յաղագս ուխտատուաց եւ պաղաւթերից ՚ի սուրբ եկեղեցի Աստուծոյ, զՏէր աղ: — Տէր ող:

Աստուծոյ սուրբ եկեղեցին ուխտի եւ կողներուն և ընծայ բերողներուն համար, Տէրոջը աղաչեմք:

Եւ յաղագս այնոցիկ, որք մատնեալք են ի ձեռս անօրինաց՝

վասն անուանն Քրիստոսի, զՏէր  
աղաչեցուք: Դու և ժող. Ազա-  
տեա՛ Տէր եւ սղորմեա՛:

Կաեւ անոնց համար՝ որ անօրէններու  
ձեռք մատնուած են Քրիստոսի անունին  
համար. Տէրոջը աղաչեմք:

Յաղագս հոգւոյն հանգուցե-  
լոց, որք ճշմարիտ եւ ուղիղ հա-  
ւատով ՚ի Քրիստոս ննջեցին,  
զՏէր աղաչեա: — Յիշեա՛ Տէր եւ:

Հանգուցեալ հոգիներուն համար՝ որ  
ճշմարիտ եւ ուղիղ հաւատով ՚ի Քրիստոս  
ննջեցին, Տէրոջը աղաչեմք:

Յաղագս փրկելոյ զմեզ Տեառն  
Աստուծոյ՝ յերեւելի եւ յաներե-  
ւոյթ թշնամւոյն, զՏէր: — Տէր ո.

Որպէս զի մեր Տէր Աստուածը փրկէ  
զմեզ երեւելի և աներեւոյթ թշնամիէն  
Տէրոջը աղաչեմք. Տէր սղորմեա:

Մ Ա Ղ Յ Ա Ն Ք

Բարեխոս ունիմք սուրբ ըզ-  
Մարիամ զԱստուածածինն զփա-

առօրեալ ևւ օրհնեալ միշտ  
սուրբ կոյնն. սուրբ զՅովհանն-  
նէս Մկրտիչն, սուրբ զՍտեփան-  
նոս նախապիայն, սուրբ զԱռա-  
քեալան եւ զՄարգարէան, զարի՛  
եւ զյողթող սուրբ զՎկայան,  
եւ զմեծ Խոստովանողն Քրիս-  
տոսի զՀայրապետն մեր զՏէր  
սուրբն Գրիգորիոս Լուսաւորիչն  
Հայաստանեայց աշխարհի:

(Սրի.) Յիշեալիք եւ զամենայն  
սուրբս եւ նօքօք, զՏէր աղա:  
Դու և ժող. Յիշեա՛ Տէր եւ սղոր:

Չառաւօտս լուսոյ եւ զառա-  
ջիկայ օրս խաղաղութեամբ ան-  
ցուցանել՝ հաւատով ՚ի Տեառնէ  
խնդրեացուք: — Ծնորհեա՛ Տէր:

ՉՀրեշտակ խաղաղութեանն.

Չքառութիւն եւ զթողութի.

Չսրբոյ խաչին մեծ եւ կար.

Եւ եւս միաբան վասն ճշմա.

1 Արի. + = Չ.

Չանձինս մեր եւ զմիմեանս.  
Ողորմեաց մեզ Տէր Աստուած.  
Տէր ողոր. Տէր սղոր. Տէր սղոր.

## Ք Ա Ր Ո Ջ

Ծննդեան Քրիստոսի. եւ Աւետեաց եւ  
Փոխման Ս. Աստուածածնին. եւ  
Տեսանքնդաւաջին:

(Աշէ.) Մայր սուրբ սքանչելի  
լուսոյն. որ զԱստուածն ամե-  
նայն յաւիտեանց յորովայնի քում  
կրեցեր եւ ցնծութիւն աշխարհի  
ծնար զբանն Աստուած. աղաչ:  
Դպ. և Ժող. Մայր սուրբ բարե:

(Ո՛վ սուրբ կոյս Մարիամ, որ սքանչելի  
լուսին (Քրիստոսի) Մայրն ես, որ յաւիտե-  
նական Աստուածը բռն որովայնիդ մէջ  
կրեցիր, և Բանն Աստուածը՝ աշխարհիս  
ցնծութիւն ծնար, կնդաչեմք:)

Աղաչեա՛ վասն մեր՝ զառ ՚ի  
քէն զմարմնացեալն Աստուած,

որ խոնարհեցաւ ՚ի Հայրական  
ձոցոյ, էառ մարմինը սամարղղիա-  
յին բնութեանս՝ առնել խաղա-  
ղութիւն յերկինս եւ յերկրի, ա-  
ղաչեմք: — Մայր սուրբ բարե:  
(Աղաչէ մեզ համար քնէ մարմին առ-  
նող Աստուծոյն, որ իւր Հօր ձոցէն խո-  
նարհեցաւ, մարղկային բնութեան հա-  
մեմատ մարմին առաւ, խաղաղութիւն  
ընելու համար երկինքի ու երկրի մէջ:)

Աղաչ. Ներել մեզ, անտես առ-  
նել զյանցանս մեր. եւ սույլ օգ-  
նականութիւն ընդդիմակաց լի-  
նել հակառակամարտիցն ՚ի պա-  
տերազմի, աղաւ — Մայր սուրբ:

(Աղաչէ . . . Որ ներէ մեզ, եւ մեր յան-  
ցանքն անտես ընէ, և օգնականութիւն տայ  
մեզ՝ որ կարենամք դէմ դնել մեր հակա-  
աակորդներուն մեզ դէմ պատերազմած  
ատենը, կ'աղաչեմք:)

Աղաչ. Զի լռեսցին պատերազ-  
մունք. զադարեացին յարձակ-

մունք թ շնամեաց . անկեացի սէր  
և արգարութիւն 'ի յերկրի , ա-  
ղաչեմք : — Մայր սուրբ բարե :

(Աղաչէ . . . Որ լոնն պատերազմի ձայ  
ներն , դադրին թշնամիներուն յարձակում  
ներէ : և հաստատուի աշխարհի մէջ սէր  
և արգարութիւն . կ'աղաչեմք )

Աղաչ . Աճեցուցանել յերկրի  
մերում զքաղցր բղխումն աղբե-  
րաց . զառատ պաղարեւութիւն  
բուսոց եւ անկոց . առ 'ի զուար-  
ճալի լինել ամենայն հարկաւոր  
պիտոյից մերոց , աղաւ — Մայր :

(Աղաչէ . . . Որ ամեցունէ մեր երկրին  
մէջ անոյշ աղբիւրներու բղխումը և բոյ-  
սերուն ու տունկերուն առատ պտղա-  
բերութիւն պարգևէ , որպէսզի մեր ամեն  
հարկաւոր պիտոյքը զուարճալի ըլլան . կա .

Աղաչ . Զի միաբանեացէ զՆկե-  
ղեցի իւր սուրբ . շինեալ ի վե-  
րայ հիման Առաքելոց եւ Մար-  
գարէից . պահել անարատ մին-

չեւ յօր երեւելոյ գալստեան իւ-  
րոյ . աղաչեմք : — Մայր սուրբ :

(Աղաչէ . . . Որ միաբան ընէ Առաք-  
եալներու և Մարգարէներու հիման վը-  
րայ շինուած իւր սուրբ եկեղեցին . և ա-  
նարատ պահէ մինչեւ իր գալստեան (դա-  
տաստանին) օրը . կ'աղաչեմք )

Աղաչեալ վասն մեր Սրբունի  
զՄիածին քօ զՈրդին . եւ վասն  
հոգւոցն հանգուցելոց՝ ընդունիլ  
յարքայութիւնն երկնից , եւ տալ  
մասն եւ բաժին ընդ սուրբս ա-  
մենայն . աղաչեմք :

Կա . և Ժող . Յիշեալ Տէր եւ ողոր :

(Աղաչէ մեզ համար , սվ Սրբունի , քօ  
Միածին Որդոյդ , նաեւ հանգուցեալ հո-  
գիներուն համար , որ ընդունի զանոնք  
երկինքի արքայութեան մէջ , և իւր ամեն  
սուրբերուն հետ՝ անոնց ևս մասն և բաժին  
տայ , կ'աղաչեմք )

Եւ ևս առաւել զյորդորումն  
սիրոյ , եւ զգործս բարեաց պար-

դեւել մեզ խնդրեմք :

Դպ. Լ Ժպ. ՏՈՒՐ մեզ Տէր Աստ :

(Եւ ամենէն աւելի կը խնդրեմք, որ սիրոյ յորդորմունք, եւ բարիգոր ծեր ընել պարգեւէ մեզ) :

Զանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք :

Դպ. Լ Ժպ. Բեզ Տեառնդ յանձն եզ :

(Մեր անձերն եւ մէկզմէկ ամենակալ Տէր Աստուծոյ յանձնեմք) :

Ողորմեաց մեզ, Տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քու՛մ. ասացաւք ամենեքեան միտքանութեամբ :

Դպ. Լ Ժպ. Տէր սղ. Տէր ո. Տէր ո :

(Ողորմէ մեզ ով Տէր Աստուած մեր, քու մեծ ողորմութեանդ համեմատ, ըսեմք ամենքս միաբանութիւնով) :

Ա Ղ Օ Թ Ք

(Ա. 4.) Գոհանամք զքէն Տէր Աստուած մեր, որ երեւելի լու-

սով քով զուարճացուցեր զամենայն արարածս քո. իսկ իմանալի լուսով պատուիրանաց քոց՝ զամենեսնան լուսաորեցեր զհաւատացեալս ՚ի քեզ : Զօրացս եւ զմեզ Տէր, ՚ի պահպանութիւն պատուիրանաց քոց՝ ՚ի տուրնջեանս յայտնիկ եւ յամենայն ժամանակի : Որպէս զի լուսաորեալ մտօք՝ միշտ զհաճոյս քո արասցուք, եւ հանգերձեալ քարեացդ հասցուք ընդ ամենայն սուրբս քո : Ծնործօք եւ մարգատիրութեամբ Տեառնդ մերոյ եւ Փրկչիդ Յիսուսի Քրիստոսի. որում վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտե :

ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

կը զոհոնամք քնէ Տէր Աստուած մեր. որ երեւելի (աչքով տեսնուելու) լուսով զուարճացուցիր քու ամեն արարածներդ :



խկ բու պատուիրանացդ իմանալի (մարով իմանալու) լուսով, ամեն բեզ հաւատացողները լուսաւորեցիր:

Զօրութիւն տուր մեզ, Տէր, պահել բու պատուիրանքդ այս ցերեկիս մէջ. և ամեն ժամանակ: Որպէս զի լուսաւորեալ մըտքով՝ միշտ բեզ հաճելի եղածն ընեմք, և պատրաստած բարիքներուդ հասնիմք բու ամեն սուրբերուդ հետ: Ենորհիւ ու մարդասիրութիւնով մեր Տէր և Փրկիչ Յիսուս Քրիստոսի, որում կը վայլէ փառք, իշխանութիւն և պատիւ, հիմայ և միշտ և յաւիտեանս. Ամէն:

Խաղաղութիւն ամենեեցուն  
Ասուծոյ երկիրպագեացուք:

**Խ**աղաղութիւն մեր և կեանք որ 'ի Հօրէ առաքեցար, Միածին Որդի Աստուծոյ, Տէր մեր և Փրկիչ Յիսուս Քրիստոս: Տուր մեզ զխաղաղութիւն քո՝ զոր շնորհեցեր սրբոց քոց Առաքելոց. փչմամբ քո ի նոսա զկեն-

դանացուցիչ և զամենազօր Հոգիդ քո Սուրբ: Որպէս զի և մեր խաղաղացեալք յամենայն աշխարհական սահեցմանց՝ լիցուք տաճար և բնակարան Աստուծային շնորհացդ և գոհանալով փառաւորեսցուք զբեզ ընդ Հօր և Սուրբ Հոգւոյդ, Քրիստոս Աստուած մեր, այժմ և միշտ և յաւիտեանս յաւի:

#### ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Մեր խաղաղութիւնն ու կեանքը որ Հօրմէ զրկուեցար, ո՞վ Միածին՝ Որդի Աստուծոյ Տէր մեր և Փրկիչ Յիսուս Քրիստոս. տուր մեզ բու խաղաղութիւնդ՝ զոր բու սուրբ Առաքեալներուդ շնորհեցիր, փչելով անոնց վրայ բու կենդանացնող ու ամենազօր Սուրբ Հոգիդ:

Որպէս զի մեր ևս՝ խաղաղութեամբ աշխարհային ամեն փորձանքէ, բու Աստուծային շնորհացդ տաճար ու բնակարան ըլլամք, և գոհանալով փառաւորեմք

զքեզ չօր և Սուրբ Հոգին հետ, ով Քրիստոս Աստուած մեր, հիմա և միշտ և յաւրանան. Ամէն:

**Եւ առի սմբբ ուստոսք Երզնի  
րս պատեանի**

Յուրք Աւետեաց, Ծննդեան եւ Թրչի  
փասութեան զայս ասա (Ա-բ.) դառն:

**Սուրբ Աստուած. Սուրբ եւ  
հօր. Սուրբ եւ անմահ. որ  
Յայաննեցար վան մեր. ողորմեա  
մեա մեզ (Երբեք չբնեւ):**

Քառասնորեայ Գալսեանն Քրիստոսի.  
եւ Ծաղկազարդին.

**Սուրբ Աստուած... որ Եկիր  
եւ զալոց ես. ողորմեա մեզ:**

Ուրբաթու Մասնութեան զիշերին.

**Սուրբ Աստուած... որ Մատնեցար  
վան մեր. ողորմեա:**

Ուրբաթու ճաշուն, եւ ամենայն օր  
նից Սրբոց, Խաչի եւ Եկեղեցւոյ, այլ  
եւ յաւուրս Պանոց.

**Սուրբ Աստուած... որ Խաչեցար  
վան մեր. ողորմեա:**  
Ուրբաթու երեկոյն եւ Շաբաթու  
զիշերոյն.

**Սուրբ Աստուած... որ Թաղեցար  
վան մեր ողորմեա:**

Զատիկի եւ ամենայն Յարութեան Կիրակէից.

**Սուրբ Աստուած... որ Յարեար  
'ի մեռելոց. ողորմեա մեզ:**  
Համբարձմանն Քրիստոսի

**Սուրբ Աստուած... որ Համբարձար  
փառօք առ Հայր. ողորմեա:**  
Գալսեան Հոգւոյն Սրբոյ.

**Սուրբ Աստուած... որ Եկիր  
եւ հանգեար յԱռաքեալսն, ողորմեա:**  
Վարդավառին.

**Սուրբ Աստուած... որ Յայտ-**

նեցար 'ի Թաբոր լեռինն . ողոր .

Փոխման սուրբ Աստուածածնին .

Սուրբ Աստուած . . . որ եկիր  
'ի փոխունն Մօր քո եւ կուսի ո .

Թովմայի Առաքելոյն ասացեալ

Փառաւորեալ եւ օրհնեալ  
միշտ սուրբ Կոյս Աստուածածին  
Մարիամ մայր Քրիստոսի . մատո՛  
զաղաչանս մեր՝ Որդւոյ քոյ եւ  
Աստուծոյ մերոյ :



**ՍՈՒՐ** ԱՍՏՈՒԿԵ ԵՐԳԸ՝ որ երեք  
սրբեան փառաբանութիւն կ'ըսուի, ամեն  
Քրիստոնէից մէջ յարգի է իբրեւ Առա-  
քելականոց Երգի Յոյնք եւ Լատինք ի ղէմս  
Երրորդութեան երգել սկսան ղեռ մի  
քանի հարիւր տարի առաջ . բայց մեր  
Հայաստանեայց Ս. Եկեղեցին ի ղէմս  
Քրիստոսի կ'երգէ միշտ, հաստատուն  
մնալով Ս. Հօրն մերոյ Լուսաւորչի Աւան-  
դութեան վրայ :

Մ Ա Ղ Ք Ա Ն Ք

Փրկել զմեզ 'ի փորձութենէ  
եւ յամենայն վտանգից մերոց :

Ք Ա Ր Ո Ջ

Եւ եւս խաղաղութեան զՏէր .

Վասն լսելի լինելոյ Տեառն  
Աստուծոյ ձայնի աղաչանաց մե-  
րոց՝ բարեխօսութեամբ Սուրբ  
Աստուածածնին . եւ իջանելոյ  
'ի վերայ մեր ողորմութեան եւ  
զթութեան Տեառն Աստուծոյ :  
Ամենակալ Տէր Աստուած մեր,  
կեցո՛ եւ ողորմեա՛ :

Օրհնութիւն եւ փառք Հօր  
եւ Որդւոյ եւ Հոգ. Այժմ եւ :

Եւ ամի սուգսս ձօ՛ր . ձայնիւ

(Աւետարանէն առաջ)

(Ա.-ք.) Եղիցի՛ անուն Տեառն  
օրհնեալ յայսմ հետէ մինչեւ յա-  
ւիտեան :

Օրհնեցէք մանկունք զՏէր,  
 եւ օրհնեցէք զանունն Տեառն :  
 Եղիցին անուն Տեառն օրհնեալ,  
 յայսմ հետէ մինչեւ յաւիտեան :  
 Յարեւելից մինչեւ 'ի մուտս  
 արեւու՝ օրհնեալ է անունն Տան :  
 Բարձր է 'ի վերայ ամենայն  
 ազգաց Տէր, եւ յերկինս են փառք  
 նորա :

Ո՞վ է որպէս Տէր Աստուած  
 մեր 'ի բարձունս բնակեալ, եւ  
 զխոնարհս տեսանէ յերկինս եւ  
 յերկրի :

Յարուցանէ զազքատս յերկ-  
 րէ, եւ բարձր առնէ զտառապ-  
 եալս յազրեւաց :

Նստուցանէ զնոսա իշխանս՝  
 ընդ իշխանս ժողովրդեան իւրոյ :  
 Բնակեցուցանէ զամուլն 'ի  
 տան ուրախամիտ . որպէս մայր  
 որզւովք բերկրեալ :

Ալէլուիա Օրթի .

Կիրակի օրեր այս տեղ կը կար-  
 դացուի Աւետարանն Բէյլուսէւն, ըստ  
 Զայնին. եւ Տէրունական Տօներուն՝ Սաղ-  
 մոս եւ Գիրք (Ա. Գ.) եւ Աւետարան (Ա. Գ.)  
 դասէն, ըստ Տօնացուցին, եւ ապա կ'եր-  
 գեն հետեւեալ զեղեցիկ Երգն Ս. Ներսէսի  
 Շնորհաւոյն :

## Ե Ր Գ

Վասն առաջնոյ աւուր Միաւա-  
 բարին, եւ 'ի խառնուրդ Արար-  
 չութեան, եւ 'ի Յարութեան  
 Գրիսոսի

## Կ Ի Ի Ս Կ Է

(Ա. Գ.) Նորաստեղծեալ Բանն յանէից  
 Ի սկզբանէ զերկինս երկնից .  
 եւ զերկնային զօրս անմարմնոց  
 Իմանալեացըն զըւարձնաց .  
 եւ զգալի սարերց քառից  
 Հսկառակաց միաբանից .  
 Որով յաւէս փառաբանի .  
 Երուզուած իւնն անճառելի :

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

(Նոր ստեղծեց Բանն Աստուած յանէից  
(Ինչն) և սկիզբէն՝ բովանդակ երկինքը,  
և երկնաւոր ու մարմին չունեցող հրեշ-  
տակներու բազմութիւնը, և չորս զգալի  
տարերքը (ԴԵ ԷՆ ԻՐՈՒՆ, ԸՆԴԵ, ՕՐ Ե ԿՈՂ)  
որք թէև իրարու հակառակ՝ բայց միա-  
բան են Աստուծոյ զօրութիւնով. որով  
(ԵՅՆԷՐԴՆՈՒՆ ԴՐԵՐԵՆԷ) միշտ կը փա-  
ռարանուի անճառելի երբորդութիւնն)

Երեքսրբեան Մի Տէրութիւն  
Միով բնութեամբ Աստուածութիւն  
Լոյսն որ անեղ առաջական՝  
Ասաց լինել լոյս եղական.  
Չոր եւ ծագեաց յօրն առաջին  
Միաշարամ կիւրակէին. — Որով.

(Երիցս Սուրբ և մէկ Տէրութիւնն, և մէկ  
բնութիւնով Աստուածութիւնն, որ անեղ  
(ԳԷԻՔ ԴԵ ԻՆԴՆՈՒՆ) լոյս է և արարիչ լուսոյ-  
հրամայեց որ լոյսը ըլլայ. որ և ծագեց  
առաջին օրը՝ որ միաշարամ կամ կիրակի

կ'ըսուի, որով միշտ կը փառարանուի  
անճառելի երբորդութիւնն)

Բարունօրէն բացատրեցուց  
Ձծածկեալ խորհուրդն ծանիցուք  
Ձի լոյսն անեսս իմանալի  
Մարու հոգւոց սեսանելի.  
Ի սոյն ծագեաց միաշարամ  
Մեզ յարութեան սուրբ ճառագայթ.  
Եկա՛յք փրկեալք ընդ Չուարժնոյն  
Տնք օրհնութիւն Յարուցելոյն:

(Բարունօրէն (ԵՐԵՐԵՆԷ) բացատրե-  
լով ճանչեամք այս ծածկուած խորհուր-  
դը. քանզի իմանալի լոյսն (Քրիստոս) որ  
մարուր հոգիներու միայն կը տեսնուի.  
այս կիրակի աւուր մէջ ծագեց մեր վրայ  
իրեն Յարութեան սուրբ լոյսին ճառա-  
գայթը. Ուստի եկէք, ո՞վ փրկուածներ,  
հրեշտակին հետ օրհնութիւն տուէք յա-  
րուցեալ Քրիստոսին)

Սէրը սիրով խոնարհեցար  
Ի փրկութիւն մեր մարմնացար

Նովին մարմնովրն խաչեցար  
 Ի գերեզման մահու եղար.  
 Այսօր Յարեար սասուածարար  
 Ի հրեշտակաց քարոզեցար. — Եկայք.

(Սէրդ ճշմարիտ Յիսուս, որ սիրով խոնարհեցար, և մեր փրկութեան համար մարմին առիր. և նոյն մարմնով խաչուեցար և մեռելոց գերեզմանին մէջ դրուեցար. այսօր Յարուժիւն առիր Աստուծային զօրութիւնով, և հրեշտակներէն քարոզեցար. Ուստի եկէք, ով փրկուածներ, հրեշտակին հետ օրհնուժիւն. . .)

Երեւեցար խընկարտիցն  
 Յողջոյն կենաց ուրախակից.  
 Եւ Դի լերինըն Գալիլիա  
 Աւարելոց մեհասանից.  
 Արժանացո՞ գմեզ ընդ նոսին՝  
 Զլեզ սեասնել յօրըն վերջին. Եկայք.

(Երեւեցար խոնկ բերող կանանց, եւ ուրախակի կենաց ողջոյնը (— Երեւեց) տուիր. և Գալիլեայի լեռան մէջ տան և

մէկ Աւարեալներուն տեսուեցար. արժանի ըրէ և զմեզ, Տէր, որ անոնց հետ վերջին օրը զքեզ տեսնեմք: Ուստի եկէք ով փրկուածներ, հրեշտակին հետ օրհնուժիւն տուէք յարուցեալ Քրիստոսին:)

Սիրովն որդիք զարձիր  
 Հարսին լուսոյ սուք աւետիք  
 Ե՞թէ Փետայն քո յարուցեալ  
 Յաղժեաց մահու իշխանութեամբ.  
 Գայ պրակէ ըզքեզ փառօք  
 Ե՛լ ընդ առաջ պճնեալ զարդուք.  
 Երգեա՛ երգ նոր Յարուցելոյն,  
 Ննչեցելոց կենաց պրօպոյն:

(Սի՞ծի զաւակներ, արժնեքք, լուսոյ հարսին (Եկէ՛ղե՛ք. . .) աւետիս տուէք եւ ըսէք, Թէ քու Փետայդ յարութիւն առնելով՝ յաղժեց մահուան իւր իշխանութիւնով, և կուգայ պրակել զքեզ փառքով. ուստի զարդարուելով առջեւ ելիր, նոր երգերով փառարանէ յարուցեալ Քրիստոսն, որ ննչեցելոց կեանքին առաջին պտուղն է:)

(Մե՛ք պե՛տե՛ք կե՛ք. . . կենե՛ք. . . երգե՛ք. . .)

## ՔԱՐՈՉ

ԿԻՐԱԿԷԻԿ, ԵՆ ԱՅՐՈՅ ՏԷՐՈՆՆԱԿԱՆ  
ՏՕՆԻԿ .

(Ա.Ղ.) Խնդրեսցուք հաւատով  
միաբանութեամբ 'ի Տեառնէ՛ զի  
զողորմութեան զչնորհս իւր ա-  
րասցէ ի վերայ մեր : Տէրն ա-  
մենափալ կեցուցէ եւ ողոր .

Դ. Ե. Ժ. Կեցո՛ւ, Տէր :  
Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ողոր.

## ԱՂՕԹՔ

(Ա.Ղ.) Քում ամենազոր եւ հրա-  
շալի Յարութեանդ Քրիստոս Աս-  
տուած մեր՝ երկիրպագանեն  
զօրք հրեշտակաց . զի դու միայն  
ունիս զանմահութիւն բնակեալդ  
'ի լոյս անմատոյց : Եւ մեք հո-  
զեղէն արարածքս՝ խոնարհեալք  
երկիւղիւ երկիրպագանեմք . ըզ-  
սուրբ եւ զհրաշալի եւ զյազթող

զՅարութիւնդ քո օրհնեմք եւ  
փառաւորեմք : Եւ ընդ երկնա-  
յին զօրան մատուցանեմք զօրհ-  
նութիւն եւ զփառս՝ ընդ Հօր եւ  
ընդ Սրբոյ Հօգւոյդ . այժմ եւ :  
Օրհնեալ Տէր մեր : Հայր մեր :

## ՄԱՂԹԱՆՔ

Չսաղմոսերգութիւնս եւ զա-  
ղաչանս ընկալցի՛ մարդասէրն  
Աստուած 'ի հաճոյս բարերար  
կամաց իւրոց . մեր մեղաց եւ  
բազում յանցանացն թողութիւն  
չնորհեսցէ . ի շարեաց փրկեա-  
ցէ . 'ի մեղաց պահեսցէ . եւ  
նմա փառք յաւիտեանս . Ամէն :

Եւ ապա կ'սկսի խորհուրդ

ՍՈՒՐ ՊԱՏԱՐԳԻ







Houasse-Lebel.

Paris.

ԽՈՐՀՈՒՐԴ

## ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ

(ժամերար Գանատայն Աւան դատուն  
մտնելով Ս. Գառարացի Զգեստը կը  
նագնի, յատկացեալ Սաղմուն ու Աղօթքը  
կարդալով, որ ատեն դպիրն էրն ալ եղա-  
նակաւ կ'երգն հետեւեալն: Զոր յօրինեալ  
է Խաչատուր վարդապետ Տարնացի ի  
ԺԲ. դարուն.)

ՇԱՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՐՁԻ ՅՈՐԺԱՄ ԶԳԵՆՈՒ

ԿԶ.

ԽՈՐՀՈՒՐԴ Խորին ան-  
հաս անսկիզբն որ զարդարեցեր  
զվիրին պետութիւնսդ. ՚ի յառա-  
գասա անմասոյց լուսոյն գերա-  
պանս փառօք զդասս հրեզլինաց:

Ո՛վ խորհուրդ խորին, ո՛վ անհասանելի  
և անսկզբն Աստուած, որ երկնաւոր պե-  
տուծիւնդ (աբգդեզէսպէս) գերապանծ  
փառքով զարդարեցիր անմատոյց լուսոյ  
առագաստին մէջ՝ հրեշտակաց դասակար-  
գութիւնով.

**Անճառահրաշ զօրութեամբ**  
**ստեղծեր զԱզամ պատկեր տի-**  
**րական, եւ նազելի փառօք ըզ-**  
**գետաւորեցիր, ՚ի դրախան**  
**Աղենի տեղի բերկրանաց:**

Եւ բու անպատմելի եւ հրաշալի զօրու-  
թեամբդ ստեղծեցիր մեր նախահայրն Ա-  
դամ՝ աէրունական պատկերիդ նման, եւ  
անմեղութեան նազելի փառքով զգետա-  
ւորելով (հօգւեցաւելլ) զայն, Աղենա-  
կան դրախտիդ ուրախութեան մէջ դիր:

**Չարչարանօք քո սուրբ Մի-**  
**ածնիդ՝ նորոգեցան արարածք**  
**ամենայն. եւ վերստին մարդն**  
**անմահացաւ, զարդարեալ ՚ի**  
**զգետա անկողնպաւի:**

Եւ բու սուրբ Միածին Որդոյդ Յիսուսի  
չարչարանքով, նորոգուեցան ամեն արա-  
րածներ, եւ մարդիկ վերստին անմահեցան,  
անկողնպաւի զգետով զարդարուելով:

**Անճրեւածին բաժակ հրահո-**  
**սան, որ հեղար յԱռաքեալան ՚ի**  
**սուրբ Վերնատանն. հեղ եւ ՚ի**  
**մեզ Հոգիդ Սուրբ Աստուած,**  
**ընդ պատմուծանին զքո զիմաս-**  
**տութիւն:**

Ո՛վ սուրբ Հոգիդ Աստուած, որ հրեղէն  
(հրե) բաժակ անճրեւի նման Թափեցիր  
Առաքեալներուն վրայ սուրբ վերնատան  
մէջ, Թափէ մեր վրայ եւս քահանայական  
պատմուծանին (հօգւեցաւելլ) հետ՝ բու  
իմաստութեանդ շնորհքը:

**Տան քում վայելէ սրբու-**  
**թիւն՝ որ զգեցար զվայելչու-**  
**թիւն. սրբութիւն փառաց ընդ**  
**մէջ քո ածեալ. պատեալ զմէջս**  
**մեր ճշմարտութեամբ:**

Քու Տանդ արբուծին կը վայելէ; Աստուած իմ, ինչպէս դու փառաւոր Սրբութիւնով հազուած ու գօտետրած ես, նոյնպէս պատէ (—Բ—) մեր մէջքերն ըստ ճշմարտութիւնովդ :

**Որ** զարարչագործ բազուկս քո տարածեցիր ընդդէմ աստեղաց . հաստատեա՛ս զբազուկս մեր կարողութեամբ . համբարձմամբ ձեռաց առ քեզ միջնորդել :

Ո՛վ Յիսուս, որ ըստ արարչագործ բազուկներդ՝ աստղերուն դէմ տարածեցիր խաչին վշայ, հաստատէ (—Բ—) մեր բազուկներն ևս կարողութեամբ, որ ձեռքերնիս համբառնալով (—Բ—) արժանի ըլլամք միմեանց համար առ քեզ միջնորդել (—Բ—) :

**Իր**ւամամբ թագ ՚ի գլուխ պատեցես զմիասն ևւ զղգայարանս . խաչանիչ ուրարմամբ ըստ Ա.հա-

րովնի, ծաղկեալ յօսկեթեղ ՚ի զարդ խորանին :

Ինչպէս քահանային զուխը Յագով կը հիւսուի (Է Գ—Բ—) և խաչանիչ ուրարով կը զարդարուի, նման Ահարոնի՝ որ ոսկի թելերով ծաղկեալ ուրար կը հագնէր Վկայումեան Խորանին զարդ լինելու համար . նոյնպէս մեր միտքն ու զգայարանքը պատէ և զարդարէ ըստ իմաստութիւնովդ :

**Բամից** բոլորից տիրապէս Աստուած պետական . նափորտապատ սիրով զմեզ զգեստաւորեցեր, ըստ սուրբ խորհրդոյդ լինել սպասաւոր :

Ո՛վ Աստուած պետական տիրող բոլոր արարածոց կը զօհանամք Քենէ՝ որ քահանային շուրջառին պէս՝ ըստ սիրովդ պատելով կ'զգեստաւորես զմեզ, ըստ սուրբ խորհուրդիդ սպասաւորելու համար :

Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա՛ս . և զերկրպագուս անուանդ ըստ

պահեան, 'ի խաղաղութեան :

Ո՛վ թագաւոր երկնաւոր Յիսուս. բու Եկեղեցիդ անշարժ (անարարան) պահէ, և բու անունիդ երկրպագողներն խաղաղութեան մէջ պահպանէ :

(Այս ձեռքէն ժամաբար Քահանայն Ասանդարան ձեջ զԲեարարարանն նորա յարկացեալ Աղօլեռով, Եկա՞ն է Ս. Սեղանի արեանը, Եւ յեաները լուսով հետեւեալ ՍԱՂՄԱՍԸ կ'ըրէ. որ կը նշանակէ Բէ՛ Նախ Ժան Սարք Թորհորդէն սպասարարելն, հարկ է սրբաւել ամեն աղբղաւելենէ հոգւոյ և ճարմոյ :)

ՍԱՂՄՈՍ ԻԵ.

Քահ. Լուացից արքութեամբ զծնու իմ, եւ շուրջ եղէց զսեղանով քով Տէր, (Սրկ.) Դաս արա ինձ Տէր, զի ես յամբժնութեան իմում զնացի, 'ի Տէր յուսացայ զի մի եղէց հիւանդ :

Փա՛ծեա՛ զիս, Տէր, եւ քննեա՛ զիս, փորձեա՛ զեր իկամուսս իմ եւ զսիրտս իմ :

Ողորմութիւն քո, Տէր, առաջի աչաց իմոց, եւ հաճոյ եղէց ճշմարտութեան քում :

Ո՛չ նսայց ես յամոռս նանբաց, եւ ընդ անօրէնս ես ոչ մտից :

Ասեցի ես զժողովս չարաց, եւ ընդ ամբարիշտս ես ոչ նսայց :

Լուացից արքութեամբ զծնու իմ, եւ շուրջ եղէց զսեղանով քով Տէր :

Ընել ինձ զձայն օրհնութեան քո, եւ պատմել զամենայն սրանչելիս քո :

Տէր, սիրեցի զվայելչութիւն քան քո. եւ զսեղի յարկի փառաց քոց :

Մի կորուսաներ ընդ ամբարիշտս զանձն իմ, եւ մի ընդ արս արիւնահեղս զկեանս իմ :

Որոց ձեռք իւրեանց յանօրէնութեան են. եւ աջ նոցա լին է կաշաւօր :

Ես յանբժնութեան իմում զնացի, փրկեա՛ զիս, Տէր, եւ ողորմեա՛ ինձ :

Ոսն իմ կացցէ յուղղութեան :

Յեկեղեցիս մեծս օրհնեցից զքեզ, Փառք շօր եւ Այժմ եւ միշտ եւ յաւ :

Քահ. Վասն Սրբուհոյ Աստուածածնին բարեխօսութեանն, Տէր, ընկալ զաղաչանս մեր, եւ կեցո՞ զմեզ:

Սուրբ Աստուածածինն՝ եւ զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր ՚ի յերկինս. զի կամեցեալ ողորմեսցի՝ եւ զթացեալ կեցուցէ զարարածս իւր. Ամենակալ Տէր Աստուած մեր. կեցո՞հե ողորմես:

Քահ. Ընկալ Տէր զաղաչանս մեր բարեխօսութեամբ Սուրբ Աստուածածնին՝ անարատ ծնողի Միածնի Որդւոյ քոյ, եւ աղաչանօք ամենայն սրբոց քոց, Լոր մեզ Տէր, եւ ողորմես՝ ներեա՛, քաւեա՛, եւ թող զմեզս մեր: Արժանաւորեա՛, գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ

Որդւոյ եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ. Այժմ՝ եւ միշտ եւ յաւիտ:

(Ապա հրապարակաւ կը խոսորովանի ժամաբար Քահանայն ըսելով)

Խոստովանիմ առաջի Աստուծոյ, եւ Սրբուհոյ Աստուածածնին, եւ առաջի ամենայն սրբոյ, եւ առաջի ձեր, հարք եւ եղբարք. զամենայն մեզս զորս զործեալ եմ, քանզի մեղայ խորհրդով, բանիւ եւ գործով, եւ ամենայն մեղօք՝ զոր զործեն մարդիկ: Մեղայ, Մեղայ, աղաչեմ զձեզ, խնդրեցէք վասն իմ յԱստուծոյ զթողութիւնս:

(Այս միջոցին Բալը ժողովուրդը շունչի զբայ եկա՞ծ խոնարհելու է զղջումով, եւ մեղաց խողովնեան խնդրելով, եւ Քահանային կարողութեան մաղխելով:)

(Եւ մերձակայ քանանայն ասէ.) **Ողորմեացի՛ քեզ Աստուած հզօրն եւ թող ութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց, անցելոյն, եւ այժմուս, եւ յառաջակայնն փրկեսցէ :**

**Հաստատեսցէ՛ զքեզ յամենայն գործս բարիս, եւ հանգուցէ՛ ՚ի հանդերձեալ կեանսն :**

(Եւ ինքն ասէ) **Ազատեսցէ՛ եւ զձեզ մարդասէրն Աստուած, եւ թողցէ՛ զամենայն յանցանս ձեր. տացէ՛ ժամանակ ազաշխարհելոյ եւ գործելոյ զբարիս. ուղղեսցէ՛ եւ զառաջակայ կեանս ձեր, շնորհօք Սուրբ Հօգուոյն, հզօրն եւ ողորմածն, եւ նմա փառք յաւիտեանս. Ամէն :**

**Գ. Ե Ժ. Գ. Յիշեալի՛ր եւ զմեզ առաջիանման Գառիսն Աստուծոյ.**

**Բահ. Յիշեալ լիջիք առաջի անմահ Գառիսն Աստուծոյ :**

**ՍԱՂՄՈՍ ԳԹ.**

**Փ. Խ. Ազազակեցէ՛ր առ Տէր ամենայն երկիւր. ծառայեսցէ՛ր Տեսողն ուրախութեամբ :**

**Մսէ՛ր առաջի նորա ցնծութեամբ ծաներուր զի նա է Տէր Աստուած մեր :**

**Նս առաւ զմեզ, եւ ոչ մեր էաք, մեր ժողովուրդք եւ խաշնարօք նորա :**

**Մսէ՛ր ընդ զրուսն նորա ի սոսովանութեամբ, եւ օրհնութեամբ ՚ի յարկըս նորա :**

**Խոսովան եղերուր Տեսուն, եւ օրհնեսցէ՛ր զանուն նորա :**

**Քաղցր է Տէր, յաւիտեան է ողորմութիւն նորա. յազգէ մինչեւ յազգէ սշմարտութիւն նորա :**

**Փառք Հօր եւ Որդոյ եւ Հօգուոյն Սրբոյ. Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն :**

Սբկ. Սուրբ Եկեղեցեաւս աղա-  
չեսցուք զՏէր, զի սոքա փր-  
կեսցէ զմեզ 'ի մեղաց, եւ կե-  
ցուցէ շնորհիւ ողորմութեան  
իւրոյ. Սմենակալ Տէր Աստուած  
մեր. Կեցո՛ եւ ողորման:

Քահ. Ի մէջ տաճարիս եւ առա-  
ջի Աստուածընկալ եւ պայծա-  
ռացեալ սուրբ Նշանացս եւ սուրբ  
անդւոյս, խոնարհեալ երկիւղիւ  
երկիրպագանեմք. զսուրբ եւ  
զհրաշալի եւ զյազթող զՅարու-  
թիւնդ (կամ զՏէրութիւնդ) քո  
փառաւորեմք. եւ քեզ մասու-  
ցանեմք զօրհնութիւն եւ զփառս  
ընդ Հօր եւ ընդ Սրբոյ Հոգ-  
ւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւի-  
տեանս յաւիտենից. Ամէն:

(Ապա հեղեւեալ Սաղմոսն (ԽԲ)  
առելով Եւանջն 'ի խորանն)

Քահ. Մտից առաջի սեղանոյ  
Աստուծոյ առ Աստուած, որ ու-  
րախ աննէ զմանկութիւն իմ:

Սբկ. Դատ արան ինձ, Աստուած,  
եւ իրաւ արան ինձ 'ի դատա-  
տանի իմում:

Քահ. Յազգէ՛ որ ոչ է սուրբ.  
'ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ  
փրկեան զիս:

Սբկ. Դու, Աստուած հօրիչ իմ  
ես, ընդէ՛ր մոռացար զիս, ըն-  
դէ՛ր սրտում գնամ ես 'ի նեղել  
թշնամւոյ իմոյ:

Քահ. Առաքեան, Տէր, զլոյս քո  
եւ զճշմարտութիւն քո, զի ա-  
ռաջնորդեսցին ինձ, եւ հանդին  
զիս 'ի լեառն սուրբ եւ 'ի յարկսքո  
Սբկ. Մտից առաջի սեղանոյ Աս-  
տուծոյ առ Աստուած՝ որ ու-  
րախ աննէ զմանկութիւն իմ:

Քահ. Խոստովան եղէց քեզ օր-

նութեամբ, Աստուած Աստուած իմ:

Աբի. Արդ ընդէ՞ր արտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խոսովես զիս. յուսած առ Աստուած, խոստովանեա՛ նմա. փրկիչ երեսաց իմոց Աստուած է:

Փառք Հօր եւ. Այժմ եւ միշտ.

Աբի. Եւ եւս խաղաղ. զՏէրազաչ. Օրհնեսցուք զամենակալն Աստուած՝ զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որ արժանի արար զմեզ կալ 'ի տեղւոջս փառաբանութեան, եւ երգել զերգս հոգեւորս. Ամենակալ Տէր Աստուած մեր. Կեցո՛ եւ ողորմեա՛

Բահ. Ի յարկի սրբութեան եւ 'ի տեղւոջս փառաբանութեան, հրեշտակաց բնակարանիս եւ մարդկան քաւարանիս. առաջի Աստուած ընկալ եւ պայծառաց-

եպ սուրբ Նշանացս եւ սուրբ Սեղանոյս՝ խոնարհեալ երկիւղիւ երկիրպագանեմք. զսուրբ եւ զհրաշտոյի եւ զյաղթող զՅարութիւնդ (կամ զՏէրութիւնդ) քս օրհնեմք եւ փառաւորեմք. եւ ընդ երկնային զօրսն մատուցանեմք զօրհնութիւն եւ զփառս ընդ Հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտ.

### ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Այս սուրբ տանա եւ փառաբանութեան տեղւոյս մէջ, որ հրեշտակաց բնակարանն է եւ մարդոց քաւարան, Աստուած ընկալ սուրբ Խաչին եւ պայծառացեալ Նշաններուն եւ սուրբ Սեղանիս առջեւ խոնարհելով, երկիրպագութիւն կ'ընեմք քեզ. ո՛վ Տէր. եւ բու սուրբ, հրաշալի եւ յաղթող Յարութիւնդ (կամ Տէրութիւնդ) կ'օրհնեմք ու կը փառաւորեմք. եւ երկնային զօրաց (հրեշտակներուն) հետ օրհնութիւն ու փառք կը մատուցանեմք քեզ՝ ընդ Հօր եւ Սուրբ Հոգւոյն. հիմա եւ միշտ եւ յաւիտ:



(Այս Բնույնն Վարճոյրը կը գոցեն,  
 և որդիքնէրը Մեղեղի Երբ կամ Տաղ  
 կ'եղանակեն ըստ պարզահէ առարն,  
 և Ժամարը Քահանայն Սպաս կը դնէ  
 այսինքն՝ նստիբեալ Հացն ու Գինին  
 կը պարբաստէ Ս. Սկիհին Տեղ՝ ի Ժո-  
 ծուհի աղօթելով, և Ս. Գրեթոր Եւ-  
 բեկացայ Ս. աղօթից ԼԳ. գլխոյ Դ և Ե  
 հասարակածներն կարդալով: Այս ա-  
 րեւն աղօթեալներն եւս կրնայ ի Ժոժո-  
 ժուհի աղօթել, կամ Հաւատով խոստո-  
 վանիմ Ս. աղօթին ըսելով, և կամ ին-  
 շին իր մտքն թոյնաժառանգին աղօթ-  
 մարտոցանելով՝ Բնույնն աւարտի Մե-  
 ղեդին: Եւ երբ վարճոյրը Քացո-  
 Ւնն, և սեղանին իջնելով կը շրջէ Ժո-  
 ղազրբեան Տեղ, և վերստին Որբանը  
 կը մտնէ, ի նշանակ Քրիստոսի երկին-  
 քին յերկիր իջնելուն, և մարտիանց  
 հետ շրջելուն և մտնելուն յերկինս: )

Եւրովան Խեղաւորեան  
 Մրջ Պատարագին Գ.Կ.

Յայս յարկ նուիրանաց ուխ-  
 տի Տեառն տաճարիս. ժողով-  
 եալքս աստանոր ՚ի խորհուրդ  
 պաշտաման պաղատանաց առ-  
 ջրկայ սուրբ Պատարագիս. խըն-  
 կօք անուշիւք խումբ առեալ  
 պարեմք ՚ի վերնայարկ սրահս  
 խորանիս: Ուղղութեամբ ընկալ  
 զազօթս մեր որպէս բուրումն  
 անուշահոտ խնկոց տաշխից եւ  
 կրնամոնաց. եւ զմատուցողս  
 պահեա՛ սրբութեամբ, միշտ եւ  
 հանապաղ քեզ սպասաւորել:  
 Բարեխոսութեամբ Մօր քս եւ  
 Կուսի, ընկալ զազաչանս քոց  
 պաշտօնէիցս:

Որ գերագոյն քան զերկինս  
 պայծառացուցեր սուրբ զեկե-  
 ղեցի Արեամբ քո Քրիստոս. եւ  
 ըստ երկնայնոցն կարգեցեր ՚ի

ամա զգասս Առաքելոց եւ Մարգարէից սուրբ Վարդապետաց . Այսօր ժողովեալ դասք քահանայից , սարկաւազաց , դպրաց եւ գղերիկոսաց . խունկ մատուցանեմք առաջի քո Տէր , յօրինակ ըստ հնումն Զաքարիայ : Ընկալ առ 'ի մէնջ զխնկանուէր մաղթանա , որպէս զպատարագն Աբելի զնոյի եւ զԱրրահամու . Բարեխօսութեամբ վերին քո զօրացդ , միշտ անշարժ պահեա զԱթոռ Հայկազնեայ :

**ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ**

Այս նուիրական ուխտի յատկացեալ ճանս եւ Տէրունական տաճարիս մէջ , սուրբ Պատարագիս առջեւ՝ աղօթք եւ պաղատանք մատուցանելու համար ժողովուածներս , անոյշ խունկերով խմբուած կուրսիսանամք սուրբ խորանիս վերնայարկ սրահներուն վրայ :

Ո՛վ Տէր , ընդունէ սիրով մեր աղօթքը

անուշահոտ եւ ազնիւ խունկերուն ու կինամոններուն հոտերը բուրելուն նման . և զատնք քեզ մատուցանողներս պահպանէ , որ կարենամք՝ Սրբութիւնով միշտ եւ հանապազ սպասաւորել քեզ : Ընդունէ բու պաշտօնեաներուդ աղօթքը և աղաչանքը , բու կոյս Մօրդ բարեխօսութիւնով :

Որ երկինքէն աւելի գերագոյն կերպով՝ պայծառացուցիր սուրբ Եկեղեցիդ բու Արիւնովդ . ո՛վ Քրիստոս Փրկիչ . եւ երկինքի հրեշտակաց նման՝ ասոր մէջ եւս դասակարգութիւն դրիր Առաքեալներու , Մարգարէներու եւ սուրբ Վարդապետներու . ահն մեք եւս այսօր՝ ժողովեալ Քահանայական դասով , սարկաւազներով , դպիրներով , եւ եկեղեցւոյ ժառանգաւորներով , խունկ կը մատուցանեմք բու առջեւդ՝ հին եկեղեցւոյ Զաքարիա քահանային օրինակին պէս : Ընդունէ մեր կողմէ եղած ինկանուէր մաղթանքն , Աբելի Նոյի եւ Աբրահամու պատարագին պէս , եւ վերին զօրացդ բարեխօսութիւնովն , միշտ անշարժ պահէ Հայոց ազգիս Ամօր :

Սբէ. Օրհնեա՛ Տէր :

Քահ. Օրհնեալ (է) թագաւորութիւնն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

(Եւ առ ժԱՄԱՄՈՒՏ՝ ըստ պատշաճի աւուրն, իսկ 'ի Կիրակէի առ հասարակ զայս ասնն :)

Միածին Որդի եւ Բանդ Աստուած եւ անմահ էութիւն, որ յանձն առեր մարմնանալ 'ի սրբութեանց Աստուածածնէն եւ ի միշտ Կուռէն. անփոփոխելիզ մարդ եղեալ, խաչեցար Քրիստոս Աստուած մեր. մինչ 'ի սրբոյ Երրորդութենէն. փառաւորակից ընդ Հօր եւ Սրբոյ Հոգւոյն. կեցո՛ զմեզ :

Ժամամուտ Ձատկի

Քրիստոս Յարեալ 'ի մեռելոց . մահուամբ զմահ կոխեաց ,

եւ Յարութեանն իւրով մեզ զկեանս պարգեւեաց . նմա փառք յաւիտեանս . Ամէն :

ԺԱՄԱՄՈՒՏ Երաբայն կարգը որոտած է Պատարագի խորհուրդէն յերոյ, որե՛ս անոր ըստ պատշաճին :

ԺԱՄԱՄՈՒՏԸ ինչպէս յայտնի է կը նշանակէ մտանել է ժամ, այսինքն «կէզքն առնել խորհրդաւոր ժամեր-գոմեանս Ս. Պատարագին», որ ճէշտ Օրհնեալ թագաւորութենէն է՝ «կսի» :

Սբէ. Եւ եւս խաղաղութեան զՏէր ազաչեցուք, ընկալ, կեցո՛ եւ ողորմեա՛ . Օրհնեա՛ Տէր :

Քահ. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ . Այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Սաղաղութիւն ամենեցուն :

Դոյ. և Ժոյ. Եւ ընդ հոգւոյդ քում,  
Սբկ. Սասուծոյ երկիրպագեսու-  
ցուք<sup>1</sup>,

Դոյ. և Ժոյ. Սուաջի քո Տէր,

Բահ. Տէր. Աստուած մեր՝ որոյ  
կարողութիւնդ անքննին է, եւ  
փառքդ անհասանելի. որոյ ո-  
ղորմութիւնդ անչափ է եւ գը-  
թութիւնդ անրաւ. զո՛ւ ըստ ա-  
ռատ մարդասիրութեանդ քում,  
նայեաց ՚ի ժողովուրդս քո եւ ՚ի  
տաճարս այս սուրբ: Եւ արա՛  
ընդ մեզ՝ եւ ընդ աղօթակիցս  
մեր, առատապէս զողորմութիւն  
քո եւ զգթութիւն. զի քեզ վա-  
յելէ փառք իշխանութիւն եւ  
պատիւ. Այժմ եւ միշտ եւ.

(<sup>1</sup>) Ամեն անգամ որ Սուրբ-աստուածն «Աստու-  
ծոյ երկիրպագեսուք» ըսէ, Բուր Ժոյ-  
ւարդը պէտք է խնայեմ եւ երկրպագէ,  
խաչափեւելմ:

ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ո՛վ Տէր Աստուած մեր, որ քու կարո-  
ղութիւնդ անքննելի է և փառքդ անխա-  
նալի, որ քու ողորմութիւնդ անչափ և  
գթութիւնդ խիստ շատ է. զո՛ւն քու ա-  
ռատ մարդասիրութիւնովդ նայէ այս ժո-  
ղովուրդիդ և այս սուրբ տաճարիդ վրայ.  
Եւ մեզ՝ ու մեզ հետ աղօթակից եղողնե-  
րուն՝ առատապէս ողորմութիւն ու գթու-  
թիւն ըրէ. ինչու որ քեզ կը վայելէ փառք,  
իշխանութիւն և պատիւ. հիմա և միշտ  
և յաւիտեանս, Ամէն:

Եւ ասի ձաւուր Փոխն եւ Շարականն  
ըստ պատշաճի

ՃԱՇՈՒ ՓՈՒԲ

Աւեսեաց, Ծննդեան, Տեառնընդ-  
առայի, Վարդավառի, Վերա-  
փոխման, եւ ամենայն տօնից  
Սասաւածամցի.

Մեծացուսցէ անձն իմ զՏէր եւ.  
(Տես երես 275)

Աղուահացից , Ծաղկազարդի ,  
Հոգւոյ Գալսեանի , Խաչի , Եկե-  
ղեցոյ եւ ամենայն Կիւրակէից :

(Սուգ. ՂԲ.) **Տէր** թաղաւորեաց  
վայելչութիւն զգեցաւ . Զգեցաւ  
Տէր զօրութիւն՝ ընդ մէջ իւր էած :  
Հաստատեաց զաշխարհ զի մի  
սասանեացի , պատրաստ է ա-  
թոռ քո , 'ի սկզբանէ յաւիտեանս  
դու ես :

Ամբարձան գետք Տէր , եւ  
ամբարձին գետք զձայնս իւր-  
եանց , եւ յարիցեն գետք 'ի գը-  
նացս իւրեանց :

Ի ձայնէ ջուրց բազմաց ,  
սքանչելի եղեն զբօսանք ծովու :

Սքանչելի ես դու Տէր ի բար-  
ձունս , վկայութեանց քոց մեք  
յոյժ հաւատացաք :

Տան քում վայելէ սրբութիւն  
Տէր ընդ երկայն աւուրս :

Փառք Հօր. Այժմ եւ :

**Զատկէն** մինչեւ Հոգեգալուս  
Գովեա՛ Երուսաղէմ զՏէր .  
Եւ օրհնեա՛ զԱստուած քո Սիրն .  
(Տես երես 145)

**Շարական Կիրակէ աւուրց**

**Զ**թաղաւորն փառաց Քրիս-  
տոս , որ վասն մեր մարմնացաւ  
ի Սբբոց Կուսէն եւ Սաչի համ-  
բերելով , միաբանութեամբ եր-  
գով բարեբանեացուք :

Որ զթաղումն երեքօրեայ  
յանձն էառ , յարուցեալ 'ի մե-  
ռելոց իշխանութեամբ . միաբա-  
նութեամբ երգով բարեբա .

Կարողագէս զգրունս զժոխոց  
խորտակեաց . Եկեղեցւոյ իւրում  
զգեցոյց զմեծ վայելչութիւն .  
միաբանութեամբ երգով , բարե :

**Շարական Զատկին**

**Յարեան** Քրիստոս 'ի մեռե-  
լոց . Ալէլուիա :

Եկայք ժողովուրդք, երգեցէ՛ք  
Տեանն . Ալէլուիա :

Յարուցելոյն 'ի մեռելոց . Ալէլ-  
Որ զաշխարհս լուսաւորեաց .

Ալէլուիա :

Շարական Խաչի

Յաղթող եւ զնոր օրհնութիւն  
միշտ 'ի բարձունս երգեսցուք ,  
Թապաւորին Քրիստոսի հաւա-  
տացեալ ժողովուրդք :

Որ եկն 'ի լուսաւորել զընտ-  
րեալ սուրբ զՅիկեղեցի, եւ պսակ-  
եաց սուրբ Խաչին, նմա զփառս  
երգեսցուք :

Այսօր եւ մեք տօնեսցուք զնա-  
ւակատիս սուրբ Խաչին, եւ  
փրկողին մատուցուք փառք եւ  
պատիւ յաւիտեանն :

(Այն Շարականաց Էրֆեցման արեւն,  
Քահանայն կ'աղօթէ ժողովրդեան հա-  
ճար որ նոցա աղօթքն ընդտանի Աս-  
որուած եւ կարտրի 1)

Մրկ. Օրհնեա՛ Տէր :

Քահ. Ձի քո է կարողութիւն  
եւ զօրութիւն եւ փառք յաւի-  
տեանս . Ամէն :

Մրկ. Պոսխո՛ւմէ : (1)

Դպ. Ե ժող. Սուրբ Աստուած ,  
Սուրբ եւ հզօր, Սուրբ եւ ան-  
մահ, որ Խաչեցար վասն մեր  
(կամ) Յարեար 'ի մեռելոց, ողոր-  
մեա՛ մեզ . (Երէք անփամ) :

Մրկ. Եւ ես խաղաղութեան  
զՏէր ազաչեսցուք :

Դպ. Ե ժող. Տէր ողորմեա՛ :

Մրկ. վասն խաղաղութեան ա-

(1) Պոսխո՛ւմէ. Յանարեւն քա- ե, եւ  
մտիկ ընեմք կը նշանակէ: Քահայն այն արեւն  
Սուրբուսին ժամարտի ներսին արեւել  
Ս. Աւետարանն, եւ լեւեբեւե եւ կը հրատեւե  
ժողովրդեան աղօթքն ընդտանի:

մենայն աշխարհի՝ եւ հաստատութեան սրբոյ Եկեղեցւոյ . զՏէր աղաչեսցուք : Տէր ողոր .

Վասն ամենայն սուրբ եւ ուղղափառ եպիսկոպոսաց . զՏէր ա, Վասն Հայրապետին մերոյ Տեանն (այս անուն) կենաց՝ եւ փրկութեան հոգւոյ նորին . զՏէր աղաչեսցուք : — Տէր ողոր .

Վասն վարդապետաց՝ քահանայից՝ սարկաւազաց՝ զպրաց , եւ ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ , զՏէր աղաչեսցուք :

Վասն բարեպաշտ թագաւորաց՝ եւ աստուածասէր իշխանաց զօրավարաց եւ զօրաց նոցին զՏր .

Վասն հոգւոցն հանգուցելոց . Եւ եւս միաբան վասն ճշմա .  
Չանձինս մեր . Ողորմեաց .

Սբի . Օրհնեալ Տէր :

Քահ . Ձի ողորմած եւ մարդասէր ես Աստուած գոլով , եւ քեզ

վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ . այժմ եւ միշտ եւ յաւիտեանս . Ամէն :

(Ապա առաջ պարզածի ճԱՇՈՒ Ս. ԳԻՐԲԸ Լ ՍԻԵՏԱՐԱՆԸ կը կարդացուի , որոց պէտք է ուղարկուի ընթացքով ինչպէս յիշուած է : Ո՛ր որ սոյն ապէն Եկեղեցիէն դուրս կ'ելի , Տե՛սպէս կը Տեղանշուի : Չկ'ի Ս. Երարանին դպիրք եւ ժողովուրդը Տե՛սբերան ասեն :)

Փանօք քեզ Տէր Աստուած մեր :

(Եւ ապա Հաւատամքը կը կարդան նոյնպէս ամենքը Տե՛սբերան եւ յետեւեւան յայնիսին՝ Երկու յետոց ափերն իրարու տո՛ղ բերելով , որ է նշան անխղիչ Երդման եւ անլուծանելի առաջարկուիտան՝ նոյն Հաւատոյ դասանուիտան Տե՛ղ հասարարան Տեալս , զոր ընդունած էմ կարդացուած Մարգարեական եւ Առաքելական Սուրբ Գրքերէն :)

## ՀԱՆԳԱՆԱԿ ՆԻԿԻԱՎԱՆ

Հաւատամք 'ի մի Աստուած  
Հայրն Ամենակալ, յԱրարիչն  
երկնի եւ երկրի, երեւելեաց եւ  
աներեւութից:

Եւ 'ի մի Տէր Յիսուս Գրիս-  
տոս յՈրդին Աստուծոյ, ծնեալն  
յԱստուծոյ Հօրէ Միածին այս-  
ինքն՝ յեւթեանէ Հօր:

Աստուած յԱստուծոյ՝ լոյս 'ի  
լուսոյ, Աստուած ճշմարիտ .  
յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ՝ եւ  
ոչ արարած:

Նոյն ինքն 'ի բնութեանէ Հօր՝  
որով ամենայն ինչ եղեւ յեր-  
կինս եւ 'ի վերայ երկրի, երե-  
ւելիք եւ աներեւոյթք:

Որ յաղագս մեր մարդկան եւ  
փան մերոյ փրկութեան՝ իջեալ  
յերկնից՝ մարմնուցաւ, մարդա-  
ցաւ, ծնաւ կատարելապէս 'ի  
Մարիամայ սրբոյ Կուսէն՝ Հոգ-

ւովն Սրբով:

Որով էառ մարմին, հոգի, եւ  
միտ, եւ զամենայն որ ինչ է  
'ի մարդ. ճշմարտապէս եւ ո՛չ  
կարծեօք:

Չարչարեալ, խաչեալ, թաղ-  
եալ, յերրորդ աւուր յարուց-  
եալ, ելեալ 'ի յերկինս նովին  
մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ  
Հօր:

Գալոց է նովին մարմնովն եւ  
փառօք Հօր, 'ի դատել զկեն-  
դանիս եւ զմեռեալս:

Որոյ թագաւորութեանն ոչ  
գոյ վախճան:

Հաւատամք եւ 'ի Սուրբ Հո-  
գին՝ յանկողն եւ ի կատարեալն.

Որ խօսեցաւ յՕրէնս եւ 'ի  
Մարգարէս եւ յԱւետարանս:

Որ էջն 'ի Յորդանան, քա-  
րոզեաց զԱստրեալն, եւ բնա-  
կեցաւ 'ի սուրբսն:



Հաւատամք եւ 'ի մի միայն  
Ընդհանրական եւ Առաքելա-  
կան Սուրբ Եկեղեցի :

'ի մի Մկրտութիւն , յԱպաշ-  
խարութիւն , 'ի Քառութիւն ,  
եւ 'ի Թողութիւն մեղաց :

'ի Յարութիւն մեռելոց 'ի  
Գառաստանն յաւիտենից . Հո-  
գւոց եւ մարմնոց . յԱրքայու-  
թիւն երկնից , եւ 'ի Կեանսն  
յաւիտենականս :

Միևցե՛ր ցաւս եւ Հաւատոյ թանկ :

Իսկ որ ասենն՝ էր երբեմն  
յորժամ ո՛չ էր Որդին . կամ էր  
երբեմն յորժամ ո՛չ էր Սուրբ  
Հոգին . կամ թէ յոչէից եղեն  
կամ յայլմէ էութենէ ասեն յի-  
նիլ զՈրդին Աստուծոյ եւ կամ  
զՍուրբ Հոգին . եւ թէ փոփո-  
խելիք են կամ այլայլելիք ,  
զայնպիսիսն նգովէ Կաթուղիկէ  
եւ Առաքելական Սուրբ Եկեղեցի :

### ՅԱՐԳՍԱՆՈՒԹԻՒՆ

Կը հաւատամք Մի Աստուած ամենա-  
կալ Հօր, երկինքն ու երկիրը, երեւցած-  
ներն ու չերեւցածներն Ստեղծողին :

(Կը հաւատամք) և Մի Տէր Յիսուս  
Քրիստոս Աստուծոյ Որդւոյն, որ Հօր Աս-  
տուծմէ ծնեալ է՝ Միածին, այսինքն՝ Հօր  
էութենէն է :

Աստուած է՝ Աստուծմէ . լոյս է՝ լու-  
սէն . ճշմարիտ Աստուած է, ճշմարիտ  
Աստուծմէ ծնեալ՝ և ո՛չ Թէ ստեղծուած :

Նոյն ինքն Հօր՝ (Աստուծոյ) Բնութենէն  
է, որով ամեն բան եղաւ երկնքի մէջ և  
երկրի վրայ, երեւցածներն ու չերեւցած-  
ները :

Որ մեզ մարդոցս համար և մեր փրկու-  
թեան համար, երկինքէն իջնելով, մար-  
մին առաւ, մարդ եղաւ, և ծնաւ կատար-  
եալ կերպով սուրբ Կոյս Մարիամէն՝  
Հոգւով սրբով :

Որով (Ս. Հոգիով) առաւ մարմին, հոգի  
և միտք, և ամեն ինչ որ կայ մարդուս

վրայ, ճշմարտապէս և ոչ թէ կարծիքով։  
Չարչարուեցաւ, խաչուեցաւ, Թաղուեցաւ. Երրորդ օրը յարուժին առաւ և նոյն մարմինով երկինքն ելնելով, Հօրը աչ կողմը նստաւ։

Պիտի գայ նոյն մարմինով և Հօրը փառքով, ողջերն ու մեռածները դատելու համար. որոյ Թագաւորութեանը վերջ չ'կայ։  
Կը հաւատամք Սուրբ Հոգին, որ անեղ (մէկէ մը չեղած) և կատարեալ Աստուած է. որ խօսեցաւ Յրինաց և Մարգարէից զրքերուն և Աւետարաններուն միջոցաւ։ Որ Յորդանան գետն իջաւ, Առաքեալը (Քրիստոս զառաքեալն յԱստուծոյ) քարոզեց, և Սուրբերուն մէջ բնակեցաւ։

Կը հաւատամք նաեւ, միայն Մի, Ընդհանրական և Առաքելական Եկեղեցոյ. մէկ Մկրտութեան, Ապաշխարութեան, Մեղաց քառութեան ու Թողութեան. մեռելներու Յարութեան, հոգիներուն և մարմիններուն վերջին Դատաստանին. երկինքի Արքայութեան, և Յաւիտեական կեանքին։

Մէնէ—այ—բէզէն—Հ—————

Իսկ անոնք որ կըսեն, Թէ՛ կար ժամանակ՝ յորում չ'կար Որդին Աստուծոյ, կամ կըսեն Թէ՛ կար ժամանակ՝ յորում չ'կար Ս. Հոգին. կամ կըսեն Թէ՛ Որդին Աստուծոյ կամ Թուրք Հոգին ոչընչէ գոյացան, և Հօր Աստուծոյ էութենէն չեն, այլ ուրիշ էութենէ եղած են. և կամ Թէ կրնան փոփոխուիլ՝ ու այլայլուիլ կ'ըսեն. Այսպիսի հերետիկոսական խօսքեր ընողները կը նզովէ կաթողիկէ և Առաքելական Սուրբ Եկեղեցին։

### Մէկ. Օրհնեալ Տէր :

Ի Սրբոյ ԼՈՒԹԱՌՈՐԵՅՆ մերմէ ասացեալ

Քահ. Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկիրպագանելով սրբոյ Երրորդութեանն եւ Միոյ Աստուածութեանն Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտ. Ամէն։

Սբէ. Եւ եւս խաղաղ. զՏէր աղ.

Եւ եւս Հաւատով աղա-  
չեսցուք եւ խնդրեսցուք 'ի  
Տեառնէ Աստուծոյ եւ ի Փրկչէն  
մերմէ Յիսուսէ Քրիստոսէ 'ի  
ժամուս պաշտաման եւ աղօթից,  
զի արժանի ընդունելութեան  
արացէ: Լուիցէ՛ Տէր ձայնի  
աղաչանաց մերոց. ընկալցի՛ ըզ  
խնդրուածս սրտից մերոց. թող-  
ցէ՛ զյանցանս մեր. ողորմացի՛  
ի վերայ մեր: Աղօթք մեր եւ խնդ-  
րուածք յամենայն ժամ մայնն  
առաջի մեծի Տէրութեան նորա.  
Եւ նա տացէ մեզ միաբան միով  
հաւատով եւ արգարութեամբ  
վաստակիլ ի գործս բարեաց: Զի  
զողորմութեան զչնորհս իւր ա-  
րացէ ի վերայ մեր Տէրն ամե-  
նակալ, կեցուցէ եւ ողորմացիւ  
Գղ. Լ Ժող. Կեցո՛ Տէր:

Սբէ. Զժամ սուրբ Պատարագիս

եւ զառաջիկայ օրս խաղաղու-  
թեամբ անցուցանել ի Տեառնէ  
խնդրեսցուք:

Գղ. Լ Ժող. Ծնորհեա՛ Տէր:

Սբէ. Զհրեշտակ խաղաղութեան  
պահապան անձանց մերոց, 'ի  
Տեառնէ խնդրեսցուք:—Ծնոր.

Զքաւութիւն եւ զթողութիւն  
յանցանաց մերոց, 'ի Տեառնէ  
խնդրեսցուք:—Ծնորհեա՛ Տէր:

Զսրբոյ Սաչին մեծ եւ կա-  
րօղ զօրութիւնն յօգնութիւն  
անձանց մերոց 'ի Տեառնէ  
խնդրեսցուք:—Ծնորհեա՛ Տէր.

Եւ եւս միաբան վասն ճշմա-  
րիտ եւ սուրբ հաւատոյս մերոց,  
զՏէր աղաչեսցուք:—Տէր ողոր.

Զանձինս մեր եւ զմիմեանս  
Տեառն Աստուծոյ ամենակալին  
յանձն արացուք:

—Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:  
Ողորմաց մեզ Տէր Աստուած

մեր, ըստ մեծի ողորմութեան  
քում. ասացուք ամենեքեան  
միաբանութեամբ:

**Տէր ող. Տէր ող. Տէր ող.**

**ՔԱՐԿՄԱՆՈՒԹԻՒՆ ՔԱՐՈՋԻՆ**

Աղօթքի ձեւով

Հաւատքով կ'աղաչեմք ու կը խնդրեմք  
քեներէ այս աղօթքի և պաշտամունքի ժա-  
մուս, ո՞վ Տէր Աստուած մեր և փրկիչ Յի-  
սուս Քրիստոս: Ընդունելութեան արժանի  
ըրէ՛ ու լսէ՛ մեր աղաչանաց ձայնը: Մեր  
սրտերուն խնդրուածքն ընդունէ. Թողու-  
թիւն տուր մեր յանցանաց, և ողորմէ՛ մեր  
վրայ: Մեր աղօթքն ու խնդրուածքը՝ ամեն  
ժամանակ քու մեծ Տէրութեանդ առջև  
Թող մտնեն. և տուր մեզ, միաբան, մէկ  
հաւատքով, արդարութիւնով բարի գոր-  
ծերու մէջ աշխատիլ, և քու ողորմութեանդ  
չնորհքը մեր վրայէ մի պակսեցնելու:

Շնորհէ՛, Տէր, խաղաղութիւնով անցու-  
նել այս սուրբ Պատարագիս ժամը և առա-

ջիկայ օրս: Շնորհէ՛ Տէր, քու խաղաղու-  
թեան հրեշտակդ, որ մեր անձերուն պա-  
հապան ըլլայ: Շնորհէ՛ Տէր, քու սուրբ  
Խաչիդ մեծ և կարօղ զօրութիւնը՝ որ մեր  
անձերուն օգնական ըլլայ: Միաբան կ'ա-  
ղաչեմք զքեզ, Տէր, ողորմէ՛, և մեր ճշմա-  
րիտ և սուրբ հաւատքը հաստատուն պա-  
հէ: Մեր անձերը ևս քեզ կը յանձնեմք.  
ողորմէ՛ մեզ Տէր Աստուած մեր, քու մեծ  
ողորմութեանդ համեմատ: Տէր ողորմեն.  
Տէր ողորմեն. Տէր ողորմեն:

ԱՂՕԹՔ

Համայնացութեամբ Քահանային սր  
այսպէս կ'աղջնէ՛ ի Զաժոռէ՛:

Ո՛վ Տէր և փրկիչ Յիսուս Քրիստոս,  
որ մեծ ես քու ողորմութիւնովդ, և առա-  
տաձեռն ես քու բարեբարութեանդ պար-  
գենեցրով: Որ մեր մեղաց բաւութեան հա-  
մար, այս ժամուս մէջ քու կամքովդ համ-  
բերեցիր չարչարանաց, խաչի և մահուան,

և առատապէս պարգեւեցիր քու Սուրբ  
Հոգիիդ պարգեւներն երանելի Առաքեալ-  
ներուն. կ'աղաչմբ զքեզ Տէր, մասնա-  
կից ըբէ և զմեզ քու աստուածային պար-  
գեւներուդ, այսինքն՝ մեր մեղքերուն Պո-  
ղոթեանը, և Սուրբ Հոգիիդ ընդունելու-  
թեանը. որպէսզի արժանի լինիմք գոհա-  
նալով փառաւորել զքեզ Հօր և Ս. Հոգիիդ  
հետ, հիմա և միշտ և յաւիտեանս. Ամէն:

Սբհ. Օրհնեա՛ Տէր .

Քահ. Որպէս զի արժանաւորք  
եղիցուք, գոհութեամբ փա-  
ռաւորել զքեզ ընդ Հօր և  
սուրբ Հոգւոյդ. այժմ և միշտ  
և յաւիտեանս յաւիտ. Ամէն:

Պաղաղութիւն ամենեցուն:

Դպ. և Ժող. Եւ ընդ հոգւոյդ քում:

Սբհ. Աստուծոյ երկիրպագեսց.

Դպ. և Ժող. Առաջի քո Տէր:

Քահ. (Յայնէ-) Խաղաղութեամբ

քով Քրիստոս Փրկիչ մեր, որ

'ի վեր է քան զամենայն միտս  
և զբանս, ամբացո՛ զմեզ և  
աներկիւզ պահեա՛ յամենայն  
չարէ: Հաւասարեա՛ զմեզ ընդ  
ճշմարիտ երկրպագուս քո, որք  
հոգւով և ճշմարտութեամբ  
քեզ երկիրպագանեն:

Վասնզի ամենասուրբ Եր-  
րորդութեանդ վայելեն փառք  
իշխանութիւն և պատիւ. այժմ  
և միշտ և յաւիտեանս յաւի-  
տենից .

Օրհնեալ Տէր մեր Յիսուս  
Քրիստոս. Ամէն:

#### ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Քու խաղաղութիւնովդ, ո՛վ Քրիստոս  
Փրկիչ մեր, որ մտքէ ու խելքէ շնա՛ վեր  
է, ամուր և անվնիս պահէ զմեզ ամեն  
չարութենէ. հաւասարէ՛ զմեզ քու ճշմա-  
րիտ երկրպագողներուդ հետ, որք հոգով  
ու ճշմարտութիւնով քեզ երկրպագու:

Յիւն կ'ընեն. վասն զի Ամենասուրբ ԵրրորդուՅեանդ կը վայլէ փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և.

**ՄԷԿ. Օրհնեա՛ Տէր .**

**Քահ. Տէր Աստուած օրհնեսցէ՛ զամենեսեանդ .**

**Դո. Ե- ժող. Ամէն .**

**ՄԷԿ. Մ**ի ոք յերախայից, մի ոք ՚ի թերեհաւատից, եւ մի ոք յապաշխարողաց եւ յանմաքրից, մերձեսցի յԱստուածային խորհուրդս :

(Ա. յ. Էն. Էն. Մի ոք յերախայից՝ (չի մկըրտուածները) Յերեհաւատները, և ապաշխարանքի տակ եղողները, և անմաքուր (պիղծ) եղողները, Յո՞ղ չի մօտենան այս Աստուածային խորհուրդին.)

**Դո. Ե ժող. Մ**արմին տէրունական եւ Արիւն Փրկչական կայ առաջի. երկնային զօրութիւնքն

յաներեւոյթս երգեն եւ ասեն .  
անհանդիսա բարբառով .

**ՍՈՒՐՔ. ՍՈՒՐՔ. ՍՈՒՐՔ .**

**Տէր զօրութեանց :**

(Ա. յ. Էն. Էն. Տէրունական Մարմինը եւ Փրկչական Արիւնը, առջեւնիս կեցած է. երկնային զօրքերը (հրեշտակները) աչքի չերեւնալով. կ'երգեն ու կ'ըսեն առանց հանգչելու. ՍՈՒՐՔ. ՍՈՒՐՔ. ՍՈՒՐՔ .

Տէր զօրութեանց.)

**ՄԷԿ. Մ**աղմոս ասացէ՛ք Տեառն Աստուծոյ մերում դպիւրք, ձայնիւ քաղցրութեամբ զերգս հոգևորս :

(Ա. յ. Էն. Էն. Ժամարարը Մաղաարուն ու հողախափներն հանելով՝ այնպէս կ'աղջնէ ի պատիւ Ս. Սորհորդին, իբրեւ աղասաւոր Բրէսարոսի սեղանին: Որ արեւն Սպրիւսաւորներն եւս ընծայեալ Հայն և Գիւնին կը բերեն ի սեղանն խնկարկելով, որոս՝

կըսուի վերաբերում. եւ կը նշա-  
նակէ Քրիստոսի Տեառն Ռեոյ Ե-  
րուսաղէմ ճրնէն յաղթական փութ,  
եւ խղճութիւն ընդհանուր Ով-  
սանայից յայնով: Սոյն արեւն եւ  
խղճութարեւն ի թուար իջնելով պար-  
տի աղջիւն առանջին, եւ կամ դը-  
պիքներու Սրբասացութիւն երգոց  
համայնն:)

ՍՐԲԱՍԱՅՈՒԹԻՒՆՔ

Ըստ խորհրդոյ աւուրն.

Ծննդեան, Աւետեաց, Վարդա-  
վառի եւ Աստուածածնի:

Բազմութիւնք հրեշտակաց .  
եւ զօրաց երկնաւորաց, իջեալ  
'ի յերկնից ընդ Միածին Թաղա-  
ւորին: Որք երգէին եւ ասէին .  
Սա է Որդին Աստուծոյ . ամե-  
նեքեան ասացուք . Ուրախ լե-  
րուք երկինք, եւ ցնծացեն, հի-

մունք աշխարհի: Զի Աստուածն  
յաւիտենական 'ի յերկրի երեւե-  
ցաւ, եւ ընդ մարդկան շրջե-  
ցաւ, զի կեցուցէ զանձինս մեր:

Մեծի Հինգամբի

Որ 'ի վերայ նստիս 'ի կառս  
հրանիւթս քառակերպեանս, ան-  
ճառելի Բանդ Աստուած: Այ-  
սօր իջեալ 'ի յերկնայնոցն վասն  
քո արարածոցս . յանձն առեր  
բազմիլ ընդ աշակերտան: Եւ  
Սերովբէքն եւ Քերովբէքն հիա-  
ցեալ զարմանային . եւ պետու-  
թիւնք վերին զօրացն սքանչաց-  
եալ աղաղակէին ասելով .

Սուրբ . Սուրբ . Սուրբ .

Տէր զօրութեանց:

Յինանց եւ Խաչի

Ով է որպէս Տէր Աստուած  
մեր . Պաշտեալ վասն մեր, Թա-

ղեցաւ եւ Յարեաւ . հաւատա-  
րիմ եղեւ յաշխարհի եւ Համ-  
բարձաւ փառօք : Եկայք ժողո-  
վուրդք , զօրհնութիւն ընդ հը-  
րեշտակս երգեսցուք նմա ասե-  
լով . Սո՛ւրբ . Սո՛ւրբ . Սո՛ւրբ ես  
Տէ՛ր Աստուած մեր :

Կիւրակէի, Եկեղեցւոյ, Ծաղկա-  
զարդի եւ Հրեճակաց

Հրեշտակացին կարգաւորու-  
թեամբ լցեր Աստուած , զքո  
սուրբ զեկեղեցի : Հազարք հա-  
զարաց Հրեշտակապետք կանա-  
ռաջի քո : Եւ բիւրք բիւրուց  
հրեշտակք պաշտեն զքեզ Տէ՛ր ,  
եւ ՚ի մարդկանէ հաճեցար ըն-  
դունիլ զօրհնութիւն : Զայնիւ  
խորհրդականաւ , Սո՛ւրբ . Սո՛ւրբ .  
Սո՛ւրբ . Տէ՛ր զօրութեանց :

Պատեց, Ենչեցելոց

Վասն յիշատակի հանգու-  
ցելոցն , ընկալ Հայր սուրբ մար-  
դասէր զՊատարագս : Եւ հա-  
մարեա՛ զհոգիս նոցա ՚ի թիւ  
սրբոց քոց յարքայութեանդ երկ-  
նից : Մանաւանդ՝ զի հաւատով  
մատուցուք զՊատարագս , հաշ-  
տեսցի Աստուածութիւնդ . եւ  
հանգուցէ զհոգիս նոցա :

Մարտիրոսաց

Սրբութիւն Սրբոց, մեծ ես  
եւ անաւոր : Եւ զինուորու-  
թիւնք հրեշտակացն օրհնեն  
զքեզ եւ ասեն : Փա՛ռք ի բար-  
ձունս Աստուծոյ . եւ յերկիր  
խաղաղութիւն :

Մարգարէից, Առաքելոց եւ Հայ-  
րապետաց :

Ս.մենակալ ես Տէ՛ր զօրու-



Թեանց, որ Թագաւորդ ես յա-  
ւիտենից: Որ նստիս յերկնից 'ի  
յերկինս, եւ լոյս ծագես յարա-  
րածս քո: Որ խոնարհուի թեամբ  
իջեր 'ի յերկիր, քեզ պատա-  
րադս մատուցանեմք: Եւ սուրբ  
զանուենդ քո փառաւորեմք. Տէր  
որ պսակիչդ ես քոց սրբոց՝ (այս  
անուն): Վասն զի սոքա են մեզ  
բարեխօս. Տէր ամենակալ 'ի  
քում յԱրքայու թեանդ:

**ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ**

Բոլոր Մերասացումեանց

(Իբրեւ յարդարեալ յայնքէն)

✠ Ո՛վ ամենօրհնեալ Փրկիչ Յիսուս, բազ-  
մութիւնք հրեշտակաց, և բոլոր երկնա-  
ւոր զօրաց, այս ժամուս իջնելով երկնքէն  
Միածին Թագաւորիդ հետ, կ'երգեն ու  
կըսեն. Սա է Որդին Աստուծոյ:

Մեր եւս միաբերան ձայնակից լինելով  
կըսեմք. Ուրախ եղիք երկինք, և Թող

ցնծան աշխարհի հիմերն. քանզի յա-  
ւիտենական Աստուածն երկրիս վրայ  
երեւցաւ, մարդոց հետ շրջեցաւ, որ մեր  
անձերն ապրեցունէ:

✠ Ո՛վ անճառելի Բանդ Աստուած. որ չորս  
դէմք՝ և չորս Թեւեր ունեցող հրեշտակաց  
հրեղէն կառքերուն վրայ կը նստիս, հա-  
ճեցար իջնել այդ երկնային փառքէդ,  
մեզ Քուստեղծածներուդ համար. և յանձն  
առիր աշակերաներուդ հետ բազմիլ ի  
սեղան, և այս անաւոր խորհուրդն սահ-  
մանել մեր փրկութեան համար: Եւ Սերո-  
բէներն ու Քերոբէներն հիանալով կը զար-  
մանան այս մարդասիրութեանդ համար, և  
երկնաւոր զօրաց պետութիւնք եւս սքան-  
չանալով՝ կ'աղաղակեն. Սուրբ, Սուրբ,  
Սուրբ, Տէր Զօրութեանց:

✠ Ուստի մեր ես հրեշտակաց այս ձայնից  
հետ միանալով, օրհնութեան երգեր կը  
նուագեմք ըսելով. Ո՛վ է մեր Տէր Աստու-  
ծոյ պէս Մարդասէր, որ մեզ համար, Խա-  
չեցաւ, Թաղեցաւ, և Յարութիւն առաւ,

և փրկագործութեան խորհուրդն հաւատարմութեամբ կատարելով այս աշխարհի մէջ, երկինքն Համբարձաւ Աստուածային փառքով. Սուրբ, Սուրբ, Սուրբ ես ո՛վ Տէր Աստուած մեր:

✠ Օրհնեալ ես ո՛վ ամենասիրելի Տէր մեր Յիսուս, որ հրեշտակային կարգաւորութեամբ պայծառացուցիր Քու սուրբ Եկեղեցիդ: Որ Թէև հազարաւոր հրեշտակապետներ թու առջեղ կեցած են, և բիւրաւոր հրեշտակներ կը պաշտեն զքեզ. բայց և այնպէս, հաճեց որ մարդիկներէ ևս օրհնութիւն և փառաբանութիւն ընդունիլ. Ուստի խորհրդաւոր ձայնիւ կ'երգեմք և մեր. Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ ես Տէր զօրութեանց:

✠ Սրբութիւն Սրբոց, Մեծ ես և ահաւոր, ո՛վ Տէր, Հրեշտակաց խումբերուն հետ և մեք կ'օրհնաբանեմք զքեզ, և կը զոչեմք. Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն:

✠ Ամենակալ ես, ո՛վ Տէր Զօրութեանց,

և յաւիտենական Թագաւոր, որ երկնքէն աւելի բարձր երկնից մէջ կը բնակիս, և լոյս կը ծագես թու արարածներուդ վրայ:

Կը փառաւորեմք թու սուրբ Անունդ, ո՛վ Տէր, որ խոնարհութիւնով իջար այդ բարձրութենէդ այս աշխարհ, և թու վըրկագործութեանդ յիշատակ՝ և անհուն սիրոյդ զբաւական Թողուցիր մեզ այս սուրբ Պատարագի խորհուրդն, որով թու անպական Մարմինդ և սուրբ Արիւնդ ճաշակելով, կը սրբուիմք մեր մեղքերէն:

✠ Ընդունէ, ո՛վ մարդասէր սուրբ Հայր, մեր աղօթքն ու օրհնութիւնն. մեր փառաբանութիւնն ու երկրպագութիւնն, թու ամեն պսակած սուրբերուդ բարեխօսութիւնով. և նոցա հետ երկնից արքայութեանդ արժանի ըրէ մեր ննջեցելոց հոգիներն, շնորհելով և մեզ՝ որ աստ և ի հանդերձեւումս համարձակութիւն ունենամք հրեշտակաց և սրբոց բազմութեան հետ երգակից ըլլալ և ըսել. — Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ ես Տէր Աստուած մեր:

Փա՛ռք ի բարձունս Ասաուժոյ,  
Ովսաննա՛, օրհնուժի՛նն ի բարձունս.  
Օրհնեա՛լ որ եկիր և գալոց ես  
անուամբ Տեանն:

(Երբ Սարկաւաճը Ս. Ալեհով և  
Տօրենայ ժամաբարին, հանդարտու-  
նեամբ կ'ըսէ այս Սաղմոս:)

Համբարձէ՛ք իշխանք զգրունս  
ձեր՛ի վեր, համբարձցին գրունք  
յաւխտենից եւ մոյցէ թագաւոր  
փառաց:

Եւ Պարարագինն խնկարիէ և հարցանէ  
Ո՞վ է սա թագաւոր փառաց  
Տէր զօրութեանց:

Սրկ. Սա ինքն է թագաւոր  
փառաց:

(Եւ Պարարագինն կ'երկրպագէ  
անէ և դողոսնեամբ, և սարկա-  
ւաճին յետեն ասնելով, և ի սաղ-  
մոսէն ժողովրդեան վրայ ըսելով)

Օրհնեա՛լ եկեալ անուամբ Տոնն:

(Ժամաբարն Սեղանին դասնալով  
ժողովրդեան ասլէ- ի-ր ձայնէրը  
և ը-այ. նշանակելու համար՝ թէ  
քուր ներքին և արտաքին մեղքերէ  
արքունելով, և վերջին շայր ճարտ-  
նեան սանեալով պարտ է Տօրենու  
Սորբ խորհորդին:

Իսկ եթէ հանդիսաւոր օր լինի, և վե-  
րաբերունն հանդիսաւոր կատարել կամե-  
նան, այս է արարողութիւնն:

Երբ դպիրք Սարմին Տէրունա-  
կան և ըսեն, Սարկաւաճանս գան  
խնկարիելով ՚ի սորբ խորհորդն:  
Սրկ. Յարեւու էհար զստրան իւր. եւ  
ինքն որպէս փեսայ, զի ելանէ յա-  
նազասէ իւրմէ:

Դպ. Եւ ցնծայնս որպէս հսկայ, յըն-  
թանալ զճանապարհս իւր:

Սրկ. Որք զքովքէիցն:

Դպ. Խորհրդաբար կերպարանիմք:

Եւ քան յարեւելից Կողմն

Սբէ. Ճանապարհ արարէր այնմիկ՝ որ  
նստի յերկնից երկինս ընդ արեւելս:

Դպ. Եւ կենդանարար երրորդութեա-  
նքն, զերեքսրբեան օրհնութիւնս մա-  
սուցանեմք:

Եւ քան ի հարաւաւիողմն

Սբէ. Աստուած 'ի հարաւոյ եկեացէ .  
եւ սուրբն 'ի Փառան լեռնէ:

Դպ. Չամենայն զկենցաղականս 'ի  
բաց դնելով զգործս:

Եւ քան յաստիճանն խորանին. Եւ  
բարձրոյ ահաւոր խորհրդոյն աստացե  
հանդարտութեամբ:

Համբարձէք իշխանք զգրունս ձեր  
ի վեր. համբարձցին դրունք յաւիտե-  
նից, եւ մտցէ Թագաւոր փառաց:

Եւ պատարագոյն ինկարէէ Եւ հար-  
ցանէ:

Ո՛վ է սա Թագաւոր փառաց, Տէր  
հզոր զօրութեամբ իւրով. Տէր կարող  
'ի պատեւազմի:

Դպ. Որպէսզի զԹագաւորն ամենե-  
ցուն ընդունիցիմք:

Սբէ. Համբարձէք իշխանք զգրունս  
ձեր 'ի վեր. համբարձցին դրունք յա-  
ւիտենից, եւ մտցէ Թագաւոր փառաց:  
Քհ. Ո՛վ է սա Թագաւոր փառաց Տէր  
զօրութեանց:

Դպ. Եւ զերեջտակացն հանդիսապէս  
ընծայեալ բերեմք զկարգ:

Սբէ. Սա ինքն է Թագաւոր փառաց:

Սբէ. Եւ եւս խաղաղ. զՏէր աղա.  
Դպ. Ե ժող. Տէր ողորմեա:

Սբէ. Եւ եւս հաւատով եւ սրբ-  
բութեամբ կացցուք յաղօթս ա-  
ռաջի սրբոյ Սեղանոյս Աստու-  
ծոյ՝ ահիւ: Մի՛ խղճիւ եւ դայ-  
թակղութեամբ. մի՛ նենգու-  
թեամբ, խորամանկութեամբ,  
մի՛ պատրանօք եւ խարէու-  
թեամբ: Մի՛ երկմտութեամբ եւ

մի՛ թերահաւատութեամբ, այլ  
ուղիղ վարուք, պարզ մտօք,  
միամիտ սրտիւ, կատարեալ հա-  
ւատով. Լցեալ սիրով, լի՛ եւ  
առաւելեալ ամենայն գործովք  
բարութեան, կացցուք յազօթս  
առաջի սրբոյ սեղանոյս Առտու-  
ծոյ, եւ գացուք զողորմութեան  
զշնորհս. Յաւուր Յայսնութեան  
եւ ՚ի միւսանգամ Գալստեան  
Տեառն մերոյ եւ Փրկչին Յի-  
սուսի Բրիստոսի, կեցուցէ՛ եւ  
ողորմեսցի՛ :

ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՔԱՐՈՁԻՆ

Որ պարտաւոր է ինչպէս յարմար  
է անձինքն :

Առաւել եւս հաւատքով եւ մարբրութիւ-  
նով եւ վախով աղօթքի կենամք Աստու-  
ծոյ այս սուրբ Սեղանին առջեւ :

Մի՛ խղճի խայժով, եւ մի՛ գայթակղու-  
թիւն տալով, մի՛ նենգութիւնով եւ մի՛ խո-  
րամանկութիւնով, մի՛ խաբելով եւ մի՛ խա-

բերայութիւնով. մի՛ երկու մտքէ ըլլալով,  
եւ մի՛ Թերահաւատութիւնով. Այլ բարի  
վարքով պարզ մտքով. միամիտ սրտով  
եւ կատարեալ հաւատքով, եւ սիրով եւ ա-  
մեն բարի գործերով յցուած, Աղօթքի կե-  
նամք Աստուծոյ սուրբ Սեղանին առջեւ.  
որպէս զի իւր ողորմութեան շնորհքն ըն-  
դունիմք, եւ մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս  
Բրիստոսի յայտնուելուն եւ միւսանգամ  
Գալստեան օրը՝ ողորմիմեզ կապրեցունէ :  
Դպ. և Ժ. աղ. Կեցո՛ Տէր եւ ողոր.  
Սբ. Օրհնեա՛ Տէր :

Քահ. Ծնորհօք եւ մարդասի-  
րութեամբ Տեառն մերոյ եւ  
Փրկչին Յիսուսի Բրիստոսի, ընդ  
որում քեզ Հօր՝ միսնդամայն  
եւ Հօգւոյդ Սրբոյ՝ վայելէ փառք  
իշխանութիւն եւ պատիւ. այժմ  
եւ միշտ եւ յաւիտեանս յաւի-  
տենից. Ամէն :

Խաղաղութիւն ամենեցուն :  
Դպ. և Ժ. աղ. Եւ ընդ հոգ. քում :

Մէջ. Աստուծոյ երկիրսպագեաց.  
Դպ. և Ժող. Առաջիք քո Տէր :

Մէջ. Ողջո՞յն տուք միմեանց 'ի համբոյր սրբութեան. եւ որք ոչ էք կարողք հաղորդիլ Աստուածային խորհրդոյս՝ առ զրուսս ելէք եւ աղօթեցէ՛ք :

Ողջո՞յն (բարեւ) տուէք իրարու, սրբութեան համբոյրով. և որք կարող չէք հաղորդուիլ այս Աստուածային խորհուրդէն, զրան առչեւ ելէք և աղօթք ըրէք :

Նախնի Քրիստոսեանց ժամանակ սոփորութեան եր որ ազաշխարհներն և Հաղորդութեան արժանի չեղաները, այս մեջոցին եկեղեցիներն որոքս կ'ելնէին խոնարհութեանով, և որոն առջեւ կ'աղօթէին: Նախեւ իբարտահայտանալոյ եղողները՝ անկեղծութեամբ պագորտելով կը հաշորտէին ժաման զի հաշոր սրբով պետք է աղօթել Աստուծոյ :

Դպ. և Ժող. Քրիստոս 'ի մէջ մեր յայտնեցաւ. Որ էին Աստուածաստ բազմեցաւ :

Խաղաղութեան ձայն հընչեցաւ Սուրբ ողջունի հրաման տուաւ : Եկեղեցիս մի անձն եղեւ :

Համբոյրս յօդ լըման տուաւ : Թշնամութիւնն հեռացաւ :

Մէքն յընդհանուրս սփռեցաւ :

Արդ պաշտօնեայք բարձեալ զձայն :

Տուք օրհնութիւն 'ի մի բերան. Միասնական Աստուածութեանն Որում Սրովբէքն են սրբաբան :

### ՔԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Քրիստոս մեր մէջ յայտնուեցաւ, Որ էին Աստուած այս տեղ (սեղանին վրայ) բազմեցաւ. խաղաղութեան ձայն լսուեցաւ, Սուրբ ողջունի հրաման տրուեցաւ. Եկեղեցիս (չառաւոր բուրդ տեղեցի) մէկ անձ, մէկ հոգի եղաւ. և այս ողջունի

Համբոյրն՝ միռնեան կապ եղաւ. թշնամոռիւնը հեռացաւ. Քրիստոսի Սէրը ընդ հանուրիս մէջ տարածուեցաւ: Ուրեմն պաշտօնեաներ, ձայներնիդ բարձրացունելով՝ միարեքան օրհնութիւն տուէք միասնական (համագոյ) Աստուածունեան, զոր եւ Սերորէներն կը փառաբանեն:

(Այս երբէ ժամանակ Կրիստոսեայտի նշան եղբայրական սիրոյ և հաշտութեան զերար կը թարեւեմելուին ինքեանց խոնարհեցընելով փոխանակ համբոյրի. և ըսելով: Քրիստոս ի մէջ մեր յայցնեցաւ. և իսան կը պատասխանէ Օրհնեալ է յայցնութիւնն Քրիստոսի (Յայտնութեան կը նշանակէ Քրիստոսի երեւումը. Տարբերութիւնը:)

Ոմանք և զայս ասեն ի հանդիսի Տօնի

**ՄԻՆ.** Որք հաւատով կայք յանդիման Յուրք սեղանոյս արքայական, Տեսէք բազմեալ զՔրիստոս արքայն, եւ շարք պատեալ զօրք վերնական:

**ԴԱ.** Վեր համբառնամք զայս ունելով, եւ պաղատիմք զայս ասելով.  
Զմեզս մեր մի յիշեսցես.  
Այլ զձուռեամբ ըր քաւեսցես.  
Ընդ հրեշտակաց օրհնեմք զրեզ,  
եւ ընդ սրբոց քոց, Տէր փառք քեզ:

**ՄԻՆ.** Ահիւ կացցուք, երկիւղիւ կացցուք, բարեք կացցուք, և նայեցարուք զգուշութեամբ:

(Այսինքն. Սարսափելով կենամք, երկիւղով և բարի մտքով կենամք, և զգուշութիւնով նայիմք այս սուրբ խորհուրդին:

**ԴԱ.** Եւ Ժող. Առ քեզ Աստուած:  
(Այսինքն. Քեզ կը նայիմք ով Աստուած, և մեր յոյսը ըս վրայ դրած եմք:)

**ՄԻՆ.** Պատարագ Քրիստոս մատչի անարատ Դառն Աստուծոյ:

(Այսինքն. Աստուծոյ անարատ Դառնուկը՝ Քրիստոս, պատարագ (զոհ) կը մատուցուի:)

Դպ. և Ժող. Ողորմութիւնս եւ  
խաղաղութիւնս եւ պատարազ  
օրհնութեան :

(Այսինքն. Կը հաւատամք որ Քրիստոս  
մեր ողորմութիւնն ու խաղաղութիւնն է,  
և օրհնութեան պատարազ է մեզ համար)

Մըհ. Օրհնեա՛ Տէր :


Քահ. Շնորհք, Սէր, եւ Աստ-  
ուածային օրբարար զօրութիւնն  
Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սըր-  
բոյ. եղիցի՛ ընդ ձեզ ընդ ամե-  
նեսեան :

Դպ. և Ժող. Ամէն. եւ ընդ հոգ-  
ւոյդ քում :

Մըհ. Զգրուես, զգրուես. ամե-  
նայն իմաստութեամբ եւ զգու-  
շութեամբ : Ի վեր ընծայեցու-  
ցէք զմիաս ձեր Աստուածային  
երկիւղիւ :

(Այսինքն. Դուռները, զոցեցէք դուռնե-  
րը ամեն իմաստութիւնով եւ զգուշու-

Յիւնով. և Աստուծոյ երկիւղովը դէպ ի  
վեր ընծայեցէք ձեր մտքերը.)

 (Եստե՛նի շքեհարմարեցից շահա-  
նակ սոջորոս-լիւն էր այս միջոցին  
Տաճարին դռները փոցել, որ անհա-  
ւասունքն ու լեւրեհասարմերն շքեհ-  
նեն Ս. Խորհուրդը Քայջ Ս. Ն. Լամբ-  
րոնացիի ըսածին համար, Քրիստոսե-  
ւոյն պարտ է նաեւ իւր մտքին դռները  
փոցել ճարմասարմարածանքներու  
դեմ, եւ հոգւոյ ազգով արեանել այս  
Ս. Խորհուրդին միջոս-լիւնը :)

Դպ. և Ժող. Ունի՛մք առ քեզ,  
Տէր ամենակալ :

(Այսինքն. Մեր մտքերը քու վրադ են,  
ով ամենակալ Տէր.)

Մըհ. Եւ զոհացարմէք զՏեառ-  
նէ բոլորով սրախ :

(Բոլոր սրտով շնորհակալ եղիք Տիրոջմէ :)

Դպ. և Ժող. Արժան եւ իրան :



(Այսինքն. Շատ արժանի և իրաւացի է շնորհակալ ըլլալ, որ երկինքի և երկրի Ստեղծող Աստուածը, մեր փրկութեան համար Մարդ եղաւ, և մեզ համարձակութիւն տուաւ սերորէններուն ու բերորէններուն հետ երգակից ըլլալ:)

Իսկ ի հանդիսի աւուրս զինի Աշխարհիս  
էրային ասնն զայս:

**ՍԵՆ.** Եւ զըսոյց փրկութեան որ միշտ ընդ ամենայն տեղիս գոհութիւն մասուցանեմք քեզ Քրիստոս: Որով եւ գիրաշարի զՅարութիւնդ քո զովն զօրութիւնք:

Սարսին սերովբէքն. զոգա՛ն քերովբէքն, եւ իշխանութիւնք վերին պետութեանցն պարտեալ քաղցր ձայնիւ եղանակեն եւ ասնն:

**ՍԵՆ.** Օրհնեալ Տէր:

**Քահ.** Եւ ընդ Սերովբէսն եւ ընդ Քերովբէսն, միաձայն սրբասա-

յութեամբ յօրինել նուագս, եւ համարձակապէս գոչելով աղաղակել ընդ նոսին եւ ասել:

**Իդ.** Եւ ժող. **ՍՈՒՐՐ,** **ՍՈՒՐՐ,** **ՍՈՒՐՐ,** **Տէր** զօրութեանց, **Լի** են երկինք եւ երկիր **փառօքքո.** **Օրհնութիւն** ՚ի բարձունս, **Օրհնեալ** որ երկիր եւ գալոցդ եւ անուամբ **Տեառն:**  
**Ո՛վսաննա** ՚ի բարձունս:

(Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր զօրութեանց, երկինք և երկիր լեզուն են քու փառքովդ: Օրհնութիւն ՚ի բարձունս, օրհնեալ ես, որ եկար և պիտի գաս, անուամբ Տեառն)

**Ս. Ղ. Օ Թ. Ք**

**Համայնորհեալք Քահանային**

**՚ի ծառայ Աղօթէց**

Ո՛վ Ամենասուրբ Աստուած, հին այսպիսի հրեշտակային երգով այս ժամուս, Սերովբէսն ու Քերովբէսն՝ որ է Անդրանկաց եկեղեցին, և երկինքի բոլոր սուրբերու բազմութիւնն՝ որ է Յաղթա-

կան եկեղեցին. և ընդհանուր բրիտո-  
նէից միաբանութիւնը՝ որ է Զինուորեալ  
եկեղեցին, երկիրք և երկիր, կը միանան  
օրհնել և փառաբանել զքեզ՝ բու անձիւ  
բարերարութեանցդ համար առ մեզ:

Որ Հին օրինաց ժամանակ զանազան  
եղանակով ինամեցիր և կառավարեցիր  
բու եկեղեցիդ՝ մարգարէներով, օրէնքով  
բահանայութիւնով և զոհերով. իսկ ապա  
վերջին ժամանակ մեր մեղքերը բոլորովին  
ջնջելու համար, տուիր մեզ բու Միածին  
Որդիդ, Օծեալ Զոհ, Գառն և Երկնաւոր  
Հաց, Քահանայապետ և Պատարագ. Որ  
եկաւ հաւաստեալ, ստուգապէս Մարդ  
եղաւ, և Աստուածային բնութեան հետ  
անշփոթ միաւորութիւնով, Սուրբ կոյս  
Աստուածածին Մարիամէն մարմին ա-  
ռաւ, և բաց 'ի մեղաց՝ մարդկային ամեն  
բնական յատկութիւններն իւր վրայ կրեց,  
և ինքզինքը պատարագեց մարդկային ազ-  
գի փրկութեան առիթն եղող Խաչին վրայ  
նախապէս սահմանելով նոյն Պատարագի

խորհուրդը վերնաստան մէջ, Հացով և  
Գինիով, այսպէս ըսելով.

**Մշ. Օրհնեա՛ Տէր.**

**Քահ. Առէ՛ք, կերէ՛ք, այս է՛**  
**Մարմին իմ, որ վասն ձեր եւ**  
**բազմաց բաշխի՝ ի քաւութիւն**  
**և և ի թողութիւն մեղաց:**

(Այսինքն. Առէք կերէք, այս (Հացը)  
իմ Մարմինս է, որ կը բաշխուի ձեր և  
շատերու մեղաց քաւութեանն ու թո-  
ղութեանը համար.)

**Դպ. և Ժող. Ամէն.**

(խոստովանիմք և հաւատամք.)

**Մշ. Օրհնեա՛ Տէր:**

**Քահ. Արբէ՛ք ի սմանէ՛ ամե-**  
**նեքեան, այս է՛ Արիւն իմ նո-**  
**րոյ ուխտի. որ յաղագս ձեր**  
**եւ բազմաց հեղանի. ի քաւու-**  
**թիւն եւ ի թողութիւն մեղաց:**

(Այսինքն. Խմեցէք ասկէ ամենքդ, այս  
է իմ նոր ուխտի Արիւնս, որ կը Թափուի

մեր ու շատերուն մեզաց քառօթեան ու  
Թողութեանը համար.)

**Դ. և Ժ. Ա. ԱՅՆ.**

(խոստովանիմք և հաւատամք.)

**Դ.** Հայր երկնաւոր, որ զՈր-  
դից քօ կաուր 'ի մահ վասն  
մեր պարտապան պարտեաց  
մերոց. հեղմամբ Արեան Նորա  
ազաչեմք զքեզ, ողորմեա՛ քօ  
բանաւոր հօտի:

(Այլ երկնաւոր Հայր, որ բու  
Որդիդ մեզ համար մենեկու տուիր, որ  
մեր պարտքերը (մեղքերը) իւր վրայ առ-  
նու. Անոր Թափած Սրիւնով կ'ազաչեմք  
զքեզ, ողորմէ՛ բու բանաւոր հօտիդ.

(ժողովրդեանդ.)

**ԱՂՕԹՔ**

Համայնաւորութեամբ Բանանային  
'ի Ձաճուկ Աղօթեց

Ո'վ երկնաւոր Հայր, բու բարերար  
Միածին Որդիդ պատուիրան աւանդեց

մեզ, որ այս խորհուրդը՝ իւր յիշատա-  
կին համար միշտ կատարուի:

Ինքն մեր մարդկային բնութենէն ա-  
ռած մարմինով՝ մահուան ստորին կող-  
մերն իշնելով. դժոխքի կապանքներն ճը-  
զօրեղապէս քակեց ու քանդեց, և զքեզ  
միայն ճանչցուց մեզ ճշմարիտ Աստուած,  
Աստուած կենդանեաց և մեռելոց:

Աւատի այժմ ո՛վ Տէր, այն տրուած ճը-  
րամանին համեմատ, երբ կը մատուցուի  
այս փրկարար խորհուրդն Մարմնոյ և  
Արեան Միածին Որդւոյդ. կը յիշեմք Նո-  
րա փրկագործ Չարչարանքը՝ որ մեզ հա-  
մար կրեց. կը յիշեմք կենսատու (կեանք  
տուող) Խաչելութիւնը. երբ քօրեաց Թա  
ղումը, երանելի Յարութիւնը, աստուա-  
ծապէս Համբարձումը. և բու Այ կողմդ  
նստիլը. և կը խոստովանիմք ու կ'օրհնեմք  
նորա ահաւոր և փառաւորեալ միւսան-  
գամ Գալուստը:

**ՍԵՂ. Օրհնեա՛ Տէր:**

**Բ. Եւ զքոյս 'ի քոյոց քեզ**

մատուցանեմք, ըստ ամենայնի  
եւ յազազս ամենեցունս :

(Այսինքն. Ո՛վ Հայր Աստուած, Յիսուս  
Փրկիչը բուկղ էր, և բեզմէ եկաւ 'ի մեզ.  
հիմակ ալ բեզ կ'ընծայեմք զայն՝ այս  
խորհուրդով, մեր և ամենուս փրկութեան  
համար.)

Դպ. և Ժող. **Յ**ամենայնի օրհ-  
նեալ ես, **Տէ՛ր**. օրհնեմք զբեզ. գո-  
վեմք զբեզ. գոհանամք զքէն. ա-  
ղաչեմք զբեզ, **Տէ՛ր Աստուած մեր**

Այսինքն. Ամեն բանի մէջ օրհնեալ ես  
Տէր, կ'օրհնեմք զբեզ, զի շատ է բու ե-  
րախտիբդ մեր վրայ. կը գովեմք զբեզ, որ  
խաղաղութեան միջնորդ եղար բու չար-  
չարանքովդ. կը գոհանամք բենէ ու կ'ա-  
ղաչեմք զբեզ Տէր Աստուած մեր, վասն  
զի բեզմով նորոգուեցանք, և կեանք ըն-  
դունեցանք.)

Մշ. **Օրհնեալ Տէր .**

**Քահ. Խաղաղութիւն ամենեցունս :**

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քումս :  
Մշ. Աստուծոյ երկիրպագեսց.  
Դպ. և Ժող. Առաջի քո **Տէր .**

**Որդի՛ Աստուծոյ**, որ պա-  
տարագեալ Հօր 'ի հաշտութիւն,  
Հաց կենաց բաշխիս 'ի մեզ .  
հեղմամբ Արեան Քո սուրբ,  
աղաչեմք զբեզ, որդորմեալ Ար-  
եամբ քով փրկեալ հօտի :

(Այսինքն. Ո՛վ Որդի Աստուծոյ Յիսուս,  
որ Հայրը մեզ հետ հաշտեցունելու համար  
պատարագուելով՝ Հաց կենաց կը բաշ-  
խուիս մեր մէջ. բու թափած սուրբ Արի-  
նովդ կ'աղաչեմք զբեզ, որդորմէ բու Ար-  
եամբդ փրկուած հօտին (ժողովրդեանս))

(Սոյն Տիջնին Ժամարաբ Կահանայն  
Երկրպագելով՝ Հօր եւ Հոգւոյն  
Սրբոյ զբոնելեանը եւ ներկայո-  
ւելեանը կը հայցէ խորհրդաւոր Բան-  
եւ . եւ Երկեղաժողովեամբ խաչա-  
կեւելով կ'օրհնէ նոնքեալ Հացն ու  
Գինին, որ գոխարկուելն է Մարտին  
եւ Սրբեան Քրիստոսի . յետոյ կ'ըսէ.)

## ՄԻԿ . Օրհնեա՛ Տէր .

Քահ . Որպէս զի եղիցի՛ Սա՛ ա-  
մենեցուն մեզ մերձեցելոցս, յան-  
դատապարտութիւն, ի քաւու-  
թիւն, և և ի թողութիւն մեզաց,  
(Այլն . Որպէս զի՛ Սա մեզ ամեն մտե-  
ցողներուս, մեղաց քաւութիւն ու թողու-  
թիւն ըլլայ, առանց դատապարտութեան .)

Դպ . և Ժող . Հողի՛ Աստուծոյ,  
որ գփառակցի քո զխորհուրդ  
իջեալ ՚ի յերկնից կատարես ՚ի  
ձեռս մեր . հեղմամբ Արեան  
Սորս աղաչեմք զքեզ, համպո՛  
զՆոպիս մեր ննջեցելոցն :

(Այլն . Ո՛վ Հողի Աստուծոյ, որ եր-  
կինքէն իջնելով մեր ձեռքով կը կատա-  
րես քու փառքիդ (հաւասարապէս) հաղորդ  
եղող (Յիսուսի) պատարագին այս խոր-  
հուրդը . Ասոր թափած Արիւնովը կ՛աղա-  
չեմք զքեզ, հանգչեցնու մեր ննջեցելոց  
հոգիները Արքայութեանդ մէջ .)

## Ա Ղ Օ Յ Ք

Համայնաշնորհեամք Աղօթից  
Քահանային

Ո՛վ Սուրբ Հողի Աստուած . կ՛աղաչեմք  
այս սուրբ Մարմնոյ և Արեան խորհրդով՝  
շնորհէ մեզ սէր, հաւատքի հաստատու-  
թիւն, և փառաբերի խաղաղութիւն բոլոր  
աշխարհի . սուրբ եկեղեցւոյ և ամեն ուղ-  
ղափառ եպիսկոպոսներուն, քահանանե-  
րուն, սարկաւազներուն, աշխարհի Թո-  
գաւորներուն, իշխաններուն, ժողովրդոց,  
ճանապարհորդներուն, նաւորդներուն, և  
կապեալ ու բանտարկեալ, վտանգի հան-  
դիպած, դառն աշխատութեանց մատ-  
նուած և բարբարոսաց պատերազմներու  
ենթարկուած Քրիստոնեայններուն :

Ասով շնորհէ օգերու բարեխառնու-  
թիւն, արտերու պողարերութիւն, և պէս  
պէս ցաւերով հիւանդացողներուն փու-  
ծապէս առողջութիւն :

Ասով հանգիստ շնորհէ յառաջուց ի վեր  
ի Քրիստոս ննջեցեալներուն, մեր նախա-

հայրերուն, հայրապետներուն, մարգարէներուն, առաքեալներուն, վկայեալներուն (մարտիրոսներուն,) եպիսկոպոսներուն, երէցներուն, սարկաւազներուն, և Քու սուրբ եկեղեցւոյ ուխտին բոլոր (անդամներուն.) նաև ամեն աշխարհական կարգէ արանց և կանանց, որք հաւատով վախճանած են:

**ՄԷԿ. Օրհնեալ Տէր .**

**Քահ. Ընդ որս եւ մե՛զ այց աբացես, բարերար Աստուած, աղաչեմք:**

Այսինքն. Ննջեցեալներուն հոգիներուն հետ և մեզ այցելուիրն ըրէ, ո՞վ Սուրբ Հոգի Աստուած, կ'աղաչեմք.)

**Դ. և Ժող. Յիշեալ Տէր եւ ողոր.**

**Քահ. Աստուածածնին սրբոյ կուսին Մարիամու, եւ Յովնանու Մկրտչին, Ստեփաննոսի նախավկային, եւ ամենայն Սըրբոց՝ եղիցի՛ յիշատակ ՚ի սուրբ Պատարագս, աղաչեմք:**

**Դ. և Ժող. Յիշեալ Տէր եւ ողոր.**

(Ի նշան երկնաւոր եւ երկրաւոր Եկեղեցւոյ Ռոմեան, այս Ռիւոցին և Եկեղեցւոյն Բոլոր Սուրբերը.)

Սարկաւազն յաշակողմն Սեղանոյն ձեռնամած ասացէ:

**ՄԷԿ. Առաքելոց սրբոց, մարգարէից. վարդապետաց մարտիրոսաց. եւ ամենայն Հայրապետաց սրբոց, Առաքելագործ եպիսկոպոսաց. երիցանց. ուղղափառ սարկաւազաց. եւ ամենայն սրբոց. եղիցի՛ յիշատակ ՚ի սուրբ պատարագս. աղա:**

**Դ. և Ժող. Յիշեալ Տէր եւ ող.**

**ՄԷԿ. Օրհնեալ, զովհաւ իւր փառաւորեալ, հրաշալի եւ աստուածազարդ Յարութեանն Քրիստոսի երկիրպագանեմք:**

**Դ. և Ժող. Փառք Յարութեան, (կամ Տէրութեան) քո Տէր:**

Ի թօնի Արքայն զայս ասա :

**Սուրբ** եւ Աստուածահաճոյ  
(այս անուն). (մարգարէին. հայրա-  
պետին. առաքելոյն. մարտի-  
րոսին.) որոյ այսօր զխշատակն  
կատարեցաք, եղիցի՝ յիշատակ  
'ի սուրբ պատարագս, սղաչեմք,  
Դ. Եւ Ժ. Յիշեա՛ Տէր եւ ող.

**Սբկ.** Առաջնորդացն մերոց եւ  
առաջին Լուսաւորչացն՝ սրբոց  
Թագէտօի եւ Բարդուղիմէոսի  
Առաքելոյն, եւ Գրիգորի Լու-  
սաւորչին. Արիստակէսի. Վր-  
գանիսի. Յուսկանն. Գրիգորիսի.  
Ներսիսի. Սահակայ. Դանիէլի.  
եւ Պաղայ. Մեսրոպայ վարդա-  
պետին. եւ Գրիգորի Նարեկայ-  
ւոյն. եւ Ներսիսի Կրայեցւոյն  
(Շնորհալոյն.) Յովաննու Ո-  
րոտնեցւոյն, եւ Գրիգորի եւ  
Մովսիսի Տաթեւացեացն. եւ

սրբոց Գրիգորիսեանց եւ Ներ-  
սիսեանց. Հովուաց եւ Հովուա-  
պետացն Հայաստանեայց. եղիցի՝  
յիշատակ 'ի սուրբ պատարագս,  
աղաչեմք,

Դ. Եւ Ժ. Յիշեա՛ Տէր եւ ող.

**Սբկ.** Միանձնացելոց սրբոց, ա-  
ռաքինաւէր եւ աստուածուտոյց  
կրօնաւորացն, Պօղոսի. Անտօնի.  
Պօղայ. Մակարայ. Անտիբոսի.  
Աբբայ Մարկոսի. Սրապիմոնի.  
Նեղոսի. Աբսէնի. Եւազրի. Պար-  
սամայ. Յովհաննիսեանց եւ Սի-  
մէոնեանց. սրբոց Ոսկեանց եւ  
եւ Սուքիասանց. եւ ամենայն  
սրբոց հարց՝ եւ աշակերտելոց  
նոցին ընդ օրեզերս. եղիցի՝ յի-  
շատակ 'ի սուրբ պատարագս ա.  
Դ. Եւ Ժ. Յիշեա՛ Տէր եւ ող.

**Սբկ.** Թագաւորաց հաւատացե-  
լոց սրբոց՝ Արգարու. Կոստան-

զիանութի. Տրդատայ, եւ Թէո-  
դոսից, եւ ամենայն սուրբ եւ  
բարեպաշտ թագաւորաց եւ աս-  
տուածառէր իշխանաց, եղիցի՝  
յիշատակ ի սուրբ պատարագս ա.  
Դպ. Լ Ժող. Յիշեա՛ Տէր եւ ող.

Սբկ. Ընդհանո՛ւր ամենայն հա-  
ւատացելոց, արանց եւ կանանց,  
ծերոց եւ աղայոց, եւ ամենայն  
չափու հասակի հաւատով եւ  
սրբութեամբ ՚ի Քրիստոս նրն-  
ջեցելոց, եղիցի՝ յիշատակ ՚ի  
սուրբ պատարագս, աղաչեմք,  
Դպ. Լ Ժող. Յիշեա՛ Տէր եւ ող.  
Սբկ. Օրհնեա՛ Տէր

Քահ. Եւս առաւել զԵպիսկո-  
պոսապետն մեր եւ զպատուա-  
կան Հայրապետն ամենայն Հա-  
յոց զՏէր (այս անուն) Կաթողի-  
կոսն, եւ զՊատրիարք Երուսա-  
ղէմի զՏէր (այս անուն) Սրբեւ-

պիսկոպոսն, եւ զՊատրիարք Կոս-  
տանդնուպոլսոյ զՏէր (այս անուն)  
Սրբ եպիսկոպոսն, շնորհեսցե՛ս  
մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ  
վարդապետութեամբ

(Եւ Ժողովուրդը պէտք է ըսէ.  
Ամէն. Աստուած հաստատուն պահէ  
Հայոց Ազգն ու Եկեղեցին)

Սբկ. Գոհութիւն եւ փառաբա-  
նութիւն մատուցանեմք քեզ,  
Տէր Աստուած մեր, վասն սուրբ  
եւ անմահ պատարագիս որ ՚ի  
վերայ սրբոյ սեղանոյս, զի զսա՛  
մեզ ՚ի սրբութիւն կենդանու-  
թեան պարգեւեցիր: Սովաւ չը-  
նորհեա՛ զո՛չք, զհաստատութիւն  
եւ զըղձալի զխաղաղութիւն ա-  
մենայն աշխարհի, սրբոյ Եկե-  
ղեցւոյ եւ ամենայն ուղղափառ  
եպիսկոպոսաց, Եպիսկոպոսա-  
պետին մերոյ եւ պատուական



Հայրապետին ամենայն Հայոց տեսանս (այս անուն) Կաթողիկոսին. եւ սրբոյ Երուսաղէմի. . . եւ Կ. Պոլսոյ (այս անուն) Պատրիարքին. եւ մերոյ Արճի եպիսկոպոսին եւ երջանիկ Բարունապետին տեսանս (այս անուն). եւ Քահանայիս որ զպատարագս մատուցանէ:

Եւ վասն զօրութեանց եւ յաղթութեանց թագաւորաց քրիստոնէից եւ իշխանացն բարեպաշտից: Ազաչեսցուք եւ խընդրեսցուք եւ վասն հօգւոյն հանգուցելոց: Եւս առաւել վասն հանգուցեալ բարունապետացն մերոց, եւ շինողաց սրբոյ Եկեղեցւոյս, եւ որք ընդ հօլմանեաւ սորին են հանգուցեալ: Ազատութիւն եզրարց մերոց գերելոց, եւ շնորհ առաջիկայ ժողովրդեանս: Հանգի՛ստ հաւատով եւ սրբութեամբ ՚ի Քրիս-

տոս կատարելոցն. եզիցի՛ յիշատակ ՚ի սուրբ Պատարագս աղաչեմք:

ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՔԱՐՈՁԻՆ

Աղօթի ձեռով

Գոհութիւն ու փառաբանութիւն կը մատուցանեմք քեզ՝ ո՛վ Տէր Աստուած մեր, այս սուրբ սեղանիս վրայ մատուցուած սուրբ և անմահ Պատարագիս համար, որ մեր սրբութեանն ու կենդանութեանը համար պարգևեցիր մեզ:

Այս սուրբ Պատարագով շնորհէ՛ սէր և հաստատութիւն և փափաքելի խաղաղութիւն բոլոր աշխարհի. և սուրբ Եկեղեցիին և ամեն ուղղափառ եպիսկոպոսներուն. և մեր Եպիսկոպոսապետին ու պատուական Հայրապետին ամենայն Հայոց, Տէր (այս անուն) Կաթողիկոսին. և (այս անուն) Պատրիարքին, և այս Պատարագս մատուցանող Քահանային:

Կնդաչեմք և կը խնդրեմք, Քրիստոնէայ Թագաւորներուն և բարեպաշտ իշխաննե-

րուն համար եւս. որ զօրաւոր և յաղթող լինին: Կ'աղաչեմք նանև մեր ննջեցելոց հոգիներուն համար, մանաւանդ հանգուցեալ Հայրապետներուն և այս սուրբ Եկեղեցին շինողներուն, և ամեն անոնց համար, որ եկեղեցոյս հովանիին տակ նընջած են:

Ազատութիւն տո՛ր մեր գերի ինկած եղբայրներուն, և առաջիկայ ժողովուրդին շնորհք պարգեւէ:

Հանգստութիւն շնորհէ հաւատքով ու սրբութիւնով 'ի Քրիստոս կեանքերնին վերջացունողներուն, և թող յիշատակուին նոքա այս սուրբ Պատարագիս մէջ:

(Այս միջոցին Ժամաբար Կահանայն ի Զածուկ կ'աղօթէ Քալըր Քաբեգործ հասարակելոց եւ ողորմածաց համար, եւ մասնաւոր յիշարակութիւն կ'ընէ անուանոց՝ յարուկ Աղօթեալ եւ Պարարագ ինքրողաց):

Դպ. և Ժող. Ըստ ամենայնի եւ յաղագս ամենեցուն:

Այսինքն. Ամեն կերպով և ամենուն համար կը խնդրեմք:)

Սբկ. Օրհնեա՛ Տէր:

Քահ. Եւ եղիցի՛ ողորմութիւն մեծիս Աստուծոյ՝ եւ Փրկչիս մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ ձեզ ընդ ամենեւեանդ:

(Այսինքն. Աստուծոյ և մեր փրկիչ Յիսուս Քրիստոսի ողորմութիւնը՝ ամենուր հետ ըլլայ:)

Դպ. և Ժող. Ամէ՛ն. Եւ ընդ հոգւոյդ քուս:

Սբկ. (Զայնիւ Կարողելով) Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեաց. Դպ. և Ժող. Տէր ողորմեա՛:

Սբկ. Ամենայն սրբովք, զորս յիշատակեցաք. եւս առաւելապէս զՏէր աղաչեացուք:

(Կ'աղաչեմք. քու խաղաղութիւնդ պարգեւէ մեզ ո՞վ Տէր: Ամեն սուրբերով՝ զորս յիշատակեցինք, առաւելապէս կ'աղաչեմք զքեզ. Տէր ողորմէ մեզ. ) (1)

(1) Թարգմանութեանց՝ Աղօթեալ յեւս:

**Դու. և Ժող. Տէր ողորմեան՝**  
**Սբհ. Վասն մատուցեալ սուրբ**  
 եւ աստուածային անմահ Պատարագիս՝ որ ՚ի վերայ սրբոյ  
**Սեղանոյս, զՏէր աղաչեսցուք:**

(Սուրբ Սեղանիս վրայ մատուցուած, սուրբ և Աստուածային անմահ Պատարագով կ'աղաչեմք զքեզ:

**Դու. և Ժող. Տէր ողորմեան՝**  
**Սբհ. Որպէս զի Տէր Աստուած**  
 մեր, որ ընկալաւ զսա ՚ի սուրբ երկնային եւ յիմանալի իւր մատուցարանն. զփոխանակն առաքեսցէ առ մեզ զշնորհս եւ զպարգևս Հոգւոյն Սրբոյ զՏէր.

(Ո՛վ Տէր Աստուած մեր, ինչպէս որ ընդունեցիր այս սուրբ պատարագը բոս սուրբ, երկնային և հոգեւոր Սեղանիդ վրայ, նոյնպէս փոխարէն զրկէ մեզ Սուրբ Հոգիիդ շնորհքն ու պարգևները:)

**Դու. և Ժող. Տէր ողորմեան՝**  
**Սբհ. Ընկալ, կեցո՛ւ եւ ողորմեան.**

**եւ՝ պահեա՛ զմեզ, Տէ՛ր, քոյին շնորհիդ:**

(Ընդունէ, կեանք տուր, և ողորմէ մեզ, և բու շնորհքովդ պահէ զմեզ Տէր:)

**Դու. և Ժող. Կեցո՛ւ Տէր եւ ող.**  
**Սբհ. Զամենասրբունի զԱստուած**  
 ծածին զմիշտ Կոյսն Մարիամ, հանդերձ ամենայն սրբովք յիշելով. զՏէր աղաչեսցուք:

(Ամենասրբունի և միշտ Կոյս Մարիամ Աստուածածինն, ամեն սուրբերով մէկտեղ յիշելով՝ կ'աղաչեմք զքեզ:)

**Դու. և Ժող. Յիշեա՛ Տէր եւ ող.**  
**Սբհ. Եւ եւս միաբան վասն ճրջմարիտ եւ սուրբ հաւատոյս մերոյ զՏէր աղաչեսցուք:**

(Ամենքս միաբան մեր ճշմարիտ և սուրբ հաւատքին համար կ'աղաչեմք:)

**Դուքիք և Ժող. Տէր սղորմեան՝**  
**Սբհ. Զանձինս մեր եւ զմիմեանս**  
**Տեառն Աստուծոյ Ամենակալին**  
**յանձն արասցուք:**

(Մեր անձերը և մեկզմէկ Ամենակալ  
Տէր Աստուծոյդ կը յանձնեմք.)

**Դպ. և Ժող. Քեզ Տեսանդ յանձն  
եզիցուք:**

**Մշ. Ողորմեա՛ց մեզ Տէ՛ր Աս-  
տուած մեր, ըստ մեծի ողոր-  
մութեան քում. ասացուք ա-  
մենեքեան միաբանութեամբ:**

(Ողորմէ՛ մեզ Տէր Աստուած մեր. միա-  
բան կը խնդրեմք.)

**Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ողոր.**

**Մշ. Օրհնեա՛ աէր:**

**Քահ. Եւ տո՛ւր մեզ, համարձա-  
կածայն բարբառով՝ ընծայ ըզ-  
րերանս մեր, կարգալ զքեզ երկ-  
նաւորդ Հայր, երգել եւ ասել:**

(Ա. յ. Բ. Գ. Համարձակութիւն տուր մեզ  
ճայներնիս բարձրացունելով, աղաչել ըզ-  
րեզ ո՛վ երկնաւոր Հայր: և երգելով ըսել.)

**Հայր մեր որ յերկինս ես,  
սուրբ եղիցի անուն քու Եկես-**

**ցէ արքայութիւն քո. եղիցին  
կամք քո որպէս յերկինս եւ  
յերկրի: Զհաց մեր հանապա-  
զորդ՝ տո՛ւր մեզ այսօր եւ  
թո՛ղ մեզ զպարտիս մեր, որ-  
պէս եւ մեք թողումք մերոց  
պարտապանաց: Եւ մի՛ տանիր  
զմեզ ՚ի փորձութիւն. այլ փըր-  
կեա՛ ՚ի չարէ:**

(Ա. յ. Բ. Գ. Ո՛վ Հայր մեր, որ երկինքնես,  
քու անունդ սուրբ ըլլայ: Քու Թագաւո-  
րութիւնդ զայ, քու կամքդ Թո՛ղ ըլլայ,  
ինչպէս որ երկինքը՝ նոյնպէս և երկրիս  
վրայ: Մեր ամեն աւուր հացը՝ տո՛ւր մեզ  
այսօր եւ ներէ մեզ մեր պարտերը,  
ինչպէս և մեք կը ներեմք մեր պարտա-  
կաններուն: Եւ փորձութեան մի՛ տանիր  
զմեզ, այլ փրկէ՛ ՚ի չարէն.)

**Մշ. Օրհնեա՛ աէր:**

**Քահ. Զի քո՛ է արքայութիւն  
եւ զօրութիւն եւ փառք յա-  
ւիտեանս. Ամէն:**

Սաղազու թիւն ամենեցուն:

Դպ. և Ժող. Եւ ընդ հոգւոյդ քուսմ:  
Սրկ. Աստուծոյ երկիրպագիաց:  
Դպ. և Ժող. Առաջի քո Տէր:

(Բանանայն կը խոնարհի. նոյնպէս  
Քուր ժողովուրդը խոնարհելով ծոան-  
կէ զբայ պէտք է գան. զան զի  
Ժամարարը նոյն պահուն կը խնորի  
Ս. Հոգիէն՝ որ խոնարհելով երկըր-  
պագոսնիւն ընող ժողովրդեան ողորտի  
է- շորհի պարգեւէ յա-իդեանկան  
կենաց Բարիքը ժառանգելու համար):  
Սրկ. Օրհնեա՛ տէր:

Քահ. Քրիստոսիւ, Յիսուսիւ,  
Տէրամբ մերով. ընդ որում քեզ  
Հոգւոյդ Սրբոյ եւ Հօր ամենա-  
կալի՛ վայելէ փառք իշխանու-  
թիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ  
եւ յաւիտեանս յաւիտ. Ամէն:

Եւ Սարկաւազն ասէ ՚ի յայն Բարձր  
Պոսիտմէ՛:

Քահ. Ի Սրբութիւն Սրբոց:

Դպ. և Ժող. Միայն Սուրբ.  
Միայն Տէր. Յիսուս Քրիստոս.  
Ի փառս Աստուծոյ Հօր. Ամէն:

Սարկաւազն Բարձր յայնե-  
Պոսիտմէ Եւել, որ ուղիղ դի-  
տաւորութիւնով նայեցէք ես  
կը նշանակէ, ժողովուրդը հրատ-  
րել է՝ որ ուղարու-նեմք նայի է  
Սրբոսի-ի-ն, որ Սրբոց սեպհական  
է, այսինքն՝ ճշմարիտ հաւատացելը  
համար յայն Սրբարար է:

Եւ ի՛նչ ժողովրդեան յիշեցունել  
է ի՛նչ Սուրբն Սրբոց Քրիստոս, որ  
Վեր գրկու-նեան համար Խաչին զբայ  
Բարձրացաւ, Հօր Աստուծոյ Սրբ-  
Բոսնիւն Սրբոց խորանն էլաւ, որ  
իբեմ հաւատացողներն ես աւ ինքն  
յգէ. (Թովհ. ԺԲ. 32) Եւ անո՛-  
սոր համար ժամարարն գիւնէն վեր  
կը Բարձրացուցանէ ՂՍուրբ Խոր-

հուրքն Ի Սրբութիւն Սրբոց Գո-  
լէւով. որո՛ժ եւ շողովորդն հասա-  
որով կը պարտախանէ. Մի միայն  
Սուրբը, մի միայն Տէրը, Յիսուս  
Քրիստոս է՝ Հօր Աստուծոյ  
փառքովն. Ամէն.

Մըկ. Օրհնեա՛ Տէր.

Քան. Օրհնեա՛լ Հայր Սուրբ  
Աստուած ճշմարիտ.

Դու. և Ժող. Ամէն.

Մըկ. Օրհնեա՛ Տէր.

Քան. Օրհնեա՛լ Որդիդ Սուրբ,  
Աստուած ճշմարիտ.

Դու. և Ժող. Ամէն.

Մըկ. Օրհնեա՛ Տէր.

Քան. Օրհնեա՛լ Հոգիդ սուրբ,  
Աստուած ճշմարիտ.

Դու. և Ժող. Ամէն.

Մըկ. Օրհնեա՛ Տէր.

Քան. Օրհնութիւն եւ փառք  
Հօր եւ Որդոց եւ Հոգւոյն  
Սրբոց. Այժմ եւ միշտ եւ յաւի-

տեանս յաւիտեանից. Ամէն.  
Դու. և Ժող. Ամէն. Հայր Սուրբ,  
Որդիդ Սուրբ, Հոգիդ Սուրբ.

Օրհնութիւն Հօր եւ Որդոց  
եւ Սրբոց Հոգւոյն. Այժմ եւ միշտ  
եւ յաւիտեանս յաւիտ. Ամէն.

(Այս սուրբ երգոց շաճանակ  
Քահանայն շաճուկ կարգացած  
Աղջիկն համայն, այս աղջիկն բսել  
Քիչո շնորհարելով.)

Նայէ, ո՞վ Տէր մեր Յիսուս Քրիստոս,  
մեր վրայ նայէ երկինքէն՝ բու Սրբութիւն  
Սրբութեանդ խորանէն, և քու փառաւոր  
Թագաւորութեանդ Աթոռէն Եկու, սրբէ,  
և կեանք տո՛ր մեզ ո՞վ Յիսուս, որ Հօրը  
հետ կը նստիս, և այս տեղ կը Պատաս-  
բագուիս Արժանի ըրէ զմեզ, բու անա-  
բատ ու պատուական Մարմինդ և Արիւնդ  
ճաշակել, և մեր մեղաց Թողութիւն զոնել.

Մըկ. Օրհնեա՛ Տէր.

Քան. Ի Սուրբ, 'ի Սուրբ, պա-

տուական Մարմնոյ եւ յԱրեւնէ  
Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի  
Քրիստոսի՝ ճաշակեցոյ՝ ք սրբու-  
թեամբ. որ իջեալ յերկնից բաշ-  
տի ի միջի մերում:

Աս է կեանք, Յոյս, Յարու-  
թիւն, Քաւութիւն եւ Թողու-  
թիւն մեզայ: Սաղմոս աստ-  
ցէք Տեառն Աստուծոյ մերում.  
Սաղմոս ասացէք երկնաւոր թա-  
ղաւորիս մերում անմահի, որ-  
նստի ՚ի կառս քերովբէականոս:

(Ժամարար Ժահանջն զայս ըսե-  
լով, Ս. Ակեհով կը խաղաղնէ՛ք ժո-  
ղովրդեան կողմը՝ որ ծառնէի զբայ  
խոնարհած՝ պարտին աղջիւն: Այս  
կը դառնայ Ս. Սեղանին, եւ զա-  
բաժոյրը կը քոյնէ, մինչև առանջին  
Աղջիւնի կապարտումը, որոյ համայն  
պէտք է աղջիւն ժողովուրդն՝ ճանա-  
ւանդ Ս. Հաղորդութիւն առնելու  
պարտասարտողնէրն:)

## ԱՐՑՔԻ ՆԱԽ ՔԱՆ ԶՆԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

✠ Ո՛վ Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ եր  
կին քէն իջնելով մեր մէջ կը բաշխուիս, կը  
փափարիմ սրբութիւնով ճաշակել քու  
սուրբ եւ պատուական Մարմնիդ եւ Արի-  
նըդ. վասն զի կը հաւատամ, որ դու ես  
մեր կեանքը, դու ես մեր Յոյսը, մեր Յա-  
րութիւնն, եւ մեր մեղաց՝ Քաւութիւն ու  
Թողութիւն շնորհողը: Քեզ միայն պար-  
տիմք դիմել սաղմոսերգութիւնով եւ օրհ-  
նութիւնով, վասն զի դու ես մեր երկնաւոր  
անմահ թագաւորն, որ բերորէնքու կառ-  
քերուն վրայ կը նստիս:

Ո՛վ Հայր Սուրբ Աստուած, Որ քու  
Միածին Որդւոյդ անուանակից ըրիր  
զմեզ Քրիստոնեայ կոչելով, եւ լուսաւո-  
րեցիր զմեզ հոգեւոր աւազանի Մկրտու-  
թիւնով, կ'աղաչեմ, արժանի ըրէ եւ զիս  
ընդունիլ այս Սուրբ Խորհուրդը իմ մե-  
ղաց Թողութիւն գտնելու համար:

Տպաւորէ՛ իմ սրտիս մէջ քու Սուրբ  
Հոգւոյդ շնորհքը, ինչպէս ըրիր սուրբ

Առաքեալներուն, որք ճաշակելով զայս՝ մաքրեցին մեզքէ բոլոր աշխարհը:

Ուրեմն ս՛կ Տէր և բարերար Հայր, այս Հաղորդութիւնը մասն ըրէ այն ճաշակման՝ որ խորհրդաւոր Ընթրեաց երեկոյնն ճաշակեցին Քրիստոսի Տեսուն մերոյ աշակերտներն. և վերցնւ իմ վրայէս մեղքերուս խաւարը:

Իմ անարժանութեանս մի նայիր, Տէր, և մի արգիլեր Սուրբ Հոգւոյդ շնորհքը, այլ քու անբաւ մարդասիրութիւնովդ պարգեւէ ինձ այս Սուրբ Խորհուրդը բաւիչ մեղաց, և լուծիչ իմ յանցանաց: Ինչպէս որ խոստացաւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս և ըսաւ. «Նա՛ որ կ'ուտէ իմ Մարմինս, և կը խմէ իմ Արիւնս, յաւիտեան պիտի ապրի»:

Արդ՝ կ'աղաքեմ Տէր, արժանաւորութիւն շնորհէ և ինձ ճաշակել այս Սուրբ Խորհուրդէն, ի քաւութիւն իմ մեղաց, եւ օրհնել ու փառաւորել զամենասուրբ Երրորդութիւնդ զՀայր եւ զՍրբի եւ զՍուրբ Հոգի. Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. Ամէն:

(Այս միջոցն Տէր ողորմեա երբէն, յառաջագոյն յարուի ծանուցումսն ինչեք՝ երբ ժողովարդեան կողմանէ կը խնդրուէր. Բայց այժմ առն ապեն կ'երբո՛ւի. որո՞ւ պարտէ մահամահ յայնակէց լինի ժողովարդը. խնդրելով յԱստուծոյ՝ էր անչին, էր ընդանեաց, է-է-բ Ազգին, է- Բուր աշխարհի համար, երկնասոր է- երկրասոր Բարբէ:)

Սրկ. Սաղմոս ասացէ՛ք Տեսուն Աստուծոյ մերոյ, զպիբք. ձայնիւ քաղցրութեամբ զերգս հոգեւորս. Զի սմա վայելին սաղմոսք, եւ օրհնութիւնք, ալէլուք եւ երգք հոգեւորք: Պաշտօննայք, հանդերձ երգովք սաղմոս ասացէ՛ք, եւ զՏէր յերկինս օրհնեցէ՛ք:

Այժմ. Սաղմոս ըսէք մեր Տէր Աստուծոյն, ս՛կ զպիբներ, անոյշ ձայնով հո-



գեւոր երգեր ըսէք. վասն զի Անոր կը  
վայելեն սաղմոսներ, օրհնումիւններ, ա-  
լէլուիաներ եւ հոգեւոր երգեր: Ո՛վ պաշ-  
տօնեաներ, երգելով սաղմոս ըսէք, եւ  
երկիրի Տէրն օրհնեցէք:)

Եւ դպիրքն եղանակեն  
Օրհնեալ է Աստուած .

Քրիստոս պատարագեալ բաշ-  
խի ի միջի մերում. Ալէլուիա:  
ՉՄարմին իւր սոյ մեզ կերա-  
կուր, եւ սուրբ զՍրբին իւր ցօ-  
ղէ 'ի մեզ. Ալէլուիա:

Մատիք առ Տէր եւ առէ՛ք  
զլոյս. Ալէլուիա:

Ճաշակեցէ՛ք եւ տեսէ՛ք զի  
քաղցր է Տէր. Ալէլուիա:

Օրհնեցէ՛ք զՏէր յերկիրս. Ալէ-  
Օրհնեցէ՛ք զնա 'ի բարձունս Ալ.

Օրհնեցէ՛ք զնա ամենայն հրեշ-  
տակք նորա. Ալէլուիա:

Օրհնեցէ՛ք զնա ամենայն զօրու-  
թիւնք նորա. Ալէլուիա:

(Եթէ ժամաբարը իւր ծածուկ  
Աղօթիչը որակաւին աւարտած չլինի,  
դպիրք իորհրդաւոր Տաղէր կ'երթն  
ըստ պարզածի առարն. եւ ապա վա-  
րճոյրը կը բանան, եւ Սարկաւորը  
բարձր յայնով կը Կարողէ:)

Սրի. Երկիրւիւ եւ հաւատով,  
յասնջ մատիք, եւ սրբութեամբ  
հազորգեցարուք:

(Սարկաւորին այս հրատերին վրայ  
Հաղորդութեան արժանաւոր է կը յեր-  
ջնան Ս. Սեղանին երկեւորով եւ  
զղջումով. եւ իողութեան ինդրելով  
իւրեանց յանցաւորաց եւ իշնամեաց  
եւ արելեաց համար, եւ այսպէս պար-  
պին աղօթել Տրօթ, եւ ճաշակել հա-  
ւատով:



## Ա. Ղ. Օ. Բ. Գ.

Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՌՆԵԼՈՒ ՊԱՅՈՒՆ

✠ Հաւատով հաւատամ յամենասուրբ Երրորդութիւնդ, ի Հայր եւ յՈրդի եւ ի Հոգի սուրբ:

✠ Հաւատով ճաշակեմ զսուրբ եւ զկենարար եւ զփրկագործ Մարմինս քո, Քրիստոս Աստուած իմ Յիսուս, ի թողութիւն մեզաց իմոց:

✠ Հաւատով ըմպեմ զօրբարար եւ զմաքրիչ Արիւնս քո Քրիստոս Աստուած իմ Յիսուս, ի թողութիւն մեզաց իմոց:

Եւ յետ ճաշակելոյն ասացե.

✠ Մարմին քո անսպական լիցի ինձ ի կեանս, եւ սուրբ Արիւն քո ի քառութիւնս եւ ի թողութիւնս մեզաց. Ամէն:

Դ. Եւ ժող. Աստուած մեր եւ Տէր մեր, կրկեցաւ մեզ. օրհնեայ եկեալ անուամբ Տեսնն:

Եւ Քահանայն կ'օրհնէ զժողովուրդը  
Կեցո՛ Տէր, զժողովուրդս քո, եւ օրհնեայ զժառանգութիւնս քո. հովուեայ եւ բարձրացո՛ զսոսն, յայսմ հետէ մինչեւ յաւիտեան:

(Ա. յ. Բ. Գ. Ապրեցնու Տէր, քու ժողովուրդդ, եւ օրհնէ քու ժառանգութիւնդ (քեզի ճառատացողները) հովուէ, (անաշնորդէ) ու բարձրացնու ասոնք, ասկէ վերջը մինչեւ յաւիտեան:)

(Այս ժողովոյն ժողովուրդեան իբրեւ խոն է ասրբ Սեղանին վերաներ Օրհնեալ Նշխարը—Մասը, որով ճառանկեց իբրեւն օրհնութեան եւ շնորհաց Ս. Խորհրդոյն եւ ժողովան կ'ըսեն:)

Դու. և ժող. Լցանք ՚ի բարութեանց բոց, Տէր. ճաշակելով զՄարմինս քո եւ զԱրիւնս. Փառք ՚ի բարձունս կերակրողիդ զմեզ: Որ հանապազ կերակրես զմեզ. առաքեա՛ ՚ի մեզ զհոգեւոր քո զօրհնութիւնս. Փառք ՚ի բարձունս կերակրողիդ զմեզ:

(Այսինքն. Բու բարիքներովդ լցուցանք, Տէր, քու Մարմինդ և Արիւնդ ճաշակելով. Փառք ՚ի բարձունս մեզ կերակրողիդ՝ որ միշտ կը կերակրես զմեզ. քու հոգեւոր օրհնութիւնդ մեր վրայ դրկէ. Փառք ՚ի բարձունս մեզ կերակրողիդ:)

### ԱՂՈԹՔ ԶԿՆԻ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

(Հա՛ն-ձա՛ն ի-հա՛րս Բ-հա՛ն-այն)

✠ Կը գոհանամ քենէ՛ որք իրատոս Թագաւոր որ արժանի ըրիր զանարժանս հաղորդիլ Ս. Մարմնոյդ և Ո. Արեանդ:

Եւ այժմ կ'աղաչեմ Տէր Յիսուս, որ Սա

բառապարտութիւն չլինի ինձ. այլ լինի բաւութիւն և Թողութիւն մեզացս, առողջութիւն հոգեոյս և մարմնոյս, և կարողութիւն ամեն առաքինի գործեր կատարելու:

Թող սրբուի ասով իմ շունչս և հոգիս ու մարմինս, և լինիմ տաճար եւ բնակարան ամենասուրբ Երրորդութեանդ, որպէս զի արժանի լինիմ քու Սուրբերուդ հետ միշտ եւ հանապազ փառաւորել զՔեզ:

Դարձեալ կը գոհանամ, և շնորհակալութեամբ կը փառաւորեմ զՔեզ. որք Տէր Աստուած իմ, որ զիս զանարժանս հաղորդակից ըրիր այսօր, քու այս աստուածային եւ սոսկալի խորհրդիդ—անարատ Մարմնոյդ և պատուական Արեանդ:

Ուստի ասոնք բարեխօս ունելով կ'աղաչեմ, քու սրբութիւնովդ պահէ զիս՝ իմ կենացս բոլոր օրերուն և ժամանակներուն մէջ. որպէս զի քու բարեգոծութիւնդ յիշելով՝ կենդանի մնամ քեզ հետ, որ մեզ համար չարչարուեցօր ու մեռար և յարեար:

Տէր իմ և Աստուած իմ, այսուհետեւ

Յող իմ անձիս չմերձենայ խորտակիչ սատանան, վասն զի բու պատուական Արիւնովդ կնքուած եմ:

Ո՛վ Ամենակարող, այս Սուրբ Խորհրդով մաքրէ զիս իմ ամեն զարշելի զոր-ժերէս. բանզի դու միայն անմեղ ես:

Ամրացու իմ կեանքս, ո՛վ Տէր, ամեն փորձութեանց դէմ, և իմ հետ պատերազմող Յշնամին ինձմէ յետ դարձու, ամօթապարտ ընելով զայն, որչափ որ ուզէ յարձակիլ իմ վրայ:

Ամրացու մտքիս ու լեզուիս ընծացրը ինչպէս նաև մարմնոյս բոլոր ճանքաները: Միշտ իմ հետս եղիր, բու անսուտ խոստ մանդ համեմատ Սէ՛, « Ո՛վ որ իմ Մարմինէս կ'ուտէ, և իմ Արիւնէս կ'ըմպէ, նա իմ մէջս պիտի բնակի և ես նորումէջ: »

Դու ըսիր այս խօսքերն, ո՛վ Տէր, Գու այս աստուածային անլուծանելի հրամանդ՝ Թող հաստատուի իմ վրայ, բան զի դու ես Աստուած ողորմութեան, զՅութեան և մարդասիրութեան, և պարզեող

աճեն բարեաց. և քեզ կը վայելէ փառք ընդ շօր և ամենասուրբ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս. Ամէն:

Եւ Սարկաւազն քարոզէ:

Եւ եւս խաղաղութեան զՏէր ա.  
Դոյ. և Ժող. Տէր ողորմիւն.

Եւ եւս հաւատով ընկալեալք յԱստուածային, սուրբ, երկնային, անմահ, անարատ և անապական Սուրհրդոյս, զՏեառնէ զոճացարուք:

(Այսինքն Առաւել եւս՝ դուք որ հաւատքով ընդունեցիք (ճաշակեցիք) այս Աստուածային, սուրբ, անմահ, անարատ և անապական Խորհուրդէն, Տէրոջը զոհութիւն մատուցէք.)

Դոյ. և Ժող. Գոճանամք զքէն,  
Տէր, որ կերակրեցեր զմեզ  
յանմահական Սեղանոյ քոյ, Բաշ-

խելով զՄարմինդ եւ զԱրիւնդ  
'ի փրկութիւն աշխարհի. եւ  
կեանք անձանց մերոց:

(Ա. Եւ. Գ. Ենորհակալ եմք բնէ ո՞վ  
Տէր, որ կերակրեցիր զմեզ քու անձահա-  
կան Սեղանէդ, բաշխելով քու Մարմինդ  
ու Արիւնդ՝ աշխարհի փրկութիւն և մեր  
անձերուն կեանք ըլլալու համար:)

Մշ. Օրհնեա՛ Տէր:

Ք. Զ. Որ օրհնես զայնօրիկ, որք  
օրհնեն զքեզ Տէ՛ր, եւ սուրբ  
առնես զյուսացեալս 'ի քեզ:

Կեցո՛ զժողովուրդս քո, եւ  
օրհնեա՛ զժառանգութիւնս քո,  
զլրումն եկեղեցւոյ քո, պահեա՛

Սրբեա՛ զսոսա՛ որք ողջունեցին  
սիրով զվայելչութիւն տան քո:

Դու զմեզ փառաւորեա՛ Սատ-  
ուածային զօրութեամբ քով, եւ  
մի՛ թողուր զյուսացեալս 'ի քեզ:  
Զխաղաղութիւն պարգեւեա՛

ամենայն աշխարհի. եկեղեցեաց,  
քանանայից. թագաւորաց քրիս-  
տոնէից եւ զինուորեալ ման-  
կանց նոցա. եւ ամենայն ժո-  
ղովրդեանս:

Զի ամենայն սուրբ բարիք,  
եւ ամենայն պարգեւք կատար-  
եալք, ի վերուստ են իջեալք առ  
'ի քէն. որ ես Հայր լուսոյ՝ եւ  
քեզ վայելէ փառք իշխանու-  
թիւն եւ պատիւ. Այժմ՝ եւ  
միշտ եւ յաւիտեանս. Ամէն:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Տէր, զոն որ կ'օրհնես զանոնք՝ որ  
զքեզ կ'օրհնեն (ու կը փառաբանեն,) և  
կը սրբայնեն ի քեզ յուսացողները: Ապ-  
րեցո՛ւ քո ժողովուրդդ և օրհնէ՛ քու ժա-  
ռանգութիւնդ: Պահպանէ՛ քու եկեղեցւոյդ  
ամբողջ բազմութիւնը: Սրբէ՛ զանոնք. որ  
սիրով ողջունեցին (համբուրեցին) քու  
Տանդ վայելչութիւնը (սեղանիդ սրբու-  
թիւնը): Դուն փառաւորէ՛ զմեզ, քու

աստուածային զօրութիւնովդ, և մի Յո-  
ղուր ի բեզ յուսացողներս:

Խաղաղութիւն պարգեւէ բոլոր աշ-  
խարհի, եկեղեցիներուն, քահանաներուն,  
քրիստոնեայ Սագաւորներուն և անոնց  
զօրականներուն: և այս ամեն ժողովուր-  
դինս Վասն զի ամեն բարի տուրք և ամեն  
կատարեալ պարգեւներ՝ վերէն՝ բնեւ  
կ'իջնեն մեր վրայ, որ լուսոյ Հայրն ես, և  
բեզ կը վայելէ փառք, իշխանութիւն և  
պատիւ, հիմա և միշտ և յաւիտեանս. Ամէն:

(Այս խորհրդաւոր Աղօթելի պահանջ  
Քահանայն հանա՞ զԳեազները կը  
հաքնէ, և Աւետարանն 'ի յեւթն բե-  
ւէն վար կ'իջնէ. նոյն արեւն դուրե-  
ները (ժողովուրդով) կ'ըսեն. երեցս  
կընեն լավ:)

Եզիցի՛ անուն Տեառն օրհնեալ,  
յայսմ հետէ մինչեւ յաւիտեանս  
Քահ. Կատարումն օրինաց և  
մարգարէից, զո՛ւ ես Քրիստոս

Աստուած Փրկիչ մեր, որ լցեր  
զամենայն Հայրակամ սնօրէ-  
նութիւնս քո, լից եւ զմեզ  
Հոգւովդ քով Սրբով:

(Այսքան. Օրինաց զրբերուն, և Մար-  
գարէից զրաճներուն կատարումը՝ զուն  
եւ ով Քրիստոս Աստուած մեր Փրկիչը.  
որ քու Հօրդ կամօքը՝ քու ամեն սնօրէ-  
նութիւններդ (մարդեղութեան բոլոր խոր-  
հուրդները) լրացուցիր. լից՞ու և զմեզ  
քու Սուրբ Հոգիովդ:

Մըկ. Օրթի՛:

Քահ. Խաղաղութիւն ամեննեցուն:  
(Եւ ընձեռնու զՍ. Աւետարան որ ըստ  
Յով. ՀԱՆՆՈՒ. Դ՛. Ա. 1—14.)

Ի ՇՕՐԷ ԼՈՒՍՈՅ

Խսկզբանէ էր Բանն, եւ Բանն  
էր առ Աստուած, եւ Աստուած  
էր Բանն: Նա էր 'ի սկզբանէ  
առ Աստուած: Ամենայն ինչ  
նովաւ եղեւ եւ առանց նորա

եղեւ եւ ոչինչ՝ որ ինչ եղեւնու  
Նովաւ կեանք էր, եւ կեանքն  
էր Լոյս մարդկան. եւ Լոյսն 'ի  
խաւարի անդ լուստորէ, եւ  
խաւար նմա ոչ եղեւ հասու:  
Եղեւ այր մի առաքեալ յԱս-  
տուծոյ՝ անուն նմա Յովնաննէս:  
Սա եկն 'ի վկայութիւն զի վը-  
կայեցէ վասն Լուսոյն, զի ա-  
մենեքեան հաւատասցին նովաւ:  
Ոչ էր նա լոյսն. այլ զի վկա-  
յեցէ վասն Լուսոյն: Էր Լոյսն  
ճշմարիտ, որ լուսաւոր առնէ  
զամենայն մարդ՝ որ գալոց է  
յաշխարհ: Յաշխարհի էր, եւ  
աշխարհ նովաւ եղեւ, եւ աշ-  
խարհ զնա ոչ ծանեաւ: Յիւրսն  
եկն եւ իւրքն զնա ոչ ընկալանու:  
Իսկ որք ընկալանն զնա, եւ  
նոցա իշխանութիւն որդիս Աս-  
տուծոյ լինել՝ որոց հաւատաս-  
ցին յանուն նորա. Ոչք ոչ յա-

բննէ եւ ոչ 'ի կամաց մարմնոյ  
եւ ոչ 'ի կամաց առն, այլ յԱս-  
տուծոյ ծնան: Եւ Բանն Մար-  
մին եղեւ եւ բնակեաց 'ի մեզ,  
եւ տեսաք զփառս նորա, զփա-  
ռըս իբրեւ զՄիածնի առ 'ի Հօրէ  
լի շնորհօք եւ ճշմարտութեամբ:

ՔԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԱԻՏԱՐԱՆԻՆ

Սկիզբէն էր Բանն (Քրիստոս) և Բանն  
Աստուծոյ բով էր, և Բանն Աստուած էր:  
Նա սկիզբէն Աստուծոյ բով էր: Ամեն բան  
անով եղաւ, և առանց անոր բան մը չե-  
ղաւ՝ ինչ որ եղաւ: Կեանքն անով էր, և  
կեանքը մարդոց Լոյսն էր. Եւ Լոյսը (Քր-  
իստոս) խաւարի մէջ կը լուսաւորէր. և  
խաւարը չ'կրցաւ զայն հասկնալ:

Աստուծմէ զրկուած մարդ մը կար,  
որոյ անունն էր Յովնաննէս: Սա վկա-  
յութեան եկաւ՝ որ վկայէ Լոյսին համար,  
որպէս զի ամենքն անոր միջոցաւ հաւա-  
տան: Նա լոյսը չէր, այլ Լոյսին համար  
վկայութիւն տուող էր:

Ճշմարիտ Լոյսն այն էր, որ աշխարհ գալու բոլոր մարդիկը կը լուսաւորէ: Աշխարհի մէջ էր, և աշխարհս անով եղաւ, և աշխարհ չճանչցաւ զնա: Իրեններուն եկաւ և իրենները չընդունեցին զնա:

Բայց որք ընդունեցին զնա, իշխանութիւն տուաւ անոնց Աստուծոյ որդիներ ըլլալու, անոնց՝ որ կը հաւատան իւր անունին: Որք ոչ արիւնէ և ոչ մարմինի կամքէ, և ոչ մարդու կամքէ, այլ Աստուծմէ ծնան:

Եւ Բանն Մարմին եղաւ, և մեր մէջ բնակեցաւ, և անոր փառքը տեսանք, Հօրմէն եկած Միածնի փառքին պէս, շնորհքով ու նշարտութիւնով լեցուն:

**Դպ. և Ժդ. Փառք քեզ Տէր Աստուած մեր:**

**Արկ. Սուրբ Խաչիւս ազաչեսցուք զՏէր զի սովաւ փրկեացէ զմեզ ՚ի մեղաց. և կեցուցէ շնորհիւ սղորմութեան իւրոյ,**

ամենակալ Տէր Աստուած մեր. կեցո՛ւ ևւ սղորմեա:

**Դպ. և Ժդ. Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ:**

(Ս. յ. Բ. Գ. Պիտի օրհնեմ Տէրը ամեն ժամանակ, ամեն ատեն անոր օրհնութիւնը բերանիս մէջ պիտի լինի:)

**Քահ. Օրհնեալք եզերուք ՚ի շընորհաց Սուրբ Հոգւոյն. երթայք խաղաղութեամբ. և Տէր եղիցի՛ ընդ ձեզ ևւ ընդ ամենեւեանդ. Ամէն:**

(Երբ որակաւն շէ աւարտած Նըշխարի — օրհնեալ Մատի Բաշխա՞ծն, որպէքները կ'երգեն հեղեւեալ Սաղմոսը, զոր պէտք է Աղօջեաւերն կարդայ, մանաւանդ Ս. Հաղորդութեան մասնակից եղողն:)



ՍՍ.Ղ.ՄՈՍ Լ.Գ. 2-21

**Ի** Տէր պարծեացի անձն իմ,  
լուիցեն հեզք եւ ուրախ եղիցինս :  
(Տէրոջմով թող պարծի իմ անձս, խո-  
նարհները թող լսեն, և ուրախ ըլլանս :)

**Մեծ արարէք զՏէր ինեւ . եւ  
բարձր արացուք զանուն նորա  
'ի միասին :** (Մեծարեցէք Տէրը ինձմով,  
և մէկտեղ անոր անունը բարձրացունեմք :)

**Խնդրեցի 'ի Տեառնէ եւ լուաւ  
ինձ , յամենայն նեղութենէ իմմէ  
փրկեաց զիս :** (Տէրոջմէ ինձրեցի,  
և լսեց ինձ, և իմ ամէն նեղութենէս  
փրկեց զիս :)

**Մտախիք առ Տէր եւ առէք  
զլոյս , եւ երեսք ձեր մի՛ ամա-  
չեացինս :** (Տէրոջը մտաեցէք և լոյս ա-  
ռէք, և ձեր երեսները թող չ'ամչանան :)

**Այս աղբատ կարգաց առ Տէր,  
եւ Տէր լուաւ սմա , յամենայն  
նեղութենէ սորա փրկեաց զսա :**

(Այս աղբատը Տէրոջը աղաչեց , և Տէրը  
լսեց անոր , և ամեն նեղութիւններէն  
անս զրոյս փրկեց զանիս :)

**Քանակք հրեշտակաց Տեառն  
շուրջ են զերկիւղածովք իւրովք  
եւ պահեն զնսա :** (Հեշտակներուն  
բանակները՝ Աստուծմէ երկիւղ ունեցող-  
ներուն շուրջն առած կը պահեն զանոնք :)

**Ճաշակեցէ՛ք եւ տեսէ՛ք զի  
քաղցր է Տէր , երանեալ է այր  
որ յուսայ 'ի նա :** ( Ճաշակեցէք ու  
տեսէք, որ քաղցր է Տէրը, երանի  
այն մարդուն որ անոր կը յուսայ :)

**Երկերուք 'ի Տեառնէ ամենայն  
սուրբք նորա , զի ոչինչ է պա-  
կատութիւն երկիւղածաց նորա :**  
(Տէրոջմէ վախեցէք ո՛վ անոր ամեն սուր-  
բերը, վասն զի անոր երկիւղածներուն  
բան մը չպակտիրս :)

**Մեծամեծք աղբատացան , եւ  
քաղցեան , բայց ոչք ինձրին**

ՂՏԷՐ, մի՛ պակասեցի 'ի նոցանէ ամենայն բարութիւնս: (Հարուստները աղքատ եղան և անօթի մնացին, բայց անոնք որ Տէրոջը կը յուսանան անոնցմէ բարիք պակաս պիտի չըլլայ:)

Եկայք, որդեանկք իմ, լուարուք ինձ, և և զերկիր զ Տեառն ուսուցիցի ձեզ: (Եկէ՛ք իմ զաւակներս, լսեցէ՛ք ինձ, և Տէրոջը երկիրը սովորեցունեմ ձեզ:)

Ո՞վ է մարդ որ կամի զկեանս, և սիրէ զաւուրս տեսանել 'ի բարութեանս: (Ո՞վ է այն մարդը որ ապրիլ կուզէ, և իր օրերը բարութեան վէջ տեսնել կը սիրէ:)

Լուեցո՞ զլեզու քո 'ի չարութեանէ և և չրթունք քո մի՛ խօսեսցի զնենդութիւնս: (Լուեցո՞ւ քու լեզուդ չար խօսելէ, և քու չրթունքներդ նենդութիւն թող չխօսին:)

Խոստորեան՝ 'ի չարէ՛: և արա՛

զբարի, խնդրեա՛ զխաղաղութիւն, և և երթ զհետ նորա: (Չար գործելէ ետ գարձիր, և բարիք ըրէ. խաղաղութիւն փնտռէ, և անոր ետեւէն գնա՛ւ:)

Աչք Տեառն 'ի վերայ արդարոց, և և ականջք նորա 'ի վերայ աղօթից նոցա: (Տէրոջը աչքն արդարներուն վրայ է, և անոր ականջներն անոնց աղօթքին վրայ:)

Երևոք Տեառն 'ի վերայ չարագործաց, սասակել յերկրէ զչիչատակս նոցա: (Տէրոջը (բարկութեան) երեսները չարութիւն գործող մարդոց վրայ է, որ անոնց յիշատակը չնշէ երկրիս վրայէն:)

Կարգացին արդարքն առ Տէր, և և Տէր լուար նոցա. յամենայն նեղութենէ նոցա վրկեաց զնոսա: (Արդարները Տիրոջը աղաչեցին, և Տէրը լսեց անոնց. և իրենց ամեն նեղութենէն փրկեց զանոնք:)

Մերձ է Տէր առ այնոսիկ որք մաշեալ են սրափք, եւ զխոնարհս հոգւով կեցուցանէ : (Տէրը մօտ է անոնց. որոց սրտերը մաշած(տըրտում) են, և կ'ապրեց' է հոգւով խոնարհ եղողները :)

Բազում նեղութիւնք են արգարոց, յամինայնէ փրկէ զնոսա Տէր, եւ պահէ զամինայն ոսկերս նոցա, եւ մի 'ի նոցանէ մի' փշրեցի : (Արդարներուն նեղութիւնը շատ է. բայց Տէրը կը փրկէ զանոնք, ու կը պահէ անոնց ամեն ոսկորները. և անոնցմէ մէկն ալ պիտի չփշրուի :)

Մտն մեղաւորին չար է, բայց որ առէ զարդարն զզջասցի : (Մեղաւորին մահը չար է, բայց արդարին ատելութիւն ընողը պիտի զղջայ :)


Փրկէ Տէր զանձինս ծառայից իւրոց, մի' զզջասցին ամենեքեան՝ ոչք յուսացեալ են 'ի նա :

(Տէրը կը փրկէ իւր ծառաներուն անձերը, ամեն անոնք որ Տէրողը յուսացած են, պիտի չի զղջան :)

Փառք Հօր եւ Որդւոց եւ Հոգւոյն Սրբոց. Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից Ամէն :

ՎԵՐՁ ՍՈՒՐԲ ԽՈՐՀՐԴՈՅ ՊԱՏԱՐԱԳԻՆ



**Ժ. Ս. Մ. Ա. Մ. ՈՒՏ Ք**

ԸՍՏ ԿԱՐԳԻ ԱԻՈՒՅՑ ՊԱՀՈՅ, ԵՒ ՏՕՆԵՑ.  
ՏԷՐՈՒՆԱԿԱՆՈՅ, ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՍԲՐՈՅ.

**ՊԱՀՈՅ ԲԵ. ԳԵ. ԵԾ.**

Որ ի շօրէ առարեցար Փրկիչ եւ  
մարմնացար ի Սրբոյ Կուսէն. որ փան  
մեր ի յերկնից իջեր եւ լուսաւորե-  
ցեր զսիեզերս: Զխաղաղութիւն քո  
սնւր մեզ Տէր, որ խաղաղութեանց  
ես Թագաւոր. զխաղաղութիւն եւ  
զողորմութիւն՝ որ յամենայնի ես զո-  
կարող մարդաւէր:

**ՉՈՐԵՔԵԱՐԹԻ. ՈՒՐԲԱԹ**

Որ ըստ ամենայն միսս անցանես,  
զխաղաղութիւն քո Ասուած, սնւր  
մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

**ԿԻՒՐԱԿԷ**

Միածին որդի... (Տէ՛ր եւ՛ր 378)

ՄՆԵՂԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾՄԱՆ

Ասուածածին անհարսնացեալ  
զՔանն անակիրքն յղացար եւ զԱս-

ուածն անիմանալի ծնար . զԱնպարագրելին ի գիրկս քո բարձեր . նմա անդադար բարեխօսեա՛ վասն՝ անձանց մերոց :

**Ա**սուածածին զքեզ խոսնովանեալ երկրպագէ եկեղեցի ուղղափառաց . քանզի ուրՖէրովբէքն բազմաչեայք եւ ԱՅոռ քհրմսիւթքել վեցձեւեան Սերովբէքն նայիլ ոչ իշխէին, կրեցեր անսերմնապէս զանուպականումս ի յարգանդի քու՛մ որպէս ապախին զՏէր . եւ ծնար որպէս զմարդ զԱսուածն բոլորից՝ զմարմնացեալն առ ի քէն զանձաւ գեանն, ի վրկուծիւն աշխարհի եւ կեանք անձանց մերոց .

**Ա**ղաչեմք զքեզ ուրբկոյս Մարիամ Ասուածածին՝ բարձրելոյն զօրութեամբն հովանաւորեալ եւ Սուրբ Հոգւոյն եկաւորութեամբն լուսաւորեալ . որ զամենայն զոյութեանց Սեղծիչն յղացեալ ճնար անձառապէս . Մարմնացելոյն առ ի քէն բարեխօսեա՛ կեցու ցանել զանձինս մեր :

## ՏԵՆՈՆԵՆ ԴԱՌԱՋԻ

**Մ**երունին այսօր Սիմէոն՝ Հոգւոյն գայր ի Տաճարն՝ երեւելով քերովբէին վեճագոյն, զի որոց թեւօրն սաւառնեալ ոչ իշխէին հայիլ ի յահեղ փառացն, սա ի գիրկս իւր բարձեալ համբուրէր համարձակապէս եւ զքուէր որպէս զմանուկ . եւ աղերսելով հայցէր արձակիլ ի խաղաղութիւն .

**Ա**նակգրնական Քանդ Ասուած . ի վերջին աւուրս յանձն առեր լինել Մարդ ի կուսէն . եւ Արարիչ յաւիտենից՝ փակեցար ընդ ժամանակաւ . Սուրբ, Տէր արբութեանց, եւ անկարօս մարութեանց . եկիր ի Տաճարն քառասնօրեայ, զօրինացն կասարեցեր զարդարութիւն . Չոր բարձեալ Սիմէոնի զանպարագրելիզ ի գիրկս իւր հայցէր, Որ արձակիչզ ես կապելոց՝ արձակեա՛ զիս ի խաղաղութիւն, Վասն որոյ՝ ընդ ձերունոյն Սիմէոնի վերագոչեմք առ քեզ Տէր, Սուրբ՝

Սնւր՝ Սնւր՝ Տէր զօրութեանց, լի  
են երկինք եւ երկիր՝ փառօր բովր  
ի փրկութիւն մեզ Քրիստոս Աստուծո՛ւ  
փառք քեզ :

**ՂԱԳԱՐՈՒ ՆՆՇՈՒՄ**

Ղագարու ննշումն՝ որպէս կան-  
խազէս յառաջ ասէիր . որ եւ ի Քե-  
թանիա յառաջէիր՝ զի յօրուցես  
զփրեցինք քո : Արդ՝ եւ մեր գոչելով  
ասեմք, Օրհնեա՛լ որ զաս ի շարժարանս  
կամաւ չօր՝ ի փրկութիւն անձանց  
մերոց :

Յորժամ եկեալ Վենարարդ ի գե-  
րեզմանն Ղագարու . յորժամ եկեալ  
Վենարարդ ի գերեզմանն Ղագարու .  
աւեսաւ որ ձայնիւդ աղաղակէիր ա-  
սելով՝ Ղա՛գարէ, ահ եկ արտարս :

Իսկ մեղեալն ի գերեզմանէն յար-  
եաւ . եւ նոյն յնքնդ զանմահութեան  
պարգեւսդ ետուր սիրելոյդ . եւ Աս-  
ուածային ձայնիւդ ի գերեզմանէն  
կոչեցեր Վասն որոյ՝ եւ մանկունք

եքայեցեաց ոստոյր օրհնէին զան-  
մահ թագաւորութիւն քո : Ընդ նոսին  
եւ մեր ասեմք, Ո՛րհնանայ՝ օրհնեալ  
է զայլուս քո . օրհնութիւն ի բար-  
ձունս, օրհնեալ որ զայոց եսանուամք  
Տեառն :

**ՅԱՂԱԳԱՐԴԻ**

Յնձա՛ երուսաղէմ եւ զարդարեա՛  
զառագաս քո Սիօն . քանզի՝ ահա  
թագաւոր քո Քրիստոս նստեալ ի յա-  
ւանակի նորոյ՝ հեղութիւն ցուցանե-  
րով զայ մեանէ յառագաս քո : եւ  
մեր աղաղակէմք, Ո՛րհնանայ, օրհ-  
նեալ եկեալ ի յանուն Տեառն . որ ունի  
զմե՛ծ զպարմութիւն :

**Ղ Ա Տ Կ Ի**

Քրիստոս յարեաւ (Տէ՛ - Եէ՛ - 378)

**Յ Ե Ն Ս Ն Յ**

Ահա որ եւ սրանչե՛ի է խորհուրդ  
փրկութեան մերոյ . որ անսկիզբն ՚ի  
չօրէ անժառարար մարմնացաւ ՚ի  
Կուսէն . իսպի համբերելով եւ կա-

մաւոր մահուամբն իւրով զկենդա-  
նութեան մեզ պարգեւեաց շնորհս :  
Քանզի յարեալ ի մեռելոց քրիստոս  
Ասուած յախտենից՝ արարիչ եւ յար-  
ուածիւն ազգի մարդկան . զոր օրհ-  
նեն անդադար զինուորութիւնք հրեշ-  
տակաց եւ ամենայն զուարթունք  
երկնից : Ընդ որս գոչելով ասեմք .  
Փա՛ւր սոսկալի Յարութեան քո Տէր :

**ՀԱՄԱՐՉՄԱՆ**

Հիացան վերնական բազմութիւնքն  
սեռանելով զքեզ ի հրեղէն կառս  
բազմեալ սարսեալ առէին . Այլ է աս՝ որ  
զիմեալ գայ յեղովմայ . եւ եկեալ մտա-  
նէ փառօք ի փառս . Տէր փառք քեզ :

Որ յանպատում ածուռ նսխս եւ  
յանմարմնոցն վերօրհնիս . անհասա-  
նելի Բանդ Ասուած . ի յերկրի երե-  
ւեցար ճշմարիտ Մարդ . զսնօրէնու-  
թեանն կատարեալ զխորհուրդ . խաչի  
եւ մահու համբերեցեր . եւ զհրաշալի  
զՅարութիւնդ քո ցուցեր հօր զօրու :

Պեամք . այսօր Համբարձար փառօք  
ի յերկինս . եւ զկուսածին Մարմինդ  
քո հրաշափառապէս յուսազարդե-  
ցեր . զոր տեսեալ ետայիաս՝ նախա-  
ձայնեալ ասէր . Ա՞յլ է սա որ դիմեալ  
գայ յերկրէ : Հիացեալ պիտութեանց  
երկնից զոչէին առ միմեանս . Համ-  
բարձէք իշխանք զգրուս ձեռ ի վերս  
եւ մտցէ թագաւոր փառաց :

Արդ՝ որ յամենայնի կարող ես եւ  
հօր . շնորհիւս՝ եւ մեզ հանդիպիլ քեզ  
ամպովք ի միւսանգամ քո գայքս-  
տեանդ . որ միայնդ ես մարդասէր :

**ՀԱՌԻՈՅ ԳԱԼՍՏԵԱՆ**

Ասուած զքեզ խոստովանիմք զնուրբ  
Հոգիդ եւ երկիրպագանեմք . որ ես  
պատճառ կենդանութեան եղելոցս  
եւ խաղաղարար աշխարհի . որ զսգի-  
տութիւն Աշակերտացն բազում զի-  
տութեամք լցեր . եւ ի հրեղէն լեզուս  
բաժանեալ անճառելիօք ցուցար  
նոցա . աղագակեմք Տէր . իմայեա՛ եւ  
կեցն՝ զմեզ :

**ԲԵ.** Այսօր՝ի հրեղէն լեզուս բաժանեալ հանգետօր յԱռաքելայն՝ լուսաւորելով զնոսա . եւ այժմ աղաչեմք զքեզ Սուրբ Հօգիդ Ասուած, որ ես պատճառ կենդանութեան եղելոց եւ խաղաղարար աշխարհի, խնայեա՛ եւ կեցո՛ զմեզ :

**ԳԵ.** Վասն որոյ եւ մեր զՀօգիդ Սուրբ Ասուած՝ ընդ Հօր եւ ընդ Որդւոյ միասնական խոստովանիմք, եւ հայցեմք մեզ ՚ի վերնասուողէջ զհոգեւորական խաղաղութիւնդ . Տէր փա՛ռք քեզ :

ՎԱՐՂԱՎԱՌԻ

Երեւի Տէրդ այսօր աշակերտացն ՚ի Թափօրական լիւինն . եւ աշակերտացդ զարհուրեալք աղաղակէին ասելով . Արասցուք երիս սաղաւարս՝ մի Տեառնդ, եւ մի Մովսէսի, եւ մի եղիայի . Արդ՝ եւ մեր բանաւոր հօտքս երգեմք ընդ քո ճշմարիտ վկայիցդ . առաքեա՛ ՚ի մեզ զլոյս քո շնորհացդ ՚ի քոյ միւսանգամ գալստեանդ եւ կեցո՛ :

ԵՍՈՂԻ

Առաջի պատուական ամենայաղթ Թաչի քոյ անկանիմք երկրպագելով . եւ խնդրեմք զՅողութիւն յանցանաց մերոց . քանզի սովաւ բարձեր զդատարարութիւն ազգի մարդկան . եւ այժմ վասն սրբոյ Ասուածային քոյ Նշանի՝ շնորհեա զերկնային զխաղաղութիւնդ ամենայն աշխարհի :

ԵՂՄԻԱՄՆԻ

Տէր մեր եւ Փրկիչ Յիսուս Բրիստս, որ աղօթիւք եւ միջնորդութեամբ բազմաչարսար Վկայիք քոյ եւ Հօրն մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, մեծաւ փառօք եւ բազմութեամբ զօրացդ լուսեղինաց իջեր յերկնից ՚ի դաշնն Արարատեան, ՚ի յայցելութիւն փոքու հօտիդ քոյ ազգիս Հայոց, եւ ՚ի ցուցումն յասկականի սիրոյդ եւ մեծիողորմութեանդ . եւ ստիչուռամբ բաղխեցեր զխորս



անդնոց, եւ հալածեցեր զգունդս  
 սանդորամեականաց. Ուր եւ լու-  
 սածեւ յօրինամար հրաշակեցեցեր  
 զՄայր Աթոռն մեր զՅՈՒՐԵ ԷՋՄԻ-  
 ՄԻՆ. եւ արաբեր զնա շեմարան  
 անսպառելի շնորհացոյ ասուածայ-  
 նոց՝ ՚ի լինել ծնող զաստիարակ եւ  
 կասարելագործիչ ամենայն եկեղեց-  
 եացոյ Հայաստանեայց: Արդ պահեա՛  
 զնա անարատ, հաստատուն եւ անա-  
 դոս, ՚ի պայծառագարդութիւն եկե-  
 ղեցեացս մերոց եւ մանկանցս սոցին  
 մինչեւ ի կասարած աշխարհի. յորոց  
 միշտ փառաւորի ամենասուրբ Անուն  
 քո յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

## ԵԿԵՂԵՏԻՈՏ

Չխաղաղութիւն շնորհեա եկեղեց-  
 ւոյ քու՛մ սրբոյ, զխաղաղութիւն եւ  
 զանշարժութիւն ՚ի թշնամեաց պա-  
 տեապօլէ. եւ հաստատեա ՚ի մի հաւաս-  
 զկամողիկէ եկեղեցի. գրեց խոսոս-  
 փանիր Տէր եւ Ասուած կեցն զմեզ:

## ՅՈՎՀԱՆՆՆՈՒ ՄԿՐՏՆԻՆ

Չյառաջընթացութիւն քո եւ զկա-  
 րապետութիւն Ասուծոյ Քանին խա-  
 փանել կարծելով՝ որ ի ձեռն կնոջն  
 զնախաստեղծն ՚ի դրախտէն արաքս  
 ընկէց. Նա՛ եւ այժմ զՀերոզիաղա  
 անօրէնութեամբ բարբոքեալ, եւ բազ-  
 մելոցն Հերոզիայ՝ զկարաւս ոսից աղ-  
 ջկանն հաճոյացոյց՝ զի զքոյոյ հասցէ  
 զգլուխ, որ զամենեցուն ձեռնադրե-  
 ցեր զգլուխն Քրիստոս: Այլ զու՛ որ  
 յանապատէ բառբառոյ ծայն, գոչեա՛  
 որում ձեռնադրեցեր պարգեւել զխա-  
 ղաղութիւն եւ զմեծ զողորմութիւն:

## ՍՏԵՓԱՆՆՈՍԻ

Յնձա՛յախօր ցնձա՛ եւ զուարճացիր  
 կամուղիկէ եկեղեցի սուրբ՝ յիշատա-  
 կաւ սրբոյն Ստեփաննոսի նախավկա-  
 յին Քրիստոսի վկայեցելոյ Հօր: Որ ա-  
 դօթիւք բանայր գերկինս գոր փակե-  
 եաց Ադամ. եւ հրեշտակակերպ տես-  
 լեամբ տեսանէր զկերպարանն Հօր ՚ի

կերպի Աղանայ նստեալ 'ի յաժողո փա-  
ռաց: Որ զբազմութիւն բարանցն որ-  
պէս զժողիկս հաւարելով՝ բոլորէր  
պատիս փոխանակ փշոցն եւ եղեգա-  
նըն: Եւ զմարտիրոսական արիւնն իւր  
խառնէր ընդ փրկական Արեանն Քրիս-  
տոսի հոսեցելոյն՝ 'ի կողէն: Վասն որոյ՝  
գերազանցեալ 'ի փառս առաւել քան  
զամենայն սուրբս՝ հայցէ եւ վասն  
մեր 'ի վերնասուողէն զպարգիւս կե-  
նաց անվախճանից եւ զվեժ զոգոր-  
մութիւն:

Յորովայնէ ընտրեալ սուրբն Ստե-  
փաննոս, յորովայնէ ընտրեալ սուրբն  
Ստեփաննոս. վկայ ճշմարիտ սուարե-  
լական բարոզութեանցն. որ 'ի վերայ  
անօրէն բարաձողացն աղօթէր առ  
Քրիստոս Աստուածդ ասելով՝ Մի հա-  
մարտի սոցա զայս մեղս Արդ՝ 'ի ձեռն  
սորին բարեխօսաւթեանն շնորհեա՝  
մեզ Տէր զվեժ քո զպարմարթիւնդ:

## ԼՈՒՍԱՆՈՐԶԻՆ

Յնժայ այսօր ցնժայ եւ զուարճա-  
նայ եկեղեցի սուրբ՝ տօնելով մեծաւ  
հանդիսիւ զհանրատենչ յիշատակս քո՝  
նվ գերազանցեալդ 'ի հարս սուրբ Հայ-  
րապետ եւ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ ՏԱՆՍ ԹՈՐՈՒ-  
մայ Սուրբդ ԳՐԻԳՈՐԻՍ: Որ քոյով ան-  
սանելի չարչարանօրդ զաշխարհս ա-  
մենայն հիացուցեր: Անօրինակ ճգնու-  
թեամբդ զհրեղէնան զարմացուցեր.  
որք եւ զունդ զունդ յերկնից 'ի յեր-  
կիր խոնարհեալ՝ 'ի տես հանդիսի նա-  
հաստիութեանդ փութային: Եւ ան-  
համեմատ համբերութեամբդ զգոռո-  
զացեալ Արքայն իւրական գօրօքն ընդ  
ոտիւրդ նուամեցեր: Եւ աստուածա-  
հանոյ աղօթիւրդ զկուրացեալ միսս  
նոցին լուսաւորեցեր: Եւ Աւետարա-  
նին Քրիստոսի պաշտօնեայս արարեր:  
Ընդ նմին եւ զագոս Հայոց նորոգ հո-  
գեւոր ծննդեամբ 'ի յոյս աստուած-  
գիտութեան ամեր: Վասն որոյ եւ յաս-

կապէս լուսափայլեցաւ 'ի մէջ ամենայն սրբոց, եւ զԱռաքելականն ընկալաւ զԱթոռ եւ զպահիւ, եւ ընդ նոսին պսակեցաւ 'ի Քրիստոսէ Ասուծոյ: Արդ՝ ո՞վ Հայր մեր եւ Լուսաւորիչ հոգւոց մերոց, աղաչեմք զքեզ միաբան ուխտիւք եկեղեցւոյ քոյ, զի յառուս հրաշարոյ սոնի քոյ, յասկապէս բարեխօսիցես առ Քրիստոս Ասուածն մեր, զի զեկեղեցիս եւ զմնացորդս ժողովրդեան քոյ պահեցէ 'ի խաղաղութեան՝ փրկելով 'ի հոգեւոր եւ մարմնաւոր թշնամեաց: Զի եւ մեր միշտ գլխաւակս քո կասարելով՝ փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի եւ ըզՍուրբ Հոգին յաւիտեանս. Ամէն:

Քրիստոս սուրբ Քահանայապետ՝ որ զհաւատս ուսուցեր եւ զբանակս դիւանն հալածեցեր. մարդկան ուսուցեր բարոզել զերբողութիւն. պրտակեցաւ յարքայութեանն. արգ բարեխօս լեր առ Տէր վասն մեր:

## ԱՌԱՔԵԼՈՏ

Առաքեալք եւ վկայք Քրիստոսի Ասուծոյ՝ ամենակալ Հոգւոյն զօրութեամբն զամենեսեան ընդհանուր յորդեգրութիւն կենաց կոչելով, միասնական սուրբ երբորդութեանն յորդոցին երգել զփառս 'ի յաւիտեանս. Ամէն:

## ՈՐԳԻՈՅՆ ՈՐՈՏԿԱՆ

Այսօր ահաւոր ծայրք որոտման հընչեցին յերկնից 'ի յերկիր. կոչելով յորդեգրութիւն զմեզ վերնոյն Սիրնիհաստատութիւնն հաւատոյ եւ պարծանքն եկեղեցւոյ. որք ցօղով արեան իւրեանց մարեցին զսիեզերս յանօրէն կռապաշտութեանց. եւ միշտ հայցեն 'ի Քրիստոսէ զբառութիւն սօնոյացս անուանց իւրեանց. Արդ՝ մաղթանօք սոցա Տէր, խնայեա՛ 'ի փրկեալ քո ժողովուրդս որ միայնդ ես մաղրատէր:

## ՄԱՐԳԱՐԷԻՑ

Տէր, որ հիմնեցուցեր զեկեղեցի  
քո՝ ի վերայ փմի հաւատոյ, եւ կար-  
գեցեր ՚ի սմա Առաքեալս եւ Մար-  
գարէս, Հովիւս եւ Վարդապետս՝ առ  
՚ի հաստատութիւն Սրբոց. եւ ճրգնու-  
թեամբ վկայից զՅշնամին սորա վա-  
նեցեր. ՚ի խաղաղութեան զսա պահե-  
ա, Ասուած, որպէս մարդասէր:

## ՀԱՅՐԱԿԵՍԱՆՑ

Զհայրապետականն զարդարեցեր  
աթոռ ՚ի յերկրի, Առաքելական ա-  
ռեր զպատիւ յերկնուս՝ ծառայ Քրի-  
ստոսի, ով երանելից ՚ի հաւս սուրբ  
Հայրապետ: Քանզի՝ քո վարդապե-  
տութեանց սերմունք՝ բարեպաշտու-  
թեան բուսուցին հասկս, ուրախու-  
թեան պտուղ հասուցանելով եւ հա-  
ւատացելոցս փրկութիւն շնորհելով.  
վասն որոյ բարեխօսեա՝ առ Տէր վասն  
անձանց մերոց:

## ԹԱԳԱՆՈՐԾՑ

Որպէս յես ասուածասէր Թագա-  
ւորին Խորայէլի եզեկիայ՝ յարոյց Աս-  
տուած զՅովսէ, որ զամենայն կռա-  
պաշտութիւնսն ՚ի բաց ընկէց. որպէս  
եւ զբարեպաշտն Կոստանդիանոս, որ  
զԱրիոսի զմոլումն խափանեաց. եւ  
զմեծն Թէոդոս յարոյց ասուածային  
նախանձուն վառեալ՝ ընդդէմ այնո-  
ցիկ, որք զՍուրբ Հոգին հայհոյէին:  
Արդ՝ ով ասուածարեալ եւ ուղղա-  
փառ սուրբ Թագաւոր՝ աղայեա՝ ըզ-  
Տէր ՚ի փրկել զմեզ ՚ի մարդապաշտ  
հայհոյութենէ. զի մեր տոնեցուք  
զյիշատակս քո խնդրելով ՚ի Քրիստոսէ  
զհաշտութիւն եւ զմեծ զոգորմութիւն:

Որպէս յես ասուածասէր Թագա-  
ւորին Խորայէլի եզեկիայ՝ յարոյց Աս-  
տուած զՅովսէ՝ որ զամենայն կռապաշ-  
տութիւնսն հնոյ ժողովրդեանն ՚ի բաց  
ընկէց, որպէս եւ ՚ի նորումս յարոյց  
զանդրանիկն Թագաւորաց զբարե-

պաշտօն Արգարիոս, որ 'ի հեռասանէ ծանեալ գերկնաւոր Թագաւորն զՔրիստոս. եւ եղև քարոզ ասուածու-  
թեան նորա ընդ ծագս Տիեզերաց: Յետ նորին եւ զմեծն Տրդատիոս, որ իսպառ հալածեաց զյիւամոյ կռապաշտու-  
թիւնսն յաշխարհէս Հայաստանեայց, եւ զարդարեաց ճշմարիտ եւ ուղղա-  
փառ հաւատով: Արդ՝ ով ասուածար-  
եալ եւ բարեպաշտ սուրբ Թագաւոր,  
աղաչեա՛ զՏէր, 'ի փրկել զմեզ յանօ-  
րէն բռնաւորաց. զի եւ մեր տօնելով  
զյիշատակս քո՝ խնդրեսցուք 'ի Քրիս-  
տոսէ զխաղաղութիւն եւ զմեծ զո-  
ղորմութիւն:

## ՄԱՐՏԻՈՍԱՍ

Ի սաճարի սրբոց եւ յիշատակի  
սրբոց մարտիրոսաց՝ զձեռս համբառ-  
նալով աղաչեմք. բարեխօսութեամբ  
սոցս եւ աղօթիւք՝ զկենդանութիւնս  
մեր խաղաղացն Ասուած որպէս  
մարդաւէր:

## ՃԳՆԱՆՈՐԱՅ

Ճգնաւորք Քրիստոսի, որք անջա-  
նաց անօրինացն համբերեցիր եւ ըզ-  
մոյութիւն կոռցն խափանեցիր. զա-  
սաւորեալք ընդ հրեշտակս 'ի յերկինս  
ունիր զհամարձակութիւն 'ի Քրիստո-  
սէ՝ բարեխօսեցէք կեցուցանել զան-  
ծինս մեր՝ զձեզ աղաչեմք:

## ՀՈՒՓՍԻՄԵՆՆՑ

Որք ծագեցան մեզ յարեմտից որ-  
պէս զարեգակն, եւ լուսաւորեցին  
համանգամայն զաշխարհս Հայաս-  
տանեայց. փարատեցին զխաւարն ան-  
զիտութեան կռապաշտութեան, եւ  
լուսաւորեցին զամենայն հոգի հա-  
ւատով ասուած զիտութեան: Սոցս  
բարեխօսութեամբն Քրիստոս Աս-  
տուած, պարգիւեա՛ աշխարհի բոլմ  
զխաղաղութիւն. եւ անձանց մերոց  
զմեղաց Թողութիւն. որպէս մարդա-  
ւէր Տէր:

## ԳՍՏԻԱՆԵՆՆՑ

Չյաղթանակ ձեր զհանդէս զուար-  
ճացեալ տօնէ, Եկեղեցի սուրբ. քան-  
զի սրբութեամբ ստացայր զկուսու-  
թիւն. եւ 'ի մարմնի զանմարմնոցն  
ցուցիր զհանդէս:

## ԿՈՒՍԱՆԱՑ

Հարսնացեալք Քրիստոսի երկնա-  
ւոր փեսային դստերք վերին Սիօնի-  
խնդրեցէք 'ի Քրիստոսէ զհաշտութիւն  
եւ զմեծ գոգորմութիւն:

## ՎԱՐԻԱՆԱՆՑ

Յաշխարհական 'ի հակասամար-  
տին. յաշխարհական 'ի հակասամարտին  
եւ 'ի մեծ պատերազմին ընդդիմամարտ-  
եալ լինէր անօրինացն պատերազմ-  
իսկ երանելի նահատակքն զմուտ-  
թիւն անօրինացն խափանեցին եւ  
յաղթող զսան. քանզի՝ որոց ստացեալ  
էր զաստուածային զօրութիւն, ոչ  
ժռժկալէր նոցա մարմնաւորական  
պատերազմ. Արդ՝ Քրիստոս Աստուած՝  
սոցա բարեխօսութեամբն խնայեա՝  
'ի մեզ եւ ողորմեա՝:

## ՉԻՆՈՒՈՐԱՑ

Չօրական եւ վկայ ճշմարտի՝ քաջ  
նահատակ Քրիստոսի սուրբոյ (Ս. է. է.)  
որ փոխանակեցեր զմարմինդ ընդ  
հոգւոյդ բուն՝ փրկանս. եւ ոչ ամեր  
զմտաւ զպառնալիս անօրէն բունա-  
ւորացն: Այլ վերին ազդեցութեամբն  
դիտելով զայրեցումն հոգւոց նոցա,  
վասն այնորիկ լուցեր զսամար կողմն  
եւ անարգեցեր զպաշտամունս նոցա:  
Արդ՝ 'ի յաղթող պատերազմի տօնոպ-  
ցքս զօր նահատակութեան քոյ, բարե-  
խօսեա՝ առ Տէր վասն անձանց մերոց:

## ԲԱՆԱՍՈՒՆ ՄԱՆԱՆՑ

Ինչով վառաց քոց 'ի փառս՝ կա-  
թողիկէ Եկեղեցի քո Քրիստոս մեծա-  
պէս պայծառանայ. քանզի թագա-  
ւորեալքն 'ի քէն դիմեալք 'ի յերկինս.  
'ի Սերաստիա նահատակին՝ 'ի յամօթ  
եւ 'ի բարձնկէց յերեսս բանսարկուին:  
Որք եւ քաջալերէին զմիմեանս. զի մի  
լուծեալ որ բաղանեօք անցաւ որիս

պակասեցի. այլ զողջով առարինարար՝ զինքն ըզերձեալ 'ի յանիւս աստուածային գանձուցն հոլովիցի ազաղակելով առ Քրիստոս Արդ՝ սոցա բարեխօսութեամբն՝ ընկա՛լ եւ զորդէգրութիւն ժողովոյս մերոյ 'ի յոյս սիրողաց քոց, Տէ՛ր փառք քեզ:

## ՆՐԻՑ ՄԱՆԿԱՆՑ

Որ 'ի վերայ քերովէիցն հանգչիս եւ 'ի գօրացն հրեղինաց օրհնարանիս, իջեր 'ի Բարելուն եւ փրկեցեր զերիս մանկունսն 'ի հրոյն բռնութենէ: Որք ազաղակելով գոչէին երգ նոր. Ամենայն զործք օրհնեցէք եւ բարձր արարէք: Թագաւոր փառաց եւ արարիչ բոլորից, որ մարդասիրապէս գրթացար 'ի սուրբ Մանկունսն եւ փրկեցեր 'ի բորբոքեայ բոցոյն, որք անարգեցին զբռնութիւն Թագաւորին եւ շիջուցին զգօրութիւն հրոյն, ընդ նոսին եւ մեր քեզ վերագոչեմք, փրկեա՛ զմեզ 'ի հրոյն յաւիտենից:

Ձի զու միա՛յն ես բազմագութ Տէ՛ր, քեզ փառք յաւիտեանս. Ամէն:

## ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ

Չոր օրհնեն անլուելի ծայնիւ իմանալի Զօրութիւնք՝ երկնաւոր Նահապետութիւնք, Հրեշտակք, եւ Հրեշտակապետք, Աթոռք եւ Տէրութիւնք, Իշխանութիւնք եւ Պետութիւնք, Սերովբէք եւ Քերովբէք, եւ մեր օրհնեսցուք զնոյն ամենասուրբ Երրորդութիւնն եւ զվի Աստուածութիւնն:

Այսօր երկրաւորս եկեղեցւոյ բահանայապետութիւն ցնձայ հրաշափառապէս՝ զերկնաւոր Քահանայապետութեանցդ կատարելով զսօնախմբութեան սօնս, եւ ընդ անմարմնականաց եւ հոգեղինաց դասուցդ՝ եւ մեր մտամտականքս եւ հոգեղէնքս ձամսծայնեալ փառաւորեմք զփառաւորեցեալն 'ի ձէնջ, Արդ՝ ո՛վ սուրբ Գաբրիէլ եւ Միքայէլ մե՛ծ Հրեշտա-

կապեք բարձելոյն, եւ ամենայն  
Զինուորութիւնք երկնից, որք կայր  
միշտ առաջի աթոռոյ Ասուածու-  
թեանն. անդադար բարեխօս լիուր  
վասն մեր առ Տէր, վերաբերեալ զմեզ  
զամենեսեան ընդ ձեզ յերկնից ա-  
րարութիւնն. եւ միաձայն բարբառով  
երգել զփառս:

## ԱՄԵՆԱՅՆ ՄՐՈՑ

Բարեխօսութեամբ արուհոյ Աս-  
տուածածնին, արդոյն Յովհաննու Կա-  
րապետին՝ արդոյն Սեփաննոսի Նա-  
խավկային, եւ արդոյն Գրիգորի մերոյ  
Լուսաւորչին, եւ արքոց Առաքելոց  
եւ Մարգարէից: Հայրապետաց եւ  
Վարդապետաց, Մարտիրոսաց եւ Թա-  
գաւորաց, ձգնաւորաց եւ Կուսանաց,  
Նահապետաց եւ Միանձանց, եւ ամե-  
նայն Օրքոց քոց Հնոց եւ Նորոց, Յայ-  
սից եւ Անյայսից, որոց այսօր է յի-  
շատակ. զխաղաղութիւն եւ զերկ-  
նային ողորմութիւն քո պարգև եւ՛ր  
մեզ մարդասէր Տէր:

## ՔԱՐՈՉ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Յորժամ ի Թափոր կրանեն

(Անդասարան)

Մէկ. Եւ եւս խաղաղութեան  
զՏէր աղաչեսցուք:

Դու. Եւ ժող. Տէր ողորմեա՛:

Մէկ. Վասն ՚ի վերուստ խաղա-  
ղութեան եւ փրկութեան ան-  
ձանց մերոց, զՏէր աղաչես.

Դու. Եւ ժող. Տէր ողորմեա՛

Մէկ. Ողորմեաց մեզ, Տէ՛ր Աս-  
տուած մեր, ըստ մեծի ողոր-  
մութեան քում. աստուցուք ա-  
մենեքեան միարանութեամբ:

Դու. Տէ՛ր ող. Տէ՛ր ող. Տէ՛ր ող.

Քահ. Օրհնութիւն եւ փառք Հօր  
եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Սյժմ  
եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

Դու. Եւ ժող. Ամէն. Ալէլուիա,

Ալէլուիա. Ալէլուիա:



Քահ. Օրհնեսցի՛ եւ պահպանե-  
ցի՛ եւ նախախնամեալ պահե-  
ցի՛, Արեւելեան կողմ աշխար-  
հիս. եւ Հայրապետութիւն Հա-  
յոց. այս նշանաւ սուրբ Խա-  
չիւս եւ սուրբ Աւետարանաւս,  
եւ աւուրս շնորհիւ՝ անուամբ  
Հօր եւ Որդւոյ եւ Հօգւոյն Սրբոյ.  
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յա.

Սւ դառնացանն զերեսս  
յԱրեւմտսս

Դպ. և Ժող. Ամէն. Ալէ. Ալէ. Ալէ.

Քահ. Օրհնեսցի՛ եւ պահպա-  
նեսցի՛ եւ նախախնամեալ պա-  
հեսցի՛. Արեւմտեան կողմ աշ-  
խարհիս եւ թագաւորութիւն  
քրիստոնէից. այս նշանաւ եւն.

Սւ օրջելով դառնան ՚ի Հարաւ

Դպ. և Ժող. Ամէն. Ալէ. Ալէ. Ալէ.

Քահ. Օրհնեսցի՛ եւ պահպա-

նեսցի՛ եւ նախախնամեալ պա-  
հեսցի՛ Հարաւային կողմ աշխար-  
հիս, երկիրս, անդաստանս եւ  
պաղարեւութիւն տարւոյս. այս  
նշանաւ սուրբ Խաչիւս եւն.

Սւ դառնան զեւ ՚ի Հիւսիս

Դպ. և Ժող. Ամէն. Ալէ. Ալէ. Ալէ.

Քահ. Օրհնեսցի՛ եւ պահպա-  
նեսցի՛ եւ նախախնամեալ պա-  
հեսցի՛. Հիւսիսային կողմ աշ-  
խարհիս, վանքս, անապատս,  
քաղաքս եւ գիւղս եւ բնակեալ  
ժողովուրդս ՚ի սմա. այս նշա-  
նաւ սուրբ Խաչիւս եւն.

Դպ. և Ժող. Ամէն.

Սւ դառնան ՚ի Բեմն, եւ ասնն

Քահ. Օրհնութիւն եւ փառք Հօր  
եւ Որդւոյ եւ Հօգւոյն Սրբոյ.  
Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս  
յաւիտենից. Ամէն.

Քարոզ Թափօրի եւ Խաչի

Սուրբ Խաչիւս աղաչեացուք  
զՏէր, զի սովաւ փրկեացէ՛ զմեզ  
'ի մեղաց, եւ կեցուցէ՛ շնոր-  
հիւ ողորմութեան իւրոյ: Ամե-  
նակալ Տէր Աստուած մեր. Կեցո՛  
եւ ողորմեա՛:

Ա Ղ Օ Յ Ք

Պահպանեա՛ զմեզ Քրիստոս  
Աստուած մեր՝ ընդ հովանեաւ  
սուրբ եւ պատուահան Խաչիւղ  
քով՝ ի խաղաղութեան. փրկեա՛  
յերեւելի եւ յաներեւոյթ թշնամ-  
ւոյն: Արժանաւորեա՛ գոհու-  
թեամբ փառաւորիդ զբեզ ընդ  
Հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ.  
Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս.

Օրհնեալ Տէր մեր Յիսուս  
Քրիստոս. Ամէն:

Հայր մեր որ յերկինս.

Վերսրբեալ Քարոզն եւ Օրհ-  
նութեանը որ Անգլաստան եւս կ'ըս-  
ուի, կը կարարուի Տէրունական քո-  
նէց կիւրակի առասօրներն, Երուս-  
ստեղծեալէն առաջ, եւ համ կիւրակի  
Էրեկոսներն, ըստ հրահանգի Տօ-  
նացոցին:

Անգլաստան՝ արդ համ արտեր,  
համ ցանելու երկիր ըսելէ. Բայց այս  
որեւ Արարօրէնց Օրհնութեան կը ը-  
շանակէ, որ հին արեւ Եկեղեցիէն  
դուրս ելնելով կը կարարուեր. օրհ-  
նելով աշխարհի շրջ կողմը, եւ յար-  
կադէս Հայաստանեաց հողն ու ջու-  
րը. երկիրն ու պորտը, Աղբն ու  
ժողովուրդը, Եկեղեցիներն ու վան-  
իւրը. զորս օրհնեացէ՛ Տէր յաւիտե-  
ան, եւ զցրտեալն ժողովեալ զա-  
բանեացէ Վերսրբն:

Շինէ՛ զեռուսաղէմ Տէր, եւ զգր-  
ուեալն Խաչիկի ժողովէ: Բժշկէ՛  
զբեկեալ սիրս, եւ պատէ՛ զամենայն  
վերս նոցա: ՍՍ.Ղ.ՄԱՍ ՏՆՈՂ. 1, 2:

ԽՆԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԽԱՉԻ

ՄԷԷ. Եւ եւս խաղաղութեան .  
Քահ. Օրհնութիւն եւ փառք .

ՇԱՐՍԱԿԱՆ ԲԱ.

Խաչի քոյ Գրիստոս երկիր-  
պագանեմք, եւ զսուրբ (Մա-  
նութիւնդ, Սաչելութիւնդ, Թա-  
ղումնդ) քո մեծացուցանեմք,  
եւ զսուրբ Չարչարանսդ (զսուրբ  
Յարութիւնդ) քո փառաւորեմք :

Եկայք հաւատացեալք երկիր  
պագեացաք Գրիստոսի Աստու-  
ծոյ մերոյ : Վասն զի եկն ի ձեռն  
Սաչին իւրոյ շնորհեաց պար-  
գեւս աշխարհի : Սուրբ Աստ-  
ուած, Սուրբ եւ Հօր, Սուրբ  
եւ Անմահ, որ (Մատնեցար, Սա-  
չեցար, Թաղեցար, Յարեար)  
վասն մեր, ողորմեա՛ մեզ :

(այոյեա՛ երէց՝ Կրկնելով)

Փառք Սուրբ Սաչիդ՝ Ալէլուիա .  
Սուրբ Մատնութեանդ՝ Ալէլուիա .  
Չարչարանսդ՝ Ալէլուիա .

Խաչեցելոյդ՝ Ալէլուիա .  
Սրբոյ Թաղմանդ՝ Ալէլուիա .

Սուրբ Յարութեանդ՝ Ալէլուիա :  
Նշանեցաւ առ մեզ լոյս երե-  
ւաց քոց եւ ետուր ուրախու-  
թիւն սրաից մերոց . Ի պաղոյ  
ցորենոյ, գինւոյ եւ ձիթոյ իւր-  
եանց լցուցիր զնոսա :

Փառք Սուրբ Սաչիդ . (Կրկնեա՛)

Փառք եւ երկրպագութիւն Հօր  
եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ,  
Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս  
յաւիտենից . Ամէն :

Փառք Ս.Սաչիդ . (Նոյնպէս ԼԱ.դա)

Սաչն կենարար որ եղև մեզ  
փրկութիւն, սովաւ ամենեք-  
եան զքեզ բարեբանեմք :

Որ ի Հօրէ լուսոյ լոյս ճառա-  
գայթեալ ի յերկրի . եւ զաւա-

զան զօրութեան հաւատացելոց .  
սովաւ ամենեքեան զքեզ բա .

Որ լուսափայլ ծագմամբ հրա-  
շափառապէս մեզ հուցաւ ի յօգ-  
նութիւն ընդդէմ թշնամւոյն .  
սովաւ ամենեքեան զքեզ բարե-  
բանեմք :

Սրհ. Եւ եւս խաղաղութեան  
զՏէր. աղաչեսցուք :

Սուրբ խաչիւս աղաչեսցուք  
զՏէր, զի սովաւ :

Քահ. Պահպանեա՛ Քրիստոս Աս-  
աուած մեր զժողովուրդս. եւն :



## Խ Ր Ա Տ Ք

Վասն եկրպագութեան  
Եկեղեցւոյ .

ՍՍԱՄՈՍ ՃԻՍ .

Ուրախ եղէ ես՝ ոյբ ատէին յիս, ի  
սուն Տեառն երթիցուք մեր .  
Հասեալ կային ոսք մեր առ դունս  
բո, երուսաղէմ :

Ձերուսաղէմ շինեալ որպէս քաղաք,  
եւ բնակութիւն իւր շուրջ զնալաւ :

Անդ ելանէին ազգք ազգք Տեառն .  
ի վկայութիւն Խորայէլի խոստովան  
վնիլ անուան Տեառն :

Անդ արկեալ են անթող դասասանի,  
անողոս արկեալ են ՚ի սան Դաւթի :

Հարցէք զողջունէ՛ երուսաղէմի, եւ  
զշինութենէ՛ ոյբ սիրէք զՏէր :

Եղիցի խաղաղութիւն ի գօրութեան  
բում, եւ շինութիւն յաշարակս յա-  
մուրս բո :

Վասն եղբարց եւ ընկերաց իմոց  
խօսեցայ զխաղաղութիւն, վասն բո  
եւ վասն սան Տեառն Ասուծոյ մերոյ  
յնդրեցար զբարութիւն ՚ի քէն :

Տմբ գօրութիւն ծառայի բո, կեցն

զորդի աղախնոյ քօ, եւ արա՛ առ իս նշան բարութեան :

Տեսցեն ասելիք իմ եւ ամաչեսցեն, զի դու, Տէր, օգնեցեր ինձ եւ մխիթարեցեր զիս :

Փառք Հօր եւ Այժմ եւ միշտ եւ :

ՔԱՐՈՁ ԵԿԵՂԵՅԻՈՅ

**Ս**ուրբ Եկեղեցեաւս աղաչեսցուք զՏէր՝ զի սուլաւ փրկեացէ զմեզ ի մեղաց, եւ կեցուցէ չնորհիւ ողորմութեան իւրոյ : Ամենակալ Տէր Աստուած մեր՝ կեցո՛ եւ ողորմեա՛ :

Ա Ղ Օ Յ Ք

**Ա**ռ զրան սրբոյ Եկեղեցւոյս, եւ առաջի Աստուածընկալ եւ պայծառացեալ սուրբ նշանացս՝ խոնարհեալ երկիւղիւ երկիրպագանեմք, զսուրբ եւ զհրաշալի եւ զյաղթող Տէրութիւնդ քօ օրհնեմք եւ փառաւորեմք, եւ քիզ

մատուցանեմք զօրհնութիւնս եւ զփառս Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյդ Սրբոյ. Այժմ եւ միշտ եւ. ՍՊՄԱՍ ՂՁ.

Աղազակեցէք առ Տէր.  
(Տե՛ս երես 369)

ՔԱՐՈՁ

Օրհնեսցուք զամենակալն Աստ.  
(Տե՛ս երես 372)

Ա Ղ Օ Յ Ք

Ի մէջ Տաճարիս եւ առաջի.  
(Տե՛ս երես 370)

Ա Ղ Օ Յ Ք


Ի յարկի Սրբութեան.  
(Տե՛ս երես 372)

(Երբ Բրիտանեան Եկեղեցի մտնէ, պէտք է գլխիւ բանայ եւ վերոյ գրեալ Սաղմունս աւղջիւր ըսելով՝ Երկրպագութեան մարտցանէ Աստուծոյ :)



ԼՈՒՐ ԱՆՈՒՐՅ

ԵՆԻՔՆԻՔՆԻՔՆԻՔՆԻՔ



LIBRARY OF THE  
UNIVERSITY OF CHICAGO



Bouasse-Lebel.

Paris

ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱՅ ԱՂՕՓԻՑ

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ

ԼՈՒՐ ԱՒՈՒՐՑ ԵՒ ՍՐԲՈՑ ՏՕՆԻՑ



Օրհնեալ Տէր մեր Յիսուս  
Կրիստոս . Ա.մէն :

Հայր մեր որ յերկինս .

Տէր, եթէ զչրթունս իմ բա-  
նաս , բերան իմ երգեսցէ զօրհ-  
նութիւնս քո :

Տէր , եթէ զչրթունս իմ բա-  
նաս , բերան իմ երգեսցէ զօրհ-  
նութիւնս քո :



Օրհնեալ համագոյ եւ միասնական անբաժանելի սուրբ Երրորդութիւն՝ Հայր եւ Որդի եւ Հոգի Սուրբ. Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

ՍԱՂՄՈՍ Կ.

**Տէր**, զի բազում եղեն նեղիչք .  
(Տես երես 77)

**ՔԱՐՈՋ** : Չարթուցեալքս ամենեւեան . (Տես երես 91)

Եւ ասի՝ Տէր ողորձա՛ւ ըստ պատշաճի աւուրն . Ի Կիւրակէս և ի Տօնս Տէրունականս՝ Երեք Տէր ողորձա՛ւ . Իսկ ի Տօնս Սրբոց՝ Յիսուս . և յաւուրս Պահոց՝ Հարիւր :

(Բայց երբ լուր օրեր Ս. Պատարագ մարտիկանի Յիշեցուք և Չարթիք, և Աշխարհ ամենայն երբեքն կըտուի : Չորս տե՛ս երես 87, 105. Նոյնպէս և Կանոնագրութի ըստ Չայնին :)

ԶԿՆԻ ԱՍԻ ԱՂՅԹՔ

(Ա. Գ.) **Չքէն** գոհանամք Տէր Աստուած մեր . (Տես երես 91)

(Ա. յա Աղջիւթն զինի անձնապէս Օրհնութեան Շարական կը կարդան ըստ պատշաճի աւուրն, էս ապա.)

ՄԱՂՅԱՆՔ — Ի ՏՕՆՍ ՍՐԲՈՑ

Բարեխօսութեամբ սրբունոյ Աստուածածնին, եւ Յովհաննու Մկրտչին, սրբոյն Ստեփաննոսի նախավկային, եւ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, յիշատակաւ եւ աղօթիւք սրբոց (այս անուն) որոց այսօր է յիշատակ . եւ վասն Սաչի քոյ պատուականի Տէր, ընկալ զազաչանս մեր . եւ կեցո՛ր զմեզ :

ՄԱՂՅԱՆՔ — ՊԱՅՈՑ

Ըստ ՈւՍ կանոն Սաղմոսաց և ՈւՍ Չայնից  
Գ. Լ. Երանեալին

Քրիստոս է իմ Աստուած, եւ

փառաւոր անեմ զսա . Ասա-  
ուած հօր իմոյ , եւ քարձք ա-  
րարից զսա :

Մարգասէր Տէր , վասն սրբ-  
բուհոյ անարատի Մօր քոյ եւ  
կուսի , եւ վասն Սաչի քո պատ-  
ուականի , ընկալ զաղաչանս  
մեր , եւ կեցո՛ զմեզ :

Ա.Ձ. Երկինք պատմենին

Տո՛ւք փառս Աստուծոյ , սո՛ւք  
օրհնութիւն Մարգասիրին՝ Թա-  
գաւորին յախանից , որ փրկէ  
զձառայս իւր եւ կեցուցանէ :  
Մարգասէր Տէր , վասն . եւն :

Ա.Կ. Մի՛ նախանձիրին

Դո՛ւ ես Տէր մեր , դո՛ւ ես  
Բրիստոս Փրկիչ մեր , զքեզ օրհ-  
նեն անձինք մեր :  
Մարգասէր Տէր , վասն . եւն :

Բ.Ձ. Աղօրմեային

Բարձրացաւ եղջիւր իմ յԱս-

տուած փրկիչ իմ . հաստատեցաւ  
սիրտ իմ՝ ի Տէր՝ Տէրամբ եւ հա-  
ւատով : Մարգասէր Տէր . եւն :

Բ.Լ. Երեւին

Խաղաղութեանց տուող Բը-  
րիստոս , զխաղաղութիւն եւ  
զերկնային ողորմութիւն քո  
պարգեւեան յարարածս քո :  
Մարգասէր Տէր , վասն . եւն :

Գ.Ձ. Տէր ապաւեցին

Յո՛յս կենդանութեան , յոյս  
եւ ապաւէն փրկութեան Տէր  
Յիսուս փրկիչ , փրկեա՛ եւ փա-  
րատեցո՛ զցաւս անձին իմոյ :  
Մարգասէր Տէր , վասն . եւն :

Գ.Կ. Խոստովանին

Եկեացե՛ն աղօթք մեր ի տա-  
ճար սուրբ քո , խոնարհացի՛  
ուենին քոյ ի խնդրուածս մեր :  
Մարգասէր Տէր , վասն . եւն :

## Գ.Զ. Ի նեղութեանին

Լ՛ո՛ւր մեզ Տէր, յո՛ւր մեզ  
Աստուածային սփորմութեամբ  
քով, ինայեան յարարածս քո :  
Մարգասէր Տէր, զանն, եւն :

(Ապա Չորս ԳՍՌՈՋԷՐԷՆ Է-  
ԱՂՈԹՔԷՆԷՐԷՆ ՎԷՆ ՀԸ Կարդացո՛ւ-  
լաւ յայնի առաւել, (Տե՛ս երես 209)  
Է- Աղջիւնէն յեպոյ՝ Պահոց օրեր  
կերթին թագաւոր յաւիտեանս Ծ  
լաւ պարկերի առաւել : Այս առան-  
չէի Նրքերն որ վեր հրաշագործ Ս.  
ՄԵՍՐՈՎԻ թարգմանիչ Վարդապետին  
յիշարանէն են, աօնն օր առանձին  
Աղջիւնի յամանակ, ճանաչանալ Ս-  
պաշխարանաց օրեր, կրնայ կարգաւ  
ըերթաւոր Քրիստոնեայնն :)

ԹԱԳԱՒՈՐՔ ԱՊՍԵՆԱՐՈՒԹԵԱՆ

## ԵՐԼՈՒՇՍԱԹԻ

Թագաւոր յաւիտեանս :

(Ա-գ.) Լ՛ո՛ւր մեզ Աստուած  
Փրկիչ մեր. եւ կեցո՛ զմեզ, որ  
յամենայնի կարողդ ես :

(Լսէ մեզ, ո՞վ Աստուած Փրկիչ մեր,  
և կեանք տո՛ւր մեզ որ ամեն բանի մէջ  
կարող ես.)

Ս-դ. Լ՛ո՛ւր մեզ Աստուած Փրկիչ  
մեր. յոյս ամենայն ծագաց երկ-  
րի. եւ որ ՚ի ծով հեռի : Ո՛ պատ-  
րաստէ զլերիսս զօրութեամբ  
իւրով, եւ զգեցեալ է զօրու-  
թիւն. Եւ կեցո՛ զմեզ, որ յա-  
մենայնի կարողդ ես :

(Լսէ մեզ, ո՞վ Աստուած Փրկիչ մեր, զո՛ւն  
ես երկրիս ամեն ծայրերը և հեռաւոր ծո-  
վերը բնակողներուն յոյսը : Որ լեռները  
քու զօրութիւնովդ կը պատրասես (կը  
շինես,) և զօրութիւն հագած ես, կեանք

տուր մեզ որ ամեն բանի մէջ կարող ես)

**Փռի.** Լո՛ւր աղաչանաց մերոց,  
Տէ՛ր մարդասէր. եւ զթ՛ան ի մեզ:

(Լսէ՛ մեր աղաչանքներուն Տէ՛ր մարդասէր, և զթ՛ան մեր վրայ:)

**Թ.** Մի՛ զիս անտես առներ. այլ  
օգնեա՛ ինձ Մարդասէր:

(Մի՛ անտես ըներ զիս, այլ օգնէ՛ ինձ  
ն՛վ Մարդասէր:)

**Սուրբ.** Մի՛ ընկենուր զիս Տէ՛ր,  
յերեսաց քոց. եւ զՀոգի քո  
Սուրբ մի՛ հաներ յինէն: Այլ  
առ՛ւր ինձ զցնծութիւն փրկու-  
թեան, եւ հոգւով պետութեան  
քո հաստատեա՛ զիս. Այլ օգ-  
նեա՛ ինձ Մարդասէր:

(Ո՛վ Տէ՛ր, զիս երեսդ մի ձգեր, և բու-  
Սուրբ Հոգիդ՝ մի հաներ ինձմէ: Այլ տուր  
ինձ փրկուած ըլլալու ուրախութիւնք:  
և բու ստուածային Հոգւովդ զօրացնու  
զիս, և օգնէ՛ ինձ, ն՛վ Մարդասէր:)

**Փռի.** Մի՛ անտես առներ զիս  
Տէ՛ր Աստուած Փրկիչ իմ. այլ  
չնորհեա՛ ինձ թողութիւն, բազ-  
մազութ մարդասէր. եւ կեցո՛:

(Մի՛ անտես ըներ զիս, ն՛վ Տէ՛ր Աստուած  
Փրկիչ իմ, այլ թողութիւն չնորհէ՛ ինձ,  
ն՛վ բազմազուծ մարդասէր և ապրեցնու:)

**Թ.** Երկինք եւ երկիր գոհանան  
զքէն Տէ՛ր. արարածք ամենայն  
քեզ երկիրպագանեն. եւ հրեշ-  
տակք՝ ի բարձունս աղաղակեն  
եւ ասին. Ողորմեա՛, դու ստեղ-  
ծեր, մի՛ կորուսաներ:

(Երկինք և երկիր կը գոհանան քնե՛:  
ն՛վ Տէ՛ր. ամեն արարածներ քեզ կ'երկըր-  
պագեն. և հրեշտակներն երկինքի մէջ  
կ'աղաղակեն ու կըօնեն. Ողորմէ՛ Տէ՛ր, դու  
ստեղծեր ես, մի՛ կորսնցուներ:)

**Սուրբ.** Երկինք երկնից, ջուրք որ  
'ի վերոյ քան զերկինս՝ օրհնե-  
ցէ՛ք զանունն Տեառն: Զի նա  
սասց, եւ եղեն. հրամայեաց

եւ հաստատեցան. Եւ հրեշտա-  
կըք 'ի բարձունս աղաղ:

(Ով երկինք երկնից, և երկինքէն վեր  
եղող ջուրեր, օրհնեցէք Տէրօջը անունը.  
վասն զի նա ըսաւ՝ և եղան, հրաման  
ըրաւ՝ և հաստատեցան ամեն բաներ.  
և հրեշտակներն երկինքի մէջ կ'աղաղա-  
կեն ու կրօնն. Ողորմէ Տէ՛ր, զո՛նն ստեղ-  
ծեր ես, մի կորսնցուներս)

Փ.Ն. Երկինք եւ երկիր հանա-  
պազ զքեզ գովեն, Թագաւոր  
փառաց. Սերովբէք եւ Քերով-  
բէք 'ի խոնարհ ունելով զդէմս  
իւրեանց. եւ միաձայն բարբա-  
տով աղաղակեն եւ ասեն.

Սուրբ, Սուրբ, Սուրբ,  
Տէր զօրութեանց:

(Երկինք և երկիր, միշտ և համապազ  
զքեզ կը գովեն, ո՞վ փառաց Թագաւոր.  
Սերովբէներն ու Քերովբէները իրենց ե-  
րեաները խոնարհեցունելով, միաձայն  
բարբաւտով կ'աղաղակեն ու կ'ըսեն,  
Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր զօրութեանց.)

### ԵՐԵՔԵԱԹԻ

(Ա.՜.) Երկայնամիտ ես Տէր  
առ ամենեսեան. եւ գթա՛ Տէր  
'ի վերայ մեր. որպէս եւ աւա-  
զակին Փրկիչ. եւ կեցո՛ւ:

(Երկայնամիտ (շատ համբերող) ես  
մենուն վրայ, ո՞վ Տէր, զԹուժիւն ըրէ մեզ,  
ինչպէս որ զԹացիր աւազակին վրայ, ո՞վ  
Փրկիչ, և կեանք տուր մեզ.)

Սաղ. Երկայնամիտ բազումողորմ  
եւ ճշմարիտ, նայեանց առ իս.  
եւ ողորմեանց ինձ. Տուր զօրու-  
թիւն ծառայի քոյ. կեցո՛ զօրդի  
աղախնոյ քոյ. եւ արա՛ առ իս  
նշան բարութեան. Եւ գթա՛ Տէր  
'ի վերայ մեր. որպէս եւ աւազա.

(Երկայնամիտ, բազումողորմ և ճշմա-  
րիտ Աստուած, նայէ իմ վրաս, և ողորմէ  
ինձ, Զօրութիւն տուր քու ծառայիդ, քու  
աղախինիդ զաւակը սպրեցու. և բարու-  
թեան նշան ցոյց տուր. և զԹուժիւն ըրէ  
մեզ, ինչպէս զԹացիր աւազակին վրայ,  
ո՞վ Փրկիչ, և կեանք տուր մեզ.)

Փոխ. Տէր, որ գլխացար յաւազակըն խաչակից լինել քեզ. եւ մաքրեցեր զազտեղութիւն յանցանաց նորա յաղբերէ կողի քոյ. գլխս եւ յիս ՚ի մեղաւորս, որ ծարաւիս եմ առ քեզ. եւ փափաքիմ ՚ի զաւիթս քո որպէս զմի ՚ի յեղջերուաց ՚ի յաղբերս ջուրց:

(Տէր, որ քեզ հետ խաչակից եղող աւազակին ողորմեցար եւ անոր յանցանաց աղտեղութիւնը մաքրեցիր քու կողէդ բղիսած աղբիւրով, զմս եւ մեղաւորիս վրայ, որ ծարաւած եմ քեզ, եւ կը փափաքիմ քու գաւիթդ (քու տանդ բակը) մտնելու, ինչպէս որ եղջերուն<sup>(1)</sup> կը փափաքի աղբիւրներուն ջրերուն:)

Ք. Մարտեաւ ընդ իս թշնամին. հանապազ զիս կամի կորուսանել. այլ դո՛ւ Տէր իմ, այց արս մոլորեալ ոչխարիս. եւ կեցո՛ւ:

<sup>1</sup>Եղջեր-- (Կէտի:)

(Թշնամին ինձ հետ կը կուռի, եւ միշտ կուզէ զիս կորնցունել, բայց դուն, ո՞վ Տէր իմ, այցելութիւն ըրէ մոլորած ոչխարիս, եւ ապրեցնու)

Սուր. Մարտեան ընդ իս ՚ի տարապարտուց, եւ փոխանակ սիրոյ իմոյ մասնէին զիս. այլ ես յազօթս կայի. Հատուցին ինձ չար փոխանակ բարւոյ. ատելութիւն փոխանակ սիրոյ իմոյ. այլ դո՛ւ Տէր իմ այց արա.

(Պարապ տեղը իմ հետս կառուեցան, եւ իմ սիրոյս փոխարէն զիս կը մասնէին, բայց ես աղօթք կ'ընէի Բարուձեան զէմ չարութիւն՝ եւ իմ սիրոյս փոխարէն թշնամութիւն ըրին ինձ՝ բայց դուն ո՞վ Տէր իմ, այցելութիւն ըրէ մոլորած ոչխարիս, եւ ապրեցնու:)

Փոխ. Որ Հովիւդ ես հօտից բանաւոր կենդանեաց. աուր ինձ յոյս կենաց ապաշխարութեան.

եւ դարձո՛ւ զմոլորեալս 'ի հօտ  
քո Քրիստոս, եւ կեցո՛ւ:

(Որ Հովիւ ես բանաւոր կենդանիներու  
հօտին (ազգաց եւ ժողովրդոց), տուր ինձ  
ապաշխարութեան կեանքի յոյսը, եւ զիս  
մոլորածս քու հօտիդ (սիւրբիւիդ) մէջ  
դարձու, Քրիստոս, եւ ապրեցու:)

**Թ.** Մեղայ՛ եւ աղաչեմ՛ զքեզ.  
Թողութիւն շնորհեա՛ մեզաց  
իմոց. քաւիչ իմ լիւր քո գթու-  
թեամբդ. որ միայնդ ես Փրկիչ,  
եւ կեցո՛ւ:

(Մեղայ՛, աղաչեմ զքեզ, Թողութիւն շնորհէ  
իմ մեղքերուս. քու գթութիւնովդ  
ինձ քաւիչ եղիր եւ ապրեցու զիս, բանգի  
դու միայն ես Փրկիչ:)

**Մ.** Մեղայ՛ Տէր մեղայ՛. եւ դա-  
նօրէնութիւնս իմ ես ինձէն գի-  
տեմ. Աղաչեմ եւ խնդրեմ 'ի քէն.  
Թող ինձ Տէր, թող ինձ. եւ մի  
կորուսաներ զիս ըստ անօրէ-  
նութեան իմոյ. Քաւիչ իմ լիւր.

(Մեղայ՛ Տէր մեղայ, եւ իմ անօրէնու-  
թիւններս ես ինձէն գիտեմ. կ'աղաչեմ ու  
կը խնդրեմ քնէ, Թողութիւն տուր ինձ,  
եւ մի կորսնցուներ զիս իմ անօրէնութեանս  
համար. իմ քաւիչս եղիր քու գթութիւնովդ  
եւ ապրեցու զիս, քանգի դուն միայն ես  
Փրկիչ:)

**Փ.** Մեղայ՛ քեզ Տէր. մեղայ՛  
քեզ Տէր. մեղայ՛. եւ քան՛ զա-  
ւազ ծովու բազում են յան-  
ցանք իմ. պատրանք աշխար-  
հիս խարեցին զիս. եւ եղէ ան-  
պառու ՚ի կենաց յուսոյդ. այլ  
դու անտխակալ եւ անխշաչար  
Փրկիչ, ինայեա՛ 'ի մեղուցեալ  
ծառայս, եւ կեցո՛ւ:

(Մեղայ՛ քեզ Տէր, մեղայ՛ քեզ Տէր, մե-  
ղայ, ծովու աւագէն աւելիչատ են իմ մեղ-  
քերս, աշխարհիս խարդախութիւնները  
խարեցին զիս, եւ քու յաւտենական  
կեանքիդ յոյսէն զրկուեցայ. բայց Դուն,  
նո՛ր անտխակալ եւ անխշաչար (չարութիւն  
չի յիշող) Փրկիչ, ինայէ՛ քու մեղուցեալ  
ծառայիդ եւ ապրեցու:)

## ՉՈՐԵՔՆԱՐԹԻ

(Ա-Գ.) **Տէր** իմ, բազում են անորէնութիւնք անձին իմոյ. ո՛չ յիշեցի զահեղ զգատաստանքս քո. արդ անկեալ զքեզ աղաչեմ. շնորհեա՛ ինձ ապաշխարութիւն, **Տէր**, եւ ողորմեա՛:

(Ո՛վ Տէր, իմ անձիս անորէնութիւնները խիստ շատ են. չյիշեցի քու ահաւոր դատաստանդ. ուստի առջեւդ իյնալով կ'աղաչեմ, ապաշխարելու շնորհ տուր ինձ **Տէր**, եւ ողորմէ՛):

**Ա-Դ.** Անորէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ. եւ որպէս բռն ծանր ծանրացան ՚ի վերայ իմ. նեխեցան եւ փառցան վէրք իմ յերեսաց անրդգամութեան իմոյ. Ո՛չ յիշեցի զահեղ զգատաստանս քո. արդ անկեալ զքեզ աղաչեմ. շնորհեա՛ ինձ ապաշխարութիւն, **Տէր**, եւ ողորմեա՛:

(Իմ անորէնութիւններս զլուխէս վեր բարձրացան, եւ ծանր բռնան պէս վրաս ծանրացան. Հոռեցան ու փտտեցան իմ վէրքերս իմ անզգամութեանս երեսէն, չ'յիշեցի քու ահաւոր դատաստանդ, ուստի առջեւդ իյնալով կ'աղաչեմ, ապաշխարելու շնորհ տուր ինձ **Տէր**, եւ ողորմէ՛):

**Փ-Ե.** Պաղատանս մատուցանեմք քեզ Հայր երկնաւոր. մի՛ անտես առնել զաղաչանս մեր. այլ անցո՛՛ զցասումն քո ՚ի մէնջ, եւ յիշեա՛ զի սլատկեր եմք բարերարութեանդ:

(Պաղատանք (սրտանց աղօթք) կը մատուցանեմք քեզ, ո՛վ երկնաւոր Հայր, մի անտես ընել մեր աղաչանքը, այլ անցու քու բարկութիւնդ մեր վրայէ, եւ յիշէ որ մենք քու բարերարութեանդ պատկերներք:

**Թ.** **Տէր** իմ, զթոթիւնք քո բազում են յոյժ. առ իս արա՛ զբարերարութիւնս քո՝ որպէս եւ մաքրաւորին, եւ ինձ ողոր.



(Տէր իմ, քու գթութիւններդ խիստ շատ են. մաքսաւորին պէս ինձ եւս բարերարութիւն ըրէ՛, և ողորմէ՛ ինձ։)

**Սուշ.** Գթութիւնք քո բազում են, Տէր, ևւ ըստ իրաւանց քոց կեցո՛ղիս Բազում են որք հալածեն ևւ նեղեն զիս. 'ի վկայութեանց քոց ևւ ոչ խոտորեցայ. Աւ իս արա՛ գրարերարութիւնս քո՛ որպէս ևւ մաքսաւորին, ևւ ինձ ողորմեա՛.

(Քու գթութիւններդ շատ են, ո՛վ Տէր, քու արդարութիւնովդ սպրեցնու զիս Եւտեքը կը հալածեն և կը նեղեն զիս, բայց ևւ քու օրէնքէդ չի խոտորեցայ (դուքս չեղայ.) մաքսաւորին պէս ինձ եւս բարերարութիւն ըրէ, և ողորմէ ինձ։)

**Փ.Խ.** Անտխակալ ևւ անյիշաչար Տէր, որ գթալով 'ի մեղաւորս շնորհեցեր ապաշխարութիւն. արդ գթա՛ ևւ յիս, Տէր, 'ի մեղացեալ ևւ յանօրինեալ քո ծա-

ռայս. ևւ փոխարկեա՛ զգործողս Հարեաց 'ի զղջումն ապաշխարութեան ևւ կեցո՛:

(Անտխակալ ևւ անյիշաչար Տէր, որ մեղաւորներուն վրայ գթալով ապաշխարութիւն շնորհեցիր, հիմա ևւ իմ վրայ գթան, Տէր, որ քու մեղաւոր ևւ անօրէն ծառայ եմ. և փոխէ Հարիք գործողիս սիրտը, որ զղջումով ապաշխարեմ, ևւ ապրեցնու)

**Թ.** Ի տաճարի քում սրբութեան, փառաւորելով զքեզ. դու ունիս իշխանութիւն, ողորմեա՛ մեզ:

(Քու սրբութեանդ տաճարին մէջ, զքեզ փառաւորելով կ'աղաչեմ, դուն իշխանութիւն ունիս, ողորմէ մեզ։)

**Սուշ.** Սյլ ևւ ըստ բազում ողորմութեան քում մտից 'ի տուն քո. ևւ երկիրպագից 'ի տաճար սուրբ քո երկիւղիւ քո Տէր, առաջնորդեա՛ ինձ յարդարութեան քում վասն թշնամեաց իմոց, ևւ ուղիղ արա՛ առաջի իմ

զճանապարհս քո. Դու ունիս  
իշխանութիւն. ողորմեա՛ մեզ:

(Այլ ես բու մեծ ողորմութիւնովդ՝ պիտի  
մտնեմ բու տունդ, և երկրպագութիւն ը-  
նեմ սուրբ տաճարիդ մէջ բու երկիւղովդ:  
Տէր, առաջնորդէ ինձ բու արդարութեան  
ճանքուդ մէջ, իմ թշնամիներուս համար,  
և շտկէ բու ճանապարհդ իմ առջեւ. դուն  
իշխանութիւն ունիս, ողորմէ մեզ:)

**Փոփ.** Ի տաճարի քում սրբու-  
թեան՝ հանապաղ զքեզ գովեմք  
Թագաւոր փառաց. որ ունիս  
իշխանութիւն կենաց եւ փրկ-  
կութեան, ողորմեա՛ մեզ:

(Գու սուրբ տաճարիդ մէջ՝ միշտ և հա-  
նապաղ կը գովեմք զքեզ, որ փառաց Թա-  
գաւոր. որ իշխանութիւն ունիս կեանք  
և փրկութիւն տալու. ողորմէ մեզ:)

### ՀԻՆԳՇԱՌԹԻ

(Ա. Գ.) Ապաշխարութեան ար-  
տասնուս աւագան լինի, եւ լու-

անայ զաաղմութիւն մեղաց.  
սովաւ շնորհեա՛ յառաջ քան  
զվախճան, զքաւութիւն եւ զմեծ  
քո զողորմութիւն:

(Ապաշխարութեան արցունքն աւագան  
կ'ըլլայ, և մեղքերու բազմութիւնը կը լը-  
ւայ. ասով (ապաշխարութիւնով) քաւու-  
թիւն շնորհէ մեզ որ Տէր, մեր մեռնելէն  
առաջ, և բու մեծ ողորմութիւնդ պար  
գեւէ մեզ:)

**Սուր.** Ծարաւի է անձն իմ առ  
քեզ Աստուած, հզօր եւ կեն-  
դանի. երբ եկից երեւեցայց  
երեսացդ Աստուծոյ: Եղեն ինձ  
արտասուք իմ կերակուր 'ի  
տուէ եւ 'ի գիշերի. եւ այն զի  
ասէին զիս զօրհանապաղ, թէ  
ո՛ւր է Աստուած քո. Սովաւ.

(Ո՛վ հզօր եկեղանի Աստուած, իմ անձս  
ծարաւի է առ քեզ, երբ պիտի գամ ու  
կրեմամ Աստուածային երեսիդ: Իմ ար-  
ցունքներս իմ կերակուրս եղան զիշեր ցե-

րեկ, որովհետեւ ամեն օր կըսէին ինձ՝ Թէ  
 հեր է քու Աստուածդ. ասով (ապաշխա-  
 րութիւնով) քաւութիւն շնորհէ մեզ ո՛վ  
 Տէր, մեր մեռնելէն առաջ. և քու մեծ  
 ողորմութիւնդ պարգևէ մեզ.)

Փ.Խ. Յորժամ գաս փառօք Հօր  
 յահագին աւուրն՝ 'ի դատել զեր-  
 կիր. եւ դողան սարսափամբ  
 երկրածինքս ամենայն 'ի յահէ  
 քումմէ. 'ի նստիլ քո յատենի  
 գատաւոր անեղ, եւ յարկնար-  
 կել քո յարարածս. յիշեա՛ եւ  
 զիս զբազմամեղս, որ ընկըզ-  
 մեայս եմ յանցանօք բանսար-  
 կուին խարամբ. եւ հայդեմ  
 զաւանգակին, Տէ՛ր եւ զիս յիշեա՛.  
 որ միայնդ ես Փրկիչ:

(Երբ քու Հօրդ փառքով գաս այն անա-  
 գին օրը, աշխարհը դատելու համար, բո-  
 լոր այսորածներ պիտի դողան քու անէդ  
 սարսափելով: Երբ դու ատենանստիս, ո՛վ  
 անեղ դատաւոր, և աչքդ դարձունես քու

արարածներուդ վրայ. յիշէ՛ զիս զմեղաւո-  
 րըս, որ բանսարկու սատանայէն խար-  
 ուելով՝ յանցանաց մէջ ընկզմած եմ. կա-  
 ղահեմ աւագակին խօսքը կրկնելով. Տէ՛ր,  
 յիշէ՛ և զիս, զի դու միայն ես Փրկիչ.)

Խ. Ձիս որ 'ի նաւի աշխարհի  
 ալէկոծեն մեզք իմ. նաւահանս-  
 գիստ ապաշխարութեան շնոր-  
 հեա՛ ինձ բազումողորմ եւ կեցո՛:

(Ձիս՝ կ'ալէկոծեն իմ մեղքերս աշխար-  
 հիս նաւուն մէջ, ո՛վ բազումողորմ Աս-  
 տուած, շնորհէ՛ ինձ ապաշխարութեան  
 նաւահանգիստը, և ապրեցնու.)

Սաղ. կեցո՛ զիս Աստուած, զի  
 հասին ջուրք յանձն իմ. ընկչայ  
 ես 'ի խորս անդնդոց ուր ո՛չ գոյ  
 ինձ հանգիստ. նաւահանգիստ  
 ապաշխարութեան. եւն.

(Ապրեցնու զիս Աստուած իմ, բանգի  
 ջուրերը մինչև վրաս ելան, և խոր ան-  
 դունդի մէջ ընկղմեցայ, ուր հանգիստ  
 չունիմ. ո՛վ բազումողորմ Աստուած, շնոր-

հէ ինձ ապաշխարութեան նաւահանգիստը, և ապրեցնուի)

**Փ.Ի.** Նաւապետ բարեգութ, առ քեզ ապաւինիմ. տուր ինձ ձեռն որպէս երբեմն Պետրոսին 'ի վերայ ալեացն. որ ծփիմս ալէկոծեալ յանցանօք մեղաց. եւ կեցնուի

(Ո՛վ բարեգութ նաւապետ, առ քեզ կ'ապաւինիմ, տուր ինձ բու ձեռքդ ինչպէս երբեմն Պետրոսին տուիր ծովու ալիքներուն վրայ. քանզի մեղաց յանցանքով ալէկոծութեան մէջ կը ծփամ, և ապրեցնուի զիս)

**Թ.** Դո՛ւ ես Քրիստոս, աղբիւր կենաց. բղխումն ողորմութեան. շնորհեա՛ Քրկի՛չ, անձանց մերօց զթողութիւն մեղաց մերօց:

(Ո՛վ Քրիստոս, դուն ես ողորմութիւն բղխող կենաց աղբիւրը. մեր անձերուն գործած մեղաց Թողութիւն շնորհէ, ո՞վ Քրկիչ)

**Ս.Վ.** Ի քէն է Տէ՛ր աղբիւր կենաց. եւ լուսով երեսաց քօց

տեսանեմք զլոյս Ծագեա՛ զողորմութիւնս քօ սրք ճանաչեն զքեզ. զարդարութիւնս քօ սրք ուղիղ են սրաիւք. Ծնորհեա՛ Քրկիչ անձանց մերօց, զթողութիւն մեղաց մերօց:

(Տէ՛ր, կենաց աղբիւրը քենէ կը բղխի, և բու երեսիդ լուսով մենք լոյս կը տեսնեմք: Ծագէ՛ բու ողորմութիւնդ քեզ ճանչցողներուն, և բու արդարութիւնդ՝ ուղիղ օրտով եղողներուն վրայ. ո՞վ Քրկիչ, Թողութիւն շնորհէ մեր անձերուն և մեր գործած մեղքերուն)

**Փ.Ի.** Որ աղբիւրդ ես ծարաւեաց եւ հանգիստ աշխատելոց, ճանապարհ մոլորելոց, եւ Հովիւ հոգեւոր բանաւոր հօտի. փափաքողացս առ քեզ Քրիստոս, լե՛ր նաւահանգիստ. եւ արե՛ս՝ մեղ ծարաւեացս զբաժակ քօ քաղցրութեան՝ յանսպառ յաղբերէդ:

(Որ ծարաւցածներուն աղբիւր ես. յոգ-

նաժներուն հանգիստ. մոլորաժներուն  
ճանապարհ, և բուբանաւոր հօտիդ (ժողո-  
վրդեանդ) ճողեւոր Հովիւ ես, ո՛վ Քրիս-  
տոս, բեզ փափաքողներու նաւահան-  
գիստ եղիր, և մեզ ծարաւներու խմցո՛ւ  
անուշահամ բաժակէդ, որ անհատնու՛մ  
աղբիւրէդ կը բղխի։)

## ՈՒՐԱՍԹ.

(Ա. 4.) Թ. Ի տաճարի սրբութեան  
քում լուր Տէր ձայնի իմում.  
եւ աղաչանք իմ ժամանեցեն  
'ի յականջս քս Տէր։

(Քու սրբութեանդ տաճարին մէջ, լսէ  
իմ ձայնիս, Տէր, և իմ աղաչանքս թող  
հասնի բու ականջիդ. ո՛վ Տէր։)

Ս. Կ. Լուաւ ինձ 'ի տաճարէ  
սրբոյ իւրմէ ձայնի աղօթից ի-  
մոց. եւ աղաղակ իմ առաջի  
նորա մտցէ յականջս նորա. եւ  
աղաչանք իմ ժամանեցեն։

(Լսեց Տէրը իւր սուրբ տաճարին մէջէ  
իմ աղօթքիս ձայնին, և Անոր առջեւ իմ  
ըրած աղաղակս անոր ականջը պիտի  
ժանէ. և իմ աղաչանքս թող հասնի բու  
ականջդ. ո՛վ Տէր։)

Փոխ. (Ա. 29.) Որ լուսատու ես  
տիեզերաց Քրիստո՛ս Աստուած.  
լուսաւորեա՛ զիմ գխաւարային  
խորհուրդս, եւ կեցո՛ւ։

(Ո՛վ Քրիստոս Աստուած, որ բոլոր՝ աշ-  
խարհի լոյս տուող ես, լուսաւորէ իմ խա-  
ւարային խորհուրդներս և ապրեցնու զիս։)

Փոխ. (Ն. 2.) Օրհնեա՛լ ես Տէր,  
եւ փառաւորեա՛լ է քո անբաւ  
մարդասիրութիւնդ. զաղաչանս  
մեր քեզ մատուցանեմք, որ  
Թագաւորդ ես յաւիտենից. ըզ-  
նրն ջեցեալսն մեր արժանի արա՛  
Տէր, ընդունիլ 'ի կեանսդ յաւիտոց։

(Օրհնեա՛լ ես, Տէր, և փառաւորեալ է  
բու անբաւ մարդասիրութիւնդ. մեր աղա-  
չանքը քեզ կը մատուցանեմք. որ յաւի-

տենական Թագաւոր եւ. ո՞վ Տէր արժանի  
ըրէ ընդունիլ մեր ննջեցեալները յաւի-  
տենական կեանքիդ մէջ.)

**Թ.** Սրտասուս ինձ շնորհեա՛ 'ի  
յապաշխարութիւն Տէր, զի լու-  
ացից զմեզս անձին խնայ. որպէս  
պոռնիկն աղաչեմ, եւ կեցո՛ւ:

(Ապաշխարութեան արցունք շնորհէ  
ինձ, ո՞վ Տէր, որ իմ մեղքերս լուսմ. պոռ-  
նիկին պէս կ'աղաչեմ, ապրեցո՛ւ զիս)

**Սաղ.** Վատասկեցայ եւ 'ի հե-  
ծութեան իմում. լուացի զա-  
մենայն զիշեր զմահիճս իմ. եւ  
արտասուօք իմովք զանկողինս  
իմ թացի. Զի լուացից զմեզս եւն.

(Իմ ցաւզին հառաչանքովս յողեցայ  
եւ, բոլոր զիշեր իմ անկողինս լուացի, եւ  
իմ արցունքովս Թրշեցի, որպէս զի իմ մեղ-  
քերս լուսմ. պոռնիկին պէս կ'աղաչեմ,  
ապրեցո՛ւ զիս)

**Փոխ.** Որ աղբիւրդ եւ անասա-  
կան Քրիստոս Աստուած. ըզ-

վիրաւորեալ անձն իմ 'ի մեղաց,  
բժշկեա՛ Տէ՛ր, բզխամա՛ք արտաս-  
ուաց, եւ կեցո՛ւ:

(Ո՞վ Քրիստոս Աստուած, որ անասա-  
կան աղբիւր ես, մեղքերով վիրաւորուած  
անձս բժշկէ Տէր, աչքէս արցունք բբխե-  
ցունելով. և ապրեցո՛ւ)

**Թ.** Զմոլորեալ ծառայս խրնդ-  
րեա՛ Տէր, եւ մի՛ զատապար-  
տեր զիս 'ի յաւուրն այցելու-  
թեան քոյ, Մա՛րդասէր:

(Քու մոլորած ծառադ փնտռէ ո՞վ Տէր,  
և մի զատապարտեր զիս քու այցելու-  
թեանդ օրը, ո՞վ Մարդասէր)

**Սաղ.** Կեցցէ՛ անձն իմ օրհնեսցէ՛  
զքեզ, եւ իրաւունք քո օգնես-  
ցեն ինձ: Մոլորեցայ եւ որպէս  
զոչխար կորուսեալ. խնդրեա՛  
զձառայս քո, զի զպատուիրանս  
քո եւ ոչ մոռացայ. եւ մի՛ զա-  
տապարտեր զիս 'ի յաւուրն այ-  
ցելութեան քո Մա՛րդասէր:

(Թող ապրի իմ անձս և զբեզ օրհնէ, և բու իբաւունքներդ թող օգնեն ինձ:

Կորսուած ոչխարի պէս մոլորեցայ, փնտոէ բու ծառադ՝ քանզի բու պատուիրանքդ չ՛մոռցայ ես, և մի դատապարտեր զիս բու այցելուածեանդ օրը, ո՞վ Մարդասէր)

**Փ.ի.** Որ մոլորեցայ 'ի հօտէ բուժմէ Հովիւ բարի, խնդրեա՛ զմոլորեալս. եւ արժանաւորեա՛ խառնիլ 'ի հօտ քո Բրիսաոս, եւ կեցո՛:

(Ո՞վ Հովիւ բարի, ես մոլորեցայ բու հօտէդ, փնտոէ՛ զիս մոլորածս, և արժանի ըրէ զիս խառնուիլ բու հօտիդ մէջ, ո՞վ Բրիսաոս, և ապրեցու զիս:

**ԹԱԳԱՒՈՐՔ ՄԱՐՏԻՐՈՍՅ**

ԸՍՏ ՈՒՔ Չայնից

**Ա.Ա. Ա.՝ԱՂԷՆ Կ.Պ.Ճ.՝(1)**

**(Ա.՝Ք.)** Թագաւոր յաւիտեան:

Չողորմուածիւն քո Տէր արա ի մեզ. եւ բարեխօսութեամբ սրբոցն (→)

(1) Գառնառ թէ վասն էր Վարտիրո-

աւուր). մի կորուսաներ զմեզ երրորդութիւն սուրբ, ողորմեաց մեզ:

**Մ.Պ.** Փրկուածիւն արդարոց 'ի Տեառնէ է. վերակացու է նոցա 'ի ժամանակս նեղութեան: Օգնեսցէ նոցա Տէր եւ փրկեսցէ զնոսա. ապր եցուսցէ ի մեղաւորաց եւ կեցուսցէ զնոսա, զի յուսացան 'ի նա. եւ բարեխօսութեամբ սրբոցն:

**Փ.ի.** Որք գտանջանս եւ զմահ վասն քո յանձն առին. եւ հեղին գար իւնս իւրեանց վասն անուանդ քո սրբոյ:

սաց Թագաւորի» Ա.՝ԱՂԷՆ Կ.Պ.Ճ. յառաջ եղեալ է քան ՎԱՂԷՆ Զայն: Ասեն թէ՛ Ս. Գրիգոր Լուսաւորիչն մեր ասացեալ է զայս՝ յամփոփելն զմաքուր մարմինսն Սրբոց Կուսանացն Հռիփսիմեանց և Գայիանեանց: Յետոյ շարադրողն զԹ.Ք.Պ.Ճ.՝ Մարտիրոսոց, զայս բանս ետ Ազ. Չայնիւն՝ վասն հանդիպելոյ տօնն Կուսանացն ի նոյն ձայնն: Եւ առ ի պատիւ երեսաց Սրբոյ Լուսաւորչին, յառաջ դասեաց զնա քան ՎԱՂԷՆ Զայն:»

(Թագաւոր + Տղ. Կ.Պ.Ճ.)

բարեխօսութեամբ սոցա մի կոռուսաներ զմեզ. երբորդութիւն սուրբ, ողորմեա՛ց մեզ:

**Ա.Չ.** (Ա.Մ.Մ.Գ.Է. 3-5)

Թագաւոր յաւիտեան

Բարեխօսութեամբ սրբոց (Մ.Մ.Մ.Մ.), աղաչեմք զքեզ. Թողութիւն շնորհեա՛ յանցանաց մերոց. բարեբար Քրիստոս:

**Մ.Ղ.** Մերձ է Տէր առ այնտոսիկ որք մաշեալ են արշիւք, եւ զխոնարհս հոգւով կեցուցանէ: Բազում նեղութիւնք են արդարոց, յամենայն է փրկէ ըզնոսա Տէր, եւ պահէ զամենայն ոսկերս նոցա, եւ մի ի նոցանէ ոչ կորիցէ. Թողութիւն շնորհեա՛ յանցա. **Փ.Է.** Որ յաղթող զօրութեամբ ՚ի հանդէս ճգնաւորական, անարատ պահեցեր զխոստովանող վկայս քո Քրիստոս Աստուած. սուր մեզ զօգնութիւն ի նեղութեան մերում, բարեխօսութեամբ սրբոց մարտիրոսաց, եւ կեցն:

**Բ.Չ.** Բարեխօսութեամբ սրբոցն (Մ.Մ.Մ.Մ.), պարգեւեա՛ մեզ Տէր. առնուլ մասն եւ բաժին ընդ հրաւիրեալսն ՚ի կոչումս արքայութեան երկնից:

**Մ.Ղ.** Սքանչելի է Աստուած ՚ի վերայ, սրբոց իւրոց Աստուած իւրայէլի. նա քաջ է զօրութիւն հաստատութեան ժողովրդեան իւրոց, օրհնեա՛լ է Աստուած. Առնուլ մասն եւ բաժին:

**Փ.Է.** Մարտիրոսք երանեալք եւ փառաւորեալք. որք բազում քանջանացն համբերեցիր, դուք զլոյսն կենաց ըզգեցեալ ունիրք. եւ առ Քրիստոս վասն մեր բարեխօսեցէք:

**Բ.Ն.** Դու ես Քրիստոս աղբիւր կենաց քրիստումն ողորմութեան. շնորհեցեր սրբոցն (Մ.Մ.Մ.Մ.), յաղթող զնահասակութիւն. հաղածել զխաւարն եւ լուսաւորել զանձինս մեր:

**Մ.Ղ.** Աստուած փառաւորեալ է ՚ի խորհուրդս սրբոց իւրոց. մեճ եւ անհաւար ՚ի վերայ այնցիկ՝ որք շուրջ են



զնոյաւ, Տէր Աստուած զօրութեանց  
 ո՛նմանի քեզ. հօրես զու Տէր, եւ ծը-  
 մարտութիւն քո շուրջ է զքեւ. Ծնու-  
 հեցեր սրբոցն (—յ—ւ—ւ—), յաղթող  
 զնահասակութիւն հալածել զիսաւարն  
 եւ լուսաւորել զանծինս մեր.

**Փ.Է.** Որ շնորհօք սուրբ Հոգւոյն յաղ-  
 թեցիր թշնամւոյն. երանեալ սուրբ  
 վկայք Քրիստոսի. վասն ձեր տօնողացս  
 հայցեցէք յԱստուծոյ զԹողութիւն  
 մեզաց:

**Փ.Ը.** Որ պատկզ էք պարծանաց ամե-  
 նայն առարիւնեաց. նախաշաւիղ եւ  
 առաջնորդ կենացն յաւիտենից, ո՛վ  
 սուրբ վկայք. առ պատկիչն սրբոց եւ  
 վասն մեր բարեխօսեցէք. շնորհելով  
 ողորմութիւն յանսպառ աղբերէն կե-  
 նացըն յաւիտենից:

**Գ.Գ.** Զճգնութիւն սրբոց (—յ—ւ—ւ—),  
 բարեխօս ունիմք առ քեզ Քրիստոս.  
 եւ աղաչեմք սորօք, շնորհեա՛ զԹո-  
 ղութիւն յանցանաց մերոց, եւ՛ ի կեան-

սրդ յաւիտենից նորոգեա՛, եւ կեցն՝.  
**Ս.Գ.** Հոյս ծագեաց արդարոց. ուղղոց  
 սրհից եղեւ ուրախութիւն. Ուրախ  
 եղերուք արդարք ՚ի Տէր. եւ խոստո.  
 վան եղերուք յիշատակի սրբութեան  
 նորա, եւ աղաչեմք:

Հանդիսացեալք ի մարսս պատե-  
 րազմի յաղթող զսայք սուրբ վկայք.  
 քանզի ճանապարհ հորդեցիր մեզ  
 յերկնային քաղաքն յերուսաղէմ, ընդ  
 անմարմնոցն դասս փառաւորելով  
 սուրբ զԵրրորդութիւնն:

**Գ.Դ.** Զճգնութիւն սրբոց. (—Է— է ԷԷԷ)  
**Ս.Դ.** Պատուական է առաջի Տեառն  
 մահ սրբոյ իւրոց. ո՛ Տէր ես ծառայ քո  
 եմ. ծառայ եւ որդի աղախնոյ քոյ.  
 Հատեր ըզկապանս իմ. քեզ մատուցից  
 պատարագ օրհնութեան, եւ զանուն  
 Տեառն կարգացից. եւ աղաչեմք.

Հանդիսացեալք ի մարսս. (—Է— է ԷԷԷ)  
**Գ.Ե.** Որք ՚ի խորանս Սրբութեան  
 եմք ժողովեալ օրհնել զքեզ Քրիստոս.

աղաչանօր սրբոցն (այս անունն). զպա-  
ղասանս մեր մի անեսն առնել. որ  
միայնդ նս բարեմտորմ Քաղաւոր  
փառաց Քրիստոս:

**Սուրբ Մերձէ Տէր** առ ամենն սեանօր  
կարդան առ նա. առ ամենն սեան  
որք կարդան առ նա ճշմարտութեամբ:  
Զկամս երկիւղածաց իւրոց առնէ  
Տէր. աղօթից նոցա լսէ, եւ կեցու-  
ցանէ զնոսա. Աղաչանօր սրբոցն (այս  
անունն) զպաղասանս մեր մի անեսն.

#### ԱՌՎԲԵԼՈՅ ԵՒ ՄԱՐԳԱՐԷՒՅ ԱՅՍ Է

**Սուրբ Ոչ** են բանք եւ ոչ են խօսք. որոց  
ոչ լսին ծայր նոցա. Ընդ ամենայն  
երկիր ել բարբառ նոցա. եւ մինչեւ  
'ի ծագս աշխարհի են խօսք նոցա.  
աղաչանօր սրբոց Առաքելոցն (այս  
անունն) զպաղասանս մեր մի անեսն.  
**Փոքի** Նահատակք եւ վկայք Քրիստոսի  
Ասուածոյ. ընդհանուր ճիշդեաց բա-  
րոզք փրկութեան, որք զանձինս ձեր

մասուցիր պատարագ, եւ զենուժն  
Ասուածոյ Հօր ի հոս անուշից. ժողո-  
վելոցս' ի կատարել զյիշատակ անուան  
ձերոյ, բարեխօսեցէք առ Տէր վասն  
բաւութեան մեղաց մերոց:

**Դու.** Զերեքսեան Տէրութիւնդ քս  
միտքան աղաչեմք, լուր Տէր, աղաչա-  
նօր սրբոցն (այս անունն) լսնայեա' ի  
մեզ, եւ կեցն:

**Սուրբ Ուրախ** լիցին ամեներեան որք  
յուսացեալ են ի քեզ. յաւիտեան ցըն-  
ծացեն, եւ բնակեցցիս զու ի նոսա.  
Պարծեսցին ի քեզ սիրելիք անուան  
քոյ. զի օրհնեսցես զու զարդարն,  
Տէր. որպէս զինու հաճութեամբ քով  
պօսակեցիր ըզնոսա. Աղաչանօր:

**Փոքի.** Տօնէ այսօր եկեղեցի սուրբ զյի-  
շատակս ձեր սուրբ վկայք. որք զօրու-  
թեամբ Սուրբ Հոգւոյն վանեցիր ըզ-  
պատերազմ չարին. եւ ի կամօրս  
լուսեղէնս թագաւորեալք. օրհնել  
սուրբ զերրօրդութիւնն:

ՍՐԲՈՅՆ ԱՏԵՓԱՆՆՈՍԻ

(Ե- -Տ- Ա- -՝ Տօ-Եր-)

Թագաւոր յաւիտեան

Այսօր՝ դասք Հրեշտակաց  
ուրախանան ընդ ճգնութիւն սրբ-  
բոյն Ստեփաննոսի նախապկային:

Քանզի գոչէ Եկեղեցի քո  
Քրիստոս, զյաղթանակ մարտ  
հեղման արեան սորա՝ 'ի վե-  
րայ մեծի անուան քոյ Տէր:

Բազում համարձակութիւն է  
սորա առաջի Աստուծոյ 'ի ձեռն  
հեղման սուրբ արեան իւրոյ:

Քանզի յօժարութեամբ մատ-  
նեաց զանձն իւր՝ չարաչար եւ  
դասն սանջանաց. վասն մեծի  
անուանն Տեառն:

Քանզի արհամարհելով ան-  
արգեաց զանցաւոր զկեանս  
աշխարհիս, եւ փափաքեաց յա-  
ւիտեանական կենացն. եւ միշտ

եւ հանապաղ ուրախանայ ընդ  
Տեառն իւրոյ, յանուագո յու-  
րախութիւնան:

Քանզի գոչէ Եկեղեցի քո Քր-  
րիստոս զյաղթանակ մարտ հեղ-  
ման արեան սորա 'ի վերայ մեծի  
անուան քոյ Տէր:

Փառք Հօրն էականի, Որդ-  
ւոյն Միածնի, եւ ազատիչ Սուրբ  
Հոգւոյն վայելէ:

Փառք պատիւ եւ իշխանու-  
թիւն, այժմ եւ միշտ եւ յա-  
ւիտեանս յաւիտենից. Ամէն:

Եւ յորժամ շարժին երկինք  
եւ երկիր 'ի յանէ փառաց բա-  
նին Տեառն Աստուծոյ:

Յայնժամ նստուցանէ ընդ  
աջմէ իւրմէ զսիրելիս անուան  
իւրոյ, 'ի լուսեղէն խորանն  
զուգաւորելով:

(Խնկարչու Քահանայն շրջելով է  
Բե՛լ ժողովրդեան, ելան է Ս. Սե-  
ղանն և կրկնէ իրայն զարաւջին որանն  
Եւ. Սյաօր զասք հրեշտակաց եւն.

Եւ այսպէս կ'սկսէ

ԱՌՍԻՕՏԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

ԼՈՒՐ ԱՒՈՒՐՑ



ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՐԱԿԱՑ ԱՂՕՐԻՑ

ԱՌՍԻՕՏԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

ԼՈՒՐ ԱՒՈՒՐՑ ԵՒ ՍՐԻՈՑ ՏՕՆԻՑ

Օրհնեալ Տէր մեր Յիսուս  
Քրիստոս. Ամէն

Հայր մեր սր յերկինս.

ԼԵՍՔ առաւօտս ողորմու-  
թեամբ թալ. ցնձացաք և՛ ու-  
րախ հղաք զամենայն աւուրս  
կենաց մերոց եւն.

ՕՐՀՆԵԱՆ ԵՍ Տէր Ասուած հարցն  
մերոց, օրհնեալ փառաւորեալ անուն  
քո յուրիշխան:

(Տես Կրքս 266)

Ապա Հարցի ՇԱՐԱԿԱՆՆԵՆ Երգէն  
 ըստ պատշաճի առաւել, և յետոյ,  
 ՄԱՂԹԱՆՔ. Օրհնեցէք ամենայն ա.  
 ՔԱՐՈՋ. Եկեալքս ամենեքեան.  
 (Տե՛ս երես 273)

ՄԱՂԹԱՆՔ—ՄԱՐՏԻՐՈՍԱՅ

Յօղեա՛, Տէ՛ր, զցօղ բարերար  
 ողորմութեան քոյ՝ ՚ի մեղուցեալ  
 անձինս մեր. շիջ՛ո՛ զբոց հնոցի  
 յանցանաց մերոց. եւ փրկեա՛  
 զմեզ ՚ի յաւիտենական հրոյն :  
 Արա՛ արժանի ընդ երիս սուրբ  
 Մանկունան՝ եւ ընդ երանելի  
 սուրբ Վկայսն՝ օրհնել զքեզ եւ  
 զովել . եւ քեզ գոհութիւն եւ  
 փառս մատուցանել Հօր եւ Որդ-  
 ւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ  
 եւ միշտ եւ յաւիտեանս յաւի-  
 տենից. Ամէն :

ՄԱՂԹԱՆՔ—ՊԱՆՈՅ

Յօղեա՛, Տէ՛ր, զցօղ բարերար

ողորմութեան քոյ՝ ՚ի մեղուց-  
 եալ անձինս մեր. շիջ՛ո՛ զբոց  
 հնոցի յանցանաց մերոց, եւ  
 փրկեա՛ զմեզ ՚ի յաւիտենական  
 հրոյն : Արա՛ արժանի ընդ երիս  
 սուրբ Մանկունան եւ ընդ երա-  
 նելի սուրբ Վկայսն՝ օրհնել զքեզ՝  
 զովել եւ ասել . Աստուած,  
 քաւեա՛ զիս զմեղաւորս : Աս-  
 տուած, քաւեա՛ զիս զմեղաւորս :  
 Աստուած, քաւեա՛ զիս զմե-  
 ղաւորս ՚ի մեղաց, եւ կեցո՛ :

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Յօղէ, Տէ՛ր, բու բարերար ողորմու-  
 թեանդ ցօղը մեր մեղաւոր անձերուն վրայ,  
 մարէ մեր յանցանաց հնոցին (փռան) բոցը,  
 ու փրկէ զմեզ դժոխքի յաւիտենական  
 կրակէն : Արժանի ըրէ երեք սուրբ Մա-  
 նուկներուն և երանելի սուրբ Վկայներուն  
 հետ, զքեզ օրհնել ու զովել և ըսել . Աստ-  
 ուած, քաւեան զիս զմեղաւորս . Աստուած,  
 քաւեան զիս զմեղաւորս . Աստուած քաւեան  
 զիս զմեղաւորս ՚ի մեղաց և կեցո՛ :

ՓՈՒՆ. Մեծացուսցէ (Տէ՛ս երես  
275) Լ ՇԱՐԱԿԱՆ ըստ պատշաճի։)

ԲԱՐՈՁ ԶԿՆԻ ՄԵՐԱՅՈՒՍՅԷԻՆ

Սուրբ զԱստուածածինն՝ եւ  
զամենայն Սուրբս, բարեխօս  
արասցուք առ Հայր Ի յերկինս,  
զի կամեցեալ ողորմեսցի՝ եւ  
զթացեալ կեցուսցէ զարարածս  
իւր Ամենակալ Տէր Աստուած  
մեր. կեցցե եւ ողորմեա՛ :

ԱՂՕԹՔ ՄԱՐՏԻՐՈՍԱՅ ԵՒ ՊԱՀՈՑ

Ընկալ Տէր, զաղաչանս մեր  
բարեխօսութեամբ սուրբ Աստ-  
ուածածնին անարատ ծնողի  
Միածնի Որդւոյ քո. եւ աղաչա-  
նօք ամենայն սրբոց քոց. (եւ  
որոց այսօր է յիշատակ)

Ընկալ մեզ Տէր, եւ ողորմեա՛,  
ներեա՛, քաւեա՛ եւ թո՛ղ զմեզս  
մեր: Արժանաւորեա՛ գոհու-

թեամբ փառաւորել զքեզ ընդ  
Որդւոյ եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ.  
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս :

(Ապա ասէ ՓՈՒՆ Ողորմեա ինձ.  
ՇԱՐԱԿԱՆ. ըստ պատշաճի,  
ԲԱՐՈՁ. Երկրպագեմք քեզ.)

(Զորս տե՛ս եր. 312, 315.)

ՄԱՂԹԱՆՔ ՊԱՀՈՑ

Ողորմութեամբ եւ զթու-  
թեամբ քով, լուր մեզ Տէր,  
եւ ողորմեա՛. ներեա՛, քաւեա՛  
եւ թո՛ղ զմեզս մեր: Արժանա-  
ւորեա՛ գոհութեամբ փառաւո-  
րել զՀայր եւ զՈրդի եւ ըզ-  
Սուրբ Հոգիդ. այժմ եւ միշտ :

ՄԱՂԹԱՆՔ ՄԱՐՏԻՐՈՍԱՅ

Բարեխօսութեամբ եւ աղօթ-  
իւք սրբոց Մարտիրոսացն՝ որոց  
այսօր է յիշատակ, եւ ամենայն  
սրբոց քոց. լուր մեզ. Տէր,

եւ ողորմեա՛. ներեա՛, քաւեա՛  
եւ թո՛ղ զմեղս մեր: Արժանա-  
ւորեա՛ գոհութեամբ փառաւո-  
րեւ զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ  
Հոգիդ. Այժմ եւ միշտ եւ յաւ.

(Ապա աւելն փոռ Օրհնեցէք զՏէր-  
ՅՍՐԱԿԱՆ. ըստ պատշաճի .

եւ ապա. Փառք ի բարձունս.  
(Զորս տե՛ս եր. 318, 322. Լ յերոյ)

### Ս.Ս.Ս.ԻՕՏՈՒ ԵՐԳԻ

Աղուհացից եւ այլոց աւուրց  
պահոց:

**ԲԵ.** Լոյս սուր Տէր աջաց իմոց. զի  
մի երբէք ննջեցից ի մահ:

Մի ատասցէ թշնամին թէ յաղծեցի  
նմա. կամ նեղիչք իմ ցնծացեն թէ  
եւ սասանեցայց:

**ԳԵ.** Իրէն է Տէր ազբիւր կենաց. եւ  
յուսով երեսաց քոց տեսներ զլոյս.  
Ծագեա՛ գողորմուծիւնս քո որք  
ճանաչեն զքեզ. զարդարուծիւնս քո  
ոյք ուղիդ են սրհիւր:

**ԳԵ.** Եւ ասացի, Տէր, ողորմեա՛ ինձ.  
բժշկեա՛ զանձն իմ եւ մեղայ քեզ:

Երանի որ խորհի զաղբասն եւ ըզ-  
սնանկն. յաւուր չարի փրկէ զնա Տէր:

**ՅԵ.** Եւ առ քեզ Տէր աղաղակեցի.  
առաւօտու աղօթք իմ ժամանեցեն  
առ քեզ:

Ընդէ՛ր Տէր, մերժես զանձն իմ,  
կամ դարձուցանես զերեսս քո յինէն:

**ՈՒՐ.** Մտցեն աղօթք իմ առաջի քո  
Տէր. խոնարհեցի ունկն քո ի խընդ-  
րուածս իմ:

Տէր Աստուած փրկուծեան իմոյ՝ ի  
տուէ կարգացի եւ զիշերի առաջի քո:

### Ղազարու

Տէր, հաներ ՚ի դժոխոց զանձն  
իմ. փրկեցեր զիս յայնցանէ, որք  
իջանեն ի գուր:

Բարձր առնեմ զքեզ Տէր, զի ընկա-  
լար զիս. եւ ոչ ուրախ աւարեր  
զթշնամին իմ յիս:

**Հրեշտակապետաց**

Օրհնեցէք զՏէր յերկինս . օրհնեցէք զնա 'ի բարձունս :

Օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նորա . օրհնեցէք զնա ամենայն զօրուժիւնք նորա :

**Առաւօտեան**

Այ են բանք եւ ոչ են խօսք, որոց ոչ լսին ծայր նոցա :

Ընդ ամենայն երկիր եւ բարբառ նոցա . եւ մինչեւ 'ի ծագս աշխարհի են խօսք նոցա :

**Մարգարէից**

Այ են բանք եւ ոչ են խօսք, որոց ոչ լսին ծայր նոցա :

Յեկեղեցիս բարեբանեցէք զԱսուած, եւ զՏէր յաղբերացն իտայէլի :

**Հայրապետաց**

Քահանայք քո զգեցցին զարդարուծիւն, եւ սուրբք քո ցնծալով ցնծացցեն :

Յիշեա՛ Տէր զԴաւիթ, եւ զամենայն հեղուծիւն նորա :

**Մարտիրոսաց**

Պարձեացին սուր բքն փառօք, եւ ցնծացցեն ի հոնգիս խեանց :

Օրհնեցէք զՏէր յօրհնուծիւն նոր . օրհնուծիւն նմա յեկեղեցիս սրբոց :

**Մարտիրոսաց**

Ա. Առաքեա՛ Տէր զոյս քո եւ զգրչմարտուծիւնս քո . ցոյց մեզ Տէր զոգորմուծիւն, եւ քո ծառայիցս լէր օգնական, բարեխօսուծեամբ սրբոց Մարտիրոսացն, որոց այսօր է յիշատակ :

Զի սրբօք առաջնորդեալ ելցուք ի լեառն սուրբ . եւ 'ի յարկս քո . մեից առաջի սեղանոյ Ասուծոյ առ Ասուած, որ ուրախ առնէ զմանկուծիւն իմ . ցոյց մեզ Տէր զոգորմուծիւն . եւ քո ծառայիցս լէր օգնական եւն :



## ՔԱՐՈՉ

Վարդայն Գրիգորէ Լուսաւորչէն մերմէ ասացեալ վասն արքոց Հռիփսիմեանցն, այլ եւ վասն Առաքելոց եւ Մարգարէից

Աստուած մեծ հօգօր եւ փառաւորեալ լուսաւորիչ արքոց՝ եւ ՚ի սուրբս հանգուցեալ զճճնութիւն արքոց Առաքելոցն բարեխօս ունիմք առ քեզ աղաչեմք։ — ԼՈՒՐ ՏԷՐ եւ հոգորմեա՛:

Որ անդադար օրհնաբանիս ՚ի դասուց հոգեղինաց երկնաւոր զուարթնոցն. արժանաւորեա՛ զմեզ ուղիղ փառասրուծեամք ընդ սուրբս քո՝ երկրպագել մեծի եւ ահաւոր Տէրութեանդ քոյ. աղաչեմք։ — ԼՈՒՐ ՏԷՐ եւ.

Օրհնեմք զքեզ միաբան սիրով ՚ի յիշատակս վկայից քոց. որք հետեւողք եղեն լուսագորդ ճանապարհաց քոց Տէր, որ վասն մեր յանձն առեր զչարտաւանս Խաչի եւ մահու. աղաչեմք։ Լ.

Կասարիչք համոյից կամաց Աստուածութեանդ քո. զանձինս իւրեանց պատարագեցին ՚ի վկայութիւն ճշմարիտ սիրոյ քոյ. եւ բուրեցին զհոտ անուշից Տէրութեանդ քոյ. աղաչեմք Լ.

Սրբեցին զանձինս իւրեանց սաճար անուանդ քում արքոյ. մարբեալք ըզմիսս եւ զխորհուրդս իւրեանց՝ երկիւղիւղ քով արքով. եւ դասակիցք եղեն հոգեղինաց երկնաւոր զուարթնոցն. աղաչեմք։ — ԼՈՒՐ ՏԷՐ եւ.

Բարեխօսութեամբ արբուհոյ Աստուածածնին. եւ այլն ԳԻՆԻՐԿԻ:

## ՔԱՐՈՉ

Հայրապետաց որ եւ  
Վարդապետացն

Առաջնորդք եղեն մեզ ուղիղ գնացիւք ՚ի շաւիղս արքայութեան երկնից. մեծապայծառ ջահիլ. հաւասով եւ սիրովն իւրեանց, ծագեցին զլոյս աստուածգիտութեան ՚ի սիրեսս մեր, աղաչեմք։ — ԼՈՒՐ ՏԷՐ եւ ողորմեա՛:

Պահպանութեամբ խորհրդոց բանից  
 եւ զործոց մերոց. արբուժեամբ փա-  
 աւորել զաննաւորք զերրորդու-  
 թիւնն, զՀայր եւ զԲերի եւ զՍուրբ  
 Հոգին յաւիտեանս ամէն, աղաչեմք Լ.  
 Աղաչանօք արքոյ Մարտիրոսացն  
 եւ այլն. ԴԷ՛ Ե՛ ԶԷԴԿ՛:

Աղաչանօք արքոյ արեամբ նահա-  
 սակեալ վկայիցն. եւն. ԴԷ՛ Ե՛ ԶԷԴԿ՛:  
 Բարեխօսութեամբ արբուհւոյ Աս-  
 տուածածնին. եւն. ԴԷ՛ Ե՛ ԶԷԴԿ՛:

## Ք Ա Ր Ո Ձ

## Մարտիրոսաց եւ Հովնաւորաց

Զճգնութիւն արքոյ Մարտիրոսացն  
 բարեխօս ունիմք առ բարեւար Ռեզիդ  
 Աստուծոյ. զի շնորհեսցես աշխարհի  
 զանշարժ զխաղաղութիւն. եւ պա-  
 հեսցես հաստատուն սուրբ զեկեղեցի,  
 հաստատել ՚ի վերայ հիման Առաքե-  
 լոց եւ Մարգարէից. աղաչեմք  
 Դոյ. Է Ժող. — Լոր Տէր եւ ողորմեա՛:

Զճգնութիւն արքոյ Մարտիրոսացն  
 բարեխօս ունիմք առ բարեւար Ռեզիդ  
 Աստուծոյ. զի խաղաղացին խռովու-  
 թիւնք, զաղաղեցին յարձակմունք  
 թշնամեաց. սնկեցի սէր եւ աղա-  
 բութիւն ՚ի յերկրի. աղաչեմք. Լուր.

Աղաչանօք արքոյ Մարտիրոսացն  
 Տէր, որ ճգնեցան վասն անուանդ  
 բուժ արքոյ, նայեա՛ց յերկրագու-  
 թիւն ժողովելոցս եւ շնորհեա՛ մեղաց  
 զթողութիւն. եւ հա՛ն մասն եւ բաժին  
 ընդ սուրբս ամենայն. աղաչեմք. Լուր.

Աղաչանօք արքոյ արեամբ նահա-  
 սակեալ վկայիցն. Տէր, որ զանծինս  
 իւրեանց սաճար մարտեցին Հոգւոյդ  
 բուժ Սրբոյ. պարգեւեա՛ երկրի մե-  
 բուժ զբացրախառն օղ եւ զզուար-  
 ձալի զքոյս, առ ՚ի լցումն լինել ամե-  
 նայն հարկաւոր պիտոյից մերոց. աղ.

Բարեխօսութեամբ արբուհւոյ Աս-  
 տուածածնին, եւ Յովհաննու Կարա-  
 պետին, արքոյն Ստեփաննոսի նախա-

վկային. եւ սրբոց Առաքելոց, Մար-  
գարէից եւ Մարտիրոսաց. եւ սրբոյն  
Գրիգորի մեռոյ Լուսաւորչին. Բարե-  
խօսուածեամբ եւ աղօթիւք սրբոցն (այ-  
նպէս) որոց այսօր է յիշատակ. եւ  
ամենայն սրբոց քոց Տէր՝ որք միացան  
'ի սէր աստուածութեանդ քո՝ յիշեա՛  
զհոգիս ննջեցելոց մեռոց եւ ա՛յց արա՛  
ի բուժ գայտեսանդ. աղաչեմք:

Եւ եւս առաւել զյորդորումն սիրոյ  
եւ զգործս բարեաց պարգեւել մեզ  
խնդրեմք. — ԼՈՒՐ ՏէՐ եւ ողորմեա՛.  
Ձանձինս մեռ. Ողորմեաց մեզ:

ՔԱՐՈՁ — ՊԱՅՈՑ

(Ա. 24.) Փառաւորեսցուք զամե-  
նակալն Աստուած զՀայր Տեառն  
մերոյ Յիսուսի Բրիստոսի, գո-  
հանալով զնմանէ՛ որ պահեաց  
զմեզ խաղաղութեամբ 'ի գիշե-  
րիս յայսմիկ. եւ առաջնորդեաց

մեզ 'ի խառարէ՛ 'ի լոյս, 'ի մահ-  
ուանէ՛ 'ի կեանս, յապականու-  
թիւնէ՛ յանապականութիւն, յան-  
պիտութեանէ՛ 'ի գիտութիւն ճշ-  
մարտութեան իւրոյ: Աղաչեա-  
ցուք եւ խնդրեսցուք 'ի նմանէ՛,  
զի զերկարութիւն տուընջեանս  
խաղաղութեամբ եւ ամենայն  
մտաղիւր զուարթութեամբ ա-  
րասցէ անցուցանել 'ի մէնջ.  
Եւ պարսպեալ պահեսցէ զժողո-  
վուրդս իւր աստուածային զօ-  
րութեամբն, որ 'ի վերայ ամե-  
նայնի բարերարութեամբն իւրով  
իշխանութիւն ունի: Ամենակալ  
Տէր Աստուած մեր, Կեցո՛ եւ ող.

Ձառարօտս լուսոյ, եւ զա-  
ռաջիկայ օրս խաղաղութեամբ  
անցուցանել՝ հաւատով 'ի Տեառ-  
նէ՛ խնդրեսցուք:

ՁՀրեշտակ խաղաղութեան եւն.  
Ձքաւութիւն եւ զթողութիւն.

Չարբոյ խաչին մեծ եւ կարող.  
 Եւ եւս միաբան վասն ճշմար.  
 Չանձինս մեր եւ զմիմեանս.  
 Ողորմեաց մեզ, Տէր Աստուած.  
 Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ողոր.

ՅԱՐԳԱՆՈՒԹԻՒՆ ՔԱՐՈՁԻՆ

Ո՛վ Բրիտոնեայք, եկէք փառաւորեմք  
 զԱմենակայն Աստուած, Մեր Տէր Յիսուս  
 Բրիտոսի Հայրը, և շնորհակալ լինիմք  
 Անորմէ՝ որ խաղաղութիւնով պահեց զմեզ  
 այս զիշերիս մէջ: Եւ առաջնորդեց մեզ  
 խաւարէն դէպ ՚ի լոյս, և մահէն դէպ ի  
 կեանք, ապականուծենէ դէպ յանապա-  
 կանութիւն (մաքրութիւն,) և տգիտութենէ  
 դէպ ի գիտութիւն իւր ճշմարտութեանս:

Աղաչեմք և խնդրեմք Անորմէ, որ ցերե-  
 կիս երկայնութիւնը խաղաղութիւնով եւ  
 յօժարակամ զուարթութիւնով անցունէ  
 մեր վրայէ: Եւ իւր Աստուածային զօրու-  
 թիւնով պահէ պահպանէ իւր ժողովուրդն,  
 բանզի ամենուն վրայ իւր բարեբարու-  
 թիւնով իշխանութիւն ունի մեր Ամենա-  
 կալ Տէր Աստուածը: Կեցո՛ւ և ողորմեա՛ր

Ա Ղ Օ Յ Ք

(Ա.-Գ.) Գոհանամք զքէն Տէր Ած.  
 (Տե՛ս երես 342)

(Եւ ... է ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ ԸՄԿ  
 ՊԱՊՅԱՆՏԷ՛, Լ ՄԱՂԹԱՆԲ Լ ՔԱՐՈՁ  
 ՆՈՐԷ՛Ն (Տե՛ս երես 346 — 349 Եւ ... Պ  
 ՓՈՆ)

ՍԱՂՄՈՍ ՃԺԲ.

(Ա.-Գ.) Օրհնեցէք մանկունք զՏէր,  
 եւ օրհնեցէք զանուն Տեառն:

Եղիցի անուն Տեառն օրհնեալ,  
 յայսմ հետէ մինչեւ յաւիտեան:

Յարեւելից մինչեւ ՚ի մուսս արեւու  
 օրհնեալ է անուն Տեառն:

Բարձր է ՚ի վերայ ամենայն ազգաց  
 Տէր, եւ յերկինս են փառք նորա:

Ո՛վ է որպէս Տէր Աստուած մեր ՚ի  
 բարձունս բնակեալ, եւ զխոնարհս  
 տեսանէ յերկինս եւ յերկրի:

Յարուցանէ զաղբասս յերկրէ, եւ  
 բարձր առնէ զսառապեալս յաղբեւաց

Նստուցանէ զնոսա իշխանս՝ ընդ իշխանս ժողովրդեան իւրոյ:

Բնակեցո՞ցանէ՛ զամուսնի՛ ՚ի՛ տան ուրախամիտ, որպէս մայր որդւովք բերկրեայ:

Փայրք Հօր եւ Այժմ եւ միշտ.

(Ե- Մանկունքի ՇԱՐԱԿԱՆՆԷ՛Ն ՎԻ՛Է)

Ք Ա Ո Ո Ձ

(Ա.-Գ.) Վասն իսողաղութեան ամենայն աշխարհի, եւ հաստատութեան սրբոյ Եկեղեցւոյ ըզՏէր ազաչեացութեամբս Ասանցաւք ամենեքեան միաբանութեամբ.

Տէր ոգոր. Տէր ոգոր. Տէր ոգոր.

Ա Ղ Օ Թ Ք

(Ա.Դ.) Սուրբ եւ Տէր Աստուած մեր՝ հօր եւ փառաւորեալ, որ նստիս ՚ի կառս Քրովքէականս եւ լոյս ծագես յարարածս քո: Լուսաւորեա՛ զմեզ Տէր՝ ՚ի ժամ առաւօտուս, որպէս զի ՚ի ծա-

ղիլ լուսոյ տուրնջեանս՝ ծագեսցի՛ առ մեզ՝ դու՛ թ մարդասիրութեան քոյ: Հեռացո՛ ՚ի մէնջ, Տէր, զխաբէութիւնս սատանայի. եւ զքոնութիւնս նորա խորտակեա՛ աղօթիւք եւ բարեխօսութեամբս ամենայն սրբոց:

Արա՛ եւ զերկիրս պողպարես ՚ի սնունդս ծառայից քոց: Յորոց հանազաղ փառաւորեալ գոյի ամենասուրբ Երրորդութիւնն. Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Սուրբ եւ Տէր Աստուած մեր, հօր եւ փառաւորեալ եւ, որ Քերովքէներու կառքերս վրայ կը նստիս, եւ քո արարածներու վրայ լոյս կը ծագես: Լուսաւորէ զմեզ, Տէր, այս սառաւոտեան ժամուս, որպէսզի ցերեկուան լոյսը ծագած ատեն, քո մարդասիրութեանդ զուժք մեր վրայ ծագի:

Հեռացն յենէ ո՞վ Տէր, սատանային խարէութիւնը, և անոր բռնութիւնը խորտակէ ամեն սուրբերուն աղօթքովն ու բարեխօսութիւնովը:

Պտղաբեր ըրէ մեր երկիրը, բու ծառաներուդ սնունդ տալու համար. յորոց միշտ փառաւորութեով կը զովուի ամենասուրբ երրորդութիւնդ. այժմ և միշտ:

(Մեծ պահոց օրերը այս Աղբիւրէն յետոյ Տէր Ամենակալ կ'ըսուի, և յետոյ Բանից իմոց Փոխը՝ էնչէս ուրիշ պահոց օրեր. էնկ Սրբոց ուրիշ օրերուն Սիրեցի Փոխը կ'ըսուի, Արարչական Երգէն աւարտը.)

ՍԱՂԱՄՈՍ ԶԺԴ.

(Աւագ.) Սիրեցի զի լուիցէ Տէր զձայն աղօթից իմոց զի խոնարհեցոյց զունկն իւր առ իս, եւ ես յաւուրս իմ կարգացի առ նա:

Շրջեցան զինեւ երկունք մահու, եւ վիշտ զժոխոց զսին զիս:

Ձնեղութիւն եւ զանձկութիւն զսի, եւ զանուն Տեառն կարդացի:

Ո՛ Տէր, փրկեա՛ զանձն իմ. ողորմած Աստուած մեր ողորմի եւ պահէ զսղայս Տէր:

Ես խոնարհ եղէ՛ եւ Տէր կեցոյց զիս. դա՛րձ անձ իմ՝ ի հանգիսս քո, զի Տէր օգնեաց քեզ:

Փրկեաց զանձն իմ՝ ի մահուանէ, զայս իմ յարսատուաց, եւ զոսս իմ՝ ի գայթակղութենէ, հաճոյ եղէց առաջի Տեառն յիւրկին կենդանեաց:

(Սալ. ԶԺԵ.) Հաւատացի զոր եւ խօսեցայ. եւ ես խոնարհ եղէ յոյժ:

Ես ասացի ի զարմանալ իմում, թէ ամենայն մարդ սուտ է:

Ձինչ ցաց տրիտուր Տեառն ընդ ամենայնի՛ զոր եւ ես ինձ:

Ջրածակ փրկութեան ընկալայց, եւ զանուն Տեառն կարդացին:

Ջաղօթս իմ Տեառն ցաց՝ առաջի ամենայն ժողովրդեան նորա:

Պատուական է առաջի Տեառն մասի  
արքայ իւրոց. ո՛հ Տէր, եւ ծառայ քո  
եմ, ծառայ եւ որդի աղախնոյ քոյ:

Հասեր զկապանս իմ, քեզ մասու-  
ցից պատարագ օրհնութեան, իւր գա-  
նուն Տեառն կարգացից:

Զաղօթս իմ Տեառն ասց առաջի ա-  
մենայն ժողովրդեան նորա, ՚ի գա-  
ւիթս ասն Տեառն, եւ ՚ի մէջ քո Ե-  
րուսաղէմ:

(ՍԷ. ձԺԶ.) Օրհնեցէք զՏէր ամենայն  
ազիւնք, զովեցէք զնա՛ ամենայն ժո-  
ղովուրդք:

Զօրացի ողորմութիւն նորա ՚ի վե-  
րայ մեր, եւ ճշմարտութիւն Տեառն  
մասացէ յաւիտեան:

(ՍԷ. ԾԳ.) Ասուած, յանուան քու՛մ  
կեցն՝ զիս, եւ ՚ի զօրութեան քու՛մ  
ի՛րաւ արա՛ ինձ:

Ասուած, շնոր աղօթից իմոց, ուն-  
կին զիր բանից բերանոյ իմոյ:

Օտար յարեան ՚ի վերայ իմ, եւ

նօրք խնդրեցին զանձն իմ, եւ ո՛չ հա-  
մարեցան զրեզ Ասուած առաջի  
իւրեանց:

Ահա՛ Ասուած օգնական իմ, եւ  
Տէր ընդունող հոգւոյ իմոյ:

Ի դարձուցանել զչարն ՚ի թշնամիս  
իմ, ճշմարտութեամբ քով սասակեա՛  
զնոսա՛:

Ես կամովք իմովք պատարագս մա-  
սուցից քեզ, եւ խոստովան եղէց ան-  
ուան քու՛մ, Տէր, զի բարի է:

Յամենայն նեղութենէ իմէ՛ կրկե-  
ցեր զիս. եւ ՚ի թշնամիս իմ՝ ետես  
աին իմ:

(ՍԷ. ԶԵ. 15, 16.) ՏՆՐ զօրութիւն  
ծառայի քո. կեցն՝ զորդի աղախնոյ  
քո. եւ արա՛ առ իս նշան բարութեան:

Տեսցին ասեկիր իմ եւ ամաչեսցեն,  
զի դու, Տէր, օգնեցեր ինձ. եւ մխի-  
թարեցեր զիս:

Փառք Հօր եւ Այժմ եւ միշտ եւ:

ՓՈՒՆ Պահոց օրերու  
ՍԱՂՄՈՍ Ե.

(Ա.-Է.) Բանից իմոց ունկն դիր, Տէր,  
եւ 'ի միտ առ զազադակ իմ:

Նայեա՛ 'ի ծայն ազօթից իմոց, Թա-  
գաւոր իմ եւ Աստուած իմ:

Ես գրեզ աղաչեմ, Տէր, ընդ առա-  
ւօսս լուիցես ծայնի իմում, ընդ ա-  
օաւօսս պատրաստ եղէց. յանդիման  
լինել առ քեզ:

Ոչ թէ դու Աստուած կամիս զանօ-  
րէնութիւն, եւ ոչ բնակին առ քեզ  
չարք. եւ անօրէնք մի բնակեացին  
առաջի աչաց քոց:

Ասեցեր զայնոսիկ՝ ոյր գործեն գա-  
նօրէնութիւն. կորուսանես զամենե-  
սեան ոյր խօսին զուս:

Չայր արիւնատեղ եւ զնենգաւոր  
պիղծ առնես դու, Տէր, այլ ես ըստ  
բազում ողորմութեան քում մտից 'ի  
տուն քո, եւ երկիրպագից 'ի սամար-  
տուրք քո երկիրդիւ քո:

Տէր առաջնորդեա՛ ինձ յարդարու-  
թեան քում, վասն թշնամեաց իմոց  
ուղիղ արա՛ առաջի իմ զճանապար-  
հքս քո:

Զի ոչ գոյ ի բերանս նոցա նշմար-  
տութիւն, եւ սիրտքնոցա նանրեալքեն:

Որպէս գերեզմանք բաց են կոկորդ  
նոցա, եւ լեզուօր իւրեանց նենգա-  
ւորք եղեն:

Դասեա՛ զնոսա, Աստուած, զի անկ-  
ցեն 'ի խորհրդոց արտից իւրեանց-ըստ  
բազում ամբարշտութեան նոցա մեր-  
ժեա՛ զնոսա զի դառնացուցին զքեզ:

Ուրախ լիցին ամենեքեան՝ ոյր յու-  
սացեալ են 'ի քեզ. յաւիտեան ցնձա-  
ցեն, եւ բնակեացիս դու 'ի նոսա:

Պարծեսցին 'ի քեզ սիրելիք ան-  
ուան քո, զի օրհնեսցես դու՞ զարդարն.  
Տէր, որպէս զինու հասնութեամբ քո  
պսակեցեր զնոսա:

(Ս.-Ը. 2Թ. 13) Լցար առաւօտու ողոր-  
մութեամբ քով. ցնձացար եւ ուրախ  
եղար զամենայն աւուրս կենացմերոց:



Պարտաւորեալս քան ի զորոցն՝  
յորս խոնարհ առաւել զմեզ. եւ ամա-  
ցըն՝ յորս տեսար զչարսարանս :

Հայեա՛, Տէր, ՚ի ծառայս քո եւ ՚ի  
գործս՝ ձեռաց քոց եւ անպշտորհեա՛  
որդոց նոցա, եղիցի լոյս Տեառն Աս-  
տուծոյ ՚ի վերայ մեր :

Զգործս ձեռաց մերոց ուղիղ առա  
՚ի մեզ Տէր, եւ զգործս ձեռաց մե-  
րոց յաջողեա՛ մեզ :

(Ս. Է. ձեռ. 8.) Ի խորոց կարգացի առ  
քեզ Տէր, Տէր, լուր ձայնի իմոց :

Եղիցին ականջք քո ՚ի լսել զձայն  
աղօթից իմոց :

Թէ՛ զանօրէնութիւնս իմ՝ քննես  
Տէր, Տէր, իսկ ո՛ր կողէ կող առաջի քո  
զի՛ ՚ի քէն է քառութիւն :

Վասն անտան քո համբերի Տէր.  
համբեր անձն իմ բանի քոմ. յառաջ  
ցաւ անձն իմ ՚ի Տէր :

Ի գահէ առաւօտս մինչեւ յերեկոյ.  
՚ի սրահէ առաւօտս յառաջացաւ իմ  
յէլ ՚ի Տէր :

Ի Տեառնէ է որորմութիւն բազում.  
եւ ՚ի նմանէ է փրկութիւն. եւ նա  
փրկեաց զխրայէլ յամենայն նեղու-  
թեանց նորա :

(Ս. Է. ձեռ. 8) Լսելիարա՛ ինձ առաւօ-  
տս զորմութիւնս քո, զի ես ՚ի քեզ  
Տէր յառաջացա՛ :

Յոյց ինձ նանայարհ՝ յոր ու զնա-  
ցից, զի առ քեզ Տէր, համբարձի զան-  
ձըն իմ :

Փրկեա՛ զիս ՚ի թշնամեաց իմոց,  
Տէր, զի զքեզ ապաւէն ինձ առաւի-  
ր :

Ոսն ինձ առնել զկամս քո, զի դու  
ես Աստուած իմ :

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ  
՚ի յերկիր ուղիղ :

Վասն անտան քո Տէր, կեցուցես  
զիս. արդարութեամբ քով հանցես ՚ի  
նեղութենէ զանձն իմ :

Որորմութեամբ քով սասակեա՛ Աս-  
տուած, զթշնամիս իմ. եւ կորն զա-  
մենայն նեղիցս անձն իմոյ. զի ես  
ծառայ քո եմ :

(Ս.Ը. ԾԳ.) Աստուած, յանուան քուժ  
կեցո՞ զիս, եւ 'ի զօրութեան քուժ ի-  
րա՛ւ արա ինձ:

Աստուած, լուր աղօթից իմոց, ունկն  
զիր բանից բերանոյ իմոյ:

Օտար յարեան 'ի վերայ իմ, եւ  
հօրք խնդրեցին զանն իմ, եւ ոչ հա-  
մարեցան զրեզ, Աստուած առաջի  
իւրեանց:

Ահա՛ Աստուած օգնական իմ, եւ  
Տէր ընդունող հոգւոյ իմոյ:

Ի դարձուցանել զչարն 'ի թշնամիս  
իմ, ճշմարտութեամբ քով սասակեա՛  
զնոսա:

Ես կամօք իմովք պատարագս մա-  
տուցից քեզ, եւ խոստովան եղէց ան-  
ուան քուժ, Տէր, զի բարի է:

Յամենայն նեղութենէ իմմէ փրկե-  
ցեր զիս, եւ 'ի թշնամիս իմ ետես  
ակն իմ:

Փառք շօր եւ, Այժմ եւ միշտ եւ.

(Թէ Սբէոյ Դձէ Լ Բէ Պահոյ  
օրերուն Փոռէն Վերջէ Կըստէ.)

## ԵՐԳ

Տեառն ՆԵՐՍԻՍԻ վասն երկրորդ  
աւուր Արարչութեան, եւ վասն  
երկնայնոց զօրացն

(Չոր Ս.Ն. Ծնորհալէ Հայրապետն  
Ջեր' Ենդէս Առաջին (Կերակէ) առաք  
համար Նորաստեղծեալ Երբջ,  
նոյնպէս և յերազայ առաքոյ համար  
շէնտե-եալն յօրէն՝ է է-ք յոյժ  
Քեղեցիկ և Իմաստալէն ոճով.)

## ԵՐԼՈՒՇԱԲՈՒ

(Ս. Գ.) Արարչական բանին հրաման  
ի յերկրորդումն աւուր ըսկզբան  
Ըզշուրսն 'ի ջուրքն բաժանեաց,  
Հանտատութեամբ պարունակեաց.  
Որով զաշխարհս հողեղինաց  
Անշրպեանաց ի հրեղինաց.  
Ընդ նոսին որդիք լուսոյ՝  
Տճը օրհնութիւն Երբեակ Լուսոյն:

Բազմաչեայ հոյլք քրովբէից՝  
 երեքսրբեանը՛ Սրովբէից,  
 ԱՅոռք անեղ Աստուածութեանը՛ն  
 Համագոյ՛ երրորդութեան,  
 Բարեխօս լերուք առ Տէր  
 Վասն մանկանց եկեղեցւոյ. Ընդ.  
 Գերագոյն՛ Իշխանութիւնք  
 Եւ անսփոփոխ միշտ Տէրութիւնք,  
 Անյաղթելի սուրբ Զօրութիւնք՝  
 Ի յԱրարչին փառատրութիւն,  
 Աղաչեցէք զՏէրն ողորմած  
 Անտես չառնել զգործս ձեռաց. Ընդ.  
 Գասք անմարմնացն պետութեանց  
 Հրեշտակապետք բարձրութեանց,  
 Հոգիք հրեղէնք և սպասաւորք  
 Հրեշտակաց զինուորութիւնք,  
 Մաղթեցէք զՏէրըն տերանց  
 Վասըն մարդկան երկրաւորաց. Ընդ.  
 Երկնաւորաց դասուց վերնոց՝  
 Օրհնաբանից բոց զըւարթնոց  
 Քաղցրացի՛ն առ բեզ զըթած  
 Որ վանն մեր ձայն մաղթանաց,

Զորս և տացես մեզ պահապան  
 Յայսըմ հետէ մինչ՝ ի վախճան. Ընդ.  
 Զօրութեանց և Տէրութեանց՝  
 Իշխանութեանց և Պետութեանց,  
 Եւ ամենայն Անուանելոց  
 Որք ի յերկինս պաղատանօր,  
 Ընկալ Քրիստոս ուրախութեամբ  
 Զմեզ յօր մահու և յարութեան.  
 Ընդ նոսին օրհնել հոգւով  
 Ըզբեզ ընդ Զօր փառատրելով:

### ՆՐԵՅՏԱՐԹԻ

Վասն երրորդ աւուր Արարչութեան,  
 եւ վասն երրորդի դարուն. եւ ՚ի  
 Յովհաննէս Մկրտիչն:

Էական Բանն որ ընդ Զօր  
 Արարչակից և համագօր,  
 Յերրորդ աւուր զչուրան զատոց՝  
 Ըգրոյս և զտունկըս բըղխեցոյց,  
 Իսկ ՚ի յերրորդ դարուն դարձեալ  
 Զչուրըն հեղեղ ցամաքեցոյց.  
 Զնոյ տապանաւն իւր տպրեցոյց,

Ձկենդանեաց սեռս անեցոց .  
Տուր օրհնութիւն անճառ լուսոյն  
Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն ,

Ընդ ծառոց երկրի զգալեաց  
Տընկեաց և զառնկս իմանալեաց .  
Ձհեղեղ մեղացն ցածուցեալ ,  
Ձդասս արդարոց բազմացուցեալ .  
Յորոց և մեծն 'ի ծնունդս կանանց  
Միջնորդ շնորհաց և օրինաց . Տուր .

Թագաւորին երկնից զինուոր '  
Արքայութեանն աւետարտր ,  
Ի ընդրեան դընել էլս 'ի սրտի  
Առ 'ի հովտէս տրտմականէ ,  
Յուխտեալ տեղին Տէրունական ,  
Ի խոստացեալն որդւոց մարդկան . Տուր .

Ժառանգին Հօր սպասաւոր ,  
Եւ յարգանդէ երկըրպագող ,  
Կարապետ և Մըկրտիչ  
Այնմ որ մեղաց մերոց բաւիչ .  
Լեր բարեխօս առ նոյն զըմած '  
Ձնչել ըզգիր մեր յանցանաց . Տուր .

Ի Հօրէ լոյս ծագեցար  
Մեռեալ բնութեանս կենդանարար ,  
Առաքեցեր յառաջընձաց ,  
Սուրբ զՅովհաննէս բարոզ կենաց .  
Սորին հայցմամբն Ամենակալ ,  
Ըզպաղատանս մեր ընկալ . Տուր .

Լուսաշաւիղ յերկինս ելին  
Հողանիւթեայ սուրբ Հրեշտակին .  
Արժանացո՞ ըզմեզ նորին  
Նեղ և անձուկ ճանապարհին .  
Ձի հետեւող զտղով նորին  
Հօր քո վերին օժեւանին ,  
Եւ երգեսցուք ընդ երջանկացն  
Որդւոց լուսոյ քեզ երգ փառաց .

### ՉՈՐԵՔՆԱԲՈՒԻ

Վասն Չորրորդի աւուր Արարչու-  
թեանն , եւ վասն Չորրորդի դարուն ,  
եւ վասն Աւետեաց Աստուածածնին :

Խաւարն անգոյ և սկըզբնածին  
Հալածեցաւ յօրն առաջին ,  
Լոյսն այն պայծառ յօր չորրորդին

Յարեգականն նիւթ հաւաքեալ .  
 Լուսինն ՚ի տիպ լուսոյ ստեղծեալ՝  
 Եւ աստեղաց պարբ յօրինեալ,  
 Որով օրհնի Ստեղծողն էից  
 Ի բանաւոր պաշտօնէից :

Ծածկեալ խորհուրդըն ծանուցաւ  
 Չորրորդ դարուն Իսահակաւ .  
 Ի չորրորդ օր դարձեալ Հրեշտակն  
 Ետ գաւետիսըն Կուսական .  
 Թէ Լոյսն որ ոչ բովանդակի՝  
 Ի բէն մարմնով պարունակի .  
 Յոր օրհնեցայք ազգ երկրածինք  
 Տուք օրհնութիւն Պշտողոյ Կուսին :

Կուսին նախնուոյ մօրն Եւայի  
 Յորմէ Ադամըն հին պարտի .  
 Բարձան անէ՛ծքն տրտմական  
 Քո սուրբ ծնընդեամբ կոյս Մարիամ .  
 Աղաչեան զբո Միածինն՝  
 Թողուլ զմեզս որդուց նոցին . Յոր .

Հարսն ընծայեալ յերկրէ յերկինս  
 Յոր համբառնամք առ բեզ զհոգիս ,  
 Յօր լըսելոյ բոյ գաւետիս՝

Ինդրեան լինել մեզ լսելիս .  
 Չձայն աւետեաց բո Միածինն՝  
 Եթէ՛ Եկայք օրհնեալք Հօր իմ . Յոր .  
 Չայնիւ առ բեզ Տէր պաղատիսք  
 Եւ առաջի բո անկանիմք .  
 Աղաչանօք Աստուածածնին  
 Շիջն ՚ի մէնչ զբոց հնոցին .  
 Տուր արտասուօք զմեզս ջնջել  
 Եւ վերստին զմեզ նորոգել . Յոր .  
 Ղեկավար հարտարապետ ,  
 Անցեր ընդ ծով կենցաղս անհետ ,  
 Վերաբերեան ընդ Պետրոսի  
 Չմեզ ՚ի յալեաց մեղաց ծովէս .  
 Պաղատանօք գերագունին  
 Անապական բում Մնողին . Յոր .

### ՀԻՆԳԵՍԵՐՈՒ

Վասն Հինգերորդի աւուր Աւարչու-  
 Թեանն, եւ վասն Հինգերորդի դա-  
 բունն, եւ ՚ի սուրբ Առաքեալսն  
 Քրիստոսի :

Ճառագայթեալ Բանն ՚ի Հօրէ՛  
 Յօր հինգերորդըն հրամայէ,

Բըղխել 'ի ջրոց սեռս կայտառաց  
 Եւ Սեւաւորս, օղականաց .  
 Իսկ 'ի դարուն հինգ մլըրտին  
 Յամպն և 'ի ծովն Իսրայէլ հին .  
 Տացուք հրաշից ներգործողին  
 Պատիւ և փառս անեղ Բանին :

**Մ**աքրապէս օրինակի  
 Առաքելոցըն Քրիստոսի,  
 Որք 'ի ծովէն Տիբերական  
 Ի յերկնայինսըն կոչեցան .  
 Անցին ընդ ծով աշխարհական,  
 Եւ 'ի Հոգին մըկըրտեցան . Տաց .

**Յ**ուրախուժիւնսն անզրաւական  
 Ի հարսանիսն անապական .  
 Ձձեզ առաքեաց Հայրն փառաց  
 Հրաւիրատուք տըրտմականաց .  
 Սուրբ Հարսանեացն այն հայցեցէք  
 Ընդ ձեզ լինել մեզ պարակից . Տաց .

**Ն**որոգողք տիեզերաց  
 Ի նախահորըն յանցանաց,  
 Նորափետուք զարդարեցիք  
 Ձեկեղեցիս հեժանոսաց .

Պաղատեցէք առ 'նոյն զըմած  
 Ձմեզ նորոգել 'ի հնոյ մեղաց . Տաց .  
**Շ**ինող էիջըս համայնից  
 Արարածոց 'ի յանգոյից .  
 'նոյն շինեցեր զեկեղեցի .  
 Վէճո՛ք 'ի վերայ վիմին բամի .  
 Ընդ եղեալ հիմունսն ի նոր Սիովն  
 Ըզմեզ յօդեան շինմամբ ի նոյն . Տաց .  
**Ո**ւրախացու գնացիւք գետոց  
 Քաղաք 'ի քէն շինեալ Յիսուս,  
 Յորմէ վըտակք շնորհաց հոսեն,  
 Ձոգիս մարդկան առողանեն .  
 Արբո՛ւ և մեզ 'ի ջրոյն կենաց  
 Հայցմամբ Հոգւոյն մատըռուակաց .  
 Ձի բանաւոր երկիրըս քո  
 Պողտերի 'ի փառքս քո :

### ՈՒՐԲԱԾ

Վասն վեցերորդի անուր Արարչու-  
 թեան, եւ վասն վեցերորդի դարուն,  
 եւ 'ի Խաչելուժիւնն Քրիստոսի :

Չըհանդուրծեալ բնութեամբ Բարւոյն,  
 Ունիլ միայն զանճառ բարին,

Այլ ստեղծեալ մարդ յիւր պատկերին  
 Ի վեցերորդն առաւօտին,  
 Եւ ՚ի յերրորդ ժամ զվողածինն <sup>(1)</sup>  
 Ի յօգնութիւն ետ Հողածինն, <sup>(2)</sup>  
 Զորս ՚ի Դրախտին եղ վայելել,  
 Բայց ՚ի պտղոյն մահու արգել:

Պապանձեալ առ դատողին՝  
 Յետ յանցանաց Ադամըն հին,  
 Զկինըն պատճառ եղեալ խարման,  
 Եւ կինըն զօձըն դաւաճան.  
 Որով երկիրս այս անիծաւ,  
 Փռշ և տատասկ ՚ի սմա բուսաւ,  
 Վըճիւ մահու մարդոյն տըւաւ  
 Դառնալ ՚ի հող՝ ուստի ստեղծաւ:

Զընչել փութայր Հայրըն փառաց  
 Ըզգիր պարտեաց մեր յանցանաց.  
 Որով զզեցաւ Որդին զըթած  
 Ի վեց դարուն զմարմին մեղաց.  
 Հօր հանութեամբ ՚ի մահ թաշին  
 Եկըն կամաւ ՚ի յմեռբանին.

1 Եւս. — 2 Ադամս.

Քառըն զենաւ ՚ի հին զատկին  
 Փոխան զառանցն օրինակին:

Ռահիւ լուսոյ պատուիրանին  
 Արդարութեան ճանապարհին,  
 Բարձրանալով քո ՚ի թաշին  
 Բարձրացուցեր զմեզ ՚ի յերկինս.  
 Քո անպատում խոնարհութեամբդ.  
 Եւ կամաւոր թաշելութեամբդ  
 Հաշտեանց ընդ մեզ, Տէր, զթութեամբ,  
 Եւ թող զմեզս ողորմութեամբ:

Սոսկալիդ Սերովբէից  
 Եւ ահաւորդ Քրովբէից.  
 Խոնարհեցար ՚ի չարչարանս  
 Զարչարելի բնութեամբ մարդկան.  
 Ի թաշին զմեզս ըսպաներ  
 Եւ զդատակնիք մահու լուծեր.  
 Հաշտեանց ընդ մեզ, Տէր զթութեամբ  
 Եւ թող զմեզս ողորմութեամբ:

Վեհագոյն բնութեանց էից  
 Եւ Արարիչըդ բոլորից.  
 Յորժամ ծագես զՍաչիդ նըշան  
 Ի զալստեան քո միւսանգամ.

Զերկրպագուս այժմ հաւատով  
 Լուսաւորեան նորին լուսով.  
 Զի համաձայն խաչազգեցիցն  
 Ըզբեզ օրհնեմք յաւիտենից:

**ՇԱՐԱԹ**

Վասն Եօթներորդի առւեր Արարչու-  
 Թեան, եւ վասն Եօթներորդի դա-  
 րուն, եւ 'ի խորհուրդ հանգստեանն  
 Աստուծոյ:

Տէրն յետ ստեղծման արարածոց  
 Հանգեաւ յեօն օրն 'ի գործոց.  
 Այն օր հանգիստ աշխատելոց  
 Եւ կամբքն գործ է եղելոց.  
 Ուստի և մեզ յոյս հաստատուն  
 Ետ հանգըստեամբքն շարաժուն.  
 Թէ աստ գործել զգործս Աստուծոյ  
 Անդ է հանգչել ընդ Աստուծոյ:

Բարունաբար վարդապետիմք  
 Յօրինակէ Տեառն խրատիմք,  
 Որ 'ի յերկրորդ արարչութեան

Յետ կատարման Տնօրէնութեան՝  
 Յեօթներորդ օր հանգըստեան  
 Իչեալ մարմնովն 'ի գերեզման՝  
 Զկապեալ հոգիսըն վերածեաց՝  
 Զանանց հանգիստըն պատրաստեաց:

Յօղոյ օր 'ի բոյդ կողէ ցօղեալ  
 Բըժըշկեսցէ ըզհանգուցեալսն,  
 Իջցէ 'ի հող մահու նոցին  
 Եւ բուսուցէ յօրըն վերջին.  
 Կենդանարար ձայնիւրդ բո  
 Կոչեան գնոսս 'ի կեանքս բո,  
 Եւ դասեցո՞ ընդ արդարոցն  
 Երգել քեզ փառս ընդ զըւարձնոցն:

Ի իւծեալ զընտժիւնս կենաց ունող  
 Դարձոյց յանցանքն 'ի մահու հող,  
 Իսկ Անմահիդ մեռելութիւն  
 Շնորհեաց դարձեալ զանմահութիւն  
 Զորս են ընդ քեզ թաղեալ մահուամբ  
 Աւագանին մըկըրտութեամբ,  
 Յարո՞ ընդ քեզ քոյին փառօր  
 Արեգական նրման լուսով:



Փայլին Արդարն յարքայութեան  
 եւ ձրգնաւորքն 'ի հանգրատեան.  
 Մարտիրոսքն պըսակին  
 եւ Կուսանաց լապտերք վառին.  
 Դասեցո, Տէր, ընդ 'նոսին  
 Որ զբեզ Աստուած խոստովանին.  
 Արդարութեամբ մի դատեսցին,  
 Այլ զճուծեամբ քո բաւեսցին:

Քոյ անպատու խոնարհութեամբդ  
 Որ Թաղեցար մեռելութեամբ.  
 եւ յարուցեր յորդոց մարդկան՝  
 Որք հաւատով 'ի բեզ անկան.  
 Յարո՛ւ եւ զմեզ արդարութեամբ,  
 եւ զնընչեցեալն ողորմութեամբ.  
 Զի կենդանեսցըս բերանով  
 Տացին բեզ փառս ընդ Հօր Հոգւով:



ՄԱՂԹԱՆԲ Ի ՏՕՆԻ ԱՍԵՆԱՅՆ ՍՐԲՈՑ

Քրիստոս Աստուած մեր, վասն  
 Խաչի քոյ զատուականի՛ զխա-  
 զաղութիւն քո տո՛ւր մեզ Տէր:  
 Դու. և Ժող. Տո՛ւր մեզ Տէր:  
 Վասն սրբուհոյ Աստուածած-  
 նին, եւ Յովնանու Կարապե-  
 տին, եւ սրբոյն Ստեփաննոսի  
 նախավկային, զխաղաղութիւն  
 քո տո՛ւր մեզ Տէր:

Վասն սրբոց քոյ Առաքելոց,  
 Մարդարէից, Վարդապետաց,  
 Մարտիրոսաց, Հայրապետաց,  
 Ճգնաւորաց, Կուսանաց, Միան-  
 ձանց, եւ Երկնային Զօրացն  
 զխաղաղութիւն քո Տո՛ւր:

եւ վասն նախկին Լուսաւոր-  
 չացն մերոց Թագէտսի եւ Բար-  
 զուղիմէտսի, եւ սրբոյն Գրիգորի  
 մերոյ Լուսաւորչին, եւ սրբոց  
 Յակոբեանց երջանիկ Առաքե-  
 լոցն, եւ սրբոցն՝ Յակովբայ

Մծբնայ Հայրապետին, Մարու-  
գէի Ճգնաւորին, Մելիտոսի ե-  
պիսկոպոսին եւ Գէորգայ զո-  
րավարին:

Բարեխօսութեամբ յիշատա-  
կաւ եւ ազօթիւք Սրբոցն (այս  
անուն) որոց այսօր է յիշատակ.  
զխաղաղութիւն եւ զմեծ զո-  
ղորմութիւն քո պարգեւեա՛ մեզ  
մարդասէր Տէր: — Ամէն:

ՔԱՐՈՁ ՍՈՒՔԵԼՈՅ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՅ

(Ա.Ք.) Սուրբ ճգնաւորօքն ա-  
ղաչեսցուք զՏէր, որք զչարսն  
պարտեցին, նեղութեանցն համ-  
բերեցին: Լուսեղէն եւ երկնա-  
յին անթառամ պսակացն ար-  
ժանի եղեն: Ազօթիւք նոցա  
եւ բարեխօսութեամբ մեզ ո-  
ղորմեսցի: Ամենակալ Տէր Աս-  
տուած մեր, Կեցո՛ եւ ողորմեա՛:

## Ա Ղ Օ Յ Ք

Ի թօնի Առաքելոց, եւ Մարգա-  
րէից, եւ Հայրապետաց, եւ Վար-  
դապետաց

(Ա.Ք.) Որ ընտրեցեր եւ ընկա-  
լար զերանելի զվկայան քօ (այս  
անուն) Գրիտոսն Աստուած մեր,  
եւ հաղորդս արարեր զնոսա կա-  
մաւոր շարչարանաց քոց:

Սրդ՛ բարեխօս առ քեզ ու-  
նիմք՝ որք աստ եւ ընդ ամե-  
նայն արեգերս սուրբք իցեն:  
Որպէս զի ազօթիւք նոցա եւ  
բարեխօսութեամբ՝ խաղաղա-  
ցուցես զկենցաղալարութիւնս  
մեր, փրկելով զմեզ յերեւելի եւ  
յաներեւոյթ թշնամոյն: Շնորհ-  
եա՛ մեզ Տէր, ըստ օրինակի  
նոցա կեալ, եւ զվախճանն մեր  
կնքեա՛ ուղղափառ խոստովա-  
նութեամբ ի յոյս կենացն յա-

ւ խտենից: Չի եւ մեք արժանի  
 եղիցուք մտանել յերկնային  
 խորանան լուսոյ, եւ ժառան-  
 գել զպատրաստեալն 'ի սկզբանէ  
 աշխարհի սրբոց քոց զարքայու-  
 թիւնդ: Եւ ընդ նոսին գոհա-  
 նայով փառաւորեսցուք զքեզ  
 ընդ Հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ.  
 Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս.

Ի Սարկաւազ Վարդապետէն  
 ասացեալ

Յիշեա՛ Տէր զպաշտօնեայս  
 քո. զԾնողան մեր. զՎարդա-  
 պետս. զԵղբարս. զԸնկերս.  
 զԿերակրիչս. զՈւխտաւորս. ըզ-  
 ծանապարհորդս. զՀանգուցիչս.  
 զՎաստակաւորս. զՍոստօփա-  
 նոցս. զԱպաշխարողս. զԳերիս.  
 զՀիւանդս. զՆեղեալս. զԻշխանս.  
 զՉարարարս. զԲարերարս. զԹշ-

նամիս. զՍտելիս. եւ որք պա-  
 տուիրեցին մեզ հաւատով:  
 Յիշեա՛ Տէր եւ ողորմեա՛:

Բարերար եւ բազումողորմ  
 Աստուած՝ քո անմոռաց դի-  
 տութեամբդ եւ անբաւ մար-  
 դասիրութեամբ՝ յիշեա՛ զամե-  
 նայն հաւատացեալս 'ի քեզ,  
 եւ ողորմեա՛ ամենեցուն: Օգ-  
 նեա՛ եւ փրկեա՛ յերաքանչիւր  
 փոանգից եւ 'ի փորձութեանց:  
 Արժանաւորեա՛ գոհութեամբ  
 փառաւորել զՀայր եւ զՍրբի  
 եւ զՍուրբ Հոգիդ. Այժմ եւ  
 միշտ եւ յաւիտեանս յաւիտե.

Ա Ղ Օ Թ Բ

Մարտիրոսաց, Ճգնաւորաց  
 եւ Կուսանաց

(Ա.գ.) Պատկիչդ Սրբոց Քրիս-  
 տոս, որ պտակես զսուրբս քո,

եւ աննես զկամս երկիւղածաց  
քոց, եւ նայիս սիրով եւ քաղց-  
րութեամբ յարարածս քո:

Լո՛ւր մեզ յերկնից ՚ի սրբու-  
թենէ քուժմէ՝ բարեխօսու-  
թեամբ սուրբ Աստուածածնին  
եւ աղաչանօք ամենայն Սրբոց  
քոց, եւ որոց այսօր է յիշա-  
տակ Լո՛ւր մեզ Տէ՛ր եւ ողորմեա՛,  
ներեա՛, քաւեա՛ եւ թող զմեզս  
մեր՝ Արժանաւորեա՛ գոհու-  
թեամբ փառաւորել զքեզ ընդ  
Հօր եւ ընդ Սուրբ Հոգւոյդ.  
Այժմ եւ միշտ եւ յաւիտ.

**Յիշեա՛ Տէր զպաշտօնեայս:**

**Բարերար եւ բազումօղորմ.**

**Օրհնեալ Տէր մեր՝ Յիսուս  
Քրիստոս. Ամէն:**

**Հայր մեր որ յերկնս.**

**ՄԱՂԹԱՆՔ ՊԱՀՈՑ**

**Յես Արարչակահին**

**Խաչ քո եղիցի՛ մեզ ապա-  
ւէն, Տէ՛ր Յիսուս, յորժամ ե-  
րեւիս փառօք Հօր ընդ ամպս  
լուսաւորս: Յայնժամ մեք մի՛  
ամաչեսցուք յուսացեալքս ՚ի  
քեզ. այլ զօրութեամբ քով  
մեծաւ՝ բերկրեսցուք ընդ աջմէ  
քուժմէ՝ որպէս զորդիս լուսոյ  
եւ որդիս տուրնջեան:**

**ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ**

Ո՞վ Տէր Յիսուս, քու Խաչդ օգնական  
Ծող լինի մեզ, երբ Հօրդ փառքով երեւիս  
լուսաւոր ամպերու վրայէ: Այն ատեն՝  
մեք որ յոյսերնիս քու վրայ դրած ենք, եր-  
բէք ամօթով չլինիմք, այլ քու մեծ զօրու-  
թիւնովդ՝ քու աջ կողմդ անցած, ուրա-  
խանամք լուսոյ և ցերեկի որդւոց նման:

## Ք Ա Ր Ո Չ

(Ա.չ.) Աղաչեսցո՛ւք զամենա-  
կալն Աստուած. զի պահպանես-  
ցէ զժողովուրդս իւր ընդ հո-  
վանեաւ սուրբ եւ պատուական  
Խաչիւն իւրով 'ի խաղաղու-  
թեան: Ամենակալ Տէր Աստ-  
ուած մեր, Կեցո՛ եւ ողորմեա՛:

## Ա Ղ Օ Ք Ք Պ Ա Ղ Ո Յ

(Ա.ք.) Օգնեա՛ մեզ, Տէ՛ր, օգնեա՛  
մեզ Աստուած Փրկիչ մեր, վասն  
մեծի փառաց անուանդ քո:  
Տէ՛ր. փրկեա՛ զմեզ, եւ քաւեա՛  
զմեզս մեր վասն անուան քոյ  
սրբոյ: Պարսպեալ պահեա՛ զառ  
'ի քեզ զապաւինեալ եւ գյու-  
սացեալ ժողովուրդս քո՛ ընդ  
հովանեաւ սուրբ եւ պատուա-  
կան Խաչիւղ քով 'ի խաղաղու-  
թեան: Փրկեա՛ յերեւելի եւ յա-  
ներեւոյթ թշնամոյն: Արժա-

նաւորեա՛ զոհութեամբ փառա-  
ւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ  
Սրբոյ Հոգւոյդ, Այժմ եւ միշտ  
եւ յաւիտեանս յաւիտ. Ամէն:

## ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Օգնէ մեզ ո՛վ Տէր, օգնէ մեզ ո՛վ Աստու-  
ած Փրկիչ մեր, բու անուանդ մեծ փառ-  
քին համար: Ո՛վ Տէր, փրկէ զմեզ. և քաւէ  
մեր մեղքերը բու սուրբ անուանդ համար:  
Բու սուրբ եւ պատուական Խաչովդ՝  
խաղաղութեան մէջ պահէ ու պահպանէ  
բու ժողովուրդդ, որ քեզ ապաւինած եւ  
յոյսերնին վրայ դրած են: Փրկէ երեւելի  
և աներեւոյթ Թշնամիէն. արժանի ըրէ  
զոհութիւնով փառաւորել զքեզ, Հօր եւ  
Սուրբ Հոգիիդ հետ. հիմա և միշտ. Ամէն:  
Յիշեա՛ Տէր զպաշտօն. եւն.  
Բարերար եւ բազումն. եւն.

(Տե՛ս երես 601 )

Օրհնեալ Տէր մեր Յրաւու  
Բրիտոս. Ամէն:  
Հայր մեր որ յերկինս

(Մեծ պահոց մէջ այս որեղ կ'սկսի  
Արեւազալի ժամերգութեանը, եւ  
որեւ զօրեւ Հայրմերէն մերջ ան-  
միջապէս ի ըստ-էն)

## Մ Ա Ղ Յ Ա Ն Ք

Չաղմոսերգութիւնս եւ զա-  
ղաչանս ընկալցի՝ մարդասէրն  
Աստուած՝ ի հաճոյս բարերար  
կամաց իւրոց. մեր մեղաց եւ  
բազում յանցանացն թողութիւն  
չնորճեսցէ. ի չարեաց փրկեսցէ.  
՚ի մեղաց պահեսցէ եւ նմա  
փառք յաւիտեանս Ամէն:

(Եթէ լուր զօրեւ Ս. Պարարագ  
Տարուայանի, այս որեղէն կ'սկսի.  
Եթէ ոչ կը շարունակուի հետեւեալն.)

Օրհնեալ՝ թագաւորութիւնն  
Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն  
Սրբոյ. Այժմ եւ միշտ եւ յա-  
ւիտեանս յաւիտենից. Ամէն:

(Այս ըստ պարզածի աւարտն աւելն  
ԺԱՄԱՄՈՒՏ Զորս  
(Տե՛ս երես 477-500)

Եւ եւս խաղաղ. Օրհնութիւն եւ  
Խաղաղութիւն Ամենեցուն:

## ՃԱՏՈՒ ՓՈՒՔ

## Ամենայն Տօնից Սրբոց

Սիրեցի զի լուսիցէ — մերջ  
Փրկեաց զանձն իմ: (Տես եր. 574)

Փոխ Շարաքապահոց՝ յորս տօն  
ոչ լինի եւ ամենայն Զօրեհաքքի  
եւ Ռարաքաւ պահոց

Օրհնեցէ՛ք զՏէր՝ ամենայն  
ազինք, զօլկեցէ՛ք զնա ամենայն  
ժողովուրդք:

Զօրասցի ողորմութիւն նորա  
՚ի վերայ մեր, եւ ճշմարտու-  
թիւն Տեառն մնացէ յաւի-  
տեանս Փառք Հօր. Այժմ եւ:

(Ապա կ'երգեն Ճաշու Շարահան  
բար պարշաճի, եւ Սուրբ Աս-  
տուած, սուրբ եւ հոգոր, առանց  
Փառաւորեալի, եւ շինի.)

## Ք Ա Ր Ո Ձ

Եւ եւս խաղաղութեան զՏէր ա.

Վասն խաղաղութեան ա-  
մենայն աշխարհի, եւ հաստա-  
սուլթեան սրբոյ Եկեղեցւոյ, ըզ-  
Տէր աղաչեսցուք: — Տէր ողոր.

Վասն ամենայն սուրբ եւ ուղ-  
ղափառ եպիսկոպոսաց, զՏէր  
աղաչեսցուք: — Տէր ողորմեա:

Վասն Հայրապետին մերոյ  
Տեառն (այս անուն) կենաց եւ  
փրկութեան հոգւոյ նորին ըզ-  
Տէր աղաչեսցուք: — Տէր ողոր.

Վասն վարդապետաց՝ քա-  
հանայից՝ սարկաւազաց՝ զըզ-  
րաց՝ եւ ամենայն ուխտի ման-  
կանց եկեղեցւոյ, զՏէր աղա.

Վասն բարեպաշտ թագաւո-  
րաց՝ եւ աստուածասէր իշխա-  
նաց, զօրավարաց եւ զօրաց  
նոցին, զՏէր աղաչեսցուք:

Վասն հոգւոցն հանգուցելոց.  
Եւ եւս միաբան վասն ճշմար-  
Ձանձինս մեր. Ողորմեաց մեզ.

## Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

Ձի ողորմած եւ մարդասէր  
ես Աստուած գոլով եւ քեզ  
վայելէ փառք իշխանութիւն  
եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ.

(Ապա ասի Ճաշու Սաղմոս. Յի-  
նանց՝ այսինքն Զարկի յեռան օրե-  
րուն հիջ, յաւարն երեք Փոխ, զի  
մինչեւ ի Հոգւոյ Դաւաւստն ձԾ.  
(150) Փոխ Սաղմոս Դաւաւստն զճա-  
րեացի (ըզբնայ), եւ ասին փոխի  
վերջն երեք Ալէլուիա ասա:

Իսկ առ հասարակ կերակի օրերու  
Ս. Դրոց ընթերցումն առաջ Ճաշու  
Սաղմոսն. ի կ'ի. Ինք վայելէ օրն-

նութիւն Աստուած ի Սիօն, եւ  
քեզ ապցին աղօթք յերուսաղէմ.  
Եւ այլ Տօնի եւ Պահոց օրեր  
զանազան համարօր Սաղմունիք, որ-  
պէս նաեւ զԿնի Ալէլուիա Սաղմո-  
նիք Տի Տի որան ըստ պարզածի,  
որով էլ լինի ընկերոջս Ս. Աւե-  
րարանի. Եւ այլ Հաւատոյ Հան-  
գանակին որ է Հաւատամքն, զոր  
տե՛ս երես 388.)

## Ք Ա Ր Ո Ջ

Եւ եւս խաղաղութեան զՏէր ա.

Եւ եւս հաւատով ազաչեց-  
ցուք եւ խնդրեսցուք ՚ի Տեառ-  
նէ Աստուծոյ եւ ՚ի Փրկչէն մեր-  
մէ Յիսուսէ Բրիտոսէ ՚ի ժա-  
մուս պաշտաման եւ աղօթից,  
զի արժանի ընդունելութեան  
արասցէ. լուիցէ՛ Տէր ձայնի ա-  
զաչանաց մերոց, ընկալցի՛ ըզ-  
խնդրուածս սրտից մերոց, թող-

ցէ՛ զյանցանս մեր, ողորմեսցի՛  
ի վերայ մեր Աղօթք մեր եւ  
խնդրուածք յամենայն ժամ մըտ-  
ցեն առաջի մեծի Տէրութեան  
նորա. եւ նա տացէ մեզ միա-  
բան, միով հաւատով եւ ար-  
դարութեամբ վաստակել ՚ի գոր-  
ծես բարեաց. զի զողորմութեան  
զչնորն իւր արասցէ ՚ի վերայ  
մեր Տէրն ամենակալ, կեցուցէ  
եւ ողորմեսցի.

Ձժամս եւ զառաջիկայ օրս  
խաղաղութեամբ անցուցանել.

Չհրեշտակ խաղաղութեան.

Չքաւութիւն եւ զթողութի.

Չսրբոյ խաչին մեծ եւ կա.

Եւ եւս միա. Չանձինս. Ողոր.  
Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ողոր.

## Ա Ղ Օ Յ Ք

Տէր մեր եւ Քրկիչ Յիսուս  
Բրիտոս, որ մեծդ ես ողոր-  
մութեամբ եւ առատ պարգեւօք



բարերարութեան քո Որ դու,  
քոյնն կամաւդ 'ի ժամուս յայս-  
միկ համբերեցեր չարչարանաց  
խաչի եւ մահու՝ յաղագս մե-  
ղաց մերոց: Եւ պարգեւեցեր  
առատապէս զպարգեւս Հոգւոյդ  
Սրբոյ երանելի Առաքելոցն: Հա-  
ղորդս արա՛ եւ զմեզ Տէ՛ր, ա-  
ղաչեմք զքեզ՝ Աստուածային  
պարգեւացդ, թողութեան մե-  
ղաց եւ ընդունելութեան Հոգ-  
ւոյդ Սրբոյ: Որպէս զի արժա-  
նաւորք եղիցուք զո՞նութեամբ  
փառաւորել զքեզ ընդ Հօր եւ  
ընդ Սրբոյ Հոգւոյդ. այժմ եւ.

Խաղաղութիւն ամենեցուն  
Աստուծոյ երկրպագեացուք:

**Խ**աղաղութեամբ քով Քրիս-  
տոս Փրկիչ մեր, որ 'ի վեր է  
քան զամենայն միտս եւ զբանս,  
ամրացո՛ զմեզ եւ աներկիւզ  
պահեա՛ յամենայն չարէ:

Հաւասարեա՛ զմեզ ընդ ճըշ-  
մարիտ երկրպագուս քո, որք  
հոգւով եւ ճշմարտութեամբ  
քեզ երկիրպագանեն:

Վասն զի Ամենասուրբ Երրոր-  
դութեանդ վայելեն փառք իշ-  
խանութիւն եւ պատիւ: Այժմ  
եւ միշտ եւ յաւիտեանս յաւի.  
(Այս Քարոյնն և Աղջիւնն աշխար-  
հաբար (Տես երես 396-399)

**Քահ. Օրհնեալ Տէր մեր Յիսուս**  
**Քրիստոս Տէր Աստուած, օրհ-**  
**նեսցէ՛ զամենեսեանդ: Ամէն:**

Հայր մեր որ յերկինս.

**Դո. և Ժող. Միայն Սուրբ. Մի-**  
**այն Տէր. Յիսուս Քրիստոս 'ի**  
**փառս Աստուծոյ Հօր. Ամէն.**

**Քահ. Օրհնեալ Հայր Սուրբ՝ Աս-**  
**տուած ճշմարիտ:**

**Դո. և Ժող. Ամէն:**

**Քահ. Օրհնեալ՝ Որդիդ Սուրբ՝**  
**Աստուած ճշմարիտ:**

Դ. և Ժ. Ա. մէն:

Ք. Օրհնեալ Հոգիդ Սուրբ՝  
Աստուած ճշմարիտ:

Դ. և Ժ. Ա. մէն:

Ք. Օրհնութիւն եւ փառք  
Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սըր-  
բոյ, այժմ եւ միշտ եւ:

Դ. և Ժ. Ա. Հայր Սուրբ. Որ-  
դիդ Սուրբ. Հոգիդ Սուրբ:

Ք. Օրհնութիւն Հօր եւ Որդ-  
ւոյ եւ Սրբոյ Հոգւոյն, այժմ:

Դ. և Ժ. Ա. Եղիցի՛ անուն Տեառն  
օրհնեալ՝ յայսմ՝ հետէ մինչեւ  
յաւիտեան. (Երէցս՝ հրէնեա՛.)

Ք. Կատարունմ Օրինաց եւ  
Մարգարէից զու ես, Քրիստոս  
Աստուած Փրկիչ մեր. որ լցեր  
զամենայն Հայրակամ Տնօրէ-  
նութիւնս քո, լի՛ց եւ զմեզ  
Հոգւովդ քով Սրբով:

Սրկ. Օրհնեցից զՏէր յամենայն  
ժամ, յամենայն ժամ օրհնու-

թիւն նորա ՚ի բերան իմ:  
Ք. Օրհնեալք եղերո՛ւք ՚ի  
չնորհաց Սրբոյ Հոգւոյն. եր-  
թայք խաղաղութեամբ. եւ Տէր  
եղիցի՛ ընդ ձեզ եւ ընդ ամե-  
նեսեանդ. Ա. մէն:

ՎԵՐՋ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԵՒ ԱՌԱՌՈՅԵԱՆ

ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆՅ

ԼՈՒՐ ԱՌՈՒՐԳ



## ԱՂՕԹՔ

## Մանաւէի Թագաւորին

Դր Մեծ Պահոց Քէջ էն Կարբայո՛ւն։

(Աչն) Տէ՛ր Ամենակալ. Աստուած Արբանամու, Իսահակայ, Յակովբայ՝ եւ զաւակի նոցա արդարոց. Ամենակալ Տէ՛ր, թո՛ղ զմեզս իմ։

Որ արարեր զերկինս եւ զերկիր, եւ զամենայն զարդ նոցա. Ամենակալ Տէ՛ր, թո՛ղ զմեզս իմ։

Որ կապեցեր զծով բանիւ հրամանի քոյ. փակեցեր զխորս, կնքեցեր անաւթր եւ փառաւորեալ անուամբ քով սրբով. Ամենակալ Տէ՛ր թո՛ղ զմեզս իմ։

Որ ամենայն ինչ սարսի եւ զողայ յերեսաց անի զօրութեան քո. Ամենակալ Տէ՛ր, թո՛ղ.

Անբաւ է մեծ վայելչութիւն փառաց սրբութեան քո. սաս-

տիկ է բարկութիւն սպառնալեաց քո՛ ՚ի վերայ մեղաւորաց. անչափ եւ անքննին են ողորմութիւնք աւետեաց քոց. Ամն.

Դու, Տէ՛ր, բարձրեալ, գրթած, երկայնամիտ, բազում ողորմ, եւ զղջանաս ՚ի վերայ չարեաց մարդկան. Ամենակալ.

Դու, Աստուած ո՛չ եղեր ապաշխարութիւն վասն արգարոցն Արբանամու, Իսահակայ եւ Յակովբայ, որք ո՛չ մեղան քեզ. Ամենակալ Տէ՛ր, թո՛ղ զմեզս իմ։

Այլ եղեր ապաշխարութիւն վասն իմ մեղաւորիս, զի մեղայ աւելի քան զաւազ ծովու, եւ բազմացան անօրէնութիւնք իմ. Ամենակալ Տէ՛ր, թո՛ղ զմեզս իմ։

Չեմ արժանի հայիլ եւ տեսանել զբարձրութիւնս երկնից, ՚ի բազմութենէ անօրէնութեան իմոյ. Ամենակալ Տէ՛ր, թո՛ղ զմեզս.

Կորացեալ եմ ես 'ի բոնութենէ կապանաց երկաթից, եւ ո՛չ գոյ ինձ հանդիստ, Ամենա.

Բարկացուցի զսրտմութիւնս եւ չարառաջի քո սրբարի. կանգնեցի պատկեր եւ բազմացուցի զցասումս. Ամենակալ Տէր.

Եւ արգ, Տէր, խոնարհեցուցանեմ զծունր սրտի իմոյ, եւ հայցեմ 'ի քաղցրութենէ քումմէ.

Ամենակալ Տէր, թո՛ղ զմեզս իմ. Մեղայ, Տէր, մեղայ, եւ զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, Ամենակալ Տէր թող.

Աղաչեմ եւ խնդրեմ 'ի քէն՝ թո՛ղ ինձ, Տէր, թո՛ղ ինձ. եւ մի՛ կորուսաներ զիս ըստ անօրէնութեան իմոյ. Ամենակալ.

Մի՛ յախտեան բարկանար ինձ, Տէր. եւ մի՛ յիշեր զչարիսն իմ, եւ մի՛ պարտաւորեր զիս ընդ իջեալսն 'ի ներքոյ երկրի չարեօք. Ամենակալ Տէր.

Զի զո՛ւ, Աստուած, Աստուած ազաշխարողաց ես. եւ յիս ցոյց զբարերարութիւնդ քո՝ որ անարժան եմ. Ամենակալ Տէր.

Կեցուցես զիս ըստ բազում ողորմութեան քում, եւ ես օրհնեցից զքեզ զամենայն աւուրս կենաց իմոց. Ամենակալ Տէր.

Զքեզ, Տէր, օրհնեն ամենայն զուարթունք երկնից. եւ քո են փառք յախտեանս Ամէն. Փառք Հօր եւ. Այժմ եւ միշտ.

✠ Աղաչեմ եւ խնդրեմ 'ի քէն, Տէր. թո՛ղ ինձ զմեզս իմ. Բազումողորմ, Տէր, ողորմեա՛ ինձ:

Աստուած, քաւեա՛ զիս զմեղաւորս 'ի մեղաց, եւ կեցո՛ւ:

Արարիչ իմ եւ յոյս, Աստուած, զթա՛ յիս 'ի մեղուցեալ ծառայս, եւ ողորմեա՛ ինձ բազմամեղիս:

Ամենօրհնեալ Սրբուհի, եւ միշտ Կոյս Աստուածածին Մարիամ, բարեխօսեա՛ւ առ Տէր վասն իմ մեղաւորիս:

Ամենայն Սուրբք Աստուծոյ՝ բարեխօսեցէ՛ք առ Հայր 'ի յերկինս վասն մեր մեղաւորացս:

Քրիստոս Որդի Աստուծոյ անոխակալ, ընկալ զազաչանքս մեր, զի 'ի քեզ են ապաւինեալ անձինք մեր:

Յաղթող զօրութեամբ, սուրբ եւ կենդանարար եւ պատուական Խաչիւ քո Տէր պահպանեա՛ւ մեզ:

Առաքեա՛ւ, Տէր, զՀրեշտակ խաղաղութեան քո, որ եկեալ պահեսցէ զմեզ սնխոսվս 'ի տուէ եւ 'ի գիշերի:

Եւ մարդասիրութեամբ քո յիշեա՛ւ զմեզ, Տէր, յիշեա՛ւ զմեզ, յորժամ գաս արքայութեամբ քով, եւ ողորմեա՛ մեզ:

## Ք Ա Ր Ո Ձ

(Աշ.) **Ե**կեալքս 'ի խօստովանութիւն ապաշխարութեան՝ հաւատով զյոյս Միածնի Որդւոյն Աստուծոյ զիցուք 'ի սիրաս մեր, խնդրելով 'ի նմանէ զքաւութիւն եւ զթողութիւն յանցանաց մերոց: Վասն զի նա ինքն է նախախնամողն Աստուած յաւիտենական. որ եկն կամաւ Հօր 'ի փրկել զարարածս. եւ ասաց՝ զինքն լինել քաւիչ մեղաւորաց, յոյս ապաշխարողաց, շնորհելով զհանգիստ աշխատելոց, ընդունելով զժանրաբեռնեալքս եւ զտաժանեալքս մեզօք յապաշխարութիւն քաւութեանն Արդ՝ եկայք ամենեքեան խոնարհեալ անձամբք՝ բեկեալ սրտիւք՝ անկցուք եւ լացցուք առաջի Տեառն արարչին մերոյ:

զի անցուցէ 'ի մէջ զգասու-  
մըն պատուհասի յանցանաց մե-  
րոց բարերարութեամբն իւրով:  
Ամենակալ Տէր Աստուած մեր՝  
Կեցո՛ եւ ողորմեա՛:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՔԱՐՈՋԻՆ

Մեր ամենքս որ եկած ժողովուած  
եմք խոստովանելու և ապաշխարելու հա-  
մար, պէտք է հաւատքով մեր սրտերուն  
մէջ յոյս զնեմք Աստուծոյ Միածին Որդւոյն  
վրայ. խնդրելով անորմէ բաւուածիւն ու  
Թողութիւն մեր ամեն յանցանաց: Վասնզի  
նա ինքն է նախախնամող և յաւիտենական  
Աստուածը, որ Հօրը կամբով (այս աշ-  
խարհն) եկաւ իւր արարածները փրկելու  
համար, ըսելով Թէ՛ ինքն մեղաւորաց  
բաւին է, և ապաշխարողներու յոյսն է.  
և աշխատեալներուն հանգիստ կը շնոր-  
հէ, և կ'ընդունի ծանր բեռներով ու մեղ-  
քերով յոգնածներուն ապաշխարութիւնը  
բաւութիւն տալով անոնց:

Ուրեմն՝ եկէք ամենքս անձերնիս խո-

նարհեցունելով, ու սրտերնիս զղջումով  
շարժելով անկանխմբ ու լամբ մեր Արարիչ  
Տիրոջ առջեւ, որպէս զի իւր բարերարու-  
թիւնով՝ մեր վրայէ անցունէ մեր յանցա-  
նոց պատիժը տալու բարկութիւնն. Ամե-  
նակալ Տէր Աստուած մեր. Կեցո՛ և ողոր-

Ա Ղ Օ Թ Ք

(Ա. 4.) Տէր Աստուած փրկու-  
թեան մերոյ, որ ողորմածդ ես  
եւ գթած, երկայնամիտ բա-  
զումողորմ. եւ զղջանաս 'ի վե-  
րայ չարեաց մարդկան. որ ոչ  
կամիս զմահ՝ մեղաւորին, այլ  
զգաւնալ նորա 'ի չար ճանա-  
պարհէն եւ զկեալն. Դու Տէր,  
առաս ողորմութեամբդ քով  
մխիթարեա՛ զժառայս քո, եւ  
տուր սոցա տեղի ապաշխա-  
րութեան. Հաշտեա՛ մարդա-  
սիրութեամբ քով, եւ արա՛ ըզ-  
սոսա անդամս Եկեղեցւոյ քում

սրբոյ՝ Որպէս զի առողջացիալք  
հոգւով՝ խոստովանութեամբ եւ  
ապաշխարութեամբ մտցեն յե-  
կեղեցի քո սուրբ եւ ընդ ժո-  
ղովրդեան քում, քեզ հանցեն  
զօրհնութիւն եւ զփառս Հօր  
եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ .  
Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս  
յաւիտենից . Ամէն :

### ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԱՂՕԹԻՆ

Ո՛վ Տէր, մեր փրկութեան Աստու-  
ծը, որ ողորմած ու զթած, երկայնամիտ  
և բազումողորմ ես, և գումգը կը շարժի  
մարդոց չարութեան վրայ . որ մեղաւորին  
մեռնիլը չես ուզեր, այլ անոր չար ճանա-  
պարհէն դառնալն ու ապրիլը կուզես .  
Դո՛ւն, ո՛վ Տէր, քու առատ ողորմութիւ-  
նովըդ մխիթարէ քու ծառաներդ, և ապաշ-  
խարելու միջոց և ժամանակ տուր անոնց :  
Հաշտուէ՛ քու մարդասիրութիւնովդ, և  
զմեզ քու սուրբ Եկեղեցիդ անդամ ըրէ՛ :  
Որպէս զի հոգիով առողջացած՝ խոստո-

վանութիւնով ու ապաշխարութիւնով մըտ-  
նեմք քու սուրբ Եկեղեցիդ . և քու ժողո-  
վըրդեանդ հետ օրհնեմք ու փառաւորեմք  
Ամենասուրբ Երրորդութիւնդ . այժմ և միշտ  
և յաւիտեանս յաւիտենից . Ամէն :





**ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ  
ՀԱՍԱՐԱԿԱՅ ԱՂՕՔԻՑ**

**ԱՐԵՒԱԳԱԼԻ ԺԱՄՈՒՆ**

**ՈՐ ԿՍԱՐԻ**

**Ի ԴԷՄՍ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՑ**

**ԱՅԼ ԵՒ Ի ԴԷՄՍ ՅԱՐՈՒԹԵԱՆՆ ՔՐԻՍ-  
ՏՈՍԻ. ԵՒ ԵՐԵՒՄԱՆ ԱՇԱԿԵՐՏԱՅՆ.**



(Այս ժամերգութեանը Մեջ պահանջ առաջարկները կը կարգադրուի, երևոյց Երգերով իսկ Շաբաթապահանջ Տեղաւանց երգոց: Աղօլեաւերդ կընան առանձին եւս կարգաւ առաջարկները՝ ճանաչանդ Ապաշխարութեան օրեր:)

**Օրհնեալ Տէր մեր Յիսուս  
Քրիստոս. Ամէն**

*Հայր մեր որ յերկինս .*

**Քահ. ԵՂԻՑԻ** անուն Տեառն  
օրհնեալ յախտեան. զի յառաջ  
քան զարեւ է անուն նորա:



ՄԷԿ. Ի նա օրհնեցին ամենայն ազգք երկրի, եւ ամենայն ազինք երանիցեն նմա: Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի, որ առնէ սքանչելիս միայն. եւ օրհնեալ է անուն սուրբ փառաց նորա յաւիտեան. լցցի փառք նորա ամենայն երկիր. եզիցի եզիցի: Քահ. Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հուզոյն Սրբոյ.

ՄԷԿ. Այժմ եւ միշտ եւ եւս խաղաղութեան զՏէր ազաչեացուք. ընկալ կիցո՞ եւ ողորմեա. Քահ. Օրհնութիւն և փառք Հօր և:

ԵՐԿ ԱՐԵՒԱԳԱՒԵՆ ԴԿ.

(Ա.-Գ.) **Յարեւելից** մինչ 'ի մուտս, 'ի հիւսիսո՞յ եւ 'ի հարաւոյ, ամենայն ազգ եւ ազինք, յօրհնութիւն նոր օրհնեցէք զԱրարիչն արարածոց, որ ծագեալց ըզլոյս արեգականն այսօր յաշխարհս:

Եկեղեցիք արդարոց, փառաբանիչք ամենասուրբ Երրորդութեանն. յառաւօտս լուսոյ զառաւօտ խաղաղութեան Քրիստոս՝ գովեցէք ընդ Հօր եւ Հոգւոյն. որ ծագեաց զլոյս զիստութեանն իւրո՞յ 'ի մեզ:

ՅՈՐԴՈՐԱԿ

**Յարեւելից** յարեւմուտս մանկունք Սիովլի, օրհնեցէք միշտ անգաղար զծագողն լուսոյ:

Եկեղեցիք արդարոց եւ փառաբանիչք, բարեբանեցէք որ ետ զիմաստրս լուսոյ:

ՔԱՐՈԶ

(Ա.-Գ.) **Յարեւելից** մինչեւ 'ի մուտս արեւու ընդ ամենայն տեղիս քրիստոնէութեան, ուր եւ կարգան զանուն Տեառն սրբութեամբ, Տէր ազօթիւք նոցա

եւ բարեխօսութեամբ մեզ ողորմեսցի Ուխտիւք զԱստուած աղաչեսցուք, զի նա փրկեսցէ զմեզ ի մեղաց եւ ի ցանկութիւնէ աշխարհիւ Ընկալցի՛ զուխտըս եւ զխնդրուածս սրտից մերոց. եւ արժանի արասցէ զմեզ հաւատոց եւ պատուիրանաց իւրոց ընդ ամենայն սուրբս իւր: Ամենակալ Տէր Աստուած մեր. Կեցո՛ եւ ողորմեա՛

Չառաւօտս լուսոյ եւ զառաջիկայ օրս խաղաղութեամբ անցուցանել՝ հաւատով ի Տեառնէ խնդրեսցուք: — Ծնորհեա՛ Տէր:

Զհրեշտակ խաղաղութեան.

Զքաւութիւն եւ զթողութիւն.

Զսրբոյ խաչին մեծ եւ կարող. եւ եւս միաբան վասն ճշմար.

Զանձինս մեր. Ողորմեաց մեզ.

## ՔԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՔԱՐՈՉԻՆ

Արեւելքէն մինչեւ արեւմուտք ամեն տեղ, ուր որ քրիստոնեաներ կը գտնուին, եւ Տէրջը անունը սրբութիւնով կը կարդան, Տէրը անոնց աղօթքովն ու բարեխօսութիւնովը մեզ ողորմի Ուխտ ընելով Աստուծոյ աղաչեմք, որ ինքը փրկէ զմեզ մեղքէ եւ աշխարհիս ցանկութենէն, Ընդունի մեր ուխտերն ու մեր սրտերուն խնդիրքը, եւ արժանի ընէ զմեզ իւր հաւատքն ու պատուիրանքները պահել իւր բոլոր Սուրբերուն հետ. Ամէն:

## Ա Ղ Օ Յ Ք

(Ա. շ.) Յարեւելից մինչեւ ի մուտս արեւու օրհնեալ ես Տէր, վասն զի թաղաւոր քաղցր ես, եւ անուն քո անեղ է ընդ ամենայն արեւելիս: Քաղցրացին սաղմոսերգութիւնք մեր առաջի քոյ. Կլցեն իրաւունք յարդարութեանէ քումմէ ի տը-

կարութիւնս մեր, եւ փառա-  
ւորեացի՛ Սմենասուրբ անուն  
քո: Եւ մեք արժանի եղիցուք  
կալ ի պատուիրանի քում. եւ  
քեզ երգել զօրհնութիւն եւ  
զփառս Հօր եւ Որդւոյ եւ Հոգ-  
ւոյդ Սրբոյ. այժմ եւ միշտ եւ.

**ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԱՂՈԹՔԻՆ**

Արեւելքէն մինչեւ արեւմուտք օրհ-  
նեալ ես, ո՛վ Տէր Աստուած. վասնզի քաղ-  
ցըր թագաւոր ես, և քու անունդ բոլոր  
աշխարհի վրայ ահարկու է: Մեր Սաղմո-  
սերգութիւններն թող քաղցր երենան քու  
առջեւդ, և քու արդարութենէդ իրաւունք  
թող ելնէ մեր տկարութեան վրայ, որպէս  
զի փառաւորութի քու Ամենասուրբ անու-  
նըդ, և մեք արժանի ըլլամք քու պատուի-  
րանքդ՝ պահել. և քեզ օրհնութիւն ու  
փառք մատուցանել Հօր և Որդւոյ և Հոգ-  
ւոյդ Սրբոյ. այժմ և վիշտ և յաւիտեանս.

Խաղաղութիւն ամենեցուն  
Աստուծոյ երկրպագեացուք:

Աստուած մշտնջենաւոր,  
Աստուած յաւիտենական, որ  
ի ստորին աշխարհս լոյս ծա-  
ղեցար, եւ լուսաւորեցիր զմեզ  
ի խաւարային մեղաց մերոց:  
Որ վասն մեր ՚ի չափաւորու-  
թիւն եկիր՝ անչափդ Աստուած,  
եւ հեղեալ ծաւալեցիր զշնորհս  
Հոգւոյդ Սրբոյ յարարածս քո:  
Այժմ եւ յաւիտեանս ժամանա-  
կաց՝ բարեբանեալ ես ամենա-  
մեծդ Աստուած, ընդ Հօր եւ  
ամենասուրբ Հոգւոյդ. այժմ.

**ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ**

Ո՛վ Աստուած մշտնջենաւոր, ո՛վ յա-  
ւիտենական Աստուած, որ լոյս ծաղեցար  
այս ստորին աշխարհին վրայ, և լուսա-  
ւորեցիր զմեզ մեր խաւարային մեղքերէն.  
որ մեզ համար ի չափաւորութիւն եկար  
(խոնարհեցար) ո՛վ անչափդ Աստուած, և  
քու Սուրբ Հոգիդ շնորհքը թափելով ծա-  
ւալեցիր քու արարածներուդ վրայ: Հիմա

և յաւիտենական ժամանակներ բարեբանեալ ես, ով ամենամեծ Աստուած իմ (Յիսուս,) Հօրք և ամենասուրբ Հոգիիդ հետ, այժմ և միշտ և յաւիտենանս.

**ՓՈՍ. ՍՍ.ՂՄՈՍ ՂԹ.**

(Ա.-Է.) Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր. ծառայեցէք Տեառն ուրախութեամբ:

Մտէք առաջի նորա ցնծութեամբ, ծաներո՛ւք զի նա է Տէր Աստուած մեր:

Նա արար զմեզ, եւ ոչ մեր էար, մեր ժողովուրդք եւ խաչն արօժի նորա:

Խոստովան եղերաք Տեառն, եւ օրհնեցէք զանուն նորա:

Քաղցր է Տէր, յաւիտեան է ողորմութիւն նորա, ազգէ մինչեւ յազգ է ճշմարտութիւն նորա:

Փառք Հօր եւ Այժմ եւ միշտ.

**Յ Բ Գ.**

(Ա.-Է.) **Ճգնաւորք Աստուծոյ,** եւ ժառանգորդք երկնից արքայութեանն. որք փոխանակ-

եալքը զանցաւորս առիք զանանցրն բարութիւնսն. բարեխօսեցէք առ Տէր, վասն մանկանց եկեղեցւոյ:

Նահատակք պանծալիք, եւ սիրեցեալք ՚ի յերկնաւոր Հօրէն. որք մկրտեցայք ընդ Քրիստոսի արեամբ ձերով ՚ի մահ խաչին. բարեխօսեցէք առ Տէր վասրն մանկանց եկեղեցւոյ:

Մարտիրոսք ցանկալիք, եւ օթեւանք Հոգւոյն ճշմարտութեան. որք յաղթեցիք հոգւով կարեաց եւ ցանկութեան. բարեխօսեցէք առ Տէր վասն.

Գովելլիք աշխարհի, եւ բաղձալիք վերնոցն պիտութեանց. որք երանութեան մասին հասիք քան զամենայն որդիս մարդկան. բարեխօսեցէք առ Տէր.

Կամաւոր պատարաղք. մանկունք տիօք եւ կատարեալք ի-

մաստութեամբ, որք փոխանակ  
կաթին արբիք զգինին զմայլե-  
ցուցիչ. բարեխօսեցէք առ Տէր  
վասն մանկանց Եկեղեցւոյ:

## ՅՈՐԴՈՐԱԿ

Ճգնաւորքք ճշմարիտք, վը-  
կայք Քրիստոսի. բարեխօսեցէք  
առ Տէր վասն անձանց մերոց:

Նահատակքք կենդանիք, սի-  
րողք Քրիստոսի. որք չարչա-  
րեցայք մարմնով վասն ան-  
ուանն Տեառն:

Մարտիրոսըք ցանկալիք մարդ-  
կան ըղձալիք. հայցեցէք ի Սուրբ  
Հոգւոյն տալ մեզ զբարիս:

Գովելիք վերնոց դասուց,  
պարծանք աշխարհի, խնդրեցէք  
զխաղաղութիւն տալ Եկեղեցւոյ:

Կամաւոր սուրբ պատարագք,  
հասակաւ մանկունք. հայցեցէք  
լինիլ եւ մեզ՝ ձեզ պատակակից:

## ՄԱՂԹԱՆՔ

Աղաչեմք ողորմեաց, Տէր  
բարերար, աղաչեմք ողորմեաց.  
վասն աղօթից սրբոց ճգնաւո-  
րացն՝ աղաչեմք ողորմեաց:

## ՔԱՐՈՋ

(Ա.չ.) Սուրբ ճգնաւորօքն ա-  
ղաչեսցուք զՏէր, որք զչարսն  
պարսեցին <sup>(1)</sup>. Նեղութեանցն  
համբերեցին. լուսեղէն եւ երկ-  
նային անթառամ պսակացն ար-  
ժանի եղեն. աղօթիւք նոցա եւ  
բարեխօսութեամբ մեզ ողոր-  
մեսցի. Ամենակալ Տէր Աստուած  
մեր, կեցո եւ ողորմաւ:

## ԱՂՕԹՔ

(Ա.գ.) Սուրբ ես Տէր, եւ ի  
սուրբս հանգուցեալ, եւ մեք  
սուրբ վկայիւքս աղաչեմք զքեզ.

(1) Չարսն յաղթեցին

բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին՝ եւ աղաչանօք ամենայն սրբոց քոց, մի՛ մերժեք զմեզ յողորմութենէ քումմէ. այլ կեցո՛ր զմեզ աղօթիւք սոցին. զի դու ես բազումողորմ Աստուած. եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. Սմէն:

**Յիշեա՛ Տէր զպաշտօն. եւն.**

**Բարերար եւ բազումող. եւն.**

**Փոխ սաղսոս կն.**

(Աչկ.) Աստուած. Աստուած իմ, ես առ քեզ առաւօս առնեմ. ծարաւեցաւ առ քեզ հոգի իմ, քանխպատիկ եւս եւ մարմին իմ:

Որպէս երկիր անապատ եւ անջուր, ուր ոչ գոյ՝ ի նմա ճանապարհ:

Այսպէս ՚ի սուրբս երեւեցայց քեզ տեսանել ինձ՝ զգործութիւն քո եւ զփառս քո:

Վասն զի լաւ է ինձ ողորմութիւն քո քան զկեանս իմ, եւ շրժունք իմ զովեսցեն զքեզ:

Այսպէս օրհնեցից զքեզ ՚ի կեանս իմ, եւ յանուն քո համբարձից զձեռքս իմ:

Որպէս ՚ի ճարպոյ պարտաւթենէ լցցի անձն իմ. շրժամբք ցնծութեան օրհնեսցէ զքեզ բերան իմ:

Զի թէ յիշէի զքեզ յանկողնի խնում ընդ առաւօսս կանխեալ խօսէի ընդ քեզ:

Զի եղեր իմ օգնական, ՚ի հովանի թեւոց քոց ցնծացայց:

Եկն զկնի քո անձն իմ. եւ զիս ընկալաւ աջ քո, եւ նորս ՚ի նանիր խնդրեցին զանձն իմ:

Մայցն ՚ի ներքոյ անդնդոց երկրի. մասնեսցին ՚ի ձեռս սրոյ, եւ բաժինք աղուխուց եղիցին:

Թագաւոր յուսացաւ ՚ի Տէր. զովեսցին ամեներեան՝ ոյք երզնուն

նովաւ. խցցին բերանք այնոցիկ՝ ոյր  
խօսէին զանիրաւուծիւն:

(ԿԳ.) Լուր Աստուած, աղօթից իմոց,  
յաղաչել ինձ առ բեգ. յերկիրդէ թըշ-  
նամուոյն փրկեա՛ զանձն իմ:

Ծածկեսցես զիս ՚ի ժողովոց չա-  
րաց, ՚ի բազմութենէ՛ ոյր զորձնն  
զանօրէնութիւն:

Ոյր սրեցին որպէս սուսեր զլեզուս  
իւրեանց. լաւեցին զաղեղունս իւր-  
եանց յիւրս զառնութեան:

Զգել ՚ի զաղսնիս այնոցիկ՝ ոյր ու-  
ղիղ են սրսիւք. յանկարծակի ձգես-  
ցեն ՚ի նոսա. եւ մի երկիցեն:

Ոյր զօրացուցին յանձինս իւրեանց  
զրանս չարութեան. խորհեցան թա-  
գուցանել ինձ որոգայթ, եւ ասացին  
ոչ տեսանէ զայս Տէր:

Քննեցին զանօրէնութիւն, պար-  
տասեցան ՚ի քննել զքննութիւն:

Մասիցէ այր ՚ի խորութիւն սրսի  
իւրոյ, եւ բարձր եղիցի Աստուած:

Նեք տղայոց եղեն վէրք նոցա,  
սկարացան ՚ի նոսա լեզուք նոցա, եւ  
խառովեցան ամենեքեան ոյր հայէին  
ընդ նոսա:

Երկեաւ ամենայն մարդ ՚ի պատմել  
զգործս Աստուծոյ, եւ զարարածս  
նորա ՚ի միտ առին:

Ուրախ եղիցի արդար ՚ի Տէր, եւ  
յուսասցի ՚ի նա. նովաւ զովեսցին ար-  
մենեքեան. ոյր ուղիղ են սրսիւք:

Փառք Հօր եւ Այծմ եւ միշտ եւ.

## ԵՐԳ.

(Ա. 24.) Լոյս, արարիչ լուսոյ ա-  
ռաջին լոյս. բնակեալդ ՚ի լոյս  
յանմատոյց, Հայր երկնաւոր՝ ՚ի  
դասուց լուսեղինացն օրհնեալ.  
՚ի ծագել լուսոյ առաւօտուս,  
ծագեա՛ ՚ի հողիս մեր ըզլոյս  
քօ իմանալի:

Լոյս ՚ի լուսոյ ծագումն ա-  
րեգակն արդար. անձառ ծնունդ  
Հօր՝ Որդի. յառաջ քան զարեւ

անունն քո գովեալ ընդ Հօր. 'ի  
ծագել լուսոյ առաւօ.

Հոյս, 'ի Հօրէ Բղխումն աղ-  
բիւր բարութեան, Հոյի՛ց Սուրբ  
Աստուծոյ. մանկունք եկեղեց-  
ւոյ ընդ հրեշտակս ըզքեզ բա-  
րեբաննն. 'ի ծագել լուսոյ.

Հոյս, Երրեակ եւ Մի անբա-  
ժանելի սուրբ Երրորդութիւն.  
զքեզ ընդ երկնայնոցն երկրա-  
ծինքբս միշտ փառաւորիմք. 'ի  
ծագել լուսոյ առաւօտու ծագեա՛  
ի հոգիս մեր զլոյս քո խմանալի.

## ՅՈՐԴՈՐԱԿ

(Ա.չ.) Անեղանելի՛դ Աստուած,  
Հայր ամենակալ. ընկալ զազա-  
չանս մեր քոց պաշտօնէից:

'ի Հօրէ՛ ծագումն անճառ, ա-  
րեգակն արդար. ծագեա՛ 'ի յան-  
ձինս մեր զլոյսդ ողորմութեան:

'ի Հօրէ Բղխեալ Հոգի, աղ-

բիւր բարութեան, լուսով քով  
լցո՛ ըզմեզ յայսմ առաւօտուս  
Երեք Անձինք եւ Մի բնու-  
թիւն, Մի Աստուածութիւն,  
զքեզ խոստովանիմք յաւէտ  
Սուրբ Երրորդութիւն:

## ՍԱԼԹԱՆՔ

Լուսովդ քո, Քրիստոս, ա-  
մենեքեան լուսաւորեցաք, եւ  
'ի սուրբ Սաչ քո, Փրկիչ,  
հաւատացեալքս ապաւինեցաք:  
Լո՛ւր մեզ Աստուած փրկիչ մեր.  
տո՛ւր մեզ զխաղաղութիւն քո.  
եւ սրա՛ առ մեզ զողորմութիւն  
քո մարդասէր Տէ՛ր.

## Ք Ս Ր Ո Ձ

եւ եւս խաղաղութեան զՏէր.

(Ա.գ.) Փառաւորեսցո՛ւք զամե-  
նակալն Աստուած՝ որ ծագեաց  
զլոյս առաւօտու յարարածս իւր.  
Ծաղեսցէ՛ եւ այժմ զառատ ո-



ղորմութիւն իւր 'ի վերայ փա-  
ռարանչաց անուան իւրոյ: Ա-  
մենակալ Տէր Աստուած մեր,  
կեցո՛ հեւ ողորմեա:

## Ա Ղ Օ Յ Բ

(Ա.չկ.) Ձառաւօտու աղօթս եւ  
զբանաւոր պաշտօնս, ընկալ ա-  
մենակալ ամենամեծդ Աստուած,  
'ի քո անապական եւ յերկնա-  
յին խորանոց: Ծագեա՛ առ մեզ  
զարդարութեան եւ զիմաստու-  
թեան զլոյս քո. արա՛ զմեզ  
որգիս լուսոյ եւ որգիս տուրն-  
չեան. որպէս զի 'ի գալ աւուրս  
երկիւղածութեամբ վարեցուք  
զկեանս մեր. եւ առանց գայ-  
թակղութեան կատարեցուք:  
Զի դո՛ւ ես օգնական եւ Փրկիչ  
մեր, եւ քեզ վայելէ փառք  
իշխանութիւն եւ պատիւ. այժմ  
եւ միշտ.

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՔԱՐՈՉԻՆ

Ո՛վ ամենակալ եւ ամենամեծ Աս-  
տուած, ընդունէ՛ մեր այս առաւօտեան  
աղօթքն եւ հողեւոր երկրպագութիւնն, քու  
մաքուր եւ երկնային խորաններուդ մէջ:

Ծագէ՛ մեր վրայ քու խնաստութեան ու  
արդարութեան լոյսդ. եւ լուսոյ ու ցերեկի  
զաւակներ ըրէ՛ զմեզ, որպէս զի այս գա-  
լու օրուան մէջ, բարեպաշտութիւնով ան-  
ցունեմք մեր կեանքը, եւ առանց գայթակ-  
ղութեան վերջացնեմք: Վասնզի դո՛ւ ես  
մեր օգնականն եւ փրկիչը, եւ քեզ կը վայ-  
լէ փառք իշխանութիւն ու պատիւ. այժմ  
եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

## ՓՈՍՆ ՍԱՂՄՈՍ ԻԿ.

(Ա.չգ.) Տէր հովուեսցէ զիս. եւ ինձ  
ինչ ո՛չ պակասեսցի:

Ի վայրի դալարոջ՝ անդ բնակե-  
ցոյց զիս. եւ առ ջուրս հանգստեան  
անոյց զիս:

Դարձոյց զանձն իմ առ իս, եւ

առաջնորդեաց ինձ՝ 'ի ճանապարհս  
արդարութեան վասն անուան իւրոյ:

Թեպէ՛ս եւ գնացից ես 'ի մէջ բոս-  
ուերաց մտա՞ռ, ո՛չ երկեայց 'ի չարէ,  
զի դու Տէր ընդ իս ես:

Յուպ քո եւ գաւազան՝ նորա մը-  
խիթարեցեն զիս:

Պատաստ արարե՛ր առաջի իմ զսե-  
զան՝ ակն յանդիման նեղչաց իմոց:

Օձեր իւղով զգլուխ իմ. բաժակ  
քո որպէս անապակ արբեցոյց զիս:

Ողորմութիւն քո, Տէր, գոհե՛ս իմ ե-  
կեացէ՛՝ զամենայն աւուրս կենաց ի-  
մոց, բնակիլ ինձ՝ 'ի սան Տեառն ընդ  
երկայն աւուրս:

(ՃԵՌ.) Յոյց ինձ ճանապարհ՝ յոր  
եւ գնացից. զի առ քեզ Տէր համբար-  
ծի զանձն իմ:

Փրկեա՛՝ զիս 'ի թշնամեաց իմոց,  
Տէր զի զքեզ ապաւէն ինձ արարի:

Ուսո՞ ինձ առնել զկամս քո, զի  
դու ես Աստուած իմ:

Հոգի քո բարի՝ առաջնորդեացէ ինձ  
'ի յերկիր ուղիղ:

Վասն անուան քո Տէր, կեցուցես  
զիս. արդարութեամբ քով հանցես 'ի  
նեղութենէ՛ զանձն իմ:

Ողորմութեամբ քով սասակեա՛ Աս-  
տուած, զթշնամիս իմ. եւ կորո՞ գա-  
մենայն նեղիչս անձին իմոյ զի ես  
ծառայ քո եմ:

(ԵՆ.) Աստուած մեր ապաւէն եւ  
գորութիւն. օգնական 'ի վերայ նե-  
ղութեանց, որք գոհն զմեզ յոյժ:

Վասն այսորիկ ո՛չ երկիցուք մեք  
ի խռովիլ երկրի, ի փոփոխիլ լերանց  
'ի սիրսձս ծովու:

Գոչեցին եւ խռովեցան ջուրք նո-  
ցա. խռովեցան լերինք 'ի գորութենէ՛  
նորա:

Գնացք գեոց ուրախ առնեն զբա-  
ղարն Աստուծոյ. եւ սուրբ արար ըզ-  
յարկս իւր Բարձրեալն:

Աստուած 'ի մէջ նոցա, եւ նորա՞

մի սասանեսցին. օգնեսցէ նոցա Ասուած 'ի վաղորդենէ մինչեւ 'ի վաղորդեան :

Խոսովեցան հեթանոսք, եւ խոնարհեցան Թագաւորութիւնք, եւ զձայն իւր Բարձրեալն՝ եւ խոսովեցաւ երկիր:

Տէր զօրութեանց ընդ մեզ, ընդունող է մեր Ասուած Յակոբայ:

Եկայք եւ տեսէք զգործս Ասուծոյ, որ արար զնշանս եւ զարուեսս 'ի վերայ երկրի:

Եհար զպատերազմ 'ի ծագաց մինչեւ 'ի ծագս երկրի. զաղեղունս փրշրեաց, զգէնս խորտակեաց, եւ զասպարս այրեաց հրով:

Կանխեցէք եւ ծանեռուք, զի ես եմ Ասուած. բարձր եղէց 'ի հեթանոսս, եւ բարձրացայց 'ի վերայ երկրի:

Տէր զօրութեանց ընդ մեզ. ընդունող է մեր Ասուած Յակոբայ:

(ԼԹԹ.) Ասուած, յօգնել ինձ նայեաց. եւ Տէր յրնկերել ինձ փութա՛:

Ամաչեսցեն եւ յամօթ լիցին. ոչ ինդրէին զանձն իմ. դարձցին յեսս եւ ամաչեսցեն, ոչ խորհէին ինձ չար. Դարձցին առ ժամայն ամաչեսցեալք. ոչ քաւէին ինձ վա՛շ. վա՛շ.

Յնժացեն եւ ուրախ լիցին 'ի քեզ ամենեքեան, ոչ ինդրեն զքեզ Տէր:

Ասացեն յամենայն ժամ, մեծ է Ասուած. եւ ոչ սիրեն զփրկութիւնս քո:

Ես աղբաս եւ ճանկ եմ, Ասուած, օգնեա՛ ինձ. օգնական եւ Փրկիչ իմ ես. եւ դու Տէր իմ, մի յամենար. (ՉԾ 15.) Տուր զօրութիւն ծառայի քո. կեցո՛ զորդի ազախնոյ քո. եւ արա՛ առ իս նշան քարութեան:

Տեսցեն ասելիք իմ եւ ամաչեսցեն. զի դու Տէր օգնեցեր ինձ, եւ մխիթարեցեր զիս:

Փառք Հօր եւ. Այժմ եւ միշտ եւ.

## ՆՐԴ

(Ա. 4.) **Ճանապարհ**, եւ ճշմարտութիւն եւ կեանք Քրիստոս. առաջնորդեա՛ն հոգւոց մերոց. յերկրէ ելանել յերկինս:

Իուռն կենաց մօտից Յիսուս, մոյժ եւ զմեզ առ Հայր քո եւ Հոգի. երգել միշտ ըզփառս:

## ՅՈՐԴՈՐԱԿ

**Ճանապարհ** բարի՛ Քրիստոս եւ ճշմարտութիւն, առաջնորդ հոգւոց մերոց յերկրէ՛ ՚ի յերկինս:

Իուռն կենաց մրտից Յիսուս. Աստուած ճշմարիտ. մոյժ եւ զմեզ առ Հայրըդ քո. Հոգւովդ Սրբով:

## ՄԱՂԹԱՆՔ

**Տէր**, ուղղեա՛ն զգնացս մեր ՚ի ճանապարհս խաղաղութեան. **Տէր**, ուղղեա՛ն եւ առաջնորդեա՛ն

հոգւոց մերոց եւ ամենայն հաւատացելոց՝ գնալ յարդարութեան ճանապարհն եւ ՚ի կեանսն յաւիտենից:

## ՔԱՐՈՋ

(Ա. 4.) **Աղաչեցուք** զամենակալն Աստուած՝ զի յաջողեալ ուղղեսցէ զճանապարհս ծառայից իւրոց ՚ի բարի եւ ՚ի խաղաղութիւն: Ամենակալ **Տէր** Աստուած մեր. կեցո եւ ողորմեա՛ն:

## ԱՂՕԹՔ

(Ա. 4.) **Առաջնորդ** կենաց եւ պարգեւիչ խաղաղութեան Քրիստոս Աստուած մեր, առաջնորդեա՛ն մեզ գնալ ՚ի ճանապարհս քո արդարութեան. եւ խաղաղութեամբ ժամանել ՚ի նաւահանգիստն կենաց եւ փրկութեան՝ շնորհօք ողորմութեան

քո. զի դու ես օգնական եւ փրկիչ մեր. եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտ. Ամէն

## Ա Ղ Օ Թ Ք

Աւուրց պսաց՝ յորս օտն ոչ լինի (Ա.-գ.) Օրհնեալ ես, Տէր Աստուած փրկիչ մեր, որ յամենայն ժամ ընդ մեզ ես, եւ ո՛չ երբէք թողուս ի ձեռանէ քում. մէ զայնասիկ՝ որք հաւատով եւ ճշմարտութեամբ կարդան առ քեզ: Ազաչեմք եւ խնդրեմք ՚ի քէն, Տէր, ճանապարհորդակից լեր ծառայից քոց քոյին վերակացութեամբդ՝ պահելով ՚ի խաղաղութեան. եւ առաջնորդեալ մեզ միւսանդամ խաղաղութեամբ եւ խնդութեամբ հասանիլ յերաքանչիւր ՚ի բնակութիւնս ՚ի Քրիստոս Յիսուս ՚ի Տէր մեր: Որում վայելէ փառք

իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Օրհնեալ ես ո՞վ Տէր Աստուած, մեր Փրկիչը, որ ամեն ժամանակ մեր հետն ես, և բնաւ երբէք քու ձեռքէդ չես թողուր զանոնք՝ որ հաւատքով և ճշմարտութիւնով քեզ կը կանչեն: Կ'աղաչեմք ու կը խնդրեմք քենէ՝ ո՞վ Տէր, քու ծառաներուդ ճանապարհորդակից եղիր քու վերակացութիւնովդ, խաղաղութեան մէջ պահելով զանոնք. և առաջնորդէ մեզ կրկին անգամ խաղաղութիւնով, ուրախութիւնով հասնիլ մեր իւրաքանչիւր բնակարանները՝ Քրիստոս Յիսուս մեր Տէրոջմով. որում կը վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Օրհնեալ Տէր մեր Յիսուս  
Քրիստոս. Ամէն:

Հայր մեր որ յերկինս:





Bouasse-Lebe'

Paris.

ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ  
 ՀԱՍՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ  
 ԵՐՐՈՐԳ (ՃԱՆՈՒ) ԺԱՄՈՒՆ

ՈՐ ԿԱՏԱՐԻ Ի ԳԷՄՍ  
 ԻՉՄԱՆ ՀՈԳԻՈՅԷ ՍՐԲՈՑ  
 ԵՒ Ի ԳԷՄՍ ՆԱԽԱՄՈՐՆ ՃԱՆԿՎՄԱՆ  
 ԵՒ ԱՂԱՏՈՒԹԵԱՆՆ ԳՐԻՍՏԱՍՈՒԻ

(Այս Ժամերգութիւնը Մեծ Պահայ  
 Ճաշու ժաման ամբողջապէս, իսկ առ  
 հասարակ պահոց օրեր առանց յիշ  
 Բարոյնի և Աղջնից կը կարդացուին :  
 Աղջնաւերջ կընան առանձին կարգաւ,  
 ճանաանոր Ապաշխարութեան օրեր :)

Օրհնեալ Հոգիդ Սուրբ Աստուած ճշմարիտ. Ամէն :

ՍԱԳՄՈՍ Վ.

(Ա.Ճ.) ՈՂՈՐՄԵԱ՛ ինձ, Աստուած,  
 քառ մեծի ողորմութեան քում,

լատ բազում զթութեան քում  
քաւես՝ զանօրէնութիւնս իմ՝

Ողորմէ ինձ ո՛վ Աստուած, բու մեծ  
ողորմութեանդ համեմատ, և բու առատ  
գթութեանդ համեմատ իմ անօրէնութիւն-  
ներուս քաւութիւն շնորհէ:

Ս. առեւել լուս՝ զիս յանօրէ-  
նութենէ իմմէ, և ՚ի մեղաց  
իմոց սուրբ արս՝ զիս:

Բոլորովին լուս իմ անօրէնութիւն-  
ներս, և իմ մեղքերս սրբէ զիս:

Զանօրէնութիւնս իմ ես ին-  
ձէն գիտեմ, և մեղք իմ ա-  
ռաջի իմ են յամենայն ժամ:

Իմ անօրէնութիւններս ես ինձէն  
գիտեմ, և իմ մեղքերս ամեն ժամանակ  
իմ առջեւ են,

Բեզ միայն մեղայ, Տէր, և  
չար առաջի քո արարի:

Քեզ, միայն քեզ զէմ մեղանչեցի, ո՛վ  
Տէր, և բու առջեւ չարութիւն գործեցի:

Որպէս արդար եղիցիս ՚ի բանս  
քո, և յաղթող ի դատել գաս:

Որպէս զի արդար ըլլաս բու խօսքե-  
րուդ մէջ, և յաղթող ըլլաս բու դատա-  
տանիդ մէջ:

Անօրէնութեամբ յղացաւ և  
՚ի մեղս ծնաւ զիս մայր իմ:

Անօրէնութիւնով յղացաւ, և մեղքով  
ծնաւ զիս իմ մայրս,

Դու, Տէր, զճշմարտութիւն  
սիրեցեր, զանյայտս և զծած-  
կեալս իմաստութեամբ քով  
յայտնեցեր ինձ:

Դու ո՛վ Տէր, ճշմարտութիւնը սիրե-  
ցիր, և չի յայտնուած ու ծածուկ բանե-  
րը՝ բու իմաստութիւնովդ յայտնեցիր ինձ:

Յօդեան յիս մշտիաւ և սուրբ  
եղէց, լուս՝ և քան զձիւն  
սպիտակ եղէց:

Յօդէ իմ վրայ մշտիկով (1), որ մաքուր  
ըլլամ, լուս զիս, որ ձիւնէ ստելի  
ձերմակ ըլլամ:

(1) Զ--Դ ԵՐԵՄԻԱՆ Կ-ԲԵՒԻՆԻ



Լսելի արա ինձ, Տէր, զցըն-  
ծութիւն եւ զուրախութիւն, եւ  
ցնծասցեն սոկերք իմ տառապ-  
եալք:

Ո՛վ Տէր, ցնծութիւն եւ ուրախութիւն  
լսել տուր ինձ, որ ցնծան իմ չարչար-  
ուած սոկորներս:

Դարձո՛վ զերեսս քո ՚ի մեղաց  
իմոց, եւ զամենայն անօրէնու-  
թիւնս իմ քաւեա՛յ յինչն:

Դարձու՛ր քու երեսդ իմ մեղքերէս, եւ իմ  
անօրէնութիւններս քաւէ իմ վրայէս:

Սիրտ սուրբ հաստատեա՛յ յիս,  
Աստուած, եւ հօղի ուղիդ նո-  
րողեա՛ ՚ի փորի իմում:

Ո՛վ Աստուած, իմ մէջս մաքուր սիրտ  
հաստատէ, եւ իմ փորիս մէջ (իմ ներսս)  
ուղիդ հօղի նորոգէ:

Մի՛ ընկենուր զիս, Տէր, յե-  
րեսաց քոց, եւ զՀոգի քո Սուրբ  
մի՛ հաներ յինչն:

Ո՛վ Տէր, զիս քու երեսդ մի ձգեր, եւ  
քու Սուրբ Հոգիդ ինձմէ մի հաներ:

Տու՛ր ինձ ցնծութիւն փրկու-  
թեան քոյ, եւ Հոգւով պեաու-  
թեան քոյ հաստատեա՛ զիս:

Տու՛ր ինձ քու փրկութեանդ ուրախու-  
թիւնը, ու պետական Հոգիովդ հաստա-  
տէ զիս:

Ուսուցից անօրինաց զճանա-  
պարհս քո, եւ ամբարիշտք առ  
բեզ զարձցին:

Անօրէններուն պիտի սորվեցունեմ քու  
ճա՛բներդ, եւ ամբարիշտները բեզ պի-  
տի դառնան:

Փրկեա՛ զիս յարենէ, Աստ-  
ուած, Աստուած փրկութեան  
իմոյ. ցնծասցէ՛ լեզու իմ յար-  
զարութեան քում:

Ո՛վ Աստուած, իմ փրկութեանս Աստ-  
ուածը, փրկէ զիս արիւննեղութենէ, որ  
ցնծալով խօսի լեզուս քու արդարու-  
թեանդ վրայ:

Տէր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ՛ զօրհնութիւնս ք:

Ո՛վ Տէր, եթէ իմ շրթունքս բանաս, իմ բերանս օրհնութիւններ պիտի երգէ բեզ:

Թէ կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք, բայց դո՛ւ ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար:

Թէ որ կամենայիր, զոհի պատարագներ կը մատուցանէինք բեզ. բայց դուն և ոչ իսկ ողջակէզներուն հաճեցար:

Պատարագ Աստուծոյ՝ հոգի խոնարհ, զսիրտ սուրբ եւ զհոգի խոնարհ՝ Աստուած ոչ արհամարհէ:

Աստուծոյ հաճելի պատարագը (ընծայն) խոնարհ հոգին է, մաքուր սիրան ու խոնարհ հոգին՝ Աստուած չ'արհամարհեր, (չ'անարգեր):

Բարի արա՛, Տէր, կամօք քովք Սիրովելի, եւ շինեսցին պարիսպքն Երուսաղէմի:

Քու կամբովդ բարիք ըրէ Սիօնին ո՛վ Տէր, և Թող շինուին Երուսաղէմի պարիսպները:

Յայնժամ հաճեցիս ընդ պատարագս արդարութեան, յորժամ ուխտից պատարագս հանցին՝ ՚ի սեղան քօ զուարակս:

Այն ատեն պիտի հաւնիս արդարութեան պատարագներուն, երբ ուխտի պատարագներ և զուարակներ մատուցանեն սեղանիդ վրայ:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:



ԵՐԳ ԵՐՐՈՐԴԻ ԺԱՄՈՒ ԱԻՈՒՐՆ  
ՈՐ ՈՂՈՐԺԵՆՆ ՎԵՐՅԸ ԿՐՈՒԻ ԵՆ  
**Ս. ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱՆԻ**  
Հայրապետն մեր յօրինած է:

(Ա. 4.) Գ. Կ.

Աւրհնեմք ըզբեզ, Հայր անըսկիզբն  
Էից Էակ 'ի յանգոյից,  
Բարձեր ձեռօք 'նիւծ 'ի հողոյ,  
Եւ ստեղծեր մարդ ի պատկեր քո.  
Դըլուինն ոտից խոնարհեցաւ,  
Ձի զպատուիրան քո մոռացաւ,  
Դարձեալ ամեմք քոտ անառակին  
Թէ Հայր, մեղայ քեզ ի յերկինս:  
Երկնաւորաց անքննելի  
Եղեր մարդկան տեսանելի,  
Ձգեցար պատկեր հողեղինի  
Պատկերըդ Հօր անփոխելի.  
Էլեր յերրորդ ժամ 'ի խաչին  
Վասն Աղամայ նախաստեղծին.  
Ընդ աւազակին բուժ խաչակցին  
Արժանացո՞ զմեզ զրախտին:

Թագաւոր Թագաւորաց  
Առատարուզիս Հոգի շնորհաց,  
Ժողովելոցն 'ի վերնատան  
Առաքելոցն Երկոտասան՝  
Ի հրոյ լեզուս երեւեցար,  
Յոգիս նոցա վերանըստար.  
Հնր յանունն քո ժողովելոցս,  
Է՛ջ և առ մեզ յերրորդ ժամուս:

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

Յամենայն ժամու աղաչանք  
Իմ այս են. 'ի մեղաց իմոց սուրբ  
արա զիս, Տէր, և յօտարէն պահեա՛  
ղծառայս քո մարդասէր Տէր:  
Եւ եւս խաղաղութեան զՏէր ա.  
Օրհնութիւն եւ փառք Հօր եւ .

ՔԱՐՈՉ ՄԵԾԻ ՊՍՅՈՅ

ի Յովիաննու Մանգակաւուայ  
Հայոց Հայրապետէ աւացեալ

(Ա. 4.) Միարան ամենեքեան  
զոճացարուք զմարդասիրէն Ա.ս.  
առւծոյ եւ զՓրկչէն մերմէ Յի-

սուսէ Քրիստոսէ, որ ազատեաց  
զազգս մարդկան ՚ի դատապար-  
տութենէ անիծիցն. եւ եբարձ  
զմեղս աշխարհի ՚ի ժամուս յայս-  
միկ խաչիւն իւրով. եւ շնորհ-  
եաց առատապէս զպարգեսս  
Հոգւոյն Սրբոյ երանելի Առա-  
քելոցն:

Խնդրեացուք հաւատով՝ զի  
զմեզ զամենեւեան՝ արասցէ՝  
հազորդս մեծամեծաց եւ աս-  
տուածային բարեացն այնոցիկ,  
աղօթիւք եւ բարեխօսութեամբ  
ամենայն սրբոց, որք աստ եւ  
ընդ ամենայն աիեզերս:

Որպէս զի անարատ վարուք,  
եւ ճշմարիտ առաքինութեամբ  
կացեալք ըստ կամոց Նորա  
յայսմ աշխարհիս, զմասն եւ  
զվիճակ ժառանգութեան ըն-  
կալցուք ընդ ամենայն սուրբս  
Նորա, զքնակութիւն յաւիտե-

նական եւ երկնային խորանացն,  
զոր խոստացաւ սիրելեաց իւրոց  
ճշմարիտն Աստուած Յիսուս  
Քրիստոս. Տէր մեր կեցո՛ւ եւ ող .

Զժամս եւ զտաջակայ օրս  
խաղաղութեամբ անցուցանել  
հաւատով ՚ի Տեառնէ խնդ .

Զհրեշտակ խաղաղութեան.

Զքաւութիւն եւ զթողութիւն.

Զսրբոյ. Եւ եւո. Զանձինս . Ողոր .

#### ԹԱՐԿՄԱՆՈՒԹԻՒՆ ԲԱՐՈՋԻՆ

Ամենքս միարան գոհուծիւն տամք  
մարդասէր Աստուծոյ եւ մեր Փրկիչ Յի-  
սուս Քրիստոսի:

Որ մարդկային ազգը ազատեց (Սղոմայ)  
անէծքի դատապարտութենէն՝ եւ այս ժա-  
մուս իւր խաչով աշխարհի մեղքերը վեր-  
ցուց, եւ Հոգւոյն Սրբոյ շնորհքը առատա-  
պէս պարգեւեց երանելի Առաքեալներուն:

Խնդրեմք հաւատով որ մեզ ամենքս  
մասնակից ընէ այն ամենամեծ եւ Աստ-  
ուածային բարութեանց, ամեն Սրբոց ա-

դօժքովն ու բարեխօսութիւնով, որք այս  
տեղ և բոլոր աշխարհի մէջ կը գանուին:

Որպէս զի իւր կամքին համեմատ՝ ա-  
նարատ վարքով և ճշմարիտ առաքինու-  
թիւնով ապրելով այս աշխարհի մէջ, ա-  
նոր ամեն սուրբերուն հետ բաժին և վի-  
ճակ ունենամք ժառանգելու յաւիտենա-  
կան ու երկնային խորաններուն բնակու-  
թիւնը, զոր խոստացաւ իւր սիրելիներ-  
ունն ճշմարիտ Աստուածն Յիսուս Քրիս-  
տոս մեր Տէրը. Կեցօ՛ք և ողորմէ՛:

## Ա Ղ Օ Յ Ք

(Ա.չ.) Որ ի Քրոյմբէական և  
յանպատոււմ հանգուցեալ ես յա-  
թոռ, և այցելու ես միշտ ա-  
բարածոց քոց: Որ և ՚ի ժամուս  
յայամիկ հեղեր յերանելի Առաք-  
եալան զշնորհս Հոգւոյդ Սրբոյ  
Դու, Տէր, յառաջակայ ժամուս՝  
և յաւէտ մինչեւ ՚ի կենցաղոյս  
սուարտումն՝ ապաւորեալ միա-  
ցո՛ զմեզ ընդ ամենայն բարե-

գործու թեան յորդորմունս, և  
խոստացելոց բարեացդ հաղորդս  
լինել զմեզ արժանի արա, Տէր  
մեր և Փրկիչ Յիսուս Քրիստոս:  
Որ ես օրհնեալ ընդ Հօր և ընդ  
Սրբոյ Հոգւոյդ. Այժմ և միշտ  
և յաւիտենանս. Ամէն:

## ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԱՂՕՅՔԻՆ

(Ո՛վ Յիսուս,) որ Քերոքէներու ան-  
պատմելի ԱՅոռին վրայ կը հանգչիս, և  
միշտ այցելութիւն կընես (իմամք կը տա-  
նիս) բու արարածներուդ, որ և այս ժա-  
մուս մէջ՝ երանելի Առաքեալներուն վրայ  
Թափեցիր բու Սուրբ Հոգիիդ շնորհքը.  
Դու ո՛վ Տէր, այս առաջիկայ ժամէս մին-  
չեւ մեր կեանքին վերջը՝ մեր մտքին մէջ  
տպաւորէ որ միշտ յորդորուիմք (շանամք)  
բարեգործութեան հետեւիլ. և արժանի  
լրէ զմեզ խոստացած բարիքներուդ մաս-  
նակից ըլլալ, ո՛վ Տէր մեր և փրկիչ Յի-  
սուս Քրիստոս, որ օրհնեալ ևս Հօրը և  
Սուրբ Հոգիիդ հետ. հիմա և միշտ:

Խաղաղութիւն ամենեցուն  
Ասուծոյ երկրպագեսցուք:

**Որ էիր յառաջ քան զյաւիտեանս, Բանդ Աստուած, էակից Հօր եւ արարչակից Սուրբ Հոգւոյ:** Որ եւ զնախաստեղծին պատու իրանազանցութիւն պղտղոյն ճաշակման՝ նշանաւ ամենայաղթ Խաչիւ քո՝ ՚ի ժամուս յայսմիկ ենթապրեալ՝ ՚ի կենդանութիւն փոխեցեր. եւ զանօրէնութիւնս մեր՝ ՚ի նմա բեւեռեալ՝ կեանք անապական եւ նորոգումն կենաց յուսացելոց՝ ՚ի քեզ խոստացար: Որոց մասնաւորիլ եւ զմեզ արժանի արա, **Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ ես օրհնեալ ընդ Հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյ, այժմ եւ.**

ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ո՛վ Բանդ Աստուած, Իսկից Հօր՝ եւ Արարչակից Ս. Հոգիին, որ յաւիտենական

ժամանակներէ առաջ էիր, եւ որ, նախաստեղծին Ազամայ՝ արգիլեալ պտուղը ճաշակելով ըրած պատուիրազանցութիւնը ( անհնազանդութիւնը, ) այս ժամուս քու ամենայաղթ Խաչովդ մէկ կողմ ձգելով, մեր նոյն մեղքով ժառանգած մեռելութիւնը՝ կենդանութեան փոխեցիր. եւ մեր անօրէնութիւններն նոյն Խաչիդ վըրայ բեւեռելով ( զամելով, ) անապական կեանք՝ եւ կենաց նորոգութիւն խոստացար քեզ յուսացոյներուն:

Կ'աղաչեմք ո՛վ **Տէր** մեր Յիսուս Քրիստոս, արժանի ըրէ եւ զմեզ մամականից ըլլալ այդ շնորհաց, որ օրհնեալ ես Հօր եւ Սուրբ Հոգիիդ հետ. հիմա եւ միշտ եւ յաւիտեանս. Ամէն:

ՍԱՂՄՈՍ

(Ս. Կ.) **Տէր Աստուած օրհնեալ, օրհնեալ է Տէր զօրհանապազ:**  
Աստուած մեր, Աստուած կենարար, եւ նա փրկեսցէ զմեզ:  
**Տէր Աստուած օրհնեալ, օրհ-**

նեան է Տէր զօրհանապազ, առաջնորդեսցէ մեզ Աստուած փրկիչ մեր:

## Ք Ա Ր Ո Ձ

(Ա. 2.) Խնորհեսցուք հաւատով 'ի Տեառնէ վասն ճանապարհօրդաց՝ հարց եւ եղբարց մերոց, որք ընդ ծով եւ ընդ ցամաք գնասցեն. որպէս զի առաջնորդեսցէ նոցա, խաղաղութեամբ պահեսցէ, եւ տարեալ հասուցէ յիւրաքանչիւր տեղիս Տէր Աստուած մեր:

Վասն զի նա ինքն է առաջնորդ կենաց, եւ յոյս փրկութեան. որ յաջողէ ծառայից իւրոց խաղաղութեամբ հասանիլ 'ի նուաճանգիսան կենաց եւ փրկութեանս Ամենակալ Տէր Աստուած մեր. Կեցո եւ ողորմես:

## ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՔԱՐՈՋԻՆ

Հաւատքով ինդրեմք Տէրոյմէ մեր հայրերուն եւ եղբայրներուն համար, որ ծովով ու ցամաքով ճանբորդութիւն կ'ընեն. որպէս զի առաջնորդէ անոնց մեր Տէր Աստուածը, եւ խաղաղութիւնով պահէ զանոնք, եւ տանի հասցունէ ամեն մէկը իրենց տեղերը: Վասնզի ինքն է մեր կեանքին առաջնորդը եւ փրկութեան յոյսը, որ կը յաջողէ իր ծառաներուն խաղաղութիւնով հասնիլ կենաց ու փրկութեան նաւահանգիստը. Ամենակալ Տէր Աստուած մեր. Կեցո եւ ողորմես:

## Ա Ղ Օ Թ Ք

(Ա. 2.) Առաջնորդեա՛ մեզ, Տէր Աստուած մեր, եւ ուսո՛ մեզ զընալ 'ի ճանապարհս քո արդարութեան. պահեա՛ 'ի խաղաղութեան զկեանս մեր, եւ բզգնադս 'ի հաճոյս քո. Ժամանեցո՛ զհոգեւոր եւ զմարմնաւոր

ընթացս ծառայից քոյ անարատ ճանապարհաւ յաւիտենական 'ի կեանսդ . Հնորձօք Միածնի քոյ Տեանն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի , որ եղեւ մեզ առաջնորդ կենաց եւ յոյս փրկութեան : Ընդ որում օրհնեալ ես Հայր ամենակալ , հանդերձ կենդանարար եւ ազատիչ Սուրբ Հոգւովդ . այժմ եւ միշտ եւ :

### ՔԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԱՂՕՅՔԻՆ

Ո՛վ Տէր Աստուած մեր , առաջնորդէ մեզ , եւ սովրեցնու մեզ բու արդարութեան ճանապարհիդ մէջ քաշելու խաղաղութեան մէջ պահէ մեր կեանքը , եւ մեր գնացքը (վարքը) բու հասած կերպով Թող լինի : Բու ծառաներուդ հոգեւոր եւ մարմնաւոր ընծացքը՝ բու անարատ ճանապարհովդ ղէպ 'ի յաւիտենական կեանքիդ հասցնու , բու Միածին Որդւորդ մեր Տէր եւ Փրկիչ

Յիսուս Քրիստոսի Հնորհիւ , որ եղաւ մեզ կենաց առաջնորդ եւ փրկութեան յոյս . որոյ նետ օրհնեալ ես , ո՛վ Հայր ամենակալ , կենդանարար եւ ազատիչ Սուրբ Հոգիովդ . այժմ եւ միշտ եւ յաւիտենան Ամէն :

Յիշեա՛ Տէր զպաշտօն . եւն .  
Բարերար եւ բազումս . եւն .

Փ Ո Ւ

(Ա. 2.) Տէր հովուեսցէ զիս , ՔրԸ՝  
Ողորմութեամբ քով .  
(Տե՛ս երես 645-7.)

Ք Ա Ր Ո Ձ

Եւ եւս խաղաղութեան զՏէր .

(Ա. 4.) Գոհաբանելով ազաչեսցուք զբարերար Հոգին Աստուած , եւ խնդրեսցուք զողորմութիւն 'ի նմանէ , զի անցուցէ 'ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոյ՝ բարերարութեամբն իւրով : Ամենակալ .



## Ա Ղ Օ Յ Ք

(Աշխ.) Խաղաղութեամբ քով Հոգի սուրբ Աստուած ճշմարիտ որ 'ի վեր է քան զամենայն միտս եւ զխորհուրդս, մխիթարեալ զանձինս ծառայից քոյ՝ ընդունելով զաղաչանս մեր. անցո՛ 'ի մէջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութեամբ քով: Ներեալ եւ յո՛ւր մեզ, քաւեալ եւ թո՛ղ զմեզս մեր. արժանաւորեալ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ Որդւոյն Միածնի. Այժմ եւ միշտ եւ յախտեանս.

## ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԱՂՕՅՔԻՆ

Ո՛վ սուրբ Հոգի Աստուած ճշմարիտ՝ բուխաղաղութիւնովդ որ մեր ամենուն մտքն ու խորհուրդներէն շատ վեր է, մխիթարէ բուծաւաներուդ անձերը՝ ընդունելով մեր աղաչանքը. բուբարերա-

բութիւնովդ անցու մեր վրայէ՝ մեր մեղքերը պատժելու համար ունեցած բարկութիւնդ: Ներէ եւ լտէ մեզ. քաւէ ու թողութիւն տո՛ր մեր մեղքերուն. արժանի ըրէ գոհանալով փառաւորել զքեզ Հօրը եւ Միածին Որդւոյն հետ. այժմ եւ:

Օրհնեալ Տէր մեր Յիսուս  
Քրիստոս. Ամէն:

Հայր մեր որ յերկինս:



ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ  
ՀԱՍԱՐԱԿԱՅ ԱՂՕՐԻՑ  
ՎԵՑԵՐՈՐԴԻ ԺԱՄՈՒՆ

ՈՐ ԿՈՏԱՐԻ

Ի ԴԷՄՍ ՀՕՐ ԱՍՏՈՒԾՈՅ

ԱՅՆ ԵՒ Ի ԳԷՄՍ ՉԱՐՉԱՐԱՆԱՅ ԵՒ ԵԱ-  
ՉԵՂՈՒԹԵԱՆՆ ՈՐԳԻՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ



Օրհնեալ Հա՛յր Սուրբ Աստ-  
ուած ճշմարիտ . Ամէն :

ՍՍԱՄՈՍ Յ.

(Աշ.) ՈՂՈՐՄԵԱ՛ ինձ , Աս-  
տուած , ըստ մեծի սղորմութեան  
քում , ըստ բազում գթութեան  
քում քաւեալ զանօրէնութիւնս իմ :

(Տե՛ս երես 655)

ԵՐԳ ՎԵՑԵՐՈՐԴԻ ԺԱՄՈՒՆ

(Աշ.) Խաւարեցաւ լոյսն արեւուն  
ի վեցերորդ ժամ ուրբանուն .

Ծանոյց թէ լոյսն արարչական  
Նըսեմացոյց զլոյսն եղական .  
Կախեալ ըզբեզ մերկ 'ի Խաչին  
Քողով ստուերաւնն ծածկէին .  
Հերբնա՛ 'ի մէնջ ըզ ծանրութիւն  
Նըրջող գիւին միջօրէի :  
Չանձրութեան մարտ այսոյն չարի  
Որ յայս ժամուս պատերազմի ,  
Ղողեալ յոգւոց մեր հերքեցի  
Քոյ նըշանաւ սըրբոյ Խաչի .  
Ճըշմարտութեան բո ծառագայթ  
Չառ 'ի յերկնից անկեալ փայլակն՝  
Մերժեալ 'ի մէնջ հաւածեցէ  
Եւ զմեզ լուսով բով վառեցէ ,  
Յայս միջօրեայ տուընջեան ժամուս  
Վայեղական աչաց մարմնոյս ,  
Նեախբ զաղանեաց մի խոցեցուր  
ի խաւարէն որ 'ի ծածուկ .  
Նուրջանակի բանակեցին  
Բզմեօք բանակրբ Հրեշտակաց ,  
Որբ պարակից մեզ լինելով ,  
Ըզբեզ ընդ Հօր փառատրելով :

## Մ Ա Ղ Ք Ա Ն Ք

**Յ**ամենայն ժամու աղաչանք իմ այս են՝ 'ի մեղաց իմոց սուրբ արա զիս Տէր, եւ յօտարէն պահեա՛ զծառայս քո, մարդասէր Տէր:

Եւ եւս խաղաղութեան զՏէր.  
Օրհնութիւն եւ փառք Հօր եւ.

## ՔԱՐՈՁ ՄԵՄԻ ՊԱՆՈՅՆ

(Ա. 24.) **Ա**րթուն մտօք եւ անգրօս խորհրդով՝ կացցո՛ւք միարան յաղօթս սոռձի Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի: Հաւատով խնդրեսցո՛ւք 'ի նըմանէ զՀրեշտակ խաղաղութեան պահապան անձանց մերոյ. որ եկեալ բանակեսցէ շուրջ զմեօք, եւ աներկիւղ պահեսցէ զմեզ յամենայն հրեղէն նետից սատանայի, որ թռչի

'ի տուէ. յիրաց խաւարային գնացից՝ 'ի զայթակղութենէ զիւին, 'ի հասարակ աւուր: Յորմէ զգուշութեամբ պահելով՝ աղօթիւք եւ բարեխօսութեամբ ամենայն սրբոց, շնորհեսցէ՛ մեզ մարդասէրն Աստուած կեալ առաքինութեամբ 'ի փրկութիւն անձանց մերոց, 'ի պատիւ եւ 'ի փառս կենդանացուցիչ անուան իւրոյ:

Յոյս հաղորդութեան ընկալցո՛ւք 'ի յայտնութեան միածնի Որդւոյն Աստուծոյ. կերպարանակից առնել զմարմին խոնարհութեան մերոյ՝ ըստ նմանութեան մարմնոյ փառաց իւրոց. վասն զի զայս խոստացաւ սիրելեաց իւրոց ճշմարիտն Աստուած Յիսուս Քրիստոս Տէր մեր. կեցո՛ւ եւ ողորմեա՛:

Զժամս եւ զառաջակայ օրս

խաղաղութեամբ անցուցանել  
հաւատով 'ի Տեառնէ խնդր .  
Չհրեշտակ խաղաղութեան .  
Չքաւութիւն եւ զթողութ .  
Չարքայ խաչին մեծ եւ կարո .  
եւ եւս միաբան վասն ճշմա .  
Չանձինս մեր . Ողորմեաց մեզ .

### ՔԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՔԱՐՈՉԻՆ

Արժուն միաբով և անչիոմ խորհուր-  
դով՝ միաբան աղօթքի կենամք մեր Տէր  
և Փրկիչ Յիսուս Քրիստոսի առջև :

Հաւատով խնդրեմք Անորմէ՝ որ խա-  
ղաղութեան հրեշտակը մեր անձերուն  
պահապան շնորհէ . որպէս զի գնյ և տե-  
ղաւորուի մեր շուրջը . և աներկիւզ (ան-  
վախ) պահէ զմեզ այս օրհասարակի ժա-  
մուս մէջ , սատանային հրեղէն (կրակէ)  
'նետերէն' որ ցերեկուրնէ կը թոջի . և այն  
տմեն խաւարային ընծացք ունեցող բա-  
'ներէն' ու զիւական գայթակղութենէն .  
Յորմէ այսինքն՝ սատանայական մեղաց

'նետերէն զգուշութիւնով պահելով զմեզ՝  
տմեն սրբոց աղօթքովն ու բարեխօսու-  
թիւնով, շնորհէ մեզ մարդասէրն Աստ-  
ուած, առաքինութիւնով ապրիլ մեր ան-  
ձերուն փրկութեանը համար, և իւր կեն-  
դանութիւն տուող Անուան պատիւին և  
փառքին համար : Յոյս ունենամք մաս-  
նակից զանուէլու Աստուծոյ Միածին  
Որդոյն յայնուած ատենին, որ մեր  
խոնարհութեան մարմինը՝ իւր փառաւոր  
մարմնոյն նմանութեանը կերպարանակից  
պիտի ընէ . վասն զի այսպէս խոստացաւ  
իւր սիրելիներուն՝ մեր Տէր Յիսուս  
Քրիստոս ճշմարիտ Աստուածը :

### Ա Ղ Օ Թ Ք

(Ա.-Գ.) Չգեցո՛ մեզ, Տէ՛ր Աս-  
տուած մեր, զէն արդարութեան,  
չօրաւոր եւ յաղթող լինիլ ընդ  
դէմ սատանայական պատե-  
րազմաց . եւ զամենայն հրեղէն  
նետո նորա շիջուցանելով՝ ան-

կասկած լիցուք յիրաց խաւարային գնացից՝ ՚ի գայթակղութենէ զիւրն ՚ի հասարակ աւուր։ Եւ զգառտացեալք վախելչական տուընջեամբս՝ առաքինութեամբ կացցուք ՚ի փրկութիւն անձանց մերոց։ ՚ի պատիւ եւ ՚ի փառս սրբոյ Երրորդութեանդ, այժմ եւ միշտ եւ։

### ՅԱՐԳՍԱՆՈՒԹԻՒՆ ԱՂՅՔԻՆ

Ո՛վ Տէր Աստուած մեր, հագուեցու զմեզ արդարութեան զէնքով, որ զօրաւոր եւ յաղթող ըլլամք սատանայական պատերազմներու դէմ, եւ անոր ամեն կրակէ նետերը մարելով՝ անկասկած (սպանով) ըլլամք խաւարային ընծացքունեցող բաներէ եւ զիւական գայթակղութենէ՝ այս օրհասրակիս մէջ (Եփե. 2. 11. 17.) Եւ մեր վայելած այս ցերեկուան մէջ եւս զգառտանալով (խելքերնիս զլուխնիս բերելով), առաքինութիւնով կենամք մեր ան-

ձերուն փրկութեանը եւ Սուրբ Երրորդութեանդ պատուոյն ու փառքին համար, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. Ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն  
Ասուծոյ երկրպագեսցուր։

**Ե**րկնաւոր խաղաղութեամբքով պարսպեալ սղահեա՛ զանձինս մեր, Տէ՛ր զօրութեանց։ Վասն զի զո՛ւ ես Աստուած խաղաղութեան, եւ բաց ՚ի քէն զայլ ոք ո՛չ գիտեմք. եւ զանուն քո ամենազօր՝ կարդամք յօգնականութիւն անձանց մերոց։ Նայեա՛ յերկրպագութիւնս մեր, եւ ուսո՛ մեզ առնել զարդարութիւն ճշմարտութեան։ Եւ գո՛ւութեամբ փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

## ՔԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Քու երկնաւոր խաղաղութիւնովդ  
ամուր պահէ մեր անձերը, ո՞վ Տէր զօրու-  
թեանց, վասնզի դուն ես խաղաղութեան  
Աստուածը, եւ քննէ զատ ուրիշ մէկը  
չեմք ճանչնար. և քու ամենագօր Անունդ  
մեր անձերուն օգնութիւն կը կանչեմք:  
Նայէ մեր երկրպագութեան վրայ. և սոր-  
վեցու մեզ նշմարիտ արդարութիւնով  
գործել: Եւ գոհութիւնով փառաւորել  
Հայրը և Որդին և Սուրբ Հոգիդ. այժմ և.

## Ս Ա Ղ Մ Ո Ս

**Տէր,** մի՛ յիշեր զմեզս մեր  
զառաջինս, վաղվաղեացէ՛ առ  
մեզ ողորմութիւն քո, **Տէ՛ր,** զի  
աղքատացաք յոյժ:

Օղնեա՛ մեզ, Աստուած Փրկիչ  
մեր, վասն փառաց անուան քոյ:  
**Տէ՛ր,** փրկեա՛ զմեզ եւ քաւ-  
եա՛ զմեզս մեր վասն անուան քոյ:

## Ք Ա Ր Ո Ջ

(Ա. Գ.) **Վասն** հիւանդաց եւ ամե-  
նայն վշտացելոց՝ աղաչեսցուք  
զՓրկիչն մեր Քրիստոս, զի ո-  
ղորմեսցի՛ ըստ մածի ողորմու-  
թեան իւրում. եւ բժշկեսցէ՛  
զախաս եւ զհիւանդութիւնս  
հոգւոց եւ մարմնոց ծառայից  
իւրոց, եւ կատարեալ առող-  
ջութեամբ հասուցէ զամենեւ-  
եան ՚ի մշտնջենաւոր եւ յա-  
նախա՛ կեանս: Որ առաքեցաւ  
՚ի Հօրէ ՚ի բժշկութիւնս ազգի  
մարդկան՝ Միածին Որդին Աս-  
տուծոյ Տէր մեր եւ Փրկիչ Յի-  
սուս Քրիստոս. կեցո՛ եւ ողոր.

## Ա Ղ Օ Յ Ք

(Ա. Գ.) **Փարատեա՛** զցաւս եւ բժըշ-  
կեա՛ զհիւանդութիւնս ՚ի ժողո-  
վըրդենէ քումմէ, **Տէ՛ր** Աստուած  
մեր, եւ շնորհեա՛ ամենեցուն

զկատարեալ առողջութիւն նը-  
շանաւ ամենայաղթ խաչիւ քով.  
որով բարձեր զտկարութիւն  
ազգի մարգկան, եւ դատապար-  
տեցեր զթշնամին կենաց եւ  
փրկութեան մերոյ:

Դո՛ւ ես կեանք մեր եւ փր-  
կութիւն, բարերար եւ բազում-  
ողորմ Աստուած. որ միայն  
կարող ես թողուլ զմեզս եւ  
մերժել զախտս եւ զհիւանդու-  
թիւնս 'ի մէնջ, որում յայտնի  
են պէտք կարեաց մերոց: Պար-  
գեւիչդ բարեաց՝ պարգեւեա՛  
ղառատ ողորմութիւն քո՝ 'ի վե-  
րայ արարածոց քոց՝ ըստ իւրա-  
քանչիւր պիտոյից. յորոց հա-  
նապաղ փառաւորեալ գովի ա-  
մենասուրբ Երորդութիւնդ. Այժմ  
եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտե.

### ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԱՂՅՔԻՆ

Տէր Աստուած մեր, փարատէ ցաւերն  
ու բժշկէ հիւանդութիւնները քու ժողո-  
վրդեանդ վրայէ, և քու ամենայաղթ Խաչիդ  
'նշանով՝ կատարեալ առողջութիւն շնորհէ  
ամենուն. որով (քու խաչովդ) մարդկային  
ազգի տկարութիւնը վերուցիր, ու մեր  
կեանքին ու փրկութեան թշնամին դատա-  
պարտեցիր: Դո՛ւ ես մեր կեանքն ու փր-  
կութիւնը, ո՛վ բարերար և բազումողորմ  
Աստուած, որ միմիայն դուն կարող ես մեր  
մեղքերուն թողութիւն տալ, և ախտերն  
ու հիւանդութիւնները մեր վրայէ հեռա-  
ցունել, և քեզ միայն յայտնի են մեր հար-  
կաւոր պէտքերը: Ո՛վ պարգեւիչ բարեաց,  
պարգեւէ քու առատ ողորմութիւնդ՝ քու  
արարածներուդ վրայ, իւրաքանչիւրին  
պէտքին համեմատ. յորոց միշտ փառա-  
ւորութեով կը գովուի ամենասուրբ Երորդ-  
ութիւնդ. այժմ եւ միշտ.

Յիշեա՛ Տէր զպաշտօն. եւն.  
Բարերար եւ բազում. եւն.

## Փոխ սարսուտ ե.

(Աշ.) Երանի որ խորհի զաղբասն եւ զճնանին, յաւուր չարի փրկէ զնա Տէր:

Տէր փրկէ զնա եւ կեցուցանէ, երանելի առնէ զնա 'ի վերայ երկրի, եւ ոչ մասնէ զնա 'ի ձեռս Թշնամեաց իւրոց:

Տէր օգնական է նմա 'ի մահիճս ցաւոց իւրոց, զամենայն անկողինս նորա դարձուցանէ 'ի հիւանդութենէ նորա:

Ես ասացի, Տէր, ողորմեա՛ ինձ. բըժշկեա՛ զանձն իմ, ես մեղայ՛ քեզ:

Սշ.Ղ. Որ բնակեալն է յօգնութիւն Բարձրելոյն, ընդ հովանեաւ Ասուծոյ յերկինս հանգիցէ:

Ասացէ՛ Տեառն, ընդունող իմ ես, ապաւէն իմ Ասուած, եւ ես յուսամ 'ի նա:

Նա փրկեացէ՛ զիս յորոգայթէ՛ որսողին եւ 'ի բանից՛ 'ի խռովութենէ:

Ի Թիկնամէջս իւր ընկալցի զքեզ. 'ի հովանի Թեւոց նորա յուսացիս: Որպէս զէն շուրջ եղիցի զքեւ ճըժմարտութիւն նորա:

Ոչ երկիցես դու յերկիւղէ՛ զիշերի, եւ ոչ 'ի նեճէ՛ որ Թռչի՛ 'ի տուէ:

Յիրէ՛ որ շրջի՛ ի խաւարի, 'ի զայթակղութենէ՛ դիւին՛ 'ի հասարակ աուուր:

Անկցին՛ 'ի կողմանէ՛ քումմէ՛ հազարք եւ քիւրք ընդ աջմէ՛ քումմէ՛, առ քեզ ինչ ոչ մերձեցին:

Բայց միայն աչօք քովք հայեացիս դու, եւ զհասուցումն մեղաւորաց տեսցես. զի դու, Տէր, յոյս իմ ես:

ԶԲարձրեալն արարեր քեզ ապաւէն զի ոչ հասցեն առ քեզ չարք, եւ տանջանք մի մերձեցին 'ի յարկս քո:

Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է՛ վասն քո, 'ի պահել զքեզ յամենայն ծանապարհս քո:

Ի շագուկս իւրեանց ընկալցին զքեզ. զի մի երբէք հարցես զբարի գտն քո:



ի վերայ իժից եւ քարից զնասցես զու, եւ առ ոտն իրխեսցես զառիւծն եւ զվիշապն :

Քանզի յիս յուսացաւ, եւ փրկեցից զնա, հոփանի եղէց նմա, զի ծանեաւ զանուն իմ :

Կարդասցէ առ իս՝ եւ ես լուայց նմա, եւ առ նմա եղէց ՚ի նեղութեան :

Փրկեցից եւ փառաւոր արարից զնա. երկայն աւուրք լցուցից, եւ ցուցից նմա զփրկութիւն իմ :

Փառք Հօր եւ Այժմ եւ միշտ եւ :

### Ք Ա Ր Ո Ջ

Եւ եւս խաղաղութեան զՏէր :

(Ա. 2.) Խնդրեսցուք հաւատով ՚ի Հօրէ վասն քառութեան մեղաց եւ թողութեան յանցանաց, փրկելոյ զմեզ ՚ի վշտաց եւ ՚ի նեղութեանց. իջանելոյ ՚ի վերայ մեր ողորմութեան եւ գրթութեան Տեառն Աստուծոյ ամենակալին. Կեցո՛՛ եւ ողորմեա՛ :

### Ա Ղ Օ Յ Ք

(Ա. 4.) Հայր գթութեանց, եւ Աստուած ամենայն մխիթարութեանց, որ մխիթարես զմեզ յամենայն նեղութեան մերում. լուր եւ այժմ ձայնի պաղատանաց ծառայից քոյ ընդունելով զաղաչանս մեր. անցո՛ ՚ի մէնջ զցատուհն պատուհասի յանցանաց մերոյ բարերարութեամբ քով ներեա՛ եւ լուր մեզ. քաւեա՛ եւ թող զմեզս մեր. արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ. Այժմ եւ միշտ եւ :

### ՅԱՐԳՍԱՆՈՒԹԻՒՆ ԱՂՕՅՔԻՆ

Ո՛վ Հայր գթութեանց, և ամեն մխիթարութեանց պարգեւող Աստուած, որ կը մխիթարես զմեզ մեր ամեն նեղութիւններուն մէջ. լսէ և հիմա քու ծառաներուդ պաղատանաց ձայնին, ընդունելով մեր

աղաչանքը. քու բարերարութիւնովդ՝ ան-  
ցու մեր վրայէ մեր մեղքերը պատժելու  
համար ո՛նենցած բարկութիւնդ:

Ներէ եւ լա՛հ մեզ, քա՛հ ու թողութիւն  
տուր մեր մեղքերուն, արժանի ըրէ՛ զո-  
հութիւնով փառաւորել զքեզ Որդւոյդ ու  
սուրբ Հոգիիդ հետ. այժմ եւ միշտ եւ՛:

**Օրհնեալ Տէր մեր Յիսուս**  
**Քրիստոս. Ամէն:**

**Հայր մեր որ յերկինս .**



ԿԱՐԴԱԻՈՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱՅ ԱՂՕՐԻՑ

ԻՆՆԵՐՈՐԴ ԺԱՄՈՒՆ

ՈՐ ԿԱՏԱՐԻ Ի ԴԵՄՍ

ՈՐԴԻՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՑ

ԱՅՆ ԵՒ ՄԱՀՈՒԱՆՆ ԵՒ ԲԱՆԱԿԱՆ  
ՀՈԳԻՈՑՆ ԱՌԱՆՎՄԱՆՆ:



**Օրհնեալ Որդիդ Սուրբ Աս-**  
**տուած ճշմարիտ. Ամէն:**  
**ՍԱՂՄՈՍ Ծ.**

(Ա.-Գ.) ՈՂՈՐՄԵՍ՝ ինձ, Աստուած,  
ըստ միեծի ոգորմութեան ջու՛մ,  
ըստ բազում գթութեան ջու՛մ  
քաւեա՛ զանօրէնութիւնս ի՛մ:

(Տե՛ս երես 655)

ԵՐԳ ԻՆՆԵՐՈՐԴ ԺԱՄՈՒՆ

(Ա.-Գ.) Զարչարակցեալ քեզ տիւ լուսոյ  
երեք ժամու խաւարելոյ.

Պայծառացեալ յիններորդին  
 Ի տիպ լըրման մահու ստուերին.  
 Զահրդ լուսոյ մեծապայծառ  
 Աւանդեցեր զհոգիդ առ Հայր.  
 Ռահիւ կըցորդ քեզ 'ի յերկինս  
 Ըզմեզ ուղղեան Հոգւով քոյինս  
**Ս**անդարամետքք սարսեցին  
 Զկասկեալ հոգիան արձակեցին.  
 Վէճք 'ի Վիմէդ պատառեցան,  
 Ի տապանաց մեռեալք յարեան.  
 Տարերք երկրի տատանէին  
 Եւ աշխարհի սիւնք դողային.  
 Բամեալքս առ քեզ պաղատեսցուք  
 Զի ընդ արդարան դասեսցուք:  
**Յ**ուցեր յայնժամ ըսքանչեկիս,  
 Եւ այժմ մեզ ողորմեսցիս.  
 Իիւծեալ բնութիւնս քեւ ողջացաւ  
 Ենորհեան և մեզ լինել անցաւ.  
 Փոխան մահու քո կենարար  
 Կեցո՞ զմեզ Տէր բարերար.  
 Քեզ պաղատիմք ըստ աւագակին  
 Յիշեան զմեզ յօրն ահագին:

## Մ Ա Ղ Յ Ա Ն Ք

**Յ**ամենայն ժամու աղաչանք  
 Իմ այս են՝ 'ի մեղաց իմոց սուրբ  
 արա զիս Տէր. եւն.  
 Եւ եւս խաղաղութեան զՏէր.  
 Օրհնութիւնս եւ փառք Հօր եւ.

## ՔԱՐՈՉ ՄԵՄԻ ՊԱՆՈՅՆ

(Ա. 4.) **Ս**ուրբ սրտիւ եւ հաստա-  
 տուն հաւատով՝ կայցցո՛ւք միա-  
 բան յաղօթս առաջի Տեառն մերոյ  
 եւ Փրկչին Յիսուսի՝ Քրիստոսի՝  
 յիշելով զմեծամեծս նորա զան-  
 չափ շնորհս, զհամբերութիւնս  
 կենսատու Սաչին, եւ զհեղումն  
 աղատեսցուցիչ Արեան նորա, եւ  
 զսոցին նմանս՝ որ յայսմ ժամու  
 վասն մեր մեղաւորացս կրեաց  
 Նա: Եւ մեք զայս ամենայն  
 զմտաւ ածելով՝ սրբեսցուք 'ի  
 մեղաց զխորհուրդս՝ զբանս՝ եւ  
 զդործս մեր. կատարեսցո՛ւք

զսրբութիւն անձանց մերոց ա-  
հիւն Աստուծոյ: Մի՛ յապագի-  
ցութեայ խոստովան լինել նմա ըզ-  
մեղս մեր, եւ խնդրել զթողու-  
թիւն մեղաց մերոց, զի մի՛ կո-  
րիցիմք անապաշխար՝ դյաւի-  
տենական կորուստն:

Այլ մինչդեռ ժամանակս ՚ի  
ձեռս է, գործեսցուք զբարիս ՚ի  
կեանս յայտասիկ, օրինակ վա-  
րուց մերոց ունելով զամենայն  
սուրբս եւ զյաղթող նահա-  
տական, որք միանգամ ՚ի սկրզ-  
բանէ հաճոյ եղին Տեառն եւ  
Փրկչին բողոքեցունց: Որոց ա-  
ղօթիւք եւ բարեխօսութեամբն՝  
շնորհեսցէ՛ մեզ մարդասէրն Աս-  
տուած՝ զհաճոյսն իւր եւ զօ-  
գուան մեր խորհիլ միշտ եւ  
առնել, եւ անպատում պար-  
զեացն հաղորդս գաանիլ: Զոր  
խոստացաւ սիրելեաց իւրոց

ճշմարիտն Աստուած՝ Յիսուս Բը-  
րիստոս Տէր մեր. Կեցո՛ւ եւ ողոր.

Զժամս եւ զառաջիկայ օրս  
խաղաղութեամբ անցուցանել  
հաւատով ՚ի Տեառնէ խնդրեսց.

Զհրեշտակ խաղաղութեան.

Զքառութիւն եւ զթողութ.

Զսրբոյ խաչին մեծ եւ կար.

Եւ եւս միա. Զանձինս. Ողոր.

#### ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐՈՉԻՆ

Սուրբ սրտով եւ հաստատուն հաւա-  
տով՝ միաբան աղօթքի կենամք մեր Տէր  
եւ Փրկիչ Յիսուսի Բրիստոսի առջեւ. յի-  
շելով անոր մեծամեծ եւ անչափ շնորհնե-  
րըն, կենաստու (կեանք տուող) խաչին  
վրայ ունեցած համբերութիւնն, եւ ազա-  
տեցուցիչ վրկարար) Արիւնին Թափուիլն,  
եւ ասոնց նման չարչարանքներն՝ որ այս  
ժամուս մէջ մեզ մեղաւորներուս համար  
կրեց նա:

Մեր՝ ասոնք ամենը միտք բերելով՝

մեր խորհուրդները, մեր խօսքերն ու զոր-  
ժերը, մեղքէ ազատ պահեմք. և մեր  
անձերուն սրբութիւնը կատարեալ ընեմք  
Աստուծոյ վախովը :

Չի յապաղեմք (չ'ուշանամք) խոստովա-  
նիլ Անոր մեր մեղքերն և Թողութիւն խնդ-  
րել. որ առանց արարչասրումեան չ'կոր-  
սուիմք յաւիտենական կորուստով :

Այլ մինչդեռ (քանի որ) ժամանակը  
ձեռքերնիս է, այս կեանքիս մէջ բարե-  
գործութիւն ընեմք, մեր վարքին օրինակ  
ունենալով այն ամեն սուրբերն ու յաղ-  
թող նահատակներն՝ որ ի սկզբանէ (ա-  
ռաջուց) հասելի եղած են մեր ամենուս  
Տիրոջը և Փրկչին : Որոց աղօթքովն ու  
բարեխօսութիւնովը շնորհէ մեզ մարդա-  
սէրըն Աստուած, որ իրեն հասելի և մեզ  
օգտակար եղածը խորհիմք միշտ՝ և ը-  
նեմք, և անպատում (չի պատմուելու)  
պարգեններուն մասնակից ըլլամք. զոր  
խոստացաւ իր սիրելիներուն Յիսուս Քր-  
իստոս մեր Տէրը :

## Ա Ղ Օ Թ Ք

(Աշխ.) Տէր զօրութեանց՝ որ կա-  
մաւոր մահուամբ քով 'ի Ժամուս  
յայսմիկ կենդանացուցեր զմեզ 'ի  
մեռելութենէ մեղաց մերոց, և  
բեւեռեցեր զկնիք դատապար-  
տութեան մերոյ 'ի Խաչին, և  
շնորհեցեր ազատութիւն ազգի  
մարդկան 'ի ծառայութենէ ապա-  
կանութեան՝ յազատութիւն փա-  
ռայ՝ հեղմամբ Արեան քոյ Սրբոյ :

Ընկալ և այժմ զազաչանս  
մեր. և յաջողեալ մեզ՝ ուղիղ  
հաւատով և առաքինասէր վա-  
րութ՝ կեալ յայսմ աշխարհիս,  
և արժանաւոր լինել յաւի-  
տենական և երկնային ուրա-  
խութեանցն ընդ ամենայն սուր-  
բըս քո : Եւ զսնանալով փա-  
ռաւորել զքեզ ընդ Հօր և  
Սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ.

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԱՂՕԹՔԻՆ

Ո՛վ Տէր զօրութեանց (Յիսուս), որ բու կամաւոր մահուամբդ այս ժամուս մէջ ողջնցուցիր զմեզ, մեղքով մեռածներս, և մեր դատապարտութեան կնիքը (վճիռը) Խաչին վրայ գամեցիր, և բու սուրբ Արիւնդ Թափելով, մարդկային ազգն ապականութեան (մեղքի) ծառայութենէ հանեցիր, փառաւոր ազատութիւն շնորհելով անոր:

Ընդունէ՛ հիմամբ աղաչանքը, և յաջողութիւն տո՛ւր մեզ՝ ճշմարիտ հաւատով և առաքինասէր վարքով ապրիլ այս աշխարհիս մէջ, և արժանի ըլլալ յաւիտենական ու երկնային ուրախութիւններուն բու ամեն սուրբերուդ հետ. և գոհանալով փառաւորել զքեզ Հօրը և սուրբ Հոգիին հետ. այժմ եւ միշտ եւ յաւիտ.

Խաղաղութիւն ամենեցուն  
Աստուծոյ երկիրպագեսցուք

**Բ**ազումոզո՛րս՝ Աստուած եւ հաստիչ խաղաղութեան՝ հաւ-

տատեա՛ զանձինս մեր քոյով խաղաղութեամբդ, որով ունիս յիւրաքանչիւր կարգի զամենայն արարածս քո՝ ուղիղ հրամանաւդ մատակարարելով: Վասն զի՝ այդ իսկ է կամք քո՝ խաղաղական եւ հոգեւոր սիրով կալ մեզ առ միմեանս, եւ սպասել արթուն մտօք յայտնութեան Միածնիդ Աստուծոյ եւ Փրկչիդ մերոյ Յիսուսի Քրիստոսի. որում արժանաւորք եղիցուք հանդիպել ամպովք ընդ ստաջ Տեառն յօդս. Զուարթերես կացցուք յաջմէ բումմէ՝ ընդ սուրբս եւ ընդ սիրելիս Անուանդ քո սրբոյ. եւ ժառանգեսցուք զպատրաստելուն՝ ՚ի սկզբանէ աշխարհի սրբոց զարքայութիւնդ: Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորեսցուք զքեզ ընդ Հօր

և ամենաարքայ Հոգւոյդ. Այժմ  
և միշտ և յաւիտեանս. Ամէն:

**ՅԱՐԳՄԱՆՈՒՅԻՒՆ ԱՂՕՅՔԻՆ**

Ո՛վ բազումողորմ և խաղաղութիւն  
պարգեւող Աստուած՝ հաստատէ մեր ան-  
ձերը քու խաղաղութիւնովդ, որով՝ քու  
բոլորատեղծածներդ իւրաքանչիւրն իրենց  
կարգին մէջ կը պահես, քու ուղիդ (ծիշդ)  
հրամաններովդ զանոնք խնամելով: Վասն  
զի քու կամքդ այդ է՝ որ մեր խաղաղ ու  
հոգեւոր սիրով կենամք իրարու հետ, և  
արձուն մտքով սպասեմք Միածնիդ Աս-  
տուծոյ և Փրկչիդ մերոյ Յիսուսի Քրիս-  
տոսի յայտնուելուն. որում արժանի ըլ-  
լամք հանդիպիլ ամպերուն մէջ՝ երբ ամ-  
պերով օդին մէջէ՛ Տէրութեանդ առջեւն  
եշնեմք: Զուարճ երեսով կենամք (այն օրը)  
քու աշկողմդ՝ քու սուրբ Անունիդ հաւա-  
տացող սուրբերուդ ու սիրելիներուդ հետ,  
և ժառանգեմք աշխարհի սկիզբէն քու  
սուրբերուդ համար պատրաստած արքա-

յութիւնդ: Եւ անոնց հետ զօհանալով  
փառաւորեմք զքեզ Հօրը և ամենասուրբ  
Հոգիիդ հետ, այժմ և միշտ և յաւ. Ամէն.

**ՍԱՂՄՈՍ**

**Տէր մի՛ մատներ զմեզ իս-  
պառ վասն անուանդ քում  
սրբոյ. մի՛ ցրեր զուխտս քո,  
և և մի՛ ՚ի բացեայ առներ զո-  
ղորմութիւնս քո ՚ի մէնջ:**

Վասն Արրահամու սիրելւոյ  
քո, Իսահակայ ծառայի քո,  
և Իսրայէլի սրբոյ քո:

**Տէր, մի՛ մատներ զմեզ իս-  
պառ վասն Անուանդ քում  
սրբոյ. մի՛ ցրեր զուխտս քո.  
և և մի՛ ՚ի բացեայ առներ զո-  
ղորմութիւնս քո ՚ի մէնջ:**

(Ա. Գ.) ԵՐԳ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԷՍԻ

Նահապետին Արրահամու  
Հայցմամբ ընկալ Տէր զաղաչանս,  
և ծառային քում Սահակայ  
Խընդրուածովն ՚ի մեզ զըմն.

Բնատեսին Իսրայէլի  
Սիրով սրբոյն 'ի մեզ խնայեն ,  
Երեքսրբեան երկը սոցին  
Սրբեան զհոգի զմիտս . և զմարմինս :

## Ք Ա Ր Ո Ջ

(Ա. 24.) Աղաչեսցուք զկենսատու  
Փրկիչն մեր Քրիստոս , որ կա-  
մաւոր խաչելութեամբն իւրով  
զարարածս փրկեաց , եւ հեղ-  
մամբ Արեան իւրոյ՝ զթողու-  
թիւն շնորհեաց յուսացելոց  
իւրոց : Ամենակալ Տէր Աս-  
տուած մեր . կեցո՛ եւ ողորմեա՛ :

## Ա Ղ Օ Յ Ք

(Ա. 25.) Անկեա՛լ առաջիքո բարե-  
րար եւ բազումողորմ Աստուած ,  
աղաչեմք ամենայն սրտիւք մե-  
րովք , եւ խնորհեմք զգթու-  
թիւն 'ի քէն՝ որպէս խոստա-  
ցար ծառայից քոց եւ ասացեր .  
« Զամենայն զոր ինչ խնորիցէք

հաւատով յանուն Որդւոյ 'ի  
Հօրէ՛ տացի՛ ձեզ : »

Շնորհեա՛ եւ այժմ հաւատա-  
ցելոցս 'ի քեզ , եւ կատարեա՛  
'ի բարի զխնդրուածս մեր , զի  
'ի քեզ եմք ազաւինեալ :

Եւ քո առաա ողորմու-  
թեամբդ մխիթարեա՛ զմեզ 'ի  
կեանս յայսոսիկ . եւ առաջ-  
նորդեալ հասո՛ յանճառ երկ-  
նից տրքայութիւնդ , 'ի փա-  
ռաբանութիւն եւ 'ի պատիւ  
ամենասուրբ Երրորդութեանդ .  
Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս .

## ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԱՂՕԹԻՆ

Ո՛վ բարերար և բազումողորմ Աստ-  
ուած , բու առջեզ իյնալով կաղաչեմք  
մեր բոլոր սրտով , և զթութիւն կը խնդ-  
րեմք քենէ . ինչպէս որ խոստացար բու  
ծառաներուդ և ըսիր Թէ՛ « Ամեն ինչ որ



խնդրէր Հօրմէ հաւատով՝ Որդւոյ անունով, պիտի արուի ձեզ։»

Ո՛վ Տէր, նոյն խոստումդ շնորհէ հիմա քեզ հաւատացողներուս, և մեր խընդըրուածքն ի բարին կատարէ, բանգի քեզ ապաւինած եմք, եւ քու առատ ողորմութիւնովդ մխիթարէ զմեզ մեր այս կեանքին մէջ, և մեզ առաջնորդելով հասցնու երկինքի անճառ արքայութեանդ, փառաբանելու և պատուելու համար Ամենատուրք Երրորդութիւնդ. այժմ և միշտ եւ,

**Յիշեա՛ճէր զպաշտօնեայս քո.**

**Բարերար եւ բազումող. եւն.**

(Տե՛ս երես 600)

ՍԱՂՄՈՍ ԶԺԳ

**Սիրեցի զի լուիցէ Տէր. վերջ**

**Զօրացի ողորմութիւն քո:**

**Փառք Հօր եւ. Այժմ եւ միշտ.**

(Տե՛ս երես 574)

(Զարեալաբնի և Ուրբաթի օրերը այս Փոփէն վերջը Հանգստեան Շաբաթին և՛ ըստ ըստ Զայնին, և այդ՝)

ՄԱՂԹԱՆՔ. Հողեոցն հանգու.

ՔԱՐՈՋ. Վասն հանգուցեալ:

ԱՂՕԹՔ. Բրիստոս որդի Աս.

(Տե՛ս երես 206-207)

● Օրհնեալ Տէր մեր Յիսուս

Բրիստոս. Ամէն:

Հայր մեր որ յերկինս:

ՎԵՐՋ ԶԱՇՈՒ ԵԱՄՈՒՆ





ԵՐԵԿՈՅԵԱՆ

ԳՆԻՓՆԻՐՈՒԻԻԵ

ԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱՅ ԱՂՕՔԻՑ

ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄՈՒՆ

ՈՐ ԿԱՏԱՐԻ 'Ի ԴԷՄՍ

ՈՐԴԻՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ

ՈՐ ԷՋ 'Ի ԵԱՋԷՆ ԵՒ ՊԱՏԵԱԼ ՊԱՍ-  
ՏԱՌԱԿԱԼԱՒ ԵԳԱՒ 'Ի ԳԵՐԵԶՄԱՆԻ



Օրհնեալ Տէր մեր Յիսուս  
Քրիստոս. Ամէն

Հայր մեր որ յերկինս :

Քահ. ԵՍ առ Աստուած կարգա-  
ցի, եւ նա լուաւ ինձ յերեկոյս՝  
'ի վաղորդայն՝ եւ 'ի հասարակ  
աւուր :

Սբէ. Սպասէի Աստուծոյ իմոյ,  
եւ ակն ունէի կենարարին, որ  
փրկէ զծառայս իւր եւ կե-  
ցուցանէ :

Փառք Հօր եւ. Այժմ եւ միշտ.

Մէջ. Եւ եւս խաղաղութեան  
զՏէր աղաչեսցուք ընկալ, կեցո՛  
եւ ողորմեա՛:

Քահ. Օրհնութիւն եւ փառք  
Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն  
Մբբոյ. Այժմ եւ միշտ եւ յա-  
ւիտեանս յաւիտենից. Ամէն:

**Փոխ սարսա ԶԵ.**

(Ա.-ք.) Խոնարհեցո՛. Տէր, զունկն քո եւ  
լուր ինձ, զի աղբիւս եւ ճնանկ եմ ես.  
Պահեա՛ զանձն իմ սուրբ, Տէր, եւ  
փրկեա՛ զձառայս քո, Աստուած իմ,  
որ ՚ի քեզ յուսացայ:

Ողորմեա՛ ինձ, Տէր, զի առ քեզ  
աղաղակեցի զօրհանապազ ուրախ  
արա՛ զանձն ծառայի քո, զի առ քեզ,  
Տէր, համբարձի զանձն իմ:

Զի դու, Տէր, քաղցր եւ ուղիղ ես,  
բազումօղորմ առ ամենեւեան՝ որք  
կարդան առ քեզ:

Ունկն դիր, Տէր, աղօթից իմոց, եւ  
նայեա՛ ՚ի ծայն խնդրուածաց իմոց.  
Յաւուր նեղութեան իմոյ կարդացի  
առ քեզ, եւ լուար ինձ:

Ոչ որ է նման քեզ յասուածս,  
Տէր, եւ ոչ որ է որպէս զգործս քո.  
Զամենայն ազգս զոր արարե՛ր  
եկեացեն եւ երկիրպագեն առաջի  
քո, եւ փառաւոր արացեն զանուն  
քո յաւիտեան:

Մեծ ես դու, Տէր, եւ առնես քո-  
բանչելիս, եւ դու միայն ես Աստուած:  
Առաջնորդեա՛ ինձ ՚ի ճանապարհի  
բում, եւ զնացից ՚ի ճշմարտութեան  
բում, եւ ուրախ եղիցի սիրտ իմ՝ եր-  
կընչիլ յանուանէ քումմէ:

Խոստովան եղէց առ քեզ, Տէր Աս-  
տուած իմ. բոլորով արհւ իմով. փա-  
ռաւոր արարից զանուն քո յաւիտեան:

Մեծ եղել ՚ի վերայ իմ ողորմու-  
թիւն քո. Տէր, եւ փրկեցեր զանձն  
իմ ՚ի դժօխոց ներքնոց:

Ասուած, անօրէնք յարեան 'ի վերայ իմ, եւ ժողովք հօրաց խնդրեցին զանձն իմ, եւ ոչ համարեցան զքեզ Ասուած առաջի իւրեանց:

Այլ զու, Տէր Ասուած իմ, զթա'ծ ես եւ ողորմած, երկայնամիտ՝ բազումօգորմ եւ ճշմարիտ, նայեա՛ առ իս եւ ողորմեա՛ ինձ:

Տնւր զօրութիւն ծառայի քո, կեցն՝ զորդի աղախնոյ քո, եւ արա՛ առ իս նշան բարութեան:

Տեսցեն ասելիք իմ եւ ամաչեսցեն զի զու, Տէր, օգնեցեր ինձ եւ մխթարեցեր զիս:

Փառք Հօր եւ. Այժմ՛ եւ միշտ եւ յա .

### Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

**Փ**անօք քեզ Աստուած, փանօք քեզ. յաղագս ամենայնի Տէր. փանօք քեզ:

եւ եւս խաղաղութեան զՏէր. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ.

### ՓՈՍՍ ՍԱՂՄՈՍ ՃԼԹ.

(Ա.Ճ.) Ապրեցն զիս, Տէր, 'ի մարդոյ չարէ, յառնէ անիրաւէ փրկեա՛ զիս: Խորհեցան զանօրէնութիւն 'ի սիրքս իւրեանց, զօր ամենայն պարասեցան 'ի պատերազմ:

Որեցին զլեզուս իւրեանց որպէս զօձի, եւ թոյնք իժից 'ի ներքոյ շրթանց նոցա:

Պահեա՛ զիս, Տէր, 'ի ձեռաց մեղաւորի, եւ 'ի մարդոյ չարէ փրկեա՛ զիս: Խորհեցան խափանել զզնացս իմ, թագուցին ամբարսաւանք որոգայթ ինձ:

Լարս ձգեցին որոգայթ ոտից իմոց, շուրջ զշաւոթք իմովք եղին ինձ ըզգայթակողութիւն:

Ասացի, Տէր, Ասուած իմ ես զու, ունկն դիր, Տէր, ծայնի աղօթից իմոց:

Տէր, Տէր, զօրութիւն փրկութեան իմոյ. հովանի զլսոյ իմոյ յաւուր պատերազմի:

Մի մասներ զիս, Տէր, 'ի ցանկութիւն մեղաւորաց, ոյր խորհեցան վարքն իմ՝ մի ընդ վայր հարկաներ զիս:

Ձի մի երէքք բարձրացին, եւ խորհուրդք նոցա մի կատարեցին. վախճան կատարածի նոցա վաստակ շրթանց իւրեանց՝ ծածկեցէ զնոսա:

Արկցես 'ի վերայ նոցա զկայծակունս ճոյ. եւ կործանեցես զնոսա: 'ի տառապանաց մի կարացեն կեալ:

Մարդոյ լեզուանոյ մի յաջողեցի 'ի վերայ երկրի. զայր մեղաւոր՝ չարիք իւր որսացեն 'ի կորուս:

Ծանեայ զի առնես, Տէր, դատասան ազրաւսի, եւ իրաւունս սնանկի:

Արդարք գոհացին զանուանէ բուժմէ, եւ բնակեցին ուղիղք առաջի երեսաց բոց:

(ՃԼԵ.) Տէ՛ր կարդացի առ քեզ եւ լուր ինձ, նայեա՛ 'ի ծայն աղօթից իմոց, 'ի կարդալ իմուժ առ քեզ:

Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս

խունկ առաջի քօ, Տէր, համբարձումըն ձեռաց իմոց պատարագ երեկոյի:

Դիր, Տէր, պահապան բերանոյ իմոյ. եւ դուռն ամուր շրթանց իմոց, զի մի խոտրեցի սիրտ իմ բանիւ չարութեան:

Ի պատճառել զպատճառս մեղաց ընդ մարդս՝ ոյր գործեն զանօրէնութիւն. եւ ոյ եղէց կցորդ ընտելոց նոցա:

Խրատեցէ զիս արգարն՝ ողորմութեամբ՝ եւ յանդիման արատցէ. իւղ մեղաւորի մի օժցէ զզլուխ իմ, այլ աղօթք իմ՝ 'ի կամս նորա:

Արգելան մերձ առ վիմին դատաւորք նոցա. լուիցեն բանից իմոց եւ քաղցրացին:

Որպէս թանձրութիւն հողոյ՝ զի սփռեալ է՝ 'ի վերայ երկրի, ցուեսցին ոսկերք նոցա մերձ 'ի դժոխս:

Առ քեզ, Տէր, Տէր, են աչք իմ, 'ի քեզ յուսացայ, մի հաներ գոգի յինէն:

Պահեա՛ զիս յորոգայթէ՛ որ Թագուցաւ ինձ, 'ի գայթակղութենէ՛ զորժողին զանօրէնութիւն :

Անկցին 'ի ցանցս նորա մեղաւորք, միայն եմ ես մինչեւ անցից :

(ՃԵՍԱ.) Զայնիւ իմով ես առ Տէր կարդացի ծայնիւ իմով զՏէր աղաչեցի :

Սփռեցից առաջի Տեառն զաղօթս իմ, եւ զնեղութիւնս իմ առաջի նորա պատեցից :

Ի նուաղել յինէն հոգեոյ իմոյ՝ զու, Տէր, ծանեաւ զշաւիղս իմ, 'ի ծանապարհ յոր եւ զնայի՛ Թագուցաւ ինձ որոգայթ :

Հայէի յաջմէ՛՝ սեսունէի, եւ ոչ որ ծանաչեւ զիս : կորեաւ յինէն փախուսս իմ, եւ ոչ զսաւ իննորոգ անձին իմոյ :

Աղաղակեցի առ քեզ, Տէր, եւ աւացի, զու ես յոյս եւ բաժին իմ յերկրին կենդանեաց :

Նայեա՛, Տէր, յաղօթս իմ, զի ես

խոնարհ եղէ յոյժ. ապրեցո՛ զիս 'ի հալածչաց իմոց՝ զի հօր եղենք քան զիս :

Տէր, հա՛ն 'ի բանսէ զանձն իմ, գոհանամ զանուանէ քումմէ :

Եւ քեզ սպասեն արդարք՝ մինչեւ հասուցես :

Փառք Հօր եւ Այժմ եւ միշտ եւ :

## ԵՐԳ ԿԻՐԱԿԱՄՏԻՑ

(Շարաք երեկոյեանու յատուկ)

(Աշէ.) Ալէլուիա Ալէլուիա

Լոյս զուարթ սուրբ փառաց անմահի, Հօր երկնաւորի սրբոյ կենարարի Յիսուս Քրիստոս :

(Ա-գ.) Եկեալքս՝ ի մտանել արեգականն, տեսաք զլոյս երեկոյիս : Օրհնեմք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ Աստուծոյ : Եւ ամենեքեան ասեմք. Ամէն :

Արժանաւորեա՛ զմեզ յամենայն  
ժամ, օրհնել ձայնիւ երգով՝  
զԱնուն փառաց Ամենասուրբ  
Երրորդութեանդ. Որ տայ ըզ-  
կենդանութիւն, վասն որոյ եւ  
աշխարհս զքեզ փառաւորէ:

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ո՛վ Յիսուս Քրիստոս, դուն ես՝ զուարթ  
լոյսը, անմահ եւ երկնաւոր, ամենասուրբ  
և կենարար Հօրք սուրբ փառքին:

Արեւուն մայրը մտնելու ատեն քու  
առջեւ գալով՝ երեկոյիս լոյսը տեսանք.  
Ուստի կ'օրհնեմք Հայրը, Որդին և Սուրբ  
Հոգիդ Աստուծոյ, և ամենքս (միմբան)  
կըսեմք. Ամէն:

Արժանի ըրէ՛ զմեզ, ամեն ժամանակ՝  
ձայնով և երգով օրհնել Ամենասուրբ Եր-  
րորդութեանդ փառաւոր Անունը. Որ կեն-  
դանութիւն կուտայ մեզ, անոր համար  
բոլոր աշխարհք զքեզ կը փառաւորէ:

## ՄԱՂԹԱՆՔ ԼՈՒՐ ԱՌՈՒՅՑ

Օրհնեա՛լ Տէր, որ բնակեալդ  
ես ՚ի բարձունս, եւ օրհնեա՛լ  
են փառք մեծութեան քոյ.  
որ հաստատեցեր զուսաւորս  
՚ի բարձունս. ՚ի յերկնից լոյս  
ծագեցեր ընդ ամենայն աիե-  
զերս. Աբարեբ զարեգակն՝ լու-  
սատու տուրնջեան, զլուսինն  
եւ զաստեղս՝ լուսատու գիշե-  
րոյ, եւ զլոյս ճրագի: Գնու ես  
լոյս դովելի, սուրբ եւ առաջին  
լոյսն. ՚ի քէն փախնու խաւա-  
րըն. եւ զլոյս քո կենդանի, Տէր.  
ծագեա՛ ՚ի սիրտս մեր: Եւ մեք  
միաբան ասացուք. Օրհնեա՛լ  
է անուն սուրբ փառաց քոց,  
եւ քեզ երգեմք զօրհնութիւն  
եւ զփառս Հօր եւ Որդոյ եւ  
Հոգւոյդ Սրբոյ. Այժմ եւ միշտ.



## ՔԱՐԳՄԱՆՈՒՅԻՒՆ

Օրհնեանլ ես սվ Տէր, որ երկինքի բարձրուծեան մէջ կը բնակիս, և օրհնեանլ են բու մեծուծեանդ փառքը, որ բարձրուծեան մէջ լուսաւոր մարմիններ հաստատեցիր, և երկինքէն լոյս ծագեցիր բոլոր աշխարհի վրայ: (Այսինքն) Արեւը ստեղծեցիր՝ որ լոյս տայ ցերեկին, և լուսինն ու աստղերը՝ որ լոյս տան գիշերին: Ինչպէս նաեւ ճրագին լոյսը (պարզեւեցիր) Դոնն ես գովելի, սուրբ և առաջին լոյսը, և քենէ կը փախչի խաւարը: Ով Տէր, բու կենդանութիւն տուող լոյսդ՝ ծագէ մեր սրտերուն մէջ. և մեք միաբերան ըսեմք: Օրհնեանլ է բու փառաւոր սուրբ Անունդ, և քեզ օրհնութիւն ու փառք կ'երգեմք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . Ամէն

## ՔԱՐՈՉ

(Աշկ.) Հասեալքս 'ի ժամ երեկոյիս՝ ամենեքեան համբառնալով

զձեռս մեր, փառաւորեմք զքեզ Տէ՛ր Աստուած մեր. որ շնորհեցեր մեզ զաւուս խաղաղութեամբ անցուցանել, եւ հասանել 'ի ժամ երեկոյիս:

Արժանաւորեա՛ զմեզ, Տէ՛ր, սուրբ սրտիւ, հրեշտակային երգով գոհաբանութիւն մատուցանել Տեառն Աստուծոյ ամենակալիդ. Կեցո՛ եւ ողորմեա՛:

Ողորմեաց մեզ, Տէ՛ր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ: Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ողոր.

## ՄԱՂԹԱՆՔ

Հասեալքս 'ի ժամ երեկոյիս ամենեքեան անդադար փառաւորեմք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ. այժմ եւ միշտ. եւ.

(Ասորանք առար պարզաճէ Մեռե-  
ղի Սաղմոս կըսուէ Տէկ Տէկ որան,  
որք են սոքա :)

## ՄԵՍԵՂԻՔ

Ծննդեան Բրիսոսի, եւ Աւետ-  
եաց, եւ Վերածնունդիս, եւ այ-  
լոց սօցից Ասուածածնին :

**Ա.** օր. Տէր ասաց զիս՝ որդի իմ ես  
դու՝ եւ ես այսօր ծնայ զքեզ :

Ընդէր խաղեցան ճեթանոսք, եւ  
ժողովուրդք խորհեցան ՚ի սնոսիս :

**Բ.** օր. Մեծացուցէ անծն իմ զՏէր, եւ  
ցնծացէ հոգի իմ Ասուածով փրկչաւ  
իմով :

Զի հայեցաւ ՚ի խոնարհութիւն ա-  
ղախնոյ իւրոյ. ահա յայսմհետէ եւա-  
նիցեն ինձ ամենայն ազգք :

**Գ.** Իջէ որպէս զանհրեւ ՚ի վերայ  
գեղման, որպէս ցօղ զի ցօղէ յերկիր :

Ասուած՝ զիրաւունս քո արբայի  
սուր, եւ զարգարութիւնս քո որդւոյ  
Թագաւորի :

## Մեռելիք Յարութեան

**Ա. Զ.** Տէր կարող եւ հզօր. Տէր կարող  
՚ի պատերազմի :

Տեառն է երկիր լրիւ իւրով. աշ-  
խարհ՝ եւ ամենայն բնակիչք նորա :

**Ա. Ե.** ԱՅոռ քո Ասուած յաւիտեանս  
յաւիտենից, զաւազան ուղղութեան՝  
զաւազան արքայութեան քո :

Բղխեաց սիրս իմ զքան բարի. եւ  
ասեմ զգործս իմ Թագաւորի :

**Բ. Զ.** Տէր Թագաւորեաց՝ ցնծացէ եր-  
կիր. ուրախ եղիցին կղզիք բազումք :

Երեւեցան փայլատալունք նորա  
սիեզերաց. ետես՝ եւ սասանեցաւ  
երկիր :

**Բ. Է.** Երգեցէք Տեառն երգ նոր ամե-  
նայն երկիր. ծառայեցէք Տեառն  
ուրախութեամբ :

Մտէք առաջի նորա ցնծութեամբ.  
Ժաներուք զինն է Տէր Ասուած մեր :

**Գ. Զ.** Եկայք եւ տեսէք զգործս Ասու-

ծոյ, որ արար գնշանս եւ զաբուեսս  
'ի վերայ երկրի:

Ասուած մեր ապաւէն եւ զօրու-  
թիւն. օգնական 'ի վերայ նեղու-  
թեանց, որք գտին զմեզ յոյժ:

**ՂԵ.** Ասուած մեր յերկինս եւ յերկրի,  
զամենայն զոր ինչ կամեցաւ եւ արար:

Յելանելն իսրայէլի յեղիպսոսէ .  
սանն Յակոբայ 'ի ժողովրդենէ այ-  
լազգեաց:

**ՂԶ.** Եղիցի ձեռն քո 'ի վերայ առն.  
աջ քո 'ի վերայ որդոյ մարդոյ, զոր  
զօրացուցեր զնա 'ի քեզ:

Որ հովուեսդ իսրայէլի՛ նայեաց, որ  
առաջնորդես որպէս խաշին Յով-  
սեփու:

**ՂԷ.** Ասուած ասուածոց Տէր խօսե-  
ցաւ, եւ կոչեաց գերկիր:

Յելիցն արեգական մինչեւ 'ի մու-  
սքս արեւու:

### Մեսեդիք Գալսեան

Օրհնեա՛լ որ գաս յանուն Տեառն,  
օրհնեալ որ զալոց ես:

Տէր Ասուած մեր երեւեցաւ մեզ,  
արարէք թօնս ուրախութեան կան-  
խաւ, մինչեւ յանկիւնս սեղանոյ:

### Եկեղեցոյ

Աս օրհնեցէք ամենայն ծառայք  
Տեառն զՏէր:

Ո՛ր կայք 'ի սան Տեառն, եւ 'ի գա-  
ւիթս Ասուծոյ մերոյ:

### Կիրակաւաճի

Սիրեցի՛ զի լուիցէ Տէր զծայն ա-  
ղօթից իմոց:

Զի խոնարհեցոյց զունկն իւր առ իս,  
եւ ես յաւուրս իմ կարգացի առ նա:

### Մեսեդիք Մարտիրոսաց

**ԱԶ.** Եղիցի ողորմութիւն քո Տէր ի  
վերայ մեր. որպէս յուսացար 'ի քեզ:

Յնծացէք արդարք 'ի Տէր. ուղղոց  
վայելէ օրհնութիւն:

**ԱԸ.** Տէր սիրէ զիրաւունս, եւ ոչ  
ընդ վայր հարկանէ զսուրբս իւր:

Փրկութիւն արդարոց 'ի Տեառնէ:

է. վերակացու է նոցա 'ի ժամանակս նեղութեան:

**ԲԶ.** Սքանչելի է Ասուած 'ի վերայ սրբոց իւրոց, Ասուած Իսրայէլի:

Տէր Ասուած օրհնեալ. օրհնեալ է Տէր զօրհանապազ:

**ԲԱ.** Օգնութիւն ինձ 'ի Տեառնէ եկեացէ, որ աւար զերկինս եւ զերկր:

Համարձի գաչս իմ 'ի լերինս, ուստի եկեացէ ինձ օգնութիւն:

**ԲԶ.** Ասուած փառաւորեալ է 'ի խորհուրդս սրբոց իւրոց. մեծ եւ ահաւոր

ի վերայ այնոցիկ որ շուրջ են զնովաւ.

Խոսովան եղիցին երկինք սքանչելեաց քոց Տէր, եւ ճշմարտութիւնքո յեկեղեցիս սրբոց:

**ԲԱ.** Սիրեցից զքեզ՝ Տէր, զօրութիւն իմ. Տէր հաստատի իմ, ապաւէն իմ եւ փրկիչ իմ:

Ասուած օգնական իմ, եւ ես յուսամ 'ի նա. ապաւէն իմ, եղջիւր փրկութեան իմոյ՝ ընդունելի իմ է:

**ԲԶ.** Մերձ է Տէր առ ամենեսան, ոչր կարգան առ նա. առ ամենեսան՝ ոչր կարգան առ նա ճշմարտութեամբ:

Ձկանս երկիւղածաց իւրոց առնէ Տէր. աղօթից նոցա լսէ՝ եւ կեցուցանէ զնոսա:

**ԲԱ.** Արդարն որպէս զարմաւենիս ծաղկեցին. որպէս զմայրն իբրաննու բազումք եղիցին:

Տնկեալք եղիցին 'ի սան Տեառն, եւ 'ի գաւիթս Ասուծոյ մերոյ ծաղկեցին:

### Մեսգիք Ապաւստոստոսեան

**ԱԶ.** Տէր լուիցէ ինձ 'ի կարգալ իմում առ նա:

Ի կորզալ իմում լուար ինձ Ասուած ըստ արդարութեան իմոյ:

**ԱԱ.** Մի ասացէ թշնամին իմ թէ յաղթեցի նմա. կամ նեղիչք իմ ցնձացեն, թէ ես սասանեցայց:

Մինչև յեր դարձու ցանես զերեսս

քո յինէն, մինչեւ յերբ բարձրանայ  
Թշնամին ի վերայ իմ. նայեա՛ եւ լուր  
ինձ Տէր Աստուած իմ:

**ԲԶ.** Բերան արգարոյ պատմէ զիմաս-  
տութիւն, եւ լեզու նորա խօսեացի  
զիրաւունս:

Մի նախանձմբ ընդ չարս. եւ մի ընդ  
այնոսիկ ոյր գործեն զանօրէնութիւն:

**ԲԷ.** Քաղցրութիւն արարեւ ընդ ծա-  
ռայի բոււմ Տէր, ըս բանի բում:

Քաղցր ես դու Տէր, եւ քաղցրու-  
թեամբ քով իրատես՛ զիս:

**ԳԶ.** Նայեա՛ եւ լուր ինձ Տէր Աստուած  
իմ:

Մինչեւ յերբ Տէր՝ մոռանաս զիս  
իսպառ. մինչեւ յերբ դարձուցանես  
զերեսս քո յինէն:

**ԳԷ.** Գծութիւնք քո բազում են Տէր.  
ըս իրաւանց քոց կեցն՛ զիս:

Տես զխոնարհութիւն իմ, եւ փրկեա՛  
զիս. զի գօրէնս քո ես ոչ մոռացայ:

**ԳԸ.** Աստուած յօգնել ինձ նայեա՛ց.

եւ Տէր յընկերել ինձ փութա՛:

Ամաչեացեն եւ յամօթ լիցին, ոյր  
խնորէին զանձն իմ:

**ԳԹ.** Լուր Աստուած աղօթից իմոց յա-  
ղաչել ինձ առ քեզ. յերկիւղէ Թշնամ-  
ւոյն փրկեա՛ զանձն իմ:

Ծածկեացես զիս 'ի ժողովոց չա-  
րաց, 'ի բազմութենէ՛ ոյր գործեն  
զանօրէնութիւն:

### Ի մեծի Հինգաբարսի

Լուացից սրբութեամբ զծնու իմ,  
եւ շուրջ եղէց զսեղանով քո Տէր:

Տէր սիրեցի զվայելչութիւնսանքո,  
եւ զսեղի յարկի փառաց քոց:

### Ի մեծի Ուրբարու

Ետուն 'ի կերակուր ինձ լեղի, եւ  
'ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ:

Եղիցին սեղանք նոցա առաջի նոցա  
յորոգայթ, 'ի հասուցումն եւ 'ի գայ-  
թակղութիւն:

## Ի սօնի Արքայ Խաչին

Ետուր երկիս զամաց քոց նշան, զի  
ապրեսցին յերեսաց աղեղան :

Որպէս փրկեցան սիրելիք քո, կեցն  
աջով քո եւ յուր մեզ :

ԿԱՐԳ « ՈՒՂԻՂ ԵՂԻՏԵԱՅ »

Ուղիղ եղիցին աղօթք իմ,  
Որպէս խունկ առաջի քո Տէր,  
Համբարձումն ձեռաց իմոց,  
Պատարագ երեկոյի :

## Յասուկ առաջակողմանն

Ուղիղ եղիցին աղօթք իմ  
որպէս խունկ առաջի քո Տէր .  
համբարձումն ձեռաց իմոց՝ պա-  
տարագ երեկոյի :

Տէր ազաղակեցի առ քեզ եւ  
լուր ինձ :

Նայեա՛ց ՚ի ձայն ինդրուա-  
ձաց իմոց, յազաղակել իմու՛մ  
առ քեզ :

## Ի մեծի Հինգարարու

Ուղիղ եղիցին աղօթք իմ  
որպէս խունկ առաջի քո Տէր :  
Չերեկոյի աղօթս մեր ընկալ  
Տէր, եւ զատարձումն ձեռաց  
մերոց :

## Ի մեծի Ուրարու

Ուղին եղիցին աղաչանք մեր  
որպէս խունկ առաջի քո Տէր .  
համբարձումն ձեռաց մերոց՝  
պատարագ երեկոյի :

ՔԱՐՈՋ ԿԻՐԱԿԱՍՏԻՑ

(Աշկ.) Ասասցուք ամենեքեան  
միտարանութեամբ. Տէր ողորմեան  
(Տես երես 332-8)

## ՔԱՐՈՉ

Ի՛ ճօնի Սրբոց եւ Պատկոց

եւ եւս խաղաղութեան զՏէր .  
 (Աշ.) Աղաչեսցուք զամենակալն  
 Աստուած՝ զՀայր Տեառն մե-  
 րոյ Յիսուսի Քրիստոսի, զԹա-  
 դաւորն խաղաղութեան, յա-  
 զագս խաղաղութեան եւ վա-  
 սրն Միայնոյ, Սուրբ, Կաթու-  
 ղիկէ եւ Առաքելական Եկեղեց-  
 ւոյ . զի զբազում ամս խաղա-  
 ղութեամբ տացէ մեզ Տէր Աս-  
 տուած մեր . եւ զԹադաւորս  
 խաղաղարարս առաքեսցէ առ  
 մեզ, վասն մեծի սուրբ եւ ա-  
 հաւոր Անուան իւրոյ : Զպետս  
 գաւառաց, զգօրավարս, զգօրա-  
 գլուխս, զժողովուրդս, զմուտս,  
 եւ զելս մեր խաղաղութեամբ  
 պահեսցէ, եւ զամենայն պա-  
 տերազմունս թշնամւոյն խոր-

տակեսցէ 'ի մէնջ . Տէրն ամե-  
 նակալ կեցուցէ եւ ողորմեսցի  
 Զերեկս մերձեալ՝ եւ զառա-  
 ջիկայ գիշերս խաղաղութեամբ  
 անցուցանել, հաւատով 'ի Տեառ-  
 նէ խնդրեսցուք :

Զհրեշտակ խաղաղութեան .

Զքաւութիւն եւ զթողութիւն .

Զսրբոյ խաչին մեծ եւ կարող .

եւ եւս միարան վասն ճշմար .

Զանձինս մեր . Ողորմեաց մեզ .

## ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՔԱՐՈՉԻՆ

Աղաչեմք Ամենակալ Աստուծոյ՝ մեր  
 Տէր Յիսուս Քրիստոսի Հօր՝ խաղաղու-  
 Թեան Թագաւորին, աշխարհիս խաղաղու-  
 Թեան համար, և Մի, Սուրբ, Կաթողիկէ  
 և Առաքելական Եկեղեցւոյ համար . որ-  
 պէս զի խաղաղութիւնով շատ տարիներ  
 պարգեւէ մեզ Տէր Աստուած մեր, և խա-  
 ղաղարար Թագաւորներ զրկէ մեզ՝ իրեն  
 սուրբ, մեծ և ահաւոր Անունին համար :

Եւ խաղաղութեան մէջ պահէ, գաւառապետները, զօրավարներն ու զօրագլուխները, և ժողովուրդը, և մեր(գործի)մտած ու ելած բոլոր ժամանակը և Թշնամիին ամեն պատերազմները խորտակէ մեր ամենակալ Տէրը, կեցուցէ և ողորմեսցի:

## Ա Ղ Օ Յ Ք

(Ա. 4.) **Լ**ուր ձայնից մերոց, Տէր Աստուած մեր, ընկալ զազաչանս մեր, զհամբարձումս ձեռաց մերոց՝ եւ զբանս աղօթից, սրբելով զերեկոյի պատարագս մեր՝ ՚ի հոտ անուշից՝ ՚ի հաճոյս քեզ պատրաստել:

Յաւել, ի մեզ Տէր ամենակալ, զՀաւատ, զՅոյս, զՍէր, եւ զամենայն գործս առաքինութեան. որպէս զի ըստ կամաց քոց բարեսիրաց՝ միշտ կրօնաւորեալք բարեպաշտութեամբ, ՚ի տուէ եւ ՚ի գիշերի

արժանաւորք եկիցուք յազպս անձանց մերոց փրկուցիւն՝ եւ վասն հոգեւոր կենացդ աղաչել քեզ, Տէր, եւ գտանել ՚ի քէն զչնորհս եւ զողորմութիւն. եւ գոհանալով փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԱՂՕՅՔԻՆ

**Լ**սէ մեր ձայներուն, ով Տէր Աստուած մեր, ընդունէ մեր աղաչանքը, մեր ձեռքերուն վեր վերցունելը և մեր աղօթքին խօսքերը. սրբելով մեր այս իրիկունս (աղօթքի) պատարագը՝ որ անուշահոտ խունկերու պէս քեզ հաճելի կերպով պատրաստուած ըլլայ: Աւելցու մեր սրտի մէջ, ով Տէր ամենակալ, Հաւատք, Յոյս և Սէր, և ամեն առաքինական գործերու փառագ. որպէսզի բոլ բարեսէր կամքիդ համեմատ՝ միշտ բարեպաշտութիւնով մեր կրօնքը



պաշտելով. զիշեր ու ցերեկ արժանի ըլլամբ աղաչել զքեզ Տէր, մեր անձերուն փրկութեանը և հոգեւոր կեանքդ ստանալու համար, և քննէ շնորհք և ողորմութիւն գտնել. և գոհանալով փառաւորել Հայրը և Որդին ու Սուրբ Հոգին, այժմ և.

Խաղաղութիւն ամենեցուն  
Աստուծոյ երկրպագեսցուք:

**Քեզ** երկիրպագանելով Տէր Աստուած մեր՝ գոհանամք զքէն յաղագս խաղաղութեամբ անցուցանելոյ 'ի մէնջ զերկարութիւն տուրնջեանս Տուր մեզ, Տէ՛ր, աղաչեմք զքեզ՝ զերեկս եւ զառաջակայ զիշերս առանց մեղաց, եւ առանց գայթակղութեան անցուցանել. հաստատուն կալ եւ մնալ 'ի Հաւատ՝ 'ի Յոյս 'ի Սէր՝ եւ 'ի պատուիրանապահութեան քոյ:

Խնդրելով զխաղաղութիւն ա-

մենայն աշխարհի. եւ Եկեղեցւոյ քում սրբոյ զհաստատութիւն, եւ անձանց մերոց զփրկութիւն: Որպէս զի ընդունելով 'ի քէն զհայցուածս մեր՝ եւ զմեծ վայելչական փառաբանութիւն միշտ 'ի բարձունս առաքեսցուք ամենազօր տէրութեանդ. Քրիստոս Աստուած մեր. Այժմ եւ.

ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԱՂՕԹՔԻՆ

Քեզ երկրպագութիւն ընելով Տէր Աստուած մեր, կը գոհանամք քննէ՝ խաղաղութիւնով անցունելուդ համար մեր վրայէ այս օրուան երկայնութիւնը:

Կաղաչեմք զքեզ, Տէր, շնորհէ մեզ, այս իրիկունը և առաջիկայ զիշերս՝ առանց մեղքի և առանց գայթակղութեան անցունել. և հաստատուն կենալ և մնալ Հաւատոյ, Յուսոյ և Միտոյ մէջ, և բու պատուիրանքդ պահել: Խնդրելով նաեւ, որ ամեն աշխարհի խաղաղութիւն, բու սուրբ

Եկեղեցիիդ հաստատութիւն, և մեր անձե-  
րուն փրկութիւն շնորհես: Որպէս զի մեր  
խնդիրքը քննէ ընդունելով, մեծ ու փա-  
ռելական փառաբանութիւն առաքեմք  
միշտ դէպի երկինք, բու ամենազօր Տէ-  
րութեանդ, ո՞վ Քրիստոս Աստուած մեր-  
Այժմ եւ միշտ և յաւիտեանս. Ամէն:

Եւ այս Սուրբ Աստուած՝ ըստ  
պարզածի: Աստուայ

(Ա.-ք.) Սուրբ Աստուած, Սուրբ  
եւ հզօր, Սուրբ եւ անմահ, որ  
Խաչեցար (կամ Յարեար) փասն  
մեր. ողորմեամեզ, (Եբէջ՝ Կրէնեա՝.)

ՄԱՂԹԱՆՔ Փրկել զմեզ. եւլն.  
ՔԱՐՈՁ Վասն լսելի լինելոյ. եւլն.  
(Տես երես 346-8)

ՓՈՒՍ ՍԱՂՏԱՅ ՃԻ.

(Ա.-ք.) Համբարձի զաշխիհ ի լերինս,  
ուստի եկեցէ ինձ օգնութիւն:

Օգնութիւն ինձ՝ ի Տեսաւնէ եկեցէ,  
որ արար գերկինս եւ գերկիր:

Մի ար՝ ի սասանութիւն զոսն քո,  
եւ մի ննջեցէ պահապան քո:  
Որպէս ոչ ննջէ եւ ոչ ՚ի քուն եր-  
ժայ պահապանն իւրայէլի:

Տէր պահեցէ զքեզ, եւ Տէր ընկալ-  
ցի աջոյ ձեռամբ իւրով:

Արեգակն ՚ի տուէ քեզ մի մեղիցէ,  
եւ մի լուսին ՚ի գիշերի:

Տէր պահեցէ զքեզ յամենայն չա-  
րէ, պահեցէ Տէր զանձն քո:

Տէր պահեցէ զմուս եւ զելքս՝ յայ-  
տրմ հետ մինչեւ յաւիտեան:

Փառք Հօր եւ. Այժմ եւ միշտ:

Եւ այս առ Համբարձի Շար-  
կանն ըստ պարզածի: Կէրակամք  
(չաբաթ երեկոյ) զայս Շարականն ասա՝:

(Ա.-ք.) Սուրբ եւ Տէր զօրութեանց, որ  
բնակեալդ ես ՚ի յերկինս. և բարեբանիս  
՚ի սրբոց բոց:

Երկնային զօրութիւնք . Սերովբէք եւ  
Քերովբէք . անդադար օրհնեն սուրբ  
զԱնունդ քո :

Բահանայք ընդ նոսին պաշտօնեայք եւ  
ժողովուրդք . երկրպագեսցուք Տէրու-  
Ցեանդ քո :

Լոյսդ որ յառաջ քան զյաւիտեանս  
'ի Հօրէ առաքեցար . ե լուսով իմանալ-  
եաւ լցեր զտրարածս . օրհնենալ եւ Սա-  
գաւոր յաւիտենից :

Որ զլոյսն 'ի սկզբանէ հաստատեցեր  
վերստին . ե զխաւարն անցիտուՑեան  
ՅարուՑեամբդ քո հալածեցեր . օրհն .

Ուստի ե մեր լուսաւորեալքս ընդ լու-  
սեղէն զուարճնոցն , երգեսցուք ցնծու-  
Ցեամբ 'ի յարուՑեան երեկոյիս . օրհ-  
նեալ եւ Սագաւոր յաւիտենից :

Երկնաբաղաբացին Յովհաննէս մեծ  
'ի ծնունդս կանանց , բարոզէր յանապա-  
տի սգդ արարող բարբառովն՝ զժագումն  
լուսոյ Արեգականն արդարուՑեան :

Ճշմարիտ Մարգարէ ե ձեռնադրող Որդ-

ւոյն Աստուծոյ . յառաջընծաց կարանկտ  
ե պատմող աստուածային օրինացն , հոր-  
դէր ճանապարհս Սագաւորին յաւիտենից .  
Յանօրէն զինարբուսն մուեզնեալ Հե-  
րովղիադայ . 'ի պարգեւի մասին խնդրէր  
զզուլիս Մարգարէին . շիշուցանել զա-  
րուսեակն ե զանաղօտ լապտերն .

Փառք Հօր ե Որդոյ ե .

Սրբուհոյ Աստուածածինին բարեխօ-  
սուՑեամբ , պարգեւեան երկրպագուացս  
Ամենասուրբ ԵրրորդուՑեանդ . զյարու-  
Ցիսն յուսոյ կենացն յաւիտենից :

Այժմ ե Միշտ ե յաւի .

Զհաւատացեալ ժողովուրդս սուրբ Եր-  
րորդուՑեանդ . ե զապաւինեալս 'ի խո-  
բան փառաց քոց՝ պահեան անխառով 'ի  
խաղաղութեան :

Ք Ա Ր Ո Ջ

(Աշէ.) Վասն խաղաղութեան ա-  
մենայն աշխարհի , եւ հաստա-  
տութեան սրբոյ Եկեղեցոյ զՏէր  
աղաչեսցուք :

Ասասցուք ամենեքեան միա-  
բանութեամբ:

Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ողոր.

Ա Ղ Օ Յ Ք

(Աշ.) Հայր գթած. բարեխնա-  
մող, Արարիչ ամենայն արարա-  
ծոց. ընկալ զպաղատանս ծառա-  
յից քոց՝ ի ժամ երեկոյիս. որ ա-  
ռատդ ես առ ամենեսիան՝ պար-  
գեւօք բարերարութեան քու  
Ողորմեա՛, Տէր, ամենայն աշ-  
խարհի, եւ եկեղեցւոյ քում  
սրբոյ. հիւանդաց, վշտացելոց  
ճանապարհորդաց, նաւորդաց,  
խոստովանողաց, ապաշխարո-  
ղաց, եւ հոգւոյն հանգուցելոց:  
Զի դու, Տէր ամենակալ, գի-  
տես զպէտս մեր եւ զկարիս՝  
առաւել քան զոր խնդրեմք եւ

իմանամք. եւ քեզ ընդ Որդւոյ  
եւ Ամենասրբոյ Հոգւոյդ, վա-  
յելէ փառք իշխանութիւն եւ  
պատիւ այժմ եւ միշտ եւ.

ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԱՂՕԻՅԻՆ

Ո՛վ Հայր գթած, եւ բարեխնամ, Արա-  
րիչ ամենայն արարածոց. ընդունէ քու  
ծառաներուդ աղաչանքը այս իրիկուան  
ժամուս, որ առատաձեռն ես ամենուն  
քու բարերարութեանդ պարգեւներով:

Ողորմէ՛ Տէր, բոլոր աշխարհի եւ քու  
սուրբ եկեղեցիիդ. (ողորմէ՛) հիւանդնե-  
րուն, վշտացեալներուն, ճանապարհորդ-  
ներուն, նաւով գնացողներուն, խոստո-  
վանողներուն, ապաշխարողներուն, եւ  
հանգուցեալ հոգիներուն, Քանգիի, դու, սվ  
ամենակալ Տէր, գիտես մեր պէտքն ու  
կարօտութիւնները մեր խնդրածէն ու ի-  
մացածէն շատ աւելի. եւ քեզ կը վայելէ  
Որդւոյ եւ ամենասուրբ Հոգւոյն հետ՝ փառք  
իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ.

Մեծ պահոց Տեղ այս պեղ կ'ըսեն  
 Տէր ամենակալ, իւր Քարոզըն ու  
 Աղբիւրով: (Տես էրես 616-624) Լ. յե-  
 րոյ Որ բնակեալ Սաղմուսը: Իսկ ու-  
 բիշ Պահոց Լ Մարտիրոսոց որմէ  
 օրեր՝ Տայն Որ բնակեալ. Լ Կիւր-  
 կահոյ էրէկոսնէրը Աստ օրհնեցէք  
 Սաղմուսը:

ԱՐՁԱԿՄԱՆ

ՓՈՒՆ ՍԱՂՄՈՍ Գ.

(Առջ.) Որ բնակեալն է յօգնութիւն  
 Բարձրելոյն, ընդ հովանեալ Ասուծոյ  
 յերկինս հանգիցէ:

Ասացէ Տեառն, ընդունող իմ ես,  
 ապաւէն իմ Ասուած, եւ ես յու-  
 սամ 'ի նա:

Նս փրկեացէ զիս յորոգայթէ որ-  
 սողին, եւ 'ի շանից 'ի խռովութենէ:

Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ.  
 'ի հովանի թեւոց նորա յուսացիս:

Որպէս զէն շուրջ եղիցի զքեւ Տըշ-  
 մարտութիւն նորա:

Ոչ երկիցես զու յերկիւղէ՝ զիշերի,  
 եւ ոչ 'ի նեփե՛ որ Թռչի 'ի տուէ:

Յիրէ որ շրջի 'ի խուարի. 'ի գայ-  
 Թակղութենէ՛ զիւին 'ի հասարակ ա-  
 ւուր:

Անկցին 'ի կողմանէ՛ քումմէ հազար  
 եւ թիւրք ընդ աջմէ՛ քումմէ, եւ առ  
 քեզ ինչ ոչ մերձեցին:

Բայց միայն աջօր քովք հայեացիս  
 զու, եւ զհասուցումն մեղաւորացեսե-  
 ցես. զի զու, Տէր, յոյս իմ ես:

Չբարձրեալն արարեք քեզ ապաւէն  
 զի ոչ հասցեն առ քեզ չարք, եւ ասն-  
 ջանք մի մերձեցին 'ի յարկս քո:

Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է  
 վասն քո, 'ի պահել զքեզ յամենայն  
 ճանապարհս քո:

Ի բազուկս իւրեանց ընկալցին ըզ-  
 քեզ, զի մի երբէք հարցես զքարի  
 զոսն քո:

Ի վերայ իմից եւ քարբից գնացես  
 զու, եւ առ ոսն կոխեսցես զառիւծն  
 եւ զփիշապն:

Քանզի յիս յուսացաւ, եւ փրկեցից զնա, հովանի եղէց նմա, զի ծանեաւ զանուն իմ:

Կարդացէ առ իս՝ եւ ես յուայց նմա, եւ առ նմա եղէց ՚ի նեղութեան:

Փրկեցից եւ փառաւոր արարից ըզնա. երկայն առուրք լցուցից, եւ ցուցից նմա զփրկութիւն իմ

(ՃԻՐ.) Առ քեզ Տէր համբարձի զաչքս իմ, որ քնակեալդ ես ՚ի յերկինս:

Որպէս աչք ծառայի ՚ի ծեռն տեառն իւրոյ. եւ որպէս աչք ազախնոյ ՚ի ծեռն տիկնոջ իւրոյ:

Այնպէս են աչք մեր առ քեզ Տէր Աստուած մեր. մինչեւ ողորմեսցիս ՚ի վերայ մեր:

Ողորմեա՛ մեզ Տէր ողորմեա՛ մեզ. զի բազում լցաք արհամարհանօք:

Եւս առաւել լցան անծիմք մեր նախասնօք, որք նախասէին զմեզ. եւ արհամարանօք ամբարտաւանից:

(ԾԳ.) Աստուած. յանուան քում կե-

ցն զիս, եւ ՚ի զօրութեան քում իրաւարա ինձ:

Աստուած. լուր աղօթից իմոց, ունկնդիր բանից բերանոյ իմոյ:

Օտարք յարեան ՚ի վերայ իմ, եւ հրգօրք խնորեցին զանձն իմ, եւ ոչ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց:

Անա՛ Աստուած օգնական իմ, եւ Տէր ընդունող հոգւոյ իմոյ:

Ի դաբձուցանել զչարն ՚ի թշնամիս իմ, մշտարտութեամբ քով սասակեան զնոսա:

Ես կամօք իմովք պաշարագս մասուցից քեզ. եւ խոստովան եղէց անուան քում Տէր, զի բարի է:

Յամենայն նեղութենէ իմմէ փրկեցեր զիս, եւ ՚ի թշնամիս իմ ետեսակն իմ:

Փառք Հօր եւ. Այժմ եւ միշտ եւ յա:

## Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

**Չ**բարձրեալն զՔրիստոս՝ ա-  
րասցուք մեզ ապաւէն, զի ճշ  
հասցեն առ մեզ չարք. եւ տան-  
ջանք մի մերձեացին ի յարկս մեր:

## Ք Ա Ր Ո Ձ

(Ա. 2.) **Ե**ւ մեք միաբան զողոր-  
մութիւն ՚ի Տեառնէ խնդրելով,  
ասացուք ամենեքեան միաբա-  
նութեամբ:

Տէր ողոր: Տէր ողոր: Տէր ողոր:

## Ա Ղ Օ Յ Ք

(Ա. 4.) **Յ**ոյս կենաց, ընդունող ա-  
ղօթից, քաւիչ մեղաց եւ կատարիչ  
խնդրուածաց Քրիստոս Աստուած  
մեր. ընկալ զպաղատանս մեր ՚ի  
ժամ երեկոյիս բարեխօսութեամբ  
սուրբ Աստուածածնիդ եւ աղա-  
չանօք ամենայն սրբոց քոց: Լուր  
մեզ Տէր, եւ ողորմա. ներեա՛

քաւեա՛ եւ թող զմեզս մեր. ար-  
ժանաւորեա՛ գոհութեամբ փա-  
ռաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ  
սրբոյ Հոգւոյդ. Այժմ եւ միշտ.

Յիշեա՛ Տէր զպաշտօն. եւն.  
Բարերար եւ բազումող. եւն.

Հայր մեր որ յերկինս:

## Կ Ի Բ Ա Վ Ա Մ Տ Ի Ց

## Փ Ո Ս Ս Ա Ղ Մ Ո Ն Ճ Լ Թ.

(Ա. 2.) **Ա**ս օրհնեցէք ամենայն ծա-  
ւայր Տեառն զՏէր. ո՛ կայր ՚ի օսւն  
Տեառն եւ ՚ի գաւիթս Ասուծոյ մերոյ,  
ի զիշերի համբարձէք զծնուս ձեր  
՚ի սրբութիւն, եւ օրհնեցէք զՏէր:

Օրհնեցէ զմեզ Տէր ՚ի Սիօնէ, որ  
արար զերկինս եւ զերկիր:

(Ճ Լ Է.) **Խ**օսուովսն եղէց քեզ Տէր՝  
բոլորով սրբիւ իմով. սուաջի հրեշ-  
տակաց սողմոս ասացից քեզ:

Ձի լուար զբանս բերանոյ իմոյ,  
եւ կրպագից 'ի Տաճար սուրբ քո. եւ  
խոստովան եղէց անուան քում. վա-  
սըն ողորմութեան եւ ճշմարտու-  
թեան քոյ:

Մեծ աւարտ յամենայնի զանուն  
սուրբ քո, յորում աւուր կարգամ առ  
քեզ, վաղվաղակի լուր ինձ. եւ բա-  
զում արացես զօրութիւնս յանձն իմ:  
Խոստովան եղիցին առ քեզ ամե-  
նայն թագաւորք երկրի, զի լուան  
զբանս բերանոյ քո. եւ օրհնեսցեն  
զճանապարհս քո:

Մեծ են փառք Տեառն. բարձր է  
Տէր. զխոնարհս Տեսնէ, եւ զբար-  
ձունս 'ի հեռասանէ ճանաչէ:

Թէ զնացից ես 'ի մէջ նեղութեանց.  
կեցուցես զիս 'ի բարկութենէ թըշ-  
նամոյն:

Չգեցեր զձեռն քո. եւ փրկեաց զիս  
այք քո. եւ Տէր հասուցէ ընդ իմ:

Տէր ողորմութիւն քո յաւիտեան. ըզ

գործս ձեռաց քոց մի անեսս առնիր.  
(ԾԳ.) Ասուած յանուան քում կե-  
ցն զիս եւ 'ի զօրութեան քում իրաւ  
արա ինձ: (Տե՛ս երես 748)

## Ք Ա Ր Ո Ջ

(Աւչ.) Խնդրեսցուք հաւատով  
միարանութեամբ 'ի Տեառնէ՛ զի  
զողորմութեան զչնորսս իւր ա-  
րացէ՛ 'ի վերայ մեր. Տէրն ամե-  
նակալ կեցուցէ՛ եւ ողորմեսցի՛:

(Իւկէր+) Կեցո՛, Տէր: (յոյնէ-)  
Տէր ողոր. Տէր սզոր. Տէր ողոր:

## Ա Ղ Յ Ք

(Աւչ.) Թագաւոր խաղաղութեան  
օգնական եւ Փրկիչ անձանց  
մերոց, Բրիտոնս Աստուած մեր,  
պարսպեալ պահեա՛ զժողո-  
վուրդս քո ընդ հովանեաւ սուրբ  
եւ պատուական խաչիւրդ քո 'ի



խաղաղութեանն Փրկեա՛ յերե-  
ւելի եւ յանբերեոյթ թշնամեոյն.  
արժանաւորեա՛ գոնութեամբ  
փառաւորել զքեզ ընդ Հօր եւ  
ընդ Սրբոյ Հոգւոյդ. Այժմ՛ եւ .

## ՔԱՐՈՋ ԽԱՅԻ

(Ա. 2.) Սուրբ Խաչիւս աղաչեա-  
ցուք զՏէր, զի սովաւ փրկեացէ  
զմեզ ՚ի մեզաց. եւ կեցաւսցէ  
չնորհիւ ողորմութեանն իւրոյ.  
Ամենակալ Տէր Աստուած մեր,  
կեցո՛ եւ ողորմեա՛ :

## Ա Ղ Օ Ք Ք

(Ա. 4.) Պահպանեա՛ զմեզ, Բրիս-  
տոս Աստուած մեր, ընդ հովանեաւ  
սուրբ եւ պատուական Խաչիւդ  
քով ՚ի խաղաղութեանն. փրկեա՛  
յերեւելի եւ յանբերեոյթ թըշ-  
նամեոյն. Արժանաւորեա՛ գոնու-  
թեամբ փառաւորել զքեզ ընդ

Հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ.  
Այժմ՛ եւ միշտ եւ յաւիտեանս  
յաւիտենից. Ամէն

Օրհնեալ Տէր մեր Յիսուս  
Քրիստոս. Ամէն

Հայր մեր որ յերկինս:

ՎԵՐՋ ԵՐԵՎՈՅԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ



**Ժ Ա Մ Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Է**  
**ԽԱՂԱՂԱԿԱՆԻ**

(Առ հասարակ բոլոր Պահոց օրեր՝ Երե-  
կոյեան Ժամերգոս-Նեանէն ետքը ԽԱՂԱ-  
ՂԱԿԱՆԻ Ժամերգոս-Նեանը կ'սկսի:  
Աղօթեաներն՝ Ապաշինարոս-Նեան օրե-  
րոս էրէկոաններն առանցնոս-Նեան մէջ.  
կրնայ կարգաւ ճարարոս-Նեամբ:)

**ԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ**


**ՀԱՍՈՐԱԿԱՑ ԱՂՕՐԻՑ**

**ԽԱՂԱՂԱԿԱՆ ԺԱՄՈՒՆ**

ՈՐ ԿԱՏԱՐԻ Ի ԴԼՄՍ

**ՀՈԳԻՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՑ**

ԱՅՆ ԵՒ Ի ԴԼՄՍ ԲԱՆԻՆ ԱՍՏՈՒԾՈՑ  
ՈՐ ԵԳԱՆ Ի ԳԵՐԵԶՄԱՆԻ, ԵՒ ԷՋ  
Ի ԴՅՈՒՍՍ, ԵՒ ԽԱՂԱՂԱԻԹԻՒՆ  
ԱՐԱՐ ՀՈԳԻՈՅՆ:



ՍԱՂՄՈՍ ԼԳ. 1-3.

**ՕՐՀՆԵՑԻՑ** զՏէր յամենայն

ժամ, յամենայն ժամ օրհնուցիւն  
նորա 'ի բերան իմ:  
Ի Տէր պարծեսցի անծն իմ, լուի-  
ցեն ճեղք, եւ ուրախ եղիցին:  
Մեծ արարէք զՏէր ինեւ, եւ բարձր  
արացուք զանուն նորա 'ի միասին:

Ինդրեցի 'ի Տեառնէ եւ լուաւ ինձ,  
յամենայն նեղութենէ իմմէ փրկեաց  
զիս:

Մասիք առ Տէր եւ առէք զոյս,  
եւ երեսք ծեր մի ամաչեացեն:

Այս աղբաս կարգաց առ Տէր, եւ  
Տէր լուաւ սմա, յամենայն նեղու-  
թենէ սորա փրկեաց զսա:

Բանակք Հրեշտակաց Տեառն շուրջ  
են զերկիւղածովք իւրովք, եւ պա-  
հեն զնոսա:

Փառք Հօր եւ. Այժմ եւ միշտ.

եւ եւս խաղաղութեան զՏէր.

Օրհնութիւն եւ փառք Հօր եւ.

**ԵՐԳ ԱՍՏԻՃԱՆԱՅ**

**ՍԱՂՄՈՍ ԸԺԹ.**

Ի նեղութեան իմում ես առ Տէր  
կարգացի, եւ լուաւ ինձ Տէր. փրկե-  
եաց զանձն իմ ի շրթանց նենգաւո-  
րաց եւ ի լեզուէ չարէ: եւլն.

Զկանոնն Բոժանբայի սաս, Բայց  
ոմնէ՛ր Ալէլու շառէն, զի Երբ Աս-  
տիճանաց է: (Տես ի Յաւարտարանն.)

**Օրհնեալ Տէր մեր. Հայր մեր.  
Քահ. Տէր, Աստուած փրկու-  
թեան իմոյ, 'ի տուէ կարգացի  
եւ գիշերի առաջի քո:**

**Մըլ. Մտցեն աղօթք իմ առաջի  
քո Տէր, խոնարհեցի ունկն քո  
'ի խնդրուածս իմ:**

**Քահ. Փառք Հօր եւ. Այժմ եւ.**

**Մըլ. եւ եւս խաղաղութեան.**

**Քահ. Օրհնութիւն եւ փառք.**

**ՓՈՍ ՍԱՂՄՈՍ Դ.**

(Ա. Է.) Ի ԿԱՐԿԱԼ իմում լուար ինձ,  
Աստուած, ըստ արդարութեան, ի նե-  
ղութենէ ինձ անդորր արարեւ. ողոր-  
մեա՛ ինձ եւ լուր աղօթից իմոց:

Որդիք մարդկան, մինչեւ յերբ էք  
խտասիրք. ընդէր սիրէք զանձու-

Պիւն, եւ խնդրէք զսուծիւն:

Ծամերձուր, զի սրանչեղիս արար  
Տէր սրբոյ իւրում. եւ Տէր լուիցէ  
ինձ ի կարգալ ինում առ նա:

Բարկանայք՝ եւ միմեղանչէք. զոր  
ինչ ասէք ի սիրսս ձեր՝ յանկողինս  
ձեր զղջացարուք:

Մասուցէք պատարագս արդարու-  
թեան, եւ յուսացարուք ի Տէր:

Բազումք ասէին թէ՛ յոչ ցոցցէ մեզ  
զբարութիւն Տեառն. նշանեցաւ առ  
մեզ յոյս երեսաց քոց. եւ ետուր ու-  
րախութիւն սրտից մերոց:

Ի պահոյ ցորենոյ՝ զինւոյ եւ ձիւնոյ  
իւրեանց լցուցեր զնոսս:

Խաղաղութեամբ յայս եւ ի սոյն  
ննջեսցուք եւ զարթիցուք. զի դու,  
Տէր, միայն առանձին յուսով քո  
ընակեցուցեր զմեզ:

(Զ.) Տէր, մի սրտաբուծեամբ քով  
յանդիմաներ զիս, եւ մի բարկու-  
թեամբ քով խրատեր զիս:

Ողորմեա՛ ինձ Տէր, զի հիւանդ եմ  
ես. բժշկեա՛ զանձն իմ. զի խռովե-  
ցան ոսկերք իմ:

Անձն իմ յոյժ խռովեցաւ, եւ դու,  
Տէր, մինչեւ յերբ:

Դա՛րձ, Տէր, եւ փրկեա՛ զանձն իմ,  
կեցն՝ զիս, Տէր. քս ողորմութեան  
քում:

Զի ոչ որ է որ ի մահու յիշէ զրեզ,  
կամ ի դժոխս խոստովան առնիցի  
առ քեզ:

Վաստակեցայ ես ի հեծութեան ի-  
մում, լուացի զամենայն զիշեր զմա-  
հիմս իմ. եւ արտաուօք իմովք զան-  
կողինս իմ թացի:

Խռովեցաւ ի սրտաբուծենէ՛ ակն իմ,  
եւ մաշեցայ ես ի վերայ ամենայն  
ձշնամեաց իմոց:

Ի բաց կացէք յինէն ամեներեան,  
ոյր զորժէք զանօրէնութիւն:

Լուաւ Տէր ձայնի լալոյ իմոյ, լուաւ  
Տէր աղօթից իմոց, եւ Տէր զխնդր-  
ուածս իմ ընկալաւ:

Ամաչեսցեն եւ խռովեսցին յոյժ  
ամենայն թշնամիք իմ, դարձցին յեսս  
եւ ամաչեսցեն յոյժ վաղվաղակի եւ  
խռովեսցին:

(ԺԲ.) Մինչեւ յերբ, Տէր, մոռանաս  
զիս իսպառ, մինչեւ յերբ դարձուցա-  
նես զերեսս քո յինէն:

Մինչեւ յերբ զնեմ զխորհուրդս  
յանձն իմ, եւ ցաւք սրտի իմոյ զա-  
ւուրս:

Մինչեւ ցերբ բարձրանայ թշնամին  
ի վերայ իմ, նայեա՛ եւ լուր ինձ,  
Տէր Աստուած իմ:

Լոյս սուր, Տէր, աչաց իմոց, զի մի  
երբէք ննչեցից ի մահ:

Մի ասացէ թշնամին թէ յաղթեցի  
նմա, կամ նեղիչք իմ ցնծացեն թէ  
ես սասանեցայց:

Ես յողորմութիւնս քո, Տէր, յուսա-  
ցայ, ցնծացաւ սիրտ իմ ի փրկութեան  
քում, օրհնեցից զՏէր զբարեբերդ իմ:

(ԺԵ.) Պահեա՛ զիս, Աստուած իմ,

զի ես ի քեզ յուսացայ. ասացի  
Տեսուն. Տէր իմ ես դու, եւ բարիք  
իմ ինձ ի քէն են:

Մերոց քոց որք են յերկրի քում,  
սքանչելի արարեք զամենայն կամս  
իմ ի նոսա:

Յամախեսցին հիւանդութիւնք նո-  
ցա. յես այսորիկ ապավաղվաղեսցին:

Ոչ ժողովեցայց ի ժողովս նոցա  
յարեանց. եւ ոչ յիշեցից զանուանս  
նոցա ի շրթունս իմ:

Տէր, բաժին ժառանգութեան իմոյ  
եւ բաժակի իմոյ, զո՛ւ ես, որ այսրէն  
դարձուցանես զժառանգութիւն իմ  
յիս:

Վիճակք եյին ինձ ընդ ընտիրս եւ  
ժառանգութիւն իմ հաճոյ եղեւ ինձ:

Օրհնեցից զՏէր՝ որ իմաստուն արար  
զիս. մինչ ի զիշերի եւս իւրացեցին  
զիս երկկամունք իմ:

Յառաջագոյն սեսանէի զՏէր առա-  
ջի իմ յամենայն ժամ, զի է ընդ աջմէ  
իմմէ՛ զի մի ստասնեցայց:

Վասն այսորիկ ուրախ եղել սիրս իմ, եւ ցնծացաւ լիզու իմ, եւս եւ մարմին իմ բնակեացի յուսով:

Զի ոչ թողցես արայ քու՛մ սեսանել զապականուծիւն:

Յուցեր ինձ զճանապարհս քո կենաց. լցուցեր զիս ուրախութեամբ երեսաց քոց ի քաղցրութենէ վայելչութեան աջոյ քո մինչ իսպառ:

(ԺԶ.) Լ՛ուր, Տէր արդարութեան, եւ նայեա՛ ի խնդրուածս իմ. ունկն դիր աղօթից իմոց, զի ոչ շրժամբք նենգաւորօք:

Յերեսաց քոց իրաւունք ինձ ելցեն, եւ աչք իմ տեսցեն զուզողութիւն:

Փորձեցեր զսիրս իմ եւ քննեցեր ի գիշերի. փորձեցեր զիս՝ եւ ոչ զսալ յիս անիրաւութիւն:

Մի խօսեցի բերան իմ զգործս որդւոց մարդկան. վասն բանից շքրժանց քոց եւ պահեցից զճանապարհս խիստ:

Հաստատեա՛ զշաւիղս իմ ի ճանապարհի քու՛մ. զի մի գայթակղեսցին զնացք իմ:

Ես առ քեզ, Տէր, կարդացի՛ զի լուար ինձ, Ասուած. խոնարհեցն առ իս զունկն քո եւ լուր բանից իմոց:

Սքանչելի արարեր զողորմութիւնս քո, ո՛ վրկես գայնասիկ ոյք հակառակ կան աջոյ քո:

Պահեա՛ զիս որպէս բիբ ական, ընդ հովանեաւ Թեւոյ քոց ծածկեսցես զիս յերեսաց ամբարշտաց, ոյք տառապեցուցին զիս:

Թշնամիք զանձն իմ պաշարեցին, եւ ի մարպս իւրեանց արգելին. եւ բերանք նոցա խօսեցան զանբարտաւանութիւն:

Մերժեցին զիս եւ այժմ զարձեալ պատեցան զինու. ուշ կղին խոնարհեցուցանել զիս յերկիր:

Համարեցան ինձ որպէս առիւծ զի պատրասի յորս, եւ որպէս կորիւն

առիւծու՝ զի նստի դարանեալ:

Արի, Տէր, ժամանեա՛ նոցա եւ խափանեա՛ զնոսա, փրկեա՛ զանձն իմ յամբարշտաց, ի սոյ եւ ի ձեռաց թշնամւոյն:

Տէր, կորն զնոսա յերկէ, բաժանեա՛ եւ խափանեա՛ զնոսա ի կեանս իւրեանց:

Դաղսնեօք քովք լցան որովայնք նոցա, յագեցան կերակրովք եւ թողին զմնացուածս զայոց իւրեանց:

Ես արդարութեամբ երեւեցայց երեսաց քոց, եւ յագեցայց յերեւելի փառաց քոց:

(Եսթ.) Դաս արա՛ ինձ, Ասուած, եւ իրաւ արա ինձ ի դասասանի իմում:

Յազգէ՛ որ ոչ է սուրբ, ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա՛ զիս:

Դու Ասուած, հզօրիչ իմ ես, ընդէր մոռացար զիս, ընդէր տրտում զնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ:

Առաքեա՛, Տէր, զլոյս քո եւ զձըմարտութիւն քո, զի առաջնորդեսցեն

ինձ, եւ հանցեն զիս ի լեառն սուրբ եւ ի յարկս քո:

Մտից առաջի սեղանոյ Ասուծոյ, առ Ասուած՝ որ ուրախ առնէ ըզմանկութիւն իմ:

Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ, Ասուած, Ասուած իմ:

Արդ ընդէր տրտում ես անձն իմ, կամ ընդէր խռովես զիս, յուսա՛ առ Ասուած, խոստովանեա՛ նմա փրկիչ երեսաց իմաց Ասուած է:

(Եսթ.) Ասուած, յօգնել ինձ նայեաց, եւ Տէր, յընկերել ինձ փութա՛:

Ամաչեսցեն եւ յամօթ լիցին ոյք խնորէին զանձն իմ, դարձցին յեսս եւ ամաչեսցեն ոյք խորհէին ինձ չար:

Դարձցին առ ժամայն ամաչեսցեալք՝ ոյք ասէին ինձ վա՛շ վա՛շ:

Յնժացեն եւ ուրախ լիցին ի քեզ ամենեքեան՝ ոյք խնորեն զքեզ. Տէր:

Ասացեն յամենայն ժամ՝ մեծ է Ասուած, եւ ոյք սիրեն զփրկութիւնս քո:

Ես աղբաս եւ ճնանկ եմ, Աստուած,  
օգնեա՛ ինձ. օգնական եւ փրկիչ իմ  
եմ. եւ դու, Տէր իմ, մի յամենա՛ր:

Տուր զօրութիւն ծառայի քո. կեցն՛  
զորդի աղախնոյ քո. եւ արա՛ առ իս  
նշան բարութեան:

Տեսցեն ասելիք իմ եւ ամաչեսցեն,  
զի դու, Տէր, օգնեցեր ինձ եւ մխի-  
թարեցեր զիս:

Փառք Հօր եւ . Այժմ եւ միշտ եւ.

## Ե Ր Պ.

(Աւփ.) Ենորհեան մեզ, Տէր, ՚ի զիշերի  
զերկնային զխաղաղութիւն քո. և պահեն  
զմեզ ՚ի պատրանաց Թշնամւոյն՝ ամենա-  
յաղժ զօրութեամբ սուրբ Խաչի քո:

Տէ՛ր Աստուած փրկութեան իմոյ, ՚ի  
տուէ կարգացի և զիշերի առաջի քո:

Մտցեն աղօժք իմ առաջի քո, Տէր՝  
խոնարհեցի ունկն քո ՚ի խնդրուածս իմ:  
Եկեսցէ առ մեզ Տէր, պահպան ՚ի քէն՝  
և պահեսցէ զմեզ յամենայն ժամ:

Առաբան ՚ի մեզ, Տէր, զզօրութիւն սրբոյ

Խաչին որ պահեսցէ զմեզ յամենայն ժամ.  
Արժանի արն, Տէր, զերեկս զայս խա-  
ղաղութեամբ, և առանց փորձութեան  
անցն զմեզ:

Արժանաւորեան Տէր զգիշերս զայս,  
խաղաղութեամբ և առանց մեղաց պահելով  
զմեզ:

Ընդ մեզ Տէր Աստուած, զիտասշիբ հե-  
թանոսք և պարտեցարուք. զի Աստուած  
ընդ մեզ է,

Եւ լուարուք զայս ՚ի ծագաց մինչեւ ՚ի  
ծագս երկրի. զի Աստուած ընդ մեզ է:

Եւ հօգօրացեալքդ պարտեցարուք. զի  
Աստուած ընդ մեզ է:

Եւ զի Թէպէտ և դարձեալ զօրանայք,  
դարձեալ ՚ի պարտութիւն մասնեսցիք,  
զի Աստուած ընդ մեզ է:

Եւ զխորհուրդն զոր խորհիք՝ խափանէ  
Տէր. զի Աստուած ընդ մեզ է:

Եւ զբանն զոր խօսիք՝ մի մնասցէ առ  
ձեզ. զի Աստուած ընդ մեզ է:

Եւ բանզի յերկիրէ ձերմէ մեք ոչ եր-  
կիցուք, և ոչ խռովիցուք. զի Աստուած.



Եւ զՏէր Աստուած մեր փառաւոր արասցուք, և նա եղիցի մեզ յերկիւզ. զի եւ յուսացեալ եղիցուք մեր 'ի նա, և նա եղիցի մեզ 'ի սրբութիւն. զի Աստ.

Եւ յուսացեալ եղիցուք մեր 'ի նա, և նա եղիցի մեզ 'ի փրկութիւն. զի Աստու. Եւ ահաւասիկ ես և մանկունք իմ. զոր ետ ինձ Աստուած. զի Աստուած ընդ.

Եւ ժողովուրդ որ նստէր 'ի խաւարի՝ ետես զլոյս մեծ. զի Աստուած ընդ.

Եւ որ բնակեալքդ էք 'ի խաւարի և 'ի ստուերս մահու, լոյս ծագեսցի առ ձեզ. զի Աստուած ընդ մեզ է:

Եւ քանզի Մանուկ ծնաւ, Որդի և տըւաւ մեզ. զի Աստուած ընդ մեզ է:

Եւ որոյ իշխանութիւն իւր 'ի վերայ ուսոց իւրոց. զի Աստուած ընդ մեզ է:

Եւ որ կոչի անուն նորա Մեծի խորհրդոյ Հրեշտակ. զի Աստուած.

Եւ Սբանչելի խորհրդակից. զի Աստ. Եւ Աստուած հօգօր իշխան. զի Աստ.

Եւ իշխան խաղաղութեան Հայր հան-

դերձելոյ յաւիտենին. Տէր Աստուած ընդ մեզ է: (Եւս. Թ. 1-6: ԵՂ. 10.)

Եւ փառք Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ. Այժմ և միշտ և յաւիտենան յաւիտենից. Ամէն:

## Մ Ա Ղ Յ Ա Ն Ք

**Ի** մերձենալ երեկոյիս՝ համբառնամք զձեռս մեր 'ի սրբութիւն, զոր ինչ մեղաք այսօր խորհրդով, բանիւ, կամ գործով 'ի յանկողինս մեր զղջանալով. խոստովան լինելով զգաղտնիս սրտից մերոց ծածկագիտից Աստուծոյ, յուսալով յողորմութիւն քու Եւ միք, միաբան գոչեսցուք. յիշեա՛ զմեզ Տէ՛ր, յորժամ դասարքայութեամբ քով, եւ ողորմեա՛ մեզ:

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Իրիկուանս մօտենալու ստենք, ձեռքերնիս վեր կը վերցունենք սրբութիւնով.

և ինչ մեղք որ գործեցինք այսօր խորհրդով, խօսքով, կամ գործով, մեր անկողիններուն մէջ կը զոչամբ անոնց վրայ, և կը խոստովանիմք մեր սրտերուն զաղտնիքը ծածուկները զիտոյդ Աստուծոյդ առջև, քո ողորմութեանդ վրայ յոյսերնիս զնկելով: Ընտրի միաբան կը գոչեմք, յիշէ զմեզ, Տէր, երբ քու արքայութիւնովդ զաս, և ողորմէ մեզ:

## Ք Ա Ր Ո Ջ

Եւ եւս խաղաղութեան զՏէր.

(Աշ.) **Պ**ոհացարուք զՏեառնէ. որ իւրով ողորմութեամբն առաջնորդեաց մեզ. 'ի գործս տուրնջեան. եւ շնորհեաց մեզ միաբան գալ հասանիլ 'ի հանգիստ գիշերիս: Եւ մեք յամենայն ժամ աղաչեսցուք զմարդասէրն Աստուած, լինել պահապան անձանց մերոց. եւ նա իւրով ողորմութեամբն պահեսցէ զմեզ,

եւ առաջնորդեալ հասուցէ յիւր բարութեան հանգիստն. զոր խոստացաւ սիրելեաց իւրոց ճշմարիտն Աստուած Յիսուս Քրիստոս Տէրն ամենակալ. Կեցուցէ եւ ողորմեսցի:

Չհանգիստ գիշերիս խաղա.

Չհրեշտակ խաղաղութեան.

Չքաւութիւն եւ զթողութիւն.

Չարքայ խաչին մեծ եւ կարող.

Եւ եւս միա. Չանձինս. Ողոր.

## Ա Ղ Օ Յ Ք

(Աշ.) **Տ**էր բարերար, որ մեծաւ գթութեամբ քով պատրաստեցեր զյաւիտենական հանգիստն առաքինութեամբ աշխատելոցն. եւ կոչեցիր առ քեզ քաղցր ձայնիւ զժանրարեռնեալսն եւ զտաժանեալսն մեզօք, հանգիստ նոցա խոստանալով: Ծնորհեա՛ եւ մեզ, Տէր, անխռով խաղա-

ղութեամբ զղիշերս անցուցանել. եւ 'ի ծանրութենէ մեղաց զաշխատեալքս՝ ապահովեա՛ ռ զորմութեամբ քով. եւ արժանաւորեա՛ մշտնջենաւոր հանգըստեանն ընդ ամենայն սուրբս քո. Եւ գոհանալով փառաւորեացուք զքեզ ընդ Հօր եւ Ամենասուրբ Հոգւոյդ, Այժմ եւ.

## ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ո՛վ Տէր բարերար, որ բու մեծ գթութիւնովդ յաւիտենական հանգիստը պատրաստեցիր առաքինութիւնով աշխատողներուն համար. և անուշիկ ձայնով առքեզ կանչեցիր մեղքով ծանր բեռան տակ ինկածներն ու յոգնածները՝ հանգստութիւն խոստանալով անոնց. Շնորհէ՛ և մեզ, ո՛վ Տէր, անխռով խաղաղութիւնով անցունել այս գիշերս. և բու ողորմութիւնովդ ապահով (անվախ) ըրէ՛ զմեզ մեղաց ծանրութենէ յոգնածներս, և արժանի ըրէ՛ մըշտնջենաւոր հանգստութեան բու ամէն

սուրբերուդ հետ. Որ գոհանալով փառաւորեմք զքեզ Հօրը և ամենասուրբ Հոգւոյդ հետ, Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտե.

Խաղաղութիւն ամենեցուն  
Ասուածոյ երկիրպագեսցուք

Պարգեւատո՛ւ բարեաց եւ աղբիւր խաղաղութեան, Տէ՛ր Աստուած մեր, յամենայն սատանայական խռովութեանց խաղաղացո՛ զմիտս մեր եւ զխորհուրդս 'ի գիշերիս յայսմիկ, եւ յամենայն ժամանակիւ Որպէս զի առաջնորդեալք յանցաւոր կենցաղոյս, ժամանեցո՛ւք յաւիտենական երկնից արքայութեան քո. զոր պատրաստեցեր 'ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց. Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորեացուք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հօգիդ, Այժմ եւ միշտ.

## ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Տէր Աստուած մեր, որ բարիք պարգե-  
ւող ու խաղաղութեան աղբիւր ես, ամեն  
սատանայական խռովութիւններէ խաղա-  
ղացու մեր միտքն ու խորհուրդները այս  
զիշերուան մէջ և ամեն ժամանակ՝ Որպէս  
զի այս անցաւոր աշխարհէն բեզմով ա-  
ռաջնորդուելով, ժամանեմք (հասնիմք)  
երկնքի յաւիտենական արքայութեանդ՝  
որ աշխարհի սկիզբէն բու սուրբերուդ  
համար պատրաստեցիր: Եւ անոնց հետ  
զոհանալով փառաւորեմք Հայրը և Որդին և  
Սուրբ Հոգին. Այժմ և միշտ եւ յաւիտ.

## ՓՈՒՍ ՍԱՂՄՈՍ ԻԶ.

Տէ՛ր լոյս իմ եւ կեա՛նք իմ, ես  
յուժմէ՛ երկեայց. Տէ՛ր ապաւէն կե-  
նաց իմոց. ես յուժմէ՛ դողացայց:

Ի մերձենալ առ իս չարաց ուսել  
զմարմին իմ, նեղիչք իմ եւ թշնամիք  
իմ նորա սկարացան եւ անկան:

Թէ՛ պատրաստիցի ի վերայ իմ պա-

սերագմ, ո՛չ երկիցէ սիրս իմ. Թէ՛ յարի-  
ցէ ի վերայ իմ սակասամարս, սակայն  
եւ այսուիկ ի քեզ, Տէ՛ր, յուսացայ:

Զմի խնդրեցի ի Տեառնէ՛ եւ զսոյն  
աղայեմ, բնակիլ ինձ ի սան Տեառն  
զամենայն աւուրս կենաց իմոց:

Տեսանել ինձ զվայելչութիւն Տեա-  
ռըն. եւ հրաման աւլ ի սաճարի նորա:

Ծածկեաց զիս ի խորանի իւրում՝  
յաւուր չարի. ընդ յարկաւ արար զիս  
ի ծածկոյթ խորանի իւրում:

Ի վիմէ բարձր արարեք զիս, եւ  
այժմ բարձր արա՛ զզլուխ իմ ի վե-  
րայ թշնամեաց իմոց:

Շուրջ եղէց եւ մատուցից ի խորա-  
նի նորա պատարագ օրհնութեան,  
օրհնեցից եւ սաղմոս ասացից Տեառն:

Լուր, Տէ՛ր, ծայնի իմում, զի կարգացի  
առ քեզ, ողորմեա՛ ինձ եւ լուր ինձ,  
զի քեզ ասայ սիրս իմ, եւ խնդրեցին  
երեսք իմ զերեսս քո, Տէ՛ր, խնդրեցին:

Մի դարձուցանեք զերեսս քո յի-

նէն, եւ մի խոտորիւ բարկուծեամբ  
ի ծառայէ քուսմէ:

Օգնական իմ լեր, Տէր, մի անար-  
գեւ զիս, եւ մի թողուր զիս, Աս-  
տուա՛ծ փրկիչ իմ:

Հայր իմ եւ մայր իմ թողին զիս,  
եւ Տէր իմ ընկալաւ զիս:

Օրէնսդէս արա՛ զիս, Տէր, ի ծա-  
նապարհի քում, եւ առաջնորդեն  
ինձ ի շաւիղս քո ուղիս:

Վասն թշնամեաց իմոց, մի մասնեւ  
զիս ի ձեռս նեղաց իմոց:

Յարեան ի վերայ իմ վկայք մեղաց,  
եւ ստեցին ինձ յանօրէնութեան  
իւրեանց:

Հաւատացի սեասնել զբարութիւն  
Տեառն յերկրին կենդանեաց. համ-  
բեր Տեառն եւ քաջալերեա՛ց. զօ-  
րացս ի սիրտ քո, եւ համբեր Տեառն:

Փառք Հօր եւ. Այժմ եւ միշտ եւ յա .

## Ե Ր Գ.

## Տեառն Ներսիսի Շնորհալոյ

(«*Մէ՞ Պահոց երեկոյն երբ է՛ երբ*»)

Նայեանց սիրով, Հնչրըղ զըծած,

Ի քոյ ստեղծեալ զործըս ձեռաց,

Եւ ըզբանակըս Հրեշտակաց՝

Տնւր պահապան մեզ տըկարացս.

Փրկեն զանձինս ՚ի փորձանաց՝

Ի խաւարի շրջոյ դիւաց.

Զի ՚ի տուրնչեան եւ գիշերի՝

Տացուք բեզ փառս անլուսի:

Էին անեղ անըսկըզբան

Ծընունդ անծառ. Որդի եւ Բան,

Որ արարեր զտիւ զործոյ՝

Եւ զգիշեր ՚ի հանգիստ քնոյ.

Տնւր ի նընչել աչոց մարմնոյ՝

Արթուն լինել մեզ ըստ հոգւոյ. Զի.

Րարուն հոգւոց բանաւորաց

Ազբիւր լուսոյ բաշխող շնորհաց,

Ի փակիլ դրանց բնութեանց մարմնոց

Լոյս տուր աչաց սըրտից մերոց,

Ի զիշերաց առ բեզ կանխել՝  
Ընդ հրեղինացն օրհնաբանել. 2ի.

**Ս**ուրբըդ Սըրբոց Երրորդուծիւն.  
Ըզմեզ մաքրեն բեզ բնակուծիւն.  
Շնորհեն ընդ մանկանցն առազաստի  
Հանգչել ընդ բեզ 'ի յանկողնի.  
Տուր ըզհայցուած բարեկամին  
Ըզփոխ երից 'նըկանակին. 2ի.

**Ե**րեւելի լոյս ըստեղծեր.  
Ձտիւ և զգիշեր բաժանեցեր.  
Ծագեն մեզ, Տէր, 'ի զիշերի  
Ըզճառագայթս իմանալի.  
Տուր յամենայն ժամանակի  
Ձպահպանող աչ բո հովանի. 2ի.

**Ս**իրոյ բո հուր արկեալ յերկիր  
Բորբոքեսցի 'ի հոգիս մեր,  
Ձխորհուրդ սըրտից մեր մաքրեսցէ  
Ձլոյս զիտուծեան բո փայլեսցէ.  
Ի բնոյ մահու զմեզ զարթուսցէ.  
Ձմիտըս բոցով բով վառեսցէ. 2ի.

**Ի** բեզ նայիմբ Լոյսդ անմատոյց  
Ի զգայական ծածկեալ լուսոյ,

Որ վասըն մեր եղար 'ի գրի  
Եւ ննչեցեր 'ի տապանի.  
Առ մեզ ննչեան արժուն բնուծիւն.  
Հերքեան զչարին ներգործուծիւն. 2ի.

**Է**իդ լուսոյ անըստուերի  
Պաղատանօք կամբ առաջի.  
Որ փակեալ դրամբք երեկոյին  
Երեւեցար Մետասանին.  
Ընդ Թովմայի առ բեզ զոչեմբ.  
Տէր և Աստուած զբեզ դաւանեմբ.  
Է՛ջ և առ մեզ յերեկոյիս  
Եւ տուր զողջոյն բո 'ի հոգիս.

**Բ**ամեալքս զբեզ, Տէր, աղաչեմբ՝  
Մեզ յօգնուծիւն նայեան, հայցեմբ.  
Պահապանդ Իսրայէլի,  
Անձանց մերոց լեր հովանի.  
Օձեն առ մեզ խաղաղարար,  
Եւ ննչեսցուք անխառվարար,  
Ձի ընդ առաւօտըս կանխեսցուք  
Օրհնել զբեզ ընդ Հօր Հոգևով.  
Գոչման փողոյն Գարբիէլի  
Որ 'ի վերջնումըն զիշերի.

Լըսել արն գմեզ արժանի  
Եւ աշակողմն օղեաց դասի.

Անշէջ վառեալ լոյս լապտերաց՝

Ըստ իմաստուն շինգ Կուսանաց.

Ձի ընդ Փեսայիդ ՚ի յառագաստ՝

Հարսունք հոգւով մըտցուք ՚ի փառս:

Հարածեսն ՚ի մէնջ, Տէր, նշանաւ  
Խաչի բո՝ զընդդիմամարտ և զաներևոյթ  
գազանն. և մի տար յապականութիւն  
զբո ժառանգութիւնս:

Բարեխօսեսն վասն մեր, Աստուածա-  
ծին Մարիամ, որ ծնար զՏէր Աստուած,  
որ հովուէրն զԽարայէլ՝ ամենագօր և  
սրանչելի փառօքն իւրովք:

## Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

Տէր, մի՛ դարձուցաներ զե-  
րեսս քո յինէն. Տէր բարեբար,  
աղաչեմ զքեզ, օգնական իմ լեր.  
Տէր, մի՛ անարգեր զիս, եւ մի՛  
թողուր զիս Աստուած Փրկիչ իմ:

## Ա Ղ Օ Թ Ք

(Աշչ.) Աղաչեսցուք զամենակալն  
Աստուած, եւ խնդրեսցուք ՚ի  
նմանէ, զի առաքեսցէ զհրեշ-  
տակ խաղաղութեան, որ եկ-  
եալ պահեսցէ զմեզ յերկիրա-  
կան գիշերիս, ՚ի զիւրական խոռ-  
վութենէ ամբողջ պահելով ըզ-  
հողի եւ զմարմին մեր, մինչեւ  
՚ի կատարումն ժամանակի ամաց  
մերոց: Ամենակալ Տէր Աս-  
տուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեսն:

## Ա Ղ Օ Թ Ք

Ծնորհատո՛ւ բարեաց՝ ամե-  
նայնի առատ, անմահ Տէր,  
աղաչեմք զքեզ, փարատեա՛  
յանձանց մերոց զաղջամղջին  
եւ զխաւարային խորհուրդս:  
Ի պատրանաց բանտարկուին  
պահեա՛ զմեզ, եւ չնորհեա՛ մեզ  
հաւատով ապաւինիլ յամենա-

սուրբ Երրորդութիւնդ՝ ի Հայր և  
յնորդի եւ ՚ի Սուրբ Հոգիդ. Այժմ  
եւ միշտ եւ յախտեանս յաւ.

ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ո՛վ բարիք շնորհող. և ամեն պար-  
գեւներովդ առատաձեռն ու անմահ Տէր,  
կաղաչեմք զքեզ, փարատէ մեր անձերէն  
մում և խաւար խորհուրդները: Բանսար-  
կու սատանային խարէութենէն պահէ  
զմեզ. և շնորհէ մեզ հաւատով ապաւի-  
նիլ ամենասուրբ Երրորդութեանդ, Հօր  
և Որդւոյ և Առբբ Հոգւոյդ. Այժմ և միշտ.

(Յաւանդս Աղոյհայեցի (Մէծ Պահոյ  
Բջ) աստ ասի Անբիծ Սաղմուն,  
Էհ յայլ աստ, Հայր մեր որ յերկ.  
և Էրջ.)

ՓՈՒՆ ՍԱՂՄՈՍ ԶԺԸ.

(Աշ.) Երանեալ են անբիծք ի ճանա-  
պարհի, եւ ոյք զնան յօրէնս Տեառն.  
Երանի՛ ոյք քննեն զվկայութիւնս

նորա. բոլորով սրտիւ իւրեանց խնդ-  
րեսցեն զնա:

Ոչ թէ ոյք գործեն զանօրէնութիւն՝  
ի ճանապարհս նորա զնասցեն:

Դու պատուիրեցեր զպատուիրանս  
քո՛ ի պահել ինձ յոյժ:

Երանի՛ թէ յաջողեալ էին ինձ ճա-  
նապարհք իմ, ի պահել ինձ զարդա-  
րութիւնս քո:

Յայնժամ ես ոչ ամաչէի, ի զգու-  
շանալ ինձ ի պատուիրանս քո:

Խոսսովան եղէց քեզ Տէր, յուղղու-  
թիւն սրտի իմոյ. որպէս ուսայց զի-  
րաւունս արդարութեան քո.

Ձիրաւունս քո պահեցի. մի թողուր  
զիս մինչ իսպառ:

Ի՞նչ ուղղեսցէ երիտասարդ զճանա-  
պարհս իւր, այլ ի պահել զքանս քո:

Բոլորով սրտիւ իմով խնդրեցի ըզ-  
քեզ. մի մեծեւր զիս ի պատուիրա-  
նաց քոց:

Ի սրտի իմում թագուցի զքանս քո.



որպէս զի մի մեղայց բեզ:

Օրհնեալ ես զու Տէր. ուսո՛ր ինձ  
զարդարութիւնս քո:

Շրթամբք իմով պատմեցից զամե-  
նայն իրաւունս բերանոյ քո:

Ի ճանապարհս վկայութեանց քոց  
զուարճացայ, որպէս յամենայն ի  
մեծութեան:

Ի պատուիրանս քո հոգացայ. եւ  
զգուշացայ ի ճանապարհս քո:

Ձիւրաւունս քո խօսեցայ, եւ ոչ մո-  
ռացայ զբանս քո:

Հասո՞ ծառայի բու՛մ, զի կեցից եւ  
պահեցից զբանս քո:

Ձարթո՞ զաչս իմ, եւ նայեցայց ի  
սքանչելիս օրինաց քոց:

Պանդուխտ եմ ես յերկրի. մի Թա-  
գուցանե՛ր յինէն զպատուիրանս քո:

Փափաքեաց անձն իմ, ի ցանկալ  
ինձ յիրաւունս քո յամենայն ժամ:

Սասեցե՛ր ամբարձաւանից. անի-  
ծեալ՝ ոչք խոտրեցան ի պատուիրա-  
նաց քոց:

Ի բա՛ց արա յինէն զնախասինս եւ  
զարհամարհանս. զի զվկայութիւնս  
քո խնդրեցի:

Քանզի նսան իշխանք եւ չարա-  
խօսէին զինէն. այլ ծառայ քո խոր-  
հէ՛ր յիրաւունս քո:

Ձի վկայութիւնք քո խօսք իմ էին.  
եւ խորհուրդք իմ արդարութիւն քո:

Մերձեցաւ անձն իմ ի հող. Տէ՛ր,  
կեցո՞ զիս ըստ բանի բու՛մ:

Ձճանապարհս իմ պատմեցի քեզ,  
եւ լուար ինձ. ուսո՞ ինձ զարդարու-  
թիւնս քո:

Ի ճանապարհս արդարութեանց  
քոց իմաստուն արա՛ զիս, եւ քննեցից  
զսքանչելիս քո:

Տքնեցաւ անձն իմ առ ի ծանծրա-  
նալ. հաստատեա՛ զիս ի բանս քո:

Ձճանապարհս մեղաց ի բա՛ց արա  
յինէն. եւ յօրէնս քո ողորմեա՛ ինձ:

Ձճանապարհս ճշմարտութեան քո  
ընտրեցի. եւ զիրաւունս քո ես ոչ մո-  
ռացայ:

Մերձեցայ ես ի վկայութիւնս քո .  
Տէր, մի՛ յամօթ առնե՛ր զիս :

Ի ճանապարհս պատուիրանաց քոց  
ընթացայ . զի անդոր՛ր արարե՛ր սրտի  
իմոյ :

Օրէնսդէ՛ս արա՛ զիս Տէր, ի ճանա-  
պարհս իրաւանց քոց . եւ խնդրեցից  
զնա՛ յամենայն ժամ :

Իմասուն՛ն արա՛ զիս, եւ քննեցից  
գորէնս քո . եւ պահեցից զնա քոյո-  
րով՝ սրտիւ իմով :

Առաջնորդեա՛ ինձ ի շաւիղս պատ-  
ուիրանաց քոց . զի ընդ նոսա հաճե-  
ցայ :

Խոնարհեցո՛ն զսիրտ իմ ի վկայու-  
թիւնս քո, եւ մի՛ յազատութիւն :

Դարձո՛ն զաչս իմ, զի մի՛ տեսից ըզ-  
նանութիւն . ի ճանապարհս քո կե-  
ցո՛ն զիս :

Հաստեա՛ ծառայի բում՝ զբան  
քո յերկիւղ քո :

Հան՛ յինէն՛ զնախաւսինս, զոր եւ  
կարծեցի զի դասասանք քո քաղցր են :

Ահա՛ ցանկացայ պատուիրանաց  
քոց . յարարութեան՝ բում կեցո՛ն զիս .  
եկեացէ՛ ի վերայ իմ ողորմութիւն  
քո Տէր, եւ վերկուծիւն քո ըստ բանի  
բում :

Տաց պատասխանի ոյք նախասեն  
զիս բանիւք . զի ես ի բանս քո յու-  
սացայ :

Մի՛ ի բացեայ առնե՛ր ՚ի բերանոյ  
իմմէ՛ զբան ճշմարտութեան՝ մինչեւ  
յոյժ . զի յիրաւունս քո յուսացայ :

Պահեցի՛ գորէնս քո յամենայն ժամ .  
յաւիտեան՝ եւ յաւիտեանս յաւիտենից .  
Գնայի՛ ես յանդորու . զի զպատ-  
ուիրանս քո խնդրեցի :

Խօսէի՛ զվկայութիւնս քո առաջի  
Յազատաց, եւ ոչ ամաչէի :

Խորհէի՛ ի պատուիրանս քո զոր  
սիրեցի :

Համբարձի՛ գձեռս իմ ՚ի պատուի-  
րանս քո՝ զոր սիրեցի . եւ խորհէի  
յարգարութեան՝ բում :

Յիշեա՛ զբան ծառայի բո, յոր եւ յուսացուցեր զիս:

Սա մխիթարեսցէ զիս ՚ի խոնարհութեան իմում. զի բան բո կեցոյց զիս. Ամբարտաւանք անիրաւեցան յիս յոյժ, այլ յորինաց բոց ես ոչ խոսորեցայ:

Յիշեցի զիրաւունս բո յաւիտենից Տէր, եւ մխիթարեցայ:

Տրտմութիւն կալաւ զիս ՚ի մեղաւորաց, եւ ոյր թողին զօրէնս բո:

Գովելի են ինձ իրաւունք բո, ՚ի տեղուջ պանդխտութեան իմոյ:

Յիշեցի ՚ի զիշերի զանուն բո Տէր. եւ պահեցի զօրէնս բո:

Սա եղեւ ինձ ճանապարհ՝ ի կեանս. զի զարդարութիւնս բո խնդրեցի:

**ՓՈՍՍ ՍԱՂՄՈՍ ԶԺԳ.**

Բաժին իմ ես դու, Տէր, ասացի պահել ինձ զօրէնս բո:

Աղաչեցի գերեսս բո բոլորով արտիւ իմով. ողորմեա՛ ինձ ըստ բանի բում:

Խորհեցայ ՚ի ճանապարհս իմ. եւ դարձուցի զոսս իմ՝ ՚ի վկայութիւնս բո. Պատրասեցայ եւ ոչ խռովեցայ. զի պահեցի զպատուիրանս բո:

Տոռունք մեղաց պատեցան զինեւ. այլ զօրէնս բո ես ոչ մոռացայ:

Ի մէջ զիշերի յաւունքի խոստովան լինել առ քեզ, վասն իրաւանց եւ արդարութեան բո:

Հաղորդ էի ես ամենայն երկիւզածաց բոց, որոց պահեալ էին զպատուիրանս բո:

Ողորմութեամբ Տեառն լի եղեւ երկիր. զարդարութիւնս բո ուսն ինձ:

Քաղցրութիւն արարեր ընդ ծառայի բում Տէր, ըստ բանի բում:

Զքաղցրութիւն, զխրատ, եւ զգիտութիւն ուսն ինձ. զի ՚ի պատուիրանս բո ես հաւատացի:

Մինչեւ խոնարհեալ էի ես՝ մեղայ. վասն այսորիկ զբանս բո պահեցի յոյժ:

Քաղցր ես դու Տէր, եւ քաղցր-

Յեամբ բով ուսն ինձ զարգարու-  
թիւնս քո:

Բազմացան յիս անիրաւութիւնք  
ամբարսաւանից. այլ ես բողոքով օրհիւ  
իմով քննեցի զպատուիրանս քո:

Մածան որպէս կամն սիրքս նոցա.  
այլ ես զօրէնս քո խօսեցայ:

Բարի է ինձ, զի խոնարհ արարեք զիս.  
որպէս ուսայց զարգարութիւնս քո:

Բարի են ինձ օրէնք բերանոյ քո,  
քան զհազարս ոսկւոյ եւ արծաթոյ:

Ձեռք քո արարին՝ եւ ստեղծին  
զիս. իմաստուն արա՛ զիս՝ եւ ուսայց  
զպատուիրանս քո:

Երկիւղածք քո ճեցեն զիս՝ եւ  
ուրախ եղիցին. զի ես՝ ի բանս քո  
յուսացայ:

Ծանեայ Տէր զի արդարութեամբ  
են դատաստանք քո. յիրաւի խոնար-  
հեցուցեք զիս:

Եղիցի ողորմութիւն քո՝ ի մխիթա-  
րել զիս, ըստ բանի բուժման, զձառայս քո:  
Եկեացեն յիս զթուփիւնք քո՝ եւ

կեցից. զի օրէնք քո խօսք իմ էին:

Անաչեսցեն ամբարսաւանք՝ որք ՚ի  
սարապարսուց անիրաւեցան յիս. այլ  
ես հոգացայ ՚ի պատուիրանս քո:

Խրատեցին զիս երկիւղածք քո, եւ  
ոյր ճանաչեն զվկայութիւնս քո:

Եղիցի սիրտ իմ անբիծ յարդարու-  
թեան բուժման, զի մի ամաչեցից:

Կարօտացաւ անձն իմ՝ ի փրկութիւնս  
քո. զի ես ՚ի բանս քո յուսացայ:

Սպասեցին աչք իմ բանի բուժ-  
ասացի՝ երբ մխիթարեսցէ զիս:

Եղէ ես որպէս սիկ ՚ի պարգի. զի  
զարդարութիւնս քո ես ոչ մոռացայ:

Քանի ինչ են աւուրք ծառայի քո,  
երբ արացես ինձ իրաւունս ՚ի հա-  
լածչաց իմոց:

Պատեցին ինձ անօրէնք զխորհուր-  
դըս. այլ ոչ որպէս զօրէնս քո:

Ամենայն պատուիրանք քո ճշմարիտ  
են. ՚ի նանիր հալածեցին զիս, օգ-  
նեա՛ ինձ:

Փոքր մի եւս՝ եւ կորուսանէին զիս

յերկրի . այլ ես ոչ թողի զպատուիրանս քո :

Ըստ ողորմութեան քու՛մ կեցո՛ղ զիս . եւ պահեցից զվկայութիւնս բերանոյ քո :

Յաւիտեան Տէր՝ բան քո կայ յերկինս . յազգէ մինչեւ յազգ է Տշմարտութիւն քո :

Հաստատեցեր զերկիր՝ եւ կայ :

Հրամանի քու՛մ մնայ Տիւ . զի ամենեքեան ծառայք քո են :

Եթէ ոչ օրէնք քո խօսք իմ էին , կանխաւ եւս արդեօք կորուսեալ էի 'ի խոնարհութեան իմում :

Յաւիտեան ոչ մոռացայց զարդարութիւնս քո . զի նորօրկեցուցեր զիս :

Քո եմ ես , եւ կեցո՛ղ զիս . զի զարդարութիւնս քո խնդրեցի :

Ինձ սպասեցին մեղաւորք 'ի կորուսանել . զի զվկայութիւնս քո ես 'ի միտ առի :

Յամենայն կատարածի տեսի զվախ-

ճան , յոյժ անդորր էին ինձ պատուիրանք քո :

Որպէս սիրեցի զօրէնս քո . զօրհանապազ խօսք իմ էին :

Քան զթշնամիս իմ իմաստուն արարեր զիս 'ի պատուիրանս քո . զի յաւիտեան իմ էին :

Քան զամենայն ուսուցիչս իմ իմաստուն եղէ . զի վկայութիւնք քո խօսք իմ էին :

Քան զծերսն իմաստուն եղէ . զի զպատուիրանս քո քննեցի :

Յամենայն ճանապարհաց չարաց արգելի զոս իմ . որպէս զի պահեցից զբանս քո :

Յիրաւանց քոց ես ոչ խոտրեցայ . զի դու օրէնսզէս արարեր զիս :

Որպէ՛ս զի քաղցր են ի քիմս իմ բանք քո քան զմեղր՝ բերանոյ իմոյ :

Ի պատուիրանաց քոց իմացեալ՝ ասեցի զամենայն ճանապարհս չարաց . զի դու օրէնսզէս արարեր զիս :

ճրագ են բանք քո ոսկից խնոց, եւ լոյս սան շաւղաց խնոց:

Երդուայ եւ հաստեցի. զի պահեցից զամենայն իրաւունս արդարութեան քո:

Խոնարհ եղէ մինչեւ յոյժ. Տէր՝ կեցն՝ զիս ըս բանի բուժ:

Ընդ կամս բերանոյ իմոյ հաճեա՛ց Տէր. եւ զիրաւունս քո ուսն ինձ:

Անձն իմ՝ ՚ի ձեռս քո է յամենայն ժամ. եւ զօրէնս քո ես ոչ մոռացայ:

Եղին ինձ մեղաւորք որոզայթ. ՚ի պատուիրանաց քոց ես ոչ մոլորեցայ. ժառանգեցի զվկայութիւնս քո յաւիտեան. զի ցնծութիւն է սրտի իմոյ. Խոնարհեցուցի զսիրտ իմ, առնել զարդարութիւնս քո յաւիտեան, վասն հատուցման:

Ձանօրէնս ասեցի, եւ զօրէնս քո սիրեցի:

Օգնական եւ փրկիչ իմ ես դու. եւ ես ՚ի բանս քո յուսացայ:

Ի բաց եղերուք յինէն չարք. եւ քըննեցից զպատուիրանս Աստուծոյ իմոյ. Օգնեա՛ ինձ ըս բանի բուժ, եւ կեցն՝ զիս. եւ մի յամօթ առնե՛ր զիս ՚ի յուսոյ իմմէ:

Օգնեա՛ ինձ, եւ արեցն՝ զիս. եւ խորհեցայց յիրաւունս քո յամենայն ժամ:

Անարգեցե՛ր զամենեսեան՝ որք ապրտամբք եղեն յարդարութեանց քոց. զի անիրաւութեամբ էին խորհուրդք նոցա:

Յանցաւորս համարեցայ զամենայն մեղաւորս երկրի. վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո:

Բեւեռեա՛ ընդ երկիւղ քո զմարմին իմ. զի ՚ի դատասանաց քոց երկեայց յոյժ:

### ՓՈՒՍ ՍԱԳՄՈՍ ԶԺԷ

Արարի իրաւունս եւ արդարութիւն. մի մասներ զիս ՚ի ձեռս նեղչաց իմոց:

Ընկալ՝ զԺառայս քո՝ ՚ի բարի. չգի  
մի ամբարտաւանք զգուեցեն զիս:

Սպասեցին աչքիմ փրկութեան քում  
Տէր, եւ բանից արգարութեան քո:

Արա՛ ընդ ծառայի քում Տէր, ըս  
ողորմութեան քում. զարդարութիւնս  
քո ուսն ինձ:

Ծառայ քո եմ ես, իմասուն արն  
զիս, եւ ծանեայց զվկայութիւնս քո:

Ժամ է պաշտել զՏէր. խափանեցին  
գորէնս քո:

Վասն այսորիկ սիրեցի զպատուի-  
րանս քո, քան զամենայն ոսկի եւ  
զսպազիսն:

Ամենայն պատուիրանք քո յաջողե-  
ցան ինձ. զի ասեցի ես զճանապար-  
հըս չարաց:

Սրանչելի են վկայութիւնք քո, վա-  
սըն այսորիկ սիրեաց զնոս անձն իմ:  
Յայտնութիւն բանից քոց լուսաւոր  
է, եւ իմասուն առնէ զսղայս:

Զբերան իմ բացի, եւ առի զհոգի.

՚ի պատուիրանս քո փափագեաց ան-  
ծըն իմ:

Նայեա՛ առ իս եւ սղորմեա՛ ինձ,  
ըս իրաւունս սիրողաց անուան քո:

Զճանապարհս իմ ուղիղ արա՛ ինձ  
ըս բանի քում, եւ մի սիրեցեն ինձ  
ամենայն մեղք:

Փրկեա՛ զիս ի զրպարսութենէ մարդ-  
կան. եւ պահեցից զպատուիրանս քո:

Երեւեցն զերեսս քո ՚ի ծառայս քո,  
եւ ուսն ինձ զարդարութիւնս քո:

Վսակք ջուրց իջին յաչաց իմոց. զի  
ոչ պահեցին զորէնս քո:

Արդար ես դու Տէր, եւ ուղիղ են  
դատասանք քո:

Պատուիրեցեր զարդարութիւն վկա-  
յութեանց քոց. եւ ճշմարիտ են յոյժ:

Մաշեաց զիս նախանձ քո, զի մո-  
ռացան զբանս քո թշնամիք իմ:

Ընտեալ է բան քո յոյժ, եւ ծա-  
ռայ քո սիրեաց զսա:

Մանուկ եմ ես եւ արհամարհեալ:

եւ զարգարուծիւնս քո եւ ոչ մտաւցայ :  
Արգարուծիւն չո՛ւ արգարուծիւն  
յաւիտենից . եւ օրէնք քո ճշմարիտ են :  
Նեղուծիւնք եւ վիշօք զտին զիս . եւ  
պատուիրանք քո խօսք իմ էին :

Արգարուծեամբ են վկայուծիւնք  
քո յաւիտեան . իմաստուն աւա՛ եւ  
կեցն՝ զիս :

Կարգացի առ քեզ բոլորով սրիւ  
իմով . լուր ինձ Տէր , զի զարգարու-  
ծիւնս քո խնդրեցի :

Ազգակեցի առ քեզ՝ եւ փրկեան  
զիս . եւ պահեցից զվկայուծիւնս քո :  
Կանխեցի տարաժամու՝ ազգակե-  
ցի , եւ ես ՚ի բանս քո յուսացայ :

Կանխեցին աչք իմ առաւօտու . ՚ի  
խօսել ինձ զբանս քո :

Չայնի իմում լուր Տէր՝ ըստ ողոր-  
մութեան բում . եւ յիրաւունս քո  
կեցն՝ զիս :

Մերձեցուցին յիս հալածիչք իմ  
զանօրէնուծիւն . զի յօրինաց քոց  
հեռի եղեն :

Մերձ ես զու Տէր . եւ ամենայն  
պատուիրանք քո ճշմարիտ են :

Ի սկզբանէ ծանեայ ՚ի վկայու-  
ծեանց քոց . զի յաւիտեան հաստա-  
տեցեր զնոսա :

Տես զխոնարհուծիւն իմ , եւ փրկեա՛  
զիս . զի զօրէնս քո ես ոչ մտաւցայ :

Դատեա՛ զգատաստանս իմ , եւ փրկեան  
զիս . եւ ըստ բանի բում կեցն՝ զիս :

Հեռի է ի մեղաւորաց փրկուծիւն ,  
զի զիրաւունս քո ոչ պահեցին :

Գծուծիւնք քո բազում են Տէր . եւ  
ըստ իրաւանց քոց կեցն՝ զիս :

Բազում են սրք հալածեն եւ նեղեն  
զիս . ՚ի վկայուծեանց քոց ես ոչ խո-  
տրեցայ :

Հայէի յանագորոյնս՝ եւ մաշէի , զի  
զպատուիրանս քս ոչ պահեցին :

Տես՝ զի զպատուիրանս քո սիրեցի .  
Տէր , ողորմութեամբ քո կեցն՝ զիս :

Սկիզբն բանից քոց ճշմարտուծիւն  
է . յաւիտեան են ամենայն իրաւունք  
արգարուծեան քո :



Իշխանք հալածեցին զիս ի նանիր.  
եւ ՚ի բանից քոց երկեալ սիրս իմ.  
Յնծացայ ես ՚ի բանս քո, որպէս  
այն, որ գհանէ աւար բազում:

Զմեզս ասեցի եւ անարգեցի, եւ  
գօրէնս քո սիրեցի:

Եօթն անգամ յաւուր օրհնեցից ըզ-  
րեզ, վասն իրաւանց եւ արդարու-  
թեան քո:

Խաղաղութիւն բազում է այնոցիկ,  
ոյր սիրեն գօրէնս քո. եւ ոչ զոյ ՚ի  
նոսա գայթակղութիւն:

Սպասեցի փրկութեան քում Տէր,  
եւ զպատուիրանս քո սիրեցի:

Պահեաց անծն իմ զվկայութիւնս  
քո, եւ սիրեաց գնոսա յոյժ:

Պահեցից զպատուիրանս՝ եւ զվկա-  
յութիւնս քո. զի ամենայն ճանա-  
պարհք իմ առաջի քո են:

Մերձեցին խնդրուածք իմ առաջի  
քէ Տէր, ըստ բանի քում իմաստուն  
արա զիս:

Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր,  
եւ բանիւ քով փրկեա՛ զիս:

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնու-  
թիւնս քո. յորժամ ուսուցես ինձ  
զարդարութիւնս քո:

Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի  
ամենայն պատուիրանք քո արդարու-  
թեամբ են:

Եղիցի ձեռն քո ՚ի կեցուցանել զիս.  
զի զպատուիրանս քո ընտրեցի:

Յանկացայ փրկութեան քում Տէր,  
եւ օրէնք քո խօսք իմ էին:

Կեցցէ անծն իմ, օրհնեսցէ զքեզ.  
եւ իրաւունք քո օգնեսցեն ինձ:

Մոլորեցայ ես որպէս զոչխար կո-  
րուսեալ. խնդրեա՛ զժառայս քո, զի  
զպատուիրանս քո ես ոչ մոռացայ:

Փառք Հօր եւ Ռրդույ եւ:

Եւ զիչի առի Շարական Պ.Չ.

**Ի մեծի պահոց**

(Ա.չ.յ.) Ի Քիչն հայցեմք, Հայր զԹու-  
թեանց և Աստուած միսիԹարուԹեանց, 'ի  
տխրական զիշերային մերձեալ ժամուս,  
միսիԹարեան զմեզ 'իտրտմութեանց մեղաց,  
և շնորհեան զուրախութիւն զործովք ար-  
դարութեան. աղաչանօք սուրբ Աստուա-  
ծածնին և ամենայն արդարոց:

Ըստ բաղդրագոյն Աստուածային բո  
հրամանի կոչման, Որդի Աստուծոյ. եկ-  
եալ եմք առաջի բո յերկնոյիս աշխատ-  
եալք և ծանրաբեռնեալք. Թե՞նեացն 'ի  
ծանրութեանց մեղաց զանձինս. և զօրս-  
ցն բառնալ կամու զբաղդր լուծ բոց  
պատուիրանաց. Աղաչանօք .

Պաղատիմք առ քեզ հոգւով, 'ի հան-  
զբատեան հասեալ ժամուս, մարդասէր  
Հոգի Աստուծոյ, յորժամ 'նորոգես զերեսս  
երկրի, և վերստին ստանաս զոգիս մարդ-  
կան, 'նորախետուր զարդարեան զինչեց-

եալն մեր զճնեալն 'ի քէն սուրբ աւա-  
զանաւն. Աղաչանօք.

Զկենդանագիր անարատ Ծնողի բոյ,  
արկանեմք առաջի անոխակալ Տէրու-  
Թեանդ բոյ, յորժամ զաս փառօք Հօր  
զատեղ զԹշնամին խաչի բո, 'ներեսն յան-  
ցանաց մերոց՝ բարեխօսութեամբ Մօր բո  
և Կուսի. աղաչեմք զքեզ, Տէր, պահպան-  
եան զմեզ ընդ հովանեալ Խաչի բո սուրբ:

Հաղորդս արան և զմեզ, Տէր, ընդ  
սրբոց բոց Առաքելոցն. որք արժանի  
եղեն տեսանել զքեզ 'ի Յարութեան բո-  
արժանաւորեան, Տէր, տեսանել զքեզ 'ի  
միւսանգամ բո գալտեանն. օրհնութիւն  
Առաքողին 'ի բարձունս:

Ի նստիլ բո յատենի, Դատաւոր անեղ,  
աղաչանօք Սուրբ Աստուածածնին, յիշ-  
եա զինչեցեալն մեր, յորժամ զպցես  
անձառ փառօք. քանզի բո էն փառք  
յաւիտեանս. Ամէն:

(Մեծ Պահոց Մեջիւնի Դշ. երեկոյէն  
սկսեալ, կ'երբէն ասորանօք նաեւ յա-  
որակ + աղցբանսապ Շարականեր,  
նուիրեալ Ս. Կուսին, Առաւելայ,  
Խաչի եւ այլ Սրբոց:)

ՄԱՂԹԱՆՔ. Հողւոցն հանգուց.  
 ՔԱՐՈՋ. Վասն հանգուցեալ.  
 ԱՂՕԹՔ. Քրիստոս Որդի Աստու.

Օրհնեալ Տէր մեր Յիսուս  
 Քրիստոս Ամէն:

Հայր մեր որ յերկինս.

ՎԵՐՋ ԻԱՂԱՂԱԿԱՆՆԻ ԺԱՄՈՒՆ

(Յէր այսորիկ կ'սկսի Հանգստեան  
 Ժամերգութիւնը՝ շար ափն ՀայՔրիս-  
 տոնեայ պարտի կարգել երբ ննջե-  
 ւա կ'երթայ էր տաանջին սենեա-  
 կին մէջ. աւել լաւաքայն է քուր  
 ընտանեօք մաքան աղջիւէլ, ինչպէս  
 սովորութիւն էր ափն Հայաստան  
 եայց քարեպաշտ րոաներոս).



Bouasse-Lebel.

Dario.

**ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ**  
**ՀԱՍԱՐԱԿԱՅ ԱՂՕՔԻՑ**  
**ՀԱՆԳՍԵՍԱՆ ԺՕՄՈՒՆ**  
 ՈՐ ԿԱՏԱՐԻ Ի ԳԷՄՍ  
**ՀՕՐ ԱՍՏՈՒԾՈՑ**  
 ԶԻ ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ԱՅՈՂ ՄԻՈՅՐ-  
 ՆԻՆ ՊԱՀԵՍԵՒ ԶՄԵՁ Ի ԽՍԻՍՏՐԱՅԻՆ  
 ԳԻՇԵՐԻՍ:

---

**Օրհնեալ Տէր մեր Յիսուս**  
**Քրիստոս Ամէն:**

*Հայր մեր որ յերկինս.*

**Քահ. ԱՌԱՔԵԱ Տէր,** զոյս քո  
 եւ զճճարարութիւն քո, զի ա-  
 ռաջնարգեացն ինձ, եւ հանցն  
 զիս ի լիանն սուրբ եւ ի յարկս քո  
 Սրկ. Մտից առաջի սեղանոյ Աս-  
 սուժոյ, առ Աստուած, որ ու-  
 բախս ասնէ զմանկութիւն իմ:

Ոոստովան եղէց քեզ օրհնութեամբ, Աստուած Աստուած իմ:

Արդ ընդէ՞ր արտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խոռվես զիս. յուսա՛ առ Աստուած, խոստովանեա՛ նմա, փրկիչ երեսաց իմոց Աստուած է:

Փառք Հօր եւ. Այժմ եւ միշտ. եւ եւս խաղաղութեան զՏէր. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ.

Փոստ սա. ԳՄՈՍ ԶԺԸ. 41-56

(Ա. 27.) Եկեացէ՛ ՚ի վերայ իմ ողորմութիւն քո Տէր, եւ փրկութիւն քո ըստ քանի քուսմ:

Տաց պատասխանի ոյր նախասնն զիս քանիւք. զի ես ի քանս քո յուսացայ:

Մի՛ ՚ի բացեայ առներ ՚ի բերանոյ իմէ: զքան Յշմարտութեան մինչեւ յոյժ. զի յիրաւունս քո յուսացայ:

Գահեցի զօրէնս քո յսմենայն ժամ,

յաւիտեան՝ եւ յաւիտեանս յաւիտենից. Գնայի ես յանդորու. զի զպատիրանս քո խնդրեցի:

Խօսէի զվկայումիւնս քո առացի թագաւորաց, եւ ոչ ամաչէի:

Խորհէի ՚ի պատսուիրանս քո, զոր սիրեցի:

Համբարձի զձեռս իմ ՚ի պատսուիրանս քո՝ զոր սիրեցի. եւ խորհէի յարդարութեան քուսմ:

Յիշեա՛ զքան ծառայի քո, յոր եւ յուսացուցեր զիս:

Սա մխիթարեացէ զիս ՚ի խոնարհութեան իմուսմ. զի քան քո կեցոյց զիս. Ամբարսաւանք անիրաւեցան յիս յոյժ, այլ յօրինաց քոց ես ոչ խոսուեցայ:

Յիշեցի զիրաւունս քո յաւիտենից, Տէր, եւ մխիթարեցայ:

Տրտմութիւն կարաւ զիս ՚ի մեղաւորաց, եւ ոյր թողին զօրէնս քո:

Գովելի են ինձ իրաւունք քո, ՚ի

սեղուոջ պանդխտութեան խոյ :

Յիշեցի 'ի զիշերի զանուն քո Տէր,  
եւ պահեցի զօրէնս քո :

Սա եղեւ ինձ ճանապարհ 'ի կեանս.  
զի զարգարութիւնս քո խնդրեցի :

113-120. **Չանօրէնասեցի եւ զօրէնս**  
քո սիրեցի :

Օգնական եւ Փրկիչ իմ ես զու, եւ  
ես 'ի բանս քո յուսացայ :

Ի բաց եղեռու ք յինէն չարք, եւ քըն-  
նեցից զպատուիրանս Ասուծոյ խոյ :

Օգնեա՛ ինձ ըստ բանի քում, եւ կե-  
ցն՝ զիս. եւ մի յամօ՞ առնե՛ր զիս 'ի  
յուսոյ իմմէ :

Օգնեա՛ ինձ, եւ տպրեցն՝ զիս. եւ  
խորհեցայ յիրաւունս քո յամենայն  
ժամ :

Անարգեցեւ զամենեսեան՝ որք ա-  
պրտամբ եղեն յարգարութեանց  
քոց, զի անիրաւութեամբ էին խոր-  
հուրդք նոցա :

Յանցաւ որս համարեցայ զամենայն

մեղաւորս երկրի. վասն այսորիկ՝ սի-  
րեցի զպատուիրանս քո :

Բեւեռեա՛ ընդ երկիւղ քո զմարմին  
իմ. զի 'ի դատասանաց քոց երկ-  
եայց յոյժ :

169-176. **Մերձեացին խնդրուածք իմ**  
առաջի քո Տէր, ըստ բանի քում իմաս-  
տուն արա զիս :

Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր,  
եւ բանիւ քով փրկեա՛ զիս :

Բոխեսցեն շրթունք իմ զօրհնու-  
թիւնս քո, յորժամ ուսուսցես ինձ  
զարգարութիւնս քո :

Խօսեսցի լեզու իմ զբանս քո, զի  
ամենայն պատուիրանք քո արգարու-  
թեամբ են :

Եղիցի ձեռն քո ի կեցուցանել զիս.  
զի զպատուիրանս քո ընտրեցի :

Յանկացայ փրկութեան քում Տէր,  
եւ օրէնք քո խօսք իմ էին :

Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ.  
եւ իրաւունք քո օգնեսցեն ինձ :

Մոլորեցայ եւ որպէս գոչխար կո-  
րուեալ, ինդրեա՛ր զժառայս քո՛ զի  
զպատուիրանս քո եւ ոչ մուացայ:

**ԼԵ. 12.** Մի եկեացեն՝ ՚ի վերայ մե-  
ոսք ամբարտաւանից, եւ ձեռք մե-  
ղաւորաց մի դողացուցեն զմեզ:

Անդ անկցին ամենեքեան ոյք գոր-  
ծեն զանօրէնութիւն, մերձեցցին եւ  
այլ մի կարացցեն հաստասիր:

Եւ ՚ի Տէր յուացայ, ցնծացայց եւ  
ուրախ եղէց յԱսուած փրկիչ իմ:

Տէր Տէր ես ինձ զօրութիւն, եւ կա-  
ցոյց զոսս իմ՝ ՚ի հաստասութեան, ՚ի  
վերայ պարանոցի թշնամայն կացոյց  
զիս, եւ հանգոյց զիս երազ երազ:

**Ղ.** Որ բնակեալն է յօգնութիւն  
բարձրելոյն, ընդ հովանեալ Ասուծոյ  
յերկինս հանգիցէ:

Ասացէ՛ Տեառն՝ ընդունող իմ եւ-  
ապաւէն իմ Ասուած, եւ ես յու-  
սամ ՚ի նա:

Նա փրկեացէ՛ զիս յորոգայթէ՛ որսո-

ղին եւ ՚ի բանիցն ՚ի խռովութենէ:  
Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ,  
՚ի հովանի թեւոց նորա յուսացիս:  
Որպէս զէն շուրջ եղիցի զքեւ,  
ճշմարտութիւն նորա:

Ոչ երկիցես դու յերկիւզէ՛ զիշերի,  
եւ ոչ ՚ի նեհէ՛ որ թռչի ՚ի տուէ:

Յիրէ՛ որ շրջի ՚ի խաւարի, ՚ի գայ-  
թակղութենէ՛ զիւրն ՚ի հասարակ  
աւուր:

Անկցին ՚ի կողմանէ՛ քու՛մմէ՛ հա-  
զարք, եւ քիւրք ընդ աջմէ՛ քու՛մմէ՛.  
Եւ առ քեզ ինչ ոչ մերձեցցին:

Բայց միայն աչօք քովք հայեցիս  
դու, եւ զհասուցումն մեղաւորաց  
սեացես, զի դու Տէր, յոյս իմ ես:

Զբարձրեալն արաբեր քեզ ապա-  
ւէն. զի ոչ հասցեն առ քեզ չարք, եւ  
սանջանք մի մերձեցցին ՚ի յարկս քո:

Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է  
վասն քո. ՚ի պահել զքեզ յամենայն  
ճանապարհս քո,

Ի բազուկս իւրեանց ընկալցին զրեզ,  
զի մի երբէք հարցես զբարի զոսն քո :

Ի վերայ ի ժից եւ քարից զնասցես  
դու. եւ առ ոսն հոխեսցես զոռիւծն  
եւ զվիշապն :

Քանզի յիս յուսացաւ, եւ փրկեցից  
զնա, հովանի եղեց նմա զի ծանեաւ  
զանուն իմ :

Կարդացէ առ իս' եւ ես լուայց  
նմա. եւ առ նմա եղէց ի նեղութեան :

Փրկեցից եւ փառաւոր արարից քո-  
նա. երկայն աւուրքք լցուցից, եւ  
ցուցից նմա զիրկութիւն իմ :

**ՃԻՔ.** Առ թեզ Տէր, համբարձի զաչս  
իմ, որ բնակեալդ ես 'ի յերկինս :

Որպէս աչք ծառայի 'ի ձեռն տեա-  
ւըն իւրոյ. եւ որպէս աչք աղախնոյ  
'ի ձեռն տիկնոջ իւրոյ :

Այնպէս են աչք մեր առ թեզ Տէր  
Աստուած մեր. մինչեւ ողորմեսցիս 'ի  
վերայ մեր :

Ողորմեա' մեզ Տէր, ողորմեա' մեզ.  
զի բազում լցաք արհամարհանօք :

եւս առաւել լցան անծինք մեր  
նախասանօք. որք նախաւէին զմեզ,  
եւ արհամարհանօք ամբարաւանից :  
**ԾԳ.** Աստուած յանուան թու՛մ կեցո՛  
զիս. եւ ի գորութեան թու՛մ իրա՛ւ ա-  
րա ինձ :

Աստուած, լուր աղօթից իմոց. ուն-  
կըն դիր բանից բերանոյ իմոյ :

Օտարք յարեան 'ի վերայ իմ, եւ  
հզօրք խնդրեցին զանձն իմ. եւ ոչ  
համարեցան զրեզ Աստուած առաջի  
իւրեանց :

Ա՛յա' Աստուած օգնական իմ, եւ  
Տէր ընդունող հոգւոյ իմոյ :

Ի դարձուցանել զչարն 'ի թշնամիս  
իմ, ճշմարտութեամբ քով սասակեա'  
զնոսա :

Ես կամօք իմովք պատարագս մա-  
տոցից թեզ. եւ խոստովան եղէց ան-  
ուան թու՛մ Տէր, զի բարի է :

Յամենայն նեղութենէ իմմէ փրկե-  
ցիւր զիս, եւ 'ի թշնամիս իմ ետես  
ակն իմ :



**Գ. Գ. Գ.** Օրհնեալ ես զու Տէր Աստուած հարցն մերոց, զովեալ եւ առաւել բարձրացեալ յաիւսեան:

Եւ օրհնեալ է անուն սուրբ փառաց բոց. զովեալ եւ առաւել բարձր.

Օրհնեալ ես 'ի ճանարի փառաց սրբութեան քո. զովեալ եւ առաւ.

Օրհնեալ ես 'ի վերայ աթոռոյ արքայութեան քո. զովեալ եւ առաւել:

Օրհնեալ ես որ նստիս 'ի քրովբէս եւ հայիս յանդունդս. զովեալ եւ առաւ.

Օրհնեալ ես 'ի վերայ հաստատութեան երկնից. զովեալ եւ առաւել:

**Ս. Ը. ճԾ.** Օրհնեցէք զԱստուած 'ի սրբութեան նորա, օրհնեցէք զնա 'ի հաստատութեան 'ի զօրութեան նորա:

Օրհնեցէք զնա 'ի զօրութեան նորա, օրհնեցէք զնա 'ի բազում մեծութեան նորա:

Օրհնեցէք զնա 'ի ծայն օրհնու.

Յեան, օրհնեցէք զնա սաղմոսիւք եւ օրհնութեամբ:

Օրհնեցէք զնա ցնծութեամբ, զովեցէք զնա ուրախութեամբ:

Օրհնեցէք զնա 'ի բանս քաղցր, զովեցէք զնա 'ի բարբառ լսելի:

Օրհնեցէք զնա ի ծայն զոհութեան, ամենայն հոգիք օրհնեցէք զՏէր:

**Գ. Գ. Բ. 29-32.** Արդ արձակեա՛ զձեռքս քո Տէր, ըստ բանի քում 'ի խաղաղութիւն. Չի տեսն աչք իմ զփրկութիւն քո՛ Չոր պատճառեցեր առաջի ամենայն ժողովրդոց:

Լոյս յայնեցար հեթանոսաց, եւ փառք ժողովրդեան քում Իւրայէլի:

**Ս. Ը. ճԼ.** 7, 8. Չգեցեր զնուն քո՛ եւ փրկեաց զիս աջ քո. եւ Տէր հասուցէ ընդ իմ:

Տէր ոգործութիւն քո յաիւսեան. զգործս ձեռաց քոց միանեսիս առներ:

**Ս. Ը. ճԽ.** 7, 8. Տէր, հան 'ի բանսէ զանծրն իմ, զոհանամ զանուանէ քում մէջ:

Եւ քեզ սպասեն արդարո՞ք՝ մինչեւ հասուցես:

Ղ. -- Կ. Ա. 47-55 **Մ**եծացուցէ անձն  
իմ զՏէր, եւ ցնծացէ հոգի իմ Ասու-  
ծով փրկչաւ իմով:

Այց արար 'ի վերայ խոնարհութեան  
աղախնոյ իւրոյ. այսուհետեւ երանի-  
ցեն ինձ ամենայն ազգք:

Աբար ընդ իս մեծամեծս շգորն,  
եւ սուրբ է անուն նորա:

Ողորմութիւն արար ազգաց յազգս  
երկրկամաց իւրոց. արար զօրու-  
թիւն բազկաւ իւրով:

Յրուեաց զամբարսաւանս 'ի մտաց  
սրտից, եւ քակեաց զհզօրս յամուռոց:

Զխոնարհս բարձրացոյց, զկարօսս  
եկից բարութեամբ, եւ զմեծասունս  
արձակեաց ունայնս:

Պաշտպանեաց իւրայէլի ծառայի  
իւրոյ յիշելով զօղորմութիւն իւր:

Որպէս խօսեցաւ առ հարսն մեր  
ընդ Աբրահամու եւ զաւակի նորա  
յաւիտեան:

Մ. Ը. 26. 15-16. Տուն զօրութիւն ծա-  
ռայի քո, կեցն գորդի աղախնոյ քո,  
եւ առա՛ առ իս նշան բարութեան:

Տեսցեն ասելիք իմ եւ ամաչեսցեն,  
զի դու Տէր օգնեցեր ինձ եւ մխիթա-  
րեցեր զիս:

Փառք շօր եւ. Այժմ եւ միշտ.

## Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

**Մ**նձն իմ 'ի ձեռս քո է յամե-  
նայն ժամ, եւ 'ի սուրբ խաչ քո  
յուսացեալ եմ, Թագաւոր երկ-  
նաւոր. զբազմութիւն սրբոց  
քոց բարեխօս ունիմ առ քեզ:  
Որ երկայնամիտդ ես առ ամե-  
նեօեան, մի՛ սնտես առներդ ա-  
պաւինեալս 'ի քեզ. այլ պահեա՛  
պատուական եւ սուրբ խաչի-  
քով 'ի խաղաղութեան:

## Ք Ա Ր Ո Ջ

(Ա. Գ.) **Ա**ղաչեսցու՛ք զամենակալն  
Աստուած, եւ խնդրեսցու՛ք 'ի  
նմանէ. զի առաքեսցէ զհրեշ-  
տակ խաղաղութեան, որ եկեալ  
պահեսցէ զմեզ յերկրկալան  
գեշերիս, 'ի գրեական իրողու-  
թենէ ամբողջ պահելով զհոգի  
եւ զմարմին մեր՝ մինչեւ 'ի կա-  
տարումն ժամանակի ամաց մե-

բոց: Ամենակալ Տէր Աստուած  
մեր. Կեցո՛ւ եւ ողորմեա՛ւ:

Զհանգիստ գիշերիս խաղաղ.

Զհրեշտակ խաղաղութեան.

Զքառութիւն եւ զթողութ.

Զսրբոյ խաչին մեծ եւ կարօ.

Եւ եւս միաբան վասն ճշմա.

Զանձինս մեր. Ողորմեաց մեզ.

## Ա Ղ Օ Յ Ք

(Ա. Է.) Տէր Աստուած մեր. դո՛ւ  
պահեա՛ւ զմեզ խաղաղութեամբ ՚ի  
գիշերիս յայսմիկ եւ յամենայն  
ժամանակի: Ընդ սուրբ երկիւղ  
քօ բեւեռեալ պահեա՛ւ զմիտս  
եւ զխորհուրդս մեր: Որպէս զի  
յամենայն ժամ քեւ պահպանեալ  
լիցուք յորոգայթից թշնամեոյն  
Եւ քեզ հանցուք զօրհնութիւն  
եւ զփառս, Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն  
Սրբոյ. Այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս  
յաւ.

## ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԱՂՕԹՔԻՆ

Տէր Աստուած մեր, դո՛ւն պահէ՛ զմեզ  
խաղաղութիւնով այս գիշերուանս մէջ  
եւ ամեն ժամանակ: Քու սուրբ երկիւղիդ  
վրայ բեւեռած (հաստատուն) պահէ՛ մեր  
միտքն ու խորհուրդները: Որպէսզի ամեն  
ժամանակ քեզմով պահպանուիմք Թշնամի  
միին որոգայթներէն: Եւ քեզ օրհնութիւն  
եւ փառք մատուցանեմք Հօր եւ Որդւոյ եւ  
Հոգւոյդ Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտ.

Խաղաղութիւն ամենեցուն  
Ասուծոյ երկրպագեսցուք:

Հրեշտակի խաղաղութեան  
յանձն արա՛ւ զանձինս մեր, Տէր  
զօրութեանց. որ եկեալ պահեսցե՛  
ցէ զմեզ անխառն ՚ի տուէ եւ ՚ի  
գիշերի, յարթութեան եւ ՚ի  
հանդատեան մերում. զի դո՛ւ ես  
արարիչ լուսոյ, եւ հաստիչ գիշերի:  
Եւ այժմ աղաչեմք զքեզ, Տէր Աստուած  
մեր, զհանգիստ

զիշերիս շնորհեա՛ խաղաղութեամբ անցուցանել, եւ հասանիլ ՚ի պաշտօն առաւօտու՝ յերկրպագութիւն եւ ՚ի փառաբանութիւն Ամենասուրբ Երրորդութեանդ, Այժմ եւ միշտ եւ.

### ՅԱՐԳՄԱՆ ՈՒՅԻՒՆ

Ո՛վ Տէր զօրութեանց, խաղաղութեան հրեշտակին յանձնէ մեր անձերը. որ զայ անխռով (խաղաղ) պահէ զմեզ ցերեկ և զիշեր, արժուն և ՚ի բուն եղած ատեննիս. վասնզի դու ես լցսին արարիչը և զիշերին ստեղծողը. եւ հիմա կ'աղաչեմք ըզբեզ, Տէր Աստուած մեր, այս զիշերիս հանգիստը՝ շնորհէ խաղաղութիւնով անցունել, և համել առաւօտեան պաշտօնին (աղօթքի ժամուն), երկրպագելու և փառարանելու համար ամենասուրբ Երրորդութեանդ. այժմ և միշտ և յաւիտ.

### ՍԱՂՄՈՍ Գ.

(Ա.Ք.) Խաղաղութեամբ յայս եւ ՚ի սոյն ննջեսցուք եւ զարթոցուք, զի դու Տէ՛ր, միայն առանձին յուսով քո բնակեցուցեր զմեզ:

Ի կարգալ իմում (Տես երես 759)

### ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

(Ճ.Բ. 24—26)

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

(Ա.Ք.) Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ո՛չ հասն ցորենոյ անկետլ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ:

Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա, եւ որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ՝ ՚ի կեանսն յաւիտեանս պահեսցէ զնա:

Եթէ ոք զիս պաշտօնցէ, զկնի իմ եկեսցէ, եւ ուր եան եմ,

անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի.  
Եթէ որ զիս պաշտիցէ, պա-  
տուեսցէ զնա Հայրն իմ:

**ՅԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ**

Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, թէ  
որ ցորենի հատը հողին մէջ իյնալով չը-  
մեռնի, ինք միայն կը մնայ. ապա եթէ  
մեռնի, շատ արդիւնք կը բերէ:

Ով որ իւր անձը կը սիրէ, պիտի կո-  
րուանէ զայն, և ով որ իւր անձը կ'ստէ  
այս աշխարհիս մէջ, յաւիտենական կե-  
նաց համար պիտի պահէ զայն:

Եթէ որ կը ծառայէ ինձ, թող գայ իմ  
ետեւս, և ուր ես եմ, իմ ծառայս եւս  
հոն պիտի ըլլայ:

Եթէ որ կը ծառայէ ինձ, իմ Հայրը  
պիտի պատուէ զայն:

**Փառք քեզ Տէր Աստուած մեր:**

**Ք Ա Ր Ո Ջ**

**Ս**ուրբ խաչիւս աղաչեսցո՛ւք  
զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ  
'ի մեղաց, եւ կեցուցէ՛ շնորհիւ  
ողորմութեանն իւրոյ: Ամենակալ  
Տէր Աստուած մեր, Կեցո՛ւ եւ ող.

**Ա Ղ Օ Յ Ք**

**Պ**ահպանեա՛ զմեզ, Քրիստոս  
Աստուած մեր, ընդ հովանեաւ  
սուրբ եւ պատուական Խաչիւզ  
քով 'ի խաղաղութեան. փրկեա՛  
յերեւելի եւ յաներեւոյթ թըշ-  
նամուոյն Արժանաւորեա՛ գո-  
հութեամբ փառաւորել զքեզ  
ընդ Հօր եւ ընդ Սրբոյ Հոգ-  
ւոյդ, Այժմ եւ միշտ եւ յաւ..

**Օրհնեալ Տէր. Հայր մեր.**

**Մ Ա Ղ Յ Ա Ք**

**Ա**նկանիմք առաջի քոյ սուրբ  
Աստուածածին, եւ աղաչեմք  
զանարատ զկոյսդ, բարեխօսեա՛  
վանն անձանց մերոց, եւ ա-  
ղաչեա՛ զՄիածին Որդիդ, փրկել  
զմեզ 'ի փորձութենէ եւ յամե-  
նայն վտանգից մերոց:

## ՄԱՂԹԱՆՔ ԶՕՐԱՒՈՐՔ

## Արեւաւազ գիօեւայնոց

ՄԵՐՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԷԿՈՅՑԻՈՅՆ ԱՍՏԵՆԱԼ  
ԲԱՆ ԺԲ.

(Ա. 24.) Ընկա՛լ քաղցրութեամբ,  
Տէ՛ր Աստուած հօր, զգառնա-  
ցողիս զաղաչանս. մատի՛ր դը-  
թութեամբ, առ պատկառեալս  
դիմօք. փարատեա՛, ամենա-  
պարգեւ, զամօթական տխրու-  
թիւնս. բա՛րձ յինէն, ո՛ղորմած,  
զանբերելի ծանրութիւնս. ան-  
ջրբակեա՛, հնարաւոր, զմա-  
հացու կրթութիւնս. աւարեա՛,  
միշտ յաղթող, զխաբողին հա-  
ճութիւնս. բացազրեա՛, զե՛ր-  
նային, զմոլելոյն մատախուղ.  
կնքեա՛, կեցուցիչ, զկորուսչին  
ընթացմունս. ցրուեա՛, ծա՛ծ-  
կատես, զըմբռնողին չար դրա-  
մունս. խորտակեա՛, անքննին,

զմարտողին զիմեցմունս: Տեսա-  
նագրեա՛ քո անուամբդ՝ զլու-  
սանցոյց երգ յարկիս. պարփակ-  
եա՛ քո ձեռամբդ՝ զառաստաղ  
տաճարիս. զծագրեա՛ քո ար-  
եամբդ՝ զմուտ սեմոց սենեկիս.  
կերպացո՛ զքո նշանդ՝ ՚ի հետս  
ելից մաղթողիս. ամբացո՛ քո  
աջուկդ՝ զհանգստեանս խշտի.  
մաքրեոցե՛ս ՚ի հազրից՝ զծած-  
կարան անկողնոյս. պահեսցե՛ս  
քո կամօքդ՝ զառապիւղ անձն  
ողոյս. անխարդախ արասցե՛ս  
զքո հնորէեալ շունչ մարմնոյս.  
կացուսցե՛ս շրջափակ՝ զպար  
զօրուդ երկնայնոյ. կարգեսցե՛ս  
՚ի դիմի՛ ընդ գէ՛մ դիւացն դա-  
սու: Տո՛ւր հանգիստ բերկրու-  
թեան՝ մահահանգոյնս նիրհման  
՚ի խորութեան զիշերիս, բարե-  
խօսութեամբ հայցուածոց սրբոյ  
Աստուածածնիդ եւ ամենայն

ընտրելոց: Ամփոփեալ պարուրեա՛  
 եա՛ զպատուհան տեսութեանց  
 զգայարանացս խմաստից՝ ան-  
 զարհուրելի գետեղմամբ, ՚ի ծը-  
 փական խռովութեանց, կենցա-  
 ղական զբաղմանց, անբձական  
 երազոց, խօսականաց ցնորից,  
 յիշատակաւ քո յուսոյդ անշլա-  
 սելի պաշտպանեալ: Եւ սթափ-  
 եալ վերստին ՚ի ննջմանէ ծան-  
 րութեան՝ ամենազգաստ արթ-  
 նութեամբ, հոգեհորոզ զուար-  
 թութեամբ ՚ի քեզ արձանաց-  
 եալ, զայս ձայն մաղթանաց  
 բուրմամբ հաւատոց, քեզ ա-  
 մենօրհեալ թագաւոր փառաց-  
 անձառից փառարանողաց երկ-  
 նագու մար խմբից երգակցեալ,  
 յերկինս առաքել: Զի դու, փա-  
 ռաւորեալ ես յամենայն արա-  
 րածոց յաւիտեանս յաւիտ. Ամէն:

## ԱՂՕԹՔ ԶՕՐԱՒՈՐ

ՆՕՐԵՆ ՄՐՏՅԵՆ ԳԵԻԳՕՐԻ

ԲԱՆ ԽԱ.

Որդի՛ Աստուծոյ կենդանւոյ,  
 օրհնեալ յամենայնի, Հօրդ ա՛հա-  
 ւորի անքնին ծնունդ, որ սը-  
 կարանայ առ ՚ի քէն եւ ո՛չ ինչ:  
 Որ ՚ի ծագել անստուեր նշուլից  
 ողորմութեան քս փառաց, հա-  
 լին մեղք, հալածին դեւք, ջնջին  
 յանցանք, խզին կապանք, խոր-  
 տակին շղթայք, կենդանաձնին  
 մահացեալք, բժշկին հարուածք,  
 ողջանան վէրք, բառնին ապա-  
 կանութիւնք, տեղի տան տրխ-  
 րութիւնք, նահանջին հեծու-  
 թիւնք, փախնու խաւարն, մեկնի  
 մէզն, մերժի մառախուղն, փա-  
 րատի մռայլն, ըսպառի աղջա-  
 մուղջն, վերանայ մութն, զնայ  
 զիչերն, տարագրի տագնապն,

Հփանան չարիքն, հալածին յուսահատութիւնքն, եւ թագաւորէ ձեռն քո ամենակար, քաւիչդ ամենայնի:

Որ ո՛չ եկիր կորուսանել զմարդկան ոգիս, այլ կեցուցանել. թո՛ղ ինձ զանթիւ չարիսն իմ բազում սղորմութեամբդ, զի դու միայն ես յերկնի սնձառ, եւ յերկրի սնզնին, 'ի տարր զոյի, եւ յեզրս ծագաց աշխարհի. Սկիզբն ամենայնի եւ յամենայնի ամենայն լրմամբ, օրհնեալ 'ի բարձունս. եւ քեզ ընդ Հօր եւ Հոգւոյդ Սրբոյ փառք յաւիտեանս. Ամէն:



ԱՂՕԹ ԻՒՐԱՔԱՆՁԻՒՐ ԱՆՁԻՆ

ՀԱՌԱՏԱՅԵԼՈՅ Ի ՔՐԻՍՏՈՍ

Չօր արարեալ է սրբոյ Տեառն  
Ներսիսի Հայոց Կարողիկոսի

(Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետն Օր, յարտակարգաբար որոտած է, որ զորում 24 ժամերում հատեմար յօրէնած այս 24 որան պարտաւիտն Աղջեւը, ամեն օր ամեն Հայ Բրիտանուեայ կարբայ. թե՛ Նկեղեցոյ Օղջ, թե՛ որան, թե՛ քորձի, եւ թե՛ ճանապարհի Օղջ քորնուած արեւն. որոյ աշխարհաբառ թարգմանութեանը եւս իւրաքանչիւր որաներու քով աւելցուցինք, որպէս զի քովանդակապէս հասկանալի լինի ամենուն այս ամենակարեայ Աղջեւն:)

ՀԱՌԱՏՈՎ խոտաովանիմ եւ  
երկիրպագանեմ քեզ, Հայր եւ  
Որդի, եւ Սուրբ Հոգի, սնեղ  
եւ սնմահ բնութիւն. արարիչ



Հրեշտակաց եւ մարդկան եւ ամենայն եղելոց. ողորմեա՛ թո աբարաժոց, եւ ինձ բազմամեղիս:

Հաւատով խոստովանիմ, և երկրագութիւն կ'ընեմ քեզ, ո՛վ Հայր և Որդի և Սուրբ Հոգի, անեղ և անմահ բնութիւն, Աբարիչ հրեշտակներուն, մարդիկներուն և ամեն եղածներուն, ողորմէ քու արարածներուդ և ինձ շատ մեղաւորիս:

Հաւատով խոստովանիմ. եւ երկիրապաղանեմ քեզ, անբաժանելի Լոյս, միասնական Սուրբ Երրորդութիւն եւ մի Աստուածութիւն, աբարիչ լուսոյ եւ հալածիչ խաւարի. հալածեա՛ ՚ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց եւ անգիտութեան, եւ լուսաւորեա՛ զմիտս իմ ՚ի ժամուս յայսմիկ աղօթիլ քեզ ՚ի հաճոյս, եւ ընդուն' ՚ի քէն զխնդրուածս իմ. եւ ողորմեա՛ թո արարաժոց, եւ ինձ բազմամեղիս:

Հաւատքով կը խոստովանիմ, և երկրագութիւն կ'ընեմ քեզ ո՛վ անբաժանելի Լոյս, միասնական սուրբ Երրորդութիւն և մի Աստուածութիւն. ստեղծող լոյսին, և հալածող խաւարին, հալածէ իմ հոգիս վրայէն մեղքի և տղիտութեան մութը, և լուսաւորէ իմ միտքս այս ժամուս մէջ, որ կարենամ քեզ հաճոյ ըլլալու կերպով աղօթք ընել, և ընդունիլ իմ խնդրուածքս. և ողորմէ քու արարածներուդ և ինձ շատ մեղաւորիս:

Հայր երկնաւոր, Աստուած ճշմարիտ, որ առաքեցիք զՈրդիդ քո սիրելի ՚ի խնդիր մալորեալ ոչխարին, մեզայ յերկինս եւ առաջի քո. ընկալ զիս որպէս զանառակ որդին, եւ զգեցո՛ ինձ զպատմուճանն զառաջին՝ զոր մերկացայ մեղօք. եւ ողորմեա՛ թո արարաժոց եւ.

Ո՛վ Հայր երկնաւոր ճշմարիտ Աստ.

ուած, որ բու սիրելի Որդիդ զրկեցիր մո-  
լորեալ ոչխարը փնտուելու. մեզայ երկին-  
քի դէմ և բու առջեւդ. ընդունէ զիս ա-  
նառակ որդիին պէս, և հազցու ինձ իմ  
առաջին պատուեմանս (հազուստս) որ  
մեղքովս վրայէս հանեցի. և ողորմէ՛ բու  
արարածներուդ և ինձ շատ մեղաւորիս:

**Որդի՛ Աստուծոյ, Աստուած  
ճշմարիտ, որ խոնարհեցար ՚ի  
Հայրական ծոցոյ, եւ առեր մար-  
մին ի սրբոյ Կուսէն Մարիամայ  
վանն մերոյ փրկութեան, խա-  
չեցար, թաղեցար եւ յարեար ՚ի  
մեռելոց եւ համբարձար փա-  
ռօք առ Հայր. մեզայ՝ յերկինս  
եւ առաջի քո, յիշեա՛ զիս որ-  
պէս զաւազակն՝ յորժամ դաս  
արքայութեամբ քով. եւ ողոր.**

**Ո՛վ Որդի Աստուծոյ ճշմարիտ Աս-  
տուած (Յիսուս Քրիստոս). որ խոնար-  
հեցար Հայրական ծոցէն և աշխարհ գա-  
լով՝ մարմին առ իր սուրբ Կոյս Մարիամէն**

մեզ փրկելու համար. և խաչուեցար,  
Թաղուեցար և մեռելներէն յարուժիւն ա-  
ռիբ և փառքով Հօրդ քով համբարձար.  
մեզայ երկինքի դէմ և բու առջեւդ, յիշէ՛  
զիս աւազակին պէս երբոր գաս բու ար-  
քայութիւնովդ. և ողորմէ՛ բու արարած-  
ներուդ և ինձ շատ մեղաւորիս:

**Հոգի՛ Աստուծոյ, Աստուած  
ճշմարիտ, որ իջեր ՚ի Յորդա-  
նան եւ ՚ի վերնատունն, եւ լու-  
սաւորեցեր զիս մկրտութեամբ  
սուրբ Աւազանին. մեզայ՝ յեր-  
կինս եւ առաջի քո. մաքրեա՛  
զիս վերստին Աստուածային հը-  
րով քով՝ որպէս հրեղէն լեզուօք  
սուրբ զԱռաքեալսն. եւ ողոր.**

**Ո՛վ Հոգի Աստուծոյ ճշմարիտ Աս-  
տուած. որ Յորդանանու զեան ու վեր-  
նատունը իջար, և լուսաւորեցիր զիս  
սուրբ Աւազանի մկրտութիւնով. մեզայ  
երկինքի դէմ և բու առջեւդ, մաքրէ՛  
զիս կրկին բու Աստուածային կրակովդ.**

ինչպէս կրակէ լեզուներով մաքրեցիր սուրբ Առարեալները, և ողորմէ բու աբարածներուդ եւ ինձ շատ մեղաւորիս:

**Անն՝դ բնութիւն, մեզայ քեզ մասք իմովք, հոգեով եւ մարմնով իմով. մի՛ յիշեր զմեզս իմ զառաջինս՝ վասն անուանդ քում սրբոյ. եւ ողորմեա՛.**

Ո՛վ անեղ բնութիւն, մեզք գործեցի բեզի դէմ իմ մտրովս, և իմ հոգեովս ու մարմնովս, մի յիշեր իմ առաջին մեղքերս բու սուրբ անուանիդ համար. և ող.

**Տեսող ամենայնի, մեզայ քեզ խորհրդով, բանիւ եւ գործով. ջնջեա՛ զձեռագիր յանցանաց իմոց, եւ գրեա՛ զանուն իմ՝ ի զպրութեան կենաց. եւ ողոր.**

Ո՛վ ամեն բան տեսնող (Աստուած,) մեզք գործեցի քեզի դէմ, խորհուրդով, խօսքով ու գործով. ջնջէ (աւրէ) իմ յանցանքներուս ձեռագիրն (վճիռը.) և գրէ իմ անուն կենաց զբրիդ մէջ. և ողոր.

**Բննող զաղանեաց, մեղայ քեզ կամաւ եւ ակամայ, զիտութեամբ եւ անզիտութեամբ. թողութիւն շնորհեա՛ մեղաւորիս, զի՛ ՚ի ծննդենէ սուրբ Աւազանին մինչեւ ցայսօր մեղուցեալ եմ առաջի Աստուածութեանդ քո՝ զգայարանօք իմովք եւ ամենայն անդամօք մարմնոյս. եւ ողորմեա՛.**

Ո՛վ զաղանիքները բննող Աստուած, մեզք գործեցի քեզի դէմ, կամաւ եւ ակամայ, զիտալով ու անզիտալով, թողութիւն շնորհէ մեղաւորիս որ սուրբ Աւազանէն ծնած օրէս մինչեւ այսօր մեղանշած եմ բու Աստուածութեանդ առջև, իմ զգայարանքովս և մարմնիս բոլոր անդամներով. և ողորմէ բու արար.

**Ամենախնամ Տէր. դիր պահապան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ՝ սչ եւս հայիլ յարատ. եւ ականջաց իմոց՝ սչ**

ախորժել լսել զբանս չարութեան. եւ բերանոյ իմոյ՝ ո՛չ խօսիլ զստութիւն. եւ սրտի իմոյ՝ ո՛չ խորհիլ զչարութիւն. եւ ձեռաց իմոյ՝ ո՛չ գործել զանիրաւութիւն. եւ ոտից իմոց՝ ո՛չ գնալ 'ի ճանապարհս անօրէնութեան. այլ ուղղեա՛ զչարժումն սոցա լինել միշտ ըստ պատուիրանաց քոց յամենայնի. եւ ողորմեա՛.

Ո՛վ Ամենախնամ Տէր, բու սուրբ երկիւղ (վախոյ) պահապան դիր իմ աչքերուն. որ երբէք ծուռ աչքով չնայիմ. եւ ականջներուս՝ որ չախորժիմ լսել չարութեան խօսքեր. և բերանիս՝ որ ուտտ չխօսիմ. և սրտիս՝ որ չարութիւն չխորհիմ, և ձեռքերուս՝ որ անիրաւութիւն չգործեմ, և ոտքերուս՝ որ անօրէնութեան ճանրայ չերթամ, այլ ուղղէ՛ ասոնց բոլոր շարժումներք, որ միշտ բու պատուիրանացդ հոտեմտտ ըլլան ամեն բանի մէջ. և ողոր-

Հուր կենդանի Քրիստոս, զհուր սիրոյ քո զոր արկեր յերկիր՝ բորբոքեա՛ յանձն իմ, զի այրեացէ՛ զախտ հոգւոյ իմոյ, եւ սրբեացէ՛ զխիղճ մտաց իմոց, եւ մաքրեացէ՛ զմեզս մարմնոյ իմոյ, եւ վստեացէ՛ զլոյս գիտութեան քո 'ի սրտի իմում. եւ ողորմեա .

Ո՛վ Քրիստոս, որ կենդանութիւն տրուող կրակ ես, բու սիրոյդ կրակը զոր աշխարհի մէջ ձգեցիր, բորբոքէ իմ անձիս մէջ որպէս զի այրէ իմ հոգիս ախտերը, և սրբէ իմ խղճմտանքս, և վստէ իմ սրտիս մէջ բու գիտութեանդ լոյսը. և ողոր.

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն զբարիս խորհիլ, եւ խօսիլ, եւ գործել առաջի քո յամենայն ժամ. 'ի չար խորհրդոց 'ի բանից եւ 'ի գործոց փրկեա՛ զիս. եւ ո .

Ո՛վ իմաստութիւն Հօր Յիսուս, տո՛ւր  
ինձ իմաստութիւն, որ բարի բաներ խոր-  
հիմ. խօսիմ և գործեմ բու առչեզ ամեն  
ժամանակ. չնր խորհուրդներէ, չնր խօս-  
քերէ ու չնր գործերէ փրկէ զիս. և ողո.

✦ **Կամեցո՛ղ բարեաց. Տէ՛ր կա-**  
**մարար,** մի՛ թողուր զիս 'ի  
կամս անձին իմոյ գնալ, այլ  
առաջնորդեա՛ ինձ լինել միշտ  
ըստ կամաց քոց բարեսիրաց .  
և և ողորմեա՛.

Ո՛վ բարի կամեցող, Տէ՛ր կամարար,  
մի թողուր զիս որ իմ կամքիս ուզածին  
պէս բաշեմ, այլ առաջնորդէ ինձ միշտ  
բու բարեսէր կամքիդ համեմատ վարուիլ .  
և ողորմէ բու արարածներուդ և ինձ .

**Արքայ՝ երկնաւոր. տո՛ւր**  
**ինձ զարքայութիւն քո զոր**  
**խոտտացար սիրելեաց քոց . և**  
**զօրացո՛ զսիրտ իմ ատել զմեզս ,**  
**և սիրել զքեզ միայն , և առ-**  
**նել զկամս քո . և ողորմեա .**

Ո՛վ Արքայ (Թագաւոր) երկնաւոր,  
տո՛ւր ինձ բու արքայութիւնդ՝ զոր խոտ-  
տացար բու սիրելիներուդ, և զօրացո՛  
իմ սիրտս, մեղքը ատել և զքեզ միայն  
սիրել և բու կամքդ կատարել. և ողոր .

**Խնամո՛ղ արարածոց , պահ-**  
**եա՛ նշանաւ Խաչի քօ զհօգի եւ**  
**զմարմին իմ , 'ի պատրանաց**  
**մեզաց , 'ի փորձութեանց զի-**  
**ւաց , և 'ի մարդոց անիրաւաց ,**  
**և յամենայն վտանգից . հողւոյ**  
**և և մարմնոյ . և ողորմեա .**

Ո՛վ ամեն արարածները ինձանող ,  
բու խաչիդ նշանովը պահէ իմ հոգիս ու  
իմ մարմինս՝ մեղքի խարէութիւններէն,  
զեւերուն փորձութիւններէն. և անիրաւ  
մարդիկներէն՝ և հոգիի ու մարմնի ամեն  
վտանգներէն. և ողորմէ .

**Պահապան ամենայնի Քրիս-**  
**տոս , աջ քօ հովանի լիցի 'ի**  
**վերայ իմ , 'ի սուէ և 'ի զի-**

չերի, 'ի նստիլ 'ի տան, 'ի  
գնալ 'ի ճանապարհ, 'ի ննջել  
եւ 'ի յառնել, զի մի՛ երբէք  
սասանեցայց. եւ ողորմեա՛.

Ո՛վ Քրիստոս. որ ամենուն պանապանն  
ես, բու աշղ (ձեռք) Սոյ հովանի ըլլայ  
իմ վրաս զիչեր ցերեկ. տան մէջ նստած  
ատենս, նանբայ գացած ատենս, և քնա-  
նալու և արթննալու ատենս. որ երբէք  
չի սասանիմ, և ողորմէ բու արարածնե.

+ Աստուած իմ, որ բանաս  
զձեռն քո՞, եւ ընու զամենայն  
արարածս ողորմութեամբ քով,  
քեզ յանձն առնեմ զանձն իմ,  
զու հողա՛ եւ պատրաստեա՛  
զպէսս հողոյ եւ մարմնոյ ի-  
մոյ՝ յայսմհեռէ մինչեւ յա-  
ւիտեան. եւ ողորմեա՛.

Ո՛վ Աստուած իմ, որ բու ձեռք կը  
բանաս և կը լեցունես ամեն արարածներդ  
բու ողորմութիւնովդ, քեզ կը յանձնեմ իմ  
անձս, զոն հողս ու պատրաստէ իմ հո-

զիս ու իմ մարմնիս պէտք եղածը, սակե՛  
վերջը մինչեւ յաւիտեան. և ողորմէ.

Դարձուցի՛չ մուրեկոյ. զար-  
ձն զիս 'ի չար սովորութեանց  
իմոց 'ի բարի սովորութիւն. եւ  
բեւեռեա՛ 'ի հողի իմ զոսկալի  
որ մահուն, եւ զերկիւղ գե-  
հնոցն, եւ զսէր արքայու-  
թեան. զի զղջացայց 'ի մեղաց-  
եւ գործեցից զարգարութիւն.  
եւ ողորմեան քո արարածոց եւ.

Ո՛վ մուրեկները զարձուց, զար-  
ձու զիս իմ չար սովորութիւններէս զէպ  
ի բարի սովորութիւն. և տպաւորէ իմ  
հոգիս մէջ մահուան սակալի օրը, դժոխ-  
բին երկիւղը (վախը.) ու արքայութեան  
սէրը, որպէս զի մեղքերէս զղջումի գամ,  
և արդարութիւն գործեմ. և ողորմէ.

Աղբիւ՛ր անմահութեան, աղ-  
բերացո՛ 'ի սրտէ իմմէ զար-  
տաստս սպաշխարութեան որ-  
պէս պոռնկին, զի լուացից

զմեղս անձին իմոյ՝ յառաջ քան  
զելանելն իմ յաշխարհէս, եւ ող.

Ո՛վ անմահութեան աղբիւր Քրիստոս,  
աղբիւրի պէս ապաշխարութեան արցունք  
վազեցու իմ սրտէս պոռնիկին նման, որ-  
պէս զի լուամ իմ մեղքերս այս աշխար-  
հէս ելնելէս առաջ, եւ ողորմէ:

Պարգեւի՛չ ողորմութեան,  
պարգեւեա՛ ինձ ուղղափառ  
հաւատով եւ բարի գործով,  
եւ սուրբ մարմնոյ եւ Արեան  
քո հաղորդութեամբ գալ առ  
քեզ. եւ ողորմեա՛:

Ո՛վ ողորմութիւն պարգևող Աստուած,  
շնորհէ ինձ որ ուղղափառ հաւատքով, ու  
բարի գործով, և բու Սուրբ Մարմնիդ ու  
Արիւնդ ճաշակելով գամ բու բովդ, և ող.

Բարերա՛ր Տէր, Հրեշտակի  
բարւոյ յանձն արասցես զիս՝  
քաղցրութեամբ աւանդել ըզ-  
հոգի իմ, եւ անխռով անցու-

ցանել ընդ չարութիւն այսոցն  
որք են ի ներքոյ երկնից, եւ ող.

Ո՛վ բարերար Տէր, բարի Հրեշտակի  
յանձնէ զիս, քաղցրութիւնով աւանդել իմ  
հոգիս և երկինքի տակ եղած չար ոգի-  
ներու մէջէն խաղաղ կերպով անցունել, և ող.

Լոյս ճշմարիտ Քրիստոս՝ս, ար-  
ժանաւորեա՛ զհոգի իմ ուրա-  
խութեամբ տեսանել զլոյս փա-  
ռաց քոց ՚ի կոչման աւուրն.  
եւ հանգչիլ յուսով բարեաց  
յօթեւանս արդարոց մինչեւ  
յօր մեծի գալստեան քո. եւ ող.

Ո՛վ Լոյս ճշմարիտ Քրիստոս, արժանի  
ըբէ իմ հոգիս, ուրախութիւնով տեսնել  
բու փառքիդ լոյսը՝ կանչուելու (դատաս-  
տանին) օրուան մէջ. և բարի յոյսով ար-  
դարներուն օմեւանին մէջ հանգչիլ, մինչև  
քո վերստին գալուց մեծ օրը. եւ ողորմէ.

Պատաւո՛ր արդար, յորժամ  
գաս փառօք Հօր՝ դատել ըզ-

կենդանիս եւ զմեռեալս, մի մտաներ 'ի դատաստան ընդ ծառայի քում. այլ փրկեա՛ զիս 'ի յաւիտենական հրոյն, եւ լսելի-արա՛ ինձ զերանաւէտ կոչումն արդարոց յերկնից ար-քայլութիւնդ. եւ ողորմեա՛ :

Ո՛վ արդար Դատաւոր, երբոր գաս դատել ողջերն ու մեռածները, բո ծառայից հետ դատաստանի մի մտներ, այլ ազատէ՛ զիս յաւիտենական կրակէն, և արդարները երկինքի արքայութիւնդ հրաւիրող երջանիկ ձայնը՝ ինձ եւս լսելու արժանի ըրէ. և ողորմէ՛ քու արա :

**Ս**մենողորմ Տէ՛ր, ողորմեա՛ ամենայն հաւատացելոց ի քեզ, իմոց եւ՝ օտարաց. ծանօթից եւ անծանօթից. կենդանեաց եւ մեռելոց. շնորհեա՛ եւ թշնամեաց իմոց եւ ատելեաց զթողութիւն՝ որ առ իս յանցանաց, եւ դարձո՛ զնոսա՛ 'ի չարեացն

զոր ունին վասն իմ՝ զի ողորմութեան քում արժանի եղիցին. եւ ողորմեա՛ քո արարածոց, եւ ինձ բազմամեղիս :

Ո՛վ ամենողորմած Տէ՛ր, ողորմէ՛ ամեն քեզ հաւատացողներուն, իմիններուս եւ օտարներուն. ծանօթներուն և անծանօթներուն (ծանցցածներուս ու չի ծանցցածներուս) ողջերուն՝ ու մեռածներուն. Սողոմիւն շնորհէ՛ նաեւ իմ Սշնամիներուս, և իմ հետ ատելածիւն ունեցողներուն ինձ զէմ գործած յանցանաց. և զարձու գանոնք իրենց չար դիտաւորութիւնէն՝ որ ինձ համար ունին, որպէս զի բոլորեմեանից արժանի ըլլան. և ողորմէ՛ :

**Փ**առաւորեալ Տէ՛ր, ընկալ՛ զազաչանս ծառայիս քո, եւ կատարեա՛ 'ի բարի զինգրուածքս իմ՝ բարեխօսութեամբ Սրբուհոյ Աստուածածնին, եւ Յովհաննու Մկրտչին, եւ սրբայն Ստեփանոսի նախալկա-



յին, և սրբոյն Գրիգորի մերոյ  
 Լուսաւորչին, և Սրբոց Առա-  
 քելոց, Մարգարէից, Վարդա-  
 պետաց, Մարտիրոսաց, Հայ-  
 րապետաց, Ճգնաւորաց, Կու-  
 սանաց, և ամենայն Սրբոց քոց  
 երկնաւորաց և երկրաւորաց :  
 Եւ քեզ փառք և երկրպա-  
 զութիւն անբաժանելի Սուրբ  
 Երրորդութեանդ յաւիտեանս  
 յաւիտենից . Ամէն :

Ո՛վ փառաւորեալ Տէր, ընդունէ բու-  
 ծառայիդ աղաչանքը, և ի բարին կտա-  
 րէ իմ ինդիրքս, բարեխօսութեամբ սրբ-  
 բունի Աստուածածին, և Յովհաննէս  
 Մկրտչին, և սուրբ Ստեփանոս նախա-  
 վկային, և մեր սուրբ Դրիգոր Լուսա-  
 ւորչին . և սուրբ Առաքեալներուն . Մար-  
 գարէներուն, Վարդապետներուն, Մար-  
 տիրոսներուն, Հայրապետներուն, Ճգնա-  
 ւորներուն, Կոյսերուն և բոլ ամեն երկ-  
 նաւոր և երկրաւոր Սուրբերուդ . Եւ քեզ  
 անբաժանելի սուրբ Երրորդութեանդ կը  
 վայլէ փառք և երկրպազութիւն յաւիտ-  
 եանս յաւիտենից . Ամէն :

## Մ Ա Ղ Յ Ա Ն Ք

Վասն Սրբուհոյ Աստուա-  
 ծածնին բարեխօսութեանն . Տէր,  
 ընկալ զաղաչանս մեր, և կե-  
 ցո՛ զմեզ :

## Ք Ա Ր Ո Ջ

(Ա.շ.) Սուրբ զԱստուածածինն՝  
 և զամենայն սուրբս բարեխօս  
 արասցուք առ Հայր 'ի յեր-  
 կինս . զի կամեցեալ ողորմեա-  
 ցի՛ և գթացեալ կեցուսցէ՛  
 զարարածս իւր : Ամենակալ  
 Տէր Աստուած մեր կեցո՛ և  
 ողորմեա՛ :

## Ա Ղ Օ Յ Ք

(Ա.գ.) Ընկալ Տէր զաղաչանս  
 մեր՝ բարեխօսութեամբ Սուրբ  
 Աստուածածնին՝ անարատ ծնողի  
 Միածնի Որդւոյ քոյ . և աղա-  
 չանօք ամենայն սրբոց քոց :

(եւ որոց այսօր է յիշատակ,) Լ'ուր մեզ, Տէ՛ր, եւ ողորմեա՛. ներեա՛, քաւեա՛եւ թո՛ղ զմեզս մեր: Արժանաւորեա՛ գոհու- թեամբ փառաւորել զքեզ, ընդ Արդւոյ եւ ընդ Սրբոյ Հոգ- ւոյդ. այժմ եւ միշտ եւ .

Օրհնեալ Տէր մեր Յիսուս

Քրիստոս. Ամէն:

Հայր մեր որ յերկինս:

ՄԱՂԹԱՆՔ

Չանդատեան զաղօթս եւ զաղաչանս ընկալ. մարդասէր Աստուած, ՚ի հաճոյս բարե- բար կամաց քոց. մեր մեղաց եւ բաղում յանցանացն թողու- թիւն շնորհեա՛. եւ քեզ փառք յաւիտեանս. Ամէն:

ՓԱ՛ՌՔ քեզ, Տէ՛ր Աստուած մեր, որ պարգեւեցեր զօրս զայս բարեաւ եւ խաղաղու- թեամբ անցուցանել:

Դ. Ե ժ. Օրհնեա՛լ է Ած:

Մարդասէ՛ր Աստուած, զա- ռաջակայ գիշերս որ ՚ի վերայ մեր գալոց է՝ ի մեղաց փրկեա՛, ՚ի չարեաց ազատեա՛: Եւ ի գոր- ծըս բարիս առաջնորդեա՛ Ամէն:

Ասաւօտու օրհնութեանցն եւ փառաբանութեանցն՝ արժանի արա՛ զամենայն հաւատացեալս անուանդ քում սրբոյ, եւ պահ- եա՛ ի խաղաղութեանս. Ամէն:

Տէ՛ր Աստուած մեր՝ տո՛ւր զքո խաղաղութիւնդ ամենայն աշ- խարհի, բարձ զցատումն եւ զսրտուհանն ՚ի յարարածոցս: Ամէն:

Ողորմեա՛ հարց եւ եղբարց  
մերոց կենդանեաց եւ հանգու-  
ցելոց : — Ամէն :

Ողորմեա՛ եկեղեցի եւ Դպրա-  
տուն շինողաց, երախտաւորաց,  
պաղատուից, սպասաւորաց, եւ  
այնոցիկ՝ որք ընդ հովանեաւ  
սրբոյ եկեղեցւոյ են հանգու-  
ցեալ : — Ամէն :

Տէ՛ր Աստուած օգնեա՛ թա-  
գաւորացն Քրիստոնէից, եւ  
իշխանացն բարեպաշտից, զօ-  
րաց եւ զաւակաց նոցին՝ պա-  
հելով ի խաղաղութեան : Ամէն :

Տէ՛ր Աստուած մեր. պահեա՛  
զառաջնորդս եւ զեղբայրու-  
թիւնս մեր ամբողջ եւ անխռով  
ի կամս ողորմութեան քոյ :  
Ամէն :

Նշանաւ սուրբ եւ պատուա-  
կան Սաչիւ քոյ՝ հալածեա՛ զե-

րեւելի եւ ցաներեւոյթ թը-  
նամին՝ ի սանձանաց մերոց եւ  
ի բնակութենէս մերմէ .  
Փրկեա՛ զմեզ ՚ի հրոյն յաւիտե-  
նից . եւ քեզ փառք յաւիտե-  
անս , Ամէն :



Օրհնեա՛լք եղբուք ՚ի շնոր-  
հաց Սուրբ Հոգւոյն . հանգե-  
րուք խաղաղութեամբ. եւ Տէ՛ր  
եղիցի ընդ ամենեսեանդ Ամէն :

ՎԵՐՋ ՀԱՆԳՍԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ



**Վ Ե Ր Զ Ս Ը Ա Ս Ե**

Ննորհիւն Աստուծոյ յաւարտ հասանելով Գ.Տպագրութեան ԱՂՕ-ԹԱԳԲԻՄ՝ ըստ ժամակարգութեան Հայաստանեայց Առաքելական Սեկեղեցւոյ, աղերսանօք կը խնդրեմ 'ի բարեպատե Աղօթասիրաց, յիշել զսեխաստսիրող գործոյս՝ իրեանց աղօթից մէջ, լինել մեակ առանց ամօթոյ Այգւոյն Բրիտանոսի. եւ ընդ նմին յիշատակել, զիւր հոգեհաստ երեք որդիս զՅԱՎՈՐԻԿ, զԿԱՐԱՊԵՏ եւ զՀԱՄՈՍԻԿ որք 'ի ծաղիկ հասկի 'ի Բրիտանոսննջեցին:

Եւ յիշողք՝ յիշեալ յիջին առաջի անման Գառին Աստուծոյ:

Որոյ սպասաւոր եմ անարժան  
ԽՈՁԱԿԻՐ ՅՈՎ.Է. Բ.Ն. ՄԿԲԱՆ

**Յ Ա Ն Կ Ն Ի Ի Թ Ո Յ**

Երես

ԱԶԳ Գ. Տպագրութեան	9
Թուրք Տ. Ներսէս Պատրիարքի	13
Թուրք Տ. Մասթոս	25
Յառաջաբան առ Աղօթատէրս	33
Ժամերգութիւն Կիրակի աւուրց	75-357
» Ս. Պատարագի	359—475
» Լուր աւուրց	515—625
» Արեւազալի	627 - 653
» Ճաշու	655—707
» Երեկոյեան	711—755
» Խաղաղակահի	757—806
» Հանգստեան	807—853
Վերջաբան աշխատողին	854

**Ա Ղ Օ Թ Ք**

Ս. Հաղորդութիւն առնելէ յառաջ	451
Ս. Հաղորդութիւն առնելու պահուն	456
Ս. Հաղորդութիւն առնելէ յետոյ	458

## ՅԱՆԿ ՍԿՍՈՒՅԾՈՑ

Սլէշով գիշերային Ս-ըն-ն-ն	233—263
Աղսղակեցէք Ս-ըն-ն . . . . .	369
Աղաչեսցուք Ք-ըն-ն երէկ-յե-ն	734
Այսօր անճառ երգն . . . . .	150
Անեղանելիդ » . . . . .	642
Անկանիմք Ս-ըն-ն-ն . . . . .	825
Աշխարհ ամենայն երգն . . . . .	105
Առաջնորդ կենաց Աղբ-ն . . . . .	651
Առաջնորդեա մեզ » . . . . .	671
Առաւօտ լուսոյ երգն . . . . .	98
Առաւօտն Յարութեան երգն . . . . .	326
» լուր ատուրց » . . . . .	560
Ասացուք ամենեկեան Ք-ըն-ն	332
Ասուած անեղ երգն . . . . .	189
Ասուած Ասուած իմ Ս-ըն-ն	638
Ասուած մեծ հօր Ք-ըն-ն . . . . .	564
Աս օրհնեցէք Ս-ըն-ն . . . . .	751
Արարչական երգն . . . . .	583
Արքուն մտք Ք-ըն-ն . . . . .	678
Արի Տէր օգնեա երգն . . . . .	281

Ասարանք երգաբերից . . . . .	283-306
Տանից իմաց Ս-ըն-ն . . . . .	578
Գոհանամք զէն Աղբ-ն 230 և 342	
Գոհացարուք Ք-ըն-ն . . . . .	772
Դաւանութիւն Հաւատոյ . . . . .	36
Եկեսցէ ի վերայ իմ Ս-ըն-ն . . . . .	808
Երանի որ խորհի » . . . . .	688
Երկրագեմմ քեզ Ք-ըն-ն . . . . .	315
Եօրն մահացու մեղք . . . . .	62
Եօրն առաքինութիւնք . . . . .	73
Զառաւօտն աղօթս Աղբ-ն . . . . .	644
Զարթոցեալս Ք-ըն-ն . . . . .	91
Զգեցո մեզ Աղբ-ն . . . . .	681
Զուարճացեալս Ք-ըն-ն . . . . .	310
Զէն գոհանամք Աղբ-ն . . . . .	113
Ընկալ քաղցրութեամբ Ն-ըն-ն	826
Թագաւորք Ապաշխարութեան	521
» Մարտիրոսաց . . . . .	544
Թափոր կամ Անդասան . . . . .	501
Ժամամուտք . . . . . 471—500	
Ի գիշերի եւ ի տունք Աղբ-ն . . . . .	217
Ի կարդալ իմում Ս-ըն-ն . . . . .	759

Ի Բէն հայցեմք Շորտանն . . .	
Լոյսարարիչ Երգն . . . . .	
Լոյս գուարք . . . . .	
Լուսովոյ Բով Մարտն . . . . .	
Լուր ձայնից Աղբն . . . . .	7
Լցաք առաւօսու Մարտն . . . . .	2
Խաղաղութամբ Բով Աղբն . . . . .	674
Խաչ Բո եղիցի Մարտն . . . . .	603
Խաչի խնկարկութան կամ	
Խաչի Բո Քրիստոս Երգն . . . . .	506
Խաւարեցաւ լոյսն Երգն . . . . .	676
Խոնարհեցա Տէր Մարտն . . . . .	712
Խորհուրդ խորին Շորտանն . . . . .	359
Խրատ Երկրպագութան Եկեղ . . . . .	509
Կանոնագլուխ Մարտն . . . . .	120-148
Համբարձի Փոխն . . . . .	740
Հայր գրած Աղբն . . . . .	744
Հայր գրութեանց Աղբն . . . . .	691
Հանգստան Աւետ. Մարտն . . . . .	173-188
Հարցի Փոխն, Օրհնեալ Ես Տէր	266
Հաւատամք Ի մի Ած. Հարգանքն	388
Հաւատով խոսովանիմ Աղբն	831

Հոգւոց հանգու. Քորոզ Եւ Աղբն	206-7
Հրածարիմք Ի սասանայէ . . . . .	35
Զայնք Աւետարանաց . . . . .	56
Զայնք Սաղմոսաց . . . . .	56
Ճանապարհ Եւ հեմա. Երգն . . . . .	650
Ճգնաւորք Աստուծոյ » . . . . .	634
Մաղբանք սօնից Եւ պահոց . . . . .	517
Մայր սուրբ Քորոզն . . . . .	338
Մեծացուցէ Փոխն . . . . .	275-78
Մեղայ Ամենասուրբ Չղբն	40
Մեսեղի Մարտն . . . . .	724-31
Մկաբանամեն. Քորոզն . . . . .	663
Յարեւելից Երգն . . . . .	628
Յիշեա Տէր զպատօսեալս . . . . .	600
Յիշեսցուք Ի զիշերի Երգն . . . . .	87
Յոյս կենաց Աղբն . . . . .	770
Նայեաց սիրով Երգն . . . . .	779
Նորասեղծեալ » . . . . .	351
Նորոգող սիեգերաց » . . . . .	166
Շնորհեա մեզ Տէր » . . . . .	768
Ողորմեա ինձ Մարտն . . . . .	312 և 335
Որհնակեալ է Մարտն . . . . .	746

Որ ընտեցեր եւ ընկ. Աղբիւն . . .	599
Որ ի Բրովքեական » . . .	666
Որդի Աստուծոյ Նորիւն . . . . .	829
Չարչարակցեալ երգն . . . . .	693
Պահպանեալ զմեզ Աղբիւն . . . . .	504
Պաակիչ սրբոց » . . . . .	601
Սիրեցի զի լուիցէ Աղբիւն . . . . .	574
Սուրբ Ած. սուրբ եւ հօր երգն . . . . .	346
Սուրբ եւ Տէր Աղբիւն . . . . .	572 և 637
Սուրբ եւ Տէր գորութ. Շորիւնն . . . . .	741
Սուրբ արտի Բորիւն . . . . .	695
Սրբասացութիւնք պատարագի . . . . .	402
Վասն զսանելոյ Բորիւն . . . . .	228
Վասն ի գիշերի » . . . . .	215
Վասն ի վերուս » . . . . .	209
Վասն ուղղելոյ » . . . . .	222
Տասնաբանեայ օրէնք . . . . .	76
Տէր ամենակալ Աղբիւն . . . . .	616
Տէր բաւերար » . . . . .	773
Տէր երկնի եւ երկրի Աղբիւն . . . . .	223
Տէր երկնիցի Փնն . . . . .	318
Տէր եթէ զօրբունս իմ . . . . .	76

